

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՐԱՆ

ԺՈՐՎ ԱՉՈՅԱՆ
ՏԻՐՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒԹ
ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 556.3 (07)
Գ.Ա.Դ. 26.326 ց7
Ա 666

**Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության
ֆակուլտետի գիտական խորհուրդը**

Գրախոսներ՝ տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ս. Սարգսյան
երկր.-հանք.գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Հ. Հայրոյան

Աշոյան Ժ. Ա., Մկրտչյան Տ. Գ.

Ա 666 Ընդհանուր ջրաերկրաբանություն: -Եր.: ԵՊՀ հրատ., 2014 թ., 410 էջ:

Ուսումնական ձեռնարկում շարադրված են ջրաերկրաբանության ընդհանուր հիմնքները՝ ջրաերկրաբանության զարգացման պատմությունը, երկրի վրա ջրի ծագումը և ջրողությի ձևավորում, ստորերկրյա ջրերի շարժման օրինաչափությունների մասին հասկացությունները, ստորերկրյա ջրերի փիֆլական հատկությունները և բնիմական կազմը, ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման հարցերը, ստորերկրյա ջրերի հիմնական տիպերը (գրունտային և արտեզյան), ստորերկրյա ջրեր հավերժական սառածության քարտորում (լիրոսֆերայում), ստորերկրյա հանքային, արդյունաբերական և բերմալ ջրերի մասին հասկացությունները, ջրաերկրաբանական աշխատանքների և հետազոտությունների հիմնական տեսակները: Եղանակից գլուխներում տրվում է հակիմք, տեղիկասավորյուն ջրաերկրաբանական հետազոտությունների մեթոդների, ջրաերկրաբանական մոնիթորինգի, ստորերկրյա ջրերի ռեսուրսների ու պաշարների և դրանց պահպանության հարցեր:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է «Ջրաերկրաբանություն և ինժեներական երկրաբանություն», ինչպես նաև «Երկրաբանություն», «Էկոլոգիական ջրաերկրաբանություն», «Երկրաէկոլոգիա», «Ջրաբանություն» մասնագիտությունների ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև արդյունաբերության ոլորտի աշխատողների համար:

ՀՏԴ 556.3 (07)
Գ.Ա.Դ. 26.326 ց7

ISBN 978-5-8084-1915-5

ՆԱԽԱԲԱՆ

Զրաերկրաբանությունը զիտություն է երկրակեղևում ստորերկրյա ջրերի ծագման, տեղադրման պայմանների, տարածման և շարժման օրինաչափությունների մասին, նրանց ֆիզիկական հատկությունների, քիմիական, մանրէաբանական և գազային կազմի, ինչպես նաև ռեժիմի և մքնուրուտի, մակերևութային ջրուրուտի, կենսուրուտի, լիքոսֆերայի (երկրակեղև) և երկրի մանափայի նյութերի հետ փոխազդեցության գործնաբանների մասին: Այս ուսումնասիրում է ստորերկրյա ջրերի հանքավայրերի առաջացման պայմանները, ստորերկրյա ջրերի դերը երկրաբանական և օգտակար հանածոների (հանքային, նավթային և գազային) համքավայրերի ձևավորման գործնաբաններում, մշակում է մերողներ ստորերկրյա տարրեր տիպի ջրերի որոնման և հետախուզման, նրանց ռեսուրսների գնահատման, պաշարների հանալորման, ռեժիմի կառավարման համար, ինչպես նաև տախս է ինժեներական հիմնավորումներ շինարարական, հողատարածքների մելիորատիվ իրացման և օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման տարաբնույթ խնդիրների լուծման համար:

Այսպիսով, զրաերկրաբանությունը, որը ստորերկրյա ջրերը ուսումնասիրում է որպես երկրի բնական յուրահատուկ նյութի և որպես առավել կարևոր օգտակար հանածոյի հանդիսանում է երկրաբանության կարևոր ճյուղերից մեկը և դասվում է բնապատմական զիտությունների շարքին: Ենթելով բնության համակողմանի իմացության և պրակտիկ պահանջների բավարարման անհրաժեշտությունից, զրաերկրաբանությունը ձևավորվել է որպես ինքնուրույն զիտություն և կոչված է աջակցելու ստորերկրյա ջրերի և այլ միներալահումքային ռեսուրսների առավել լիարժեք և արդյունավետ օգտագործմանը ժողովրդական տնտեսության մեջ:

Դասագրքի պատրաստման համար հիմք են հայիսացել մինչև այժմ զրաերկրաբանության և նրա տարրեր բաժինների վերաբերյալ գոյության ունեցող (հատկապես նորագույն) դասագրքերը, գրված տարրեր բուհերի համար, ինչպես նաև հեղինակների դասախոսությունների, որոնք կարդացվում են Երևանի պետական համալսարանում: Այն կազմվել է «Ընդհանուր զրաերկրաբանություն» կուրսի ծրագրին համապատասխան:

«Ընդհանուր ջրաերկրաբանություն» դասագիրքը հայերեն լեզվով լույս է տեսնում առաջին անգամ: Դասագրքի որակի բարելավմանն ուղղված կարծիքները, քննադատական դիտողությունները և առաջարկությունները հեղինակները կընդունեն երախտագիտությամբ:

Խնդրվում է դրանք ուղարկել հետևյալ հասցեով՝ **ԵՊՀ** աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չուրը Երկիր մոլորակի վրա ունի լայն տարածում, այն հանդիս է գալիս տարբեր ոլորտներում և ունի բացառիկ նշանակություն բնության և կյանքի զարգացման համար: Չուրը անփոխարինելի և հույժ կարևոր բաղադրամաս է Երկրի վրա և ընդերքում ընթացող ֆիզիկաաշխարհագրական, երկրաքիմիական և երկրաբանական գործընթացներում: Առանց ջրի անհնար է նաև ժողովրդական տնտեսության գերակշռող ճյուղերի գոյությունը և զարգացումը: Այդ ամենը բերել է ջրի մանրակլրկիտ ուսումնասիրման հրատապ անհրաժեշտության բազմաթիվ գիտական ուղղություններում՝ կլիմայաբանություն, օդերևութաբանություն, ջրաբանություն, օվկիանոսագիտություն, սառցագիտություն, ֆիզիկական աշխարհագրություն, ջրաքիմիա, ջրաերկրաբանություն և այլն:

Բնության կենդանի և անկենդան միջավայրերում ընթացող գործընթացներում ջրի հույժ կարևոր նշանակություններից ենելով շատ գիտնականներ, գրողներ, բանաստեղծներ և փիլիսոփաներ շատ գեղեցիկ մտքեր և խոսքեր են ասել ջրի մասին:

Այսպես, ֆրանսիացի գրող Անտուան Դը Սենտ-Էքրայուպերը (1393) գրել է. «Չուր... Դու չունես ոչ համ, ոչ հոտ, ոչ գույն, թեզ դժվար է նկարագրել, թեզանով հիանում են՝ չխմանալով, թե դու ինչ ես: Չի կարելի ասել, թե դու անհրաժեշտ ես կյանքի համար, դու կյանքն ես: Դու լցնում ես մեզ երջանկությամբ, որը մեր զացանունքներով անհնար է բացարել: Քեզանով վերադառնում են մեզ հրաժեշտ տփած ուժերը, քո զբարտությամբ մեր մեջ վերստին սկսում են հորդալ մեր սրտի ցանքած աղբյուրները: Դու աշխարհիս ամենամեծ հարատությունն ես....»: Ակադեմիկոս Ա. Պ. Կարպինսկին նշել է. «Զկա ավելի թանկարժեք օգտակար համածող, քան ջուրը, առանց որի կյանք չկա...»: Ակադեմիկոս Ա. Պ. Օվլորինը համարում է, որ «.... հատկապես ջրոլորտի (ջրապատյան, հիդրոսֆերա) ջրերն են հանդիսացել այն պարտադիր և անփոխարինելի միջավայրը, որտեղ ձևավորվել են առավել բարդ օրգանական միացությունները և հետազայում հիմք հանդիսացել կենդանի օրգանիզմների մարմնի կառուցմանը: Չուրը ներկայում էլ գերակշռող քիմիական բաղադրություն է «կենդանի մատերիայի»՝ մեր մոլորակում բնակվող ամբողջական օրգանիզմների համար»:

Երոք, Երկրի ամբողջ կենդանական աշխարհի 2/3 կազմում է ջուրը, այն ցամաքաբնակ կենդանիների մոտ կազմում է 60%, իսկ ջրային օրգանիզմներում՝ 90% և ավելի: Մարդու կշռի 71%-ը, իսկ արյան՝ 90% և ավելին կազմում է ջուրը:

Ակադեմիկոս Վ. Ի. Վերնադսկին (1931) նշում է, որ մեր մոլորակի զարգացման պատմության մեջ ջրի դերը բացառապես մեծ է. «Չկա բնական մարմին, որը երկրաբնական խոշորագույն գործընթացների վրա ազդեցության տեսակետից համեմատվի ջրի գործունեության հետ»:

Չուրը բացառիկ դեր ունի երկրագնդի զարգացման պատմության, կյանքի ծագման, ֆիզիկաքիմիական միջավայրի և մոլորակի եղանակի ու կյիմայի ձևափորման գրղծում: Այն մարդկության մեծագույն հարլսությունն է, ծառայում է որպես առողջության աղբյուր, բավարում է մարդու ընդարձակ պահանջները, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը: Կենցարում և ժողովրդական տնտեսության մեջ լայնորեն օգտագործվում են մակերևության և ստորերկրյա քաղցրահամ ջրերը:

Երկրի վրա ամբողջ քաղցրահամ ջրերը կազմում են 28.25մլն.կմ³: Սակայն, այդ ջրերի մեծ մասը (չուրջ 70%) սառցադաշտերի տեսքով գտնվում են Անտարկտիդայում, Արկտիկայում, Գրենլանդիա կղզում և բարձր լեռնային շրջաններում, այսինքն, այնպիսի տեղերում, որտեղից մեծ մասշտաբներով օգտագործումը դժվարահասանելի է: Ներկա ժամանակներում օգտագործման համար հասանելի է միայն այդ ջրաքանակի մոտ 3%-ը [24]:

Աշխարհում օրական օգտագործվում է 9 մլրդ.մ³-ից ավելի ջուր, այսինքն, մոտավորապես այնքան, որքան մեկ տարում օգտագործվում են մնացած բոլոր օգտակար հանածոները միասին վերցրած:

Վերջին տասնամյակներում ջրօգտագործման պրակտիկայում ավելի ակնհայտ է դառնում ստորերկրյա ջրերի օգտագործման ավելացման միտումը: Քանի որ նրանք մակերևությային ջրերից շահեկանորեն տարբերվում են իրենց քիմիական կազմով և ֆիզիկական հատկություններով, գերծ են մեխանիկական և օրգանական խառնուրդներից, առավել սառնորակ են, ունեն ավելի կայուն ռեժիմ և նվազ չափով են ենթարկվում քիմիական աղտոտման, մանրէաբնական ու ռադիոակտիվ

վարակումների: Խմելաջրի պահանջների մոտ 50%-ը, ոռոգման ջրի 20% և մնացած ճյուղերի 40%-ը լրացվում է ի հաշիվ ստորերկրյա ջրերի [14]:

Գրեթե մի քանի տասնյակ տարի առաջ էլ անապատային և կիսաանապատային գոտիներից բացի բոլոր ինդուստրիալ երկրները, նույնիսկ նրանք, որոնք ունեն հումիդ (խոնավ) կլիմայական պայմաններ, ջրի պակաս են զգում: Այդ է վկայում 1984 թ. Մուկվայում կայացած միջազգային երկրաբանական կոնքրեսում մասնագետների այն կարծիքը, որ մոտ ապագայում բնական ռեսուրսների մեջ (նույնիսկ նավթից էլ առավել) առաջնահերթ տեղ է զբաղեցնելու ջուրը: Քուվեյթի ողջ դժբախտությունը կայանում է նրանում, որ նա ավելի հարուստ է նավթով, քան ջրով:

XX և XXI դարերում շրջակա միջավայրի աճող արտուրման (հատկապես մակերևութային ջրերի) պայմաններում ստորերկրյա ջրերը դարձել են քաղցրահամ ջրերի կարևոր անվտանգ ռեզերվ: Ստորերկրյա ջրերը դեռևս շատ վաղուց և լայնորեն օգտագործվում են բուժական նպատակով, իսկ վերջին տասնամյակներում նաև արդյունաբերական մասշտաբներով էլեկտրական ջրհանձնակայացում առաջնահամար: Բացի այդ՝ ստորերկրյա ջրերի որոշ տիպեր պարունակում են արժեքավոր կոմպոնենտներ կամ դրանց միացությունները (յոդ, բրոմ, բոր, կերակրի աղ և այլն), այնպիսի քանակությամբ, որ բավարարում են արտահանման և վերամշակման արդյունաբերական շահավետությունը [13, 33]:

Այդ ամենով հանդերձ՝ բնական ջրերը հանդիսանում են բնական միջավայրի հիմնական տարր (էլեմենտ), երկրաբանական ակտիվ գործոն, և դրանց ուսումնասիրությունը համալիր օգտագործման, պահպանման և կարգավորման նպատակներով ունի կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն:

Երկրակեղենում ստորերկրյա ջրերի ձևավորման, տեղադրման և տարածման, նրանց ռեսուրսների, կազմի, ռեժիմի, հիդրոդինամիկայի և այլնի մանրամասն ուսումնասիրությամբ զբաղվում է Երկրի մասին հիմնարար (ֆունդամենտալ) գիտությունների շարքում կարևոր ուղղություններից մեկը՝ ջրաերկրաբանությունը:

Ստորերկրյա ջրերի ուսումնասիրման նշանակությունը արտակարգ կարևոր է: Այն, մասնակցելով երկրագնդի ընդհանուր ջրոլորտի շրջապտույտին, մակերևութային ջրերի և կլիմայի հետ միասին որոշում է

Երկրի ջրաբանական կերպարանքը (ուրվագիծը) և հանդիսանում է գետերի սննման մշտական աղբյուր:

Ջրաերկրաբանության՝ որպես ինքնուրույն գիտության կայացումից հետո ԽՍՀՄ-ում հրատարակվել են շուրջ 20 դասագրքեր: Առավել վաղ ժամանակաշրջանի դասագրքերը (մինչև 1950-1960 թթ.) իրենցից ներկայացնում են միայն պատմական հետաքրքրություն: Ներկա ժամանակներում կան հանրամատչելի, սակայն հիմնականում արդեն հնացած դասագրքեր:

Ժամանակակից իրավիճակը և հատկապես ջրաերկրաբանության հեռանկարային զարգացումը պարտադրում են քարմացնել և կատարելագործել դասագրքային գրականությունը մի շարք տեսանկյուններից: Նախ և առաջ ժամանակակից դասագիրքը պետք է հիմնված լինի ջրաերկրաբանության գիտական և պրակտիկ ամենավերջին նվաճումների վրա, պետք է հաշվի առնի մասնագիտական հիմնարար (ֆունդամենտալ) գիտությունների նվաճումները, որոնց վրա հիմնվում է տվյալ ուսումնական կորսը (ուղղությունը) և վերջապես, պետք է նպատակամղված լինի զարգացնելու հիմնականում ուսանողի ստեղծագործական հատկանիշները, բարձրացնելու նրա աշխարհայացքը:

Բնական է, որ դասագրքի հիմնական գլուխները շարադրելիս հնարավոր չեն, (նույնիսկ շատ կարծ) բնութագրել այն աշխատանքները, որոնք կատարվել են այդ ուղղությամբ: Դրանցից շատերը գործնականում մասնագիտական հազվագյուտ գրքեր են: Դրա հետ կապված տեքստում և առաջարկվող գրականության ցանկում հղումները հիմնականում կատարվում են առավելապես վերջին հրատարակումների վրա, որոնք կուրսը յուրացնելու համար կարելի է օգտագործել որպես լրացուցիչ ձեռնարկներ:

Սույն դասագրքի բոլոր բաժինները գրված են վերը նշված հանգամանքները հաշվի առնելով:

Ուսումնական ձեռնարկը պատրաստվել է ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի որոշմամբ: Ինչ խոսք, դասագիրքը գերծ չի լինի որոշ թերություններից:

ԳԼՈՒԽ I

ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Զրաերկրաբանությունը, ինչպես նաև շատ տեսական և կիրառական մասնագիտություններ, առաջ են եկել և զարգացել ժողովրդական տնտեսության բազմաթիվ պահանջարկների բավարարման անհրաժեշտությունից ելնելով:

Գիտության մեջ «ջրաերկրաբանություն» տերմինը 1802 թ. ներմուծել է Ժ. Բ. Լամարկը: Այդ տերմինի տակ նա հասկացել է ապարների քայլայումը և նատեցումը ջրի օգնությամբ: XIX դարի 80-ական թվականներից «ջրաերկրաբանություն» տերմինի ասելով սկսեցին հասկանալ ուսմունք ստորերկրյա ջրերի մասին, ընու որում ջրաերկրաբանությունը դիտարկեցին որպես երկրաբանության ճյուղ: Ժողովրդական տնտեսության մեջ ստորերկրյա ջրերի գործնականորեն լայնատարած օգտագործումը նպաստեց ջրաերկրաբանության առանձնացմանը՝ որպես ինքնուրույն համալիր գիտության, որը կոչված է նպաստելու ստորերկրյա ջրերի և այլ բնական ռեսուրսների առավել լիարժեք և արդյունավետ օգտագործմանը:

Ժամանակակից մեկնարաննամբ, ջրաերկրաբանությունը գիտություն է ստորերկրյա ջրերի ծագման, տեղադրման պայմանների, տարածման և շարժման օրինաչափությունների, ֆիզիկական հատկությունների, քիմիական, մանրէաբանական և գազային կազմի, ռեժիմի, ինչպես նաև մքննորտի, մակերնության ջրերի, երկրակեղևի ապարների ու մանտիայի (քիկնոցապատյանի) նյութի հետ ստորերկրյա ջրերի փոխազդեցության գործընթացների մասին:

Զրաերկրաբանությունն ուսումնասիրում է ստորերկրյա ջրոլորտի (հիդրոսիքերա, ջրապատյան) պատմությունը, տարածական բաշխման օրինաչափությունները և փոխազդեցությունը երկրապատյանների հետ, ստորերկրյա հանքավայրերի առաջացման պայմանները, նրանց դերը երկրաբանական գործընթացներում և օգտակար հանածոնների հանքավայրերի ձևավորման գործում, մշակում է տարբեր տիպի ստորերկրյա ջրերի հանքավայրերի որոնման, հետախուզման, ռեսուրսների գնահատման, պաշարների համարման, ռեժիմի կարգավորման և այլ հարցեր, ինչպես նաև ստորերկրյա ջրոլորտի կոմպոնենտների տնտեսական

Աշանակությունը և նրանց վրա մարդու գործունեության ազդեցությունը [26]:

Ստորերկրյա ջրերի ուսումնասիրման պատմությունը բաժանում են երկու շրջանի՝ մինչեղափոխական և հետհեղափոխական [19,4]:

Մինչեղափոխական շրջանում առանձնացնում են ստորերկրյա ջրերի ուսումնասիրման երեք փուլ.

1) ստորերկրյա ջրերի օգտագործման փորձի կուտակման (X-XVII դար),

2) ստորերկրյա ջրերի մասին եղած տեղեկությունների և գիտելիքների լուսանացման (XVIII-XIX դարի կեսերը),

3) ջրաերկրաբանությունը որպես ինքնուրույն գիտության կազմավորման (XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի սկիզբները):

Սկրոերկրյա ջրերի օգրագործման փորձի կուրսական փուլ: Ունեցած ոչ լրիվ տվյալները վկայում են այն մասին, որ արդեն 3000-2000 թթ. մ.թ.ա. Մերձավոր Արևելքում, Միջին Ասիայում, Չինաստանում և այլ երկրներում, նախ և առաջ չորային շրջաններում, ստորերկրյա ջրերն ինտենսիվ կերպով օգտագործվել են խմելու համար, մասնավորապես, բավականին բարդ ու խորը ջրհավաք գալերեաներ (քյարիզներ) կառուցելու ճանապարհով՝ շահագործելով արտաքերման կոների և այլուվիալ նստվածքների ստորերկրյա ջրերը: Ունիստը բերում է տվյալներ այն մասին, որ արդեն նախապատմական ժամանակներից Չինաստանում գոյություն է ունեցել հորատման տեխնիկա և լեռնագործություն, որոնք հնարավորություն են տվել կառուցել մինչև 1200-1500 մ խորության ջրհավաք հորեր և ստանալ ստորերկրյա աղաջրեր [35]:

Հարավային շրջանների տափաստաններում հին սկյուրները փորել են 11 մ և ավելի ջրհորեր: Խոր անցյալում Միջին Ասիայում Կոպետ-Դաղի և Կովկասյան լեռնաստորոտներում կառուցվել են ստորերկրյա ջրհավաք քյարիզներ, որոնք օգտագործվում են մինչև այժմ: Ուրարտուի թագավոր Մենուայի հրամանով մ.թ.ա. 8-րդ դարում Տուշպա (Վան) քաղաքի համար կառուցվել է ջրատար: Այն ունի 70 կմ երկարություն և կազմված է քաց ու փակ ջրագծերից և ակվեդուկներից: Կարևոր է նշել, որ այդ ջրատարը անխափան գործում է նաև մեր օրերում:

XI-XII դարերում Ռուսաստանի Նովգորոդ քաղաքում ի հայտ են գալիս ջրատար կառուցներ, իսկ XV դարում կառուցվել է Մոսկվայի Կրեմլի ջրատարը:

Զքատարների, ջրհորերի, հորատանցքերի, կապտաժային կառույցների հին մնացորդները վկայում են մարդու՝ ջրամատակարարման, այլի ստացման և բուժիչ նպատակների համար ստորերկրյա ջրերի օգտագործման իմացությունը:

Սկրորերկրյա ջրերի մասին եղած լրեղեկությունների և զիրելիքների ընդհանրացման փուլ: Այս փուլի սկզբնական ժամանակահատվածում կառուցվում են խոշոր ջրատարներ, կատարվում են ստորերկրյա ջրերի ուսումնասիրություններ, այդ թվում հանքային ջրերի հայտնաբերման և օգտագործման համար:

Հայաստանում հանքային ջրերը բուժման նպատակով օգտագործել են դեռևս վաղ անցյալից: Այս տեսակետից հայտնի է Գ. Վուկորոյնիկովի (1830) հրումները Տաթևի և Ջերմուկի հանքային աղբյուրների օգտագործման վերաբերյալ:

Ստորերկրյա ջրերի ուսումնասիրությունները առավել սիստեմատիկ դարձան Ռուսական գիտական ակադեմիայի կազմավորումից հետո (1724 թ.): Ստորերկրյա ջրերի տվյալների հավաքագրումը կատարվում էր աշխարհագրական և երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում: Այդ աշխատություններում առաջին փորձերն ինչ արվուն բացահայտելու բնական տարրեր երևույթների, ինչպես նաև ստորերկրյա ջրերի փոխադարձ կապի պատճառները:

Առաջին անգամ ակադեմիկոս Մ. Վ. Լոմնոսովը դեռևս 1757-1759 թթ. նշել է երկրաբանական գործընթացներում ստորերկրյա ջրերի նշանակության մասին:

Նշված փուլի ընթացքում կատարված ուսումնասիրությունները ամփոփվել են ակադեմիկոս Վ. Մ. Սևերգինի աշխատություններում:

Այս փուլի վերջնամասում քաղաքների և գյուղական վայրերի ջրամատակարարման համար հորատանցքերի անցման արդյունքում Ռուսաստանի եվրոպական մասի համար ստացվել են նոր տվյալներ երկրաբանության և խորը ստորերկրյա ջրերի վերաբերյալ, այդ թվում բացահայտվել են որոշ արտեզյան ավազաններ:

Այսպիսով, բնական գիտությունների շարքում ծնվեց ստորերկրյա ջրերի մասին (ստորերկրյա ջրերի երկրաբանություն) ինքնուրույն գիտություն:

Զքաերկրաբանությունը որպես ինքնուրույն գիրություն կազմակորման փուլ: Զքաերկրաբանությունը որպես ինքնուրույն գիտական

ճյուղ բնական գիտությունների շարքում, ձևավորվել է XIX դարի 80-ական թվականներին: Դրա կազմավորման գործում մեծ դեր խաղացին գիտնականներ Ի. Վ. Մաշկեսովը, Ն. Ա. Սոկոլովը, Վ. Դ. Սոկոլովը, Ս. Նիկիտինը, Ն. Ֆ. Պոգրեբովը, Լ. Էլի դը Բոնոն, Օ. Ֆոլգերը, Ե. Վոլնին, Օ. Է. Սեհնցերը, Ո. Ռիխները:

XIX դարի վերջին լույս տեսան Ա. Դորրեի (1887) և Ի. Գագի (1885) աշխատությունները, որոնք, ջրաերկրաբանության մասին առաջին դասագրքերն էին, չնայած դրանցում «ջրաերկրաբանություն» տերմինը չեն օգտագործում [35]:

Ջրաերկրաբանության զարգացման գործում առանձնակի նշանակություն ունեցան Նիկիտինի աշխատանքները: 1880-1890 թթ. նա առաջին անգամ հիմնարար լնդիանություն կատարեց Ռուսաստանի եվլուպական մասի արտեզյան և գրունտային ջրերի մասին: Հրատարակվել է նրա մենագրությունը, որում լրացրանքած են Սոսկվա քաղաքի մերձակա տարածքների քարածխային նստվածքները և արտեզյան ջրերը:

Ջրաերկրաբանության գիտության համար բեղմնավոր եղան Վ. Վ. Դոկուչավի բնության մեջ բնապատմական գոնայականության մասին գաղափարները, որոնք լայն կիրառություն գտան բազմաթիվ տեսական և կիրառական հարցերի լուծման ժամանակ: Այդ հիմքի վրա առաջին անգամ Պ. Վ. Օսոնցկին տվեց գրունտային ջրերի գոնայականությունը: Այս փուլում Հայաստանում ջրաերկրաբանության մասին առաջին տեղեկությունները տեղ են գտել Ի. Գյուլինչտեղի, Ի. Արիխի (1873), Ն. Չեռնոյարսկովի (1880), Բ. Միլերի և Դ. Դեմիտովի (1889), Մ. Սմբատյանի և այլոց աշխատանքներում [6,7]:

Շարունակվում են Կովկասյան հանքային ջրերի ուսումնասիրությունները (Ա. Ն. Օգիլվի, Ա. Պ. Գերասիմով, Ն. Ն. Սլավյանով և ուրիշներ): Զևավորվում են ջրաերկրաբանության նոր ճյուղեր, և ուսումնասիրությունները սկսում են կրել համատարած բնույթը:

Ջրաերկրաբանություն գիտության զարգացման հերիեղակողական շրջանի համար առանձնացնում են երկու փուլ՝ մինչպատերազմյան և հետապատերազմյան:

Մինչպատերազմյան փուլը (1917-1941թթ.) բնութագրվում է ջրաերկրաբանության բուն զարգացմամբ և դառնում է պետական կարևոր գործոն:

Զրաերկրաբանական մեծածավալ ուսումնասիրություններ են կատարվում՝ Արևելյան Անդրկովկասում (Ֆ. Պ. Սավերևսկի, Վ. Ա. Պրիկըլինսկի և ուրիշներ), Կոպետ-Դաղի շրջանում (Ի. Ի. Նիկշիչ), Միջին Ասիայում (Ե. Վ. Խվանով, Օ. Կ. Լանգե և ուրիշներ), Ռուսականայի հյուսիսում (Ն. Ա. Պլոտնիկով, Կ. Ի. Մակով և ուրիշներ), Ղազախստանում (Ա. Ա. Կողլիով, Բ. Կ. Տերթեցի և ուրիշներ), Հայաստանում (Վ. Ֆ. Զախարով, Դ. Գ. Տիգրանյան, Կ. Ն. Պաֆենգոլց, Ա. Պ. Դեմյոխին և ուրիշներ): Նմանատիպ աշխատանքներ կատարվեցին նաև այլ ռեգիոններում և համրապետություններում:

1920 թ. Անվազայի լեռնային ակադեմիայում սկսվում է զրաերկրաբանություն մասնագիտությամբ մասնագետների պատրաստումը: 1922 թ. լույս է տեսնում առաջին դասագիրքը զրաերկրաբանության մասին՝ գրված Պ. Ն. Չերվինսկու կողմից:

1931 թ. Լենինգրադում կայացավ Առաջին համամիութենական զրաերկրաբանական համագումարը, որտեղ ներկայացված էին հետաքրքիր աշխատանքներ զրաերկրաբանության ընդհանուր հարցերի (Օ. Կ. Լանգե, Ա. Ֆ. Լեբեդև, Ֆ. Ա. Սավարենսկի և ուրիշներ), գրունտային զրերի գոնայականության և զրաերկրաբանական շրջանացման վերաբերյալ (Պ. Ի. Վասիլևսկի, Վ. Ա. Իլին, Ա. Ն. Սեմյոխստով, Ռ. Ն. Կամենսկի, Ն. Ի. Տոլստիխին և ուրիշներ):

Զրաերկրաբանական մի շարք գաղափարների (հայացքների) զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունեցան Վ. Ի. Վերնադսկու աշխատությունները (1935 թ.), որոնցում նա հիմնավորում է Երկիր մոլորակի բոլոր ջրերը միմյանց հետ սերտորեն կապված են և բնական ջրերը պետք է դիտել նեկ ընդհանուր համակարգի մեջ:

30-ական թվականներին առաջին անգամ կազմվեցին ամփոփիչ քարտեզներ (զրաերկրաբանական, հանքային ջրերի, զրաերկրաբանական շրջանացման), որոնք ունեցան կարևոր նշանակություն հետազա զրաերկրաբանական ուսումնասիրությունների պլանավորման համար: Միաժամանակ հրատարակման էր պատրաստվում «ԽՍՀՄ զրաերկրաբանություն» ամփոփիչ մենագրությունը Ն. Ի. Տոլստիխինի խմբագրությամբ: Մինչև Սեծ հայրենական պատերազմը հրատարակվում է այդ ամփոփիչ մենագրությունից միայն 12 հատորը: Սովետական կարգերի տարիներին ստեղծվում են զրաերկրաբանության տեսական հիմունքները և սկսում են կազմավորվել դրա գիտական և մեթոդական կուրսերը [9]:

Այսպիսով, մինչպատերազմյան տարիներին ջրաերկրաբանությունը դառնում է ինքնուրույն գիտություն՝ ներառելով տարբեր գիտամեթոդական մասնագիտություններ (դիսցիլիններ):

Հեղապարերազմյան փուլ (1941-ից մինչև մեր օրերը): Հայրենական պատերազմի ավարտից հետո սովետական ջրաերկրաբանները, օգտագործելով նախկինում կատարված տեսական մշակումները և փաստացի նյութերը, ձեռնամուխ եղան դրանց մշակման և ընդհանրացման բարդ հիմնախնդիրներին: Ստորերկրյա ջրերի մասին խոր գիտական անալիզի և նյութերի ռեգիստրացիայուն դաշտում կայացվեց հրատարակման պատրաստել 45 հատորից բաղկացած «ՍՍՀՄ ջրաերկրաբանություն» աշխատությունը և բացի այդ՝ կազմել ամփոփիչ 5 հատոր: Այդ հսկայական աշխատանքն արդեն կատարված է, ընդ որում Հայաստանի ջրաերկրաբանությունը ամփոփված է VIII հատորում:

Այս փուլի ընթացքում ջրաերկրաբանական ուսումնասիրությունները տարբերում են գիտական հիմքի վրա, դրանք բնութագրվում են աշխատանքների ընդգրկուն թեմատիկայով ու կոնվենտայնությամբ: Երկրաբանական կտրվածքի խորը հորիզոնների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ ստացվեցին նավթագազառոնողական հորատման ընթացքում:

Զրածնշումային համակարգի խոր մասերի վերաբերյալ կոտակված եզական նյութերը, բացի ժողովրդական տնտեսության կարևոր կիրառական խնդիրների ու ջրաերկրաբանական խիստ տեսական հարցերի լուծումները տալուց, հնարավորություն ստեղծեցին նաև անցնելու համաերկրաբանական հիմնահարցերի լուծմանը, մասնավորապես, պարզելու ջրի դերը ապարներում վերափոխված միներալների նստեցման ընթացքում միներալագոյացմանը, երկրակեղևի բազմակիլոմետրանոց հաստվածքում ջրի երկրաբանական և երկրաքիմիական դերը, պինդ հանքային, նավթային ու գազային օգտակար հանածոների հանքավայրերի ձևավորմանը [9]:

1988 թ. տեղի ունեցավ ինժեներ-երկրաբանների, ջրաերկրաբանների և երկրասացարանների Առաջին համամիութենական համագումարը, որը իմի բերեց այդ հարակից գիտությունների զարգացումը սովետական կարգերի 70 տարիների ընթացքում, և որոշեց կատարել տեսական և կիրառական ուսումնասիրություններ: Ջրաերկրաբանական ու-

սումնասիրությունների բնագավառում գոյություն ունեցող հարցերի շարքում համագումարը նշեց ուսումնասիրությունների երկու հիմնական ուղղություններ՝

1) ինտենսիվ անտրոպոգեն փոխագդեցության պայմաններում ստորերկրյա ջրերի ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրություններ, վերջինիս հետ կապված բուն ստորերկրյա ջրերի պահպանության հարցեր և համալիր էկոլոգիական խնդիրներ, որոնք իրենց մեջ ներառում են ստորերկրյա ջրերի դերի ուսումնասիրումը տարրեր տիպի տեխնոգեն լանդշաֆտների ձևավորման, բնական միջավայրի աղտոտման դեմ պայքարի, մարդու տարաբնույթ տնտեսական գործունեությամբ պայմանավորված ստորերկրյա հիդրոսֆերայի վերին մասերում ընթացող գործընթացների հսկում և կառավարում,

2) ստորերկրյա հիդրոսֆերայի խոր հորիզոնների ուսումնասիրություններ՝ նպատակ ունենալով իմանալու և պարզելու դրանում զարգացող գործունների քանակական բնութագրերը, պարզելու ստորերկրյա ջրերի դերը երկրաբանական գործընթացներում, այդ թվում օգտակար հանածոների ձևավորման և քայլայման գործընթացը:

Ներկա ժամանակներում ջրաերկրաբանությունը ձևավորվել է որպես բարդ համալիր գիտություն: Այն ներառում է հետևյալ ինքնուրույն բաժինները.

1) ընդհանուր ջրաերկրաբանություն, 2) ջրաերկրադինամիկա (ստորերկրյա ջրերի դինամիկա), 3) ջրաերկրաքիմիա, 4) ջրաերկրաբանական հետազոտությունների մեթոդաբանություն, 5) օգտակար հանածոների հանքավայրերի ջրաերկրաբանություն, 6) մելիորատիվ ջրաերկրաբանություն, 7) ռեզիոնալ ջրաերկրաբանություն, 8) ինժեներական ջրաերկրաբանություն, 9) ուսմունք հանքային, արդյունաբերական և թերմալ ջրերի մասին, 10) ջրաերկրաբանական մոդելավորում, 11) ջրաերկրաբանական մոնիթորինգ, 12) էկոլոգիական ջրաերկրաբանություն, 13) ռադիոջրաերկրաբանություն, 14) հնէաջրաերկրաբանություն, 15) ջրաերկրաբերմիա, 16) կրիոջրաերկրաբանություն [19, 25, 11, 4]:

Ընդհանուր ջրաերկրաբանությունը ուսումնասիրում է ստորերկրյա ջրերի սննան և ձևավորման ընդհանուր հարցերը՝ ներառելով օդերևութաբանական պայմանները, ստորերկրյա ջրերի ծագումը, դրանց դասակարգումը, քիմիական կազմը, ջրաերկրաբանական ուսումնասի-

բությունների ընդհանուր հարցերը և ջրաերկրաբանական քարտեզների կազմումը:

Ջրաերկրադիմամիկան (ստորերկրյա ջրերի դիմամիկա) ուսումնասիրում է ստորերկրյա ջրերի շարժումը երկրակեղևի ապարներում բնական և արհեստական գործունների ազդեցության տակ, ինչպես նաև մշակում է շարժման քանակական գնահատման և նպատակային կառավարման մեթոդներ:

Ջրաերկրաքիմիան (ստորերկրյա ջրերի երկրաքիմիա) ուսումնասիրում է ստորերկրյա ջրերի քիմիական կազմը և նրա փոփոխությունները ժամանակի ընթացքում և տարածության մեջ՝ կապված երկրակեղևում ընթացող քիմիական, ֆիզիկական և կենսաբանական գործընթացների հետ:

Ջրաերկրաբանական հետազոտությունների մերողաբանությունը զբաղվում է ջրաերկրաբանական պայմանների բացահայտման մեթոդների և եղանակների, ստորերկրյա ջրերի պաշարների, որակի, ռեժիմի, շարժման օրինաչափությունների որոշնաճ՝ նպատակ ունենալով լուծելու ժողովրդական տնտեսության տարբեր խնդիրներ (ջրատեխնիկական, քաղաքացիական, արդյունաբերական և այլ տիպի շինարարություն, ջրամատակարարում, հողատարածքների ոռոգում և չորացում, բուժիչ և արդյունաբերական նպատակներով ջրերի հետախուզում, նավթային և գազային հանքավայրերի ստորերկրյա ջրերի ուսումնասիրում, հոսքաջրերի քաղաք և այլն):

Օգտակար հանածոնների հանքավայրերի ջրաերկրաբանությունը զբաղվում է հանքավայրերի որոնման, հետախուզման, երկրաբանաարդյունաբերական գնահատման, շահագործման խնդիրների հետ կապված ջրաերկրաբանական պայմանների ուսումնասիրությամբ: Այս բաժնում առանձնացնում են երկու ուղղություն:

ա) պինդ օգտակար հանածոնների հանքավայրերի ջրաերկրաբանություն,

բ) նավթագազային հանքավայրերի ջրաերկրաբանություն:

Մելիորացիվ ջրաերկրաբանություններ ուսումնասիրում է մելիորացվող հողատարածքների ջրաերկրաբանական պայմանները, մշակում է հողերի մելիորատիվ վիճակի բարելավման մեթոդները և եղանակները՝ դրանց արդյունավետ օգտագործման և կայուն բարձր բերքի ստացման նպատակով: Մելիորատիվ ջրաերկրաբանության կարևորա-

գույն խնդիրը հանդիսանում է հողատարածքների և գյուղատնտեսական այլ օբյեկտների ռողոգման, չորացման, ջրարիխացման, ջրամատակարարման պլանավորման և շինարարական նախագծերի ջրաերկրաբանական հիմնավորումը:

Ուզինալ ջրաերկրաբանությունը գրադաւում է որոշակի ռեզինների (երկրամասերի, նարզերի) ստորերկրյա ջրերի առաջացման, տեղադրման, տարածման օրինաչափությունների, երկրակեղելի երկրաբանական կտրվածքի և զարգացման պատմության հետ նրանց կապի ուսումնասիրության՝ նպատակ ունենալով պարզաբանել ժողովրդական տեստեսության մեջ ստորերկրյա ջրերի օգտագործման հնարավորություններն ու հեռանկարները:

Համբային, արդյունաբերական և թերմալ ջրերի մասին ուսումնական ըրբեռությունը ուսումնասիրություն է դրանց հանքավայրերի ձևավորման, ջրերի կազմի, դրանց ծագման և հանքավայրերի երկրաբանա-արդյունաբերական գնահատման հարցերը դրանք գործնական նպատակով օգտագործելու համար:

Ջրաերկրաբանական մողելավորումը ստորերկրյա ջրերի ֆիլտրացիոն գործընթացները տարբեր մողելների վրա արիեստական վերաբաշխման մերող է, որը նպատակ ունի լուծելու քազմազան ջրաերկրաբանական խնդիրներ: Առավել կիրառական են համարվում էլեկտրոնային մողելները: Այլ մողելները (հիդրավլիկական, նազմիսային, մեմբրանային, օպտիկական, պննմատիկական) օգտագործվում են հազվադեպ:

Ջրաերկրաբանական մոնիթորինգը գրադաւում է ստորերկրյա ջրերի ռեժիմի և հաշվեկշռի, դրանց կազմի ու որակի սիստեմատիկ (մշտապես) դիտարկումների, այդ հիմքի վրա իրավիճակի գնահատման և հետագա վիճակի կանխատեսումների խնդիրներով: Ներկայումս, երբ ստորերկրյա ջրերի պաշարները ավելի ու ավելի ինտենսիվորեն ու անհաշվենակատ են շահագործվում, խախտվում է դրանց ռեժիմը, ուստի ստորերկրյա ջրերի յուրաքանչյուր խոշոր հանքավայրի կամ ավազանի համար մոնիթորինգի վարումը դառնում է հրամայական:

Էկոլոգիական ջրաերկրաբանությունը գիտություն է ստորերկրյա հիդրոսֆերայի (հիդրոլիքոսֆերայի) ջրաերկրաբանական, ջրաերկրադինամիկական և ջրաերկրաբիմիկական փոխակերպումների մասին, որպես շրջակա միջավայրի և ջրաերկրաբանական համակարգի բնա-

տեխնիկական բազա կազմող բաղադրիչ՝ անտրոպոգեն ծանրաբեռնվածության և բնատեխնիկական աղետների ազդեցության տակ:

Ասդրուաերկրաբանությունը գրաղվում է ստորերկրյա ջրերում ուղղուակտիվ տարրերի ձևավորման, տարածման, միգրացիայի (տեղագաղթ) օրինաչափությունների ուսումնասիրմամբ, ինչպես նաև դրանց որոնման և արդյունահանման առավել արդյունավետ մեթոդների մշակումով:

ՀԱԼԱՉՐՈՒԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (պատմական ջրաերկրաբանություն) ուսումնասիրում է երկրակեղևի ջրաճնշումային համակարգերի զարգացման պատմությունը՝ նպատակ ունենալով պարզաբանելու տարրեր բաղադրության ստորերկրյա ջրերի ձևավորման օրինաչափությունները և դրանց երկրաբանական դերը օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման և քայլքայման գործում:

ՋՐԱԵՐԿՐԱԲԵՐՄԻԱՆ ուսումնասիրում է ստորերկրյա ջրերի ջերմային հատկությունները և դրանց հետ ջերմատարման գործընթացները:

Կրիոդրաերկրաբանությունը ուսումնասիրում է բազմամյա սառցությային շրջանների ստորերկրյա ջրերը, դրանց փոխազդեցությունը բազմամյա սառած ապարների հետ, ինչպես նաև ջրերի արդյունավետ եղանակով կապտաժումը և շահագործումը:

Ջրաերկրաբանություն գիտության նշանակությունը մեծանում է տարեցտարի այնպես, ինչպես բարձրանում է ստորերկրյա ջրերի օգտագործման պահանջարկը և դրանց դերի ուսումնասիրությունները երկրաբանական, երկրաբիմիական և ջրաբանական գործընթացներում, որոնք տեղի են ունենում երկրակեղևում և Երկրի մակերևույթի վրա:

Ջրաերկրաբանության գիտական և գործնական նշանակությունը արտակարգ մեծ և բազմաբնույթ է, քանի որ ժողովրդական տնտեսության մեջ դժվար է գտնել մի ճյուղ, որը կապված չլինի ստորերկրյա ջրերի հետ:

Հիմնական խնդիրները, որոնք լուծվում են ջրաերկրաբանությունում հետևյալներն են [19].

1) քաղցրահամ ստորերկրյա ջրերի աղբյուրների հետախուզում և ջրամատակարարման կազմակերպում բնակավայրերին, գյուղատնտեսական օբյեկտներին և արդյունաբերական ձեռնարկություններին,

2) լուծում է մելիորատիվ ջրաերկրաբանական խնդիրներ՝ կապված չորային ջրաններում հողերի ոռոգման և հավելցուկային խոնավության շրջաններում հողերի չորացման հետ,

3) ջրատեխնիկական և արդյունաբերական շինարարական օրյեկտների ջրաերկրաբանական պայմանների գնահատում, ջրերի ֆիլտրացիոն կորուստների որոշում,

4) բուժիչ նպատակով օգտագործվող հանքային ջրերի հաճքավայրերի հետախուզում և գնահատում,

5) արդյունաբերական ջրերի հանքավայրերի որոշում, հետախուզում և երկրաբանա-արդյունաբերական գնահատում, որպես քիմիական հումք՝ դրանից յոդ, բրոմ, բրոր, լիթիում, ստրոնցիում և այլն կորզելու համար,

6) ջեռուցման և երկրաջերմային էլեկտրակայանների կառուցման համար ջերմաջրերի օգտագործման շահավետության հետախուզում և գնահատում,

7) լեռնային գործի խնդիրների լուծման ապահովում՝ լեռնային փորվածքներ ջրհոսքի կանխատեսում, ինչպես նաև օգտակար հանածոնների կորզման նոր պրոգրեսիվ մեթոդների ներդրում՝ հիդրավլիկական, քիմիական, նավթային գործում՝ արհեստական ջրալցում (ջրի ներմղում),

8) ջրաերկրաբիմիական մեթոդներով օգտակար հանածոնների հաճքավայրերի որոշում,

9) ատոմային հումքի հանքավայրերի ռադիոջրաերկրաբանական որոշում և ռադիոակտիվ ջրերի օգտագործման հարցերի լուծում:

Ջրաերկրաբանության հաջողությունները մեծամասամբ կանխրոշվել են ֆունդամենտալ աշխատություններով և գիտնականների գիտական, ուսումնա-դաստիարակչական և կազմակերպչական գործունեությամբ, որպիսիք են Ս. Ն. Նիկիտինը, Վ. Ա. Իլինը, Ն. Ֆ. Պոզդեյքովը, Ա. Ֆ. Լեբեդիկը, Ն. Ն. Պավլովսկին, Ֆ. Պ. Սավարենսկին, Վ. Ն. Վերնադսկին, Օ. Կ. Լանգեն, Գ. Ն. Կամենսկին, Ն. Ի. Տոլստիխինը, Ա. Մ. Օվշիննիկովը, Պ. Պ. Կիմենտովը, Ի. Կ. Զայցևը, Վ. Պ. Զվերևը, Ի. Ա. Զեկցերը, Վ. Ա. Կիրյուխինը, Ե. Վ. Պինեկերը, Ն. Ն. Վերիգինը, Ավերյանովը, Ն. Ն. Բինդեմանը, Ա. Ի. Կուտելինը, Դ. Մ. Կացը, Վ. Մ. Շեստակովը, Ի. Կ. Գավիչը, Վ. Ա. Վասուլժսկին և այլք:

Արտասահմանյան գիտնականներից, որոնք էական ներդրում ունեն ջրաերկրաբանության զարգացման գործում, կարելի է հիշատակել հետևյալներին՝ Փրանսիացի գիտնականներ և ինժեներներ Ե.Մարիոտ-տին, Ի. Պուազեյին, Ա. Դարսիին, Լ. Դյուպուիին, Դ. Բուախնեսկին, Ժ. Կաստանիին, ամերիկացի գիտնականներից՝ Ն. Թեյսին, Ս. Զեկորին, Օ. Է. Մեհնցերին, Ի. Ս. Սլիխտերին, Ռ. Ուիստին, Մ. Մասկետին, Մ. Խանտուշին, ավստրիացի գիտնականներից՝ Ֆ. Ֆորխուգեհներին, գերմանացի գիտնականներից՝ Դ. Սմրեկերին, Խ. Սլիխտերին, Ա. Տիմային, Ե. Պրինցին, անգլիացի գիտնականներից՝ Ու. Սմիտին, Ա. Բուխային և ուրիշներին:

Հայաստանի ջրաերկրաբանության զարգացման գործում մեծ ավանդ ունեն Վ. Ֆ. Զախարովը, Գ. Գ. Օգանեզովը, Կ. Ն. Պաֆենզոլցը, Ա. Պ. Դեմյոնինը, Վ. Ա. Ավետիսյանը, Փ. Թ. Սարգսյանը, Վ. Տեհունին, Ա. Ե. Ամրոյանը և ուրիշները:

ԳԼՈՒԽ II

**ԶՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՐԿՐԻ ՎՐԱ, ԴՐՍ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐՋԱՊՏՈՒՅՑԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

2.1. ԶՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՐԿՐԻ ՎՐԱ ԵՎ ԶՐՈԼՈՐՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զրի ծագումը և ջրողորտի (հիդրոսֆերայի) ձևավորումը անխօելիորեն կապված են այնպիսի բարդ հիմնահարցերի հետ, ինչպիսիք են Երկրի ծագումը և դրա երկրաբանական պատմությունը:

Համաձայն առավել ճանաչում գտած ժամանակակից վարկածի, Երկրի մոլորակն առաջացել է 4.7 մլրդ. տարի առաջ նախաարևային համակարգում ցրված տիեզերական սառը գազափոշու ամպերի կուտակումից և հետագա խտացումից: Այդ խտացված նյութի կազմը նմանեցվում է երկնային աստվածերի կազմին (քարային կամ երկարաբարային մետերիտներ), որոնք պարունակել են 0.5-1.0% կապակցված ջուր:

Սակայն, որպեսզի Երկրի մոլորակի վրա առաջանային երկրապատյանները, այդ քում ջրային պատյանը, հարկավոր էր կապակցված ջրի անջատումը սկզբնանյութից, որի համար հսկայական քանակությամբ էներգիա էր անհրաժեշտ:

Ներկայում շատ հետազոտողներ Երկրի ջրողորտի և մթնոլորտի ձևավորման հարցում համամիտ են Ա. Պ. Վինագրադովի վարկածի հետ: Այն է՝ Երկրի պատյանների տարանջատումը կատարվել է զոնալ (շերտավոր) եռման սկզբունքով՝ ի հաշիվ ադիաբատիկ սեղմնան և ռադիոակտիվ էլեմենտների տրոհման արդյունքում անջատված էներգիայի: Երկրի պատմության վաղ շրջանում ռադիոակտիվ տրոհման էներգիան 8-9 անգամ գերազանցել է նրա ներկա քանակը: Մոլորակի եռացող ընդերքում հրահեղուկ զանգվածը շերտավորվել է դժվարահաղ և դյուրահաղ նյութերի: Առաջինները, որոնք ավելի ծանր են, հանգրվանել են ներքևում և աստիճանաբար վերածվել են պինդ ապարների (պայմանական բազալտների), իսկ երկրորդները՝ դյուրահաղները, գագերով հագեցած նյութերը բարձրացել են վերև և որոշակի խորություններում սառել, բյուրեղացել և ենթարկվել դեգազացիայի (գազանջատման): Արդյունքում առաջացել են գրանիտային ապարները (նոյնպես պայմանական): Ընդերքի նման հալման և գազանջատման արդյունքում Երկրի

մակերևույթ են բարձրացել ոչ թեքն նյութերը, այլ դյուրահավ՝ բազալտային հրահեղուկ մազման, որը պարունակում է ջուր և լուծված գազեր: Հաշվարկները ցույց են տվել, որ այդ ճանապարհով ձևավորվող ջրոլորտը և մթնոլորտը արդյունք են միայն մանտիայի (միջնապատյան, թիկնոցապատյան, միջնոլորտ) նյութերի հալման և գազանջատման [19]: Այդ են վկայում նաև Վ. Պ. Զվերևի եզրահանգումները, որ մանտիայի ֆլյուիդների օքսիդացման գործընթացներն են հանդիսանում գլխավոր մեխանիզմը (ներքին կառուցվածքը) և պատասխանատուն հիդրոսֆերայի ձևավորման [13]:

Մանտիան հանդիսանում է բնական ջրերի գեներատորը (արտադրող մեքենան): Դրանում պարունակվում է մոտ 20×10^{18} տոննա ջուր բուլոր վիճակներում, ընդ որում $7.5\text{--}12.5\%$ [$(1.5\text{--}2.5) \times 10^{18}$ տ], իսկ որոշ գիտնականների տվյալներով՝ $17\text{--}24\%$ [$(3.4\text{--}4.8) \times 10^{18}$ տ] քանակի ջրեր տեղագաղթել (միգրացվել) են երկրակեղու և Համաշխարհային օվկիանոս, այսինքն ձևավորվել է ջրոլորտը: Պայմանականորեն կարելի է ընդունել, որ մազմայից հեռացել (չքացել) է 3.4×10^{18} տ ջուր [24]:

Մանտիայից ջրի արտազատումը կատարվում է բարդ կախվածություններով՝ կապված մանտիային ապարների սերպենտինիզացման (օձաքարացման) և այլ գործընթացների հետ (Մոնին, Սորոխտին, 1984, Շոպֆ, 1982, Տիմոֆեև, Խորտով, Զվերև 1988):

Իզոտոպային և պետրոլոգո-երկրաքիմիական մեթոդներով ստացված բազմաքանակ տվյալների համատեղ վերլուծությունը հիմք է հանդիսացել եզրակացնելու, որ Երկրի զարգացման վաղ փուլերը բնութագրվում են ֆլյուիդների ինտենսիվ դրուս գալով, որոնց կազմում գերակշռող են հանդիսացել իներտ զազերը և ածխածնի միացությունները: Այդ շրջանում ջրի անջատումը, դատելով Վեներա մոլորակի մթնոլորտում դրա պարունակությունից (Բարսուկով 1985), եղել է, ըստ երևույթին, ոչ շատ: Միայն արխեյի և պրոտերոզոյի սահմանագծում սկսվել է ջրի առավել ինտենսիվ անջատում, կապված մանտիային ֆլյուիդների օքսիդացման հետ՝ պայմանավորված ֆլյուիդների և ապարների փոխազդեցությամբ, որն ընթանում է նաև ներկա ժամանակներում [13]:

Մանտիայի գազագրկման գործընթացի արդյունքում Երկրի վրա ջրոլորտի ձևավորման հիմնական վարկածի հետ միաժամանակ ներկա ժամանակներում դիտարկվում են ջրի մուտքի սկզբունքորեն նոր հնարավոր ճանապարհներ դեպի մոլորակի ջրոլորտ: Այսպես, ըստ Վ. Ֆ.

Դերպիոլցի (1962) կարծիքի, մոլորակի ջրոլորտի շուրջ 100 հազ. կմ³ ջրաքանակը Երկիր է բափանցել Արեգակնային համակարգի աստերիդային մարմինների հետ (ժամանակակից ջրոլորտի ծավալը 0.005 %-ից պակաս): Որոշ հեղինակներ հիմնավորում են այն պատկերացումը, թե վերգետնյա ջրի «տիեզերական» մուտքը պետք է դիտարկելու որպես Երկրի ջրոլորտի ձևավորման հիմնական գործընթաց: Մեկ այլ պոտենցիալ հնարավոր ջրադրյուր համարում են մթնոլորտի 80 կմ և ավելի բարձրությունների վրա արծաթափուն ամպերում ջրային կուտակումների հնարավոր առաջացումը: Այժմ արհեստական արրանյակների օգնությամբ մթնոլորտի վերին շերտում տարվող ուսումնասիրություններով որոշված է, որ 230-250 կմ բարձրությունների վրա կան թթվածնի և ջրածնի ատոմներ և ջրի մոլեկուլի առաջացումը չի բացառվում [13, 25]:

Մանտիայի հետ համեմատած՝ տիեզերքը և մթնոլորտի բարձր շերտերը տվել են շատ քիչ քանակի ջուր: Առավել շատ քանակի ջուր Երկրից գնում է տիեզերական տարածություն:

Այսպիսով, Երկրի վրա ջրի միակ աղբյուրը գործնականում համարվում է մանտիան:

Հիդրոսֆերայի տակ հասկանում են Երկրի ջրային պատյանը, որը միավորում է Համաշխարհային օվկիանոսի ջրերը, ստորերկրյա ջրերը (Երկրակեղևում պարունակվող), ինչպես նաև ցամաքի մակերևութային ջրերը (գետեր, լճեր, ճահիճներ, ներառյալ ձնածածկույթի և սաղցադաշտերի ջրերը): Ընդ որում ջրոլորտի վերին սահմանը միաժամանակ հանդիսանում է մթնոլորտի ներքին սահմանը, իսկ ջրոլորտի ներքին սահմանը համընկնում է Երկրակեղեղի և մանտիայի սահմանի հետ: Այլ կերպ ասած՝ հիդրոսֆերան իրենից ներկայացնում է Երկրի ընդհատ ջրային բաղանք, որը տեղաբաշխված է մթնոլորտի և պինդ Երկրակեղեղի միջև:

Ջրոլորտի աղային կազմի ձևավորման հետ կապված Ա. Պ. Վինագրադովը անձատում է երեք ընթացաշրջան. վաղ շրջան՝ կենսոլորտի բացակայության (խոր արխեյում), կենսոլորտի կազմավորման շրջան (արխեյի վերջ-պալեոզոյ), ժամանակակից օվկիանոս (պալեոզոյից մինչև մեր օրերը):

Ընդհանուր առմամբ օվկիանոսի աղերի անիոնային մասը առաջ է եկել հրաբխային նյութերի գազանշատումից, իսկ կատիոնային՝ ի հաշիվ ապարների բայքայման: Վերջինիս հետ կապված անհրաժեշտ է հիշեցնել, որ օվկիանոսների (Խաղաղ, Ատլանտյան) ժամանակակից

հատակները ծածկված են բազմաթիվ հանգած հրաբխային կոնաձև մարմիններով:

Առաջնային մթնոլորտում (երբ դեռևս թթվածին չի եղել) եղել են հետևյալ նյութերը՝ H_2O գոլորշիներ, CH_4 , NH_4 , CO_2 , CO , S , H_2S , H_3BO_3 և HCl , HF , HBr (հավանական է նաև Se , Te , As): Երկրի գոյության սկզբնական շրջանում ջրոլորտի ջրերը եղել են թթու, քանի որ ջրի գոլորշիների խտացման գործնականությունը ավելացել են HCl , HF և այլ քաղեր: Թվարկած բոլոր ածխածնային միացությունների աղբյուրները եղել են բազալտային և այլ ապարներում ցրված գրաֆիտը:

Այդ ժամանակներում մթնոլորտում դեռևս թթվածին չի եղել, այն կարող էր առաջանալ միայն մթնոլորտի վերին շերտերում գոլորշանման ջրի հաշվին, քանի որ այն, արևի ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության տակ տարալուծվելով՝ առաջացնում է ազատ թթվածին: Այդ ֆոնի վրա ձևավորվում է օվկիանոսների աղային զանգվածի նախնական կազմը: Մոտաք գործող ջրերի ծավալի մեծացումով մեծանում է գազային էմանացիաների նույնը, իսկ դրա հետ կապված աճում է նաև աղի քանակը օվկիանոսում:

Օվկիանոսի աղային զանգվածի կատիոնային կազմը ժամանակակրցի հետ համեմատած, եղել է տարբեր, քանի որ հեռու անցյալում քայլայման են ենթարկվել գլխավորապես հիմնային և ուլտրահիմնային ապարները: Օվկիանոսային ջրում նատրիումի գերակշռությունը կայլումի նկատմամար եղել է ավելի բարձր, քան ներկայումն է, այն հագեցված չի եղել $CaCO_3$ -ով:

Մթնոլորտի և օվկիանոսի կազմի նշանակալից փոփոխություններ կատարվել են կատարիսէյի և արխէյի սահմանագծում (մոտ 3.5×10^9 տարի առաջ): Մթնոլորտում, Երկրի մակերևույթի վրա և օվկիանոսում կազմի փոփոխությունների էությունը վերականգնողական պայմաններից օրփղացման պայմանների անցումն է:

Թթվածնի առաջացման միակ աղբյուրը հանդիսացել են մթնոլորտի վերին մասերում ֆոտոքիմիական ռեակցիաները H_2O և CO_2 -ի հետ: Այդ ժամանակներում Երկրի մթնոլորտում թթվածնի պարունակությունը կազմել է 0.1 մասից ոչ ավելի՝ ժամանակակից մթնոլորտի հետ համեմատած, իսկ ազոտի պարունակությունը՝ շատ աննշան: Քանի որ մթնոլոր-

տում թթվածնի պարունակությունը եղել է քիչ, և այն հիմնականում ծախսվելիս է եղել օքսիդացման գործընթացների վրա, ուստի մթնոլորտում օգնային էկրան չէր կարող առաջանալ: Այդ պայմաններում Երկիրը բավականին ինտենսիվ ենթարկվել է Արևի տիեզերական և ուժարանակագույն ճառագայթումների: Օվկիանոսի ընդարձակ մակերևույթի վրա CH_4 , NH_3 , H_2 , H_2S , CO_2 , H_2O և այլն տիպի միացությունների առատությունը կարող էին ծառայել ածխաջրածնային բարդ օրգանական միացությունների առաջացմանը: Նման օրգանական միացությունների հիմքի վրա օվկիանոսային ջրի որոշակի խորության շերտի էկրանի տակ զարգանում են պարզ օրգանիզմները: Ցամաքի վրա դեռևս կյանք չի եղել (օգնային էկրանի բացակայության պատճռով):

Օվկիանոսային ջրերում օրգանական բարդ միացությունների, իսկ այնուհետև պարզ օրգանիզմների ի հայտ գալը առաջին անգամ բերեցին օվկիանոսային ջրերի կազմի խորքային վերափոխումների և դրանում ընթացող գործընթացների: Օրգանական նյութերի ի հայտ գալը փոխեց երկրաբանական գործընթացները, օվկիանոսի և հատակային նստվածքներում աղային գանգվածի ձևավորումը: Օրգանական նյութերի, իսկ հետո անաէրոր կյանքի ի հայտ գալու հետ միասին արխեյում տեղի է ունենում օվկիանոսային ջրերի կազմի խոր փոփոխություններ: Այն կապված է H_2O -ի վերականգնման առաջացման հետ, որը տեղի է ունենում պարզ օրգանիզմների կենսագործունեության գործընթացներով և ազատ թթվածնի անջատումով պայմանավորված: Աղյունքում, մթնոլորտում և օվկիանոսում փոխվում են գոյություն ունեցող հավասարակշռությունները և ձևավորվում նոր օքսիդացման կենսոլորտ և ժամանակակից ազդուա-թթվածնային մթնոլորտ:

Մթնոլորտում ֆոտոսինթետիկ թթվածնի կուտակումը բերեց օգնային շերտի (էկրանի) առաջացմանը, որը և նպաստեց ցամաքի վրա կյանքի ի հայտ գալուն և զարգացմանը: Մոլորակի հզոր օդային պատյանի առաջացումով դադարեց բարդ օրգանական միացությունների ռադիոգեն և ֆոտոգեն սինթեզը: CO , CH_4 և այլ միացությունների օքսիդացումը բերեց մթնոլորտում և օվկիանոսային ջրերում CO_3 -ի պարունակության մեծացման: Վաղ պալեոզոյում թիկարբունատի, S , H_2S ,

SO_4 -ի օքսիդացումը նույնպես նպաստեց օվկիանոսային լուծույթի կազմի փոփոխմանը և օվկիանոսային ջրերը գերազանցապես դարձան քլորիդ-սուլֆատային տիպի:

Ցամաքում կյանքի ի հայտ գալով փոփոխվեցին հողմնահարման գործընթացները, ածխաբթու գազի ազդեցության տակ, դրանք հանդես եկան առավել ինտենսիվ և կենսոլորտը դարձավ երկրագնդի առավել դիմամիկ պատյանը:

Երկրի վրա կյանքի ծագումը, ժամանակակից մթնոլորտի աջառացումը, երկրակեղևի տարանջատումը համեմատարար կայուն պլատֆորմային և երկրասինկինալային մարզերի մոտ 3.0-2.5 մլրդ. տարի առաջ պայմանավորեցին քաղցրահամ ջրի ի հայտ գալուն և երկրագնդի վրա ջրի մեծ շրջապտույթի ձևավորմանը:

Ենթադրվում է, որ սկզբնապես Համաշխարհային օվկիանոսը ծածկել է մոլորակի գրեթե ողջ մակերևույթը, այնուհետև տեկտոնական շարժումների հետևանքով տեղի են ունեցել քարային պատյանի (լիքոսֆերայի) բեկորազատումներ, տեղաշարժեր, ցամաքի բարձրացումներ և օվկիանոսի խորությունների նիշերի բազում տատանումներ: Այդ տատանումների հետևանքը եղել է այն, որ երկրաբանական անցյալում օվկիանոսային ջրերը բազմիցս գրավել են Ցամաքի այս կամ այն հատվածը և ապա նահանջել, իսկ ընդհանուր առմանք Ցամաքի տարածքը մեծացել է ի հաշիվ Համաշխարհային օվկիանոսի: Ի վերջո, վերին չորրորդականում Երկրի ջրային պատյանն ստացել է ժամանակակից ուրվագիծը:

2.2. ԶՈՒՐԸ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ: ՄԹՆՈԼՈՐՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ինչպես հայտնի է մթնոլորտն իրենից ներկայացնում է Երկրի օդային պատյանը (ոլորտը): Սովորաբար դրան բաժանում են երեք շերտի՝ տրոպոսֆերա, ստրատոսֆերա և իոնոսֆերա (նկ.1, Կլիմենտով):


Տրոպոսֆերա: Այն հանդիսանում է մթնոլորտի ներքին շերտը և անմիջապես հարում է երկրի մակերևույթին: Նրա վերին սահմանի դիրքը Երկրի կենտրոնախույս արագացման ազդեցության տակ բևեռներից դեպի հասարակած փոփոխվում է: Բնենուների վրա և միջին լայնություններում տրոպոսֆերայի բարձրությունը կազմում է 8-12 կմ, իսկ հասա-

րակածային գոնաներում հասնում է 17-18 կմ: Տրոպոֆերայում օդի ջերմաստիճանը տարբեր աշխարհագրական գոնաներում միանման չէ և ունի սեղոնային և օրական տատանումներ: Սակայն, Երկրի մակերևույթից դեպի վեր ջերմաստիճանը՝ որպես կանոն, յուրաքանչյուր 100 մ-ի վրա նվազում է 0.6°C -ով (աէրոթերմիկ գրադիենտ):

Տրոպոֆերայի համար բնութագրական է օդային զանգվածների անընդհատ հորիզոնական և ուղղաձրգ տեղափոխությունները: Համարյա ամքող ջրային գոլորշիները ամփոփված են տրոպոֆերայում: Հատկապես միայն այստեղ է հնարավոր ջրային գոլորշիների խտացման գործընթացները, ամպերի ու տեղումների առաջացումը: Ընդհանուր առմամբ տրոպոֆերան համարվում է մբնոլորտի առավել ակտիվ գոնան, քանի որ նրանում են կատարվում այս կամ այն եղանակի ձևավորման հիմնական երևույթները: Տրոպոֆերային համախ անվանում են «եղանակի ֆաբրիկա», քանի որ հատկապես նրանում են ձևավորվում ամպերը, անձրևը, ձյունը և կարկուտը: Տրոպոֆերայում լնիքացող գործընթացների վրա խիստ կերպով ազդում է երկրի մակերևույթը:

Սիրուլուֆերա: Այն ընկած է տրոպոսֆերայից վերև, որի վերին սահմանը համարվում է մոտ 80 կմ բարձրությունը: Դրանում նույնական տեղ են գտնել վերընթաց և վարընթաց օդային հոսանքները, սակայն դրանք սահմանափակվում են ստրատոսֆերայի միայն ներքին մասերում: Այստեղ օդային մասնիկների իրար խառնվելը կատարվում է նշանակալիորեն թույլ՝ համեմատած տրոպոսֆերայի հետ: Մբնոլորտի այս շերտում օդը խիստ նուրացած է: Ստրատոսֆերայում ջրային գոլորշները շատ քիչ են, դրա համար էլ անձրևային ամպեր և տեղումներ այստեղ չեն ձևավորվում:

Իոնոսֆերա: Այն ընկած է ստրատոսֆերայից վերև և վերին սահմանը երկրի մակերևույթից հաշված կազմում է 1000-2000 կմ: Աչքի է ընկնում յուրահատուկ էլեկտրական հատկություններով: Բնութագրվում է խիստ ցրված, իոնիզացված մասնիկների և չեզոք մոլեկուլների տարածումով, որոնք շարժվում են ահեղի արագություններով: Իոնիզացումը առաջանում է արևի ուլտրամանուշակագույն ճառագայթների և այսպես կոչված տիեզերական ճառագայթման ազդեցությամբ: Իոնոսֆերան աստիճանաբար անցնում է տիեզերական տարածության:



Նկ. 1 Մքնոլորտի կառուցվածքի սխեմա

1- ճեղման փոփոխությունը, 2-ջերմասպիճակնի փոփոխությունը

Մքնոլորտը Երկրի օդային քաղանթն է, որը կապված է ծանրության ուժով և մասնակցում է Երկրի օրական և տարեկան պտույտներին: Մքնոլորտի օդն իրենից ներկայացնում է գազային խառնուրդ: Հիմնական գազերը մաքոր և պարզ մքնոլորտում հանդիսանում են ազոտը՝ մոտ 78% (ըստ ծավալի), թթվածինը՝ 21%, արգոնը, ջրածինը և այլ գազեր՝ 1%, այդ թվում ածխաթթու գազը՝ մոտ 0.03%:

Բացի այդ՝ մքնոլորտի ստորին մասերում, միշտ առկա են ջրային գոլորշիները: Այստեղ ջուրը հանդես է գալիս տարբեր վիճակներով. 1) գոլորշու տեսքով՝ երկրագունդը շրջապատող օդային պատյանում, 2) հեղուկ-կաթիլային՝ ամպերում, մառախուղներում և անձրևի տեսքով, 3) կարծը՝ ձյան, կարկուտի և բարձրադիր ամպերում սառցի բյուրեղիկների տեսքով:

Մքնոլորտում գտնվում են մեծ քանակությամբ կախութային կարծր մասնիկներ, որոնք ող են բարձրանում երկրի մակերևույթից: Հրաբուխների ժայթքման ժամանակ մոխիրը փոշու տեսքով բարձրանում է, ինչ-

պես նաև վառարանների և ֆաբրիկաների խողովակներից: Կախված տեղանքի պայմաններից՝ Երկրի մակերևույթին մոտ 1սմ³ օդում փոշեհատիկների քանակը կարող է տատանվել մի քանի հարյուրից մինչև 100 հազ. և ավելի:

Մքնուրտի ցանկացած կետում օդը կրում է իրենից վերև գտնվող շերտի ճնշումը: *Մքնուրտային օդի ճնշումը որոշվում է միավոր հիմք ունեցող կետում օդի այան զանգվածով:* Ծովի մակերևույթին մքնուրտային ճնշումը միջինը հավասար է սնդիկի այան 760 մմ բարձրությանը:

Մքնուրտային ճնշումը, կախված օդի ջերմաստիճանից, օրինաչափորեն ընկնում է՝ ըստ բարձրության: Օդն ամենամեծ խտորդյունն ունի Երկրի մակերևույթին մոտ շերտերում: Ըստ բարձրության՝ օդի խտորդյունը փոքրանում է այնպիսի արագությամբ, որ մինչև 5 կմ բարձրությունը գտնվում է օդի զանգվածի կեսը, իսկ մինչև 10 կմ բարձրությունը 3/4-ը (տե՛ս նկ.1):

Օդի խոնավություն: Օդի խոնավությունը ջրային գոլորշիների պարունակությունն է օդում: Որպեսզի ջրային գոլորշիներով հագեցած օդում տեղի ունենան դրանց խտացում, անհրաժեշտ է, որ օդում առկա լինեն խտացնող միջուկ (կորիզօ)՝ կարծր, հեղուկ կամ զազանման մասնիկներ, որոնք ունենան խոնավածություն (հիգրոսկոպիկություն) կամ ջրի հետ քիմիական բնածին հատկություններ՝ ջրային գոլորշիների մոլեկուլները և ծանր իոնները (էլեկտրալիցքավորված մասնիկները) իրենց ձգելու հատկություն:

Օդի խոնավության բնութագրման համար օգտագործում են *բացարձակ խոնավություն, հարաբերական խոնավություն և խոնավության պակաս հասկացությունները:*

Բացարձակ խոնավությունը տվյալ պահին օդում գտնվող ջրային գոլորշիների քանակն է: Այն կարելի է չափել 1սմ³ օդում պարունակվող ջրային գոլորշիների զանգվածով (գ/մ³) կամ ջրային գոլորշիների ճնշումով՝ միլիբարով (մբար): Մեկ միլիբարը հավասար է 0.001ηին/սմ², որը կազմում է 3/4 սնդիկի այան մմ-երով: Օդի բացարձակ խոնավությունը կախված է օդի ջերմաստիճանից և ըստ բարձրության ենթարկվում է կտրուկ փոփոխությունների՝ հաշված երկրի մակերևույթից:

Տաք ու չոր օդի զանգվածը կարող է գերազանցել 50գ/մ³, իսկ ցուրտ արկտիկայի օդի զանգվածը իշնում է մինչև 0.1գ/մ³:

Օղի հարաբերական խոնավությունը տվյալ պահին օդում պարունակվող ջրային գոլորշիների առաձգականության հարաբերությունն է միևնույն ջերմաստիճանում օդի նույն տարածության հագեցման համար անհրաժեշտ ջրային գոլորշիների առաձգականությանը՝ արտահայտած տոկոսներով: Այն որոշվում է.

$$r = \frac{\varepsilon}{E} \times 100 \quad (1)$$

որտեղ՝ r -ը հարաբերական խոնավությունն է, %,

Ե-ը ջրային գոլորշիների առաձգականությունը տվյալ ջերմաստիճանի դեպքում, սնդիկի սյան մմ կամ մքար,

Ե-ս հագեցված գոլորշիների առաձգականությունը նույն ջերմաստիճանի դեպքում, սնդիկի սյան մմ կամ մքար:

Օդի հարաբերական խոնավությունը՝ ինչպես բացարձակ խոնավությունը, նույնպես ենթարկվում է փոփոխությունների կախված մի շարք պատճառներից: Խոնավ, մառախչապատ եղանակներին օդի հարաբերական խոնավությունը կարող է հասնել 100%-ի, որի դեպքում Երկրի մակերևույթն ու բուսականությունը ցողապատվում են: Չհագեցած օդի սառեցման գործընթացում զայխ է մի պահ, երբ օդում պարունակվող ջրային գոլորշին տվյալ ջերմաստիճանային պայմաններում կարող է հագեցնել դրան: Այդ պահը կոչվում է ցողի կետ:

Օդի խոնավությունը որոշվում է խոնավաչափ սարքերի միջոցով՝ պսիխոմետր, գիգրոմետր, գիգրոգրաֆ: Դրանց բնութագիրը կարելի է գտնել օլերևութաբանական դասագրքերում:

Խոնավության պակասը (հագեցման պակաս) օդում լրիվ հագեցնալու համար անհրաժեշտ ջրային գոլորշիների (E) և տվյալ պահին օդում եղած գոլորշիների (ε) առաձգականության տարբերությունն է.

$$d = E - \varepsilon \quad (2)$$

d -ն օդի խոնավության պակասն է, սնդիկի սյան մմ-երով կամ մքար-ով:

Գործնական նպատակների համար ինչպես ε -ի, այնպես էլ E -ի որոշման համար, կախված օդի ջերմաստիճանից, սովորաբար օգտվում են պսիխոմետրական աղյուսակներից:

Մընլորպային գրեղումներ: Օդի բարձրացման և սառեցման ժամանակ ջրային գոլորշիները խտանում են և առաջացնում ջրի փոքրիկ

կարիլներ կամ սառցի բյուրեղիկներ, որոնցից էլ կազմավորվում են ամպերը (շերտավոր, կուտակ և ամպրոպային): Ջրի այդ փոքրիկ մասնիկները միախառնվում են ամպերի ու մառախտուի ձևով: Դրանցից որոշները բախսվում են, միախառնվում և սկսում ընկնել: Ընկնելով դրանք միանում են այլ կարիլների հետ և մեծանում ըստ ծավալի: Այդ ճանապարհով առաջացած կարիլները որոշակի պայմանների դեպքում օդի վերընթաց հոսքերով ի վիճակի չեն պահպերու տրոպոսֆերայում և բափում են երկրի մակերևույթի վրա մքնողրտային տեղումների տեսքով:

Մինողրտային տեղումները լինում են երկու տիպի. 1) ջրային գոլորշիների խտացումը (օդի ջերմաստիճանի իջեցման հետևանքով) ձևավորվում է անմիջապես երկրի մակերևույթին և վերերկրյա առարկաների վրա (ցող, եղյամ, մերկասառույց), 2) ամպերից երկրի մակերևույթ են բափում անձրևի, մանրամադ անձրևի, ձյան, կարկուտի տեսքով:

Մինողրտային տեղումները չափվում են տարվա ընթացքում տեղումներից գոյացած հեղուկի սյան բարձրությունով (մմ, սմ, մ) կամ ջրի ծավալով (սմ³, դմ³, մ³): Սեկ տարվա ընթացքում եկած մթնողրտային տեղումների քանակը կոչվում է տեղումների տարեկան գումար (մմ/տարի) և հանդիսանում է կարևոր ցուցանիշ ջրահաշվեկշռային հաշվարկներ կատարելիս: Տեղումների տարեկան նորման բազմամյա կտրվածքում որոշվում է.

$$X_0 = \frac{\sum_i^n X_i}{N} \quad (3)$$

որտեղ՝ X_0 -ն տարեկան գումար տեղումների նորման է, մմ/տարի,

X_i -ն կոնկրետ տարում տեղումների գումարը, մմ/տարի,

Ն -ը դիտումներ տարված տարիների թիվը:

Դրանց ինտենսիվությունը որոշվում է 1 րոպեի ընթացքում բափուղ հեղուկի սյան բարձրությամբ (մմ/րոպե): Եթե տեղումների ինտենսիվությունը 0.5-1.0 մմ և ավելի է, դրանց անվանում են տարափ (տեղատարափ անձրև):

Տեղումները, որոնք բափում են ամպերից, լինում են երեք տիպի՝ լրիսկան համարարափ, մանրամադ, լրեղարարափ:

Տևական համարարափ անձրևները քնութագրվում են ոչ մեծ ինտենսիվությամբ, սակայն նշանակալի երկարատևությամբ: Սրանք ամենամեծ նշանակությունն ունեն ստորերկրյա ջրերի սննան գործում:

Մակարամաղ լրեղումները, որոնք թափվում են շերտավոր ամպերից, ունեն շատ փոքր կաթիներ, բերում են քիչ քանակությամբ ջուր և ստորերկրյա ջրերի սննան գործում դրանց դերն աննշան է: Տարվա տաք եղանակներին դրանց գերակշիռ մասը ծախսվում է գոլորշացման վրա:

Տեղապարափ անձրևները կարճ ժամանակում տալիս են շատ ջրաքանակ, որի գերակշիռ մասը ծախսվում է մակերևութային հոսքի վրա:

Տեղումները պինդ (կարծր) վիճակում՝ ձյան, կարկուտի տեսրով թափվում են տարվա ցուրտ ժամանակին: Կարկուտն ի տարրերություն ձյան, ստվորաբար, երկրի մակերևույթ է հասնում տարվա տաք ժամանակին՝ կեսօրյա ժամերից հետո, օրային զանգվածի վերլնիքաց ուժեղ հոսանքների դեպքում: Պինդ տեղումները ստորերկրյա ջրերին կարող են սնել միայն հեղուկ վիճակի անցնելուց հետո, այսինքն՝ գլխավորապես գարնանը, եթե տեղի է ունենում ձմռան ընթացքում կուտակված ձյան շերտի հալչում:

Մքնոլորտային տեղումները չափվում են անձրևաչափերով (հեղուկ տեղումների համար) և տեղումնաչափերով (հեղուկ և պինդ տեղումների համար) [32]:

Տեղումների քանակական որոշման մեթոդիկան, չափիչ սարքերի քնութագրերը, ինչպես նաև դիտակետային տվյալների մշակման մեթոդները մանրամասն տրվում են օդերևութաբանական դասագրերում և հատուկ տեղեկագրերում:

Տարբեր շրջաններում, մքնոլորտային տեղումների տարեկան քանակը միատեսակ է: Սովորաբար արձրևային տեղումների մաքսիմալ քանակը տեղի է ունենում ցածր մքնոլորտային ճնշման շրջաններում (ցիկլոնային անձրևներ), ինչպես նաև լեռնային մարզերում (անձրևներ՝ պայմանավորված ռելիեֆով): Հարկ է նշել, որ լեռնային շրջաններում բարձրության յուրաքանչյուր 100 մ-ի վրա մքնոլորտային տեղումները ավելանում են 12-15 մմ-ով: Ըստ որում տեղումների քանակի մեծացումը դիտարկվում է ոչ ավելի 5000 մ բարձրությունը: Աշխարհագրական տեսակետից տեղումները բաշխված են այնպես, որ դրանց գերակշռող քա-

նակը զայխ է տաք և խոնավ շրջաններից, նվազագույնը՝ արևադարձային լայնություններում, անապատային և տափաստանային զոնաներում: Հնդիանոր առնամբ տեղումների քանակը և հաճախականությունը օվկիանոսային ափերից դեպի մայրցամաք նվազում է:

Մքնոլորտային տեղումների տարեկան առավել քանակ արձանագրվել է Չերեպունչայում (Հնդկաստան, Ասամի պլոտինցիա): Այստեղ առանձին տարիների այն հասնում է 20000 մմ-ի: Հնդկաստանի այլ ռեգիոններում (Մանիրամա) տարեկան տեղումների քանակը կազմել է 12665 մմ: Ամենաքիչ մքնոլորտային տեղումների քանակ (1-10 մմ) դիտվել է Ատակամա անապատում (Հարավային Ամերիկա): Յուրօրինակ օրական մքնոլորտային տեղումների քանակի ինտենսիվություն նկատվել է 1876 թ. Չերեպունչայում, այն կազմել է 1036մ/օր:

Ըստ մամուխի հաղորդագրության՝ Նեղոս գետի վրա կառուցված պատվարի (Ասուան ՀԱՀ) շրջանում, որտեղ ամռանն օդի ջերմաստիճանը 50°C է և ավելի, 15 տարվա ընթացքում բացարձակապես մքնոլորտային տեղումներ չեն գրանցվել:

Ստորեկրյա ջերի սննան գործում, մքնոլորտային տեղումների դերի մասին գնահատելիս պետք է հաշվի առնել ոչ միայն տեղումների քանակը, այլև տեղումների ժամանակը և տևողությունը, ձևը (հեղուկ, կարծր), ինտենսիվությունը և քիմիական կազմը:

Մքնոլորտային տեղումների (և այլ բնորոշ հատկանիշների) տարեկան գումարային փոփոխությունները կատարվում են ոչ միայն ժամանակի մեջ, այլ նաև ըստ մակերեսի (կետից-կետ, տեղամասից-տեղամա): Մքնոլորտային տեղումների բաշխումը ուսումնափրկող շրջանի վրա, կախված շրջանի չափերից և տեղաբաշխման բնույթից, արտահայտում են կամ իզոգիետների¹ քարտեզների կամ շրջանի (մակերեսները) մքնոլորտային տեղումների նույնանման մեծությունների քածանման ճանապարհով:

¹ Իզոգիետները նույն քանակի մքնոլորտային տեղումներն ունեցող կետերն իրար միացնող գծերն են:

2.3. ԶՈՒՐԸ ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻՆ ԵՎ ԵՐԿՐԱԿԵՂԵՎՈՒՄ

Երկրագնդի ջրային ռեսուրսների հիմնական զանգվածն (ընդհանուրի մոտ 95.6%) կենտրոնացված է օվկիանոսներում, ծովերում, լճերում, գետերում, ջրամբարներում, սաղցադաշտերում, հողերում (տես գլ. I):

Մակերևութային ջրերը գտնվում են հեղուկ և պինդ վիճակներում: Օվկիանոսների և ծովերի մակերևույթներից (հատկապես արևադարձային և մերձարևադարձային շրջաններում), քիչ քանակությամբ գետերի, լճերի, խոնավ հողատարածքների, բույսերի տերևների և ձյան ու սաղցադաշտերի մակերևույթներից անընդհատ տեղի են ունենում ջրի գոլորշիացում և ջրային գոլորշիների մուտք մքննորդու: Ստորերկրյա ջրերի մակերևույթից գոլորշիացումը տեղի է ունենում միայն այն տարածքներից, որտեղ դրանք Երկրի մակերևույթից տեղադրված են ոչ խորը:

Ջրի գոլորշիացման տակ հասկանում են H_2O մոլեկուլին անցման գործնքացը, երբ ստեղծված արագությունը հասնում է այնպիսի չափերի, որը բավարար է հարքահարելու մոլեկուլյար ձգորդության ուժը, որով այն պահպում է հեղուկի կամ պինդ մարմնի մակերևույթին և դրաս գալիս մքննորդու (շրջապատող միջավայր):

Ջրային գոլորշիների քանակը, որը ձևավորվում է գոլորշիացման ժամանակ և մուտք է գործում մքննորդու, կախված է մի շարք գործոններից, որոնցից հիմնականներն են. 1) գոլորշիացվող մակերևույթի ջերմաստիճանը, 2) մքննորդուսային ճնշումը, 3) ողի խոնավության պակասը, 4) գոլորշիացվող մակերևույթի վրա քամու արագությունը, 5) գոլորշիացվող ջրային մակերևույթի չափերը և ձևը, դրանց աշխարհագրական դիրքը, տեղանքի ռելիեֆի բնույթը:

Ջրային մակերևույթից գոլորշիացման դեպքում գոլորշիացման մեծությունը կախված է գոլորշիացվող մակերևույթի ջերմաստիճանից, ողի խոնավության պակասից, քամու արագությունից և մքննորդուի ճնշումից: Գոլորշիացվող մակերևույթի ջերմաստիճանի բարձրացման, քամու արագության մեծացման և խոնավության պակասի աճի դեպքում, գոլորշիացման արագությունը մեծանում է, մքննորդուսային ճնշման բարձրացման դեպքում՝ նվազում:

Անհրաժեշտ է տարբերել «գոլորշիացում» և «գոլորշումակուրյուն» հասկացությունները:

Գոլորշիացում կոչվում է տվյալ շրջանի (տարածքի) երկրի մակերևույթից գոլորշիացվող խոնավության փաստացի միջին մեծությունը, իսկ գոլորշումակուրյունը նույն պայմաններում միայն ջրային մակերևույթից կամ մշտապես խոնավ մակերևույթից գոլորշիացման մեծությունն է:

Ինչպես մքնողրտային տեղումները, այնպես էլ գոլորշիացումը արտահայտվում է (մմ, սմ, մ) կամ (մ^3 , լմ^3 , մ^3) միավորներով:

Տարբեր լանդշաֆտային զոնաների համար գոլորշիացման և գոլորշումակուրյան մեծությունները բերվում է աղ. 1-ում [17]:

Աղյուսակ 1

հ/հ	Լանդշաֆտային զոնաները	Գոլորշումակուրյունը, մմ/տարի	Գոլորշիացումը, մմ/տարի
1	Տոննդրա	200-300	70-120
2	Տայգա (անտառերկիր)	300-600	200-300
3	Խառն անտառներ	400-850	250-430
4	Տափաստան	600-1100	240-550
5	Կիսաանապատ	900-1000	180-200
6	Անապատ	1500-2000	50-100
7	Մերձարևադարձային	800-1300	300-750

Երկրագնդի մակերևույթից տարեկան գոլորշիացնում է միջինը 525.0-577.0 հազ. կմ³ ջուր: Այդ գոլորշիացման վրա ծախսվում է մոտ 2.6×10^{23} Ջոուլ ջերմություն, որը կազմում է տարեկան Երկիր հասնող արեգակնային էներգիայի մոտ 25%-ը:

Գոլորշիացման արագությունը իրենից ներկայացնում է միավոր մակերեսից միավոր ժամանակում գոլորշիացած ջրի քանակը: Գոլորշիացման մեծությունը որոշվում է հատուկ փորձասարբերի միջոցով կամ մոտավորապես որոշվում է էմպիրիկ քանածներով:

Ջրային մակերևույթներից գոլորշիացման մեծության որոշման համար կարելի է օգտվել հետևյալ բանաձևից.

$$Q = K \frac{E - \varepsilon}{P} S \quad (4)$$

որտեղ՝

Q - Ա գոլորշիացած ջրի քանակությունն է, ինչոր մակերևույթից, միավոր ժամանակում,

K - Ա համեմատականության գործակից է,

E - ε = d - օդի խոնավության պակասն է (տե՛ս բանաձև 2)

P - Ա մքնողորտային ճնշումը,

S - Պ գոլորշիացվող մակերևույթի մակերեսը:

Երկրի մակերևույթից գոլորշիացման գործընթացը ավելի բարդ է, քան ջրային մակերևույթից: Այն կախված է հողի կառուցվածքից, բուսականության բնույթից, մակերևույթի դիրքից, գրունտային ջրերի տեղադրյան խորությունից և մի շաբթ այլ գործոններից:

Գոլորշիացման գործընթացը առավել բարդանում է, եթե այն կատարվում է բուսականության կողմից: Բույսերի կողմից տեղի ունեցող գոլորշիացումը կոչվում է՝ **լրանսպիրացիա:** Գոլորշիացման և տրանսպիրացիայի միագումարը կոչվում է **էվապորիանապիրացիա:** Բույսը իր աճման և զարգացման շրջանում (վեգետացիայի շրջանում) հողից վերցրած ջրաքանակի միայն շնչին մասն է օգտագործում իր հյուվածքների ծևափորման և աճի վրա, գերակշիռ մասը (մինչև 99.5-99.8%) գոլորշիացնում է:

Բույսի ջրապահանջությունը որոշվում է, այսպես կոչված, տրանսպիրացիայի գործակցով, որի տակ հասկանում են միավոր չոր նյութի առաջացման համար պահանջվելիք ջրի քանակը: Այլ կերպ ասած՝ տրանսպիրացիայի գործակիցը բույսի կողմից ամբողջ վեգետացիայի շրջանում օգտագործած ջրի քանակի հարաբերությունն է չոր նյութի կշռին և արտահայտվում է $m^3/\text{տոննա}$ միավորներով: Այն տարբեր մշակաբույսերի համար տարբեր է: Այսպես, եթե շատ գյուղատնտեսական մշակաբույսերի համար տրանսպիրացիայի գործակիցը չափավոր տաք կլիմա ունեցող շրջաններում կազմում է 200-300, տափաստանային պայմաններում՝ 450-500 և ավելի, ապա կիսաանապատային և անապատային պայմաններում այն կազմում է 600-1200 և ավելի:

Չորային շրջաններում հողային մեծ տարածությունների ոռոգումը և կանաչ բույսերի տերևներով խոնավության տրանսպիրացիան բարձրացնում է օդի խոնավությունը, որը տարվա առավել շոգ ժամանակաշրջանում բարենպաստ ազդեցություն է բողնում մշակաբույսերի աճման և զարգացման վրա:

Բուսական ծածկոցը ցամաքի խոնավապատյանում կատարում է վիթխարի գոլորշեցուցիչ դեր: Բավական է ասել, որ որոշ շրջաններում բուսական ծածկի գոլորշիացման ինտենսիվությունը (տրանսպիրացիա) գերազանցում է ջրային մակերևույթից գոլորշունակության մեծությանը:

Մակերևութային ջրերը սերտ կապի մեջ են ստորերկրյա ջրերի հետ: Վերջիններս կարող են գտնվել գոլորշու ձևով, հեղուկ և այնու վիճակներում (տես գլ. X): Սովորաբար մթնոլորտային տեղումները և մակերևութային ջրերը, ներծծվելով ապարների մեջ, համալրում են ստորերկրյա ջրերի ռեսուրսները, հասլավես երկրակեղևի վերին շերտերում: Ստորերկրյա ջրերը, բեռնաբավակելով օվկիանոսների, ծովերի, լճերի, գետերի կամ լոռողին իջվածքների և տեկտոնական խախտումների մեջ, նորից դրւու են գալիս երկրի մակերևույթ:

Երկրակեղևում ջրի մի մասը գտնվում է ազատ վիճակում, այսինքն՝ այն կարող է տեղաշարժվել ծանրության ուժի ազդեցության կամ հիդրոստատիկ ճնշումների տարրերության շնորհիվ: Նշանակալից քանակի ջուր կապակցված վիճակում գտնվում է լիքոսֆերայում (քարապատյանում) և պահպան է դրանում ապարների մասնիկների կողմից մոլեկուլյար ձգողության ուժերի շնորհիվ կամ մտնում է միներալների բյուրեղային ցանցի մեջ (տես գլ.V, կետեր 5.3, 5.4):

Մակերևութային և ստորերկրյա ջրերի միագունարությունը (ամբողջությունը) կազմում է Երկրի ջրային պատյանը (քաղանքը), որը ընդունված է անվանել հիդրոսֆերա (ջրոլորտ, ջրապատյան):

Ջրոլորտը ստորաբաժանում են երկու մասի՝ վերերկրյա (մակերևութային ջրեր) և ստորերկրյա (քարապատյանի ջրեր) (Ֆ. Պ. Սավարենսկի, Ա. Ա. Օվշիննիկով, Ֆ. Ա. Մակարենկո, Ա. Ա. Կարցև և այլոր):


2.4. ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՅԻՆ ԵՎ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՀՈՍՔԵՐ

Ջրաերկրաբանությունում մթնոլորտային տեղումների և գոլորշիացման հետ միասին մեծ նշանակություն ունեն նաև մակերևութային և ստորերկրյա հոսքերի ուսումնասիրումը: Հոսք ասելով հասկանում են անձրևային և հալոցքային ջրերի շարժումը երկրի մակերևույթով (մակերևութային հոսք) և ապարների հաստվածքում (ստորերկրյա հոսք):

Մակերևութային հոսքը ձևավորվում է երկրի մակերևույթով ծանրության ուժի ազդեցության տակ ջրբաժանային տարածքներից՝ ավելի

բարձր տեղամասերից դեպի ցածրադիր տեղամասեր շարժվող ջրերի հաշվին: Առանձին փոքր ջրհոսքերը միախառնվելով իրար հետ, ձևավորում են գետային համակարգ կամ առանձին գետ, լիճ և այլն: Ցամաքի այն մակերեսը, որտեղից գետային համակարգը հավաքում է իր ջրերը, կոչվում է ջրհավաք ավազան: Նմանօրինակ ձևով է կատարվում նաև ստորերկրյա ջրերի, որն առաջանում է ջրատար ապարների հաստվածքում, մասնակցությունը տվյալ գետային համակարգի ձևավորմանը: Վերջինս կոչվում է ստորերկրյա ջրհավաք ավազան:

Պլանում (հատակագծում) երկու հարակից ջրհավաք ավազանների միջով (ամենաքարձ կետերով) անցնող սահմանագիծը կոչվում է ջրբաժան, ընդ որում կախված ջրաերկրաբանական կտրվածքից, ավազանի չափսերից և այլ գործոններից՝ մակերևութային և ստորերկրյա ջրբաժանները (ջրհավաք ավազանները) տվյալ գետային համակարգում կարող են համընկնել և չհամընկնել մեկը մյուսին (տես նկ. 2):



Նկ. 2 Մակերևութային և ստորերկրյա ջրհավաք ավազանների մակերեսների հարաբերակցությունն ըստ Պ. Պ. Կիմնենսովի

I – մակերևութային և ստորերկրյա հոսքի ավազանները համընկնում են; II և III մակերևութային և ստորերկրյա հոսքերի ավազանները ժամ համընկնում; Աբ մակերևութային հոսքի ավազաններ; Աբ ստորերկրյա հոսքի ավազաններ, 1-ավազ, 2-ավազը ջրի հետ, 3-կամ, 4-գրումային ջրերի մակարդակը, 5-գրումային ջրերի հոսքի ուղղությունը, 6-աղբյուր:

Մակերևութային հոսքն արտահայտվում է ժամանակավոր և մշտապես գործող ջրհավաքներով: Գետերը սնվում են ոչ միայն մակերևութային ջրերով, այլ նաև ստորերկրյա, լճոյ որում այս կամ այն ջրերի բաժնեմասերը կախված կլիմայական, երկրաբանածեաբանական գործոններից տարբեր շրջանների համար տարբեր են:

Գետերի սնումը մակերևութային ջրերից լինում է չորս տիպի՝ անձրևային, հալոցքային, սաղցադաշտային և խառը: Տարեկան կտրվածքում գետերի սնումը հիմնականում լինում է խառը: Գարնաճը և աշնանը գետերը հիմնականում սնվում են մակերևութային ջրերով, երաշտի և ձմռան շրջաններում՝ ստորերկրյա, որոնք այդ ժամանակաշրջանում հաճախ հանդիսանում են սննման միակ աղբյուրը:

Գետերի և ջրավազանների գործունեության տարրերի (էլեմենտների) օրինաչափ փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ժամանակի մեջ և պայմանավորված են կլիմայական ու այլ գործոններով, որոշում են մակերևութային ջրերի ռեժիմը: Ըստ ժամանակի գետերի ռեժիմը բնութագրող գլխավոր տարրերն են գետերի ջրի մակարդակի և ծախսի տատանումները: Գետերում ջրի մակարդակի և ծախսի փոփոխությունների դիտումները կատարում են հասուկ կահավորված ջրաչափական կետերում և հատվածքներում: Այդ դիտումների արդյունքում կազմվում են հասուկ գրաֆիկներ, որոնց վերլուծությունը բույլ է տալիս որոշել [33].

1) գետում բնորոշ ջրի մակարդակները գարնանային վարարումների, ամառային, աշնանային և ձմռանային շրջաններում,

2) ջրի մակարդակների տատանման ամպիլիտուդան (ծայրակետերի տարրերությունը), որն ունի կարևոր նշանակություն ջրատեխնիկական հաշվարկներում,

3) ջրի մակարդակի տատանման կորի վրա առավելագույն և նվազագույն նիշերի քանակը և դրանց տեղաբաշխվածությունը տարվա կտրվածքում, հատկապես գետի մակարդակային ռեժիմում այդ առավելագույնների և նվազագույնների հանդես գալու պատճառները,

4) գետի ամառային և ձմռանային ծախսերը, որոնց միջև եղած տարբերությունը պատկերացում կտա դրա ստորերկրյա սննման մասին:

Մակերևութային, ինչպես նաև ստորերկրյա հոսքերի քանակական գնահատման համար օգտագործում են հետևյալ ցուցանիշները՝ հոսքի մեծություն (ջրի ելք), հոսքի մողու, հոսքի նորմա, հոսքի գործակից, մոդուլային գործակից:

Հոսքի մեծությունը գետի ամբողջ ջրհավաք ավազանի մակերեսում գոյացող ջրային հոսքն է և որոշվում է ջրի ծախսի տվյալներով՝ չափված գետաբերանային մասում, արտահայտվում է $\text{մ}^3/\text{վրկ}$, $1/\text{վրկ}$ միավոր-ներով:

Գետի ծախսը նրա ցանկացած հատվածում որոշվում է.

$$Q = vF \quad (5)$$

որտեղ՝ Q -ն գետի ծախսն է տվյալ հատվածում (կտրվածքում), $\text{մ}^3/\text{վրկ}$,

v -ն հոսքի միջին արագությունը, $\text{մ}/\text{վ}$,

F -ը տվյալ հատվածքում հոսքի կենդանի կտրվածքի մակերեսն է, մ^2 :

Հոսքի մոդուլը միավոր ժամանակամիջոցում գետի ավազանի միավոր մակերեսից դեպի գետ հոսող ջրի քանակությունն է: Այն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M = \frac{10^3 \times Q}{F} \quad (6)$$

որտեղ՝

M -ը հոսքի մոդուլն է, $1/\text{վրկ} \times \text{կմ}^2$,

Q -ն գետի ջրի ծախսն է, $\text{մ}^3/\text{վրկ}$

F -ը ջրհավաք ավազանի մակերեսը, կմ^2 :

Հոսքի մոդուլը կարելի է արտահայտել նաև հոսքի շերտի բարձրությամբ: Հոսքի մոդուլը հոսքի շերտի բարձրությամբ (h , մմ) վերահաշվարկելու համար գրենք գետի տարեկան ծախսի հավասարությունը ըստ M -ի և h -ի.

ըստ M -ի՝

$$Q = \frac{MF \times 31.5 \times 10^6}{10^3}, \text{ մ}^3/\text{տարի} \quad (7)$$

ըստ h -ի՝

$$Q = F \times h \times 10^3, \text{ մ}^3/\text{տարի} \quad (8)$$

բանաձևի համապատասխան ստացվում է.

$$M = \frac{h}{31.5}, 1/\text{վրկ} \times \text{կմ}^2 \quad (9)$$

կամ $h = 31.5 \times M$, մմ:

Այստեղ՝ 31.5×10^6 -ը տարվա կտրվածքում վայրկյանների թիվն է:

Հոսքի գործակիցը որևէ ժամանակամիջոցում ջրհավաք ավազանի մակերեսում հոսքի շերտի հարաբերությունն է նույն ժամանակամիջոցում այդ մակերեսի վրա քափող տեղումների շերտին.

$$\eta = \frac{h}{X} \times 100 \quad (10)$$

որտեղ՝

η -ն հոսքի գործակիցն է՝ արտահայտված %-ով,

h -ը հոսքի (ջրի) շերտի բարձրությունը, մմ,

X -ը տեղումների քանակը, մմ:

Հոսքի գործակիցը կարելի է արտահայտել նաև միավորի մասերով:

Հոսքի նորման գետի հոսքի մեծության միջին քվարանական արտահայտությունն է՝ որոշված բազմամյա (40-50 տարի) դիտարկումների տվյալներով: Այն կարելի է արտահայտել.

ա) գետի միջին բազմամյա ծախսով՝ $Q_0 \text{ մ}^3/\psi\text{րկ}$,

բ) հոսքի միջին բազմամյա հոսքի մոդուլով M_0 , որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$M_0 = \frac{Q_0}{F} \quad (11)$$

որտեղ՝

M_0 -ը գետի ջրհավաք ավազանի հոսքի մոդուլն է, $\text{l}/\psi\text{րկxկմ}^2$,

Q_0 -ն գետի միջին բազմամյա ծախսը, $\text{l}/\psi\text{րկ}$

F -ը ջրհավաք ավազանի մակերեսը, կմ^2 ,

գ) հոսքի շերտի միջին բազմամյա բարձրությամբ՝ h_0 (մմ/տարի), որոշվում է հետևյալ բանաձևով.

$$h_0 = 31.5 \times M_0 \quad (12)$$

դ) հոսքի միջին բազմամյա ծավալով՝ W_0 ($\text{մ}^3/\text{տարի}$), որոշվում է հետևյալ բանաձևով.

$$W_0 = h_0 \times F \quad (13)$$

Մոդուլային գործակիցը հոսքի որևէ բնութագրիչի հարաբերությունն է իր միջին բազմամյա մեծությանը, օրինակ՝

$$K_i = \frac{M_i}{M_0} = \frac{Q_i}{Q_0} = \frac{h_i}{h_0} = \frac{W_i}{W_0} \quad (14):$$

Հոսքերը տարբեր ժամանակաշրջանների համար՝ տարի, սեզոն, ամիս, սովորաբար գնահատվում են մոդուլային գործակցով (բանաձև 14): Սի շաբթ տարիների մոդուլային գործակցի միջին արժեքը հավասար է մեջի:

Ստորերկրյա հոսքը իր գոյությամբ, այսպես ասած, պարտական է ջրաբախանց ապարներում տեղադրվող և շարժվող, ինչպես նաև ջրհավաք ավազանների երկրաբանական գործընթացներին մասնակցող ստորերկրյա ջրերին:

Ինչպես վերն ասվեց, ստորերկրյա հոսքը նաև ունի իր ջրհավաք ավազանը, որը որոշակի երկրաբանական պայմանների դեպքում կարող է չհամընկնել մակերևությային ջրհավաք ավազանի հետ (տես նկ. 2):

Ստորերկրյա ջրհավաք ավազանի մակերեսի սահամանները որոշում են հիդրոիդոգեղերի քարտեզների օգնությամբ՝ հաշվի առնելով ջրաերկրաբանական պայմանները:

Ստորերկրյա հոսքի մեծությունը կարելի է որոշել տարբեր մեթոդներով: ‘Քանցից մեկը՝ եթե օգտագործվում են իրարից որոշակի հեռավորության վրա գտնվող ջրաչափական հատվածքներում (կետերում) գետի ջրի ծախսի չափումները:

Այդ չափումների տվյալներով որոշում են գետի սննան չափը ստորերկրյա ջրերից, այսինքն ստորերկրյա հոսքի մեծությունը ($m^3/\text{վրկ}$), որը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q_{\text{ստ}} = Q_1 - Q_2 \quad (15)$$

որտեղ՝

$Q_{\text{ստ}}$ -ն ստորերկրյա սննան մեծությունն է,

Q_1 -ը գետի ծախսը ներքևի հատվածքում,

Q_2 -ը գետի ծախսը վերևի հատվածքում:

Գետի 1 կմ երկարության վրա ստորերկրյա սննան մեծությունը (գ) որոշվում է.

$$q = \frac{Q_1 - Q_2}{L}, \text{մ}^3/\text{վրկչկմ}^2 \quad (16)$$

որտեղ՝

L -ը ջրաշափական հատվածքների հեռավորությունն է, կմ:

Գետի ստորերկրյա սննան մեծության որոշումը վերը նշված մեթոդով տալիս է 90-95% ճշտություն: Ստորերկրյա հոսքի գնահատման մնացած ցուցանիշները որոշվում են նոյն մեթոդով ինչպես մակերևությանինը:


Հարկ է նշել, որ ապաբների ջրառատության գնահատման համար, ստորերկրյա հոսքի մոդուլը հանդիսանում է բնորոշ ցուցանիշ, քանի որ հատկապես այդ մոդուլի մեծությունից է կախված ջրատար հորիզոննից գետահուն մուտք գործող ջրաքանակը:

Գետի հոսքի մոդուլի մեծությունը պայմանավորված է ինչպես մակերևության, այնպես էլ ստորերկրյա հոսքերով: Զնոսան և երկարատև մքննողորտային տեղումների բացակայության շրջանում շատ գետեր իրենց սնումը ստանում են միայն ստորերկրյա ջրերից, իսկ գարնանային վարարումների և առատ տեղումների շրջանում ստորերկրյա ջրերի դերն աննշան է: Հետևապես, հոսքի մոդուլի մեծությունը տարվա կտրվածքում խիստ փոփոխական է:

Այսպես, նախկին ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքի սահմաններում գետային հոսքի միջին բազմամյա մոդուլը կազմել է 5-6 լ/վրկչկմ², իսկ տատանման ամպլիտուդան՝ 0-ից մինչև 75 լ/վրկչկմ²: Այդ նոյն տարածքի համար ստորերկրյա հոսքի մոդուլը տատանվել է միավորի տասնորդական մասերում (չորային շրջաններում մինչև 2-3 լ/վրկչկմ²):

Գետի սննան ռեժիմը, տարվա ընթացքում հոսքի բաշխումը, ինչպես նաև ստորերկրյա հոսքի մեծությունը կարելի է որոշել գետի հիդրոգրաֆի (ջրագիր) վերլուծության ճանապարհով: Գետի ջրագիրը որևէ գետի ջրի ծախսի փոփոխության գրաֆիկն է որոշակի ժամանակահատվածի համար (տարեկան, սեզոնային, վարարման և այլն):

Ուսումնասիրվող գետի հոսքի ընդհանուր հաշվեկշռում տարբեր սննան աղբյուրների քանակական գնահատումը կատարվում է հիդրոգրաֆի մասնատման ճանապարհով (տե՛ս նկ. 3):



Նկ. 3 Հիդրոգրաֆի մասնատման օրինակ
 1-գրումային սևում, 2-ջան սևում, 3-անձրևային սևում
 4-սաղաղաշփային սևում

Գետային ջրագրի մասնատման մեթոդիկան մակերևութային և ստորերկրյա հոսքերի բաժնեմասերը որոշելու նպատակով մշակված է Բ. Ի. Կուդելինի, Օ. Վ. Պուպովի, Կ. Պ. Վոսկրեսենսկու, Բ. Վ. Պոլյակովի և այլոց կողմից [5]:

Գետի ջրագրի մասնատման բավականին հիմնավորված մեթոդը և ստորերկրյա սննան մեծության որոշումը մշակել է Բ. Ի. Կուդելինը: Նա առանձնացնում է ստորերկրյա ջրերով գետի սննան չորս տարրեր տիպեր, որոնց համապատասխան դիտարկում է գետային ջրագծի մասնատման չորս սխեմա, որոնք մանրակրկիտ վերլուծվել են Բ. Ի. Կուդելինի աշխատություններում, ինչպես նաև ընդհանուր ջրաերկրաբանության խնդիրների ժողովածում [5]:

Հարկավոր է նշել, որ ստորերկրյա սննան մեծության որոշումը ջրագրերի միջոցով հնարավոր է միայն վորք և միջին գետերի համար: Խոչոր գետերի համար ջրագրի մասնատման մեթոդը կիրառելի չէ, քանի որ այդ գետերի ջրհավաք ավազաններն ունեն շատ բարդ երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածք և ջրաերկրաբանական պայմաններ, դրա համար էլ ավազանի տարրեր տեղամասերում դիտվում են ջրատար հորիզոնների ջրերի և գետային ջրերի միջև հիդրավիկական կապի պայմանների տարրեր դրսևորումներ:

2.5. ՄՈԼՈՐԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՐԱՔՎԱՎԱԿՈ ԵՎ ԶՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Չուրը բնության մեջ ամենատարածված միացությունն է: Այն H_2O մոլեկուլի կամ O և H ատոմների ձևով մտնում է երկրակեղևը կազմող միներալների բաղադրության մեջ, ազատ ձևով տարածված է լեռնային ապարների ճեղքերում և ծակոտիներում, երկրակեղևի վերին շերտում և հողարուսական ծածկում, օվկիանոսներում, ծովերում, լճերում ու գետերում, կարծր (սաղցի և ձյան) ձևով՝ քեռային ու բարձր լեռնային շրջաններում, առավելապես գոլորշու ձևով՝ օդային պատյանում, որոշակի քանակությամբ ջուր կա նաև բուսապատյանում:

Պատահական չէ, որ Երկիրը հաճախ անվանվում է «Կապույտ մոլորակ»: Ինչքա՞ն ջուր կա Երկիր մոլորակի վրա և ինչպե՞ս է տեղաբաշխված այն տարրեր երկրապատյաններում: Այս հարցերի պարզաբնումը կապված է զգալի դժվարությունների հետ, քանի որ ջուրը, ի տարրերություն այլ օգտակար հանածոնների, շարժումակ է և գտնվում է բնական անընդհատ շրջանառության մեջ:

Անիրաժեշտ է նշել, որ համաձայն Վ. Ի. Վերնադսկու ուսմունքի՝ մեր մոլորակի բոլոր ջրերը միմյանց հետ սերտորեն կապված են, և դրանց քանակական գնահատման հարցում բնական ջրերը պետք է դիտել մեկ ընդհանուր համակարգի մեջ:

Վերջին 3-4 տասնամյակներում Երկրի ջրաքանակի գնահատման հարցում համաշխարհային մասշտաբով զգալի աշխատանքներ կատարվեցին: Անիրաժեշտ եղավ միավորել նաև շատ երկրների մասնագետների ուժերը, որոնք մասնավորապես արդյունավետ հետազոտական տվյալների հասան՝ աշխատելով Սիցազգային հիդրոլոգիական տասնամյակի (ՄՀՏ) ծրագրով, որը կենսագործվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1966-75 թթ. ընթացքում:

Երկրի վրա ամբողջ ջրի ծավալի բաշխումը ցույց է տրված աղյուսակ 2-ում:

Այլուսակի տվյալները վկայում են, որ ջրերի գերիշխող ծավալը գտնվում է համաշխարհային օվկիանոսում, ապա երկրակեղևում և քեռային ու բարձր լեռնային սաղցադաշտերում: Ցամաքի մակերևությային ջրերն ու մքնողորտային խոնավությունը կազմում են ընդամենը 0.02%:

Երկրի վրա քաղցրահամ ջրերի ահռելի շտեմարաններ են սառցակուտակումները, որոնք զբաղեցնում են ավելի քան 16 մլն.կմ² տարածք (ցանաքի մակերեսի շուրջ 11%):

Աղյուսակ 2

Երկրի վրա ջրի բաշխումը (լստր UZS, 1974) [33]

Հիդրոսֆերայի մասերը	Տարածման մակերեսը. մլն.կմ ²	Ջրի ծավալը. մլն.կմ ³	Ջրի շերտը, մ	Բաժինը համաշխարհային պաշտում, %	
				Ջրի ընդհանուր պաշարից	Քաղցրահամ ջրի պաշարից
Համաշխարհային օվկիանոս	361.3	1338	3700	96.5	-
Ստորերկրյա ջրեր (գրավիտացիոն, մազանորային)	134.8	23.4*	174	1.7	-
Ստորերկրյա ջրեր՝ գերազանցապես քաղցրահամ	134.8	10.53	78	0.76	30.1
Հողային ջրեր	82.0	0.0165	0.2	0.001	0.05
Սառցակուտակում- ներ և ջշտապես ձյան շերտով ծածկված տարածքներ՝	16.2275	24.0641	1463	1.74	68.7
Անտարկտիդա	13.98	21.6	1546	1.56	61.7
Գրենլանդիա	1.802	2.34	1298	0.17	6.68
Արկտիկական կղզիներ	0.2261	0.0835	369	0.006	0.24
Լեռնային ջրաններ	0.224	0.0406	181	0.003	0.12
Հավերժական սառածորյան ապարների ստորերկրյա ջրեր	21.0	0.3	14	0.022	0.85
Ջրի պաշարները լճերում՝	2.0587	0.1764	85.7	0.013	-
Քաղցրահամ	1.2364	0.091	73.6	0.007	0.26
աղի	0.8223	0.0854	103.8	0.006	-
Շահճային ջրեր	2.6826	0.01147	4.28	0.0008	0.003
Գետահունային ջրեր	148.8	0.00212	0.014	0.0002	0.006
Կենսաբանական	510	0.00112	0.002	0.0001	0.003

ջրեր					
Մքնաղորտային ջրեր	510	0.129	0.025	0.001	0.004
Ջրերի ընդհանուր պաշարը	510	1385.98 5	2718	100	-
Քաղցրահամ ջրեր	148	35.03*	235	2.53	100


*Առանց Անդրակիզիդայի սպորերկրյա ջրերի, որպես դրանց պաշարը մոտ 2.0 մլն.կմ³է,
այդ թվում մոտ 1.0մլն.կմ³-ը քաղցրահամ

Երկրակեղևի 16 կմ խորությունում պարունակվող ընդհանուր ջրա-
քանակը ակադ. Վ. Ի. Վերնադսկին գնահատել է 450-500 մլն.կմ³: Ամե-
րիկացի երկրաբան Ջ. Կալվի հաշվարկներով (1951 թ.) ողջ երկրա-
կեղևում պարունակվում է 840 մլն.կմ³, իսկ Վ. Ֆ. Դերպիոլցի հաշվումնե-
րով՝ շուրջ 1050 մլն.կմ³ ջուր [33]: Այսինքն, համաձայն այդ հաշվարկնե-
րի՝ երկրակեղևում պարունակված ջրաքանակը գրեթե համարժեք է հա-
մաշխարհային օվկիանոսի ծավալին: Սակայն պարզ է, որ այս հաշ-
վումները մոտավոր բնույթ են կրում և երկրակեղևի կառուցվածքի ու
կազմի վերաբերյալ գիտելիքների խորացմանը զուգընթաց ընդերքի
ջրաքանակի հաշվառումները ավելի կճշգրտվեն:

Ինչպես նշեցինք, աղյուսակում բերված տվյալները վերաբերում են
երկրագնդի վրա տեղաբաշխված ջրերի միաժամանակյա կամ ստատիկ
պաշարներին: Սակայն, ինչպես ընդգծել է ակադ. Վ. Ի. Վերնադսկին,
բնության մեջ բոլոր տեսակի ջրերը փոխադարձ կապի մեջ են և
գտնվում են մշտական շրջանառության մեջ: Բնության մեջ ջրերի
մշտական շրջանառությունը կատարվում է արեգակի ջերմային էներ-
գիայի և ծանրության ուժի ազդեցության տակ: Գոյորշիանալով օվկիա-
նոսների, ծովերի, գետերի, լճերի, բուսածածկի և ցամաքի մակերեսից՝
խոնավությունը բարձրանում է մինուրատի վերին շերտեր: Օդային
զանգվածների տեղաշարժի պրոցեսում ջրային գոլորշիները նույնական
տեղափոխվում են և որոշակի պայմաններում խտանալով՝ անձրևի ու
ձյան տեսքով թափվում են երկրի վրա:

Յամաքի վրա թափված տեղումները մասսամբ տարվում են գետերի
կողմից, մասամբ՝ գոյորշիանում, մասամբ՝ կլանվում բուսածածկի կող-
մից, իսկ մի մասն էլ ներծծվում է հողի ու ապարների շերտերի մեջ և
սնում ստորերկրյա ջրերի հորիզոնները: Վերջիններս կարող են տեղան-
քի ցածրադիր մասերում կամ երողին խրվածքներում աղբյուրների
ձևով բեռնաթափվել գետերի, լճերի ու ծովերի մեջ:

Այսպիսով, բնական շրջանառությանը մասնակցում են օվկիանոսային, մակերևութային, մթնոլորտային և ստորերկրյա ջրերը, ըստ որում՝ այս շրջանառությունը որոշիչ դեր է խաղում երկրակեղևի վերին շերտերում ստորերկրյա ռեսուլտաների ձևավորման գործում: Անհրաժեշտ է նշել, որ անընդհատ շրջանառության շնորհիվ քաղցրահամ ջրերի պաշարները մշտապես վերականգնվում են:



Նկ. 4 Բնության մեջ ջրերի շրջանառության սխեմա

Տարբերում են ջրի շրջանառության հետևյալ սխեմաները՝ մեծ, փոքր (մերքին) և մերցամաքային շրջանառություններ (նկ. 4): *Մեծ շրջանառության* դեպքում խոնավությունը մթնոլորտում տեղափոխվում է մեծ տարածություններ. օվկիանոսից գոլորշիանալով՝ այն օդային հոսանքներով տարվում է ցամաքի վրա, տեղումների ձևով թափվում և զետերով կամ ստորերկրյա ճանապարհով նորից հասնում է օվկիանոս: *Փոքր կամ մերքին (մերօվկիանոսային)* շրջանառության ժամանակ օվկիանոսից գոլորշիացող խոնավությունը տեղումների ձևով թափվում է օվկիանոսի սահմաններում: Իսկ ցամաքից գոլորշիացող և ցամաքի սահմաններում թափվող խոնավության շրջանառությունը կոչվում է *լոկակամ կամ մերցամաքային*:

2.6. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԶՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՃՈՒՄ ՄԱՍԻՆ

Չըի շջանառության քանակական արտահայտությունը որևէ գետային ջրհավաք ավազանի, ոեզիոնի կամ ողջ երկրագնդի համար կոչվում է ջրային հաշվեկշիռ:

Բնության մեջ ջրի փոքր շրջանառությունը, ըստ բազմամյա տվյալների, տարվա կտրվածքում արտահայտում են հետևյալ հավասարումով.

$$U_g = O_g \quad (17)$$

որտեղ՝

O_g -ն ջրային մակերևույթից տարեկան գոլորշիացումն է,

O_g -ն ջրային մակերևույթի վրա տարեկան մթնոլորտային տեղումների քանակը:

Բնության մեջ ջրի մեծ շրջանառությունը, ըստ բազմամյա տվյալների, տարեկան կտրվածքում որոշվում է հետևյալ բանաձևով.

$$U_g = O_g - C \quad (18)$$

որտեղ՝

U_g -ն ցամաքի մակերևույթից տարեկան գոլորշիացումն է,

O_g -ն ցամաքի մակերևույթի վրա տարեկան տեղումների քանակն է,

C -ն տարեկան գետային հոսքն է ցամաքի մակերևույթից:

Համաշխարհային օվկիանոսի համար ջրի մեծ շրջապտույտի հավասարումը արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$U_g = O_g + C \quad (19)$$

Գումարելով (18) և (19) հավասարումները՝ կստանանք

$$U_g + U_g = O_g + O_g \quad (20)$$

Այսինքն՝ օվկիանոսների և ցամաքի մակերևույթից ջրի գոլորշիացման գումարը հավասար է դրանց մակերևույթին թափվող տեղումների գումարին:

(17) հավասարումը կիրառելով անհոսք շրջանների համար՝ կարելի է գրել.

$$U_{\omega} = O_{\omega} \quad (21)$$

որտեղ՝

U_{ω} -ն անհոսք շրջանների մակերևույթից տարեկան գոլորշիացման քանակն է,

O_{ω} -ն նույն մակերևույթի վրա տարեկան տեղումների քանակը:

Գումարելով (20) և (21) հավասարումները՝ կստանանք ամբողջ երկրագնդի համար ջրային շրջանառության հավասարումը.

$$U_{\varrho} + U_g + U_{\omega} = O_{\varrho} + O_g + O_{\omega} \quad (22)$$

Երկրագնդի սահմաններում տարեկան ջրի շրջանառությանը մասնակցում է 577 հազ.կմ³ ծավալի չոր թուր [33]:

Գետային ավազանների համար (փոքր և միջին ջրհավաք մակերեսներով), որի սահմաններում տարածված գրունտային ջրերը տեղադրված են ինտենսիվ ջրաշրջանառության գոնայում և դրենացվում են գետահովվիտներով, ավազանի ջրային հաշվեկշիռը արտահայտվում է հետևյալ քանածնով.

$$X_0 = Y_0 + Z_0 \quad (23)$$

որտեղ՝

X_0 -ն տեղումների նորման է տվյալ ավազանի համար, մմ/տարի,

Y_0 -ն գետային հոսքի նորման է տվյալ ավազանի համար, մմ/տարի,

Z_0 -ն գոլորշիացման նորման է տվյալ ավազանի համար, մմ/տարի:

Սեր ժամանակներում ներցամաքային շրջանառությունն ուսումնասիրում են կախված քննության մեջ ջրի շրջանառության վրա ազդող ինժեներական այնախսի միջոցառումներից, ինչպիսիք են ճահիճների չորացումը, խոշոր ջրամբարների, ոռոգման համակարգերի ստեղծումը և այլն:

Ջրաերկրաբանությունում ջրի շրջանառությունը քննության մեջ և նրա տարրերը (տեղումներ, գոլորշիացում, հոսք) առանձին շրջանների

կամ մարզերի սահմաններում դիտարկվում են երկրաբանակառուցվածքային և ջրաերկրաբանական պայմանների հետ համատեղ:

Ստորերկրյա հոսքին վերաբերող մեծաքանակ փաստացի նյութերի մշակման հիման վրա Բ. Ի. Կուդելինը բնության մեջ ջրի շրջանառության բանաձևերում արել է եական լրացումներ, որոնք արտահայտում են ջրհավաք ավագանի, շրջանի կամ մարզի ջրային հաշվեկշիռներում երկրաբանական և ջրաերկրաբանական պայմանների դերը [33]:

Փակ գետային ավագանների ոչ մեծ մակերեսների և արտեզյան ավագանների տարրեր մասերում տեղադրված տեղամասերի համար նա առաջարկում է ջրային հաշվեկշռի հետևյալ հավասարումները.

1. Եթե գետային ավագանը (կամ դրա մի մասը) տեղակայված է արտեզյան ավագանի սննման մարզում.

$$X_0 = Y_0 + Z_0 + L_0 \quad (24)$$

2. Եթե գետային ավագանը (կամ դրա մի մասը) տեղակայված է արտեզյան ավագանի բեռնաբախման մարզում.

$$X_0 = Y_0 + Z_0 - V_0 \quad (25)$$

3. Եթե գետային ավագանը տեղակայված է արտեզյան ավագանի սննման և բեռնաբախման մարզերում.

$$X_0 = Y_0 + Z_0 + L_0 - V_0 \quad (26)$$

X_0 -ն, Y_0 -ն և Z_0 -ն նույնն են, ինչ որ (23) բանաձևում,

L_0 -ն միջին քազմամյա ինֆիլտրացիան է ճնշումային ջրատար հորիզոնի սննման մարզում, մմ/տարի,

V_0 -ն միջին քազմամյա հոսքն է ճնշումային ջրատար հորիզոնի բեռնաբախման մարզում, մմ/տարի:

4. Գետային ավագանի համար, որը տեղադրված է արտեզյան ավագանի ճնշման ձևավորման մարզում, ջրային հաշվեկշռի հաշվարկման ժամանակ կարելի է օգտվել (23) բանաձևից:

Տարեկան կտրվածքում փակ գետային ավագանի համար ըստ քազմամյա տվյալների, ջրային հաշվեկշռի հավասարումը ընդհանուր տեսքով արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$X_0 = Y_0 + Z_0 \pm W_0 \quad (27)$$

որտեղ՝ $\pm W_0$ -ն միջին բազմամյա ինֆիլտրացիան է ջրատար հորիզոնի դրա սննման մարզում կամ հոսքն բեռնաբափման մարզում (մմ/տարի), ճնշման մարզի համար $W_0 = 0$ -ի:

Եթե (27) բանաձևում ընդունենք $Y_0 = 0$, ապա կստանանք ջրային հաշվեկշռի հավասարումը անհոգք շրջանի համար.

$$X_0 = Z_0 - W_0 \quad (28)$$

Զրաերկրաբանությունում (23) - (27) բանաձևերը կիրառվում են մեկ կամ մի քանի ջրատար հորիզոնների ստորերկրյա ջրերի բնական ռեսուրսների որոշման համար:

Այդ բանաձևերում ստորերկրյա ջրերի ռեսուրսներն արտահայտվում են L_0 , V_0 և W_0 անդամներով, որոնց քանակական մեծությունները հեշտ որոշվում են կոնկրետ դիտարկվող գետային ավազանի (կամ դրա մի մասի) համար X_0 , Y_0 և Z_0 հայտնի պարամետրերի հիման վրա: Ստորերկրյա ջրային ռեսուրսների գնահատման այս մեթոդիկան իր արտահայտությունն է գտել շատերի աշխատանքներում [27, 20 և այլն]:

ԳԼՈՒԽ III

**ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ
ԶԵՐՄԱՅԻՆ ՈԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ: ԵՐԿՐԱԶԵՐՄԱՅԻՆ
ԶՈՆԱՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ԶԵՐՄԱՅԻՆ ՈԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ

Երկրակեղին ջերմային ռեժիմը լիբուսֆերայում ընթացող մասսա և էներգափոխանակման ընդհանուր գործընթացների դրսորումներից մեկն է:

Երկրակեղին ջերմային ռեժիմի ձևավորմանը մասնակցում են արտաքին (էկզոգեն) և ներքին (էնտոգեն) ջերմային էներգիայի աղբյուրները:

Արտաքին ջերմային աղբյուրներից հիմնականը հանդիսանում է արևը: Արևի ճառագայթման հետ համեմատած՝ մյուս արտաքին ջերմային աղբյուրները (լուսնի, աստղերի, տիեզերական) ունեն երկրորդական նշանակություն: Արեգակնային ջերմությունն է սահմանում կյանքի զարգացումը մեր մոլորակի վրա և ցույց է տալիս բացառիկ կարևոր ազդեցություն մքննողրտում, Երկրի մակերևույթին և երկրակեղին ամենավերին մասերում ընթացող գործընթացների վրա: Ինչպես արդեն ասվել է, արեգակնային էներգիան և ծանրության ուժն են պայմանավորում ջրի շրջապտույտը բնության մեջ (տես գլ. II):

Արեգակնային ճառագայթման ինտենսիվույթունը Երկրի վրա որոշվում է նրա 1սմ^2 մակերեսի վրա արևից հասած ջերմության քանակով՝ չափված ջոռվլերով: Ճառագայթման ինտենսիվույթունը կազմում է մոտ 8.4 ջոռվ/սմ^2 րոպե (այսպես կոչված արեգակնային հաստատուն) կամ $4.4 \times 10^6 \text{ ջոռվ/սմ}^2$ տարի: Երկրի գնդաձևության, իր առանցքի և Արեգակի առանցքի շուրջ պտտվելու պատճառով, իրականում մքննողրտի արտաքին սահմանների միավոր մակերեսին հասնում է այդ էներգիայի միայն $1/4$ մասը, այսինքն մոտ $1.1 \times 10^6 \text{ ջոռվ/սմ}^2$ տարի: Այդ քանակի մոտ $33\%-ը$ ($(0.36 \times 10^6 \text{ ջոռվ/սմ}^2)$ մքննողրտի կողմից անդրադարձվում է տիեզերքից երկրի մքննողրտ է հասնում միայն $0.74 \times 10^6 \text{ ջոռվ/սմ}^2$ տարի էներգիա: Դրա մոտ $0.25 \times 10^6 \text{ Ջոռվ/սմ}^2$ տարի կլանվում է մքննողրտի կողմից, $0.18 \times 10^6 \text{ ջոռվ/սմ}^2$ տարի ծախսվում է երկրի մակերևույթից ճա-

ռազայթման անդրադարձման վրա: Մնացածը՝ 0.31 ջոռվ/սմ²χ տարի կազմում է գումարային ջերմային էներգիան (ուղիղ և ցրված ճառագայթնան), որը հասնում է Երկրի մակերևույթին: Այն ծախսվում է Երկրի մակերևույթից ջրի գոլորշիացման վրա և մասնակցում է Երկրակեղևի վերին շերտերում ընթացող ջրափոխանակման գործընթացներին:

Անհրաժեշտ է նշել, որ Արևի ճառագայթների ինտենսիվությունը Երկրի վրա տարածության և ժամանակի մեջ փոփոխական է, որը ազդում է մոլորակի կլիմայի փոփոխման վրա:

Ենդրգեն (խորքային) ջերմային աղբյուրներին են դասվում գրավիոնին, ոռտացիոնածին և այլ տիպի էներգիաները, որոնք առաջ են գալիս մոլորակի սեղմման, Երկրի պտտման արագության փոփոխման, գրավիտացիոն դիֆերենցիացիայի, Երկրաբանական գործընթացների և այլ երևույթների հետ կապված [13]: Հարկավոր է նշել, որ խորքային ոչ բոլոր ջերմային աղբյուրներն են հնարավոր գնահատել քանակապես: Նույնիսկ ջերմային էներգիայի գնահատումը, որը անցատվում է ռադիոակտիվ էլեմենտների տրոհմամբ, համարվում է խիստ մոտավոր: Պատճառը այն է, որ առայժմ բացակայում են Երկրի շառավիղով ռադիոակտիվ էլեմենտների բաշխվածության օրենքի և դրանց վերաբաշխումը Երկրաբանական զարգացման գործընթացում տվյալները:

Երկրակեղևում ջերմության վերաբաշխումը կատարվում է կոնդրոկտիվ և կոնվեկտիվ ջերմատարման օգնությամբ [19]:

Երկրի մակերևույթին, հողի և Երկրակեղևի ջերմային ռեժիմը, պայմանավորված արևի գումար ճառագայթման (ինսոլացիա)² և Երկրի խորքից մակերևույթ բարձրացող ջերմությամբ, որոշում է ստորերկրյա ջրերի ջերմաստիճանը, որը տատանվում է լայն սահմաններում՝ բացասականից (գերսառը աղային ջրեր) մինչև 100°C-ը գերազանցող հեյզերներ (գերտաք ջրեր): Ավելի ցածր ջերմաստիճանի ստորերկրյա ջրերը հանդիպում են հավերժական սառցության նարզերում, առավել բարձր ջերմաստիճանի ջրերը՝ Երկիտասարդ հրաբխային գործունեության մարզերում և այն շրջաններում, որտեղ ստորերկրյա ջրերը տեկտոնական խախտումներով և ճեղքերով բարձրանում են Երկրակեղևի շատ խորը հորիզոններից:

² Գումար ճառագայթում (ինսոլացիա)- ուղիղ և ցրված ճառագայթների միագումարություն (ամբողջուրյուն), որը գալիս է Արևից և ամբողջ տիեզերական ծածկույթից Երկրի հորիզոնական մակերևույթի վրա:

Ստորերկրյա ջրերն իրենց հերթին հանդիսանում են երկրակեղևում ընթացող ջերմափոխանակման կարևոր գործոններից մեկը, քանի որ ապարների ջերմային հատկությունները կախված են դրանց խոնավությունից և դրանցում շարժվող ջրերի տիպերից:

Ջրերի շարժումը երկրակեղևում կազմող ապարների միջով, ինչպես հայտնի է, կարող է տեղի ունենալ հիդրավիկական գրադիենտի (լամինար և տուրբուլենտ ֆիլտրացիաներ), մազանորային ուժերի, օսմոսի, լուծված գազերի, ջերմաստիճանային գրադիենտի, կոնվեկցիայի և այլ ուժերի ազդեցության տակ, ընդ որում հաճախ ջերմափոխանակմանը մասնակցում են ոչ թե մեկ, այլ խոնավության շարժման մի քանի ձևեր միաժամանակ: Դրա համար էլ ստորերկրյա ջրերի ջերմաստիճանի ձևավորման հարցը դեռևս բավարար պարզ չէ, որը պահանջում է հետագա ուսումնասիրություններ, երկրակեղևի տարրեր ձևի ջրերի ջրաերկրաբանական հետազոտությունների ժամանակ [33]:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ կոնդրուկտիվ ջերմային հոսքի մեծության և տեկտոնիկ ակտիվության հասակի միջև կա սերտ կապվածություն, որը գոյություն ունի ինչպես մայրցամաքում, այնպես էլ օվկիանոսային կեղևի տարածման սահմաններում: Վերջինիս սահմաններում առավելագույն ջերմային հոսքի մեծությունները կապված են միջին-օվկիանոսային լեռնաշղթաների առանցքային մասերում, որտեղ տեղի է ունենում մասնիշայի նյութի դուրս բերումը և նոր կեղևի ձևավորումը, որն առանցքից դեպի եզրերը աստիճանաբար մեղմանում է և բերում կոնդրուկտիվ ջերմային մեծության աստիճանական փոքրացմանը [27]:

Երկրակեղևում ջերմության կոնվեկտիվ վերաբաշխումը հիմնականում կապված է ստորերկրյա ջրերի հետ: Այդ գործընթացը առավել ինտենսիվ կատարվում է երկրակեղևի վերին շերտերում, որտեղ ստորերկրյա ջրերը Երկրի գրավիլտացիոն դաշտի ազդեցության տակ հնատենակի տեղաշարժվում են: Այդ ջրաշրջանառության գոնայի հաստությունը պլատֆորմների սահմաններում հասնում է 100 մ, իսկ լեռնածալքավոր մարգերում 200 մ [2]: Դրա հետ կապված, փորձեր են արվում ստորերկրյա ջրերի ջերմահանումը գնահատելու՝ ըստ դրանց շրջանառության ինտենսիվության:

3.2. ԱՊԱՐՆԵՐԻ ԶԵՐՄԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զրաերկրաբանությունում ապարների զերմային հատկությունները, երկրաշերմային գրադիենտը և աստիճանը (տես կետ 3) օգտագործվում են տարբեր տիպի ստորերկրյա ջրերի և դրանց աղբյուրների, ապարների դրական և բացասական զերմաստիճանների, ջրային, նավային և գազային հորատանցքերում երկրաշերմային հետազոտական տվյալների վերլուծման և այլ ուսումնասիրությունների ժամանակ:

Ապարների զերմային հատկությունների շարքին են դասվում զերմահաղորդականությունը, զերմային դիմադրությունը, զերմատարողությունը և զերմաստիճանահաղորդականությունը:

Զերմահաղորդականությունը հոծ միջավայրում զերմության մոլեկուլյար տեղափոխումն է, որը պայմանավորված է զերմաստիճանների տարրերության առկայությամբ: **Զերմափոխանակության** այդ եղանակը տեղի է ունենում ինչպես մեկ մարմնի ներսում, այնպես էլ միմյանց հետ հպվող երկու մարմինների միջև:

Զերմահաղորդականությունը բնութագրվում է զերմահաղորդականության գործակցով կամ տեսակարար զերմահաղորդականությամբ: **Զերմահաղորդականության** գործակիցը (մետր-կիլոգրամ-ժամ համակարգում) հավասար է զերմության այն քանակին, որն անցնում է մեկ ժամում 1m^2 կտրվածքով (կտրվածքին ուղղահայաց ուղղությամբ), եթե զերմաստիճանային գրադիենտը հավասար է 1°C : Այն որոշվում է.

$$\lambda = \frac{Ql}{S(t_2 - t_1)\tau} \quad (29)$$

որտեղ՝

λ -ն զերմահաղորդականության գործակիցն է, կկալ/(մխժամ ^0C),

Q -ն անցած զերմության քանակն է, կկալ,

l -ը ապարի շերտի հաստությունն է, մ,

S -ը մակերևույթի մակերեսն է, որով անցնում է զերմային հոսանքը, m^2 ,

τ -ն զերմային հոսանքի անցման ժամանակն է, ժամ,

$t_2 - t_1$ -ը ջերմաստիճանների տարբերությունն է ապարի շերտի հակադիր հարքությունների վրա, 0C :

Որոշ ապարների, ինչպիս նաև գազի, նաև լի և ջրի ջերմահաղորդականության գործակիցները բերվում են աղյուսակ 3 [33]:

Ապարների ջերմահաղորդականությունը փոփոխվում է՝ կախված նրանց ստրոկտուրայից, խոնավությունից, շերտայնությունից, խտությունից և այլ հատկություններից ու գործոններից:

Ջերմային դիմադրությունը ջերմահաղորդականության հակադարձ մեծությունն է և արտահայտվում է տեսակարար դիմադրությամբ.

$$\varepsilon = \frac{1}{\lambda} \quad (30)$$

որտեղ՝

ε -ը տեսակարար ջերմային դիմադրությունն է, մշտամամ $^0C/\text{կկալ}$:

Տեսակարար ջերմային դիմադրությունը փոփոխվում է կախված ապարի հետևյալ հատկություններից՝ խտությունից, խոնավությունից, ֆիլտրացիայից, ջերմաստիճանից, շերտայնությունից, հեղուկի բնույթից և այլն: Գործնականում այն կախված չէ ստորերկրյա ջրերի հանքայնացումից:

Տեսակարար ջերմային դիմադրության արժեքները որոշ ապարների, նաև լի, գազի և ջրի (տես աղյուսակ 3):

Ջերմակարողությունը բնութագրվում է ջերմատարողության գործակցով, այն համապատասխանում է ջերմության այն քանակին, որը ծախսվում է 1 կգ նյութը 1^0C -ով տաքացնելու վրա, եթե ճնշումը հաստատուն է: Այն որոշվում է

$$C = \frac{\Delta Q}{P \Delta t} \quad (31)$$

որտեղ՝

C -ն ջերմատարողության գործակիցն է, կկալ/ $կգx^0C$,

ΔQ -ն ջերմության քանակն է, որը ծախսվել է նյութի տաքացման վրա, կկալ,

P -ն նյութի մասսան է, կգ,

Δt -ն նյութի տաքացման սկզբնական և վերջնական ջերմաստիճանների տարբերությունն է, 0C :

Զերմատարողության գործակցի մեծությունները որոշ ապահների համար (տես աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Որոշ ապարների ջերմաֆիզիկական հավելությունների գործակիցները

Զերմատարողականությունների մեջ	Ապարներ	Խոսություն, գ/սմ ³	Զերմահաղոր- դականության գործակից, λ կՎալ/մxdx°C	Տևակարար ջերմային դիմադրյում Σ մxdx°C/կՎալ	Զերմաստի- ճանահաղոր- դականության գործակից, a 10 ³ Ճ ² /Ճ	Զերմա- տարողու- թյուն, C կՎալ/կՃx ⁰ C
Բարձր	Քարաղ	2.135	2.35-2.20	0.3-0.16	7.68-14.0	0.204
	Ավազքար	2.6	1.1-4.95	0.91-0.2	2.12	0.20
	Կվարցիտ	2.65	1.6-4.8	0.62-0.21	3.61-10.9	0.167
	Դոլոմիտ	2.8-2.99	0.93-4.3	1.08-0.23	1.45-6.7	-
	Անիդրիտ	-	3.64	0.27	-	-
	Մարմար	2.5-2.8	1.12-3.2	0.89-0.31	4.15-6.39	0.189
	Գրանիտ	2.67	1.8-3.1	0.56-0.32	6.75	0.17
	Դիորիտ	2.84	1.85-2.1	0.54-0.48	3.85-4.38	-
	Գաբրո	2.98	1.73	0.58	3.37	0.172
	Տրախիտ	-	1.47-2.16	0.68-0.46	3.4-3.7	-
	Բազալտ	2.77	1.5-2.5	0.67-0.4	2.68	0.203
Միջին	Ավազ	1.2-2.1	0.3-2.92	3.33-0.34	1.12	-
	Կրաքար	2.12-2.8	0.6-2.88	1.67-0.35	1.59-5.18	-
	Գմեյս	-	1.86-2.67	0.54-0.37	-	-
	Կապար	-	1.25-2.16	0.8-0.46	2.0	0.184
	Սերգեկ	-	0.79-1.37	1.26-0.53	-	-
	Տուփ	1.8	0.61-1.37	1.64-0.73	1.02-2.3	-
	Կավ	1.6-2.9	0.21-1.3	4.85-0.77	3.5	0.118
	Գիպս	2.13	0.35-1.19	0.99-0.84	-	0.275
	Կավիճ	1.8-2.6	0.72-1.08	1.39-0.93	1.66-2.34	-
Ցածր	Ասֆալտ	1.1-2.8	0.72	1.34	0.92	-
	Ջոր 20°C	0.998	0.515	1.94	0.517	0.998
	Ածուխ	1.2-1.5	0.08-0.24	1.2-4.17	0.2-0.82	0.31
	Նավթ	0.73-0.96	0.11-0.13	9.09-7.69	0.29-0.34	0.50
	Գազ	-	1.036	27.78	-	-

Ծանոթություն: Բնական պայմաններում ապարների ջերմաֆիզիկական պայմանները կախված՝ նրանց ջրահագեցվածությունից, խոռոչությունից և այլ ֆիզիկական հավելություններից կարող են լինել տարրեր աղյուսակում բերվածի նկատմամբ:

Չերմաստիճանահաղորդականությունը ջերմահաղորդականության գործակցի հարաբերությունն է ջերմատարողության և ապարի խտության (ծավալի կշռի) արտադրյալին.

$$a = \frac{\lambda}{C \times \rho} \quad (32)$$

որտեղ՝

a - ն ջերմաստիճանահաղորդականությունն է, $\text{մ}^2/\text{Ժամ}$,

C - ն ջերմատարողությունն է, $\text{կկալ}/\text{կգ}^\circ\text{C}$,

ρ - ն ապարի խտությունն է, $\text{գ}/\text{սմ}^3$:

Ապարի ջերմաստիճանահաղորդականությունը կախված է հետևյալ գործոններից.

ա) ապարի խտությունից. Խտության մեծացումով ($1.4\text{-}3.0\text{գ}/\text{սմ}^3$ սահմաններում) ջերմաստիճանահաղորդականությունը փոքրանում է,

բ) ապարի խոնավությունից. Արա մեծացումով ջերմաստիճանահաղորդականությունը մեծանում է, ընդ որում բարձրացումը տեղի է ունենում մինչև խոնավության որոշակի սահմանին հասնելը, որից հետո բարձր խոնավության դեպքում ջերմաստիճանահաղորդականությունն ընկնում է, քանի որ նշանակալից խոնավության դեպքում մեծանում է ապարի ջերմատարողությունը,

գ) հեղուկի քննությից. նավթային ապարներն ունեն ավելի փոքր ջերմաստիճանահաղորդականություն, քան ջրատարները, քանի որ նավթի ջերմային դիմադրությունն ավելի մեծ է քան ջրինը,

դ) ապարի ջերմաստիճանից՝ ապարի ջերմաստիճանի մեծացումով ջերմաստիճանահաղորդականությունը փոքրանում է, կապված դրա ջերմային դիմադրության և ջերմատարողության մեծացման հետ,

ե) ապարի շերտայնությունից. Սատ շերտավորության՝ ջերմաստիճանահաղորդականությունը բարձրանում է,

զ) միջշերտային ջրերի հանքայնացումից գործնականում կախված չել:

Ապարների ջերմաստիճանահաղորդականության տվյալները բերվում են աղյուսակ 3-ում:

3.3. ԵՐԿՐԱԶԵՐՄԱՅԻՆ ԶՈՆԱՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՅՑ ԲՆՈՒԹՅԱԳՐԵՐԸ

Հստ զերմաստիճանային ռեժիմի առանձնահատկությունների երկրակեղուում սովորաբար առանձնացնում են երեք զերմաստիճանային գոնաներ՝ արտաքիմ, տարեկան հաստատում զերմաստիճանային և ներքին:

Արտաքիմ զոնա (գելիոզերմագոնա, էկզոպեն): Այս զոնայում զերմային էներգիայի հիմնական աղբյուրն արեգակնային էներգիան է (տես կետ 1):

Արտաքիմ (վերին) զոնայի զերմաստիճանային ռեժիմը փոփոխական է, ոչ ստացիոնար, դրան բնորոշ են պարբերական (ցիկլային) տատանումները՝ կապված արևի էներգիայի փոփոխման հետ օրվա ընթացքում, ըստ սեզոնի, տարեկան և քաջմամյա կտրվածքում: Զերմաստիճանի օրական տատանումները ցանարում ըստ խորության կազմում են 0.8-2.0մ, օվկիանոսների վրա կազմում է 20-30 մ, սեզոնային տատանումները համապատասխանարար՝ 8.0-10.0 մ և 150.0-200.0, իսկ տարեկան տատանումները՝ 15.0-30.0 և մինչև 350 մ [19]:

Զերմաստիճանի տարածման բնույթը վերին զոնաներում կախված է ոչ միայն կլիմայից, այլ նաև բուսական ծածկի բնույթից, ուղիեցիկ կտրուկածությունից և ապարների լիքոլոգիական կազմից: Կախված այս գործումների հերթափոխումից՝ արևի զերմությունը տարածվում է տարբեր խորությունների վրա:

Վերին գրնայում առկա են զերմաստիճանի տատանումների երկու դրսւուրումներ՝ առավելագույն և նվազագույն: Առավելագույն և նվազագույն զերմաստիճանների միջև եղած տարբերությունը օրվա կամ տարվա կտրվածքում կոչվում է օրական կամ տարեկան տատանումների ամպլիտուդա (ծայրակետերի տարբերություն): Նվազագույն զերմաստիճանից առավելագույնին հասնելու ժամանակը կոչվում է զերմաստիճանային ալիքների շրջան, որն ըստ խորության գործնականում մնում է անփոփոխ: Եթե ըստ խորության զերմաստիճանի բարձրացումը չափվում է թվաբանական պրոգրեսիայով, ապա զերմաստիճանի տատանման ամպլիտուդան նվազում է երկրաչափական պրոգրեսիայով [19]:

Ապարներում ջերմաստիճանի փոփոխությունները որոշակի խորության վրա ըստ ժամանակի գնահատելու համար կազմվում են թերմիդրոպալետի (հավասարացերմագծերի) գրաֆիկներ:

Հավասարացերմագծերը տարբեր խորությունների համար հավասար ջերմաստիճանների կորերն են, սովորաբար կազմված ոչ պակաս քան մեկ տարվա տևողությամբ ստացիոնար դիտարկումների տվյալների հիման վրա:

Տարեկան հասկապուն ջերմաստիճանի գումար: Այս ջերմաստիճանային գուման սովորաբար ձևավորվում է այնտեղ, որտեղ մարում է արևի ճառագայթների և խորքային (Էնդոգեն) ջերմային հոսքերի ազդեցությունը: Այդ գուման ստացել է «չեզոք շերտ» կամ տարեկան հաստատում ջերմաստիճանային գոտի անվանումները: Դրանում ջերմաստիճանը մոտ է իրենց վեր տեղադրված ապարների միջին քազմամյա ջերմաստիճանին և չնչին չափով տարբերվում է տվյալ տեղանքի օվի միջին տարեկան ջերմաստիճանից: Չեզոք շերտի տեղադրման խորությունը գտնվում է այնտեղ, որտեղ ջերմաստիճանի տարեկան փոփոխությունը գործնականում չի գերազանցում 0.1°C :

Հաստատում ջերմաստիճանի գոտու խորությունը կարելի է որոշել նաև Ֆյուրեի երրորդ օրենքի համաձայն: Այն է՝ տարբեր ժամանակաշրջաններում համապատասխան ջերմաստիճանային ամպլիտուդների մարման խորությունների (H_1 և H_2) հարաբերությունը հավասար է այդ ժամանակամիջոցների (T_1 և T_2) հարաբերության քառակուսի արմատին.

$$\frac{H}{H_2} = \sqrt{\frac{T_1}{T_2}} : \quad (33)$$

Համաձայն (33) բանաձևի ջերմաստիճանի տարեկան փոփոխության խորությունը օրականի նկատմամբ գերազանցում է 19.1 անգամ ($H_1=19.1 \times H_2$), այսինքն՝ հաստատում ջերմաստիճանային գոտու խորությունը 19.1 անգամ գերազանցում է օրական հաստատում ջերմաստիճանային շերտի խորությանը:

Ներքին գումար (Երկրաչերմագունա, Էնդոգեն): Այս գուման ընկած է տարեկան հաստատում ջերմաստիճանային գոտուց ներքև, որի ջերմաստիճանը օրինաչափորեն մեծանում է ըստ խորության: Ջերմային Էնդրգիայի հիմնական աղբյուրն է հանդիսանում Երկրի ներքին ջերմութ-

յունը: Ներքին գոնայում ջերմային ռեժիմը յուրաքանչյուր կոնկրետ շրջանում կախված է երկրաբանական կառուցվածքի և տեկտոնական առանձնահատկությունների բնույթից, ապարների ջերմային հատկություններից, ռեզիստանցիկություններից, ապարների ջերմային հատկություններից և ջրաերկրաբանական պայմաններից: Ներքին (խորքային) գոնայում ապարների ջերմային փոփոխությունն ըստ խորության բնութագրվում է երկրաշերմային գրաղիենիցի մեծությամբ:

Երկրաշերմային գրաղիենիցի տակ հասկացվում է երկրակեղենի հաստատուն ջերմաստիճանի գոտուց ներքև յուրաքանչյուր 100 °C խորանական ջերմության բարձրացման մեծություն (°C): Երկրաշերմային գրաղիենտի հակադարձ մեծությունը կոչվում է **երկրաշերմային ասպիհանում:**

Երկրաշերմային ասպիհանում բնորոշում է երկրակեղենի ուղղաձիգ կտրվածքում ջերմության աճի ինտենսիվությունը և արտահայտում է խորացման չափը (մետրերով), որի դեպքում ջերմաստիճանը բարձրանում է 1°C-ով՝ հաշված հաստատուն ջերմաստիճանի գոտուց:

Տարբեր տեղամասերում և խորություններում երկրաշերմային գրաղիենտի մեծությունը տարբեր է և կարող է տատանվել 0.5-ից մինչև 20-30°C-ի սահմաններում: Միջին նշանակությունն ընդունված է 3° C: Երկրաշերմային աստիճանի միջին մեծությունն ընդունվում է 33մ/°C, բայց այն փոփոխվում է 1-200մ/°C սահմաններում՝ կախված ապարների ջերմային հատկություններից, երկրաբանական կառուցվածքի տիպից ու հասակից և ջրաերկրաբանական պայմաններից:

Երկրաշերմային գրաղիենտը (Γ) և երկրաշերմային աստիճանը (G) որոշվում են հետևյալ հավասարումներով.

$$\Gamma = \frac{T_2 - T_1}{H_2 - H_1} \quad (34)$$

$$G = \frac{H_2 - H_1}{T_2 - T_1} \quad (35)$$

որտեղ՝

T_1 և T_2 -ը ջերմաստիճաններն են ($^{\circ}\text{C}$) H_1 և H_2 խորությունների վրա, մ:

Եթե կան ջերմաստիճանի առանձին չափումներ հորատանցքերում, ապա երկրաշերմային աստիճանը որոշվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$G = \frac{H - h}{T - t} \quad (36)$$

որտեղ՝

h -ը հաստատուն ջերմաստիճանի գոտու խորությունն է, մ,

H -ը ջերմաստիճանի չափման խորությունը, մ,

T -ն ջերմաստիճանն է H խորության վրա, ${}^{\circ}\text{C}$,

t -ն օդի միջին տարեկան ջերմաստիճանն է հողի մակերևույթին, ${}^{\circ}\text{C}$:

Եթե հայտնի են երկրաշերմային աստիճանը (G) և օդի միջին տարեկան ջերմաստիճանը (t) և հաստատուն ջերմաստիճանի շերտի խորությունը (h), ապա գործնական նպատակների համար բավականին մեծ ճշությամբ կարելի է որոշել ջերմաստիճանը տրված ցանկացած խորության վրա (H_1) կամ որոշել խորությունը, որը համապատասխանում է հայտնի ջերմաստիճանին (T_1).

$$T_1 = t + \frac{H_1 - h}{G} \quad (37)$$

$$H_1 = G(T_1 - t) + h \quad (38):$$

3.4. ԵՐԿՐԱՋԵՐՄԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՎՈՒԽԸ ԶՐԱԿՐԱՎԲԱԾԿԱՆ ՊՐԱԿՏԻԿ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՍՏԱՐ

Բնական և արհեստական ջերմային դաշտերը կարելի են օգտագործել մասնավորապես հետևյալ ջրաերկրաբանական խնդիրները լուծելու համար [19].

1) ջրաերկրաբանական կտրվածքի մասնատում. ջրատար հորիզոնների և ջրամերժ շերտերի տարանջատում, որոշել դրանց տեղադրման ինտերվալները և հաստությունները,

2) ըստ աղբյուրների (քնաղբյուրների) ջրի ջերմաստիճանի ստորերկրյա ջրերի տեղադրման խորության որոշումը,

3) ջրաերկրաբանական հանույթների ժամանակ աղբյուրների դասակարգումն ըստ դրանց սնող ջրատար հորիզոնների ջրերի,

4) ստորերկրյա ջրերի ֆիլտրացիայի արագության որոշումը, դրանց խորության տարրեր ինտերվալներում և ակտիվ ջրափոխանակման զննայում ապարների առանձին հաստվածքների ֆիլտրացիոն հատկությունների որակական գնահատում,

5) ըստ տարածման և ուղղաձիգ կտրվածքի՝ ջրատար հորիզոններում հետամտելու բեկվածքային տեղամասերի, ճեղքավորված և կարստավիրված գոնաների և գնահատելու ապարների կարստավորվածության աստիճանը,

6) ստորերկրյա տաք ջրերի որոշում և հետախուզում,

7) ուսումնասիրել արտեզյան ավազանի լոկալ և ուղիղոնալ ջրաերկրաբանական առանձնահատկությունները, պարզել ստորերկրյա ջրերի սնման, հոսքի և բեռնաբախման մարզերը,

8) որոշել ստորերկրյա տաք վերլնիքաց ջրերի բեռնաբախման փակ (ծածկված) օջախները,

9) հետազոտել ստորերկրյա ջրերի ձևավորման պայմանները և դինամիկան, վեր հանել ջրադինամիկական զոնաները,

10) որոշել լեռնային փորվածքների ջրակալման աղբյուրները (ջրատար հորիզոններ),

11) կանխատեսել լեռնային փորվածքի խորշածակատի մոտեցումը ջրակալված զոնաների,

12) որոշել ցեմենտաշաղախի բարձրությունը՝ հորատանցքերի միջնորդակային տարածքի ցեմենտացման ժամանակ:

ԳԼՈՒԽ IV


ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԱՊԱՏՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:
ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԱՊԱՏՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատորերկրյա ջրոլորտն, ըստ Ֆ. Պ. Սավարենսկու, երկրակեղենի մաս է, որի ջրաճնշումային պայմանները բույլ են տալիս բնական ջրերի գոյությունը:

Ջրոլորտի ատորերկրյա մասի կառուցվածքը, ապարներում պարունակվող ջրի քանակը և դրա գազային վիճակը, ավելի լայն իմաստով տարրեր ձևի ջրերի տարածումը և շարժումը որոշվում են երկրակեղենի ուղղաձիգ կտրվածքի ջերմադինամիկական պայմաններով, երկրաբնական հիմնական տարրերի կառուցվածքով և գարգացման պատմությամբ, ապարների կազմով ու հատկություններով և կտրվածքի վերին մասի, մասնավորապես, ժամանակակից մակերևույթի ռելիեֆով ու հիդրոգրաֆով, ինչպես նաև կոնկրետ տարածքի վլխմայական պայմաններով:

Պրոֆեսոր Ա. Մ. Օվչիննիկովը գտնում է, որ ատորերկրյա ջրոլորտի ստորին սահմանը պայմանականորեն կարելի է տանել 12-14 կմ խորությունների վրա, այսինքն՝ ջրի կրիտիկական ջերմաստիճանի ($374-450^{\circ}\text{C}$) հասնելու խորությունները, որտեղ նրա հեղուկ վիճակում կուտակվելլ հնարավոր չեն (նկ. 5): Հետազոտողների մյուս մասը (Ֆ. Ա. Սակարենկո, Վ. Ի. Լյալկո, Վ. Ի. Կոնոնով և այլք) ենթադրում են, որ ստորերկրյա ջրապատյանի ներքին սահմանը տարածվում է 70-100 կմ խորությունները: Ընդ որում դրա ներքին սահմանը տարրեր երկրատեկտոնական մարգերում փոփոխվում է:



Նկ. 5. 1- տարեկան ջերմաստիճանի տատանման շերտ (20 մ), 2-դարավոր ջերմաստիճանի տատանման շերտը (1000 մ), 3-ջրի կրիտիկական ջերմաստիճանի (400°C) խորությունը (12 կմ)

Ստորերկրյա ջրոլորտի սահմաններում ջրի վիճակը, դրա կառուցվածքը և հատկությունները փոփոխվում են երկրակեղևի ճնշման և ջերմաստիճանի փոփոխմանը համընթաց:

Ջրի մի վիճակից մյուսին անցման և դրա կառուցվածքին բնորոշ փոփոխությունների հիմքի վրա (Վ. Ի. Կոնոնով, Վ. Ա. Իլին, Վ. Ի. Լյալկո, Ա. Մ. Օվչիննիկով) ջրապատշանի կտրվածքում առանձնացնում են հետևյալ ջրաֆիզիկական գոնաները. 1) աէրացիայի, 2) երկրակեղևի սաղոցության, 3) ջրահազեցման, 4) գերխտացած ջրային ֆլյուիդների, 5) սիլիկատային և ալյումոսիլիկատային ջրային լուծույթների հեղուկ պլաստիկային, 6) ջրի մոլեկուլների դիսոցացման (տարրաբաժանման) [19]:

Հետազոտողների մի մասը (Օ. Սեհնոցեր, Ե. Վ. Պինսեկեր, Ֆ. Պ. Սավարենսկի, Ա. Մ. Սվեշնիկով և այլք) ջրաֆիզիկական վերջին երեք գոնաները (4-6) դիտարկում են որպես մեկ գոնա հետևյալ անվանումով՝ վերկրիտիկական վիճակի ստորերկրյա ջրերի գոնա:

Նշված ջրաֆիզիկական գոնաներից առավել ուսումնասիրված են համարվում առաջին երեքը, որոնց մասին տեղեկությունները կրերվեն

ստորև: Անհրաժեշտության դեպքում մյուս գոնաների վերաբերյալ տեղեկություններ կարելի է ստանալ գրական աղբյուրներից [13,4]:

Աէրացիայի (օդահազեցնան) զոնան լընդգրկում է երկրակեղուի վերին շերտը՝ հողի մակերևույթից մինչև ստորերկրյա առաջին ջրատար հորիզոնի ջրերի մակերևույթը (մակարդակը): Աէրացիայի զոնայի ապարների ծակոտիմները սովորաբար լցված են օրով և ջրային գոլորշիներով, ինչպես նաև ֆիզիկապես կապակցված և մազանոթային ջրերով: Գարնանը՝ ձնիալի շրջանում կամ ինտենսիվ անձրևային տեղումների ժամանակ, աէրացիայի զոնայի ապարներում պարբերաբար առաջանում են ազատ (գրավիտացիոն) ջրեր (տես գլ. II):

Աէրացիայի զոնա հասկացությունն առաջին անգամ գործածության մեջ է մտցվել 1933 թ. ամերիկացի ջրաերկրաբան Օ. Մեհնցերի կողմից:

Աէրացիայի զոնայի հաստությունը (հզորությունը) կախված է տարածքի ապարների լիքոլոգիական առանձնահատկություններից (անջրաբափանց շերտի տեղադրման խորությունից), ռելիէֆից, երկրի մակերևույթի կտրտվածության աստիճանից և կլիմայական պայմաններից (մթնոլորտային տեղումների քանակ, ինչֆիլտրացիայի մեծություն): Հաստությունը տատանվում է մեծ սահմաններում՝ մետրի մասերից մինչև 100 մ և ավել, իսկ համաձայն Օ. Մեհնցերի՝ այն լեռնային շրջաններում կարող է հասնել 200-250 մ և ավելի խորությունների վրա [4]:

Ընդարձակ տարածների վրա կարող է աէրացիայի զոնան բացակայել, այդպիսի տեղամասներում ստորերկրյա ջրերը հասնում են երկրի մակերևույթ՝ առաջացնելով ճահիճներ և ճահճակալումներ:

Աէրացիայի զոնայի միջոցով է կատարվում ստորերկրյա ջրերի և մթնոլորտի միջև սերտ կապը. անձրևային և հալոցքային ջրերը ներծծվում են խորը շերտերը և համալրում գրունտային ջրերի ռեսուրսները: Չորային շրջաններում աէրացիայի զոնայով է կատարվում ստորերկրյա ջրերի գոլորշիացումը, երբ դրանք տեղադրված են երկրի մակերևույթից ոչ խորը (փոքր 3 մ-ից) հորիզոնների վրա:

Երկրի մակերևույթից ջրերի ներծծման ինտենսիվությունը և ստորերկրյա ջրերից գոլորշիացումը որոշակիորեն կախված են աէրացիայի զոնայի կառուցվածքից, դրանում տեղակայված ապարների լիքոլոգիական առանձնահատկություններից և տեղանքի ֆիզիկականաշխարհագրական պայմաններից: Օրինակ, եթե աէրացիայի զոնան ներկայաց-

ված է ավազային ապարներով, ապա գարնանային հալոցքային կամ անձրևային ջրերի մեծ մասն աէրացիայի զռնայի միջոցով հասնում են գրունտային ջրերի մակերևույթին: Իսկ եթե աէրացիայի զռնան ներկայացված է ավազակավային ապարներով, ապա հալոցքային և անձրևային ջրերը հիմնականում կկազմեն մակերևութային հոսք և միայն դրանց մի փոքր մասը կմերծվի խորը և կհամալի ստորերկրյա ջրերը:

Ստորերկրյա ջրերի սննան և դրանցից գոլորշիացման ծախսի գործում անհամենատ մեծ է աէրացիայի զռնայի նշանակությունը: Աէրացիայի զռնայում ընթացող գործընթացների առանց խորը ուսումնասիրությունների անհնար է լուծել տեսական և պրակտիկ ջրաերկրաբանական խնդիրներ, կատարել որակյալ հետազոտություններ ոչ խորը տեղադրված ստորերկրյա ջրերի, հատկապես՝ գրունտային ջրերի (տես գլ. IX):

Երկրակեղեկի սաղցութային զռնան (կրիոլիպոզունա) տարբերակվում է ստորերկրյա ջրերի հիմնականում պինդ վիճակով տարածմամբ: Այն ընդգրկում է Եվրասիայի և Ամերիկայի հյուսիսային ընդարձակ շրջանները, Անտարկտիդան, ինչպես նաև լեռնածալքավոր կառուցվածքների բարձրավեռ տարածքները:

Կախված երկրակեղեկի ջրաերկրաբանական կառուցվածքից՝ սաղցութային զռնան սովորաբար ներառում է աէրացիոն զռնայի մի մասը և ջրահագեցած զռնայի վերին մասը: Կրիոլիստոզունայի հաստությունը կախված տեղանքի կլիմայական պայմաններից (գլխավորապես օդի միջին տարեկան ջերմաստիճանից), երկրաբանական կառուցվածքից և երկրակեղեկի կառուցվածքից վերին մասի երկրաշերմային պայմաններից, տատանվում է առաջին մետրից մինչև 1000-1500 մ և ավելի: Այս զռնայում գերիշխում է բացասական ջերմաստիճանը, որի մեծությունը տատանվում է $0\text{--}1\text{Ծ}$ մինչև -15°C : Բացասական ջերմաստիճանը հանդիսանում է անցյալ էպոխաների խիստ կլիմայական պայմանների մնացորդը: Սաղցութային զռնայում ստորերկրյա ջրերը բացի պինդ ֆազայում լինելուց, հանդիպում են նաև հեղուկ վիճակով, հաճախ դրանց հանքայնացումը բարձր է և հանդես են գալիս բացասական ջերմաստիճանով և նույնիսկ աննշան քանակի ջրային գոլորշիներով: Այս զռնայի ստորերկրյա ջրերի մասին առավել մանրակրկիտ կտրվի գլ. 15-ում:

Զրահագեցման զունայի ջրերը տարածված են ամենուրեք և ընդգրկում են մայրցամաքային լիթոսֆերայի համարյա ամբողջ մակերեսը (80%): Բացառություն են կազմում միայն նավթային և զազային հանքավայրերի մակերեսները: Դրա առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ապարների բոլոր ծակոտիները և դատարկությունները ամբողջությամբ լցված (հազեցած) են ազատ և կապակցված ջրերով: Այս վերսից սահմանափակված է աերացիայի զոնայով կամ սառցույթի զոնայով: Չոնայի ներքին սահմանը (ջրի կրիտիկական ջերմաստիճանի $374\text{-}450^{\circ}\text{C}$ տեղադրման խորությունը) կախված է երկրակեղելի տեկտոնական կառուցվածքից: Ժամանակակից հրաբխականության գործունեության մարզերում այն տարածվում է 8-10 կմ խորությունները, իսկ մինչքենմբրյան ծալքավորման մարզերում հասնում է 30-35 կմ և ավելի խորությունները:

Հազեցման զոնայի սահմաններում, սկսած 1.5 կմ խորությունից, ֆիզիկային կապակցված ջրերն անցնում են շարժունակ վիճակի: Այս զոնայի ներքին մասերում, որտեղ ջերմաստիճանը գերազանցում է $200\text{-}300^{\circ}\text{C}$ -ը, կապակցված վիճակում մնում են միայն միներալների բյուրեղային ցանցում եղած ջրերը [19]:

Զրահագեցման զոնայի ստորերկրյա ջրերի մասին առավել մանրամասն կտրվի հետագա գլխներում:

4.1.1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԶՐԱՏԱՐ ԵՎ ԶՐԱՄԵՐԺ ԱՊԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զրահագեցման զոնան, ըստ լիթոլոգիական առանձնահատկությունների և երկրաբանական հասակի, ներկայացված է տարբեր տիպի ապարներով: Ստորերկրյա ջրերի կուտակման, դրանց ապարների հաստվածքով ներծծման, ինչպես նաև ջրհորերի և հորատանցքերի միջոցով ջրերի շահագործման ժամանակ ապարների ջուր տալու տեսանկյունից եմելով՝ առանձնացնում են ջրատար (գրավիտացիոն ջրեր պարունակող) և ջրամերժ (անջրաթափանց) ապարներ:

Զրադրար համարվում են այն ապարները, որոնք պարունակում են ազատ ջրեր կամ ի վիճակի են իրենց հաստվածքով ծանրության ուժի ազդեցության տակ ջուր բաց բողնելու և տալու: Այդպիսի ապարների շարքին են դասվում գլաքարերը, կոպճաքարերը (գրավելիտները), թույլ

ցեմենտացված կրնակումներատները (քարախսառնորդները) և ավազաքարները, ավազները, ալերոլիտները, կրաքարերը, ճեղքավորված մազմայկան և փոխակերպային (մետամորֆային) ապարները:

Զրամներժ (անջրաբափանց) են համարվում այն ապարները, որոնք անչափ քույլ են բաց բողնում (ֆիլտրացնում) կամ ամրողովին ի վիճակի չեն բնական պայմաններում իրենցով ջուր բաց բողնելու և տալու: Այդպիսի ապարների շարքին են դասվում կավերը, ծանր ավազակավերը, խիտ տուֆերը, կավային թերթաքարերը, արգելիտները, քարաղերը, գիպսերը, մերգելները, ինչպես նաև բոլոր հոծ (խիտ) և չճեղքավորված մազմայական և փոխակերպային ապարները:


4.2. ՋՐԱԵՐԿՐԱՔԲԱՆԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Երկրաբանական ուրդաձիգ կտրվածքում ապարների հերթափոխումը, տարրերակվելն ըստ լիքոլոգիական առանձնահատկությունների հնարավորություն է տալիս կտրվածքում տարանջատելու ջրատար և ջրամերժ հաստվածքներ (շերտեր):

Կտրվածքում փուխը և քույլ ցեմենտացված նստվածքային և փոխակերպային ապարների մասնատման ժամանակ, որոնք հանդիսանում են ստորերկյա ջրերի շերտա-ծակոտենային կամ ճեղքա-ծակոտենային կուտակիչներ, հարկավոր է օգտվել առավել լայն տարածում ստացած ջրաերկրաբանական ստորաբաժանումներից (փոքրերից դեպի մեծերը): Այդպիսին է հետևյալ ջրաերկրաբանական ստորաբաժանում՝ ջրատար հորիզոն, ջրատար համալիր, ջրաերկրաբանական հարկ [19]:

Զրապար հորիզոննի տակ ընդունված է հասկանալ ըստ մակերեսի և կտրվածքի համեմատաբար կայուն ազատ գրավիտացիոն ջրով հագեցված կամ տարրեր հասակի ապարների հաստվածք, որը ջրաերկրաբանական տեսակետից ներկայացնում է մեկ ամբողջություն:


Ըստ դրանց տեղադրման պայմանների և ռեժիմի առանձնացնում են գրունտային, միջշերտային ոչ ճնշումային և արտեզյան (կամ ճնշումային) ջրատար հորիզոններ (նկ. 6):



Նկ. 6 Ջրատար հորիզոնների տեղադրման սխեմաներ

1- ավազային ջրադար շերտեր, առանձնացված՝ ըստ դրանց գեղադրման պայմանների և ռեժիմի (ա- գրունտային ջրեր, բ- միջշերտային ոչ ճնշումային, գ- արդեզյան), 2- ջրամերժ ավազներ, 3- գրունտային և միջշերտային ոչ ճնշումային ջրերի մակարդակը, 4- արդեզյան ջրադար հորիզոննի պիեզոմետրիկական մակարդակը, 5 արորերկրյա ջրերի շարժման ուղղությունը, 6- գրունտային ջրերի բերնարարագությունը աղբյուրների գելաքով

Ջրատար հորիզոննը կարող է ներկայացված լինել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի ջրապարունակ ապարների շերտերով, որոնք կարող են ըստ երկրաբանական հասակի, լիբոլոգիական առանձնահատկությունների և ֆիլտրացիոն հատկությունների տարբերվել կամ նույնը լինել: Եթե այն ներկայացված է միայն մեկ շերտով, կոչվում է միաշերտ կամ երկու շերտով՝ երկշերտ կամ մի քանի շերտով՝ բազմաշերտ (նկ.7):



Նկ. 7 Ջրալիք հորիզոնների կառուցվածքի սխեմաներ


ա- միաշերտ, բ- երկշերտ, գ- բազմաշերտ, 1- ջրամերժ ապարներ, 2- ջրալիք ավազաններ, 3- կավավագներ, 4- ավազա-կոպածային նարվածքներ, Գ.ԶՄ- գրումընդունային ջրերի մակարդակը, Ծ.ԶՊՄ- ձնշումային ջրերի պիեզոմետրիկ մակարդակը, k_1, k_2, k_3, k_4 - ապարների ֆիլտրացիայի գործակիցներ

Յուրաքանչյուր ջրատար հորիզոնն ջրադինամիկական տեսանկյունից ներկայացնում է մեկ ամբողջություն և ունի ազատ կամ պիեզոմետրիկական մակարդակ: Այն իրենից վերև կամ ներքև գտնվող ջրատար հորիզոններից անջատվում է ջրամերժ շերտով: Սակայն դա չի բացառում ջրատար հորիզոնների (ըստ ուղղաձիգ կտրվածքի) առանձին տեղամասերի միջև իդեռավիկի կապի հնարավորությունը, ինչպես օրինակ, ջրամերժ շերտերի սեպավորման տեղամասերում կամ ջրաերկրաբանական «պատուհան»-ի (խախտումներ, տեկտոնական բուլացած գոնաներ և այլն) առկայությունը:

Ջրալիք համալիրն իրենից ներկայացնում է ուղղաձիգ կտրվածքում հաստատուն և ոեզիոնալ տարածում ունեցող ջրահագեցած հաստվածք՝ ներկայացված նույն կամ տարրերահասակ և տարրեր կազմի ապարներով, վերևից և ներքևից սահմանափակված ոեզիոնալ ջրամերժ (կամ համեմատական ջրամերժ) ապարներով, կից ջրատար համալիրների հետ իդեռավիկական կապի համարյա բացակայությամբ և ապահովում է տվյալ ջրատար համալիրի ջրերի ջրադինամիկական և ջրաերկրաբիմիական ոեֆիմներին հատուկ որոշակի առանձնահատկությունները (նկ. 8):

Յուրաքանչյուր ջրատար համալիր բնութագրվում է սննան, ճնշման ձևավորման և բեռնաբափման մարզերի որոշակի տեղադիրքերով: Դա

իր մեջ ներառում է մի քանի ջրատար հորիզոններ: Ջրատար համայիշում, ի տարբերություն ջրատար հորիզոնի, ստորերկրյա ջրերի ճնշումը ուղղաձիգ կտրվածքում կարող է փոփոխվել, պայմանավորված համալրիր կազմող առանձին ջրատար հորիզոնների հիդրավլիկական կապի տարբեր աստիճանով:



Նկ. 8 Ջրատար համալիրի կառուցվածքի սխեմա

1- Ջրաբախանց ավագներ (ավագներ), 2- ջրամերժ ավագներ, 3-5 պիեզոնիդրիկական մակարդակները համապատասխանաբար I, II և III ջրաբախ հորիզոնների, 6- ստորերկրյա ջրերի շարժման ուղղությունը, 7- ջրաբախ համալիրի սննման մարզը, 8- վարդնարար աղբյուր

Ջրաերկրաբանական հարկի տակ հասկանում են ջրատար համալիրների համակցություն, որը ներքնից կամ վերևից և ներքևից սահմանափակվում է համատարած տարածում ունեցող ջրամերժ ավագների հզոր շերտով և իր մեջ ներառում է ջրաճնշումային համակարգեր: Ջրաերկրաբանական հարկերը իրարից տարբերվում են իրենց ջրակալման աստիճանով, ստորերկրյա ջրերի ճնապրման գործընթացների առանձնահատկություններով, ինչպես նաև ոչ միանման ջրաերկրաբանական կտրվածքի գծերով:

Եթե երկրաբանական կտրվածքը ներկայացված է ուժեղ ցեմենտացված նստվածքային, փոխակերպային և մազմայական ապարներով՝ իրենցից ներկայացնելով ստորերկրյա ջրերի ճնշաբային և կարստային կուտակիչներ, հաճախ հնարավոր չի լինում ջրատար հորիզոնների, համալիրների և հարկերի անջատումը: Այսպիսի ապարներն աչքի են ընկնում անհավասար ճնշաբայիշամբ թե կտրվածքում և թե ըստ

տարածման: Դրանցում սովորաբար անջատում են ջրատար գոնաներ: Ջրատար գոնաների տարբերակիշ առանձնահատկությունը կայանում է դրանց լոկալ (մասնակի) տարածման մեջ և իրար միջև հիդրավլիկական կապի բացակայությունը նույնիսկ նույն տեկտոնական կառուցվածքի սահմաններում:

Ջրատար հորիզոնները, ջրատար համալիմերը և ջրաերկրաբանական հարկերը ինչպես կտրվածքում, այնպես էլ հատակագծում ունեն տարբեր չափսեր: Դրանք, մեկը մյուսից տարբերվում են ջրամերժ հաստվածքների հաստությամբ մակերեսում՝ տարածման կայունությամբ և ապարների բափանցելիության աստիճանով:

Ուղիղունակ մասշտարով ամենաքիչ կայունություն ունեն ջրատար հորիզոնները: Նոյն ջրատար համալիրի տարբեր տեղամասերում կարելի է անջատել տարբեր քանակի ջրատար հորիզոններ: Ջրատար համալիրները, առավել ևս ջրաերկրաբանական հարկերը ջրաճնշումային համակարգի սահմաններում հանդիսանում են առավել կայուն ջրաերկրաբանական միավորներ (տարբեր):

4.3. ԱՏՈՐԵՐԿՐՅԱՎ ԶՐԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորերկրյա ջրերի ծագման վերաբերյալ, սկսած դեռևս վաղ անցյալից, գոյություն ունեն տարբեր վարկածներ: Ըստ ժամանակակից պատկերացումների՝ առավել ընդունելի են համարվում հետևյալ չորս տեսությունները, որոնք պատմագիտականորեն ճևավորվել և հիմնավորվել են ջրաերկրաբանությունում: Այդ տեսություններն են՝ 1) ինֆիլտրացիոն, 2) կոնդենսացիոն, 3) սեղմանատագիոն և 4) մագմածին:

Ինֆիլտրացիոն (անբծծման) տեսություն: Այս տեսության առաջին շարադրումը կատարվել է դեռևս մ.թ.ա. Իդարում հռոմեացի գիտնական Մարկ Վիտրուվի Պոլի կողմից: XVII դարի սկզբին ֆրանսիացի ֆիզիկոս Է.Մարիոտը հիմնավորեց ինֆիլտրացիոն տեսությունը, համաձայն որի՝ մթնոլորտային տեղումները, ներքափանցելով ապարների ճեղքերով ու ծակոտիներով, երկրի ընդերքում առաջացնում են ստորերկրյա ջրերի կուտակումներ:

Տեսությունն ունեցավ նաև իր հակառակորդները: Սակայն հետագայում կատարված գիտափորձնական հիմնավոր ուսումնասիրություն-

Աերը վերջ դրին ստորերկրյա ջրերի ծագման վերաբերյալ կասկածներին:

Ինֆիլտրացիա (Աերծծում) ասելով հասկանում են մքնողրտային և մակերևութային ջրերի թափանցելը աէրացիայի զոնան կազմող գետնահողերի և ապարների մեջ՝ ճեղքերի, ծակոտիների և այլ դատարկությունների միջոցով:

Անհրաժեշտ է տարբերել՝ ա) սուբարեալային (վերերկրյա, մայրացմաքային) ինֆիլտրացիա՝ մքնողրտային տեղումների ներծծում ապարների մեջ և բ) սուբավալային (ստորջրյա) ինֆիլտրացիա՝ գետային, լճային և ծովային ջրերի ներծծում և ներհոս արմատական ապարներ, որոնք մերկանում են ջրավազանի ջրերի մակարդակից ցածր հիշերի վրա: Այստեղ կարևոր դեր է խաղում վերերկրյա ինֆիլտրացիան: Մքնողրտային տեղումների ինֆիլտրացիան ծակոտկեն տարածքի միջով հնարավոր է միայն այն դեպքում, եթե ապարները գտնվում են խոնավ վիճակում, որը գերազանցում է առավելագույն նորեկույթար խոնավատարությանը:

Եթե մքնողրտային ջրերի ներքափանցումը տեղի է ունենում խիստ ճեղքավորված և կարառավորված ապարների միջով, ապա այն կոչվում է *ինֆլյուսցիա* (շիրահոսք):

Մքնողրտային ջրերի ինֆիլտրացիայի ինտենսիվությունը մեծ մասմբ պայմանավորված է տեղանքի ֆիզիկաաշխարհագրական (մքնողրտային տեղումների քանակն ու ինտենսիվությունը, օդի ջերմաստիճանը, հարաբերական խոնավությունը, բուսածածկի առկայությունը և այլն), երկրաբանական (ապարների կազմը, դասավորվածությունը, ծակոտկենությունը, ճեղքավորվածությունը) և երկրածնաբանական (ռելիեֆի բնույթը, թեքությունը, կտրտվածությունը) պայմաններով:

Կոնդենսացիոն (խրացման) լրտություն: Դեռևս մ.թ.ա. IV դարում հոյւն փիլիսոփա Արիստոտելը միտք է հայտնել, որ ընդերքի ջրերը գերազանցապես առաջանում են ի հաշիվ մքնողրտային օդի գոլորշիների, լեռնալանջերին հավող լանջերի, որոնք ներքափանցում են երկրակեղևի ապարների սառը դատարկությունները: Այսպիսով նա հանդիսացավ կոնդենսացիոն տեսության նախահայրը:

Այս տեսակետը 1877 թ. վերստին առաջ է քաշել գերմանացի ինժեներ O. Ֆոլգերը: Ըստ նրա՝ տաք օդի հետ ջրային գոլորշիները ներքափանցում են երկրակեղևի վերին առավել սառը ապարների մեջ, խտա-

նում ու վերածվում են ջրային կաթիլների, որոնք, ժամանակի ընթացքում կուտակվելով, առաջացնում են ստորերկրյա ջրերը:

Ֆոլգերի տեսակետն ուներ շատ բույլ կորմեր, մասնավորապես, կուտակման ժամանակ, ինչպես հայտնի է, անջատվում է ջերմություն, որն արդեն համեմատաբար կարծ ժամկետում պետք է բարձրացներ աէրացիայի զոնայի ապարների ջերմությունը այնքան, որ հետագա խտացումը դարձներ անհնար: Հաշվարկված է, որ հողում ընդամենը 2մմ-անոց ջրաշերտ գոյանալու համար 1 մ² մակերեսից տար կեսօրին (ժամը 12-ին) պետք է ներթափանցի 1000 մ³ օդ, իսկ երկրորդ կեսօրին վերադառնար մքնողորտ, որը միանգամայն անհնար է: Հետագայում ուս գիտնական Ա. Ֆ. Լեբեդել (1907-1919 թթ.) բազմամյա փորձարարական աշխատանքների տվյալներով հիմնավորեց խտացման եղանակով ջրագոյացման տեսությունը և ապացուցեց, որ ջրային գոլորշու տեղաշարժի գործում բոլորովին էլ անհրաժեշտ չէ օդի ներթափանցումը ապարների մեջ այն էլ այրախի քանակությամբ: Գոլորշու շարժումը դեպի աէրացիայի զոնայի ապարները և հակառակը կատարվում է մքնողորտում և ապարների ծակոտիներում եղած ջրային գոլորշիների առաձգականության տարրերության շնորհիվ: Այսինքն՝ այն միջավայրը, որտեղ ջրային գոլորշու առաձգականությունը բարձր է, գոլորշին տեղափոխում է ցածր առաձգականության միջավայր՝ մինչև հավասարակշռված պայմանների ստեղծում (ըստ որում գոլորշու առաձգականությունը պայմանավորված է ջերմաստիճանով):

Փորձով ցույց է տրվել, որ ապարների ծակոտիներ ներթափանցած օդային գոլորշիները նախ վերածվում են ապարի մասնիկների հետ սերտորեն կապված հիգրոսկոպիկ և թաղանթային ջրատեսակների, ապա աստիճանաբար կուտակվելով՝ վերածվում են ազատ՝ գրավիտացիոն կաթիլների: Այդ գործընթացը տեղի է ունենում ոչ միայն մքնողորտի և աէրացիայի զոնայի ապարներում գտնվող օդի գոլորշիների միջև, այլ նաև բուն աէրացիայի զոնայի տարրեր խորություններում գտնվող շերտերի գոլորշիների միջև:

Այսպիսով, խտացման եղանակով ստորերկրյա ջրերի առաջցումն ակներն է: Դրանում կարելի է համոզվել՝ դիտելով գետային ավազանների ջրածանային մասերում, բարձր լեռնային և անապատային շրջաններում, նոյնիսկ մքնողորտային տեղումների երկարատև բացակայության դեպքում գործող աղբյուրների կամ տերիկոններից (ածխա-

հանքերի շահագործումից առաջացած «պարապ» ապարների արհեստական բլուրները սկիզբ առնող փոքր, բույլ ջրհոսքերը [38]:

Ինֆիլտրացիոն (ներծծման) և կոնդենսացիոն (խտացման) ճանապարհով ստորերկրյա ջրերի առաջացման գործընթացները հաճախ հանդես են գալիս համատեղ, սովորաբար առաջնի գերիշխամամբ, լրացնում են միմյանց և, ըստ էռիջյան, երկուսն էլ բացատրում են ստորերկրյա ջրերի մեջնորդային ծագումը:

Սեղիմենալուացիոն (նայվածքակուրակման) լրեսուրյուն: Այս տեսալուացիոնը, ինչպես նաև նախորդ երկու տեսալուացիոնները, ծնունդ են առել իին ժամանակներում, երբ փորձում էին կապ գտնել օվկիանոսային, մբնողորտային և ստորերկրյա ջրերի միջև: Փիլիսոփայական միլերյան դպրոցի ներկայացուցիչ Թաթևը ն.թ.ա. VI դարում առաջին անգամ կարծիք է հայտնել, որ ստորերկրյա ջրերը համաշխարհային օվկիանոսի ծնունդ են: Ավելի ուշ Լեռնարդո դա Վինչին գտնում է, որ ծովի ջրերը ներծծվում են ցանաքի զանգվածի մեջ, ապարների ճեղքածքներով բարձրանում են լեռնագագաթներ և արտավիժելով, նորից հոսում դեպի ծով [38]:

Հաստ ժամանակակից մեկնարանաման՝ սեղիմենալուացիոն եղանակով ստորերկրյա ջրերի առաջացումն ընթանում է հետևյալ կերպ. սեղիմենալուացիայի ժամանակ օվկիանոսի հատակում կուտակվող օրգանական և անօրգանական ծագման նստվածքների մեջ որոշակի քանակությանք ջուր է մնում (սկզբնական տիղմի մոտ 80%-ը), այնուհետև, նստվածքների հզորության մեծացմանը զուգընթաց տիղմը ենթարկվում է սեղման և նրա մեջ ներփակված ջրի մի մասն անջատվում և տեղակայվում է առավել ջրատար ապարների մեջ՝ ձևավորելով ստորերկրյա ջրեր: Այս գործընթացը շատ դանդաղ է ընթանում (երկրաբանական գործընթաց է) և նույնիսկ միլիոնավոր տարիներ առաջ գոյացած և հազարավոր մետր խորություններում տեղադրված նստվածքները պարունակում են մինչև 5% ջուր:

Սեղիմենալուացիոն ջրերի առանձնահատկությունն այն է, որ դրանց էվոլյուցիան սերտորեն կապված է նստվածքների վերափոխման հետ: Այսպես, տիղմի՝ կավի վերածվելու հետ զուգընթաց փոխվում է ապարի միներալային կազմը, միաժամանակ փոխվում է նաև անջատված ջրի քիմիական կազմը և ջուր-ապար փոխկապակցվածությունը: Հետազոտում ջերմային ու ճնշումային այլ պայմաններում ապարները նոր փո-

փոխություններ են կրում: Այսպես, կավը մեծ խորություններում վերածվելով թերքաքարի, անջատում է 10-15% ջուր կամ գիպսը ($\text{CaSO}_4 \times 2\text{H}_2\text{O}$) 80-90°C ջերմության տակ վերածվում է անհիդրիտի և ջրագրկումից անջատվում է 20% ջուր:

Ծովի նահանջից կամ տեղանքը ցամաքի վերածվելուց հետո ապարներում սեղմենտացիոն ստորերկրյա ջրերը, որ երբեմն կոչվում են նաև բաղված կամ մնացորդային ջրեր, կարող են մնալ հաստվածքներում մինչև այնքան ժամանակ, քանի դեռ չեն տեղակայվել-փոխարինվել ինֆիլտրացիոն ծագման ջրերով:

Մեղմենտացիոն ջրերն իրենց գոյության սկզբնական շրջանում ունեն նույն կազմը ինչպիսին է ջրավազանինը, այսինքն՝ որից դրանք առաջացել են: Չատ հաճախ դրանք նորմալ ծովային ջրեր են: Սակայն, արդեն հատակային տիղմում գնում են գործընթացներ, որոնք փոխում են ջրերի կազմը, և այդ գործընթացները շարունակվում են նաև այնտեղ, որտեղ տեղակայվում են սեղմենտացիոն ջրերը:

Ի հակադրություն ինֆիլտրացիոն ծագում ունեցող մշտապես վերականգնվող ջրերի՝ սեղմենտացիոն ծագման ջրերն ունեն միայն ստատիկ (բնական) պաշարներ, որոնք երկրաբանական ժամանակներում միախառնվում կամ տեղակալվում-փոխարինվում են ներծծման քաղցրահամ ջրերով:

Սագմածին կամ յուվենիլ (կուսական) դրսություն: XVI դարում գերմանացի գիտնական Ագրիկուլտա միտք հայտնեց, որ երկրակեղևում կարող են խտանալ ջրային գոլորշիները, որոնք հավանաբար բարձրանում են ընդերքի մեծ խորություններից: Այդ ենթադրությունն իր ժամանակին պաշտպանություն և զարգացում շատացավ:

1902 թ. ավստրացի երկրաբան Է. Զյուը հանդես եկավ ստորերկրյա ջրերի ծագման յուվենիլ (մագմածին) տեսությամբ: Ըստ նրա՝ հանքային և թերմալ ջրերի ծագումը տեղի է ունենում ի հաշիվ հրահեղուկ մագմայից անջատվող գոլորշիների, որոնք խտանալով ավելի սառը երկրակեղևի պատյաններում, տեկտոնական ճեղքերով ու խզվածքներով վեր են բարձրանում և երկրի մակերևույթին հանդես գալիս հանքային աղբյուրների և հեյզերների ձևով (տես գլ. XV): Ահա այս ճանապարհով առաջացած ստորերկրյա ջրերը, որոնք ծագման բնույթով կուսական են (առաջին անգամ են նույտը գործում երկրակեղև), անվանվեցին յուվենիլ կամ մագմածին ջրեր:


Հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին (Ն. Ն. Ալյավյանվ, Ա. Ս. Օվշիննիկով, Օ. Կ. Լանգե և ուրիշներ), որ հանքային և թերմալ ջրերն իրենց կազմով ավելի նման են երկրակեղևի վերին շերտերի ջրերին և հավանաբար ունեն մթնոլորտային կամ ծովային ծագում:

Ըստ Օ. Կ. Լանգեի՝ երկրակեղևի վերին շերտերի ապարներն ու միներալները, որոնք կարող են մինչև 50-60%-ի չափով կապակցված (քիմիապես և ֆիզիկապես) ու ազատ ջուր պարունակել, տեկտոգենեզի հետևանքով կարող են հայտնվել մեծ խորություններում: Այստեղ տիրող բարձր ճնշման և ջերմաստիճանի պայմաններում ապարները ենթարկվում են փոխակերպման, որի հետևանքով ջրային մասնիկները վերածվում են գոլորշու և վերադառնում են երկրակեղևի վերին շերտերը՝ ծնունդ տալով հանքային և թերմալ ջրերին:

Ներկայումս հետազոտողների ճնշող մեծամասնությունը չի բացառում ստորերկրյա ջրերի մագմածին ծագումը, սակայն այս ճանապարհով առաջացած ջրերի բաժինը ասորերկրյա ջրերի լնդիանուր հաշվեկշռում հավանաբար անշան է:

Երկրաբանական անցյալում, եթե հրաբխային գործունեությունը ծավալվել է գլորալ մասշտաբներով մագմածին ծագման ջրերը գերիշխել են: Ավելին, ինչպես նշվել է վերևում (տես գլ. II), համաձայն Ա. Պ. Վինագրադրովի՝ երկրակեղևի ձևավորման վարկածի՝ Երկիր մոլորակի ջուրը ի սկզբանե յուվենիլ ծագման է:

Ինֆիլտրացիոն, կոնդենսացիոն, սեղիմենտացիոն, յուվենիլային ջրերն ապարներում շարժման ժամանակ խառնվում են, այն էլ տարբեր հարաբերակցությամբ և առաջացնում խառը ծագման ջրեր: Ջրերի խառնվելը, որանց փոխագրեցությունը հողերի, ապարների, մթնոլորտի, ջրոլորտի հետ, ինչպես նաև մագմատիկական, կենսաբանական, ֆիզիկաքիմիական և այլ գործընթացները, որոնք երկրակեղևում ընթանում են մշտապես, պայմանավորում են ստորերկրյա ջրերի այս կամ այն տիպի ձևավորումը, իրենց յուրահատուկ քիմիական կազմով ու ֆիզիկական հատկություններով:



**Նկ. 9 Ստորերկյա ջրերի ծագումնաբանական դասակարգումը
(բատ Ա. Ա. Կարցևի, 1972)**

Առանձնակի ուշադրության է արժանի ստորերկյա ջրերի գենետիկական դասակարգումը (Ակ. 9), որը լայնորեն օգտագործվում է հնագրաերկրաբանությունում: Համաձայն դրա՝ բոլոր ստորերկյա ջրերը կարելի են բաժանել երկու խմբի՝ ա) *Էկզոգեն* (արլուածին), որոնք երկրի ընդերք են թափանցում վերևից և թ) *Էնդոգեն* (ներծծին), որոնք քարապատյան են թափանցում ներքևից՝ մագմայից և մանթիայից (Վերջիններիս քամինը տանյակ հազար անգամ փոքր է էկզոգենից): Էկզոգեն ջրերը ներառում են մեզ արդեն հայտնի ինֆիլտրացիոն, կոնդենսացիոն և սեղմենտացիոն ծագման ջրերը, իսկ էնդոգենները՝ մագմածին և մետամորֆային ջրերը:

ԳԼՈՒԽ V

ԱՊԱՐՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապարը իրենից ներկայացնում է բարդ համակարգ, կազմված է.

- կարծր միներալային մասնիկներից, որոնք կազմում են նրա կմախըր,
- միջմասնիկային դատարկություններից, որոնք ունեն տարրեր ձևեր, չափեր և ծագում (ծակոտիներ, ճեղքեր, դատարկություններ),
- ծակոտիններում, ճեղքերում և դատարկություններում գտնվող ջրային լուծույթներից, որոնք հանդիս են օալիս տարրեր ֆիզիկական վիճակներում (կապակցված, հեղուկ և կարծր) և փոխազդեցության մեջ են կարծր մասնիկների հետ,
- գագերից և գոլորշիններից, որոնք գրադեցնում են ծակոտինների, ճեղքերի և դատարկությունների ջրից ազատ մասերը:

Ապարների կարծր մասնիկների, ջրի և գագերի միջև եղած հարաբերակցությունը բնական և արհեստական գործոնների ազդեցության տակ կարող է փոփոխվել:

5.1. ԱՊԱՐՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապարների հիմնական ֆիզիկական հատկություններն են՝ հատիկաշափական կազմը, խտությունը և ծակոտինների ազդեցության տակ կարող է փոփոխվել:

5.1.1. ՀԱՏԿԱՉԱՓԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ապարների հատիկաշափական (մեխանիկական, հատիկային) կազմը ապարներում տարբեր չափերի մասնիկների (ֆրակցիաների) կշռային պարունակությունն է՝ արտահայտված տոկոսներով:

Փուխը և թույլ ցեմենտացված նստվածքային ջրատար ապարների կազմում, որոնց հետ կապված են ստորերկրյա ջրերը, նավթը և գազը, առկա են գլաքարային, կոպճային, ավազային, փոշային, կավային և կոլոխո-դիսպերս մասնիկներ:


Զրատար և ջրամերժ ապարները կազմող հատիկների և մասնիկների չափերի որոշումը տարբեր տիպի հետազոտությունների ժամանակ ունի մեծ նշանակություն, քանի որ հատիկաշափական կազմից են կախված ապարների շատ հատկություններ՝ քափանցելիություն, ծակոտկենություն, ջրատվություն, մազականություն և այլն:

Հատիկաշափական կազմի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս պարզելու ջրատար և նավագազատար ապարների ձևավորման երկրաբանական և հնաշխարհագրական պայմանները, այն օգտագործում են ջրաերկրաբանական հաշվարկների ժամանակ՝ կապված ստորերկրյա ջրերի շարժման հետ, օգտագործում են հետախուզական և շահագործական հորատանցքերի ֆիլտրերի ընտրման հետ կապված և այլն:

Բնության մեջ մեկ ֆրակցիայից կազմված ապարները հանդիպում են հազվադեպ: Սովորաբար դրանք իրենցից ներկայացնում են տարբեր չափերի մեխանիկական խառնուրդ: Կախված դրանից, թե ապարի կազմում որ ֆրակցիան է գերիշխող, ըստ այդ էլ ձևավորվում են դրա ֆիզիկական և ջրային հատկությունները:

Ապարների հատիկաշափական կազմի անալիզի տվյալները սովորաբար ներկայացվում են որոշակի ձևի աղյուսակների տեսքով: Սակայն աղյուսակներն ակներև պատկերացում չեն տալիս ապարների հատիկաշափական կազմի մասին: Զրաերկրաբանական պրակտիկայում ընդունված է հատիկաշափական կազմն արտահայտել տարբեր տիպի գրաֆիկների տեսքով, որոնցից առավել կիրառական է համարվում ինտեգրալային կորերի գրաֆիկը: Գրաֆիկները կազմվում են ուղղանկյան կոռորդինատային համակարգով, որի արացիսների առանցքի վրա տրվում է մասնիկների տրամագիծը մմ-ով՝ լոգարիթմական արտահայտությամբ, իսկ օրդինատների առանցքի վրա դրանց տոկոսային գումարային պարունակությունը (նկ. 10): Ըստ գրաֆիկի՝ որոշում են մասնիկների ընդհանուր տրամագծի 10% և 60% -ներին համապատասխանող մասնիկների տրամագծերը:

Հատիկաշափական կազմի ինտեգրալ կորերը հնարավորություն են տալիս մեկ գծագրի վրա տանել մի քանի կորեր և յուրաքանչյուր կորի համար որոշել էֆեկտիվ (այն պայմանական նշանակության իմաստ ունի) և, այսպես կոչված, «վերահսկիչ» տրամագծերը:



Նկ. 10 Ապարների մեխանիկական կազմի ինտեգրալ կորեր

1- կավ, 2- ավազակավ, 3- ավազ

Եֆեկտիվ կամ գործող տրամագիծը (d_{10}) որևէ ապարի համար հատիկաչափական կազմի ինտեգրալ կորի 10%-ին համապատասխանող մասնիկների չափերն են: «Վերահսկիչ» տրամագիծի տակ հասկանում են մասնիկների չափերը, որոնք համապատասխանում են օրդինատի 60%-ին: d_{60}/d_{10} հարաբերությունը կոչվում է անհամասեռության գործակից (K_H):

Եթե $K_H < 5$ -ից ավարը կոչվում է համասեռ, $K_H > 5$ -ի դեպքում՝ անհամասեռ:

Ապարի կազմի մասին պատկերացում է տայիս ոչ միայն անհամասեռության գործակիցը, այլ նաև հատիկաչափական կազմի կորի բնույթը: Համեմատաբար համասեռ ապարների համար բնորոշ է կտրուկ բարձրացող թեք կորը, իսկ անհամասեռի համար՝ թույլ թեքության կորը:

5.1.2. ԽՏՈՒԹՅՈՒՆ

Տարբերակում են ապարների խտություն և հարաբերական խտություն հասկացությունները. վերջինիս դեպքում ապարը կարող է լինել խոնավ կամ չոր վիճակում:

Ապարի խտությունը (γ) ապարի կարծր մասնիկների (կմախքի) զանգվածն է միավոր ծավալում: Այն թվապես հավասար է ապարի

կարծր մասնիկների զանգվածին (g_c) և դրա ծավալի (V_c) հարաբերությանը և արտահայտվում է գ/սմ³-ով: Տվյալ ապարի համար այն հաստատում մեծություն է:

Խտությունն օգտագործվում է շատ հաշվարկային բանաձևերում ծակոտկենության, հարաբերական խտության, խոնավության գործակցի և այլն որոշման համար: Ավագների խտության (գ/սմ³) միջին արժեքը կազմում է 2.66, կավավագներինը՝ 2.7, ավազակավերինը՝ 2.71, կավերինը՝ 2.74:

Խոնավ ապարի հարաբերական խտությունը (γ_b) միավոր ծավալում ապարի քաշն է, դրա բնական խոնավության և կառուցվածքի դեպքում, արտահայտվում է գ/սմ³ կամ տ/մ³: Որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\gamma_b = \frac{g}{V} \quad (39)$$

որտեղ՝

g -ն ապարի կշիռն է, դրա բնական պայմաններում,

V -ն ապարի ծավալն է:

Փոխր ապարների հարաբերական խտությունը բնական պայմաններում տատանվում է 1.3-ից մինչև 2.4գ/սմ³: Ժայռային ապարների հարաբերական խտության արժեքները մոտ են դրանց զանգվածի խտության արժեքներին, դրանցում ծակոտկենության և խոնավության փոքր լինելու հետևանքով:

Չոր ապարի հարաբերական խտությունը (γ_c) միավոր ծավալում բացարձակապես չոր ապարի քաշն է, այսինքն՝ միավոր ծավալում ապարի բնական քաշն է՝ հանած խոնավությունը.

$$\gamma_c = \frac{g - g_b}{V} = \frac{g_c}{V} \quad (40)$$

որտեղ՝

g_b -ն ջրի քաշն է, g_c -ն չոր ապարի քաշը:

Չոր ապարի հարաբերական խտությունը կախված է ապարի միներոլոգիական կազմից և ծակոտկենությունից: Որքան փոքր է ապարի ծակոտկենությունը և միներալում բարձր է ծանր մասնիկների պարու-

նակուրյունը, այնքան մեծ է նրա կմախքի հարաբերական խտությունը: Այն բոլոր դեպքերում փոքր է ապարի խոնավ վիճակի հարաբերական խտությունից և խտությունից:

Կավային ապարների չորացման ժամանակ տեղի է ունենում նստում (ծավալի փոքրացում), այսինքն՝ ծակոտիների փոփոխություն, դրա համար էլ չոր կավային ապարների հարաբերական խտությունը անմիջականորեն չեն որոշում, այլ հաշվարկվում է խոնավ ապարի հարաբերական խտության և դրա խոնավության միջոցով, ըստ հետևյալ բանաձևի.

$$\gamma_c = \frac{\gamma_b}{1 + 0.001w} \quad (41)$$


որտեղ՝

γ_b -ն խոնավ ապարի հարաբերական խտությունն է,

w -ն ապարի բնական խոնավությունը:

5.1.3. ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ

Ապարները, ըստ իրենց ծագման և երկրորդային գործընթացների (հողմնահարում, տեկտոնական շարժումներ, խտացում, ցեմենտացում և այլն), սովորաբար միատարր չեն, այլ իրենց մեջ պարունակում են տարրեր ձևի ու չափերի ծակոտիներ, ճեղքեր և դատարկություններ (նկ.11): Ծակոտիներն առավել բնորոշ են բեկորային և հատիկավոր կազմի ապարներին, ճեղքերը՝ ապառաժային ապարներին, դատարկությունները՝ ջրում հեշտ լուծվող ապարներին (քարաղ, գիպս, կրաքար և այլն):



Նկ. 11 Ապարների ծակոտկենուրյան բնույթը և ձևերը

1- բարձր ծակուրկենուրյունով լավ դնասակավորված նալպվածքներ, 2- քիչ ծակուրկենուրյունով վարդ գրանուլատորված, 3- նալպվածքներ, որոնց ծակուրկենուրյան քաշել են կապված ազար ծակուրիների մասնիկի ցեմենտացումով, 4- բարձր ծակուրկենուրյան նալպվածքներ, թերավոր մասնիկներով լցված, 5- նոյն սակայն խրացման դեպքում ծակուրկենուրի կրորով փոքրացումով, 6- բույլ ծակուրկեն նալպվածքներ հիմքային (բազալային) դրամի ցեմենտացված դրապուծման գործընթացների հետ, 8- ապարներ դադարկուրյուններով, կապված ձեղքերի առկայության հետ

Փոլիսր բեկորային և հատիկավոր ապարներում ծակոտկենուրյունն ապահովում են միջմասնիկային դատարկուրյունները, որոնց չափերը կախված են մասնիկների մեծությունից, ձևից և դասավորության բնույթից: Ընդհանուր առմամբ՝ ծակոտիները յուրահատուկ են բոլոր տիպի մագմայական, մետամորֆային և նստվածքային ապարների համար, միայն դրանցում ծակոտիներն ունեն տարրեր ծագում (տե՛ս նկ.11):

Ապարների ծակոտկենուրյունը, ճեղքավորվածուրյան, տեկտոնական խախտումների և դրանց լիթոլոգիական առանձնահատկուրյունների հետ միասին, բնորոշում են ապարների ջրաերկրաբանական հատկուրյունները՝ ըստ խորության և մակերեսի: Ապարների ծակոտկենուրյունն ըստ խորության փոքրանում է, այն պայմանավորված է խորության վրա ճնշման բարձրացումով և ապարների ցեմենտացմանք (նկ.11):

Կախված ապարներում ծակոտիների, ճեղքավորվածուրյան և դատարկության ձևերից և չափերից՝ տարրերակում են՝ 1) ոչ մազական ծակոտկենուրյուն, պայմանավորված է խոչոր (մեծ 1մմ -ից) ծակոտիներով, ճեղքերով (լայնուրյունը մեծ 0.25 մմ-ից) և կարստային դատար-

կուրյուններով, 2) մազական (կապիլյար) ծակոտկենություն (ծակոտիների տրամագիծը փոքր 1մմ-ից, ճեղքերի լայնությունը փոքր 0.25 մմ-ից):

Հասկանալի է, որ որքան մեծ են ծակոտիները, ճեղքերը և դատարկությունները, այնքան մեծ է ապարի ջրատարության հատկանիշը: Մասն ծակոտիներում և ճեղքերում ջրի շիման մակերեսը պատերի հետ մեծ է, որի հետևանքով ջրի շարժումը խիստ դանդաղում է:

Ըստ չափերի՝ մազական ծակոտիները և ճեղքերը բաժանում են երեք խմբի՝ 1) գերմազական (ծակոտիների տրամագիծը մեծ 0.5 մմ-ից, ճեղքերի լայնությունը՝ մեծ 0.254 մմ-ից), 2) մազական (ծակոտիները՝ 0.5-0.0002 մմ, ճեղքերը՝ 0.254-0.0001), 3) մերձմազական (ծակոտիները՝ փոքր 0.0002 մմ-ից, ճեղքերը՝ փոքր 0.0001 մմ-ից):

Ծակոտիների և ճեղքերի այդ անշատումը կարևոր են ստորերկրյա ջրերի շարժման պայմանները գնահատելու համար: Գերմազական ծակոտիների և ճեղքերի միջով տեղի է ունենում ջրի ազատ շարժում, մազականներով՝ մազանորային ուժերի նշանակալից մասնակցության դեպքում: Մերձմազական ծակոտիներով և ճեղքերով ապարները (կավեր, կավային թերթաքարեր և այլն) ջրային հեղուկների համար համարվում են գործնականում անջրաթափանցելի:

Ապարներում սովորաբար տարբերակում են երեք տիպի ծակոտկենություն՝ ընդհանուր (լրիվ, բացարձակ, ֆիզիկական), բաց (իրական) և դիմամիկ (ակտիվ, էֆեկտիվ): Հաճախ «ծակոտկեն» տերմինն օգտագործում են որպես ընդհանուր ծակոտկենության հոմանիշ [5, 19, 33]:

Ընդհանուր ծակոտկենությունը բնորթագրվում է ընդհանուր ծակոտկենության գործակցով, որը որոշվում է չոր վիճակում գտնվող ապարում եղած բռնը ծակոտիների, ճեղքերի և դատարկությունների ծավալի և դրա ընդհանուր ծավալի հարաբերությամբ և արտահայտվում է միավորի մասերով կամ տոկոսներով.

$$n = \frac{V_n}{V} \quad (42)$$

որտեղ՝

n -ը ընդհանուր ծակոտկենության գործակիցն է,

V_n -ը ծակոտիների ծավալն է,

V -ն ապարի ծավալը:

Ընդհանուր ծակոտկենության գործակիցը կավային ապարների համար, սովորաբար որոշվում է ըստ ապարի խտության, հետևյալ բանաձևով.

$$n = \frac{1 - \gamma_c}{\gamma} \quad (43)$$

որտեղ՝

γ_c -ն չոր ապարի հարաբերական խտությունն է, գ/սմ³,

γ -ն ապարի խտությունն է, գ/սմ³:

Ընդհանուր ծակոտկենության գործակիցը կախված է [25].

1) մասնիկների դասավորությունից (խիտ դասավորվածության դեպքում ծակոտկենությունը փոքրանում է, փուխրի դեպքում՝ նշանակալի մեծացում),

2) մասնիկների և հատիկների չափերից և համասեռությունից (անհամասեռ հատիկային ապարներում ծակոտկենությունը փոքրանում է, եթե միջիատիկային դատարկությունը լցվում է ավելի փոքր հատիկներով),

3) ապարների հատիկների և մասնիկների իրար մեջ ցեմենտացման աստիճանից (առավել քիչ ցեմենտացված ապարներն ունեն մեծ ծակոտկենություն),

4) ապարների ճեղքավորվածության բնույթից, այն ապարները որոնցում ծակոտիներին զուգահեռ հանդիպում են տարբեր չափերի և կողմնորոշվածության ճեղքեր:

Տարբեր տիպի ապարների ընդհանուր ծակոտկենության (ընդհանուր ծակոտկենության գործակցի) բնորոշ արժեքները բերվում են աղյուսակ 4-ում [4]:

Աղյուսակ 4

Ապարների ընդհանուր ծակոտկենության գործակիցները

Ապարների խմբերը	Ապարները	Միջին ծակոտկենությունը, %
Թարմ նստվածքներ	Կավատիղմ	50.0
	Տորֆ	80.0
	Տարբեր տիպի հողեր	55.0

Հողմնահարման կեղևի վերին մասի ապարներ	Ավագներ	35.0
	Լյոս, լյոսատիպ ավազակավեր	45.0
	Ավազակավեր	35.0
	Կավեր	35.0
Նստվածքային ապարներ	Փուխը ավագներ	25-35.0
	Խստացած ավագներ	10-20.0
	Կավեր	20-40.0
	Գիսս	1.0
	Կիր	30.0
	Օռոկա	35.0
Մետամորֆիկ ապարներ	Կավային բերբարեր	4.0
	Քվարցիտներ, գնեյսներ, մարմար	2.0
Մագմատիկ ապարներ	Պորֆիրիտներ	2.0
	Գրանիտներ, սիենիտներ	1.0
	Էֆուզիվ ապարներ	2.0
	Ինտրուզիվ ապարներ	1.0

Զրաերկրաբանությունում, բացի ընդհանուր ծակոտկենության գործակցից, լայնորեն օգտագործվում է նաև բերված ծակոտկենության գործակցը (e) (կամ բերված ծակոտկենություն), որը իրենից ներկայացնում է ծակոտիների ծավալի և ապարի կմախսի ծավալի հարաբերությունը և արտահայտվում է միավորի մասերով.

$$e = \frac{V_n}{V_c} \quad (44)$$

Ընդհանուր ծակոտկենության գործակցի (42) և բերված ծակոտկենության գործակցի (44) միջև կապը որոշվում է հետևյալ արտահայտություններով.

$$n = \frac{e}{1+e} \text{ և } \varepsilon = \frac{n}{n-1} \quad (45)$$

Ապարի ընդհանուր ծակոտկենության գործակցը միշտ փոքր է միավորից (կամ եթե արտահայտված է տոկոսներով, փոքր է 100-ից): Սակայն բերված ծակոտկենության գործակցը կարող է հավասար կամ ավել լինել միավորից: Պլաստիկ կավերի մոտ խոնավության փոփոխման դեպքում այն կտրուկ մեծանում է և տատանվում է 0.4-ից մինչև 16-ի սահմաններում:

Բաց ծակուրկինությունը բնութագրվում է բաց ծակուրկինության գործակցով (n_0), որի տակ հասկանում են հաղորդակցվող բաց ծակուրկինության ապարի լնդիանուր ծավալին, այսինքն՝

$$n_0 = \frac{V_0}{V} \quad (46)$$

որտեղ՝

V_0 -ն բաց ծակուրկինությունի ծավալն է,

V -ն ապարի ծավալն է:

Չեմենտացված հատիկավոր ապարների բաց ծակուրկինության մեծությունը մոտ է լնդիանուր ծակուրկինությանը: Ցեմենտացված ապարներում (հատկապես, եթե ցեմենտը կրաքարային է) սովորաբար բաց և լնդիանուր ծակուրկինության միջև նկատվում է էական տարրերություն (կրաքարեր, տուֆեր և այլն):

Բաց ծակուրկինությունը որոշում են հագեցման մեթոդով (Ի.Ա.Պրեբրամենսկու մեթոդ), որը կայանում է հետևյալում: Հետազոտվող ապարի նմուշը մաքրում են օրգանական նյութերից և չորացնում են մինչև հաստատուն զանգվածին հասնելը: Հետազայտմ դա կշռում, վակուումացնում, հագեցնում են կերոսինով և նորից կշռում: Այս դեպքում հաղորդակցվող ծակուրկինությունի ծավալը հավասար կլինի ապարի հագեցումից հետո և մինչև հագեցումը քաշերի հարաբերությունը բազմապատճառ կերոսինի խտությամբ:

Իմանալով հաղորդակցվող բաց ծակուրկինությունի ծավալը և ապարի ամքող ծավալը՝ հեշտությամբ կարելի է հաշվել բաց ծակուրկինության գործակցը (բանաձև 46):

Ընդհանուր և բաց ծակուրկինությունները բարձր աստիճանի ճշտությամբ կարելի են որոշել պիկնոմետրով:

Դինամիկ ծակուրկինության տակ հասկանում են ապարի ծակուրկինությունի և ճեղքերի այն մասի ծավալը, որոնք ջրատար հորիզոնում զբաղված են շարժվող ջրով: Հատկապես այս մեծությունը բնորոշում է օգտակար ծակուրկինությունի ծավալը ապարներում: Դինամիկ ծակուրկինությունը բնութագրվում է դինամիկ ծակուրկինության գործակցով:

Դիմամիկ ծակողկենության գործակիցը որոշվում է ապարի ծակոտիների այն ծավալով, որով շարժվում է հեղուկը և դրա ընդհանուր ծավալի հարաբերությամբ.

$$n_g = \frac{V_g}{V} \quad (47)$$

որտեղ՝

V_g -ն շարժվող հեղուկի ծավալն է,

V -ն ապարի նմուշի ծավալն է:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ոչ բոլոր բաց ծակոտիներով է տեղի ունենում ջրի շարժումը: Բաց ծակոտիների մի մասը (հատկապես մասնիկների ծայրակցվածքներում) հաճախակի զրադաշտ է լինում ջրի բարակ թաղանքով, որը պահպան է ապարի մասնիկների վրա դրանց մազանորային և մոլեկուլյար ձգողության ուժերի շնորհիվ և ջրի շարժմանը չի մասնակցում:

Հետևապես դիմամիկ ծակոտկենության մեծությունը կախված է ծակոտինային ուղիների բացվածության աստիճանից, ապարի մասնիկների ձևերից և չափերից, ծակոտիների ու ճեղքերի ճանապարհների բարդությունից, որոնցով տեղի է ունենում ջրի շարժումը: Դիմամիկ ծակոտկենությունը, ի տարրերություն բացի, հաշվի չի առնում այն ծակոտիների ծավալը, որոնք զրադաշտ են մազանորա-կապակցված ջրերով և ապարի մասնիկների մակերևույթի վրա ստեղծում են թույլաշարժ ջրային թաղանքներ:

Այսպիսով, բնութագրված ծակոտիների միջև սկզբունքային տարբերությունը (քանակապես) կայանում է նրանում, որ ցեմենտացված նստվածքային ապարներում ընդհանուր ծակոտկենությունը մեծ է բացից, բացը մեծ է դիմամիկից:

Ապարի ծակոտկենությունը և ճեղքավորվածությունը միայն ստեղծում են պայմաններ ստորերկրյա ջրերի կուտակման համար: Սակայն դրանց շարժման և օգտագործման բնույթը կախված է ծակոտիների և ճեղքերի չափերից: Ինչքան խոշոր են դատարկությունները և ճեղքերը, այնքան փոքր է գրավիտացիոն ջրի շարժմանը ցույց տրվող դիմադրությունը, այնքան լավ են ջրատար հորիզոնների շահագործման հնարավորությունները:

5.2. ԱՊԱՐՆԵՐԻ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶՐԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.2.1. ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ

Ապարները բնական պայմաններում միշտ էլ պարունակում են այս կամ այն քանակի ջուր: Ըստ որում հողում և ապարներում, որոնք տեղադրված են ստորերկրյա ջրերի մակարդակից վերև, ջրի քանակը տարվա կտրվածքում խիստ փոփոխական է՝ կախված օդի ջերմաստիճանից, ճնշման և խոնավության, գրլորշիացման, տեղումների սեզոնային փոփոխությունից: Ստորերկրյա ջրերի մակարդակից ներքև ապարների խոնավությունը միշտ մնում է հաստատուն և համարվում է խոնավ: Տարբերում են կշռային և ծավալային խոնավություններ:

Կշռային խոնավությունը ապարում եղած ջրի կշռի հարաբերությունն է չոր ապարի կշռին.

$$W_u = \frac{g_n - g_c}{g_c} \times 100 \quad (48)$$

որտեղ՝

W_u -ն ապարի կշռային բնական խոնավությունն է, %,

g_n -ը ապարի կշիռն է բնական խոնավության պայմաններում, q,

g_c -ն նույն ապարի կշիռն է $105\text{-}106^{\circ}\text{C}$ -ի շրացնելուց հետո, այսինքն՝ չոր ապարի կշիռը, q:

Ծավալային խոնավությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$W_s = \frac{W_u}{\gamma_c} \quad (49)$$

որտեղ՝

W_s -ը ծավալային խոնավությունն է, %,

γ_c -ն չոր ապարի հարաբերական խտությունն է, q/սմ³:

Զրաերկրաբանական հետազոտությունների ժամանակ ապարի բնական խոնավությունը (քացի նշված ցուցանիշներից) որոշում են նաև հարաբերական խոնավությունը կամ ապարի հագեցման գործակիցը,

ինչպես նաև դրա հագեցվածության պակասը կամ խոնավության (ջրի) պակասը:

Ապարի հագեցման գործակիցը (K_w) տվյալ ապարի ծավալային խոնավության հարաբերությունն է դրա ծակոտկենության գործակցին.

$$K_w = \frac{W_s}{n} \quad (50)$$

(50) բանաձևից երևում է, որ բացարձակ չոր ապարի համար՝ $K_w = 0$, իսկ ծակոտիները ջրով լրիվ լցված լինելու դեպքում՝ $K_w = 1$: Ըստ հագեցման գործակցի՝ ավազային ապարները բաժանում են՝
 1) չոր ավազներ, եթե $0 < K_w < 1/3$, 2) խոնավ, եթե $1/3 < K_w < 2/3$,
 3) խոնավ մինչև հագեցումը, եթե $2/3 < K_w < 1$:

Խոնավության (ջրի) պակասը լրիվ խոնավության (տես ներքեւ) և տվյալ պահին ապարի իրական խոնավության տարրերությունն է.

$$d = W_l - W_u \quad (51)$$

որտեղ՝

d -ն ապարի հագեցման պակասն է, %,

W_l -ն ապարի լրիվ խոնավությունը, %,

W_u -ն ապարի կշռային խոնավությունը, %:

Ապարների խոնավության որոշման մեթոդները բաժանում են երկու խմբի: Առաջինը հիմնված է ապարի ծակոտիներից ջրի հեռացման վրա, որը ստվորաբար կատարվում է լարորատոր եղանակով: Երկրորդը՝ խոնավությունը որոշվում է ապարի ծակոտիներից առանց ջրի հեռացման. դրանք հիմնականում դաշտային մեթոդներն են (էլեկտրամետրիական, էլեկտրատարության, ռադիոակտիվ և այլն):

5.2.2. ԱՊԱՐՆԵՐԻ ԶՐԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապարների լնդիանուր ծակոտկենությունն ու լիբոլգիական կազմը պայմանավորում են դրանց հիմնական ջրային հատկությունները, որոնցից հիմնականներն են՝ խոնավատարությունը, ջրատվությունը,

ջրաքաղաքանցելիությունը (քափանցելիությունը) և մազականությունը (մազանորայնություն) [5,19]:

Խոհակարարությունը ապարի որոշակի քանակի խոնավություն (ջուր) կլանելու և այն իր մեջ պահելու ունակությունն է: Ապարի խոնավտարությունը, ինչպես նաև դրա բնական խոնավությունը արտահայտվում է միավորի մասերով, ինչպես նաև կշռային կամ ծավալային պարունակության տոկոսներով:

Ըստ խոնավատարության աստիճանի առանձնացնում են երեք խմբի ապարներ.

- 1) խոնավատար՝ տորֆ, կավ, ավագակավ և այլն,
- 2) քոյլ խոնավատար՝ կավավազ, լյոս, մերգել և այլն,
- 3) ոչ խոնավատար՝ ավազ, գլաքար, կոսիճ, հրաբխային և փոխակերպային հոծ ապարներ:

Ապարների ծակոտիներում, ջրի կլանման և պահելու մեխանիզմից ելնելով, տարրերակում են հիգրոսկոպիկ, աղտոքցիոն, առավելագույն մոլեկուլյար, մազանորային և լրիվ խոնավատարություն:

Հիգրոսկոպիկ (կապակցված) խոհակարարությունն կոչվում է գոլորշաձև ջրի սահմանային քանակությունը, որը ապարը կարող է կլանել օդից դրա 94% հարաբերական խոնավության դեպքում: Տվյալ ապարի համար այն հաստատում մեծությունն է: Ինչքան մեծ է մասնիկների գումարային մակերևույթը, այնքան մեծ է ապարի հիգրոսկոպիկությունը:

Աղտոքցիոն խոհակարարությունը, ի տարրերություն հիգրոսկոպիկի, ապարի մասնիկների կողմից կլանվում է հեղուկ վիճակից, ըստ որում թրցվելիս անջատում է ջերմություն:

Սոսկեագույն մոլեկուլյար խոհակարարությունը ապարում ֆիզիկապես կապակցված ամբողջ ջրաքանակն է: **Մազանորային խոհակարարության** տակ հասկանում են ջրի այն քանակը, որը մոլեկուլյար ձգողության ուժերի ազդեցության տակ պահվում է ապարի մազանորային ծակոտիներում:

Լրիվ խոհակարարությունը համապատասխանում է ապարի այն վիճակին, եթե նրա մեջ եղած բոլոր դատարկությունները լրիվ հագեցած են ջրով: Ավագների համար այն ստվորաբար հավասար է ծակոտկենությանը, եթե դրանցում չկան գազ, օդ և այլն: Ավագակավային և կավային ապարների համար, որոնց ծավալը հագեցման ժամանակ ավելանում է, լրիվ խոնավատարությունը մեծ է ծակոտկենությունից և հա-

Վասար է ուշման խոնավությանը: Բոլոր այլ դեպքերում ջրի ծավալը, որը պարունակվում է ծակոտիներում, կախված է ապարի դատարկությունների կառուցվածքից, չափերից, ապարի միներալային կազմից և այլ պարամետրերից, և այս որոշել ենելով ծակոտկենությունից (ընդհանուր, բաց կամ դինամիկ) հնարավոր չեն:

Որոշ ապարների լրիվ և առավելագույն մոլեկուլյար խոնավատարությունների միջին արժեքները բերված են աղյուսակ 5-ում

Աղյուսակ 5

Ապարներ	Լրիվ խոնավատարություն, %	Առավելագույն մոլեկուլյար խոնավատարություն, %
Խոշորահատիկ ավազներ	20-60	1-2
Մանրահատիկ ավազներ	21-26	1.5-2.5
Կավակագներ	30-33	5-8
Ավազակավեր	32-35	15-20
Կավեր	40-46	32-40

Բոլոր տիպի խոնավատարություններն իրենցից ներկայացնում են ապարում պարունակվող ջրի քանակի հարաբերությունը ապարի միներալային մասնիկների (կմախքի) կշռին (բացարձակ խոնավության ցուցանիշ) կամ ջրի ծավալի հարաբերությունը ծակոտիների ծավալին (ապարի հարաբերական խոնավության գործակցի ցուցանիշ):

Զրարկվություն: Տարբերակում են գրավիտացիոն և առաճգական ջրատվություններ: Այս մեծություններով գնահատվում են ջրատար հորիզոնների (գրունտային և ճնշումային) ջրատարողունակության հատկությունները

Գրավիդրացիոն ջրարկվություն՝ ծանրության ուժի ազդեցության տակ ջրահագեցված ապարի ջուր տալու (անջատելու, բաց բողնելու) հատկությունն է, եթե իջեցվում է ջրի մակարդակը: Այն բնութագրվում է գրավիտացիոն ջրատվության գործակցով և իրենից ներկայացնում է ջրհագեցված ապարից ազատ կերպով (գրավիտացիայով) անջատված ջրի ծավալի և ապարի ծավալի հարաբերությունը.

$$\mu = \frac{V_2}{V} \quad (52)$$

որտեղ՝

μ -ն ջրատվության գործակիցն է, միավորի մասերով կամ տոկոս-ներով ավագների և այլ չուոչող ապարների համար,

V_g և V -ն անջատված ջրի և ապարի ծավալներն են:

Ջրատվության գործակիցը կարելի է որոշել նաև լրիվ և առավելագույն մոլեկուլյար խոնավատարությունների տարրերությամբ.

$$\mu = W_l - W_{w_0} \quad (53)$$

իսկ ավագային ապարների համար նաև՝

$$\mu = n - W_{w_0} \quad (53')$$

որտեղ՝

W_l -ը լրիվ խոնավատարությունն է,

W_{w0} -ը առավելագույն մոլեկուլյար խոնավատարությունը,

n -ը ավագային ապարի լրիվ ծակոտկենությունը:

Այդուսակ 6-ում բերվում է որոշ ապարների գրավիտացիոն ջրատվության գործակիցների միջին արժեքները [19]:

Այդուսակ 6

Ապարներ	Ջրատվությունը, միավորի մասերով
Խոշորահատիկ ավագներ և գլաքարներ	0.25-0.35
Սիզահատիկ ավագներ	0.20-0.25
Մանրահատիկ ավագներ	0.15-0.20
Նրբահատիկ ավագներ	0.10-0.15
Ավագակավեր	<0.10
Շեղբավորված կրաքարներ	0.008-0.10
Շեղբավորված ավագաքարներ	0.02-0.03

Այդուսակի տվյալները վկայում են, որ ապարների ջրատվության գործակիցը տատանվում է մեծ սահմաններում: Խոշորահատիկ ավագները, գլաքարները և այլ նմանատիպ ապարներն օժտված են մեծ ջրատվությամբ, իսկ կավային մանրաճեղքավոր և այլ մանրահատիկ ապարների մոտ գործնականում ջրատվությունը չի նկատվում: Ապարների ջրատվության որոշումը կատարվում է երեք մեթոդով.

1. ըստ բանաձևերի՝ եթք հայտնի են լրիվ և առավելագույն մոլեկուլ-յար խոնավատարությունները կամ միավոր ծավալից գրավիտացիոն ճանապարհով անշատված ջրի բանակը (տես վերը),

2. լարորատոր փորձնական ճանապարհով (ավագների համար),

3. դաշտային փորձաֆիլտրացիոն աշխատանքների տվյալներով:

Լարորատոր պայմաններում ավագների ջրատվորյան գործակիցը որոշվում է Ն. Ն. Բինդեմանի կողմից մշակված սարքի օգնությամբ [19, 5, 33]: Այն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\mu = \frac{z}{\Delta h - h_u} \quad (54)$$

որտեղ՝

z -ը ջրի շերտի հաստությունն է, սմ (որոշվում է հետևյալ արտահայտությունից՝ $z = \frac{V}{F}$, որտեղ՝ V -ն անշատված ջրի ծավալն է, սմ³,

F -ը խողովակի ընդլայնական կտրվածքի մակերեսն է, սմ²),

Δh -ը խողովակում ջրի մակարդակի իջեցումն է, սմ,

h_u -ն ապարի մազական բարձրացման մեծությունն է, սմ:

Դաշտային փորձաֆիլտրացիոն մեթոդներով ջրատվորյան գործակի որոշումը տրվում է «Ստորերկրյա ջրերի դինամիկա» կուրսում [5, 31, 29]:

Ապարի առավելագույն խոնավատարության և բնական խոնավության տարրերությունը կոչվում է *հագեցլածության պակաս*: Սակայն բնական պայմաններում, ինչպես ցոյց են տվել փորձերը, ջրահագեցվածության պակասի մեծությունը փոքր է նշված տարրերությունից: Դա բացարձիւմ է նրանով, որ հաճախ ապարների շերտերը ջրով լրիվ չեն հագենում ապարի ծակոտիներում և ճեղքերում «ճմլված» գազերի առկայության պատճառով:

Գործնական կիրառությունների ժամանակ սովորաբար ջրատվորյունը և ջրահագեցման պակասի մեծությունները ընդունում են իրար հավասար և հաստատու ժամանակի մեջ: Այստեղ, անկասկած, կատարվում է որոշ ընդունելիություն, որ ապարի բնական խոնավությունն, ըստ իր մեծության, մոտ է դաշտային խոնավությանը կամ որ մոտավորապես նույնն է, առավելագույն մոլեկուլյար խոնավատարությանը: Նման ըն-

դրւելիությունը առվարաբոր ջրաերկրաբանական հաշվարկներում էական սխալների չի հանգեցնում, և դրանց մեծություններն ընդունում են նույնը:

Առաջգական ջրաւրփությունը բնորոշում է այն ազատ ջրի քանակը, որը կարող է տալ ջրատար շերտի միավոր ծավալը՝ ի հաշիվ նրանում առաձգական հատկությունների ի հայտ գալով, որը առաջանում է ջրատար շերտի վրա միավոր ճնշման վոփիխության դեպքում: Քանակապես բնութագրվում է առաձգական ջրատվության գործակցով և որոշվում է [33].

$$\mu^* = \rho \beta^* m \quad (55)$$

որտեղ՝

μ^* -ն առաձգական ջրատվության գործակիցն է, միավորի մասերով,

ρ -ն ջրի խտությունն է, կգ/սմ³ (քաղցրահամ ջրի համար $\rho = 0.001$),

β^* -ն շերտի, ջրատար հորիզոնի առաձգատարողության գործակիցն է, 1/մ,

m -ը շերտի, ջրատար հորիզոնի հաստությունն է, մ:

Համաձայն Վ.Ն.Շելկաչի β^* -ն որոշվում է

$$\beta^* = n\beta_{\varrho} + \beta_{\omega\omega} \quad (56)$$

որտեղ՝

n -ը դինամիկ ծակոտկենությունն է,

β_{ϱ} և $\beta_{\omega\omega}$ -ն ջրի և ապարի ծավալային սեղմման (կամ ընդարձակման) գործակիցներն են, 1/մ:

Ապար կազմող մասնիկների և դրա ծակոտիների կամ ճեղքերի ջրերի առաձգական (սեղմման կամ ընդարձակման) հատկությունները ի հայտ են գալիս ճնշումային ջրատար հորիզոնների (տես գլ. XIII) ջրերի շահագործման ժամանակ:

Նշված գործակիցների որոշման մեթոդները և փորձերի կատարման մեթոդիկան հանգամանալից տրվում է ուսումնական ձեռնարկներում և տեղեկագրերում:

Հարկ է նշել, որ առաձգական ջրատվության գործակցի մեծությունը 2-3 աստիճանով փոքր է գրավիտացիոն ջրատվության գործակցից:

Զրաբափանցելիություն և բափանցելիություն: Զրաբափանցելիության տակ հասկանում են ապարն իր միջով զուր բաց թռննելու հասլությունը ճնշման գրադիենտի (հիդրավիկ թեքության) առկայության դեպքում: Զրաբափանցելիության մեծությունը կախված է ապարների ծակոտիների և ճեղքերի չափերից: Որքան մեծ են ծակոտիները և ճեղքերը, այնքան հեշտ է զուրը շարժվում նման ապարներում: Ապարներն ըստ զրաբափանցելիության, ստորաբաժանվում են երեք խմբի՝ զրաբափանց, բույլ զրաբափանց և ոչ զրաբափանց կամ զրամերժ:

Զրաբափանց ապարների շարքին են դասվում փոփիր թեկորային և խոշորահատիկ նստվածքները (լավաներ, խիճ, գլաքար, գետաքար և այլն), ինչպես նաև ճեղքավոր և թեկորացված ապառաժային ապարները (բազալտներ, խարամ, կոտրատված գրանիտ, թերթաքարեր և այլն): Մանրահատիկ և կավով շաղախված նստվածքները (ավազակավ, կավավազ, լյոս), ինչպես նաև թույլ ճեղքավորված ապառաժային ապարները թույլ զրաբափանց են: Կավերն ու զանգվածային (ոչ ճեղքավորված) ապառաժային ապարները կարող են գործնականում ոչ զրաբափանց լինել և զրատար ապարների համար ծառայել որպես զրամերժ հիմք:

Տափանցելիության տակ հասկանում են ապարների տարբեր տիպի հեղուկներ և գազեր իրենց միջով բաց թռննելու ունակությունը: Այն հանդիսանում է նավթագազաքեր շերտերի արդյունավետության կարևոր ցուցանիշ և լայնորեն օգտագործվում է նավթային երկրաբանությունում և զրաերկրաբանությունում:

Ապարների զրաբափանցելիությունը քանակական բնութագրվում է ֆիլտրացիայի գործակցով, իսկ բափանցելիությունը՝ բափանցելիության գործակցով (տես գլ. IX):

Մազանորայմություն: Զրի բարձրացման և ապարների նուրբ ծակոտիներում, ճեղքերում պահելու երևույթ է՝ պայմանավորված մակերևութային ձգողական ուժերի ազդեցությամբ, որը զարգանում է զրատար և չոր ապարների սահմանագծում:

Ապարներում 1մմ-ից փոքր տրամագիծ ունեցող ծակոտիներն ունեն սովորական մազական խողովակների հատկություն, վերջիններից տարբերվում են միայն տարածության մեջ իրենց կտրվածքի ձևերով ու կաղմնորշվածությամբ: Մազական ծակոտիները մերք հաղորդակցվում են իրար հետ, մերք մեկուսանում, տարածության մեջ ձևավորում բարդ


մազանորային ցանց, որով մակերևութային ձգողականության ուժերի ազդեցության տակ ջրերը բարձրանում են ստորերկրյա ջրերի մակարդակից վերև:

Մազանորային ջրերը հիմնականում հանդես են գալիս աէրացիայի զոնայում և տեղադրված են ստորերկրյա ջրերի (սովորաբար գրունտային) մակերևույթի վրա և սերտ կապված են վերջիններիս հետ: Սակայն աէրացիայի զոնայի ապարաների անհամասեռ լիքոլոգիական առանձնահատկություններից ելնելով այն կարող է կապված չլինել ստորերկրյա ջրերի մակարդակի (մակերևույթի) հետ:

Մակերևութային ձգողականությունը ի հայտ է գալիս երկու տարբեր միջավայրերի՝ ստորերկրյա ջրերի մակերևույթի (մակարդակի) և հողում (չոր ապարում) գտնվող օդի բաժանման սահմանում:

Մակերևութային ձգողականության (լարվածության) չափողականությունն արտահայտվում է ձգող ուժերի (Նյուտոն) և երկարության (մետր) հարաբերությամբ: Մակերևութային ձգողականությունը գերազանցում է ծանրության ուժին և դրա համար էլ մազանորային ջրերը ի վիճակի են գրավիտացիոն ջրերի մակերևույթից այս կամ այն չափով վերև բարձրանալու: Մազանորային ջրերը հաճախ հիդրավլիկական կապի մեջ են ստորերկրյա ջրերի մակերևույթի հետ, դրա համար էլ դրանց մակերևույթը (բախրումա) կրում է ուղղաձիգ փոփոխություն՝ կապված ստորերկրյա ջրերի մակարդակի տասանման հետ:

Մազանորային ջրերն, ըստ որոշ ցուցանիշների, մոտ են գրավիտացիոն ջրերին, օրինակ հաղորդում են հիդրոստատիկ ճնշում, շարժվում են ինչպես մակերևութային ձգողական ուժերի ազդեցության տակ, այնպես էլ ծանրության ուժերի ազդեցության տակ:



Նկ. 12 Տարբեր տրամագծերի խողովակներում մազանոքային ջրի բարձրացման սխեմա

Հայտնի է, որ ջուրն իջեցված բարակ ապակյա խողովակում մակերևութային ճգողական (լարվածության) ուժերի ազդեցության տակ բարձրանում է որոշ բարձրության: Ընդ որում, խողովակի ջրի մակերևույթը ծեռք է բերում գնդածն մակերևույթ (մենիսկ), որի ուռուցիկ մասն ուղղված է դեպի ջուրը: Ապարների մազական ծակոտիներում ջուր-օդ սահմանի վրա, ջրի մակերևույթը նույնպես հանդես է գալիս մենիսկի ձևով (նկ. 12): Մակերևութային ճգողության ուժերը (bb_1), ուղղված են մենիսկի գնդածն մակերևույթի շոշափողի ուղղությամբ: Մակերևութային ճգողական ուժերի ուղղաձիգ բաղադրիչը (cc_1) գումարվում է P ուժին և որի ազդեցության տակ ջուրը մազանոքում բարձրանում է մինչև H բարձրությունը (տես նկ. 12):

Մազականության ցուցանիշներն են մազական բարձրացման արագությունն ու մակարդակը: Դրանք կախված են ապարի մեխանիկական կազմից, մասնիկների ձևից, խտությունից և դասավորվածությունից, ինչպես նաև ջրի ջերմաստիճանից ու հանքայնացումից և աղային կազմից:

Խոշորահատիկ ապարներում մազական բարձրացումը փոքր է, իսկ մանրահատիկ ապարներում՝ մեծ: Զերմաստիճանի բարձրացման դեպքում մազական բարձրացումը նվազում է, իսկ հանքայնացման բարձրացման դեպքում՝ ավելանում:

Ինչպես ասվեց, ջրի աղային կազմը նույնապես ազդում է մազական բարձրացման վրա: Օրինակ, ջրի նույն հանքայնացման աստիճանի դեպքում NaCl լուծույթի մազական բարձրացումը ավելի մեծ է, քան H_2SO_4 լուծույթինը:

Մազական բարձրացման մեծությունը և արագությունը որոշվում է փորձով և կիսաէմպիրիկ բանաձևերով: Դրանց մոտավոր արժեքները բերված են աղյուսակ 7-ում [5]:

Աղյուսակ 7
Տարրեր ապարների մազական բարձրացման միջին մեծությունները

Ապարներ	Մազական բարձրացման մեծությունը (h_u), սմ	Մազական առավելագույն բարձրացման համար անհրաժեշտ օրերի թիվը
Ավազներ՝		
խոշորահատիկ	3.0-12.0	80
միջահատիկ	12.0-35.0	180-188
մանրահատիկ	35.0-120.0	188-160
Կավավազ	120-350	160-475
Ավազակավ	350-650	-
Թերև կավ	650-1200	-

Մազական բարձրացման մակարդակը լրիվ բրջվածության և ջրի միավոր խտության դեպքում, որոշվում է հետևյալ բանաձևով.

$$h_u = \frac{4\sigma}{d} \text{ կամ } h_u = \frac{0.15}{r} \quad (57)$$

որտեղ՝

h_u -ն մազական բարձրացումն է, սմ,

σ -ն մակերևութային լարվածությունն է,

d -ն մազական ծակոտիների տարամագիծը:

Ապագային-կավային ապարներում մազական բարձրացման մակարդակը (մեծությունը) մոտավորապես կարելի է որոշել Կողենի բանաձևով.

$$h_u = \frac{0.446(1-n)}{nd_{10}} \quad (58)$$

որտեղ՝

n -ը ծակուտկենության գործակիցն է միավորի մասերով,

d_{10} -ը գործող (էֆեկտիվ) տրամագիծն է:

Մազական բարձրացումը սկզբում կատարվում է մեծ արագությամբ, ապա խիստ դանդաղում է:

Ապարներում մազական բարձրացման երևոյթները հաճախ գործնական մեծ նշանակություն ունեն: Մազական ջուրը կարող է սնուցել բույսերին, եթե հասնում է արմատաքնակ շերտին: Սակայն եթե մազական ջուրը բարձրանում է մինչև երկրի մակերևույթ ու գոլորշիանում է, ապա տևական գործընթացի դեպքում զգալի չափով աղեր են կուտակվում և հողերը վերածվում են աղուտների: Մազական ջրերը բացասական ազդեցություն են ունենում նաև ինժեներական կառույցների վրա, շենքերի նկուղային հարկերում խոնավությունը մեծանում է, աղերը քայլում են կառույցների հիմքերը և այլն:

5.3. ԶՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԱՊԱՐՆԵՐՈՒՄ

Ապարներում առաջին դասակարգային կառույցվածքը տարբեր տեսակի ջրերի անջատումով տվել են Օ. Սեհնիցերը (1935) և առավել ամբողջական տեսքով՝ Ա. Ֆ. Լեբեդիկը (1923, 1936): Այդ դասակարգումը հետազայում ճշգրտվել ու լրացվել է Բ. Վ. Դերյագինի, Ս. Ի. Ռոլգովի, Ա. Ա. Ռոդեի, Ս. Մ. Սերգեևի և ուրիշների աշխատանքներում, որոնք են կանաչ գույնի ապարներում առաջանական մեջ [19, 25, 33]:

Ներկա ժամանակներում ապարներում անջատում են հետևյալ ջրի տեսակները.

1. Գոլորշու ձևով ջուր,
 2. Ֆիզիկապես կապված ջուր.
- ա) ուժեղ կապակցված (աղսորբցված, հիգրոսկոպիկ)

բ) թույլ կապակցված (թաղանքային)

3. Ազատ կամ գրավիտացիոն (ծանրահատակային) ջուր

ա) մազալան

բ) միանգամայն ազատ

4. Կարծր (սառույցի) ձևով ջուր

5. Քիմիապես կապված ջուր

ա) կառուցվածքային (կոնստիտուցիոն)

բ) բյուրեղային (կրիստալզացիոն)

գ) ցեղլիտային (հիդրատային):

1. **Գոլորշու չեռված ջուրը** օդի հետ միասին պարունակվում է աէրացիայի զոնայի ապարների ծակոտիներում և ճեղքերում: Այն գտնվում է դինամիկ հավասարակշռության մեջ ինչպես մթնոլորտային գոլորշու, այնպես էլ ապարների այլ ջրատեսակների հետ: Ջրային գոլորշիների շարժումը ապարներում կատարվում է առաձգականության կամ խոնավության գրադիենտների առկայության դեպքերում, որոնք հիմնականուն պայմանավորված են տարբեր տեղամասերի ջերմաստիճանային տարբերությամբ: Ջրային գոլորշիների տեղաշարժը կատարվում է բոլոր ուղղություններով (հորիզոնական և ուղղաձիգ): Դրանք հողի և ապարների մեջ մուտք են գործում օդից կամ առաջանում են աէրացիայի զոնայի հողից և ապարներից խոնավության գոլորշիացման ժամանակ: Մի տեղում ջրի գոլորշիացումը, մեկ այլ տեղում՝ այլ գոլորշիների խտացումը (կոնդենսացիան) զգալի դեր են խաղում հողաբուսական ծածկոցում և ապարներում խոնավության տեղաբաշխման գործում: Գոլորշան ջրերը բույսերի սննան գործում անմիջական նասնակցություն չեն կարող ունենալ:

2. **Ֆիզիկապես կապված ջուր:** Կապված ջուրը միներալային մասնիկների մակերևույթների և ջրում լուծված նյութերի իոնների, ինչպես նաև ջրի մոլեկուլների միջև եղած փոխազդեցության հետևանքով, գտնվում են ապարի մասնիկների մակերևույթին մոտ: Այդ փոխազդեցությունը պայմանավորված է պինդ և հեղուկ փուլերի բաժանման սահմանում տեղի ունեցող մակերևույթային երևույթներով:


Բացասական լիցք ունեցող միներալային մասնիկների մակերևույթներին մոտ ջրի երկրևեռ մոլեկուլները կողմնորոշվելով դասավորվում են դրական քենոներով դեպի մասնիկների մակերևույթները: Անմիջականորեն մասնիկների մակերևույթներին մոտ գտնվող ջրի մոլե-

կուլները այնպիսի զգալի մոլեկուլային ձգողությամբ են պահպում, որ ջուրը ստանում է այլ հատկություն:

Կապված ջուրն ազատ ջրից տարբերվում է հետևյալ հատկություններով՝ դրա միջին խտությունը հավասար է $2\text{g}/\text{cm}^3$, տեղաշարժումն ավելի դանդաղ է, քան ազատ ջրինը, այն ապարի մասնիկների մակերևույթին պահպում է այնպիսի ուժով, որը շատ անգամ գերազանցում է ծանրության ուժերին, կապային ապարների ամրության հատկությունները կախված են դրանում կապակցված ջրի քանակից:

Որոշ ֆիզիկական հատկություններից ենթալով՝ ֆիզիկապես կապված ջուրը ստորաբաժանում են ամուր կապված (աղստրցված, հիգրոսկոպիկ) և թույլ կապված (թաղանթային) ջրատեսակների:

ա) *Ամուր կապված ջուրը* ապարների մասնիկների վրա առաջանում է օդից ջրային գոլորշիների կամ հեղուկ վիճակի ջրային գոլորշիների աղստրցման ճանապարհով (նկ. 13): Այն հիմնականում յուրահատուկ է նրբառիսպերս ապարներին (նրբահատիկ և կավային ապարներին):



Նկ. 13 Ապարներում տարբեր ձևի ջրերի սխեմատիկ պատկերում (լրտ Ա. Ֆ. Լեբենկի)

1- ապարի մասնիկները, 2- ջրի մոլեկուլները գոլորշու փենքով՝ առ լրիվ և թ- մաքսիմալ հիգրոսկոպիկ, զ և դ - ապարի մասնիկները թաղանթային ջրով (ջուրը (զ) մասնիկից շարժվում է (դ) մասնիկը՝ հասկ թաղանթից թարակ թաղանթը թաղանթների հավասար հասպությունները աշված է ընդհանրվող գծերով), (ե) ապարի մասնիկը ազար ջրի հետ

Անիրաժեշտ է նշել, որ ապարներում որքան շատ են կավային մասնիկները, այնքան մեծ է կապակցված ջրի քանակը: Հայտնի է, որ փոքր չափերի կավային մասնիկների մակերևույթին առաջանում է բացասական լիցրով էլեկտրաստատիկ դաշտ: Վերջինս ձգում է ջրի մոլեկուլներին, որոնք իրենցից ներկայացնում են դիպոլներ և այս ձևով ապարի մասնիկների շուրջը կուտակվում են այս կամ այն քանակի ջրային գոլորշիներ: Եթե այդ մոլեկուլների կուտակման հաստությունը չի գերազանցում 1-3 մոլեկուլից, ապա առաջանում է ամուր կապված կամ հիգրոսկոպիկ ջուր: Այն կապված է մասնիկի հետ հսկայական չափերի հասնող մոլեկուլյար և էլեկտրաստատիկ ձգողական ուժերով՝ մինչև 10000 մրնողրոտ (ըստ Վան-Դեր-Վաալսի) և կարող է տեղաշարժվել միայն բարձր ջերմաստիճանում ($100\text{-}120^{\circ}\text{C}$) գոլորշիացման ճանապարհով: Այս ջրերն անհասանելի են բույսերի համար, քանի որ բույսի արմատները ի վիճակի չեն ապարի մասնիկից պրկելու այդ ջրերը: Ամուր կապված ջուրը լուծելու ընդունակություն չունի, ծանրության ուժին չի ենթարկվում, չի սաշչում նույնիսկ -78°C -ում, դրա կլանման ժամանակ ջերմություն է անջատվում:

բ) *Թույլ կապված կամ թաղանթային ջուրն առաջանում է այն ժամանակ, երբ խունավությունն ապարի մեջ անցնում է առավելագույն հիգրոսկոպիկության սահմանը, որի տակ հասկանում են ապարի ուժեղ կապացված ջրերի առավելագույն հագեցվածությունը: Այն ծածկում է ամուր կապված ջրային մոլեկուլները, ավելի բույլ է կապված ապարի մասնիկների հետ, սակայն ապարի մասնիկների մակերևույթին պահպում է մոլեկուլային ձգողական ուժով: Թաղանթի հաստության մեծացման հետ մոլեկուլյար ուժերի ազդեցությունը կտրուկ ընկնում է, և թաղանթի մակերևույթին դրա ազդեցությունը դառնում է աննշան: Դրա համար էլ թաղանթի վերին (արտաքին) շերտերի ջրերն արդեն հասանելի են բույսերի սննման համար: Հողում թաղանթային ջրի առկայությունը նպաստում է միկրոօրգանիզմների գարգացմանը:*

Թաղանթային ջուրը որոշակի հաստության դեպքում ընդունակ է դանդաղորեն շարժվել դեպի հարևան ավելի բարակ թաղանթով մասնիկները, այսինքն՝ ավելի խոնավ շերտերից դեպի քիչ խոնավը (նկ. 13):

Ջրի տեղաշարժը կատարվում է շատ դանդաղ, և շարունակվում է այնքան ժամանակ, մինչև երկու մասնիկների ջրային թաղանթների հավասարվելը (մինչ մոլեկուլյար ձգողական ուժերի հավասարակշռութելը):

Թաղանքային ջրի շարժումը կարող է առաջ գալ նաև այն դեպքում, եթե ապարի երկու տեղամասերի միջև գոյություն ունի խոնավության և ջերմաստիճանի գրափենսուներ: Ընդ որում շարժումը կատարվում է ավելի բարձր խոնավության տեղերից դեպի ցածրը՝ գոլորշու ձևով խոնավատարման ճանապարհով: Եթե տեղամասերում խոնավությունը նույնն է, ապա այդ շարժումը կարող է տեղի ունենալ բարձր ջերմաստիճան ունեցող տեղից դեպի ցածր ջերմաստիճան ունեցողը: Թույլ կազմած ջրի տեղաշարժը տեղի է ունենաւ նաև օսմոտիկ ճնշումների տարրերության ազդեցության տակ: Շարժման արագությունը կախված է ապարի հատիկաչափական և միներալային կազմից, միջավայրի ջերմաստիճանից և ջրի հանքայնացման աստիճանից:

Թաղանքային ջրի առավելագույն պարունակությունը (առավելագույն մոլեկուլար խոնավատարությունը) տարրեր ապարների մոտ տարրեր են, այսպես՝ ավազների համար այն կազմում է 1-7, կավավագների համար՝ 9-13, ավազակավերի համար՝ 15-23 և 25-40% կավերի համար:

Թաղանքային ջուրը չի ենթարկվում ծանրության ուժին, քանի որ թաղանքային ջուրը պահու մոլեկուլային և այլ ուժերը գերազանցում են ծանրության ուժին, այն հիդրոստատիկ ճնշում չի հաղորդում, քանի որ թաղանքային ջուրը ապարի բոլոր ծակոտիները չի կարող լցնել ջրով, ընդունակ է որոշ քանակի աղեր լուծել և բուլացնում է կավային ապարների առաձգական հատկանիշները:

Եթե թաղանքի հաստությունը մեծանում է մինչև այնպիսի չափերի, որ մոլեկուլար ձգողական ուժերը ի վիճակի չեն պահելու թաղանքի արտաքին շերտի ջրերը, թաղանքային ջուրը կարող է անցնել ազատ ջրի, որը ծանրության ուժի ազդեցության տակ սահելով (հոսելով) ապարի մասնիկների վրայից ծառայում է որպես ստորերկրյա ջրերի համալրման աղբյուր (նկ. 13):

3. Ազար կամ գրավիդրացիոն ջուր:

ա) *Մազական ջուրն առաջանում է, եթե ապարը լրիվ հագեցված է ֆիզիկական կապված ջրով, և ծակոտիները և նուրբ ճեղքերը լցվում են ջրով: Մազական ջրի մասին մանրամասն տրվել է վերը (տես կետ 5.2.): Այստեղ միայն նշենք, որ կախված մազանորթային ծակոտիների ջրով համալրման աղբյուրից, լցվածության աստիճանից և գրունտային ջրերի հետ կապի աստիճանից՝ մազանորթային ջրերը ստորաբաժանվում են*

մազանորային-կցվածքային (ծայրակցային), մազանորային-կախված և մազանորային բարձրացող:

Մազանորային-կցվածքային ջուրը հիմնականում առաջանում է ավագային ապարների մասնիկների կոնտակտային մասերի ծակոտիների անկյուններում: Այն ուժեղ պահպում է մազանորային ուժերի կողմից, չի հաղորդում հիդրոստատիկ ճնշում, ապարի ներսում չի կարող տեղաշարժվել, քանի որ ջրի հիդրոստատիկ ճնշումը փոքր է մենիսկի մակերևութային ճնշումից: Մազանորային-կցվածքային ջուրը համարյա անհասանելի է բույսերի համար:

Մազանորային-կախված ջուրը գրունտային ջրերի հետ չի հաղորդակցվում: Այն առաջանում է աէրացիայի զոնայի վերին շերտի ապարներում՝ ի հաշիվ մթնոլորտային տեղումների ջրերի ապարների մեջ ներծծման, երբ դրանցում խոնավությունը բարձր է առավելագույն մոլեկուլյար խոնավատարությունից: Հաճախ մազանորային-կախված ջուրն առաջանում է մանրահատիկ ապարների ներքևի մասերում, որոնք տեղադրված են առավել խոշորահատիկ տարատեսակների տակ: Ապարների նման կազմի դեպքում մազանորային-կախված ջուրը ծակոտիներում պահպում է ի հաշիվ ճնշումների տարրերության, որը գոյանում է մենիսկների տարրեր կորուրյունների հետևանքով: Ապարների մազանորային ծակոտիների և ճեղքերի լցվածության աստիճանը կախված ջրով կարող է լինել խիստ տարրեր: Կախված ջրի քանակը, որն ապարում պահպում է մազանորներով, ընդունված է անվանել ջրապահպանության ունակություն: Ըստ Ա. Ա. Ռոդեի՝ կախված ապարի կազմից և կառուցվածքից ջրապահպանության ունակությունը կարող է տատանվել 40%-ից մինչև 100%-ի:

Մազանորային-կախված ջուրը երկարատև գոլորշիացման դեպքում կարող է լրիվությամբ ծախսվել և վերանալ: Այդ ջուրը բույսերի համար լրիվ հասանելի է:

Մազանորային բարձրացող ջրի մասին հանգամանալից տրված է վերը (տես 5.2.2.):

Մազանորային կախված և բարձրացող ջրերն իրենց ֆիզիկական հատկանիշներով չեն տարրերում հեղուկ-կաթիլային գրավիտացիոն ջրերից, հաղորդում են հիդրոստատիկ ճնշում, կրում են գրավիտացիոն ուժի ազդեցությունը, ունեն լուծելու ունակություն, համարվում են նպաստավոր միջավայր միկրոօրգանիզմների զարգացման համար, ակտիվո-

թեն օգտագործվում են բույսերի կողմից: Սակայն մազանոթային ջուրը ներառում է մաև ֆիզիկապես կապված ջրի որոշ հատկություններ՝ ենթարկվում է մակերևութային ձգողության ուժեղություն, որոնք մազանոթային ծակոտիներում առաջ են գալիս մենակների առաջացման տեղերում: Մազանոթային ջուրը սառչում է 0°C -ից մի փոքր ցածր ջերմաստիճանում որքան փոքր է մազանոթային ծակոտիների տրամագիծը, այնքան ցածր է սառեցման ջերմաստիճանը:

բ) *Միանկամայն ազադ ջուրը* ապարի ամբողջ ծակոտիներում և ճեղքերում հեղուկ-կարիլային ձևով լցված ջուրն է:

Գրավիտացիոն ջրի շարժումը հիմնականում կատարվում է ծանրության ուժի և ճնշման գրադիենտի և որոշ չափով մազանոթային ուժեղություն ազրեցության տակ:

Միանկամայն ազատ կամ գրավիտացիոն ջուրը ջրաերկրաբանության խնդրո առարկան է և դրա ըստ ամենայնի դիտարկումը կտրվի դասագրքի հետագա շարադրանքում:

4. *Կարծր (սառույցի) ձևով ջուր*: Չուրը կարծր վիճակում ապարներում պարունակվում է առանձին բյուրեղների կամ սառցային շերտիկների տեսքով: Կախված տեղանքի կիմայական պայմաններից՝ սառցի ձևով ջուրը կարող է ցուրտ ժամանակշրջանում տարածվել որոշակի խորություններում, իսկ հավերժական սառցույթի գրտիներում այն մշտապես գոյություն ունի և ընդգրկում է մեծ խորություններ: Սառցի ձևով ջուրը կարծրացնում է բոլոր տեսակի ապարների միջմասնիկային կապերը, նույնիսկ փոխար բեկորային և հոսուն ապարները վերածվում են ապառաժային ապարների, որոնք էապես այլ ֆիզիկամեխանիկական հատկություններ են ձեռք բերում:

Ապարներում ջրի կարծր ֆազայի մասին մանրամասն կտրվի XIV գլխում:

5. *Քիմիապես կապված ջուր*: Սա այն ջուրն է, որը պարունակվում է միներալների քիմիական բաղադրակազմում (բյուրեղային ցանցում):

ա) *Կառուցվածքային (կոնստիլուցիոն)* ջուրը միներալների բյուրեղային ցանցում ներկայացվում է ամուր կապված OH^- , H^+ ու H_3O^+ իոնների ձևով և միներալներից որոշակի քանակներով բոհքած անջատվում է բարձր ջերմաստիճաններում ($300\text{-}1300^{\circ}\text{C}$) կամ միներալների բյուրեղային ցանցի լրիվ քայլայման դեպքում: Որպես օրի-

նակ կարող են ծառայել $\text{Al}_2(\text{OH})_3$, $\text{Ca}(\text{OH})_2$ հիդրօքսիդները, դիասպորը (AlOxOH), տոպազը $\text{Al}_2(\text{OH})_2\text{SiO}_2$ և այլն:

թ) *Բյուրեղային (կրիստալիզացիոն)* ջուրը մտնում է միներալների բյուրեղային ցանցի մեջ նվազ կապված առանձին մոլեկուլների կամ դրանց խմբի ձևով: Այս ջուրը միներալներից բոհքածու անշատվում է ավելի ցածր ջերմաստիճաններում ($250\text{-}300^{\circ}\text{C}$): Առավել շատ բյուրեղային ջուր պարունակող միներալներից կարելի է նշել սոդան՝ $\text{Na}_2\text{CO}_3 \times 10\text{H}_2\text{O}$ (ջուրը կազմում է կշռի 63%), միրաքիլիտը՝ $\text{Na}_2\text{SO}_4 \times 10\text{H}_2\text{O}$ (55.9%), բիշոֆիտը՝ $\text{MgCl}_2 \times 6\text{H}_2\text{O}$ (53.2%), գիպալ՝ $\text{CaSO}_4 \times 2\text{H}_2\text{O}$ (20.9%) և այլն:

զ) *Ցեղիկային (հիդրակրային)* ջուրը միներալների հետ չափազանց բույլ է կապված, դրա քանակի փոփոխությունը չի ազդում բյուրեղային ցանցի կառուցվածքի վրա: Ցեղիտային ջուրը միներալից անընդմեջ անշատվում է առավել ցածր ջերմաստիճաններում ($80\text{-}120^{\circ}\text{C}$): Բնորոշ միներալ է հանդիսանում օպալը՝ $\text{SiO}_3 \times n\text{H}_2\text{O}$: Ցեղիտներն ընդհանուր տեսքով ներկայացվում են՝ $(\text{Na}_2\text{Ca})\text{OAl}_2\text{O}_2 \times n\text{SiO}_2 \times m\text{H}_2\text{O}$, ըստ որում m -ը փոփոխվում է 1-ից մինչև 8-ը:

ԳԼՈՒԽ VI

**ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ:
ԼՈՒԾՎԱԾ ԳԱԶԵՐ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

6.1. ՀԵՂՈՒԿ ԶՐԻ ՄՈԼԵԿՈՒԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՍՊԱՆՉԱՑԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զուրն իրենից ներկայացնում է ջրածնի և թթվածնի պարզ քիմիական միացություն, որի մոլեկուլի զանգվածի $11.19\%-ը$ կազմում է ջրածնը, իսկ $88.81\%-ը$ թթվածնը: Զրի մոլեկուլը բաղկացած է մեկ ատոմ թթվածնից և երկու ատոմ ջրածնից (H_2O^{16}), որոնց ատոմական կշիռները համապատասխանաբար հավասար են 16 և 1 : Սակայն, ներկա ժամանակներում հայտնի են ջրածնի երեք իզոտոպներ՝ H^1 (արոտայիում), H^2 (դեյտերիում D) և H^3 (տրետիում T) և թթվածնի վեց իզոտոպներ՝ (O^{14} , O^{15} , O^{16} , O^{17} , O^{18} , O^{19}): Ընդ որում ջրածնի H^3 իզոտոպը հանդիսանում է ռադիոակտիվ և հանդիպում է չափազանց աննշան քանակությամբ, թթվածնի O^{14} , O^{15} և O^{19} իզոտոպները կարճայաց են: Թթվածնի (O^{16} , O^{17} , O^{18}) և ջրածնի (H^1 , H^2 , H^3) իզոտոպների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բնական պայմաններում կարող են գոյություն ունենալ ջրի մոլեկուլի 18 տարատեսակներ, որոնք իիմք են հանդիսանում տարբեր ֆիզիկական հատկություններով ջրերի առաջացնան համար (կախված ելակետային մոլեկուլների համակցությունից):

Բնական ջրերում գերակշռող են հանդիսանում H_2O^{16} մոլեկուլները, որանց մնացած տարատեսակները շատ աննշան քանակներով են հանդես գալիս: Օրինակ՝ ջրածնի H^1 և D իզոտոպների հարաբերակցությունը կազմում է $6800:1$, իսկ թթվածնի առավել կայուն իզոտոպների հարաբերակցությունը՝ $O^{16} : O^{17} : O^{18} = 2760:5.5:1$:

Հայտնի է, որ նույնիսկ սովորական ջրին (H_2O) է յուրահատուկ ֆիզիկական որոշ հատկությունների խոտորիչ (անոմալ) հատկանիշներ.

1) ջուրը միակ նյութն է, որ սովորական ջերմային և ճնշման պայմաններում հանդես է գալիս միաժամանակ երեք վիճակներով՝ պինդ (կարծր), հեղուկ և գոլորշի,

2) սառույցի հալեցումն ուղեկցվում է դրա ծավալի ոչ թե ընդարձակմամբ, ինչպես շատ նյութերի մոտ, այլ փոքրացմամբ (սեղմվածությամբ),

3) այն միակ միացությունն է, որ առավելագույն խտության (1գ/սմ³) է հասնում 3.98°C, իսկ դրանից բարձր ու ցածր ջերմաստիճաններում այն փոքրանում է,

4) ջուրն ունի հալման (սառեցման) և եռման արտակարգ բարձր ջերմաստիճաններ (0° և +100°C),

5) ջուրն ունի բարձր ջերմաստարողունակություն, ինչպես նաև շատ բարձր (համեմատած այլ հեղուկների հետ) հալման և գոլորշիացման թաքնված ջերմություն (համապատասխանաբար 80 և 539 կալ/գ),

6) ունի համակողմանի լուծողունակություն, որը պայմանավորված է բացառիկ բարձր դիէլեկտրիկ թափանցելիությամբ, որը 20°C ջերմաստիճանի դեպքում հավասար է 81.0,

7) ջրի մածուցիկությունը ճնշման բարձրացման հետ, ջերմաստիճանը (0°-ից մինչև 20-30°C-ի) բարձրանալիս, ընկնում է (ոչ թե մեծանում է, ինչպես մնացած նյութերի մոտ) և միայն առավել բարձր ջերմաստիճաններում, այն ճնշման մեծացման հետ սկսում է բարձրանալ,

8) սառցի վերածվելիս ջրի ծավալն արտասովոր մեծանում է (շորջ 10%), իսկ խտությունը՝ փոքրանում (0.9168 գ/սմ³), մինչեւ մյուս բոլոր հեղուկների բյուրեղացումն ուղեկցվում է խտության ավելացմամբ, հետևաբար՝ ծավալի փոքրացմամբ:

Ծվարկած առանձնահատկություններից բացի ջուրն ունի նաև խտորիչ հատկանիշներ՝ լուսի ճառագայթների թեկման, ձայնի տարածման, մակերևութային ձգողականության նկատմամբ (շնորհիվ ջրածնային կապի առկայության՝ ջրի մոլեկուլներն իրար ձգում են ավելի ուժեղ, քան այլ հեղուկներում, դրա համար էլ ջրի մակերևույթին ստեղծվում է մակերևութային մեծ ձգողականություն):

Հասուկ ուշադրության է արժանի ծանր ջուրը (H_2O^{16} կամ Δ), որը սովորական ջրից անջատում են էլեկտրոլիզի ճանապարհով: Դրա մոլեկուլի զանգվածը հավասար է 20, խտությունը՝ 1.106, առավելոգույն խտությունը դիտվում է +11.6°C ջերմաստիճանում, եռման ջերմաստիճանը կազմում է 101.42°C, իսկ սառույցի հալման ջերմաստիճանը՝


+3.82°C, սովորական ջուրն ավելի լավ է զանազան նյութեր լուծում, քան ծանր ջուրը: Մակերևության ձգողականությամբ և որոշ այլ հատկություններով ծանր ջուրը խիստ կերպով տարրելվում է սովորական ջրից: Օրինակ, դրանում սերմերը չեն աճում, մահացու է ջրային օրգանիզմների համար: Բնական ջրերում մեկ միավոր ծանր ջրին բաժին է ընկնում միջինը 5 հազ.միավոր սովորական ջուր:

Ծանր ջուրը բնության մեջ տարածված է ամենուրեք: Նույնիսկ աննշան քանակությամբ այն գոյություն ունի պտուղների, բանջարեղենների, կաթի, արյան մեջ: Սովորական ջրից ծանր լինելու հետևանքով այն կուտակվում է ջրավազանների հատակում: Ծանր ջուրը լայն կիրառություն ունի ատոմային էներգիայի բնագավառում, որից ստանում են ծանր ջրածին:

Մեծ հիմքեր կան պնդելու, որ «ծանր» ջուրն ապագայում կփոխարինի բնական վառելանյութի շատ տեսակների, որոնց պաշարները գնալով պակասում են: Քանի այն է, որ դեյտերիումն, ի տարրելություն սովորական ջրածնի, կարող է թերմոդինամիկ ռեակցիայի մեջ մտնել՝ առաջացնելով հակայական քանակի ատոմային էներգիա: Ընդ որում, այդ էներգիան մոտ 3-10 անգամ մեծ է, քան ծանր ռադիոակտիվ տարրերի (ուրան, պլուտոնիում) միջուկների տրոհման հետևանքով անջատվող էներգիան:


Զրի խոտորիչ հակտանիշները պայմանավորված են նրա մոլեկուլի ներքին կառուցվածքի առանձնահատկություններով՝ բարձր քևեռականությամբ և մոլեկուլների միջև լրացուցիչ ջրածնային կապերի առկայությամբ:

Ինչպես ասվեց, զրի մոլեկուլը բաղկացած է մեկ ատոմ թթվածնից և երկու ատոմ ջրածնից, ընդ որում ջրածնի ատոմները թթվածնի նկատմամբ որոշակի դասավորություն ունեն (նկ.14): Ջրածնի ատոմները գտնվում են հավասարապուն եռանկյան անկյուններում, իսկ թթվածնը՝ եռանկյան գագաթում: Եռանկյան կողմերն ունեն 0.96 անգատրեն (10^{-10} մետր) երկարություն, գագաթում կազմում են 105° անկյուն:



Նկ. 14 Էլեմենտար միավորի (հիդրո) կառուցվածքը, թվերը, միջուկային հեռավորությունը, նմ (նանոմետր= 10^{-9} մ)

Ժամանակակից պատկերացումների համաձայն՝ ջրի մոլեկուլի կառուցվածքը նման է քառանիստի (տետրաեդր), որի երկու անկյուններում տեղադրված են դրական լիցքավորված ջրածնի իոնները, իսկ հակադիր անկյուններում՝ բացասական լիցքավորված էլեկտրոնները (նկ.15): Էլեկտրոստատիկ ուժերի ծանրության կենտրոնների նման առանձնացված դասավորությունը, հավանաբար, պայմանավորում է ջրի մոլեկուլի բարձր բևեռականությունը, որի շնորհիվ ջրի մոլեկուլները միանալով առաջացնում են ազրեգատներ: Վերջինների մեջ մոլեկուլների քանակը (2-6) կախված է ջրի ֆիզիկական վիճակից (հեղուկ, կարծր, գոլորշի):



Նկ. 15 Ջրի մոլեկուլի մոդելը

Զրի մոլեկուլներն ունեն նաև լրացուցիչ ջրածնային կապեր ստեղծելու արտասովոր հատկություն, ջրածնի ատոմը էլեկտրոնային քաղաքի բացակայության և չափազանց փոքր իոնային շառավիղի շնորհիվ օժտված է էլեկտրոստատիկ ձգողական մեծ ուժով, որի պատճառով ջրածնի իոնը, առանց կապը խօելու տվյալ մոլեկուլի թթվածնից, լրացուցիչ կապ է հաստատում ջրի այլ մոլեկուլի թթվածնի հետ: Այդ պատճառով կարող են ստեղծվել նաև «կրկնակի ջրածնային կապեր»:

Զրի և ջրային հեղուկների կառուցվածքի ուսումնասիրությունների ասպարեզում ձեռքբերած նվաճումների օգտագործումը տալիս է լայն հնարավորություններ լուծելու տարաբնույթ երկրաբանական հիմնահարցեր և հատկապես պարզելու երկրակեղենում ջրի դերը երկրաբանական և ջրաերկրաբիմիական գործընթացում:

6.2. ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորերկրյա ջրերի հիմնական ֆիզիկական հատկություններն են՝ ջերմաստիճանը, քափանցիկությունը (վճխությունը), գույնը, համը, հոտը, խտությունը, մածուցիկությունը, էլեկտրահաղորդականությունն ու ռադիոակտիվությունը, որոնք որոշվում են համաձայն 18963-73ԳՈՍԽ: Թվարկածներից մի քանիսը (ջերմաստիճան, քափանցիկություն, գույն, համ, հոտ) օժտված են օրգանոլեպտիկ հատկանիշներով, այսինքն՝ սրությամբ ընկալվում են մարդու օգայական օրգաններով:

Զրի այնպիսի ֆիզիկական հատկությունները, ինչպիսիք են ջերմահաղորդականությունը, ջերմաստարողությունը և ջերմաստիճանահաղորդականությունը, հակիրճ նկարագրված է III զիսում:

Զերմաստիճան: Ստորերկրյա ջրերի ջերմաստիճանը տատանվում է մեծ սահմաններում և կախված է դրանց տեղադրման խորությունից ու սննան ռեժիմից, երկրաբանական կառուցվածքից ու կառուցվածքի զարգացման պատճենությունից, ֆիզիկաշխարհագրական պայմաններից:

Հավերժական սառածության գոտում աղաջրերն ունենում են բացասական ջերմաստիճան՝ մինչև -20°C սահմաններում: Միջին գոտիներում ոչ խորը տեղադրման ստորերկրյա ջրերի ջերմաստիճանը, կախված կլիմայական պայմաններից, փոփոխվում են 5-15-ի, հասարակածային գոտիներում՝ $15-20^{\circ}\text{C}$ -ի սահմաններում: Երիտասարդ և ժամա-

նակալից հրաբխականության մարգերում, ինչպես նաև տեկտոնական կոտրատված տեղերում, որտեղ ստորերկրյա ջրերը բարձրանում են երկրակեղակի խորը հորիզոններից, հայտնի են առյուղներ, որոնց ջրի ջերմաստիճանը հաճախ գերազանցում է 100°C (թերմեր, հեյզերներ, որոնք տարածված են Կամչատկայում, Խալանդիայում, Շապոնիայում, Ամերիկայում և այլուր): Երկրաշերմանային գրնաներում խոր հորատանցքերով (3-4 կմ) երթեմն հայտնաբերվում են գերտաք ջրեր մինչև 250°C ջերմությամբ (տե՛ս զլ. XV):

Ստորերկրյա ջրերի ջերմաստիճանը հաստկապես դրանց ոչ խորը տեղադրման դեպքում տարվա ընթացքում ենթարկվում են որոշակի փոփոխության: Իսկ տեղանքի հաստատուն ջերմաստիճանային գոտուց ներքև ստորերկրյա ջրերի ջերմաստիճանն ավելանում է լաս երկրաշերմային աստիճանի (տե՛ս զլ. III):

Խմելու ջուրն ավելի համելի ու թարմացնող է, եթե դրա ջերմաստիճանը կազմում է $7-11^{\circ}\text{C}$: Բուժման, մասնավորապես լոգանքների ընդունման համար թարենապատ է ջրի $35-37^{\circ}\text{C}$ ջերմությունը, որը մոտ է մարդու մարմնի ջերմաստիճանին:

Ջերմաստիճանը զգալի ազդեցություն է գործում երկրակեղելում ընթացող ֆիզիկաքիմիական գործընթացների և ստորերկրյա ջրերի քիմիական կազմի վրա: Սովորաբար ջերմաստիճանի ավելացման հետ ջրում դիֆուզիայի արագությունը և աղերի լուծնան աստիճանը ավելանում է, իսկ գազերի լուծողունակությունը նվազում:

Զրաերկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ աղբյուրների ջրի ջերմաստիճանը չափվում է անմիջապես ելքի մոտ, իսկ շատրվանող հորատանցքերից կամ արտամղումների ժամանակ՝ ջրբափ սարքերի (հարմարանքների) վրա: Ժամանակակից երկրաֆիզիկական սարքերը հնարավորություն են տալիս ուսումնասիրելու խորը հորատանցքներում ջրի ողջ սյան ջերմաստիճանային փոփոխությունները նոյնիսկ տասնորդական աստիճանի ճշտությամբ:

Վճիրություն (բականացիկություն): Ստորերկրյա ջրերի վճիրությունը կախված է ջրում լուծված հանքային նյութերի քանակից, մեխանիկական խառնուրդների, օրգանական նյութերի ու կողմիների պարունակությունից:

Լաս վճիռության աստիճանի ստորերկրյա ջրերը ստորաբաժանվում են՝ 1) վճիռ, 2) քոյլ պղտոր, 3) պղտոր, և 4) շատ պղտոր: Ի տար-

բերություն մակերևութային ջրերի՝ ստորերկրյա ջրերը առավել վճիռ են:

Ջրի վճիռությունը որոշվում է գլանաձև, հարք հատակով և 30-40 սմ բարձրության քափանցիկ ապակյա անորի միջոցով, որը կատարվում է գլանի տակ դրոշմված որոշակի տառաշարի ընթերցմամբ: Յանկայի է այդ դիտարկումը հաճարել աղազերծված (թորած) ջրի նմուշի հետ: Ջրի վճիռությունը (պղտորությունը) գնահատվում է մգ/լ-ով՝ ըստ ստանդարտային (նմանօրինակային) սանդղակի:

Գույնը: Ստորերկրյա ջրերի գույնը կախված է դրանց քիմիական կազմից և խառնուրդների առկայությունից: Այն որոշում են անգեն աշքով ինչպես ջրի վճիռությունը:

Ստորերկրյա ջրերը ստվերաբար անգույն են, սակայն կոշտ ջրերը երկնագույն երանգ են ստանում, երկարն ու ծծմբաջրածինը ջրին տալիս են կանաչակապտավուն երանգ, հումինային օրգանական միացությունները՝ դեղնավուն, իսկ կախված միներալային մասնիկները՝ մոխրագույն երանգ:

Ջրի գույնը որոշվում է ըստ պլատինակոբալտային աստիճանասանդղակի և արտահայտվում է աստիճաններով:

Հողը: Ստորերկրյա ջրերը ստվերաբար հոտ չունեն, սակայն այն որոշակիորեն զգացվում է, առավելապես պայմանավորված է մանրէների կենսագործումներյամբ: Ωչ խորը տեղադրված գրունտային ջրերը ճահճային ջրերի հետ հաղորդակցվելիս ձեռք են բերում «ճահճային» հոտ: Քիչ օգտագործվող ջրհորերում, որոնք ամրակապված են փայտով, զուրը տիած հոտ ունի, իսկ ծծմբաջրածնով հարուստ ջուրը օժտված է նեխած ձվի հոտով: Խմելու ջուրը հոտ չպետք է ունենա: Այն որոշելու համար շշի մեջ լցված, տաքացված ջուրը (մինչև 40-50°C) 3-5 անգամ քափահարում են և անմիջապես հոտ քաշում:

Ջրի հոտի ինտենսիվությունը գնահատում են քալերով՝ ըստ սանդղակի:

Համը: Ստորերկրյա ջրերի համը պայմանավորված է ջրի մեջ հանքային միացությունների, գազերի և այլ խառնուրդների պարունակությամբ: Կալցիումի և մագնիսիումի հիդրոկարբոնատների, ինչպես նաև ածխաթթվի պարունակությունը ջրին տալիս են հաճելի համ: Մեծ քանակի օրգանական նյութի պարունակությունը ջուրը դարձնում է քաղցրահամ, երկարի իոնները ջրին հաղորդում են ժանգի յուրահատուկ համ,

սուլֆատները ջուրը դարձնում են դառնահամ, իսկ նատրիումի քլորիդը՝ աղահամ:

Զրի համը որոշվում է գոլ ջուրը ($20\text{-}30^{\circ}\text{C}$) զգայարաններով փորձարկումով: Ընդ որում, զրի համ ու հոտի զգացողությունները սյուբեկտիվ են, կապված են մարդու փորձից և որակավորումից:

Զրի համը զնահասում են բալերով՝ ըստ սանրդակի:

Խորությունը: Զրի խտությունը քանակապես որոշվում է որոշակի զերմաստիճանում դրա զանգվածի և ծավալի հարաբերությամբ: Որպես չափի միավոր ընդունված է աղագերծված (թորած) զրի խտությունը 4°C ($1.0 \text{ g}/\text{m}^3$):

Զրի խտությունը կախված է դրա զերմաստիճանից, լուծված աղերի ու զագերի, ինչպես նաև մեխանիկական խառնուրդների պարունակությունից: Ստորերկրյա զրերի խտությունը տատանվում է $1.0\text{-}1.01 \text{g}/\text{m}^3$ սահմաններում և առաջին հերթին պայմանավորված է դրանց հանքայնացումով (միներալիզացիայով):

Երբեմն զրի խտությունը որոշում են ըստ դրա աղայնության մեծության՝ արտահայտված Բոմի աստիճաններով: Բոմի մեկ աստիճանը համարժեք է մեկ լիտր ջրում 10 g քլորիդային նատրիումի լուծված աղերով զրի խտությանը: Զրի խտությունը, ըստ աղայնության, արտահայտված Բոմի աստիճաններով բերված է աղյուսակ 8 -ում:

Աղյուսակ 8

Զրի խորությունը լրարբեր աղայնության աստիճաններում

Աղայնությունը Բոմի աստիճանով	Զրի խտությունը, g/m^3	Աղայնությունը Բոմի աստիճանով	Զրի խտությունը, g/m^3	Աղայնությունը Բոմի աստիճանով	Զրի խտությունը, g/m^3
1	1.0000	11	1.0825	21	1.1703
2	1.0140	12	1.0907	22	1.1793
3	1.0212	13	1.0990	23	1.1896
4	1.0283	14	1.1074	24	1.1995
5	1.0358	15	1.1100	25	1.2065
6	1.0433	16	1.1247	26	1.2197
7	1.0509	17	1.1335	27	1.2301
8	1.0586	18	1.1425	28	1.2407
9	1.0664	19	1.1516	29	1.2515
10	1.0744	20	1.1609	30	1.2624

Սիլմելիություն: Զրի սեղմելիությունը ցույց է տալիս ճնշման ազդեցության տակ ծավալի փոփոխությունը: Զրի սեղմելիության աստիճանը հիմնականում կախված է դրանում լուծված գազերի քանակից, ջերմաստիճանից և քիմիական կազմից: Հեղուկի նախնական ծավալի փոքրացման չափը, որն առաջանում է դրա վրա ճնշումը 10^5 Պա մեծացնելու դեպքում, կոչվում է սեղմելիության գործակից կամ ծավալային առաձգականության գործակից (β), այն որոշվում է.

$$\beta = \frac{\Delta V}{V \Delta P} \quad (59)$$

որտեղ՝

V -ն հեղուկի ծավալն է,

ΔV -ն ծավալի փոփոխությունն է, որը համապատասխանում է ճնշման ΔP փոփոխությանը:

Ստորերկրյա ջրերի սեղմելիության գործակիցը փոփոխվում է $\beta = (2.7 \div 5) \times 10^{-4}$ Պա (Վ. Ն. Շենկաչև) սահմաններում:

Երկրակեղևի խոր մասերում ջուրը ենթարկվում է ոչ միայն ճնշման ազդեցության, այլ նաև ջերմաստիճանի և դրանում լուծված գազերի: Ընդ որում, ճնշումը նպաստում է ջրի ծավալի փոքրացմանը, իսկ ջերմաստիճանը և լուծված գազերը՝ մեծացմանը: Այդ գործոնների գումարային ազդեցության զնահատման համար օգտագործում են շերտային հեղուկի ծավալային գործակից (b) հասկացությունը, որը բնութագրվում է շերտային պայմաններում հեղուկի ծավալի (V_2) և նույն ծավալի հեղուկի զանգվածի (V_q) հարաբերությամբ 10^5 Պա ճնշման ու 20^0C ջերմաստիճանի դեպքում.

$$b = \frac{V_2}{V_{\frac{1}{2}}} : \quad (60)$$

Ստորերկրյա ջրերի համար շերտային հեղուկի ծավալային գործակիցը հազվագյուտ դեպքում է գերազանցում 1.2:

Ստորերկրյա ջրերի սեղմելիությունը ի նկատի են ունենում խորը ստորերկրյա ջրերի ուսումնասիրման, ինչպես նաև նավային և զազային հանքավայրերի ռեժիմների հաշվարկման դեպքերում:

Մածուցիկությունը: Զրի (հեղուկի) մածուցիկությունը (կամ ներքին շփում) բնութագրում է դրա մասնիկների ներքին շփման դիմադրությունը զրի (հեղուկի) շարժմանը: Զրի մածուցիկությունը գործոն է, որը պայմանավորում է շարժման փոխանցումը զրի զանգվածի բարձր արագությամբ շարժվող շերտից ցածր արագությամբ շարժվող շերտին: Այլ կերպ ասած՝ մածուցիկությունը հեղուկի այն հատկանիշն է, որ նյութը որևէ հատվածի շարժման ժամանակ մեկ այլ մասը դիմադրություն է ցույց տալիս: Որքան այդ դիմադրությունը մեծ լինի, այնքան հեղուկը դժվար կշարժվի:


Տարբերում են զրի դիմամիկ և կիմիկիկ մածուցիկություն:

Դիմամիկ մածուցիկությունը հեղուկի մի մասը մյուսի նկատմամբ տեղաշարժվելիս ցուցաբերվող դիմադրության քանակական բնութագիրն է: Այն արտահայտվում է դիմադրության ուժով, որը ցուցաբերվում է հեղուկի շերտի միավոր մակերեսին (ամ²), միավոր երկարության վրա (ամ), միավոր արագությամբ (ամ/վրկ) տեղաշարժվելիս: Քանակապես այն արտահայտվում է մածուցիկության դիմամիկ գործակցով և միավորների Համաշխարհային համակարգում (СИ) չափում է 1 Պասկալ-վայրկյան (1 Պաչվրկ): Զրաերկրաբանական գրականությունում մինչև Վերջին ժամանակներս որպես մածուցիկության միավոր օգտագործվում էր 1 սանտիպուազը ($1\mu\text{Pa}=10^{-3}$ Պաչվրկ>):

Մաքուր ջուրը 0°C-ի դեպքում բնութագրվում է 1.79×10^{-3} Պաչվրկ մածուցիկությամբ, իսկ 100°C-ի դեպքում՝ 0.28×10^{-3} Պաչվրկ, այսինքն՝ 6 անգամ փոքր: Գոյորդու մածուցիկությունը մոտ 200 անգամ փոքր է զրի մածուցիկությունից:

Ստորերկրյա զրերի մածուցիկությունը հիմնականում կախված է զերմաստիճանից և դրանցում լուծված աղերի քանակությունից (հանքայնացումից): Ընդ որում, զերմաստիճանի մեծացումով մածուցիկությունը փոքրանում է, իսկ հանքայնացման բարձրացումով՝ մեծանում (նկ. 16):

Զրի մածուցիկության վրա ճնշման և դրանում լուծված գագերի ազդեցությունն աննշան է:



Նկ. 16 Զրի մածուցիկության կախվածության գրաֆիկը ջերմաստիճանից տարրեր հանքայնացումների դեպքում (գ/վ) (ըստ Ս. Ս. Բոնդարենկոյի և ուրիշների)
1- 0 հանքայնացման դեպքում, 2- նույնը 100-ի դեպքում, 3- նույնը 140-ի դեպքում, 4- նույնը 180-ի դեպքում, 5- նույնը 220-ի դեպքում:

Կիսկութիկ մածուցիկություն: Զրի կինետիկ մածուցիկությունը բնութագրվում է կինեմատիկ մածուցիկության գործակողությունում (v), որն իրենից ներկայացնում է դինամիկ մածուցիկության և հեղուկի խտության հարաբերությունը.

$$v = \frac{\mu}{\rho} \quad (61)$$

որտեղ՝

μ -ն դինամիկ մածուցիկությունն է, Պաշվոկ,

ρ -ն զրի (հեղուկի) խտությունն է, գ/սմ³:

Զրի կինեմատիկ մածուցիկության գործակցի չափման միավորը հանդիսանում է ստոլկում՝ C (1C=1սմ²/վրկ):

Էլեկտրահասղորդականություն: Ստորերկրյա զրերի էլեկտրահասղորդականությունը պայմանավորված է նրանով, թե զրերը որքանով են էլեկտրոլիտային լուծույթ հանդիսանում, այսինքն՝ էլեկտրահասղորդա-

կանուքունը ուղղակի կապի մեջ է ջրում լուծված աղերի քանակի հետ: Էլեկտրահաղորդականությունը գնահատվում է տեսակարար էլեկտրական դիմացքությամբ, որը չափվում է Օհմխմետրերով (Օհմչ): Քիմիապես մաքոր (թրուած) ջուրը էլեկտրահաղորդիչ չէ, այն քաղցրահամ ջրերի համար տատանվում է 3×10^{-5} մինչև 3×10^{-3} Օհմչ սահմաններում, իսկ աղահամ ջրերի համար՝ 5×10^{-3} -ից մինչև 1.2×10^0 Օհմչ սահմաններում: Ջրի այս հատկանիշը կարևոր ցուցանիշ է հանդիսանում ստորերկրյա ջրերի հանքայնացման (միներալիզացիայի) աստիճանը աղաշափային սարքերի միջոցով որոշելու համար:

Ռադիոակտիվությունը: Ստորերկրյա ջրերի ռադիոակտիվությունը որոշվում է դրանցում ուրանի, ռադիումի լուծված միացությունների, ինչպես նաև իներտ գագերի՝ ոչ ռադիոակտիվ հելիումի և ռադոնի (ռադիումի գազային էմանացիայի) պարունակությամբ: Ռադիոակտիվության միավորը СИ համակարգում հանդիսանում է Բեկկեռելը (ԲԿ)՝ նուկլիյի 1 տրոհման ակտիվությունը 1 վայրկյանում: Ստորերկրյա ջրերի ռադիոակտիվ հատկություններն, ըստ ծավալային հարաբերակցության, ընդունված է արտահայտել տեսակարար միավորներով: Ջրաերկրաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել, ըստ որում արդեն հնացած, ռադիոակտիվության գնահատման միավորների 1էման/ $\text{L} = 0.28$ միավոր $\text{Մախն}=1 \times 10^{-10}$ կյուրի/ L (կյուրի 1 լիտրում) կամ 10 նկյուրի/ L (նանո-կյուրի 1 լիտրում)= $3.7\text{ԲԿ}/\text{դմ}^3$: Ստորերկրյա ջրերը կարող են պարունակել նշանակալի քանակությամբ ($1-30\text{ԲԿ}/\text{դմ}^3$) թթու մազմատիկ և երթեմն նատվածքային ապարներում մինչև 150 հազԲԿ/ դմ^3 ռադոն ուրանային հանքավայրերի թթվեցման գոնաներում: Ջրեր, որոնք պարունակում են $1-70\text{ԲԿ}/\text{դմ}^3$ և օգտագործվում են ջերմուկարուժական (հանքաբուժական) նպատակներով:

Զրում, ռադիումի էմանացիաների քանակից կախված, արտահայտված էմաններով, Ե. Ս. Բուրկսերը կատարում է հետևյալ դասակարգումը.


Ծատ ուժեղ ռադիոակտիվ	մեծ 10000
Ուժեղ ռադիոակտիվ	1000-10000
Ռադիոակտիվ	100-1000
Թույլ ռադիոակտիվ	10-100
Անշափ թույլ ռադիոակտիվ	փոքր 10

Վերջին տարիներին սևեռուն ուսումնասիրությունների օբյեկտ է դարձել ստորերկրյա ջրերում հելիում զազի պարունակության որոշումը: Հելիումը, որն իրենից ներկայացնում է ռադիոակտիվ տարրերի տրոհման արգասիք, անընդհատ առաջանում է երկրակեղևում և համեմատաբար բափանցելի զոնաներով միզրացվում է երկրի մակերևույթ: Հելիումային հանույթի ժամանակ շատ լավ գծանշվում են երկրակեղևի խախտման զոնաները, դրանց հատման հանգույցները: Բացահայտվում են ֆունդամենտի (հիմքի) և այն ծածկող նստվածքային ապարների կառուցվածքային առանձնահատկությունները: Հելիումը օգտագործվում է նաև որպես ինդիկատոր (քիմիական ռեակտիվ) ռադիոակտիվ միներալների հանքավայրերի որոնման ժամանակ:

Ուրան և ռադիում պարունակող ստորերկրյա ջրերի ռադիոակտիվությունը միշտ էլ կապված է ջրապարունակ ապարների ռադիոակտիվ տարրերի պարունակության հետ, դրա համար էլ առավելագույն ռադիոակտիվությամբ օժտված են թրու մազմատիկ ապարներում պարունակված ջրերը, իսկ նվազագույնը՝ նստվածքային ապարների ջրերը: Ռադիում պարունակող ջրերի օգտագործումն անթույլատրելի է, քանի որ այն կուտակվում է մարդու օրգանիզմում:

6.3. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԵՑՆԵՐԸ

Ստորերկրյա ջուրն իրենից ներկայացնում է բնական բարդ հեղուկ, իր կազմում պարունակելով շատ քիմիական տարրեր՝ պարզ և բարդ իոնների տեսքով, համալիր միացություններ, լուծված կամ զազած մոլեկուլներ: Դրանում առկա են բարդ օրգանական միացություններ, շատ կենդանի և անկենդան միկրոօրգանիզմներ (մանրէներ), տարրեր կազմի մեխանիկական և կողմիդային նյութեր (Ակ. 17):



Նկ. 17 Քնական ջրի սխեմա (ըստ Ա. Մ. Օվչիննիկովի)

Բոլոր այդ միացությունների տարրեր հարաբերակցությունները պայմանավորում են ստորերկրյա ջրերի քաղաքիվ այլազանությունները: Երկրակեղեցում հայտնի 87 կայուն քիմիական տարրերից 70-ից ավելին հայտնաբերված են ստորերկրյա ջրերում:

6.3.1. ԻՌԱՎ-ԱՊԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Ստորերկրյա ջրերում տարածված միներալային բաղադրիչները՝ (կոմպոնենտները) կախված դրանց կոնցենտրացիաներից (պարունակությունից, կուտակումից) ստորաբաժանվում են մակրո, միկրո ուլտրաբաղադրիչների և ռադիոակտիվ տարրերի:

Ջրի քիմիական կազմի մեջ մտնող այն իոններն ու միացությունները, որոնք հանդիպում են ավելի հաճախ ու առավել մեծ քանակություններով, անվանում են մակրոբաղադրիչներ կամ *գլխավոր իոններ*: Դրանց շարքին են դասվում Cl^- , SO_4^{2-} , HCO_3^- անիոնները, Na^+ , Mg^{+2} , Ca^{+2} կատիոնները, ինչպես նաև H_4SiO_4 սիլիկաթռուն, որը ստորերկրյա ջրերում հանդես է գալիս գլխավորապես մոլեկուլի տեսքով: Երբեմն այս շարքին են դասվում նաև ազոտի միացությունները և որոշ տարրեր (K , Si , Fe , Al), որոնք լայնորեն տարածված են երկրա-

կեղևում և որոշակի պայմաններում ձևավորում են ստորերկրյա ջրերի շատ քիչ հանդիպող առանձնահատուկ տիպեր:

Մակրոբաղադրիչները սովորաբար կազմում են ջրում լուծված բոլոր աղերի 90-95% (քաղցրահամ ջրերի) և 99%-ից ավելի հանքայնացված ջրերում, որոշում են ջրի քիմիական տիպն ու հատկությունները:

Սովորաբար քաղցրահամ և թույլ աղահամ ջրերում գերիշխում են HCO_3^- և Ca^{2+} իոնները, բարձր հանքայնացման ջրերում՝ Cl^- և Na^+ իոնները, իսկ SO_4^{2-} և Mg^{2+} իոններն ավելի քննորոշ են միջին հանքայնացում ունեցող ստորերկրյա ջրերին: Այս երևոյթի պարզեցված բացատրությունը կայանում է հետևյալում.

Ca -ի կարբոնատային աղերի թույլ լուծելիությունը պայմանավորում է հիդրոկարբոնատ և կարբոնատ իոնների փոքր կոնցենտրացիան՝ 1000 մգ/լ-ից ոչ ավելի: Ca -ի սուլֆատի համեմատաբար թույլ լուծելիությունը սահմանափակում է սուլֆատ իոնի պարունակությունը որոշակի սահմաններում: Ամենաբարձր լուծելիությունը նկատվում է քլորիդային աղերի մոտ, որի հետևանքով քնական ջրերում քլորի պարունակությունը կարող է հասնել բարձր կոնցենտրացիայի:

Ջրերում միկրոբաղադրիչները պարունակում են առավել քիչ քանակություններով և քնութագրում են ջրի սպեցիֆիկ (յուրահատուկ) կազմը: Միկրոբաղադրիչների շարքին են դասվում մի քանի տասնյակ իոններ, որոնցից գլխավորներն են հանդիսանում Mn, Cu, Zn, Pb, Br, J, N (ամոնիոմի, օխտրատների և օխտրիտների ձևով) և այլն:

Ջրում ուղղամիկրոբաղադրիչները (գերբիչ) հանդիպում են աննշան քանակություններով ($<10^{-2}$ մգ/լ): Դրանցից են՝ Au, Bi, Te, Cd, Se և այլն:

Ստորև բերվում են հիմնական քիմիական մակրոբաղադրիչների հակիրծ տվյալները:

Քլոր իոնը (Cl^-) ունի տեղաշարժման բարձր հատկություն: Նատրիում, մազմեզիում և կալցիում քլորիդային աղերի լուծելիությունը շատ բարձր է: Դրա հետևանքով քլորիդային իոնները ջրի հետ անարգել տեղաշարժվում են:

Քնական ջրերում, քլորիդային իոնների գլխավոր աղբյուր է հանդիսանում հալիտը, ինչպես ապարներում ցրված, այնպես էլ շերտերի և

շտոկների (հանքազանգված, ապարազանգված) տեսքով: Զլորը ջրի մեջ կարող է անցնել նաև մազմատիկ ապարների (այն մտնում է քլորապատիտ, սոդալիտ միներալների կազմի մեջ) հողմնահարման, հրաբխային գագերի և խորքային մետամորֆոգեն ֆլյուիդների հետ: Զլորի որոշ քանակություն պարունակվում է մքննորտային տեղումներում՝ հատկապես մերձծովյա և մերձօվկիանոսային տարածքներում (Էօլյան գործընթացներ):

Չորային շրջաններում, քլորի իոնները կարող են մուտք գործել ստորերկրյա ջրեր աղուտների (սոլանչակներ) տարալուծման ժամանակ: Վերջապես ահոելի քանակությամբ քլոր ստորերկրյա ջրոլորտ մուտք է գործում կենցաղային և արդյունաբերական հոսքաջրերի միջոցով:

Ստորերկրյա ջրերում քլորի պարունակությունը տատանվում է մեծ սահմաններում (մակրոկոնսային ջրերում)՝ գ/լ-ի հազար երրոդական մասերից (հյուսիսի գրունտային ջրերում) մինչև 340-300 գ/լ (աղաջրերում): Զլորի պարունակությունը գրունտային ջրերում հյուսիսից դեպի հարավ և ուղղաձիգ կտրվածքում որպես կանոն մեծանում է:

Խմելաջրերում քլորի պարունակությունը չափով է գերազանցի 0.35գ/լ-ը:

Սոլֆատ իոնը (SO_4^{2-}) բնական ջրերում հանդիսանում է կարևոր ներից մեկը և լավ դյուրաշարժ է: Բնական ջրերում SO_4^{2-} -ի պարունակությունը լիմիտավորվում է Ca^{2+} իոններով, որոնք առաջացնում են համեմատաբար քիչ լուծվող CaSO_4 : Օրում սոլֆատների ի հայտ գալու հիմնական աղբյուր են հանդիսանում նստվածքային ապարները, որոնց կազմի մեջ մտնում են զիաս, անհիդրիտ, միրաբիլիտ, գլաքերիտ և այլն: Զրերի SO_4^{2-} իոններով հարստացման գործում մեծ դեր են խաղում սոլֆիդների օքսիդացման գործընթացները: Նշանակալից քանակությամբ սոլֆիդներ և հատկապես H_2S անջատվում է հրաբխային ժայրքումների ժամանակ և օքսահիդացվում է մինչև SO_4^{2-} -ի:

Չորային շրջաններում մակերևությային և գրունտային ջրերը հարստանում են սոլֆատներով աղուտների տարալուծման ժամանակ,

Երբեմն դրանք բացի հալիտից պարունակում են նաև զիստ ու միրաբիլիտ: Սուլֆատի աղբյուրներից են մթնոլորտային տեղումները:

Խմելաջրերում սուլֆատի պարունակությունը չպեսք է գերազանցի 0.5գ/լ-ը:

Հրդրուկարբոնատ և կարբոնատ իոնները (HCO_3^- և CO_3^{2-}) հանդիսանում են բնական ջրերի քիմիական կազմի կարևոր բաղկացուցիչ մասեր: Այս երկու իոններն ել հանդիսանում են ածխաթթվի արտադրյալ ու լուծույթում գտնվում են իրար մեջ ու որոշակի քանակային հարաբերությամբ ածխաթթվի հետ՝



Թթու ջրերում հիդրոկարբոնատային իոնների պարունակությունը գործնականում հավասար է զրոյի, իսկ չեզոք և հիմնային ջրերում դրանք գերակշռող են հանդիսանում: Դրա համար ել բնական ջրերում CO_3^{2-} իոնները գտնվում են համեմատաբար հազվադեպ: HCO_3^- և CO_3^{2-} իոնների առաջացման աղբյուր հանդիսանում են տարբեր կարբոնատային ապարները (կրաքարեր, դոլմիտներ, մերգելներ և այլն) և շատ նստվածքային ապարների կարբոնատային ցեմենտը:

Այդ իոնների երկրորդ գլխավոր աղբյուրը հանդիսանում է ջերմամետամորֆային, կենասարիմիական, հրաբխային, մընոլորտային ծագման կամ մարդու տնտեսաարդյունաբերական գործունեության հետ կապված ածխաթթուն:


HCO_3^- իոնը կոչվում է, այսպես կոչված, «սողային» ջրերի կազմի հիմնական կոմպոնենտը: Քանի որ HCO_3^- և CO_3^{2-} իոնները հեշտությամբ հիդրատացվում (ջրօքիդանում) և բարձրացնում են հեղուկի ներքին կառուցվածքային ճնշումը, ուստի դրանց տեղաշարժը դեպի խորը հորիզոններ դժվար է կատարվում:

Նաորիում իոնը (Na^+) կատիոնների մեջ ըստ տարածվածության գրավում է առաջին տեղը, քանի որ նատրիումի բոլոր աղերն ունեն բարձր լուծելիություն: Քաղցրահամ ջրերում Na^+ -ը հաճախ գրավում է երրորդ տեղը, իսկ աղային ջրերում այն գերակշռում է:

Ջրում Na^+ -ի կարևոր աղբյուր են ծառայում դրա աղային կուտակները (քարաղ, միրաքիլիտ և այլն), հրաբխային ապարների հողմնահարման նյութերը՝ այլումնախիլկատները (ալբիտ, պլազմիկլազ, նեֆելին և այլն): Բացի այդ՝ նատրիում իոնը դրսում է հանվում ապարների և հողերի կլանող կոնվեքսից (համալիրից) կալցիում և մագնեզիում իոնների կողմից, ինչը նպաստում է դրա կուտակմանը ստորերկրյա ջրերում:

Խմելաջրերում նատրիումի պարունակությունը չպետք է գերազանցի 0.2գ/լ: Գոյություն ունեն նաև դրա նորմերը ոռոգման և տեխնիկական ջրերի համար:

Կալցիում իոնը (Ca^{2+}) լայն տարածում ունի թույլ հանքայնացում ունեցող ստորերկրյա ջրերում, մասնակցում է կենսաբանական գործընթացներին և լավ սորբիացվում է: Բնական ջրերում Ca^{2+} -ի կարևոր աղբյուրներից են կրաքարերը, դոլոմիտները և ապարների կրաքարային ցեմենտը, որոնք ջրում տարալուծվում են ըստ հետևյալ սխեմայի՝



Ջրերում որոշակի քանակությամբ կալցիում է անցնում՝ ի հաշիվ գիպսի լուծումի և կալցիտ պարունակող սիլիկատների հողմնահարման:



Մագնեզիում իոնն (Mg²⁺) իր հատկանիշներով նման է կալցիումին, սակայն կենսաբանական ակտիվությունը արտահայտվում է թույլ: Մագնեզիումի իոնները մասնակցում են բոլոր ստորերկրյա ջրերում, սակայն շատ հազվագյուտ դեպքերում են գերազանքող դերում հանդես գալիս: Մագնեզիումի իոնները ջրի մեջ են անցնում դոլոմիտների, մերգելների լուծումից կամ հիմնային, ուլտրահիմնային և այլ ապարների հողմնահարումից:

Կալիում իոնը (K^+), ըստ քիմիական հատկանիշների և երկրակեղևում պարունակվող քանակի, նմանակվում է նատրիումին: Կալիումը, ինչպես նաև նատրիումն առաջացնում են հեղտ լուծվող միացություններ (KCl , K_2SO_4 , K_2CO_3): Սակայն կալիումի իոնները ջրում պարունակվում են աննշան կոնցենտրացիաներով և հանդիպում են թույլ հանքայնացում ունեցող ջրերում: Ստորերկրյա ջրերում կալիումի չնշին քանակությունը պայմանավորված է նրանով, որ լուծույթներից

հանվում է կենդանական և բուսական օրգանիզմներով: Բացի այդ՝ մտնում է երկրորդային միներալների բյուրեղային ցանցի մեջ, որոնք դժվար են լուծվում ջրերում և հեշտ են արտորբացվում կավային ապարների կողմից:

Ազուրի միացությունները ստորերկրյա ջրերում հանդիպում են NH_4^+ (ամոնիում), NO_2^- (նիտրիտ) և NO_3^- (նիտրատ) իոնների տեսքով:

Սովորական պայմաններում NH_4^+ իոնն անկայուն է և ազատ թթվածնի առկայության ժամանակ մասրեների ազդեցության տակ անցնում է նիտրիտների, որոնք հետագայում օքսիդացվում են մինչև նիտրատների՝ ըստ հետևյալ ռեակցիաների՝



NH_4^+ և NO_2^- -ի պարունակությունը սովորաբար արտահայտվում է միջիգրամների հարյուրերորդականների, հազվագյուտ դեպքերում տասնորդականների մասերով մեկ լիտր ջրում: Այդ իոնների քարձր քանակությունը ստորերկրյա ոչ խորր տեղադրված ջրերում վկայում է դրանց թարմ օրգանական աղտոտվածությունը, քանի որ ամոնիումը հիմնականում առաջանում է բուսական և կենդանական ծագման նյութերի կենսաբանական տարալուծման գործընթացների արդյունքում: NO_3^- , հանդիսանալով որպես ազոտային միացությունների օքսիդացման վերջնական արդյունք, ցույց է տալիս ջրի հին աղտոտվածությունը կամ աղտոտման օջախի հեռու գտնվելը:

Սիլիցիումը (կրեմնիում) երկրակեղևում համարվում է ամենատարածված տարրը թթվածնից հետո: Սակայն սիլիկատային միներալների և սիլիկատային աղերի դժվար լուծելիության հետ կապված դրա պարունակությունը ստորերկրյա ջրերում, որպես կանոն, համեմատարար մեծ չէ: Ստորերկրյա ջրերում ներկայանում է, գլխավորապես երկօքսիդի և սիլիցիումի ձևով:

Սիլիկաթթվի մեծ պարունակություն (մինչև 40.9գ/լ) դիտվում է ջերմային ջրերում, օրինակ՝ Կամչատկայի, Նոր Զելանդիայի և այլնի աղտավային ջերմային ($42\text{-}100^\circ\text{C}$) հեյզերներում, քանի որ սիլիկատների լուծելիությունը ջերմաստիճանի քարձրացման հետ մեծանում է:

Բացի լուծված սիլիկաթթվից՝ այն հաճախ տեղաշարժվում է կրկնիների տեսքով: Մասնակցում է կենսաքիմիկական գործընթացներին և օգտագործվում է որպես կարևոր հանքաջրաբուժական (ջերմաջրաբուժական) կոմպոնենտ մասնավորապես մաշկային հիվանդությունների ժամանակ:

Երկարը երկրակեղևում ունի լայն տարածում այնպիսի միներալներում, որպիսիք են պիրօքսինները, ամֆիբոլները, մագնետիտը, պիրիտը, գրանիտը և այլն: Այդ միներալների հողմնահարման ժամանակ ազատվում է մեծ քանակությամբ երկար, որը սովորաբար անցնում է համեմատաբար դժվար լուծելի և կայուն երկարօքսինների:

Ստորերկրյա ջրերում երկարի միացությունները հաճախ գտնվում են երկօքսիդի (Fe^{2+} իոնի ձևով) կամ օքսիդի (Fe^{3+} իոնի ձևով) տեսքով: Երկարի երկօքսիդային միացությունները ջրում կայուն չեն և երբ հասանելի է դառնում թթվածինը դրանք հեշտությամբ օքսիդանում և առաջացնում են երկարի օքսիդի հիդրօքսիդ (հիդրատ), որոնք ստորերկրյա ջրերում հանդես են գալիս կոլիխների տեսքով:

Ստորերկրյա ջրերում երկարի պարունակությունը հասնում է միքանի տասնյակի և երբեմն 100մգ/լ-ի:

Ալյոսմինումը երկրակեղևում առավել շատ տարածված տարրերից մեկն է: Սակայն, ստորերկրյա ջրերում առանձնանում է իր բույլ տեղաշարժով:

Սիկրոբաղադրիչներ: Սիկրոբաղադրիչներ ասելով հասկանում են քիմիական այն տարրերը, որոնց ցածր քանակային պարունակության և դժվար լուծվող միացություններում կապված լինելու պատճառով ստորերկրյա ջրերում հանդիպում են հազվադեպ և աննշան քանակություններով (փոքր 10մգ/լ-ից, երբեմն մինչև 100մգ/լ):

Չնայած միկրոբաղադրիչները ստորերկրյա ջրերում գտնվում են շատ չնշն քանակությամբ, սակայն մեծ ազդեցություն են ցույց տալիս կենսաբանական գործընթացների վրա: Սիկրոբաղադրիչների շարքին են դասվում մի քանի տասնյակ իոններ, որոնցից զիսավորներն են՝ Mn, Cu, Zn, Br, J, N և այլն: Ստորերկրյա ջրերում միկրոբաղադրիչների ուսումնասիրումն ունի տեսական և գործնական մեծ նշանակություն:

Շատ միկրոբաղադրիչներ (J, F, Zn, Cu, Co, B և այլն) քողնում մեծ ազդեցություն են մարդու, կենդանիների և բույսերի վրա: Այդ միկրոբաղադրիչները մարդու օրգանիզմ են մտնում ջրի և սննդի միջոցով: Ջրում և հողում միկրոբաղադրիչների քիչ կամ շատ լինելը բերում է մարդկանց հիվանդացման, այդպիսի հիվանդություններն ընդունված են վանել երկրաբիմիական տեղածարակ (Ենթեմիա):

Որոշ միկրոբաղադրիչներ (Br, J, Sr և այլն) օգտագործվում են ստորերկրյա ջրերի ձևափորման պայմանների պարզաբանման համար: Ստորերկրյա ջրերում միկրոբաղադրիչների մեծաքանակությունը քոյլ է տալիս որպես միներալային հումք, հանել և օգտագործել ժողովրդական տնտեսության մեջ (J, Br, B, Li և այլն):

Ստորերկրյա ջրերում միկրոբաղադրիչները օգտագործում են նավթի, գազի, աղերի և բազմաթետաղ հանքավայրերի որոնման ժամանակ: Դրանք ուսումնասիրվում են քուժական տեսանկյունից, քանի որ դրանցից մի քանիսը ջրին տալիս են քուժի հատկություն:

Ստորերկրյա ջրերը պարունակում են ջրածնի (դեյտերիում H^2 , տրետիում H^3), թթվածնի O^{16} , ածխածնի C^{12} , C^{13} , C^{14} , ծծմբի S^{32} և S^{34} ռադիոակտիվ ուրան U^{238} , U^{234} , Ra^{226} և այլ իզոտոպներ:

Ուսդիուակտիվ լրարրեր: Ուսդիուակտիվ տարրերից կարելի է նշել U , Th , Ra , Rn : Այս տարրերի տարրերից զիջը համարվում է դրանց միջուկի անկայունությունը, որի արդյունքում տեղի է ունենում անընդհատ տրոհում և նոր տարրերի կամ տվյալ տարրի իզոտոպների առաջացում, ինչպես նաև ռադիոակտիվ ճառագայթների առաջացում:

Տարրերի իզոտոպային կազմը սպորերկրյա ջրերում: Բացի վերը դիտարկված ջրի թթվածնի և ջրածնի իզոտոպներից՝ առավել եական նշանակություն ունեն ծծմբի (S^{32} և S^{34}), ածխածնի (C^{12} , C^{13}) որոշ ռադիոակտիվ իզոտոպ-ինդիկատորներ (^{35}S , ^{51}C , ^{50}Fe , ^{131}J), ինչպես նաև տիեզերածնին (^{14}C), բնականում կայուն իզոտոպները:

Կայուն իզոտոպները օգտագործում են ստորերկրյա ջրերի քիմիական պարզելու համար ծագումը: Այսպես, օրինակ, ըստ 2H և ^{18}O իզոտոպների պարունակությունների՝ կարելի է տարրերակել ջրի սեղմնենացիոն ծագումը և ինֆիլտրացիոնը: Այդ նպատակների համար կարե-

լի է օգտագործել նաև ուրանի ռադիոակտիվ իզոտոպները: Օրինակ ^{234}U / ^{238}U -ի հարաբերության մեծությունը նակերևութային ջրերի համար հավասար է 1.25, գրունտային ջրերի՝ 1.2-2.0 և տեկտոնական խախտումների հետ կապված խորը տեղադրված ջրերի համար՝ 3-10:

Ռադիոակտիվ տարրերի (^3T , ^{14}C և այլն) տրոհման աստիճանի գնահատականը օգտագործվում է ստորերկրյա ջրերի հասակի որոշման համար: Բացի նշվածներից՝ ստորերկրյա ջրերի հասակի որոշումը հեռանկարում հնարավոր է օգտագործել ^{32}S (կիսատրոհումը մինչև 3000 տարի), ^{36}Cl -ը (մինչև 1.5 մլն. տարի):

Վերջին ժամանակներու իզոտոպների ջրաերկրաքիմիան ինտենսիվ զարգանում է: Ջրաերկրաբանական նպատակների համար դիտարկվում են ^7Be , ^{10}Be , ^{22}Na , ^{31}Cr և այլն իզոտոպների օգտագործման հնարավորությունները:

Կողիդմաներ: Որոշ քիմիական տարրեր, ստորերկրյա ջրերում ի վիճակի չեն տեղաշարժվելու իոնների ձևով (ալյումինում, երկաք և այլն): Դրանց տեղաշարժումը երկրակեղևում սովորաբար տեղի է ունենում կոլիդների տեսքով: Կողիդային մասնիկների չափերը փոփոխվում են 10^{-4} -ից մինչև 10^{-5} մմ սահմաններում, այսինքն՝ դրանք 10 անգամ մեծ են հեղուկի իրական մասնիկներից: Օրինակ՝ սիլիկատների կողիդային մասնիկներում գտնվում է մի քանի հարյուր մոլեկուլ [35]:

Կողիդները (կողիդ լուծույթները), տարասեռ դիսպերս համակարգեր են, որոնք կազմված են դիսպերս միջավայրից և դիսպերս փուլից: Վերջինն իրենից ներկայացնում է նուրբ փոշիացած մասնիկներ (միցելաններ), իսկ դիսպերս միջավայրը՝ զանգված, որում բաշխվում է դիսպերս փուլը:

Կողիդները կարող են լինել կարծր, հեղուկ և գազանման: Կողիդների տարատեսակներ են մելերը և գոլերը:

Զոլերը տարակազմ, ծայրահետ ցրվածության (դիսպերս) լուծույթների համակարգեր կամ կողիդ լուծույթներ են: Զոլերի մոտ, ի տարրերություն մելերի, դիսպերս փուլի մասնիկները (միցելանները) տարածական կառուցվածքով կապված չեն և դրանք զանազանում են ըստ դիսպերս միջավայրի բնույթի, ինչպես օրինակ՝ ջրազոլեր, աերոզոլեր, օրգանոզոլեր և այլն, որոնցում դիսպերս միջավայր են ծառայում համապատասխանաբար ջուրը, օդը և օրգանական հեղուկները:

ԺԵԼՐ (դոնդողանման նյութ) հեղուկ միջավայրում հավասարաչափ բաշխված մասն մասնիկներից առաջացած դոնդողանման զանգված է, ունի առաձգականություն, որոշ ճկունություն և ձևը պահպանելու հատկություն:

Կողոդիները կարևոր դեր են խաղում էնդոքեն (ներծին) մետաղային հանքավայրերի ձևավորման գործում:

6.3.2. ԶՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Զրի քիմիական կազմի հիմնական հատկանիշներին կարելի է դասել ջրի հանքայնացումը (միներալիզացիան), ջրածնային ցուցիչը, օքսիդա-վերականգնման պոտենցիալը, ջրի կոշտությունը և ազրեսիվությունը [11]:

Զրի հանքայնացում (միներալիզացիա): Զրի հանքայնացման տակ հասկանում են միավոր ծավալ ջրում լուծված կարծր միներալային մասնիկների գումարային կշիռը կամ քիմիական անալիզով որոշված բոլոր միներալային նյութերի ընդհանուր կշռային պարունակությունը: Այդ նյութերը կարող են պարունակել ինչպես իոնների, այնպես էլ կոլորիդների տեսքով: Տարրերում են հանքայնացման բնույթ և մեծություն (աստիճան) հասկացությունները: Զրի հանքայնացման բնույթը պայմանավորված է ջրի քիմիական տիպով: Հանքայնացման աստիճանի արտահայտման միանշանակ մեծություն գոյություն չունի, ներկայումս ընդունվում է հետևյալ մեծություններից որևէ մեկը՝ 1) չոր (կոշտ) մնացորդը, 2) իոնների գումարը, 3) իոնների և կոլորիդների հանքագումարը, 4) հաշվարկային չոր մնացորդը:

Չոր մնացորդը որոշվում է որոշակի ծավալի ջրի գոլորշիացման և մնացած նյութի 110°C ջերմաստիճանում չորացումից հետո ստացված միներալային և օրգանական միացությունների զանգվածի (կշռի) հարաբերությունը ջրի ծավալին կամ այդ ծավալ ջրի զանգվածին (աղացրերի համար): Այս ջրերի (ծովերի) հանքայնացումը արտահայտվում է նաև պրոմիներով (հազարերորդ մաս % կամ %-ով), այսինքն՝ քիմիական տարրերի քանակը գումարներով՝ 1000 գ ջրում ծովի ջրի միջին աղիությունը 35% է կամ 3.5%:

Հաշվարկային չոր մնացորդը իրենից ներկայացնում է իռնների (անհոնների և կատիոնների) գումարը կամ իռնների և կողիդների հանրագումարը, սակայն դրանցում վերցվում է հիդրոկարբոնատ իռնի կեր:

Զրի հանքայնացման մեծությունը սովորաբար արտահայտվում է գ/լ-երով, մգ/լ-ներով, աղաջրերի համար նաև գ/կգ-ներով, մգ/կգ-ներով: Վերջինիս դեպքում հաշվի է առնվում զրի խտությունը:

Զրի հանքայնացման անմիջական մոտավոր մեծությունը կարելի է որոշել նաև զրի տեսակաբար էլեկտրահաղորդականության աստիճանով՝ հասուլ սարքերի (աղաչափերի) օգնությամբ: Էլեկտրահաղորդականությունը ջրային հեղուկն իր միջով էլեկտրական հոսանք անցկացնելու ունակությունն է քվային արտահայտմամբ: Ընդ որում չափակարգումը զրի հանքայնացման և էլեկտրահաղորդականության միջև այսպիսին է՝ զրի հանքայնացման 1.0 և 1.5գ/լ մեծությանը մոտավորապես համապատասխանում է 2 և 3մՄմ/սմ (միկրոսիմենս/սմ) զրի տեսակաբար էլեկտրահաղորդականությանը [10]:

Որպես կանոն՝ ամենացածր հանքայնացում ունեն թույլ լուծողունակություն ունեցող միացություններ (սիլիկատներ, կարբոնատներ) պարունակող ջրերը: Ստորերկրյա ջրերի հանքայնացման ավելացումը կատարվում է ի հաշիվ դրանցում (դրանց կազմում) առավել հեշտ լուծվող միացությունների (սուլֆատներ, քլորիդներ) ի հայտ գալով, դրա համար էլ որոշակի խորությունների վրա զրի հանքայնացումում գերակշռում են տարրեր իռններ:

Հստ հանքայնացման աստիճանի՝ գոյություն ունեն ստորերկրյա ջրերի մի շարք դասակարգումներ (Օ. Ա. Ալեքին, Վ. Ի. Վերնադսկի, Մ. Ա. Գորկիչ, Ի. Կ. Չայցեվ, Ե. Վ. Պիմեկեր, Ն. Ի. Տոլստիխին, Ա. Վ. Շչերբակով և այլոց):

Հստ հանքայնացման աստիճանի՝ բնական ջրերը ստորաբաժանվում են հինգ խմբի (գ/լ-ով), որոնք ունեն առավել լայն տարածում:

Գերքաղցրահամ	մինչև 0.2
Քաղցրահամ	0.2-1.0
Թույլ աղահամ	1.0-3.0
Աղահամ	3.0-10.0
Աղի ջրեր	10.0-35.0
Աղաջրեր	35.0 և ավելի:

Համաձայն գործող նորմերի՝ խմելու ջրի հանքայնացումը չպետք է գերազանցի 1գ/լ, սակայն չորային շրջաններում օգտագործվում են նաև 2-3գ/լ չոր մնացողորով ջրեր (իհարկե, եռացնելուց հետո): Անասունները կարող են խմել ջրեր, որոնք ունեն 5գ/լ (ձիեր), 8գ/լ (ուղտեր), 12գ/լ (ոչ խարներ) չոր մնացորդ:

Ջրածնային ցուցիչ (pH): Ջրածնային ցուցիչը բնութագրվում է ջրում ջրածնային խոնների ակտիվությամբ կամ խտությամբ (կուտակմամբ): Զուրը դիսոցվում է $\text{H}_2\text{O} \leftrightarrow \text{H}^+ + \text{OH}^-$ հավասարումով: Սակայն ջրի խոնացման աստիճանը շատ թույլ է, 10 միլիոն մոլեկուլից մեկը կամ 22°C ջերմաստիճանում 1լ ջրում պարունակվող $55.51\text{g}\cdot\text{mole}$ ջրից (1000: $18.016=55.51$) միայն 10^{-7} գ-մոլ է գտնվում խոնացված վիճակում:

Ջրածնային խոնների խտացումը (կոնցենտրացիան) ջրային լուծույթում, անկախ դրանց ծագումից, որոշվում է ջրի խոնային արտադրյալով (K_b):

$$K_b = [\text{H}^+] * [\text{OH}^-]$$

Ջրածնի և հիդրօքսիլի արտադրյալը ջրի տվյալ ջերմաստիճանում հաստատում մեծություն է, որը 22°C ջերմաստիճանում հավասար է.

$$[\text{H}^+] * [\text{OH}^-] = 10^{-14}:$$

Չեզոք ջրում H^+ և OH^- խոնների կոնցենտրացիաները իրար հավասար են: Հետևապես՝ ջրածնի խոնների կոնցենտրացիան չեզոք ջրում կազմում է.

$$[\text{H}^+] = \sqrt{10^{-14}} = 10^{-7}:$$

Սակայն ջուրը, որը պարունակում է լուծված նյութեր, ունի թթվային կամ հիմնային ռեակցիա: Թթվային ռեակցիայի դեպքում $[\text{H}^+] > [\text{OH}^-]$ է, իսկ հիմնային ռեակցիայի դեպքում՝ $[\text{H}^+] < [\text{OH}^-]$:

Ջրածնի խոնի կոնցենտրացիան ընդունված է արտահայտել ոչ թե բնական թվերի ձևով (օրինակ. $[\text{H}^+] = 10^{-7}$), այլ այդ թվերի լոգարիթմ-ներով՝ վեցրած հակառակ նշանով (նշանակելով pH սիմվոլ):

Օրինակ՝

$$[\text{H}^+] = 10^{-7}, \quad \text{pH} = -\lg(10^{-7}) = 7 \quad \text{կամ} \quad [\text{H}^+] = 0.23\text{գ-մոլ/լ};$$

$$\lg 0.23 = T.3617 = -0.6383; \quad \text{pH} = -(-0.6383) = 0.6383 \quad \text{կլորացված} \\ 0.64:$$

Զքածնային ցուցանիշը (pH) ցույց է տալիս ջրի թթվայնությունն իիմնայնություն ընդհանուր վիճակը, և ինչպես հանրայնացումը հանդիսանում է ջրի կարևոր ինտեգրալ ցուցանիշներից մեկը: Ստորերկրյա ջրերը, ըստ pH մեծության, դասակարգվում են հետևյալ կերպ [11].

Շատ թքու	< 5
Թքու	5-7
Չեզոք	7
Հիմնային	7-9
Բարձր հիմնայնության	>9

Ստորերկրյա ջրերի pH մեծությունը փոփոխվում է շատ մեծ սահմաններում՝ փոքր 0-ից մինչև 2-3.5՝ ժամանակակից իրարիսականության շրջանների գերբռու ջրերում, մինչև 9-12.5 որոշ ջրերում, որոնք կապված են գերիմնային ապարների՝ սողայական և գերջրածնապարունակ աղաջրերի հետ:

Գրունտային ջրերում pH մեծությունը սովորաբար կազմում է 6.4-7.5, իսկ արտեզյան ջրերին՝ 7.3-8.5: Կախված ջերմաստիճանից և հանրայնացման աստիճանից՝ գրադացիայի (աստիճանավորնան) սահմանները կարող են տեղաշարժվել:

Խմելու ջրի մեջ pH պետք է գտնվի 6.0-9.0 սահմաններում (ГОСТ 2874-82): Գետերի և լճերի ջրերի համար pH բնորոշ մեծությունները համարվում են 6.8-8.5, իսկ օվկիանոսային ջրերի համար՝ 7.8-ից մինչև 8.3:

Օքսիդացման-վերականգնման պուրինացիալ (Eh): Այն ցույց է տալիս լուծույթներում գտնվող քիմիական տարրերի կամ դրանց միացությունների ակտիվության չափը դարձելի քիմիական գործընթացներում, որոնք պայմանավորված են լուծույթներում իոնների լիցքի փոփոխման հետ: Այդ գործընթացները կոչվում են օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ և տեղի են ունենում որոշ նյութերի կողմից էլեկտրոնների

աճատման, մյուսների կողմից դրանց ընդունման շնորհիվ: Էլեկտրոն աճատողը վերականգնողն է, որը դրանով իսկ օրսիդանում է, էլեկտրոն ընդունող օրսիդացնողն է, որը վերականգնվում է:

Նշենք, որ քիմիայում օրսիդացում է կոչվում էլեկտրոնների հեռացումը, իսկ վերականգնում՝ էլեկտրոնների ձեռքբերումը: Այս գործընթացներն ընթանում են միաժամանակ, եթե որևէ տարր օրսիդացում է, նշանակում է մեկ ուրիշի մոտ վերականգնում է տեղի ունենում: Նոյն տարրը կարող է լինել և՝ օրսիդիչ, և՝ վերականգնիչ: Լանդշաֆտներում լավագույն օրսիդիչը թթվածինն է, իսկ վերականգնիչներ են օրգանական նյութերը, երկարժեք երկարը, գազային ջրածինը:

Ստորերկրյա ջրերում առավել ակտիվ օրսիդացնող է հանդիսանում լուծված թթվածինն, իսկ դրանք հիմնական վերականգնող՝ ծծմբաջրածինն ու մի քանի օրգանական նյութեր:

Օրսիդացման-վերականգնման պոտենցիալի մեծությունը, որը գերազանցապես չափվում է պոտենցիոնալ մեքորով (գերզգայուն պոտենցիոնալ միջոցով), արտահայտվում է միլիվոլտերով (մՎ): Այդ մեծությունը հիմնականում կախված է ջերմությունից, իսկ փակ (մեկուսացված) համակարգի համար լուծույթը կազմող նյութերի հատկություններից և դրանց օրսիդացնող-վերականգնող մասերի կոնցենտրացիաներից (ջերմադիմամիկական ակտիվությունից):

Ստորերկրյա ջրերում Eh -ի մեծությունը փոփոխվում է լայն սահմաններում՝ -500-ից +700 մՎ: Մակերևութային և գրունտային ջրերը բնութագրվում են Eh -ի +150-ից մինչև +700 մՎ մեծություններով, արտեզյան ավազանների խոր հորիզոններում տեղակայված ջրերի Eh -ը՝ 0-ից մինչև -500 մՎ:

Ջրում 7մգ/լ -ից ավելի թթվածնի պարունակության դեպքում ջրի Eh կազմում է +350-ից մինչև +700 մՎ (միլիվոլտ): Ջրում ծծմբաջրածնի և օրգանական նյութերի առկայությունը ստեղծում են վերականգնողական իրավիճակ և Eh դառնում է հավասար -100 մՎ, -300 մՎ և ավելի փոքր:

Բնական ջրերի (այդ թվում ստորերկրյա ջրերի) օրսիդացման-վերականգնման պոտենցիալը թույլ է տալիս գնահատել դրանում լուծված փոփոխական վալենտականության առանձին նյութերի վիճակը և դա-

տել օքսիդացման ենթարկվող ապարների վրա ջրի ազրեսիվ ներգործության մասին:

Զրաերկրաքիմիայում կարևոր նշանակություն և առավել շատ տեղեկատվություն կարելի է ստանալ ստորերկրյա ջրերի թթվայնություն-հիմնայնություն (pH) և օքսիդացման-վերականգնման (Eh) հատկությունների տվյալների համատեղ մեկնաբանման արդյունքում: Լայն տարածում են ստացել, այսպես կոչված, Eh - pH կոորդինատներով դիագրամները, որոնք թույլ են տալիս փոփոխական վալենտականություն ունեցող տարրերի համար ստանալու հնարավոր հավասարակշռություն և միգրացիայի ձևի ակնառու պատկեր:

Ջրի կոշտություն: Ջրի կոշտությունը պայմանավորված է դրանում Ca^{2+} , Mg^{2+} , Fe^{3+} , Al^{3+} , Mn^{2+} , Ba^{2+} , Sr^{2+} իոններով: Սովորական ջրերում նշված իոնների քանակությունը, քացառությամբ Ca^{2+} և Mg^{2+} , անհամար է, դրա համար էլ ջրի կոշտությունը որոշում են վերջիններիս քանակական մեծություններից ելնելով:

Տարբերում են ջրի ընդհանուր, ժամանակավոր (վերացող, կարբոնատային) և մշտական (չվերացող, մնացորդային) կոշտություններ:

Հնդիանուր կոշտության մեծությունը որոշում են Ca^{2+} և Mg^{2+} իոնների գումարով արտահայտված միկրոամ-համարժեքներով (միջազգային միավորներում միլիմոլերով) միավոր ծավալ ջրում (մգ-համարժ./լ կամ մմոլ/դմ³): Այն որոշվում է քիմիական անալիզի միջոցով:

Ժամանակավոր կամ կարբոնակային կոշտությունը պայմանավորված է Ca^{2+} -ի և Mg^{2+} -ի կարբոնատ-հիդրոկարբոնատ միացությունների պարունակությամբ, որոնց մի մասը ջրի եռացման դեպքում նստում է: Թվապես այն հավասար է HCO_3^- և CO_3^{2-} իոնների գումարին (մգ-համարժ./լ), եթե դրանց գումարը փոքր է ընդհանուր կոշտությունից և հավասարեցվում է ընդհանուր կոշտության մեծությանը, եթե $\text{HCO}_3^- + \text{CO}_3^{2-}$ գումարը (մգ-համարժ./լ կամ մմոլ/դմ³) մեծ է դրանից:

Մշտական կամ մնացորդային կոշտությունը իրենից ներկայացնում է Ca^{2+} և Mg^{2+} միացություններ SO_4^{2-} և Cl^- անիոնների հետ և որոշվում է ընդհանուր ու ժամանակավոր կոշտությունների տարբերությամբ

(հաշվարկային է), այսինքն՝ ջրում պարունակվող Ca^{+2} և Mg^{+2} այն քանակը, որ մնում է այն եռացնելուց հետո:

Ըստ ընդհանուր կոշտության մեծության ջրերը ստորաբաժանվում են [4]:

Շատ փոփոք	մինչև 1.5
Փափոք	1.5-3.0
Չափավոր փափոք	3.0-5.4
Կոշտ	5.4-10.7
Շատ կոշտ	մեծ 10.7:

Փափոք են համարվում հյուսիսի գրունտային ջրերը, բյուրեղային (կառուցվածքային) ապարների հետ կապված ջրերը, անձրևաջրերը: Մեծ կոշտությամբ են օժտված կրաքարերի, դոլոմիտների և այլ կարբոնատային ապարների հետ կապված ստորերկրյա ջրերը:

Ջրի կոշտությունը դիտվում է որպես շատ կարենոր հատկանիշ: Կոշտ ջրում օճառը դժվար է փրփրում, դժվար է եփվում սննդամթերքը, շոգեկաթսաներում կոշտ ջուրը նստվածք է առաջացնում և այլն: Այդ պատճառով կոշտ ջուրը չի կարելի օգտագործել կարսայատներում, սննդարդյունաբերության, դեղագործության և այլ բնագավառներում:

Խմելուջրում թույլատրելի է համարվում մինչև 7 մմղ/դմ³ կոշտությունը:

Ջրի ազրեսիվությունը կապված է դրանում ջրածնային, ազատ երկօքսիդ ածխածնի, սուլֆատ և մազմեզիում իոնների առկայության հետ: Ջրի ազրեսիվ հատկություններն ի հայտ են գալիս ցեմենտի, բետոնի և մետաղների նկատմամբ:

Տարբերում են ջրի ազրեսիվության հետևյալ տեսակները՝ ածխարքվային, տարալուծման, ընդհանուր քրվային, սուլֆատային, մազմեզիումային և քրվածնային:

Ածխարքվային ազրեսիվությունը հանդես է գալիս բետոնի կազմի մեջ մտնող կալցիումի կարբոնատի քայլայումով, որը տեղի է ունենում լուծույթում պինդ CaCO_3 ու HCO_3^- իոնների շարժում հավասարակշռության համար անհրաժեշտ քանակից ավելի ազատ ածխարքվի ազդեցության տակ:

Եթե ջրում ազատ ածխարքվի պարունակությունը ավել է հավասարակշռության համար անհրաժեշտ քանակից, ապա այդպիսի ջուրն ըն-

դրւմակ է լուծելու կրաքարի նորանոր քանակություններ մինչև վերստին հավասարակշիռ վիճակ ստեղծվելը: Այսպիսով, ազատ ածխաթթվի հավելյալ մասը, որը ծասխավում է կառույցի (բետոնյա, երկարքետոնյա) կազմում եղած CaCO_3 -ի լուծման վրա, կոչվում է *ազրեսիվ ածխաթթու*: Բնական ջրերում ազրեսիվ ածխաթթվի պարունակությունը բH -ի նվազման հետ մեծանում է:

Ազրեսիվ ածխաթթվի պարունակությունը որոշվում է ինչպես փորձ-նականորեն հասուն եղանակով վերցված ջրի նմուշում, այնպես էլ հաշվարկային եղանակով և հասուն գրաֆիկների օգնությամբ [5]:

Կախված ջրում HCO_3^- -ի, հանքայնացման պարունակությունից, կառույցի կոնստրուկցիաներից և ջրադինամիկական պարամետրերից՝ նորմատիվներով քույլատրվում են ածխաթթվային ազրեսիվության տարրեր պարունակություններ: Այն առավել վտանգավոր պայմանների համար կազմում է 8.3-3 մգ/դմ³ [4]: Սակայն, այն ջրերը, որոնցում կապված ածխաթթվի պարունակությունը քիչ է 30մգ/լ-ից, այսինքն՝ տիրապետում են 1.4մգ-համարժ/լ-ից փոքր կարբոնատային կոշտություն, պետք է համարել ազրեսիվ, անկախ մնացած բոլոր ցուցանիշներից:

Ածխաթթվային ազրեսիվությունը չեզոքացնում են կայունացման մեթոդներով CaCO_3 , Ca(OH)_2 , Na_2CO_3 -երի օգնությամբ:

Տարալուծման ազրեսիվությունը տեղի է ունենում ի հաշիվ բետոնում կալցիումի կարբոնատի լուծման և դրանից կալցիումի հիդրօքսիդի լվացման և դրւսիանման: Այն տեղի է ունենում CO_3^{2-} և HCO_3^- իոններով ջրի չհագեցվածության հետևանքով: Կապված բետոնի կազմից (տեսակից) և պայմաններից, որոնցում գտնվում է կառույցը՝ ջուրը, համաձայն նորմերի, տիրապետում է տարալուծման ազրեսիվություն, եթե HCO_3^- -ի նվազագույն այսրունակությունը 0.4-ից մինչև 1.5մգ-համարժ/լ է:

Հնդիանուր թթվայնության ազրեսիվությունը գնահատվում է ըստ բH -ի: Զուրը կարող է ունենալ տվյալ տեսակի ազրեսիվություն, եթե բH -ը հավասար է 5.0-6.8:

Սոլֆատային ազրեսիվությունը հասուն է բարձր (280մգ/լ-ից ավելի) սոլֆատ իոն պարունակող ջրերին: Ըստ նորմերի՝ ընդունված է,

որ ջուրը տիրում է սոլֆատային ազրեսիվությանը՝ կախված կառույցի գտնվելու պայմաններից և քլոր իոնի պարունակությունից:

Սոլֆատակայուն ցեմենտների կիրառման դեպքում, ջրի ազրեսիվությունը ի հայտ է գալիս, եթե SO_4^{2-} -ի պարունակությունը 4000մգ/լ և ավելի է, իսկ սովորական ցեմենտների դեպքում՝ 250 մգ/լ և ավելի:

Մազմեզիումային ազրեսիվությունը ի հայտ է գալիս բետոնի մեջ եղած Ca կատիոնի ջրում եղած Mg կատիոնով փոխանակման գործընթացներում, որոնք բերում են բետոնի մարմնում հիդրօքսիդ մագնիզիումի փուխր նստվածքի առաջացման: Դա նկատվում է, եթե ջրերում մագնիզիումի պարունակությունը 750 մգ/լ-ից բարձր է:

Ջրի սոլֆատային և մագնիզիումային ազրեսիվությունների աստիճանը որոշում են փորձնականորեն:

Ջրի ազրեսիվությունը, լինելով մետաղների կոռոզիայի պառառ (առաջին հերթին երկարի), ունի էլեկտրաքիմիական, քիմիական և կենսաքիմիական խառնվածք (բնույթ): Էլետրաքիմիական ազրեսիվությունն առաջ է բերում մետաղի քայլայում (օքսիդացում), եթե այդ մետաղի և ջրի էլեկտրոլիտների կամ ջրային գոլորչների թթվածնի միջև առաջնում է միկրոգալվանյային հոսանքներ, քիմիապես կապված է ջրի թթվածնի հետ, ինչպես նաև երկարամանըների գործունեության հետ: Այդ ազրեսիվության բոլոր ձևերը բերում են ժանգերի առաջացման և կառույցների, մեխանիզմների, հորատանցքերի և այլնի քայլայման (կործանման):

Մետաղների կոռոզիայի դեմ պայքարելու համար պետք է դրանք պաշտպանել հակակեռողիոն նյութերով:

6.4. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻՉՄՆԵՐԸ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐՈՒՄ

Օրգանական նյութերի ստորերկրյա ջրեր հասնելու աղբյուր են հանդիսանում մթնոլորտային տեղումները և ցամաքի մակերևութային ջրերը, հողերը և հողային լուծույթները, տիղմերը և տիղմային ջրերը, ապարները, օրգանական նյութերի կուտակումները նավթային հանքակուտակումների և տորֆի ձևով:

Օրգանական նյութերից առավել շատ հանդիպում են հումինային և ճարպային բթուները, բիստումները, ֆենոլները, ինչպես նաև օրգանական ածխածինն ու ազոտը: Օրգանական նյութերի մեծ պարունակություն դիտվում է երկու դեպքում՝ 1) երբ ստորերկրյա ջրերը տեղադրված են երկրի մակերևույթին մոտ և ինֆիլտրացիոն ջրերի հետ դրանք հարատանում են կենդանական և բուսական ծագման օրգանական նյութերով, 2) երբ ստորերկրյա ջրատար հորիզոններին հարակից տեղադրված են նավթագազաքեր շերտեր:

Ստորերկրյա ջրերում օրգանական նյութերի քանակական բնութագիրն արտահայտվում է օրգանական ածխածին ($C_{օրգ}$) մեծությամբ կամ պերմանդանատիպային, բիքրոմիտային և այլն ձևի օքսիդացման համար անհրաժեշտ բրվածնի (Օ) մեծությամբ:

Տարբեր տիպի ստորերկրյա ջրերում $C_{օրգ}$ (մգ/լ-ով) միջին պարունակությունը այսպիսին է (ըստ Ս. Ռ. Կրայնովի, Վ. Մ. Շվեցի, 1980) [9,11].

Գրունտային ջրեր	25
-----------------	----

Արտեզյան ավազանների շերտային ջրեր	50
-----------------------------------	----

Նավթային հանքավայրերի շերտային ջրեր՝	
--------------------------------------	--

- գազային	35
-----------	----

- նավթային հանքավայրերի ոչ արդյունավետ	60
--	----

հորիզոններում	
---------------	--

- նավթային հանքավայրերի եզրասահմաններից դոլու	110
---	-----

ջրեր	
------	--

- նավթային հանքավայրերի մերձեզրասահմանային ջրեր	370
---	-----

- գազակուտակիչ հանքավայրերի մերձեզրասահմանային	800
--	-----

ջրեր:	
-------	--

Ստորերկրյա ջրերի օրգանական նյութերի որակական կազմը արտակարգ բարդ է: Դրանցում պարունակվում են օրգանական միացությունների բոլոր հիմնական խմբերն ու դասերը՝ ազտապարունակ, ֆուֆատապարունակ նյութեր, նավթային և ճարպային թթուներ, ֆենոլներ, բենզոլ, տոլուոլ, ամինաթթուներ, ամիններ և բիտու:

Ստորերկրյա ջրերում լուծված օրգանական նյութերն ունեն մեծ նշանակություն ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման, տեղաշարժման (միգրացիայի) և դրանցում քիմիական տարրերի կոնցենտրացիայի (կուտակման, խտացման) գործում: Որոշված է դրանց հան-

քառողջարանային դերը հանքային և խմելու ջրերում: Ջրում տարատեսակ օրգանական միացությունների կազմը և պարունակությունն անհրաժեշտ է ինանալ ստորերկրյա ջրերն արտոտումից պահպանմանն ուղղված հարցերի լուծման ժամանակ:

Ստորերկրյա ջրերում միկրոօրգանիզմները ներկայացված են տարրեր մասրեներով: Մանրէն՝ որպես կանոն, կազմված է մեկ բջջից, ունի կարծր թաղանք և այս կամ այն չափով հաստատում ձև՝ գնդածն, ձողիկածն, գազարածն: Բջջի 75-80%-ը կազմում է ջուրը:

Մանրէների մեջ կան աէլորբային (օյի առկայութամբ ապրող) ձևեր, որոնք կարող են գոյություն ունենալ և զարգանալ միայն թթվածնի առկայությամբ, և անաէլորբային ձևեր՝ անթրվածնային միջավայրում զարգացողներ: Գոյություն ունեն ձևեր, որոնք ի վիճակի են զարգանալու թթվածնի սահմանափակ հասանելիության դեպքում, դրանք կոչվում են ֆակուլտատիվ (անպարտադիր) անաէլորբներ:

Նյութափոխանակում կատարելու համար էներգիայի ստացման եղանակից կախված բոլոր միկրոօրգանիզմները բաժանվում են երկու խոչըր խմբերի՝ ֆուրուրոդիմեր, որոնք օգտագործում են արեգակնային էներգիան, և ինսուրբրոֆներ, որոնց համար էներգիայի աղբյուր են ծառայում տարրեր քիմիական միացությունները:

Ստորերկրյա ջրերում միկրոֆլորի ուսումնասիրման համար պատմականորեն ձևավորվել է երկու ուղղություն, որոնք տարրեր են ըստ ուսումնասիրությունների խնդիրների և բովանդակության՝ 1) բնական լիտոտրոֆիային միկրոօրգանիզմների ուսումնասիրում, 2) ջրի սանիտարական գնահատում, որը օգտագործվում է խմելու և տնտեսական ջրամատակարարման համար:

Ստորերկրյա ջրերում լիտոտրոֆիային միկրոֆլորան ուսումնասիրվում է՝ նպատակ ունենալով ստանալու միկրոօրգանիզմների ընդհանուր լրացածառակերը, որը հնարավորություն կտա կանխատեսելու կենսաքիմիական գործընթացները, ինչպես նաև համապատասխան մանրէների կոնկրետ ձևերը՝ կապված նավթային, գազային և մետաղական հանքավայրերի հետ:

Մանրէների թիվը (քանակը) մեկ լիտր ջրում հասնում է տասնյակ ու հարյուրհազարավոր բջիջների, իսկ բարենպատ պայմանների դեպքում՝ մինչև 2 միլիոնի: Մանրէները ստորերկրյա ջրերում տարածված են մինչև 4-5 կմ խորությունների վրա, քանի որ այդ խորություններում ջեր-

մաստիճանը սովորաբար չի գերազանցում 100°C -ը: Նեխում առաջացնող որոշ մանրէներ քայլայում են օրգանական սպիտակուցային նյութերը և դրանով իսկ մաքրում ջուրը: Այլ մանրէների կենսագործունեությունը բերում է կենսաքիմիական ծագման գագերի առաջացման:

Մանրէները ակտիվորեն մասնակցում են ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորմանը՝ իրենց կենսագործունեության ընթացքում վերամշակման ենթարկելով օրգանական և անօրգանական միացույնները:

Զրաշրջանառության ակտիվ գոնայում մեծամասամբ տարածված են նեխացնող և հիվանդահարույց ու նեխակեր, սպիտակուցային բնույթի նյութերի քայլայիշ և ջուրն ապականող մանրէները: Խոր ջրերում զարգանում են մանրէների այնալիք խմբեր, որպիսիք են մերան առաջացնող, սուլֆատանվազեցնող և այլն: Մանրէների կենսագործունեության արդյունքում գոյանում են շատ գագեր՝ H_2S , CO_2 , CH_4 , N_2 , H_2 և այլն: Շատ մանրէներ նպաստում են միներալային և օրգանական նյութերի, գագերի օքսիդացմանը:

Որոշ մանրէներ մաքրու օրգանիզմի համար համարվում են անվնաս, մյուսները՝ վնասակար: Դրա համար էլ խմելաջրերի սանիտարական գնահատման նպատակով կատարում են մանրէաբանական ուսումնասիրություններ: Զրի սանիտարական վիճակը որոշվում է ֆեկալային աղտոտվածության աստիճանով: Այդ աղտոտվածության կարևոր ցուցանիշը հանդիսանում է աղիքային ցուպիկը: Դրանով ջրի վարակվածության աստիճանը գնահատվում է հասուկ ցուցանիշներով:

Այդ կապակցությամբ ստորերկրյա ջրերի մանրէաբանական ուսումնասիրությունը պարտադիր է դառնում: Զրի սանիտարական վիճակի գնահատականը տալու համար բուժսանիտարական լաբորատորիաներում կատարվում են հասուկ մանրէաբանական անալիզներ և արդյունքում որոշվում են ջրի վարակվածության աստիճանը գնահատող ցուցանիշները: Դրանք են, այսպես կոչված, կոլի-տիտրը՝ մեկ աղիքային ցուպիկին ընկնող ջրի ծավալը մլ-ով և կոլի-հնդեքսը՝ մեկ լիտրում եղած աղիքային ցուպիկների քանակը:

Խմելաջրերում կոլի-տիտրը պետք է փոքր չփնի 300-ից, իսկ կոլի-հնդեքսը՝ ոչ ավելի 3-ից:

Հստ կոլի-տիտրի ջրերը դասակարգվում են.

Աղիքային բացիլը	մլ ջրում	Զուրը
I	100	առողջարար
II	10	բավականին առողջարար
III	1	կասկածելի
IV	0.1	անառողջարար
V	0.01	միանգամայն անառողջարար

6.5. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԳԱԶԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Ստորերկրյա ջրերում գազերը գտնվում են ինչպես լուծված, այնպես էլ ազատ վիճակում:

Գազերը ջրում գտնվում են մոլեկուլային լուծույթների ձևով: Սակայն բնական ջրերում գազերի և իոնա-ալային բաղադրիչների միջև կարող են տեղի ունենալ փոխադարձ անցումներ և փոխադարձ փոխանակումներ: Օրինակ՝ երկօքսիդից ածխածինը և հիդրոկարբոնատային ու կարբոնատային իոնները ջրում առաջացնում են հավասարակշիռ համակարգ:

Զերմանշումային պայմանների փոփոխման դեպքում լուծված գազերը կարող են անջատվել ազատ ձևով: Ազատ (կամ սպոնտային, ինքնակամ) գազը ազատ վիճակում գտնվող և ջրից պղպջակների ձևով անջատվող գազ է, որով ջուրը լրիվ հազեցված է եղել տվյալ ջերմաստիճանի և ճնշման պայմաններում: Զերմաստիճանի բարձրացման կամ ճնշման անկման դեպքում ջրում լուծված գազի մի մասն անցնում է ազատ (ինքնակամ) վիճակի: Առավել պարզորոշ ջրում լուծված գազերի ազատ վիճակի անցումը դիտվում է ջրի տաքացման կամ գազապարունակ հանքային ջրերի ինքնաթափման և ջրի արտամղման ժամանակ, որը պայմանավորված է խորը հորիզոններից մակերևույթ հանվող ջրի ճնշման կտրուկ անկումով:

Ազատ և լուծված գազի հարաբերակցության ժամանակ քանակական բնուրագիրը տվյալ ճնշման և ջերմաստիճանի պայմաններում համույթանում է որա լուծելիությունը կամ կլանելիությունը: Գազային խառնուրդը համեմատելու և հաշվարկելու համար օգտագործում են լուծելիության գործակիցը (α)՝ որոշակի ծավալի ջրում նույն ծավալի գա-

գերի լուծելիությունն է, երբ ջերմաստիճանը հավասար է 0°C -ի, իսկ ճնշումը՝ 1մթնոլորտի (0.1 ՄՊա):

Զրում լուծված գազի պարունակությունը կախված է դրա լուծելիության գործակցից, զրի ջերմաստիճանից, ճնշումից, հանքայնացումից և լուծվող գազի ներքին հատկանիշներից:

Ստորերկրյա ջրերի հիմնական գազերը հանդիսանում են թթվածինը (O_2), ազոտը (N_2), երկօքսիդ ածխածինը (CO_2), ծծմբաջրածինը (H_2S), ջրածինը (H_2), մեթանը (CH_4) և ծանր ածխաջրածինները: Ստորերկրյա ջրերը նաև պարունակում են ազնիվ գազեր (հելիում, Աեռն, արգոն, կրեպտոն և բանոն):

Ստորերկրյա ջրերի հիմնական գազերի լուծելիությունը բերվում է աղյուսակ 9-ում [4].

Աղյուսակ 9

*Գազերի լուծելիությունը բորսած ջրում
կախված ջերմաստիճանից ($\eta\text{m}^3/\eta\text{m}^3$)*

$t^{\circ}\text{C}$	$\text{Hex}10^3$	N_2	O_2	CH_4	Rn	CO_2	H_2S
0	0.0094	0.0235	0.0489	0.0556	0.510	1.713	4.650
10	0.0091	0.0186	0.0380	0.0418	0.350	1.199	3.399
20	0.0088	0.0155	0.0310	0.0331	0.255	0.878	2.582
30	0.0080	0.0109	0.0209	0.0213	0.140	0.423	1.410

Գազերի լուծելիությունը մինչև $80\text{-}90^{\circ}\text{C}$ նվազում է, իսկ հետո նորից սկսում է բարձրանալ: Մեկ ծավալ ջրում 0°C -ի դեպքում կարող է լուծվել մինչև 4.6 ծավալ ծծմբաջրածին, 1.7 ծավալ ածխաբթու գազ, որը ջերմաստիճանի բարձրացումով նվազում է (տե՛ս աղ. 9):

Գազերի լուծելիության վրա մեծ ազդեցություն է գործում ճնշումը: Այդ մեծությունների միջև, ըստ Հենրիի օրենքի, գոյություն ունի ուղիղ համեմատական կապ: Գազերի լուծելիությունը զրի հանքայնացման մեծացման հետ նշանակալից ընկանում է:

Նշված գործունների ինտեգրալ ազդեցությունն ուղղաձիգ կտրվածքում որոշում է գազերի կազմը և քանակությունը: Ինտենսիվ ջրափոխանակման գոնայում գերակշռող են ազոտ և թթվածին գազերը, որոնց գումարային պարունակությունը կազմում է 0.015-ից մինչև $0.1\text{m}^3/\text{m}^3$, ըստ խորության վերանում է թթվածինը, իսկ ջրում ազոտից բացի ի հայտ են

գալիս ծծմբաջրածինը և ածխաթթուն: Արտեզյան ավազանների կտրվածքի առավել խոր մասերում գերակշռող են հանդիսանում մեթանը և ծանր ածխաջրերը: Այս սխեման համապարփակություն չի համարվում: Երբեմն կենսածին ծծմբաջրածինը կարող է նշանակալից քանակություններով հանդես գալ գրունտային ջրերում:

Գագերն ըստ իրենց ծագման բաժանվում են հետևյալ խմբերի՝
1) *մթնոլորպային* (օդային) N_2 , O_2 , CO_2 , He , Ar), երբ ապարներ են մուտք գործում մթնոլորտից, 2) *կենսաքիմիական* (CH_4 , CO_2 , N_2 , H_2S , H_2 , O_2 և ծանր ածխաջրեր), առաջանում են օրգանական և միներալային նյութերի միկրոօրգանիզմներով տարալուծման ժամանակ, 3) *քիմիական* (CO_2 , H_2S , H_2 , CH_4 , CO , N_2 , HCl , HF , Cl , NH_3), երբ առաջանում են ջրի և ապարների փոխազդեցությամբ նորմալ և բարձր ճնշման և ջերմաստիճանային պայմաններում, 4) *ռասդիուկիպային* և միջուկային ռեակցիաների (He , Rn և այլն)[11]:

Գագերի դերը ջրաերկրաքիմիայում արտակարգ մեծ է: Դրանք, լինելով շատ լավ միզորանտներ (տեղափոխվողներ), ընդունակ են ակտիվ դիֆուզիայի, դիֆերենցացիայի (տարաքեկման), ըստ քաշի և «ջրի երես դուրս գալու», մի շարք դեսպերում ամբողջությամբ որոշում են ջրաերկրաքիմիական պայմանները: Այսպես, թթվածնի և ծծմբաջրածինի համակարգերը հանդիսանում են ներունակության հաղորդողներ և ստորերկրյա ջրերում պայմանավորում են օրսիդացման և վերականգնողական իրավիճակը: Ածխարու գազը և ծծմբաջրածինը կարևոր կոմպոնենտներ են ստորերկրյա ջրերի քիմիական կազմի կարբոնատային և սոլֆատային համակարգի հավասարակշռության համար:

Աղօնքը կիրառում են ջրերի և ապարների հասակի որոշման համար: Հելիումը համարվում է իներտ գազ, որը տիրապետում է իհանակի դիֆուզիոն հատկությունների և երկրակեղենում ինքնուրույն գազային կուտակումներ չի առաջացնում և լայնորեն օգտագործվում է՝ որպես տեկստոնական խախտումային գոնաների որոշման ինդիկատոր: Ծծմբաջրածինը, ածխաթթու գազը և ռադոնն իրենցից ներկայացնում են ակտիվ բուժիչ նյութեր՝ հիմնական հանքառողջարանային կոմպոնենտներ:

Զքաքիմիական տեսակետից առավել կարևոր են թթվածինը, երկօքսիդ ածխածինը և ծծմբաջրածինը:

Թթվածինը ստորերկրյա ջրերում գտնվում է լուծված մոլեկուլի ձևով և պարունակվում է մինչև 15-20մգ/լ: Նրա պարունակությունը սովորաբար ըստ խորության նվազում է, քանի որ այն ծախսվում է տարբեր օքսիդացնան (թթվեցնան) գործընթացների վրա: Թթվածինը հիմնականում ի հայտ է գալիս աէրացիայի գոնայի, գրունտային ստորերկրյա ջրերում և համեմատաբար ոչ խորը տեղադրված արտեզյան ջրատար հորիզոնների ջրերում:

Սակայն թվածինը $0.2\text{մ}^3/\text{դմ}^3$ քանակությամբ հայտնաբերվել է Պրիայատսկի ավազանի աղաջրերում մի քանի հազար մետր խորությունների վրա: Ըստ Ի. Ֆ. Վովկի հիավորթեզի՝ այստեղ դրա ծագումը կապված է ջրի ռադիուլիզացին (ռադիոտարալուծում) գործընթացների հետ: Ռադիոնը հանդիսանում է «ազոնալ» գազ ինչպես հատակագծում, այնպես էլ կտրվածքում: Որպես կանոն դրա տարածումը ջրում որոշվում է երկրաբանական կտրվածքում արտավիճած թրու ապարների տեղադիրքով, դրա համար էլ, այն հանդիպում է ինչպես գրունտային, այնպես էլ խորը ջրերում:

Երկօքսիդ ածխածինը քիմիապես ակտիվ է: Գրունտային ջրերում լուծված երկօքսիդ ածխածինը պարունակությունը փոփոխվում է մի քանի միլիգրամից մինչև տասնյակ միլիգրամի մեկ լիտր ջրում, իսկ խորշերի և ճեղքաերակային ջրերում կարող է հասնել տասնյակ գրամ-ների մեկ լիտր ջրում: Երկօքսիդ ածխածինն ունի կարևոր նշանակություն ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման գործում: Դրանցում հիդրոկարբոնատների առաջացումը կապված է



Ծծմբաջրածինը (H_2S) ստորերկրյա ջրերում կարող է հանդես գալ լուծված գազի, հիդրոսուլֆիդի (HS^-) և սուլֆիդի (S^{2-}) ձևերով: Ստորերկրյա ջրերում հիդրոսուլֆիդի տարածումը բույլ է ուսումնասիրված: Ծծմբաջրածինի առավել մեծ քանակություն պարունակվում է նավթագագարեր պրովինցիաների (Հրանտներ) ստորերկրյա ջրերում, ինչպես նաև ծծմբաջրածին հանքավայրերի ջրերում: Խորը տեղադրված ջրերում ծծմբաջրածինի առավելագույն պարունակությունը հասնում է մինչև 3500մգ/լ: Այն համարվում է ակտիվ վերականգնիչ:

Մերամբ և ծանր ածխաջրերը ստորերկրյա ջրերում առաջանում են կենսաքիմիական գործընթացների արդյունքում՝ հիմնականում նավթազազարեր շրջաններում և ածխային ավազաններում օրգանական նյութերի քայլայման ժամանակ, ինչպես նաև ճահիճների և տորֆերի տարածման տեղամասերում։ Մերանը և ծանր ածխաջրերը տարածված են նավթազազարեր ստորերկրյա ջրերում և երկրակեղելի խորլ հորիզոնների բարձր ճնշումային ստորերկրյա ջրերում, այստեղ դրանց բաղադրությունը կարող է լինել 50գ/լ և ավելի։

Ազողը և ազնիվ գագերը (հելիում, նեոն, արգոն, կրեստոն և քսենոն) հանդիսանում են իներտ գազեր։ Ստորերկրյա ջրերում սովորաբար հանդես են գալիս մթնոլորտային, կենսածին և ռադիոծին ծագում ունեցող գագերը։ Դրանցից հելիումը և արգոնը ունեն մեծ նշանակություն խոր համալիների ստորերկրյա ջրերի հասակի որոշման համար։

ԳԼՈՒԽ VII

ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄՆԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

7.1. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻՉԻ ՏԻՊԵՐԸ

Զրաերկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ զրի քիմիական կազմը հետազոտվում է քիմիական անալիզի միջոցով:

Քիմիական անալիզի բովանդակությունը և դրանց արդյունքների ճշտության աստիճանը որոշվում են՝ ելնելով ուսումնասիրությունների խնդիրներից և փուլերից: Սիայն աշխատանքների խնդիրների և նպատակային դիտարկումների մասին ճիշտ պատկերացում ունենալու դեպքում կարելի է որոշել անհրաժեշտ քիմիական անալիզիների քանակը և ընտրել դրանց կատարման այս կամ այն մեթոդիկան:

Զրաերկրաբանական աշխատանքների արակտիվայում զրերի քիմիական անալիզները կատարում են հետևյալ հիմնական խնդիրները՝
1) տարբեր կազմի բնական զրերի ձևակորման և տարածման օրինաչափությունների ուսումնասիրման, 2) խմելու, տեխնիկական, գյուղատնտեսական, բուժական և այլ բնագավառներում օգտագործման համար բնական զրերի քիմիական կազմի և ֆիզիկական հատկությունների գնահատման, 3) բնական զրերի հետախուզությունները՝ որպես օգտակար հանածոների հանքավայրերի (նավթի, գազի, պղնձի, կապարի, մոլիբդենի և այլն)որոնման կրիտերիայի (չափանիշ), 4) բնական զրերը՝ որպես քիմիական հումքի (յոդ, բրոմ, բռու և այլ միկրոբաղադրիչներ) ստացման և գնահատման [33]:

Զրի անալիզը սկսում են նմուշի մանրազնին և ճշտությամբ վերցնելով, որն անալիզի հուսալի արդյունքների ստացման անհրաժեշտ պայմաններից է: Զրի բնական կազմի մաքրության և առավելագույն պահպանման համար մշակված են հատուկ կանոններ նմուշի վերցման, նախնական մշակման, կրնակվացման և պահպանման [1]:

Զրի անալիզը պետք է կատարել ինչքան հնարավոր է շուտ, նմուշը վերցնելուց հետո: Եթե դա հնարավոր չէ, նմուշները կոնսերվացում են: Զրի պահպանությունը պահանջում է ցածր ջերմաստիճան, ստուցում չի թույլատրվում:

Զքերի քիմիական անալիզները ստորաբաժանվում են հետևյալ տիպերի՝ դաշտային, կրծալի, լրիվ և հաղողության:

Զքականական անալիզները ստումնասիրությունների ժամանակ դաշտային քիմիական անալիզները կատարվում են շարժական (երթային) լաբորատորիաների միջոցով: **Դաշտային անալիզի օգնությամբ** որոշում են ջրի ֆիզիկական հատկությունները, pH (անմիջապես ջրադրյուրի վրա), Cl^- , SO_4^{2-} , NO_3^- , HCO_3^- , CO_3^{2-} , Ca^{2+} , Mg^{2+} , Fe^{2+} , CO_2 , H_2S , O_2 : Հաշվարկվում են Na^+ + K^+ , Mg^{2+} կամ Ca^{2+} , կարբոնատային կոշտությունը, միներալային նյութերի գումարը (հանքայնացումը): Կիրառվում է ուսումնասիրվող շրջանի ստորերկրյա ջրերի բնութագրների նախնական գնահատման համար և որոշումը կրում է մասսայական (տարածական) բնույթը:

Կրծալի անալիզն իր մեջ ներառում է ջրի ֆիզիկական հատկություններ. որոշում, pH, Cl^- , SO_4^{2-} , NO_3^- , HCO_3^- , CO_3^{2-} , Ca^{2+} , Mg^{2+} , Fe^{2+} , Fe^{3+} , NH_4^+ , NO_2^- , H_2S , CO_2 , H_2SiO_2 , չոր մնացորդը, թթվայնությունը: Հաշվարկվում են Na^+ + K^+ , ընդհանուր և կարբոնատային կոշտությունները, ազրեսիվ CO_2 : Կրծալ անալիզը կատարվում է առավել ճիշտ մեթոդներով և ստացիոնար լաբորատորիաներում: Կիրառվում է զանգվածային որոնումների համար, մի քանի ջրատար հորիզոնների նախնական բնութագրումները համեմատելու նպատակով:

Լրիվ անալիզն իր մեջ ներառում է ջրի ֆիզիկական հատկությունները, pH, Cl^- , SO_4^{2-} , NO_3^- , HCO_3^- , CO_3^{2-} , Na^+ , K^+ , Ca^{2+} , Mg^{2+} , Fe^{2+} , Fe^{3+} , NH_4^+ , NO_2^- , CO_2 , H_2S , H_2SiO_3 , չոր մնացորդը, թթվայնությունը: Հաշվարկվում են՝ ընդհանուր և կարբոնատային կոշտությունները, ազրեսիվ CO_2 : Լրիվ անալիզը կատարվում է առավել ճշգրիտ մեթոդներով ստացիոնար լաբորատորիաներում:

Հապոնկ անալիզը, բացի վերը թթվարկած անալիզների տիպերով որոշվող ցուցանիշներից, իր մեջ ներառում է հատուկ (միկրոբաղդաշներ, օրգանական նյութեր, գազեր, Eh և այլն) որոշումներ, որոնք կա-

տարվում են հետազոտությունների նպատակային նշանակության համապատասխան՝ ըստ առանձնահատուկ առաջադրանքի:

Նշված անալիզի տիպերը ամրագրված են համապատասխան հրահանգներով (ինստրուկցիա) և ուղեկցվում են գործնականում բոլոր ջրաերկրաբանական հիմնական տիպի աշխատանքներում՝ ջրաերկրաբանական, ջրաէկոլոգիական և համայիր հանույթներում, ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների գնահատման և այլ նպատակների համար տարվող հետազոտություններում։ Հատուկ նշանակության ջրաերկրաբանական աշխատանքների ժամանակ լրացվում են անհրաժեշտ որոշումներով։ Այսպես, օրինակ՝ հանքային բուժիչ ջրերի կազմի գնահատման ժամանակ կատարում են անալիզներ հանքաջրաբուժական ակտիվ կոմպոնենտների՝ ռարոնի, ազոտի, բռնի, յոդի, հիդրոսուլֆիդ-իոնի, օրգանական նյութերի որոշման համար։

Ջրաերկրաբանական հետազոտությունների ժամանակ կիրառվող անալիզների մեթոդների համար գոյություն ունեն համապատասխան ΓОСТ-եր։ Կիրառվում են տարբեր մեթոդներ անալիտիկ քիմիայից. դաշտային անալիզների դեպքում՝ տիտրոմետրիական, կոլորիմետրիական, տուրբիլումետրիական, կրծատ և լիկ անալիզների դեպքում՝ բացի դրանցից գործիքային (ֆոտոկոլորիմետրիա, սոլեկտրաֆոտոմետրիա, պոտենցոմետրիա, ռադիոմետրիա, խրոմատոգրաֆիա և այլն):

7.2. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՎԱՅՐԸ ՁԵՎԵՐԸ

Դաշտային կամ լաբորատոր պայմաններում որոշված քիմիական անալիզի արդյունքները սովորաբար արտահայտվում են հետևյալ երեք ձևերով. կշռային, համարժեքային և սոլոու-համարժեքային ձևերով։

Զրի քիմիական անալիզի արդյունքների արտահայտման հիմնական ձևը հանդիսանում է կշռայինը, այն ծառայում է որպես ելակետային ջրի քիմիական կազմի արտահայտման մյուս ձևերի ստացման համար։ Ընդ որում, մակրոբաղադրիչների որոշած արդյունքները քաղցրահամ և աղահամ ջրերի համար տրվում են գրամներով և միջիգրամներով 1լիտր ջրում (գ/լ և մգ/լ)։ Օվկիանոսային և ծովային, ինչպես նաև սոորերկրյա աղաջրերի համար լայն տարածում է ստացել մակրոբաղդ-

բիշների արտահայտումը գրամներով և միլիգրամներով 1կգ ջրում (գ/կգ, մգ/կգ):

Անիոնների և կատիոնների պարունակության արտահայտման համարժեքային ձևը (մգ-համարժեք/լ, գ-համարժեք/լ, մգ-համարժեք/կգ, գ-համարժեք/կգ,) հնարավորություն է տալիս ճիշտ դատել ջրում լուծված աղերի կազմի մասին և հսկել քիմիական անալիզի կատարման ճշգրտությունը: Իռնների կշռային ձևից, արտահայտված մգ/լ-ով, համարժեքային (մգ-համարժեք) ձևին անցնելու համար իռնների կշիռը պետք է բազմապատկել դրանց համարժեքային կշռի (տարրի ասունական կշիռը բաժանած դրա վալենտականության վրա) հակադարձ մեծությամբ: Քիմիական անալիզի տվյալների իռնների կշռային ձևերից (մգ/լ) համարժեքային ձևին (մգ-համարժեք/լ) անցնան վերահաշվարկային գործակիցները բերվում են 10-րդ աղյուսակում [3]:

Զրի քիմիական անալիզների արդյունքների վերահաշվարկը տոկոսի համարժեքային ձևով կատարվում է տարրեր հանքայնացում ունեցող ջրերի համեմատման հարմարության և նոյն ջրի իռնների հարաբերակցության մասին առավել պարզ պատկերացում կազմելու համար: Այս դեպքում անիոնների և կատիոնների մգ-համարժեքների գումարը առանձին-առանձին ընդունվում է 100% և ապա յուրաքանչյուր անիոնի և կատիոնի համար հաշվարկվում է դրա տոկոսային պարունակությունը:

Աղյուսակ 10

Զրի քիմիական անալիզների արդյունքների արդյունքների իռնային ձևից (մգ/լ) համարժեքային ձևին (մգ-համարժեք) անցնելու վերահաշվարկային գործակիցներ [33]

Կատիոններ	Վերահաշվարկային գործակից	Անիոններ	Վերահաշվարկային գործակից
Զրածին H^+	0.9921	Հիդրօքսիլ OH^-	0.0588
Նատրիում Na^+	0.0435	Նիտրատ NO_3^-	0.0161
Կալիում K^+	0.0256	Նիտրիտ NO_2^-	0.0271
Ամոնիում NH_4^+	0.0554	Կարբոնատ CO_3^{2-}	0.0330
Կալցիում Ca^{2+}	0.0499	Հիդրոկարբոնատ HCO_3^-	0.0164

Մագնիսիում Mg^{2+}	0.0822	Քլոր Cl^-	0.0282
Բարիում Ba^{2+}	0.0146	Բրոմ Br^-	0.0125
Ստրոնցիում Sr^{2+}	0.0228	Յոդ I^-	0.0079
Պղինձ Cu^{2+}	0.0315	Ֆլոր F^-	0.0526
Ցինկ Zn^{2+}	0.0306	Սուլֆատ-իոն SO_4^{2-}	0.0208
Կադմիում Cd^{2+}	0.0178	Հիդրոքուլֆիդ HS^-	0.0178
Ալյումինում Al^{3+}	0.1107	Տիոսուլֆատ $S_2O_3^-$	0.0316
Մանգան Mn^{2+}	0.0364	Հիդրոֆոսֆատ HPO_4^{2-}	0.0216
Երկար Fe^{2+}	0.0537	Հիդրոարտեմիտ $HASO_4^{2-}$	0.0250
Երկար Fe^{3+}	0.0858	Սուլֆիտ SO_3^{2-}	0.0302
Նիկել Ni^{2+}	0.0341	Սիլիկատ SiO_3^{2-}	0.0262
Կորպալ Co^{2+}	0.0339		

Օվկիանոսագիտությունում և ջրաբանությունում լուծված նյութի բաղադրությունը (կոնցենտրացիան) սովորաբար արտահայտում են այրումիներով (‰), որը նշանակում է ամբողջի հազարերրդական մաս:

Կապված միավորների Համաշխարհային համակարգի (СИ) անցման հետ, ջրաերկրաբանների համար սովորություն դարձած նշանակումները պետք է փոխել (աղ 11):

Աղյուսակ11

*Սրբորեկրյա ջրերի քիմիական անալիզների արդահայտման դրաստիցիոն
(սովորութական) և նոր չելերի համարություն [4]:*

Տրադիցիոն (սովորութական)	Միջազգային միավորներ
Կշռային կոնցենտրացիա՝ գ/լ, մգ/լ, մկգ/լ	Չանգվածային (մասսային) կոնցենտրացիա՝ գ/լմ ³ , մգ/լմ ³ , մկգ/լմ ³
Գ-բամ (միլիգրամ)-համարժեք՝ գ- համարժեք/լ, մգ-համարժեք/լ	Մոլային կոնցենտրացիա՝ մոլ/լմ ³ , մմոլ/լմ ³ , մկմոլ/լմ ³
Տոկոս-համարժեք՝ %-համարժեք	Տոկոս-մոլ՝ % մոլ

Գրքի հետագա շարադրանքում նշված ցուցանիշները հիմնականում կարտահայտվեն միջազգային միավորներով:

Զրում միկրոբողադրիչների պարունակությունը սովորաբար արտահայտում են կշռային ձևով՝ միկրոգրամներով 1լ ջրում (մկգ/դմ³): Եթե նրանք ջրում պարունակվում են մեծ քանակություններով (ավել 1մգ/լ-ից), ապա անալիզի արդյունքները արտահայտում են նույն ձևերով, ինչպիսին մակրոբաղդրիչները (մգ/դմ³, մմոլ/դմ³, %մոլ):

Թնական ջրերի քիմիական անալիզի մշակման մանրակրկիտ լուսաբանումն ըստ անալիզի ձևերի, տրված է շատ ճեղմարկներում (տես օրինակ [28] աշխատանքը):

7.3. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Անալիզի արդյունքների ընդհանուր ստուգումը կատարվում է ըստ իոնների մոլային պարունակության կամ ըստ չոր նստվածքի:

Ըստ իոնների մոլային արտահայտության՝ քիմիական անալիզների ընդհանուր ստուգումը կարելի է կատարել միայն լրիվ անալիզի համար, եթե փորձնականորեն որոշված են բոլոր հիմնական անիոնները և կատիոնները:

Անալիզի սխալի տոկոսը հաշվարկվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$\alpha = \frac{A - K}{A + K} * 100$$

որտեղ՝

A և K համապատասխանաբար անիոնների և կատիոնների մմոլ/դմ³-ի գումարներն են:

Ծովովագումանը սխալը չպետք է գերազանցի [28]:


Ջրի հանքայնացումը (անիոնները մմոլ/դմ³)	Սխալը (%-ով)
Ավել 15	2
15-5	2-5
3-5	5-10
Փոքր 3	Չի որոշված

Ինչպես երևում է բերված տվյալներից, սխալի մեծ տոկոսը համապատասխանում է ջրի փոքր հանքայնացումներին: Առավել պատաս-

խանատու և արբիտրաժային (իրավաբարական) անալիզների համար թույլատրելի սխալը փոքրանում է կրկնակի անգամ:

Աղյունքների ընդհանուր ստուգումը կատարվում է լրիվ և կրճատ ջրի անալիզների համար՝ ըստ չոր նստվածքի: Ըստ որում, կրճատ անալիզների համար համարվում է միակը:

Այս եղանակի եռթյունը կայանում է հետևյալում. չոր մնացորդը համեմատվում է իոնների և մոլեկուլների (քացառությամբ գազերի) տեսքով բոլոր լուծված նյութերի գումարի հետ: Միներալային նյութերի գումարի հաշվարկի ժամանակ անհրաժեշտ է վերցնել HCO_3^- , -ի կեսը, քանի որ չոր մնացորդի գոլորշիացման ժամանակ ընթանում է հետևյալ ռեակցիան:



Անհրաժեշտ է նշել, որ ցանկացած բնական ջուր, քացի անօրգանական նյութերից, ինչպես ասվեց վերը, պարունակում է նաև օրգանական նյութեր, որոնք անցնում են չոր նստվածք: Դրա համար էլ փորձնականորեն որոշված չոր մնացորդը միշտ մեծ է հաշվարկված ընդհանուր հանքայնացումից:

Փորձնականորեն որոշված չոր մնացորդի և հաշվարկված ընդհանուր հանքայնացման (ներառյալ սիլիկաթթվի) միջև, եթե ջրի թթվայնությունը չի գերազանցում $5\text{մգՕ}/\text{լմ}^3$, թույլատրելի սխալը չպետք է գերազանցի (տես ներքեւում) [28]

Հաշվարկված	Չոր մնացորդի
ընդհանուր հանքայնացումը	թույլատրելի գերազանցումը
(մգ/լմ³)	հաշվարկայինի նկատմամբ
մինչև 100	30մգ/լ
100-500	50մգ/լ
500-5000	10%
5000-10000	10-5%
Մեծ 10000	5%

Առավել պատասխանատու և իրավաբարական անալիզների համար թույլատրելի սխալը փոքրանում է կրկնակի անգամ:

7.4. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻՉՆԵՐԻ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Զրի քիմիական անալիզների համակարգման համար առաջադրված են բազմաթիվ դասակարգումներ, սակայն համընդիհանուր դասակարգում առայժմ գոյություն չունի: Այդպիսի դասակարգման մշակման դժվարությունը կայանում է նրանում, որ բնական ջուրը հանդիսանում է շատ բարդ բազմաբաղադրիչ շարժուն համակարգ՝ ապար-ջուր-գազ-օրգանական և կենսանի նյութեր:


Վերը (տես գլ.VI) բերվել են բնական ջրերի դասակարգումներն ըստ հանքայնացման աստիճանի, ընդհանուր կոշտության, ջրածնային ցուցիչի, սակայն առավել տարածուն են համարվում ըստ գերակշռող խոնի և դրանց միջև գոյություն ունեցող հարաբերակցության դասակարգումները:

Հստ քիմիական կազմի՝ ստորերկրյա ջրերի ընդհանուր դասակարգումների մեջ Վ. Սմիրնովան (1977) առանձնացնում է երկու խոշոր խմբեր՝ «մաքուր քիմիական» և «տարրերի ծագումնաբանական հիմքի վրա» [4]:

Այս պարագրաֆում (դրվագում) նշված երկու խմբերի դասակարգումներից կդիտարկվեն ջրաերկրաբանությունում առավել ճանաչում գտած դասակարգումները:

Առաջին խմբի դասակարգումներին վերագրվում են այն դասակարգումները, որոնք հիմնված են «գերակշռող խոն» սկզբունքի վրա: Դրանց համար դասակարգման հիմնական ցուցանիշը հանդիսանում է կազմի կոմպոնենտների ֆիզիկական պարունակությունը՝ առանց (կամ համարյա առանց) դրանց ծագումնաբանական այս կամ այն մեկնաբանության: Դրանցից, ջրաերկրաբանական պրակտիկայում առավել տարածում ունեցողները բերվում են ստորև [4,11,19,33]:

Գ-րաֆիկ-եռանկյունի (Ֆերիի): Համարվում է ստորերկրյա ջրերի քիմիական բաղադրության համակարգման դիագրամային եղանակ, որի միջոցով արտահայտվում են ջրերի անիոնային և կատիոնային բաղադրամասերը առանձին եռանկյունիների վրա՝ արտահայտված % մոլ-երով (նկ.18):




Նկ.18 Գրաֆիկ-եռանկյունիներ (ըստ Ֆերիի)

Եռանկյունիների գագարներին իոնների համարժեքային պարունակությունը կազմում է 100%: Անալիզի տեղը եռանկյան վրա որոշվում է երեք ուղիղ գծերի հատման կետով, որոնցից յուրաքանչյուրը տարբեր է եռանկյան որևէ կողմին գուգահեռ: Եռանկյունների գագարային մասերում կենտրոնացված անալիզի արդյունքները, ցույց են տալիս ջրում համապատասխան իոնների գերազանցությունը, միջին մասերում տեղակայվում են խառը կազմով ջրերը: Գրաֆիկ-եռանկյունները հնարավորություն են տալիս որոշել յուրաքանչյուր իոնի հարաբերակցությունը, սակայն անիոնների և կատիոնների ներկայացումը առանձին գծագրերի վրա դժվարացնում են անալիզների համարումը: Ֆերիի եռանկյունների և Տոլստիխինի քառակուսու (տես ներքեւում) համատեղումը հեշտացնում է այդ համադրումը: Այս եղանակով նախնական համակարգման են ենթարկվում ջրերի քազմաքանակ անալիզների տվյալները:

Գրաֆիկ-քառակուսի (Ն. Ի. Տոլստիխինի): Այն իրենից ներկայացնում է քառակուսի, որի յուրաքանչյուր կողմը քածանված է տասը հավասար մասերի (նկ.19):


Քիմիական անալիզի արդյունքները Տոլստիխինի գրաֆիկ-քառակուսու վրա անցկացվում են կետերի տեսքով: Քառակուսու աջ կողմում վերևսից-ներքև տեղադրվում է $\text{Cl}^- + \text{SO}_4^{2-}$ իոնների համարժեքային պարունակությունների գումարը՝ տոկոսներով, ձախի վրա ներքևսից վերև $\text{HCO}_3^- + \text{CO}_3^{2-}$ -ը, ներքևսի կողմի վրա ձախից աջ՝ $\text{Ca}^{2+} + \text{Mg}^{2+}$, վերևում՝ $\text{Na}^+ + \text{K}^+$ -ը (% համարժեք):



Նկ.19 Գրաֆիկ-քառակուսիներ (ըստ Ի. Վ. Տոլստիխինի)

Անալիզի կետերը քառակուսու վրա որոշվում են կոորդինատի երկու առանցքների հասունով: Եթե կետը գտնվում է քառակուսու վերին աջ անկյունում, ջուրը, որպես կանոն, վերագրվում է հիդրոկարբոնատ-կալցիումային տիպին: Ներքևի ձախ անկյունում կենտրոնացվում են քլորիդ-նատրիումային տիպի ջրերը, իսկ ներքևի աջ անկյունում՝ սուֆատ-կալցիումային տիպի ջրերը:


Սակայն, մեկ քառակուսիով օգտվելը հարմար չէ, քանի որ Ca^{2+} և Mg^{2+} , Cl^- և SO_4^{2-} իոնների բաղադրությունները գրաֆիկի վրա ներկայացվում են գումարների տեսքով: Դրանց առանձին-առանձին որոշման համար այն համակցում են Ֆերիի եռանկյուն-գրաֆիկների հետ: Այս դեպքում եռանկյուններից մեկի վրա դնում են կատիոնների պարունակությունը, իսկ մյուսում՝ անիոններինը (%համ.) (նկ. 20):



Նկ. 20 Բ. Վ. Տոլստիխինի գրաֆիկ-քառակուսին Ֆերիի եռանկյունների հետ համակցված

Շրջան-դիագրամ (Ն. Ի. Տոլստիխինի): Օգտագործվում է առանձին անալիզներ պատկերելու (նկարագրելու) համար: Տրված մասշտաբում, շրջանի շառավիղը ցույց է տալիս ջրի հանքայնացման մեծությունը: Շրջանի ներքևի կիսահարթության վրա ձախից աջ տեղադրվում են անիոնների պարունակությունները (%) հետևյալ կարգով՝ HCO_3^- , SO_4^{2-} , Cl^- , իսկ վերևի կիսահարթության վրա կատիոններինը, հետևյալ հերթականությամբ՝ Ca^{2+} , Mg^{2+} , Na^+ + K^+ (նկ. 21):

Այդպիսի դիագրամա կարելի է կառուցել երկու համակենտրոն շրջանների տեսքով (ներքին շրջանը պատկերում է ջրի անիոնային կազմը, իսկ արտաքինը՝ կատիոնային կազմը) (նկ. 21):



Նկ. 21 Քնական ջրերի քիմիական կազմի շրջան-դիագրամ (I), երկու համակենտրոն շրջան դիագրամ (II) (ըստ Ն. Ի. Տոլստիխինի)

1-Ca²⁺, 2- Mg²⁺, 3- Na⁺+K⁺, 4- CO₃²⁻+HCO₃⁻, 5-SO₄²⁻, 6- Cl⁻ և

Ստորերկրյա ջրերի քիմիական կազմի արտահայտման ձևերից են բանաձևայինները, որոնցից առավել պարզ ու պատկերավոր է համարվում Մ. Գ. Կուտլովի առաջարկած բանաձևը:

Կուտլովի բանաձևը: Իրենից ներկայացնում է կեղծ կոտորակ, որի համարիչում ցույց են տրվում անիոնների, հայտարարում՝ կատիոնների պարունակությունը %մոլ-ներով, ձախից աջ նվազման կարգով: Ըստ որում՝ բանաձևում չեն նշվում այն իոնները, որոնց քանակը փոքր է 10% մոլ-ից: Կոտորակի գծից ձախ գրվում է ջրի հանքայնացումը (M, գ/դմ³), գազերի և առանձնահատող միկրոբաղադրիչների պարունակությունը (մգ/դմ³): Կոտորակի գծից աջ ցույց է տրվում ջրի ջերմաստիճանը (T, °C), pH-ը և դիտարկվող հորատանցքի, ջրհորի կամ աղբյուրի ջրի ծախսը (մ³/օր)

Օրինակ՝

$$\text{Fe}0.015; \text{CO}_2 2; \text{M}6 \frac{\text{HCO}_3 60; \text{Cl}40}{\text{Na}90; \text{Ca}10} \text{T}^0 \text{C}25; \text{pH}6.9; \text{D}150$$


Ջրի կազմի անվանման մեջ ներառվում են միայն այն անիոնները և կատիոնները, որոնց պարունակությունը գերազանցում է 25 մմոլ/դմ³ (25 մգ-համարժեք/լ): Առաջարկվում է ջրի անվանումը ըստ քիմիական կազմի, տալ անիոններով և հետո նոր կատիոններով՝ նվազման կարգով:

Բերված օրինակում, ջրի կազմի անվանումը կլինի երկարային, ածխաթթվային, հիդրոկարբոնատ-քլորիդ-նատրիումային:

Երկրորդ խմբի «տարրերի ծագումնաբանական հիմքի վրա» դասակարգման օրինակ է նավթային ջրերին վերաբերող Վ. Ա. Սուլինի դասակարգումը, որի համաձայն՝ ջրի քիմիական կազմի տիպերը առաջանում են ոչ թե ըստ իրականում գերակշռող իոնների, այլ ըստ հատուկ հաշվարկված գործակցի (r) մեծության (մզ-համարժեք/1) չափողականությամբ արտահայտված իոնների հարաբերակցությամբ: Այս դեպքում ջրի չորս հիմնական քիմիական տիպերի անվանումները չեն համապատասխանում ջրի իրական քիմիական կազմին: Սուլֆա-նատրիումային (I) և հիդրոկարբոնատ-նատրիումային (II) քիմիական տիպերին պատկանում են այն ջրերը, որոնց գործակցի ($r(\text{Na} - \text{Cl}) / r\text{SO}_4$) մեծությունը համապատասխանաբար փոքր կամ մեծ է մեկ միավորից: Այդ ջրերում նատրիումի պարունակությունը գերակշռում է քլորի պարունակությանը, որը հնարավոր է դարձնում նատրիումի սոլֆատային (I տիպի) կամ սոլֆատային և հիդրոկարբոնատային (II տիպի) միացությունների ձևավորման: Համարվում է, որ այս քիմիական տիպերը հատկանշական են ցամաքային ծագում ունեցող ջրերին: Քլոր-մագնեզիումային (III) և քլոր-կալցիումային (IV) քիմիական տիպերը բնութագրվում են ($r(\text{Cl} - \text{Na}) / r\text{Mg}$) գործակցի մեծության համապատասխանաբար փոքր կամ մեծ լինելու հանգամանքով, ըստ որում, համարվում է, որ ջրի կազմում քլորիդ-մագնեզիումի (III տիպի) առկայությունը վկայում է նրա ծովային ծագումը, իսկ քլորիդ-կալցիումային (IV տիպի) առկայությունը՝ կազմի մետամորֆիզացիայի մասին, որը հատկանշական է խորքային՝ մասնավորապես նավթային ջրերին: Վ.Ա.Սուլինի կողմից մշակվել է գրաֆիկական դիագրամա, որը հնարավորություն է տալիս հաշվի առնել նաև ջրերի բազմաթիվ ենթատիպեր:

O. Ա. Ալյոլինի դասակարգումը: Ըստ այս դասակարգման՝ բնական ջրերը, ըստ գերակշռող անիոնների, բաժանվում են երեք դասի՝ հիդրոկարբոնատային (և կարբոնատային), սոլֆատային և քլորիդային ջրեր (նկ. 22): Յուրաքանչյուր դաս, ըստ գերակշռող կատիոններից որևէ մեկի՝ Ca^{2+} , Mg^{2+} կամ Na^+ , բաժանվում է երեք խմբի: Հետագայում, ըստ իոնների միջև հարաբերակցության, արտահայտված %մոլերով, ջուրը ստորաբաժանվում է տիպերի: Ընդամենը առանձնացնում են չորս քիմիական տիպի ջրեր.

- I տիպ ($\text{HCO}_3^- > \text{Ca}^{2+} + \text{Mg}^{2+}$) ցածր հանքայնացման ջրեր,
- II տիպ ($\text{HCO}_3^- < \text{Ca}^{2+} + \text{Mg}^{2+} < \text{HCO}_3^- + \text{SO}_4^{2-}$) չափավոր հանքայնացման ջրեր,
- III տիպ ($\text{HCO}_3^- + \text{SO}_4^{2-} < \text{Ca}^{2+} + \text{Mg}^{2+}$ կամ որ նույնն է՝ $\text{Cl}^- > \text{Na}^+$) սովորաբար բարձր հանքայնացման ջրեր,
- IV տիպ ($\text{HCO}_3^- = 0$) աղի ջրեր, որոնք առկա են միայն սոլֆատային և քլորիդային դասի Ca^{2+} և Mg^{2+} խմբում, որտեղ բացակայում է առաջին տիպը:



**Նկ. 22 Ստորերկյա ջրերի դասակարգումն ըստ քիմիական կազմի
(Օ. Ա. Ալոնկինի)**

Քիմիական կազմի դիպերը (մոլ/լ/դ³) I- $\text{HCO}_3^- > \text{Ca}^{2+} + \text{Mg}^{2+}$,
II - $\text{HCO}_3^- < \text{Ca}^{2+} + \text{Mg}^{2+} < \text{HCO}_3^- + \text{SO}_4^{2-}$, III - $\text{HCO}_3^- + \text{SO}_4^{2-} < \text{Ca}^{2+} + \text{Mg}^{2+}$,
IV - $\text{HCO}_3^- = 0$ (բռն)

Ջրի կազմի ավելի լավ տարրերակման համար (Ե. Վ. Պոստխով, 1975) III տիպը բաժանում է երկու ենթատիպերի.

III_ս $\text{Cl}^- < \text{Na}^+ + \text{Mg}^{2+}$, ինների հարաբերությամբ, որը բնորոշ է ծովի ջրերին,

$\text{III}_\text{p} \text{Cl}^- > \text{Na}^+ + \text{Mg}^{2+}$, իոնների հարաբերությամբ, որը բնորոշ է խորքային աղաջրերին:

Ստորերկրյա ջրերի Օ. Ա. Ալյոկինի դասակարգումն իր Էությամբ համաձայն Վ. Ս. Սմիրնովայի գոյություն ունեցող դասակարգումների խմբավորման, կրում է միջանկյալ բնույթ դրա անջատած երկու խմբերի միջև:

Գոյություն ունեն դասակարգումներ, որոնցում հաշվի են առնված ջրի գազային կազմը և ձևավորման պայմանները (Ա. Ս. Օվչիննիկով), ջերմուկաբուժական կոմպոնենտները (Վ. Ա. Ալեքսանդրով, Վ. Վ. Իվանով և Գ. Ա. Նևարն) և ուրիշ շատ այլ դասակարգումներ, որոնց մասնամասն նկարագրությունները տրված են հատուկ ձեռնարկներում [33, 1, 30 և այլն]:

ԳԼՈՒԽ VIII

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

8.1. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ

Երկրակեղսի Երկրաբանական զարգացման գործընթացում, ըստ առաջացման և քիմիական կազմի ձևավորման պայմանների առանձնացնում են ստորերկրյա ջրերի հետևյալ հիմնական ծագումնաբանական տիպերը՝ 1) մթնոլորտային (ինֆիլտրացիոն, տարալուծման ջրեր), 2) ծովային (սեղմենտացիոն՝ նստվածքակուտակման), 3) մագմատիկ (յուվենիլային), 4) մետամորֆային (վերածնված, ջրանցատային՝ դեհիդրատացիոն) (Գ. Ն. Կամենսկի, Ա. Մ. Օվչիննիկով, Ա. Ն. Սեմիխատով և այլոր):

Մթնոլորտային ծագման սկզբունքը ջրերն ապարներում առաջնում են ի հաշիվ մթնոլորտային տեղումների, ինչպես նաև գետերի, լճերի և տեղական մակերևութային ջրերի ինֆիլտրացիայի, ապարների համեմատաբար խոչը ճեղքերով ու ուղիներով վերերկրյա ջրերի ինֆրյուացիայի (շիրոսքի), ապարների մեջ օդից ջրային գոլորշների ներթափանցման և դրանց հետագա կրնկնացման (խտացման):

Մթնոլորտային ծագման ջրերի ձևավորման գործում առավել մեծ նշանակություն ունեն մթնոլորտային տեղումները և մակերևութային հոսքերը: Ուստի հետագա շարադրամբում մթնոլորտային ծագման ջրերը կանվանվեն ինֆիլտրացիոն (ներծծումնային):

Մթնոլորտային տեղումների քանակությունը սերտորեն կապված է կլիմայական պայմանների հետ: Կլիման, քայլի մթնոլորտային տեղումների մեծությունից քննորշվում է երկրի մակերևույթի ջերմային ռեժիմով և գոլորշունակությամբ: Ջանի որ մթնոլորտային տեղումներում գտնվող լուծված միացությունները ներթափանցում են ստորերկրյա ջրեր, ապա կարելի է համարել, որ ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման առաջին փուլը հանդիսանում է մթնոլորտային տեղումների քիմիական ձևավորումը: Մթնոլորտի ջերմաստիճանային ռեժիմը մեծամասք որոշում է երկրի մակերևույթի կլիմայական զոնայականությունը, հետևապես և գրունտային ջրերի քիմիական կազմի ձևավորման գոր-

ծընթացի ուղղվածությունը. հավելուրդային խոճավության գոնաներում՝ փոքր հանքայնացումից, չոր զոնաներում մինչև հանքայնացվածի:

Ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման վրա կլիմայի ազդեցության մեկ այլ դրսառում կարելի է համարել ձևանակաշրջանը, որի հետ է կապված հողաշերտերից քիմիական տարրերի ինտենսիվ մուտքը ստորերկրյա ջրեր:

Մակերևույթի վրա, հողաշերտերում և երկրակեղևի վերին շերտերում կատարվում է բնական ջրերի փոխազդեցությունը կենդանի նյութերի, բուսականության և միկրոօրգանիզմների հետ, որոնք առաջացնում են կենսոլորտը՝ Երկրի պատյանը, որտեղ դրսառում է կենդանի նյութի ջրաքիմիական գործունեությունը: Երկրի այդ պատյանն ընդգրկում է մինուրայի ներքևի մասը, մակերևույթային ջրոլորտը, երկրակեղևի 3-4 կմ խորությունները:

Կենսոլորտում կենդանի նյութերի գումարային զանգվածը համեմատաբար մեծ չէ, սակայն այն մշտապես վերականգնվում է և դրա միջով անցնում են հսկայական քանակությամբ ջուր և քիմիական տարրեր: Օրգանիկների տարալուծումից արտադրվում է մեծ քանակությամբ CO_2 : Կենսաքիմիական գործընթացների արդյունքում ստորերկրյա ջրեր են մտնում նաև օրգանական թթուներ, ածխաջրածիններ, ազոտի, ծծմբի, ֆոսֆորի, կալցիումի, երկաթի և այլ միացություններ: Օրգանական միացությունների ստորերկրյա ջրերի հետ փոխազդեցության գործընթացներում կարևորագույն ֆունկցիա են հանդիսանում pH և հատկապես Eh մեծությունները:

Հարկ է նշել, որ նույնիսկ մինուրտային տեղումները պարունակում են լուծված աղեր և ունեն որոշակի քիմիական կազմ: Համեմատաբար բարձր հանքայնացում ունեցող մթնոլորտային տեղումները յուրահատուկ են մերձծովյան ցամաքների, չորային շրջանների, խոշոր արդյունաբերական տերիտորիաների և ժամանակակից հրաբխային գործունեության մարզերի համար:

Մթնոլորտային տեղումներում գերակշռող են հանդիսանում HCO_3^- , SO_4^{2-} , Cl^- , Ca^{2+} , Mg^{2+} և Na^+ իոնները: Դրանք մթնոլորտ են քափանցում քամիների միջոցով ծովերից աղերի բերման, փոշիների տարման, հրաբխային անջատումների և այլարբյուրների: Մթնոլորտային տեղումներում լուծված նյութերի ընդիանուր քանակը երբեմն

գերազանցում է 100մգ/դմ³: Այդ տեղումները հիմնականում լինում են մերձծովյա ցամաքային մասերում, և դրանցում Cl^- , Na^+ , Mg^{2+} իոնների պարունակությունն ավելի շատ է:

Ծովերից հեռու խոնավ և բարձր լեռնային շրջաններում տեղումների հանքայնացումը սովորաբար չի գերազանցում 20-30մգ/դմ³ և դրանց կազմում գերակշռում են HCO_3^- և Ca^{2+} իոնները:

Ժամանակակից հրաբխային գործունեության շրջաններում դիտվում են «քրու անձրևներ», որոնցում pH -ը կազմում է 2.4-2.5, իսկ հանքայնացումը՝ մինչև 250մգ/դմ³ (Ա. Պ. Վինոգրադով):

Ինֆիլտրացիոն ջրերն իրենց ստորերկրյա գոյության սկզբնական շրջանում, դրանք կանոն, քաղցրահամ են: Շարժվելով ապարներում՝ դրանք, ի հաշիվ ապարների տարալուծման, օրգանիզմների գործունեության, իսկ չոր կիմային պայմաններում մասսամբ գոլորշիացման (ցանքային աղակալում), սկսում են հարստանալ իոններով, առերով և գագերով: Ինֆիլտրացիոն ջրերի հետագա շարժումը, ըստ խորացման, աստիճանաբար սկսում է դանդաղել, դրա կազմի վրա սկսում են ազդել օսրիդացման-վերականգնման ռեակցիաները, հետո կատիոնային փոխանակումը, ֆիլտրացիոն էֆեկտը և ուրիշ ֆիզիկաքիմիական գործընթացներ, ինչպես նաև դրանց խառնվելը այլ ծագման ջրերի հետ: Ինֆիլտրացիոն ջրերի հանքայնացումն աստիճանաբար մեծանում է, իսկ դրանց իոնա-աղային և գագային կազմը վերափոխվում է:

Ծովային ծագման (նայվածքակուրակման) ջրերը ձևավորվում են օվկիանոսներում, ծովերում և ծովալճակներում նստվածքակուտակման, նստվածքների դիագնոնեզի և դրանց մետամորֆիզացիայի գործընթացներում:

Ի տարրերություն մթնոլորտային տեղումների և գետային ջրերի կազմի՝ ժամանակակից օվկիանոսի ջուրը քրորիդ-նատրիումային է, սուլֆատի և մագնիսիումի բարձր պարունակություններով: Որոշ չափով այլ կազմ ունեն ծովալճակների և ներմայրցանաքային ծովերի ջրերը, որոնց կապը օվկիանոսների հետ դժվար է կամ ամբողջովին չկա: Այդ տիպի ծովերում, ջրերը կարող են լինել քաղցրացված, ինչպիսիք են Կասպիական և Արակի ծովերը կամ ավելի շատ աղիացած՝ (կոնցենտրացված) չորային կիմայի պայմաններում ավազանների չորացման

հետ կապված: Ծովային ջրերի ելակետային տարրեր կազմը, անկասկած, կազմի ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման վրա:

Օվկիանոսային և ծովային ջրերի քիմիական կազմի փոփոխության գործընթացները սկսվում են տիղմերում:

Համաձայն Օ. Վ. Շիշկին՝ օվկիանոսային և ծովային ժամանակակից նատվածքներում առկա են հետևյալ երեք տիպի տիղմային ջրերը:

1. Բաց ծովի կամ օվկիանոսի պելիգալ նատվածքներում տարածված «ծովային» տիպի տիղմային ջրեր: Այդ նատվածքները գոյանում են ափից հեռու խորջրյա մասերում, կախված մասնիկների, պլանկտոն միկրոօրգանիզմների կմախքային մնացորդների, կավային և բեկորային նյութի, հրաբխային մոխրի, տիեզերական փոշու և հատակին ձևավորվող միներալների դանդաղ կուտակման հետևանքով: Նման պայմաններում ծովային ջրերը հարյուրիազարգող և նույնական միլիոնաքառ տարիների ընթացքում թե տարածության մեջ և թե ուղղաձիգ կտրվածքում էապես չեն փոփոխվում: Ըստ ամերիկյան հետազոտողների տվյալների՝ ծովային ջրերի կազմի փոփոխություն ուղղաձիգ կտրվածքում չի նկատվել մինչև միջին միոցենը և նոյնիսկ սենոնը (ըստ Խաղաղ օվկիանոսում հորատված խորը հորատանցքի տվյալների):

2. Ծովերի և օվկիանոսների մերձափնյա, ծայրանասային փողրակների (ժալոր, վիհ, ակռո) և իջվածքների նատվածքների տիղմային ջրեր: Դրանք ինտենսիվ փոխակերպվում (նետամորֆիզացվում) են և հատակից մի քանի մետր վերև լրիվությամբ վերափոխվում են մոտ 35 գ/կգ հանքայնացմամբ, քլորիդա-հիմնային (աղկալային) համարյա անսուլֆատ ջրերի: Դրանք բնութագրվում են բարձր հիմնայնության պաշարով, հողահիմնային (հողալկալային) մետաղների ցածր խոռոչյամբ (կոնցենտրացիայով), հագեցված են բրոմով, յոդով, ամոնիումով և այլ տարրերով ու միացություններով:

3. Երկրաբանական պատմության ընթացքում փոփոխվող ռեժիմով ներցամաքային ծովերի՝ մասնավորապես Սև ծովի, չորրորդական նատվածքներում անփոփած են մոտ 15գ/կգ հանքայնացմամբ շատ

ցածր $\frac{r\text{Na}^+}{r\text{Cl}^-} = 0.4$ հարաբերակցությամբ քլորիդա-կալցիումային կազմի տիղմային ջրեր: Այդ ջրերը նույնական հագեցված են ամոնիումով, յոդով, բրոմով և այլ տարրերով ու միացություններով:

Առավել բարձր հաճքայնացում ունեցող (աղաջրեր մինչև 200գ/դմ³ և ավելի) ստորերկրյա ջրերը, ըստ երևոյթին, արդյունք են ծովային ավազաններում նախապես թաղված ջրերի խտացման (կոնդենսացման): Նոր ձևափորված տիղմային նստվածքները պարունակում են մինչև 90% ջոր: Հետագայում ծածկող շերտերի ճնշման և նստվածքների խտացման արդյունքում, դրոնք բերում են նստվածքների՝ ապարների վերափոխմանը, ջրի պարունակությունը տիղմերում սկսում է քշանալ: Բոլոր նստվածքները (ինչպես կավային, այնպես էլ ավազային) իրենց առաջացման գործընթացներում հագեցված են այն ավազանի ջրերով, որում դրանք ձևափորվում են: Տեկստոնական իջվածքներին զուգընթաց ավազանների հատակի նստվածքները կրում են մեծացող ճնշման և ջերմաստիճանի ազրեցությունը և սկսում են ավելի խտանալ և «արտազատում» դրանցում եղած սեղմենտացիոն ջրերը: Կավային ապարներն իրենց բարձր պլաստիկության հետևանքով սեղմվում են ավելի շատ, քան ավազայինները: Դրա հետևանքով կավից «քանված» ջրի մի մասը տեղափոխվում է կոնտակտային ավազաքարերի մեջ կամ այլ առավել ջրաթափանց կոչու կմախրով ապարների մեջ: Ըստ որում, ջրի տվյալ մասը, հասկանալի է, դուրս է մղում ապարում նախօրոք եղած ջորը: Այդ ջորն իր հերթին տեղափոխվում է ուրիշ ապարների մեջ, ընդհուար մինչև իր բեռնաթափման տեղը, որոնք գտնվում են նույն ավազանի հատակին կամ դրա սահմաններից դուրս՝ երկրի մակերևույթին (կախված երկրաբանական կառուցվածքից):

Այդպիսի բնական պայմաններում ապարների շերտերում առաջ է գալիս ջրադիմամիկական ճնշման անհավասարաչափ վերաբաշխում, և ընթանում են ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևափորման ծայրահետ բարդ ու տարաբնույթ գործընթացներ, որոնցից առավել մեծ նշանակություն ունեն ֆիզիկաքիմիական և միկրոկենսարանական գործընթացները:

Այս ճանապարհով կավից ջրի անցումն այլ ծակոտկեն ապարների մեջ կատարվել է մեծ մասշտաբներով նույնիսկ ապարների խտացման ուշ ստադիաններում: Հետևապես սեղմենտացիոն ջրերի դերը ստորերկրյա ջրերի, հատկապես, խորը տեղադրված ջրատար հորիզոնների ձևափորման գործում շատ մեծ է:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ նստվածքակուտակման ջրերը, իհն ջրավազանների նստվածքների ստորերկրյա ջրերն են, որոնք

նստվածքների հետ միասին երկար ժամանակ մնացել են բաղված վիճակում և աստիճանաբար փոփոխվել են դիագնոնեզի և կատագենեզի փուլերում: Նստվածքակուտակման ջրերը լինում են կամ նստվածքային ապարների հետ միաժամանակ առաջացած (սինգենետիկ, մնացուկային ջուր) կամ նստվածքների խտացման գործընթացում արտազատված և այլ հասակի՝ առավել ջրաթափանց ապարների մեջ տեղադրված (էպիգենետիկ, տեղափոխված ջուր):

Տեկոտնական զարգացումների ընթացքում ծովի նահանջից կամ տեղանքի ցանաքի վերածվելուց հետո ապարներում սեղմիմենտացիոն ստորերկրյա ջրերը, որ երբեմն կոչվում են նաև բաղված կամ մնացորդային ջրեր, կարող են մնալ նստվածքներում այնքան ժամանակ, քանի դեռ չեն տեղակայվել-փոխարինվել ինֆիլտրացիոն ծագման ջրերով: Ի հակադրություն ինֆիլտրացիոն ծագում ունեցող մշտապես վերականգնվող ջրերի՝ սեղմիմենտացիոն ծագման ջրերն ունեն ստատիկ (բնական) պաշարներ և, բնականաբար, երկրաբանական ժամանակներում միախառնվում կամ լրիվ տեղակալվում-փոխարինվում են ինֆիլտրացիոն քաղցրահամ ջրերով:

Մազմապիկ ծագման (մազմածին, յուվենիլ կուսական) ջրերն առաջանում են մեծ խորություններում հրաբխականության գործունեության և ներժայքքումների ներդրման ընթացքում անմիջական հրահեղուկ մազմայից անջատված ջրերի հաշվին:

Ինչպես արդեն ասվել է (տես զլ. IV) մեծ քանակությամբ յուվենիլային ջրեր, ըստ երևույթին, անջատվել են Երկրի ձևավորման վաղ շրջանում՝ մասնիքայի գազագրկման ժամանակ: Ներկա ժամանակներում յուվենիլային ջրերի անջատումը, ըստ հետազոտողների մեծամասնության կարծիքի (Օ. Մ. Օվչիննիկով, Ա. Ի. Գերմանով, Վ. Վ. Իվանով, Ա. Ա. Կարցև և այլոց) շատ ամենա է:

Շատ գիտնականներ (Բ. Մեյսոն և ուրիշներ) գտնում են, որ մագմայում ջրի պարունակությունը փոփոխվում է 0.5-8% սահմաններում:

Ամերիկացի ջրաերկրաբանների հատուկ ուսումնասիրություններով (Դ. Ուայս և ուրիշներ) պարզվել է, որ հետիրաբխականության գործընթացների ինտենսիվ զարգացած մարզերում յուվենիլային ջրերը կազմում են ոչ ավելի 5-10% ֆունարոնների, հեյզերների և այլ թերմալ աղբյուրների ջրերի ընդհանուր զանգվածի մեջ: Զերմաջրերը հիմնականում

հանդիսանում են ինֆիլտրացիոն, սեղմենտացիոն կամ վերականգնողական:

Փոխակերպային (մելուսամորֆային) ծազման սրորերկրյա ջրեր: Այս տիպը գերազանցապես ներկայացված է վերածնված (կամ ջրագրկված) ջրերով, այսինքն՝ առաջանում են ջերմափոխակերպման (ջերմամետամորֆիզմի) գործընթացներում միներալներից և ապարներից կապակցված (բյուրեղային, ցեղլիտային, հիգրոսկոպիկ) ջրերի ազատ (գրավիտացիոն) վիճակի անցումով: Հետևապես վերածնված ջրերը հանդիսանում են երկրորդական ջրեր: Այդ ջրերը մինչև բյուրեղային ցանցում կամ ապարների մասնիկների կողմից ուժեղ կապված լինելը մասնակցել են ջրի ընդհանուր շրջապտույտում և ըստ իրենց ծագման՝ եղել են սեղմենտացիոն կամ ինֆիլտրացիոն: Հատկապես, միներալների կամ ապարների ջրագրկումից ջրի նոր մոլեկուլներ հանդիս չեն գալիս:



Վերածնված ջրերն առավել իմաստնիվ ձևավորվում են ժամանակակից կամ համեմատաբար ոչ վաղ անցյալում հրաբխականության գործունեության շրջաններում, միներալների և ապարների ջրագրկման գործընթացներում (Կամչատկա, Կուրիլյան կղզներ, Կավկազ, Կարպատներ), ինչպես նաև մեծ խորությունների վրա բարձր ջերմաստիճանի և ճնշման պայմաններում:

Վերածնված ջրերն իրենց անջատման և ձևավորման պահին գործնականում գորկ են լուծված նյութերից: Հետազայում բարձր ջերմաստիճանի և ճնշման պայմաններում, ապարների և գազերի հետ փոխազդեցության արդյունքում դրանք հարստանում են տարբեր կոմպոնենտներով (բաղադրիչներով):

Այդ ջրերի տիպին պայմանականորեն կարելի է դասել նույնպես քենոդին (խեմոգեն) ջրերը, այսինքն՝ ջրեր, որոնք առաջանում են քիմիական ռեակցիաների գործընթացներում: Վերջիններս ձևավորվում են ոչ միայն բարձր ջերմաստիճանի և ճնշման պայմաններում, այլ նաև ոչ մեծ ջերմաստիճանի և ճնշումների պայմաններում:

Ջրի անջատումով քիմիական ռեակցիաների օրինակ են հանդիսանում հետևյալները՝





Ունակցիայի ընթացքում ջրի մոլեկուլները կուտակման ինքնուրույն գոնաներ չեն առաջացնում, այլ խառնվում են այլ ծագում ունեցող ջրերի հետ:

Էական է նշել, որ բնական պայմաններում շատ մեծ մասշտարներով տեղի է ունենում հիմնական ծագումնաբանական ջրերի խառնում:

Ոչ վաղ անցյալում տեկստոնական շարժումների մարդկության, որտեղ խորը խորասուզված ապարներ դուրս են հանվել (քերվել) երկրի մակերևույթ կամ մակերևույթին մոտ, սկսում է ծովային ծագման ջրերի խառնումը մթնոլորտայինով: Շատ հաճախ խառնված ջրերը դուրս են գալիս երկրի մակերևույթ, մասնավորապես, Կավկազում, Կարպատներում: Խառնված ջրերը լայնորեն տարածված են արտեզյան ավազանների պլատֆորմաներում:

8.2. ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐԸ ԵՎ ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԻՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորերկրյա ջրերի քիմիական կազմի չևավորման գործողությունը: Ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման գործողությունը: Ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման գործոնը բնական կամ արհեստական պատճառ է (ուժ, դաշտ, երևույթ, նյութ և այլն), որը պայմանավորում է տվյալ ջրաերկրաբանական այս կամ այն ջրաերկրաբիմիական գործընթացների ի հայտ գալը, գոյությունը կամ փոփոխությունը:

Ստորերկրյա ջրերի քիմիական կազմը տվյալ ջրաերկրաբանական համակարգում մշտապես գոյություն ունեցող գործոնների և դրանցով պայմանավորված գործընթացների համալիր ազդեցության տակ սովորաբար շրջակա միջավայրի հետ գոտնվում է ֆիզիկաքիմիական դինամիկ հավասարակշռության մեջ: Այդ հավասարակշռության խախտումը հանդես կգա դրա վրա այս կամ այն ժամանակավոր գործող գործոնների ազդեցությամբ, որոնք կփոխարինեն արդեն գոյություն ունեցող գործընթացների բնույթը կամ կպայմանավորեն նորերի ի հայտ գալը:

Ստորերկրյա ջրերի քիմիական կազմը բնորոշող գործոնները ան-
չափ շատ են: Դրանցում առանձնացնում են հետևյալ խմբերը՝ 1) ֆիզի-
կաքիմիական՝ ջրի հատկությունները տարրեր ֆազային վիճակներում,
ջլային լուծույթներում, քիմիական տարրերում և միացություններում և
այլն, 2) ֆիզիկական՝ ջերմաստիճան, ճնշում, տաղիուակտիվություն,
մագնիտիզմ, գրավիտացիա և այլն, 3) ֆիզիկա-աշխարհագրական՝ կի-
մա, հատկապես տեղումներ և գոլորշիացում, ռելիեֆ, ջրաբանություն,
դրենացման պայմաններ և այլն, 4) երկրաբանական-ջրաերկրաբանա-
կան՝ տեկստոնիկա, մագմատիզմ և մետամորֆիզմ, կտրվածքի ֆացիալ
կառուցվածք, ապարների միներալոգիական կազմ, ջրադինամիկական
պայմաններ, հնէաջրաերկրաբանություն և այլն, 5) կենսաբանական՝
միկրոֆլորա և միկրոֆաունա, 6) տեխնածին (անտրոպոգեն) [4]:

Ներկա ժամանակներում համեմատաբար խորը հետազոտված են
ֆիզիկա-աշխարհագրական, երկրաբանա-ջրաերկրաբանական, որոշ
ֆիզիկական (ջերմաստիճան, ճնշում) գործոնների դերը ջրաերկրաբա-
նական կտրվածքի տարրեր, այդ բվում նաև խորը մասերում,
ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևափորման գործում: Վերջին
ժամանակներում շատ բան է արված ջրի և բնական լուծույթների ֆիզի-
կա-քիմիական հատկությունների, ստորերկրյա ջրերում կենդանի նյու-
թերի դերի ուսումնասիրություններում: Համեմատաբար բույլ է ուսում-
նասիրված երկրի ֆիզիկական դաշտի ազդեցությունը (Էլեկտրական,
գրավիտացիոն, մագնիտային):

Ջրաերկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ, ելնելով
ստորերկրյա ջրերի քիմիական կազմի վրա տարրեր գործոններից և
գործընթացներից, դրանց ներգրծության նշանակության արդյունքների
վերլուծությունից, կարևոր է դրանց մեջ որոշել առաջնայինները և երկ-
րորդայինները, անմիջականները և անուղղակինները, մշտական կամ
ժամանակավոր, ռեզիսնալ կամ մասնակի գործողները: Այն համարվում
է ստորերկրյա ջրերի ծագման հարցերի լուծման անհրաժեշտ հիմքը,
ուղղունալ ջրաերկրաբանական օրինաչափությունները պարզելու,
ջրաերկրաբանական կիրառական խնդիրներ լուծելու համար և այլն:

Առավել դիմամիկ գործոնները, որոնք բերում են համեմատաբար
կայուն համակարգի՝ ապար-ջուր-գագ-կենդանական նյութեր քայլայ-
մանը, հանդիսանում են բնական գործոնները հատկապես տեկտոնա-
կան շարժումները և դրանց ուղղվածությունը:

Սրորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման քևական երկրաբանիական իրադրությունները: Բնական իրադրությունն ազդում է երկրակեղուում լնթացող երկրաբանիական գործընթացների և որոշ տարրերի միզրացիայի վրա:

Ա. Մ. Օվչիննիկովի և այլոց կողմից առանձնացվում են ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման երեք ջրաերկրաքիմիական իրադրություն՝ օքսիդացման, վերականգնողական և մետամորֆային:

Օքսիդացման իրադրությունը բնութագրվում է ջրում լուծված և գերազանցապես մքնոլորտային ծագում ունեցող N_2 , O_2 , CO_2 և իներտ գազերով: Բարենպաստ երկրաբանական պայմանների դեպքում դրանք ստորերկրյա ջրեր են ներթափանցում ինֆիլտրացիոն ջրերի հետ: Կարևոր օքսիդացնող հանդիսանում է թթվածինը: Դրա պարունակությունը բնական ջրերում փոփոխվում է 0.1-ից մինչև 15մգ/դմ³ սահմաններում:

Օքսիդացման իրադրությունում օքսիդացման-վերականգնման այստեղիալի (Eh) մեծությունը փոփոխվում է ազատ թթվածնի պարունակությունից կախված: Այն ուղիղ համեմատական է թթվածնի քանակի մեծությանը: Բնական պայմաններում նմանատիպ կախվածությունը հաճախ խախտվում է pH -ի փոփոխումով: Չնայած դրան՝ Ա. Վ. Շերբակովն առաջարկում է օքսիդացման միջավայրի ներքին սահմանն ընդունել հետևյալ ցուցանիշները՝ Eh = +250մՎ, եթե pH = 5.5 - 8.5 և ջրում ազատ թթվածնի պարունակությունը մոտ 3.5մգ/դմ³: Վերին սահմանը պայմանականորեն որոշվում է՝ Eh ≈ +1000մՎ, եթե pH < 3 և ազատ թթվածնի առավելագույն պարունակությունը մոտ 5մգ/դմ³ է:

Օքսիդացման իրադրությունը գլխավորապես դիտվում է երկրակեղին վերին շերտերում, առանձին տեղամասերում այն հայտնաբերվում է մինչև 1000 մ խորությունների վրա:

Օքսիդացման իրադրությունում ջրերը հիմնականում ունեն ոչքարձ ընդհանուր հանքայնացում, հիդրոկարբոնատային և սուլֆատային անիոնային կազմ, որոնցում pH -ը 2-ից մինչև 9-է (հաճախ 6-9):

Վերականգնման իրադրությունը կապված է հիմնականում կենսաքիմիական ծագման գազերի հետ՝ CH_4 , CO_2 , ծանր ածխացրածին-

Աեր, N_2 , H_2S , H_2 , որոնք հանդիսանում են կենսաքիմիական (միկրո-կենսաբանական) գործընթացների արդյունք:

Ստորերկրյա ջրերում օքսիդացման-վերականգնման պոտենցիալի մեծությունը ծծմբաջրի քանակության մեծացումով փոքրանում է:

Օքսիդացման իրադրությունից վերականգնման իրադրության անցումը կատարվում է աստիճանաբար: Ըստ ծծմբաջրածնի պարունակության՝ առանձնացնում են թույլ վերականգնման միջավայր ($H_2S = 7 - 10 \text{մգ}/\text{լմ}^3$, $Eh \approx 0 \text{մՎ}$), համաշափ վերականգնման և կտրուկ վերականգնման միջավայրեր: Ջրերում այդ միջավայրերի քաժանման սահմանը ծառայում է $H_2S + HS^-$ պարունակության գոնան, որը հավասար է $50 \text{մգ}/\text{լմ}^3$: Ջրերում ծծմբաջրածնի այդ կոնցենտրացիան, եթե $pH = 5.5 - 8.5$, համապատասխանում է $Eh \approx -150 \text{մՎ}$ մեծությանը:

Մերամորֆական իրադրություններ պայմանավորված են հիմնականում մետամորֆական ծագման գազերի առկայությամբ՝ CO_2 , H_2S , H_2 , CH_4 , CO , N_2 , HCl , HP , NH_4 , SO_2 : Ապարներից դրանք անջատվում են բարձր ջերմաստիճանի ազդեցության դեպքում: Մետամորֆական ծագման գազերի ի հայտ գալը հատուկ է երիտասարդ կամ ժամանակակից հրաբխականության և ներժայթքումային գործունեությունների մարգերին:

8.3. ԱՏՈՐԵՐԿՐՅԱՎ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման գործընթացները քաժանմում են երկու հիմնական խմբերի՝ ջրաերկրաքիմիական և ջրակենսաքիմիական՝ կենդանի նյութերի հաշվառմամբ [4]:

8.3.1. ՋՐԱԵՐԿՐՅԱՔԻՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Ջրաերկրաքիմիական գործընթացների համալիրում պայմանականորեն կարելի է առանձնացնել՝ 1) ջրապարունակ ապարների և շրջապատող միջավայրի լուծույթային նյութերի փոխանակման, այդ բավում ստորերկրյա ջրերի հանքայնացումը բարձրացնող (լուծում և տարալու-

ծում, ապակլանում, ջրատարալուծում, կոմպլեքսառաջացում և այլն) և նվազեցնող (նստեցում և բյուրեղացում, կլանում և այլն) գործընթացներ, 2) բուն բնական լուծույթներում նյութերի քանակական և որակական վերադասավորման (կոնվեկտիվ և դիֆուզային գանգվածատեղափոխության մասսապերեոն) գործընթացներ:

Ստորև տրվում է հակիրճ լուսաբանումը այն գլխավոր գործընթացների, որոնք ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորման վրա բողնում են որոշիչ ազդեցություն:

Տարրալուծում և լուծում: «Տարրալուծում» և «լուծում» տերմիններն ըստ նշանկության մոտ են իրար, սակայն դրանց հետ կապված գործընթացները, ըստ իրենց ազդեցության, տարրեր են, չնայած հաճախ դրանք օգտագործվում են որպես հոմանիշներ:

Տարրալուծում կրովում է միներալից որևէ տարրի լուծույթի մեջ անցման գործընթացը, որն ընթանում է առանց դրա բյուրեղային ցանցի ամբողջականության խախտման:

Լուծումը շրջապատող միջավայրից (ապարից) ցանկացած նյութի (միներալային, օրգանական, տարրեր ծագման գագերի) անցումն է ստորերկրյա ջրերի մեջ խոնների կամ մոլեկուլների տեսքով, որն ընթանում է միներալների բյուրեղային կամ ամորֆ կառուցվածքի ամբողջական քայլայումով:

Ապարների տարրալուծումը և լուծումը հիմնականում կապված է մքնոլորտային տեղումների և տեղի մակերևութային հոսքի ջրերի հաֆիլտրացիայի հետ: Ինչպես արդեն նշվել է, մքնոլորտային տեղումներն ունեն աննշան հանքայնացում, պարունակում են թթվածին և ածխաթթու գազ:

Ինֆիլտրացիոն ջուրը CO_2 -ի պարունակությամբ հանդիսանում է ակտիվ լուծիչ: Այն իր շարժմանը համընթաց, ի հաշիվ ապարների տարրալուծման, հարստանում է իոններով և աղերով:

Տարրալուծման ընթացքում առաջին հերթին, ջրի մեջ են անցնում հեշտ լուծվող աղերը՝ NaCl , հետո՝ Na_2SO_4 , MgSO_4 , CaSO_4 , Na_2CO_3 , վերջին հերթին կալցիումի և մագնիսիումի կարբոնատները:

Տարրալուծման գործընթացների համար էական նշանակություն ունեն ապարների լիթոլոգիական առանձնահատկությունները: Տարրալուծման արագությունը կավային և ափազային ապարներում ամբողջո-

վին տարբեր է: Հետևապես, տարրալուծման գործընթացների նույն տևողության դեպքում կավային և ավազային ապարներում գտնվող ջրերը կունենան տարբեր հանքայնացումներ և ոչ միանման քիմիական կազմ:

Եթե ինֆիլտրացիոն քաղցրահամ ջրերը ներդրվում են ծովային ծագման նատվածքային ապարներում տեղի է ունենում ապարներում ամփոփոված լուծույթների դրւու հանում (մղում), ինֆիլտրացիոն քաղցրահամ ջրերի խառնում ծովային ծագման ջրերի հետ, սկզբում լավ լուծվողի, իսկ հետո դժվար լուծվող միացությունների տարրալուծում և լուծում:

Մագմատիկ ապարները, որպես կանոն, տարրալուծմանն անմիջականորեն անհասանելի են: Դրանք սկզբում ենթարկվում են քիմիական հողմնահարման բարդ և երկարաժամկետ գործընթացներին: Հետագայում ածխաթթու գազի ներգործության արդյունքում, որը պարունակվում է ջրում, դրա մեջ են անցնում նատրիումը, ալյումինումը, կացիումը, սիլիկահողը (կայծքարահողը):

Երկրակեղևի վերին մասերում, սուլֆիդների (պիրիտ FeS_2 , գալենիտ PbS , սֆալերիտ ZnS , խալկոպիրիտ CuFeS_2 և այլն) կուտակման տեղամասերում լուծված թթվածնի առկայությամբ ջրերի ազդեցության տակ տեղի է ունենում դրանց օքսիդացում: Արդյունքում առաջանում են մետաղային սուլֆատներ, ջրում կտրուկ ընկնում է pH -ը (6.9-ից մինչև 2.9), կուտակվում է սուլֆատ իոն և մեծանում է երկարի, պղնձի, կապարի և այլ մետաղների պարունակությունը:

Զրի խրացում (կոնցենտրացում): Զրի կոնցենտրացումն արտահայտվում է դրանում լավ լուծվող նյութերի քանակի մեծացումով, որը տեղի է ունենում մաքուր ջրի գորոշչացման, տրանսպիրացիայի կամ սառեցման վրա ծախսման արդյունքում: Զրի տարրեր քիմիական կազմի ձևավորումը կախված է շոգեհարման (գորոշչացման) ենթարկվող ելակետային (սկզբնական) ջրի քիմիական կազմից և դրա կոնցենտրացիայի աստիճանից:

Գորոշչացումը համարվում է հատկապես չորային շրջանների ոչ խորը տեղադրված ($<3\text{մ}$) գրունտային ջրերի քիմիական կազմի ձևավորման կարևոր գործընթացներից մեկը, որտեղ այն առաջ է բերում ցամաքային աղակալում:

Գրունտային ջրերի գոլորշիացումը տեղի է ունենում մազանոթային եզրաշերտից (կօյմա): Արդյունքում ջուրը գոլորշիանում է, իսկ ջրալու աղերը մնում և կուտավկվում են հողում, աէրացիայի գոտու ապարներուն և գրունտային ջրերում: Այս գործընթացով տեղի է ունենում հողերի աստիճանական աղակալում:

Գոլորշիացման հետևանքով գրունտային ջրերի հանքայնացման մեծացումը ուղեկցվում է աղանստեղումով, կատինային փոխանակումով և այլ բնական երևույթներով, որոնց համակեցությունը առաջ է բերում տարրեր քիմիական կազմի գրունտային ջրերի ձևավորում: Գ.Ն.Կամենսկին այդպիսի ջրերը անվանել է ցամաքային աղակալման ջրեր:

Ոչ խորը տեղադրված գրունտային ջրերի հանքայնացման բարձրացում տեղի է ունենում նաև բույսերի կողմից ջրի տրանսպիրացիայի արդյունքում: Բույսերի տրանսպիրացիայի ազդեցությունը գրունտային ջրերի հանքայնացման մեծության և քիմիական կազմի վրա առավել ցայտուն արտահայտվում է արիդ (չոր) կլիմայական պայմաններում:

Ջրի խտացում կատարվում է նաև դրա սառեցման արդյունքում: Սառեցմանը (կրիոգենային) խտացումը գործընթաց է, որը բնորոշ է բազմամյա սառցութային գոնաների, հատկապես սեզոնային սառեցման-հալեցման շերտերի գրունտային ջրերի համար: Այն քիչ նկատելի է ոչ սառցութային շրջաններում, եթե տեղի են ունենում միայն սեզոնային սառեցումներ:

Բնական լուծույթների կազմի վրա գոլորշիացման և սառեցման գործընթացների համատեղ ազդեցությունը կարելի է դիտել մակասացաշերտերի մակերևույթներին, որտեղ կուտավկվում են տվյալ ռեզիստնի բնական ջրերում առավել դժվար լուծվող միացությունները (SiO_2 , CaCO_3 , $\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$), սպիտակ, դեղնավուն, մոխրավուն գույների փոշենման աղերի բարակ շերտիկներ: Բացի այդ՝ լուծույթի սառեցումով խտացման դեպքում, սառույցի առաջացման հետ միաժամանակ տեղի է ունենում կարծր ֆազայի ձևավորումը այն միացությունների, որոնց լուծելիությունը բնորոշ է տվյալ ջերմաստիճանային պայմաններին:

Քաղցրահամ ջրերից նստեցվում են սիլիկատները և կալցիումի, հետո մագնեզիումի կարբոնատները, աղաջրերից՝ կալցիումի և նատրիումի սուլֆատները: Բացի այդ՝ հաստատված է, որ հալոցքային ջուրն ունի լուծելիության բարձր ակտիվություն:

Փորձնականորեն ապացուցված է, որ ծովի ջրի տարբեր աստիճանի (-1.8°C-ից մինչև -55°C) աստիճանական սառեցման արդյունքում յուրաքանչյուր անգամ ջրի կարծր ֆազա են անցնում տարբեր աղեր, դրանով իսկ փոփոխվում է մնացած լուծույթի և հանքայնացման աստիճանը և քիմիական կազմը: Այս դեպքում ամբողջ լուծույթը վերափոխվում է սառույցի -55°C-ից ցածր ջերմաստիճանում:

Դիտարկված, ինչպես նաև մի շաբթ այլ գործընթացներով ստորերկրյա լուծույթից աղանատեցումները պայմանավորում են ապարների հաստվածքում, այսպես կոչված, երկրաքիմիական արգելափակոցների (Բարերօն) ձևավորում: Դրանք տարբերի կուտկման տեղամասերի կոնտակտներում բնորոշիչ գոնաներ են, տարբեր երկրաքիմիական և ջրաերկրաքիմիական պայմաններով:

Սորբցիոն (կլասիման, սորբինալ) գործընթացները շրջապատող միջավայրից գոլորշիմների, գագերի, լուծված նյութերի կլանումն է կարծր մարմինների և հեղուկների կողմից: Տարբերում են սորբցիայի հետևյալ տեսակները՝ 1) աղտորքցիա, 2) արսորքցիա, 3) քեմոսորքցիա:

Սորբցիոն գործընթացների մասշտարը, բացի նյութի բնական (իոնի միջուկ, շառավիղ և այլն) ցուցանիշներից, պայմանավորված են նաև ֆազի բաժանման մակերևույթի մեծությամբ, դրա համար էլ առավել լավ սորբցիոն հատկություններով բնորոշագրվում են բարձր դիսպերսային ապարները, միներալային և օրգանական կողոյինները: Առաջին հերթին դրանք կավային միներալներն են՝ կառինիտը, գլաուկոնիտը, մոնտմորոնիտը և այլն, ինչպես նաև նոր ձևավորված կողոյիային նստվածքները, օրինակ՝ երկարի, ալյումինի հիդրօքսիդները, օրգանական կոլիխինները, գլխավորապես հումուսը: Թվարկած նյութերի մեծամասնությունը բնորոշագրվում է մասնիկների բացասական լիցքով, հետևապես հավաքում են կատիոններ: Անիոնների սորբցումը հնարավոր է, սակայն այն թույլ է ուսումնասիրված:

Կատիոնների սորբցիոն ունակությունը ինչքան բարձր է, նույնքան ցածր է դրանց հիդրատացիայի (ջրակցման) էներգիան: Դրա համար էլ

ըստ սորբցիոն ունակությունների կատիոններն առաջցնում են հետևյալ շարքերը (ըստ Կ. Կ. Գեղրոյցի):



$\text{Mg}^{2+} < \text{Ca}^{2+} < \text{Sr}^{2+} < \text{Ba}^{2+} < \text{Al}^{3+} < \text{Fe}^{3+}$ իսկ տարրերալիցք կատիոնների համար՝ $\text{Me}^+ < \text{Mg}^{2+} < \text{Me}^{3+}$, այսինքն՝ ինչքան փոքր է կատիոնի լիցքը, այնքան վատ է այն սորբցվում:

Սորբցիոն գործընթացներն եական ազդեցություն կարող են բողմել ստորերկրյա ջրերի քիմիական կազմի վրա, հետևապես, կապված են մեծ դիսպերսայնություն ունեցող ապարների հետ: Ակնհայտ է, որ սորբցիայի ազդեցության տակ ստորերկրյա ջրերի քիմիական կազմի փոփոխությունը առավել նշանակալից է, եթե խախտվում է ջուր-ապար համակարգի սորբցիոն հավասարակշռությունը (օրինակ ջրադինամիկական կամ ջրաերկրաքիմիական պայմանների փոփոխության ժամանակ) և մարում է ապարի սորբցիոն ծավալի հագեցմանը զուգընթաց:

Սորբցիոն գործընթացների կանխատեսումն ունի կարևոր նշանակություն աղտոտված ստորերկրյա ջրերի «ինքնամաքրման» ունակության գնահատման ժամանակ, եթե ֆիլտրացիան կատարվում է բարձր դիսպերսային ապարների միջով:

Կարիոնային փոխանակումը բնական լուծույթների կատիոնների հետ ապարում պարունակվող կլանված կատիոնների համարժեք քանակով փոխանակման գործընթաց է: Կատիոնային փոխանակումը կապված է նրբաղիսպերս ապարների (կավեր, կավավազներ) ֆիզիկա-քիմիական կլանման ունակության հետ:

Փոխանակված իոնների քանակությունը, արտահայտված մգ-համարժեք/ 100գ չոր ապարի կամ %-ով չոր նյութի կշիռ, կոչվում է կլանման տարողունակություն (եմկություն): Կավային միներալների կլանման տարողունակությունը այսպիսին է՝ մոնտորոնիլիտ՝ 80-150, ջրափայլարներ (հիդրոփայլարներ)՝ 10-50, կաղինիտ՝ 3-15, հալուազիտ՝ 10-50մգ-համարժեք/100գ:

Ըստ Կ. Կ. Հեղրոյցի կատիոնային փոխանակման՝ ինտենսիվությունը կախված է ապարների կոլորի մասերի (կլանիչ համալիրի) ակտիվությունից, փոխանակման կատիոնների տեսակից, կուտակումից, լուծույթի քիմիական բաղադրությունից և այլն: Ընդհանուր առմամբ, ապարի կատիոնների կլանումը կամ ադսորբցիան, բնական այլ պայման-


Աերի հավասարության դեպքում կախված է դրանց վաղենտականությունից (արժեքականությունից): Որքան մեծ է կատիոնի վալենտականությունը, այնքան այն ուժեղ է կլանվում կավային ապարի կողմից: Պարզված է, որ կոտիոնային փոխանակումը առաջատար նշանակություն է ձեռք բերում ընդարձակ տարածում ունեցող կավային և ավագակավային նատվածքների պայմաններում և ի հայտ է զայս ստորեկլյա ջրերի տարրեր գենետիկական տիպերի փոխարինման (տեղակալման) հանքայնացման և քիմիական կազմի կտրուկ փոփոխման տեղամասերում՝ անկախ դրանց առաջ բերող գործոններից:

Ընդհանուր առմամբ իոնների փոխանակման գործընթացներն առավել տարածված են ջրաերկրաբանական կտրվածքի ամենավերին մասերում, որտեղ ապարների իոնափոխանակման ունակությունը, շնորհիվ մեխանիկական և քիմիական հողմնահարման գործընթացների, մշտապես պահպանվում և վերականգնվում է՝ նպաստելով կոլոիդառաջացման և տարալուծման (դիսպերզացիա): Բացի այդ՝ նշված զոնայի (ազատ ջրափոխանակման) համար բնորոշ են թույլ հանքայնացում ունեցող ջրերը, որոնցում կոմպոնենտների կոնցենտրացիան (քաղաքությունը) հաճախաբեկի և ապարների կլանման տարողունակությունների հետ: Այդ պայմաններում կավային միներալները կրում են բացասական լիցք, որը խթանում է կատիոնների փոխանակումը: Հարկ է նշել, որ հենց այդ զոնայի բեռնաբախման տեղամասերի ճահճային լանջաֆուների և արդյունաբերական աղտոտման պայմանների համար բնորոշ են թարմ կոլոիդային նատվածքների, առաջին հերթին երկարի, այլումինի, մանգամի կիրոքսիդների, իսկ սահցութային լանջաֆուներում, բացի դրանցից հելիումի սիլիկաթթվի առաջացման գործընթացները: Ըստ Ս. Ռ. Կրայնովի՝ իիմնային միջավայրում իիդրօքսիդները կլանում են կատիոնները, իսկ թթվային միջավայրում՝ ամիոնները և հատկապես կարող են նպաստել ինչպես կատիոնների, այնպես էլ անիոնների փոխանակմանը:

Բնական պայմաններում իոնային փոխանակման գործընթացը առանձին տեսքով դիտվում է համեմատաբար հազվագյուտ, սովորաբար այն կցորդվում է այլ (սորբցիոն, դիֆուզային, օսմոտիկ և այլ) գործընթացների հետ, որոնք բնորոշ են թույլ ջրաբափանց ապարներին:

Ջրալուրալուծումը (հիդրոլիզ) իրենից ներկայացնում է փոխանակման տարրալուծման ռեակցիա՝ ջրի և տարրեր քիմիական միա-

ցույքունների միջև, որոնք ջրի ներգործությամբ տարրալուծվում և միանում են դրա իոնների հետ:



Զրատարրալուծման ենթական միացություններից են սիլիկատները, ալյումոսիլիկատները, որոշ աղեր, բարդ եթերայուղեր և այլն: Զրատարրալուծումը հանդիսանում է բազմաթիվ բնական և տեխնոլոգիական գործընթացների հիմք: Բնական ջրատարրալուծման արդյունք են օխրան, գորշ երկարաքարը, ալյումինումի հիդրօքսիդը և այլն:

Դիֆուզիա: Դիֆուզիա ասելով հասկանում են որևէ միջավայրում նյութի մանրագույն մասնիկների (ատոմ, մոլեկոլ, իոն) տեղաշարժը դրանց կոնցենտրացիայի նվազման ուղղությամբ՝ հանգեցնելով միջավայրում մասնիկների հավասարաչափ բաշխմանը: Մասնիկների տեղաշարժը կատարվում է կոնցենտրացիայի գրադիենտի ազդեցության տակ՝ նյութի շատ պարունակության վայրից դեպի ցածր պարունակության վայրը: Գագերում դա կատարվում է արագ, հեղուկներում՝ դանդաղ, պինդ մարմիններում՝ չափազանց դանդաղ:

Բնական պայմաններում դիֆուզիայի արդյունքում տեղի է ունենում ստորերկրյա ջրերի կոնցենտրացիայի հավասարեցում, ինչպես նաև ապարների դիֆուզիոն աղացերծում և ջրերի աղայնացում:

Ստորերկրյա ջրերի հանքայնացման և քիմիական կազմի ձևավորման գործում մոլեկուլյար դիֆուզիայի դերը ջրաերկրաբանությունում մեկնաբանվում է տարբեր ձևով: Շատ հետազոտողներ այդ հարցում դիֆուզիոն գործընթացներին մեծ նշանակություն չեն տալիս: Ա. Պ. Վինգրադովը (1967) ենթադրում է, որ դիֆուզիոն գործընթացների փոքր արագությունը, նույնիսկ երկրաբանական ժամանակի մասշտաբներով, չի կարող ապահովել նշանակալից նյութային զանգվածի տեղաշարժը շոշափելի հեռավորությունների վրա:

Որոշ հետազոտողներ (Ս. Ի. Սմիրնով և ուրիշներ) դիֆուզիան համարում են խորքային բարձր հանքայնացման ջրերի կազմի ձևավորման որոշիչ գործընթաց, դրանց գենետիկորեն կապելով հնագույն հալոգեն շերտախմբերի հետ:

Զրաերկրաբանական գրականությունում հաճախ հանդիպում է «դիֆուզիոն տարրալուծում» տերմինը, որի տակ հասկանում են կավային ապարների ծակոտինային հեղուկից կոմպոնենտների (բաղադրիչների) դիֆուզիան, որը տեղի է ունենում կոնցենտրացիայի (խտության)

գրադիենտի ազդեցության տակ: Կավերի դիֆուզիոն տարրալուծություն հնարավոր է այն դեպքում, եթե կոնցենտրացիայի գրադիենտի մեծությունը փոքր է կոնվեկտիվ շերտում, այսինքն՝ կավերի հետ կոնտակտի մեջ գտնվող ջրատար հորիզոնում կամ բուն կավերի մակրոծակոտիներում: Այսպիսով, ի հաշիվ դիֆուզիայի, կավերում կարող են աղագերծվել և փոխել իրենց կլասոն կոմպլեքսի կազմը: Հնարավոր է նաև հակառակ գործընթացը՝ կավերի դիֆուզիոն աղակալում, որը բնորոշ է արիդ շրջաններին (մարզերին): Բնական պայմաններում թույլ ջրաքափանց ապարներում դիֆուզիան սովորաբար հանդիսանում է ջրաերկրաքիմիական համալիր բարդ գործընթացների բաղադրիչ մասը՝ կախված լինելով նաև ջրադինամիկական պայմանների (ֆիլտրացիայի և դիֆուզիայի հարաբերակցության) առանձնահատկություններից:

Հոսքի կոնվեկտիվ և մոլեկուլային դիֆուզիայի բաղադրիչների համեմատական դերի գնահատման համար օգտագործում են Պեկլի թիվը (Pe):

$$\text{Pe} = \frac{VL}{D} \quad (62)$$

որտեղ՝

V - ն ֆիլտրացիայի արագությունն է, ամ/վրկ,

L - ը երկարությունն է, ամ,

D - ն դիֆուզիայի գործակիցն է, որը բնորոշում է նյութի ունակությունը դիֆուզիոն ճանապարհով մտնելու նոր անշարժ միջավայր սմ²/վրկ:

Հաշվում են, որ եթե $\text{Pe} < 0.05$ համակարգում կոմպոնենտների տարածումը որոշվում է պայմանավորված միայն մոլեկուլյար դիֆուզիայով, եթե $\text{Pe} > 10$ ՝ միայն կոնվեկցիայով: Դրանց միջանկյալ մեծությունները բնութագրում են կոնվեկտիվ-դիֆուզիային տեղաշարժը (փոխանցումը):

Ակնհայտ է, որ սոորեկրյա ջրերի քիմիական կազմի ձևավորումը դիֆուզիոն գործընթացների ազդեցության տակ հիմնականում (մեծամասամբ) բնորոշ է «փոքր» արագությամբ շարժվող սոորեկրյա ջրերի ջրաերկրաբանական կտրվածքի էլեմենտներին (դժվար ջրափոխանակման գոնա, կավային շերտախմբեր, հալոցեն ապարներ և այլն):

8.3.2. ԶՐԱԿԵՆՍԱՔԻՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Ստորերկրյա ջրերում կենդանի նյութերի մասնակցությամբ գործընթացներն ուսումնաժրված են ոչ բավարար, չնայած ակնհայտ է, որ միկրոօրգանիզմների ակտիվ կոնսագրոծունեությունը ստորերկրյա ջրերում քիմիական կազմի ձևափորման կարևորագույն գործոններից մեկն է: Ներկայումս բացահայտված է կենդանի նյութերի կարևոր դերը քիմիական տարրերի ընդհանուր շրջապատույտում՝ հատկապես ածխաջրածնի, ազոտի, երկարի, ծծումբի, ֆոսֆորի, կալիումի, սիլիցիումի, կենդանի օրգանիզմների (այդ թվում միկրոօրգանիզմների) և բուսականության զարգացման փուլում (ֆոտո- և քենոսինթեզի գործընթացներում), երբ միմերալային նյութերից սինթեզում են օրգանականները: Վերջիններիս քայլքայման և կենդանի նյութերի մահացման դեպքում նորից միներալիզացվում են, որը նույնպես ընթանում է միկրոօրգանիզմների մասնակցությամբ: Քանի որ բոլոր այդ գործընթացները սկզբունքում են հնարավոր են միայն ջրի առկայության դեպքում, ուստի ջրողորտում դրանք տարածված են գործնականում ամենուր, որտեղ ջերմաննշումային և համակենտրոնացման պայմանները նպաստավոր են կենդանի օրգանիզմների գոյության և զարգացման համար: Կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիան միկրոօրգանիզմները ստանում են բարձր էլեկտրարացասականություն ունեցող նյութերից, դեպի ցածր էլեկտրարացասականություն ունեցող էլեկտրոնների տեղափոխման գործընթացում՝ ֆերմենտների ակտիվ մասնակցությամբ: Ֆերմենտները կատալիզացնում են այդ ռեակցիանները և հեշտացնում դրանց միջև քիմիական կոնտակտը (էլեկտրոնի տեղափոխում): Հայտնի է, որ միկրոօրգանիզմներն իրենց ֆերմենտիվ համակարգի օգնությամբ ընդունակ են մի քանի անգամ արագացնելու «ջուր-ապար» համակարգում օքսիդացման-վերականգնման ռեակցիանները:

Հայտնի է, որ միկրոօրգանիզմները ֆերմենտատիվ համակարգի օգնությամբ ի վիճակի են մի քանի անգամ արագացնել ջուր-ապար համակարգում օքսիդա-վերականգնման ռեակցիանները:

Բացի այն, որ դրանք անմիջական ազդեցություն են թողնում երկրաբանական միջավայրի վրա ընդհանրապես և, մասնավորապես ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ձևափորման վրա, դրանք հանդես

Են գալիս որպես կենդանի նյութերի կենսագործունեության սննդանյութերի, հատկապես այնպիսի, ինչպիսիք են CO_2 , H_2S , H_2 , O_2 և այլն:

Ստորերկրյա ջրերում առավել կարևոր կենսաքիմիական գործընթացները հանդիսանում են CO_2 -ի կենսածին առաջացումը, ծծմբացումը (սուլֆոֆիկացիան) և սուլֆատոերուկցիան, նիտրիտականացումը (նիտրիֆիկացում) և ապանիտրիտականացումը (ապանիտրիֆիկացում), մերանառաջացումը, ջրածնակլանումը:

Կենսածին CO_2 -ի առաջացումը առավել լայն տարածում ունեցող կենսաքիմիական գործընթաց է և անմիջականորեն ազդում է ստորերկրյա ջրերի քիմիական կազմի վրա: CO_2 -ի պարունակության ցանկացած փոփոխությունը՝ օգտագործումը (կամ անջատումը) կենդանի նյութերի կողմից, բերում է նախկին ռեակցիայի հավասարակշռության տեղաշարժի և համապատասխանաբար փոքրանում (կամ մեծանում) է H^+ և HCO_3^- պարունակությունը, այսինքն՝ տեղի է ունենում քնական լուծույթի ենթահիմնայնացում (կամ ենթաթթվեցում):


Հաս որում, ստեղծվում են պայմաններ CaCO_3 , $\text{CaMg}(\text{CO}_3)_2$ աղերի նատեցման կամ հակառակը՝ դրանց լուծման: Որպես կանոն՝ հենց այդ գործընթացների հետ է կապված ցամաքային և ծովային ծագման ապարների ճեղքերի նավթագազային կուտակումների հետ կոնտակտների (դժվարեցված ջրափոխանակման կամ հակառակը, պայմանների դեպքում) կալցիումիտացումը և ակտիվ ջրափոխանակման գոնայում կարստային տիպի գործընթացների ինտենսիվացումը:

Քանի որ ածխաթթու գազը հանդիսանում է ցանկացած օրգանիզմի կամ բույսի նյութափոխանակման վերջնական արդյունք, հետևաբես նշված գործընթացն ունի համատարած բնույթ և սովորաբար զուգորդվում է այլ ջրաերկրաքիմիական գործընթացների հետ: Մեծ քանակությամբ CO_2 -ի առաջացման գործընթացները լայնորեն զարգացած են նավթային շարքի օրգանական նյութերի կենսաքիմիական քայլայման հետ, երբ կան նպաստավոր պայմաններ օդակյաց ֆլորայի (մերան կամ պրոպանարքվեցնող մանրէներ) զարգացման համար:

Քիմիական և ջրաերկրաքիմիական պայմանների ձևավորման գործում կարևոր նշանակություն ունեն ծծմբացումը տիոնուային

(Thiobacillus), պուրպուրային և ծծմբամանրէների (օդակյաց և անօդակյաց) սերի միկրոօրգանիզմներով ծծմբի էլեմենտար և վերականգնողական ձևերի օքսիդացումը մինչև SO_4^- և սուլֆատոեղուկցիան՝ Desulfovibrio և այլ սերի մանրէներով ծծմբի էլեմենտար կամ օքսիդացած ձևերով վերականգնումը մինչև H_2S : Այս գործընթացներն իրենցից ներկայացնում են բնության մեջ ծծմբի շրջապտույտի կարևոր փուլեր :

Օդակենդանական պայմանների համար բնորոշ է ծծմբամանրէներով ծծմբացված (սուլֆոֆիլկացիայի) գործընթացը: Այն ընթանում է ըստ սխեմայի՝



Ծծմբացման գործընթացի ժամանակ բնական լուծույթներում նվազում է pH -ը, մեծանում է SO_4^- -ի պարունակությունը: Բացի այդ՝ առաջացած H_2SO_4 -ը ազրեսիվորեն ազդում է կարբոնատային, սիլիկատային, ալյումոսիլիկատային ապարների վրա, նպաստում է դրանց տարրալուծմանը և լուծմանը, ստորերկրյա ջրերի հարստացմանը ածխաթթվով, երկարօրսիդի սուլֆատով, օրգանական թթվածնով, որն արտահայտվում է նաև ստորերկրյա ջրերի քիմիական կազմի վրա:

Սուլֆատոեղուկցիոն գործընթացը հնարավոր է միայն անցումային կամ անօդակյաց օրգանական նյութերի առկայության, $0\text{-}2^\circ\text{C}$ -ից մինչև $70\text{-}80^\circ\text{C}$ ջերմաստիճանային պայմաններում: Այն ունի էական նշանակություն պլատֆորմային արտեզյան և միջլեռնային ավագանների շերտային ջրերի քիմիական կազմի ձևավորման համար:


Սուլֆատոեղուկցիան միանգամից պայմանավորում է մի քանի ջրաերկրաքիմիական հետևանքներ: Առաջինը սուլֆատոեղուկցիայի գործընթացների արդյունքներից մեկը հանդիսանում է մեծ քանակություններով միլիգրամներից մինչև 1կգ/1 H_2S -ի առաջացումը: Դրա հետ կապված՝ ուղղաձիգ կտրվածքի այն հատվածներում, որտեղ ակտիվությունը ընթանում են սուլֆատոեղուկցիայի գործընթացները, ստեղծվում են վերականգնման պայմաններ ($\text{Eh} - \text{ը}$ մինչև 300mV և ավելի քիչ), որը իր հերթին բերում է փոփոխական վալենտականության տարրերի միգ-

բացիայի պայմանների փոփոխության, և մի շարք տարրեր (Fe, Cu, Zn, Pb և այլն) առաջացնում են սովորական նստվածքներ:

Երկրորդը, սովորական փոփոխության մանրէների ակտիվ զարգացման դեպքում, անջատվում են նշանակալից, ընդհուպ մինչև գերհագեցման, քանակությամբ ածխաթթուներ, որոնք ջրում Ca և Mg առկայության դեպքում խթանում են այդ տարրերի կարբոնատների նստեցումը: Այսպիսով, սովորական առաջացման հաշվին, կենսածին CO₂-ի մուտքի և կալցիումի ու մագնիսիումի կարբոնատների նստեցման արդյունքում կարող է էականորեն իջնել (նվազել) ստորերկրյա ջրերի հանքայնացումը և գերակշռող խոնների փոխհարաբերությունը:

Ստորերկրյա ջրերի քիմիական և հատկապես գազային կազմի ձևավորման գործում կարևոր դեր են խաղում ստորերկրյա ջրերու գտնվող նիտրիֆիկացնող և ապանիտրիֆիկացնող մանրէների գործունեության հետ կապված գործընթացները և իրականացնում են ազոտի շրջապատույթը բնության մեջ: Նիտրիֆիկացման գործընթացը կատարվում է հողային ջրերում և համարվում է նիտրիտների առաջացման կարևոր գործընթաց, որն անհրաժեշտ է բույսերին: Նիտրիֆիկացնող մանրէները չեն կարող գոյություն ունենալ օրգանական նյութերից գործ միջավայրերում: Նիտրիֆիկացման գործընթացներն ընթանում են ստորերկրյա ջրերի մինչև 65-70°C ջերմաստիճանային և մինչև 300գ/լ ընդհանուր հանքայնացման պայմաններում:

Ապանիտրիֆիկացման գործընթացը բնորոշ է վերականգնման պայմաններին (օրինակ՝ արտեզյան կառուցվածքների խոր մասերը): Այն ստորերկրյա ջրերում նիտրիտների (NO₂⁻) և նիտրատների (NO₃⁻) տարրալուծման միկրոկենսաբանական գործընթաց է, որը կատարվում է վերականգնման միջավայրում ազատ ազոտի անջատումով: Այն ընթանում է ըստ սխեմայի՝



Պլատֆորմային և միջլեռնային արտեզյան կառուցվածքների խոր մասերի համար բնորոշ է նաև մեթանառաջացման գործընթացը, որը կատարվում է մեթանառաջացնող մանրէներով՝ ի հաշիվ ճարպային թթուների, ինչպես նաև ջրածնի ու ածխաթթուների տարրալուծման:

ԳԼՈՒԽ IX

ԶՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԶԵՎԵՐԸ ԱՊԱՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Կախված ապարների ջրային և ֆիզիկամեխանիկական հատկություններից, ջրի տեղադրման պայմաններից, ապարների հետ ջրի փոխագրեցության աստիճանից և այլ գործոններից՝ ապարները պարունակում են տարրեր ձևի ջրեր: Ապարներում այս կամ այն ձևի ջրերի առկայությունը պայմանավորում է ստորերկրյա ջրերի շարժման պայմանները և օրինաչափությունները:

Ջրաերկրաբանությունում ուսումնասիրությունների հիմնական օբյեկտ հանդիսանում են ջրահագեցած ապարներում շարժվող ջրերը, այսինքն՝ ստորերկրյա ջրերի ֆիլտրացիայի գործընթացները: Սակայն ֆիլտրացիայի գործընթացների հետ համատեղ դիտվում են ջրի շարժման այլ ձևեր (ինֆիլտրացիոն, մազական, մոլեկուլյար և այլն), ինչպես նաև երևույթներ ու գործոններ, որոնք ազդում են ստորերկրյա ջրերի ֆիլտրացիայի պայմանների վրա: Օրինակ՝ գրունտային ջրերի մակարդակի և ոռոգելի հողատարածքներում աղակալման գործընթացների զարգացումների կանխատեսման և կարգավորման հիմնավորված լուծումներ անհնար է մշակել առանց աէրացիայի գոնայում խոնավության (ջրի) և աղերի տարրեր ձևերի շարժման և գոլորշիացման գործընթացների ուսումնասիրության և քանակական գնահատման:

Վերջիններիս հետ կապված, ստորև տրվում են ջրի շարժման պայմանները և օրինաչափությունները ջրով չհագեցված ապարներում (աէրացիայի գոնա) և ջրով հագեցված ապարներում (ֆիլտրացիայի կամ ջրահագեցման գոնա):

9.1. ԱԷՐԱՑԻԱՅԻ ԶՈՂԱՅՈՒՄ ԶՐԻ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵՎԵՐԸ ԵՎ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Աէրացիայի գոնան հանդիսանում է բազմափուլային (բազմաֆազային) համակարգ, որում գտնվում են տարրեր ձևի ջրեր: Ապարի պինդ մասնիկների և ջրի միջև տեղի են ունենում բարդ փոխագրեցություններ, որոնց արդյունքում ապարի պինդ մասնիկներ-ջուր, օդ-ջուր բաժանման սահմանների վրա ի հայտ են գալիս տարրեր բնույթի և մեծությունների

(մազանոթային, սորբցիոն, օսմոտիկ և այլն) ուժեր: Դրանք սովորաբար գերազանցում են ծանրության ուժին:

Եթե հաշվի առնենք այն, որ խոնավությունը և դրա մեջ լուծված նյութերը գտնվում են նաև ջերմային, էլեկտրական, մագնիսական կոնցենտրացիաների (քաղաղությունների) գրավիենտների (աստիճանափոխումների) և գրավիտացիոն դաշտերի ազդեցությունների տակ, ապա հասկանալի կդառնա ուժերի հաշվի առնելու բարդությունը, որոնց ազդեցության տակ աէրացիոն գոնայում տեղի է ունենում խոնավության տեղաշարժը:

Ինչպես հայտնի է, աէրացիայի գոնայում առկա են ջրի բոլոր տեսակները: Դրանցից յուրաքանչյուրը բնութագրվում է տեղաշարժման որոշակի օրինաչափություններով: Վերը, բացառությամբ ազատ գրավիտացիոն ջրերի, արդեն դիտարկվել են հիգրոսկոպիկ, քաղանքային, մազանոթային և այլ տիպի ջրերի տեղաշարժման օրինաչափությունները:

Գրավիտացիոն ջրի շարժումը տեղի է ունենում մթնոլորտային տեղումների, մակերևութային և ոռոգման ջրերի աէրացիոն գոնայի ապար-ների մեջ ներծծման ժամանակ: Աէրացիայի գոնայի միջոցով ջրի ներծծման գործընթացը կոչվում է ինֆիլտրացիա: Տարբերում են ինֆիլտրացիայի երկու ձև՝ ազատ ներծծում և նորմալ ինֆիլտրացիա (տե՛ս նկ. 22' ա):



Նկ. 22' Աէրացիայի գոնայով ջրի ինֆիլտրացիայի սխեմաներ

ա) ազատ ներծծում, բ) նորմալ ներծծում, 1-ջրի ազատ ներծծումով աէրացիայի գոնայ, 2-ինֆիլտրացիոն հոսքի գոնա (θ խոնավությամբ), 3-մազանոթային գոնա,

հ₀- ջրի սյան բարձրությունը շուրջում, 1-բջջած գոնա

Ազատ ներծծման ժամանակ ջրի շարժումը՝ մեկուսացված շիթերի ձևով, կատարվում է ծանրության ուժի և մազանոթային ուժերի («ստորերկրյա անձրևներ» նմանվող) ազդեցության տակ, որոնք առաջանում են հողափոր կենդանիների, որդերի և բույսերի արմատային համակարգերի կենսագործունեությունների և այլ գործուների ազդեցության տակ: Ըստ որում, ապարների ծակոտինային տարածությունը մնում է չհազեցված ջրով և դրանում պահպանվում են մքննորտային օդի, գազերի և ջրային գոլորշիների շարժուները, որոնք և բացառում են հիդրոստատիկ ճնշման ազդեցությունը ջրի շարժման վրա:

Ինֆիլտրացվող ջրի նշանակալի քանակության դեպքում վարընթաց հոսքը լցնում է բոլոր ծակոտիները և ճեղքերը և ստեղծում է համատարած հիդրոպալիկական միջավայր, որի ներսում ջրի շարժումն ընթանում է ֆիլտրացիայի մեխանիզմով (հիդրոստատիկ ճնշման ազդեցության տակ), իսկ ինֆիլտրացիոն հոսքի և չհազեցված ապարների սահմանագծում գործում են ներծծման մազանոթային ուժերը (որպան նեծությունը h_0 լնդունում են մազանոթային բարձրացման կեսին հավասար, այսինքն՝ $h_0 \approx 0.5 H_0$): Ինֆիլտրացիոն հոսքի նման շարժումն անվանում են *նորմալ ինֆիլտրացիա* (տես նկ. 22՝ բ): Ինֆիլտրացիոն հոսքի ուժերի համատեղ գործունեությունը կարելի է արտահայտել հետևյալ գրաղինակով (I_w)միջոցով.

$$I_w = \frac{h_0 + l + h_r}{l} \quad (63)$$

որտեղ՝

$$(h_0 + l + h_r) \text{ գործող ճնշումն է, մ,}$$

լ-ը ինֆիլտրացիոն հոսքի երկարությունն է (թրջված զոնա):

Ինչպես երևում է (63) բանաձևից, ճնշման գրաղինակը (I_w), նորմալ ինֆիլտրացիայի ժամանակ անընդհատ փոքրանում է, սակայն միշտ մեծ է մնում միավորից: Այս դեպքում ջրի շարժումը ենթարկվում է Դարսի օրենքին (տես ներկայում): Տարբերությունը կայանում է միայն նրանում, որ Դարսի օրենքում մտնող ֆիլտրացիայի գործակիցը (k)

փոխարինվում է խոնավատարության (խոնավաքափանցելիության) գործակցով (k_b): Այն որոշվում է հետևյալ արտահայտությունից.

$$k_b = k \left(\frac{W - W_{\omega_0}}{W_l - W_{\omega_0}} \right)^{3.5} \quad (64)$$

որտեղ՝

W , W_{ω_0} և W_l - համապատասխանաբար բնական, առավելագույն մոլեկուլյար և լիկ խոնավություններն են (ըստ որում $W_{\omega_0} \leq W \leq W_l$):

Աերացիայի զոնայում խոնավության շարժման գործընթացը (գրավիտացիոն, մոլեկուլյային և մազանորային ուժերի ազդեցության տակ ազատ և մոլեկուլյար խոնավության տեղափոխում) ընդունված է անվանել խոնավատեղափոխում: Դրա բոլոր հիմնական պարամետրերը (խոնավաքափանցելիության գործակից, ներծծման մազանորային ճնշում, խոնավության պոտենցիալ) կախված են խոնավությունից:

Զրաերկրաբանական հետազոտությունների ժամանակ հողային ջրերը, ինչպես նաև հողի տիպը և կազմը ուսումնասիրում են հողերի չորացման և ոռոգման հետ կապված, ինչպես նաև անմիջապես հողային շերտերի տակ կամ դրանցից վերնաջրերով բաժանված գրունտային ջրերի ռեժիմի օրինաչափությունների պարզաբանման ժամանակ:

9.2. ԶՐԱՀԱԳԵՑՎԱԾ ԶՈՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԸՆԹՈՒՄԸ: ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

9.2.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Զրահագեցած ապարներում առկա են նախկինում դիտարկված ջրի բոլոր տեսակները (տես զլ. V. 5.3):

Ժաղանքային և մազանորային ջրերը պարուրում են ապարի մասնիկները, զքաղեցնում (լցնում) են մազական ծակոտիները և միներալային մասնիկների ծայրակցվածքներում առաջացնում են մենակներ: Մնացած ծակոտինային և ճեղքային ուղիներով (տարածություններով) հնարավորություն է ստեղծվում զքաղեցնում ջրի շարժմանը, որը ենթարկվում է ծանրության ուժի ազդեցությանը և հոսում է հիդրոստատիկ

ճնշումների տարբերության ազդեցության տակ: Գրավիտացիոն ջրի այդպիսի շարժումը ծակոտինային միջավայրում, որը հանդիսանում է ստորերկրյա ջրերի շարժման հիմնական ձևը, կոչվում է *ֆիլտրացիա* և հանդիսանում է «Ստորերկրյա ջրերի դիմամիկա» կուրսի ուսումնասիրության հիմնական օբյեկտը:

Ծակոտինային միջավայրում ստորերկրյա ջրերի շարժման պայմանների կարևոր գործուներից մեկը հանդիսանում է ծակոտկենությունը կամ, ավելի ճիշտ, բաց և դիմամիկ ծակոտկենությունները (տես գլ.V), որոնք ունեն ծայրահեղ տարրեր չափեր, ձևեր և դասավորություն մեկը մյուսի նկատմամբ: Ծակոտինային միջավայրում ծակոտինային ուղիների չափազանց բարդ բնույթի և ջրի շարժման արագությունների փոփոխությունները հնարավորություն չեն տալիս ճիշտ ուսումնասիրելու առանձին ծակոտինային կամ ճեղքային ուղիներում ֆիլտրացիոն գործնականությունը: Դրա համար էլ ջրի շարժումը ծակոտինային միջավայրում դիտարկվում է լընդհանրացված և դրա բնութագիրը տրվում է ոչ թե ծակոտինային տարածքի առանձին կետերի կամ ուղիների համար, այլ ֆիլտրացիոն միջավայրի ամբողջ ընդլայնական կտրվածքի համար: Ընդ որում, ծակոտինային միջավայրում ջրի շարժման կարևոր բնութագիրը հանդիսանում է *ֆիլտրացիայի արագություններ*:

Ֆիլտրացիայի արագություն (ֆիլտրացիոն հոսքի արագություն) ասելով հասկանում են ջրի քանակ, որը միավոր ժամանակում անցնում է հոսքի (շերտի) ընդլայնական միավոր մակերեսով.

$$V = \frac{Q}{F} \quad (65)$$

որտեղ՝

V - Ա ֆիլտրացիայի արագությունն է, սմ/վրկ, մ/օր և այլն,

Q - Ա ֆիլտրացիոն հոսքի ծախսն է, սմ³/վրկ, մ³/օր և այլն,

F - Ղ ընդլայնական կտրվածքի մակերեսն է, սմ², մ²:

Ֆիլտրացիայի արագությունը ֆիզիկական տեսանկյունից, ներկայացնում է միջինացված կեղծ արագություն, քանի որ այն ջրի շարժումը դիտարկում է ընդլայնական կտրվածքի ամբողջ մակերեսով՝ ներառելով նաև այն մակերեսը, որը գրադեցված է ապարի միմերալային մասնիկ-ներով:

Չնայած իրական ֆիլտրացիայի նման վերացականությանը՝ այն հնարավորություն է տալիս լուծելու բոլոր ջրաերկրաբանական խնդիրները՝ բացառությամբ այն հարցերի, որոնցում ստորերկրյա ջրերի շարժման իրական (միայն ծակոտիներով) արագության որոշումը համարվում է պարտադիր (ուրվագծերի տեղաշարժ, աղտոտման զարգացման և պասկների տարածման կանխատեսումներ և այլ հարցերում), կամ ստորերկրյա ջրերի ֆիզիկակաքիմիական կազմի հնարավոր փոփոխությունների աղերի տեղատարման գործընթացների ինտենսիվության գնահատման և այլ հարցերում:

Ստորերկրյա ջրերի շարժման *իրական արագությունը* (ս) համաձայն (65) բանաձևի, կարելի է որոշել հարաբերակցությունից

$$u = \frac{Q}{Fn_n} = \frac{Q}{F'} = \frac{v}{n_n} \quad (66)$$

որտեղ՝

F' -ը ազատ (ֆիլտրացվող) տարածքի ընդլայնական կտրվածքն է, սմ², մ²,

n_n -ը ապարի դինամիկ (էֆեկտիվ, գործող) ծակոտկենությունն է (միավորի մասերով):

(66) բանաձևից երևում է, որ ծակոտկեն միջավայրում ջրի շարժման իրական միջին արագությունը միշտ նշանակալի մեծ է ֆիլտրացիայի միջին արագությունից, քանի որ դինամիկ ծակոտկենության մեծությունը (n_n) բոլոր դեպքերում փոքր է միավորից:

Ապարներում ստորերկրյա ջրերի շարժումն ըստ իրենց բնույթի կարող են լինել լամինար, տուրբոլենտ կամ խառը՝ լամինարատուրբոլենտային:

Լամինար շարժում ասելով հասկանում են հեղուկի շարժում՝ բարակ շիթերի կամ զուգահեռ շիթերի տեսքով, որոնք իրար չեն խառնվում և հոսքն անխզելի է:

Տուրբոլենտ (մրրկային) ասելով հասկանում են հեղուկի շարժում, որի դեպքում հեղուկի շիթերը խառնվում են իրար և կատարում են անկանոն, քառասյին շարժում՝ ամենաբարդ հետազծերով:

Համինարակուրովենկայինն ունի միջանկյալ նշանակություն երկու շարժումների միջև, այսինքն՝ տվյալ ֆիլտրացիոն հոսքի լամինար շարժումը նրա որևէ հատվածում փոխվում է տուրբովենտի:

Բնական պայմաններում ծակոտկեն և ճեղքավոր ապարներում զրի շարժումն ըստ իր բնույթի, շատ հաճախ լինում է լամինար: Միայն ապարների խոշոր դատարկություններում և ճեղքերում, ինչպես նաև ինժեներական կառույցների հնտենսիվ ներգործության մասնակի (լոկալ) տեղամասերում (օրինակ՝ հորտանցքերից հնտենսիվ զրի արտադրումների դեպքում) ստորերկրյա ջրերի շարժումը կփոխանցվի տուրբովենտի, որը նկատվում է կարքոնատային ապարների հնտենսիվ կարստավորված շրջաններում:

9.2.2. ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

Ստորերկրյա ջրերի լամինար շարժումը ենթարկվում է ֆիլտրացիայի գծային օրենքին, որը փորձերով հիմնավորել է Գրանսիացի հիդրավիկ Անրի Դարսին (1856 թ.): Այդ օրենքը նրա կողմից հիմնավորվել է ավազով լցված խողովակում զրի շարժման փորձնական ուսումնասիրությունների հիմքի վրա: Դարսիի փորձի սիենման բերվում է 23 նկարում (նկ. 23): Նկարից երևում է, որ ավազով լցված խողովակի մուտքի և ելքի մասերում զրի մակարդակները պահպանվել են հաստատուն նիշերի վրա H_1 և H_2 : Բազմաթիվ փորձերի արդյունքում որոշվել է հետևյալ կախվածությունը. զրի քանակը (Q), որն անցնում է խողովակի միջով միավոր ժամանակում, ուղիղ համեմատական է խողովակի ընդլայնական կտրվածքի մակերեսին (F), մակարդակների տարրերությանը ($\Delta H = H_1 - H_2$), որի հետևանքով կատարվում է ֆիլտրացիան, և հակադարձ համեմատական խողովակի երկարությանը (L ֆիլտրացիայի ճանապարհի երկարությանը): Այսպիսով, $A.$ Դարսիի օրենքը (ֆիլտրացիայի հիմնական օրենքը) ընդհանուր տեսքով կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով.

$$Q = kF \frac{H_1 - H_2}{L} = kF \frac{\Delta H}{L} \quad (67)$$

որտեղ՝

կ -ն համեմատականության գործակից է, որը հաստատում մեծություն է տվյալ ապարի և պայմանների համար և վերանվանվել է ֆիլտրացիայի գործակից:

$$\frac{Q}{L} \text{ հարաբերությունը, որը իրենից ներկայացնում է ֆիլտրացիայի ճանապարհին մակարդակի փոփոխությունը, կոչվում է ճնշման գրադիւնը կամ հիդրավիկական թեքությունը և նշանակվում է I տառով:}$$


Հավասարման (67) երկու կողմերը բաժանելով խողովակի (հոսքի) ընդլայնական կտրվածքի մակերեսի (F) վրա, կստանանք՝

$$\frac{Q}{F} = V = k \frac{\Delta H}{L} = kI \quad (68)$$

որտեղ՝

ν -ն ֆիլտրացիայի արագությունն է, սմ/վրկ, մ/օր և այլն:

Հավասարումը (68) ցույց է տալիս ֆիլտրացիայի արագության գծային կախվածությունը ճնշման գրադիւններից, և դրա համար էլ Դարսի օրենքն անվանում են ֆիլտրացիայի գծային օրենքը:



Նկ. 23 Ա. Դարսի փորձի սխեմա

Ֆիլտրացիայի գծային օրենքը դիֆերենցիալ տեսքով արտահայտվում է հետևյալ հավասարումով՝

$$v = -k \frac{dH}{dL} \quad (69)$$

որտեղ մինուս նշանը ցույց է տալիս, որ ֆիլտրացիայի ճանապարհին (հոսքի շարժման ուղղությամբ) H ճնշումը փոքրանում է (ընկնում է),
 $\frac{dH}{dL}$ մեծությունը բացասական է:

Ըստ Դարսիի օրենքի՝ ֆիլտրացիայի արագությունն ուղիղ համեմատական է ճնշման գրադիենտի առաջին աստիճանին:

9.2.3. ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ԳԵԼՅԻՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՊԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ֆիլտրացիայի գծային օրենքը (Դարսիի օրենք) արդարացի է ֆիլտրացիայի լամինար շարժման համար, որը բնական պայմաններում ունի լայն տարածում: Դրա համար էլ այս օրենքը շատ հաճախ անվանում են ստորերկրյա ջրերի շարժման հիմնական օրենք: Սակայն Դարսիի օրենքն ունի կիրառելիության սահմաններ՝ վերևի և ներքին:

Դարսիի օրենքի կիրառելիության վերևի սահմանը պայմանավորված է բարձր ջրաբափանցելիություն և ֆիլտրացիայի արագություններ ունեցող ապարներում գրավիտացիոն ջրի ֆիլտրացիայի ժամանակ իներցիոն և բարախումային (պուլսացիոն) ուժերի ի հայտ գալով: Այդ սահմանը կապված է ֆիլտրացիայի կրիտիկական արագության հետ, որին հասնելու դեպքում խախտվում է ուղիղ համեմատականությունը ֆիլտրացիայի արագության և ճնշման գրադիենտի միջև:

Ֆիլտրացիայի կրիտիկական արագությունը, ըստ Վ. Ն. Շչելկաչևի, որոշվում է հետևյալ բանաձևով [31].

$$V_{\text{լր}} = \frac{n^{2.3} \operatorname{Re} \sigma}{10 \sqrt{K_p}} \quad (70)$$

որտեղ՝

$V_{\text{լր}}$ -ը ֆիլտրացիայի կրիտիկական արագությունն է, սմ/վրկ, մ/օր և այլն,

n -ը ծակոտկենությունն է, միավորի մասերով,

σ -ն մածուցիկության կիմեմատիկ գործակիցն է, մ²/վրկ, սմ²/վրկ,

K_p-ը թափանցելիության գործակիցն է, սմ², մ² (դրա որոշումը կտրվի հաջորդ պարագրաֆում),

Re -ն Ույնուղսի թիվն է (ըստ փորձարարական տվյալների, կազմում է 4-12): Ույնալդոսի թվի կրիտիկական մեծությունների նման մեծ դիապազոնում փոփոխվելու բացատրվում է նրանով, որ ֆիլտրացիայի գծային օրենքից շեղումները տեղի են ունենում աստիճանաբար և տարբեր պայմաններում ոչ միատեսակ՝ կախված ծակուտինային տարածության կառուցվածքից և ֆիլտրացվող հեղուկի հատկություններից:

Ըստ Գ. Ն. Կամենսկու՝ Դարսի օրենքը կիրառելի է ստորերկրյա ջրերի շարժման մինչև 1000 մ/օր իրական արագությունների դեպքում: Այդ արագությունը գերազանցող արագություններ հանդիպում են շատ քիչ և բնորոշ են խիստ կարստային, ճեղքավորված, խոշորաբեկոր և գլաքարային ջրապարունակ ապարներին:

Դարսի օրենքի կիրառելիության անընդհանուր ճիշտ մեծությունը դեռևս չկա: Սակայն ֆիլտրացիայի գծային օրենքը հատիկային և ճեղքավորված ապարներում կիրառելի է նույնիսկ շատ փոքր ճնշման գրադիենտների դեպքում: Այն ըստ ամերիկացի ջրաերկրաբան Օ. Սեյնգերի՝ կազմում է 3×10^{-5} - 4×10^{-5} , ըստ Շչելկաչևի և Ի. Ե. Ֆոմենկոյի՝ $n \times 10^{-3}$ - $n \times 10^{-4}$:

Գրավիտացիոն ջրի շարժման ժամանակ հանդես են գալիս ներքին շփման ուժերը և իներցիայի ուժերը: Սակայն դրանք այնքան փոքր են, որ գործնական հաշվարկների ժամանակ կարելի է անտեսել: Այսպիսով, Դարսի օրենքի կիրառելիության ներքին սահմանը գրավիտացիոն ջրերի համար գործնականում բացակայում է (կավային ապարներում ջրի ֆիլտրացիայի մասին տես ներքուում):

Զրի ֆիլտրացիան կավային ապարներում: Դիսպերս կավային ապարներում, որոնք ունեն անշափ փոքր չափերի ծակուտիներ, կապված ջուրը գործնականում ամբողջությամբ փակում է այդ անցքերը (ուղիները): Որպեսզի այդ ապարներում ֆիլտրացիա առաջանա, հարկավոր է ստեղծել ճնշման այնպիսի գրադիենտ, որը գերազանցի սկզբնական ճնշման գրադիենտին: Սկզբնական ճնշման գրադիենտի գոյությունը պայմանավորված է կապված ջրի առկայությունվ, որն իր ֆիզիկական հատկություններով տարբերվում է սովորական մածուցիկ հեղուկից և, հանդիսանալով ցածր պլաստիկության հեղուկ, տիրապետում է տեղա-


շարժի որոշակի ամրության և յուրովի համարվում է անշարժ: Ուստի, ֆիզիկապես թույլ կապված ջրի շարժումը բնութագրվում է հոսքի մածուցիկապլաստիկ ռեժիմով: Որպեսզի տեղի ունենա ֆիզիկապես թույլ կապված (քաղանթային) ջրի շարժում, պետք է հաղթահարել մոլեկուլյար ձգողականության ուժերը, որոնք հանդես են զայխ ապարների հետ ջրի փոխագրեցության ժամանակ (նրբաղիսպես միջավայրում):

Սկզբանան ճնշման գրադիենտը գերազանցող ճնշման գրադիենտի ստեղծման դեպքում կավային ապարներում տեղի կունենա ֆիզիկապես կապված ջրի Դարսի օրենքին ենթարկվող ֆիլտրացիա:

Ֆիզիկապես կապված ջրերի (մածուցիկապլաստիկ ռեժիմ) ֆիլտրացիան (շարժումը) բնութագրվում է հետևյալ հավասարումով:

$$v = k \left(I - I_u \right) = k \left(I - \frac{4}{3} I_0 \right) \quad (71)$$

Ֆիլտրացիայի արագությունների կախվածությունը ճնշման գրադիենտից ավագային և կավային ապարներում բերվում է նկար 24-ում:



Նկ. 24 Ֆիլտրացիայի արագության և ճնշման գրադիենտի միջև կապը

Ավագային ապարներում ջրի ֆիլտրացիայի դեպքում ֆիլտրացիայի արագության և ճնշման գրադիենտի (I) միջև գոյություն ունի գծային

կապ. կավերում՝ ֆիլտրացիայի դեպքում առաջին հատվածում (1-2) կորագծային և երկրորդ հատվածում (2-3) ուղղագծային: II կորի 1-ին կետը համապատասխանում է սկզբնական ճնշման գրադիենտին (I_0), որի դեպքում ջուրը գտնվում է սահմանային վիճակում, հենց գերազանցվում է սկզբնական գրադիենտը նկատվում է ֆիլտրացիա, սակայն ֆիլտրացիայի արագության և ճնշման գրադիենտի միջև կապն ունի կորագծային (II կորի 1-2 հատվածը) բնույթ: Կորի վրա 2-րդ կետը համապատասխանում է ճնշման գրադիենտի սահմանային մեծությանը (I_u), որի գերազանցման դեպքում իրավացի է դառնում Դարսի օրենքը:

Փորձնական ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ պինդ կավերի համար սկզբնական ճնշման գրադիենտը կարող է հասնել 20-30: Համաձայն վերջինիս՝ պետք է ի նկատի ունենալ բնական պայմաններում համեմատական ջրամերժ կավային նստվածքներից ֆիլտրացիայի հնարավորությունը:

Զրի ֆիլտրացիան հոսքի պուրռուկինը ուժինի դեպքում: Եթե առկա է ստրերկրյա ջրերի տուրբուլենտ ռեժիմի շարժումը, ապա հոսքի ֆիլտրացիայի արագությունը բնութագրվում է, այսպես կոչված, ֆիլտրացիայի ոչ գծային օրենքով:

Ֆիլտրացիայի ոչ գծային օրենքը (Ա. Ա. Կրասնոպոլսկի) հաճախ արտահայտվում է արագության միջոցով.

$$v = k\sqrt{I} \quad (72)$$

որտեղից հետևում է, որ տուրբուլենտ ռեժիմի դեպքում հոսքի արագությունը համեմատական է ճնշման գրադիենտի 1/2 աստիճանին, իսկ դիմադրության ուժերը (արտահայտված ճնշման գրադիենտով I) համեմատական են ֆիլտրացիայի արագության քառակուսուն:

Զրի ֆիլտրացիան լամինարալուրռուկնկային խառը հոսքի դեպքում: Ըստ հետազոտողների կողմից որոշված է, որ ջրատար շերտերում (հորիզոններում) երբեմն առկա են այնպիսի ֆիլտրացիոն հոսքեր, որոնք չեն արտագծվում (նկարագրվում) ոչ Դարսի և ոչ Էլ Կրասնոպոլսկու օրենքներով և միջանկյալ տեղ են գրավում դրանց միջև: Այդ-

պիսի պայմաններում ընդհանրացված տեսքով ֆիլտրացիայի հիմնական օրենքը գրվում է Պրոնի երկանդամ բանաձևով.

$$I = av + bv^2 \quad (73)$$

որտեղ՝

$$a = \frac{1}{k} \text{ և } b = \frac{a}{k} - \text{ և } \text{ֆիլտրացիոն պարամետրեր են, որոնք կախված}$$

են ծակոտկեն միջավայրի և ֆիլտրացվող հեղուկի հատկություններից (որոշվում են փորձերով), k -ը ֆիլտրացիայի գործակիցն է լամինար շարժման դեպքում:

Գծային ֆիլտրացիայի շրջանում փոքր արագությունների ժամանակ bv^2 անդամը դառնում է անհամեմատ փոքր առ անդամի հետ համեմատած և կիրառելի է դառնում Դարսի հիմնական օրենքը ($I = av$, $v = kI$): Ֆիլտրացիայի մեծ արագությունների ժամանակ առ անդամը դառնում է անհամեմատ փոքր bv^2 անդամի հետ համեմատած և կիրառելի է դառնում Կրասնովուսկու բանաձևը ($I = bv^2$, $v = k\sqrt{I}$):

9.3. ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ստորև տրվում է ապարների ֆիլտրացիայի, թափանցելիության, ջրահաղորդականության, մակարդակահաղորդականության և պիեզո-հաղորդականության գործակիցների հասկացությունների, ինչպես նաև ստորերկրյա ջրերի կայունացած և չկայունացած շարժումների, ֆիլտրացիայի կոչտ և առաձգական ռեժիմների սահմանումների մասին:

Ֆիլտրացիայի գործակից (k): Ֆիլտրացիայի գործակիցը բնութագրում է ապարների ջրաթափանցելիությունը (ջրանցիկությունը), որի մեծությունը հատիկային ապարներում կախված է ծակոտիների չափերից, իսկ ժայռային ապարներում՝ ճեղքերի լայնությունից, ինչպես նաև ֆիլտրացվող հեղուկի ֆիզիկական հատկություններից: Ըստ Դարսի՝ ֆիլտրացիայի գործակիցը իրենից ներկայացնում է ապարի միջով ջրի ֆիլտրացիայի արագությունը, եթե ճնշման գրադիենտը (I) հավասար է մեկ միավորի:

Ֆիլտրացիայի գործակցի մոտավոր արժեքները (մեծությունները) տարբեր ապարների համար բերվում են ստորև. (աղ. 12)

Աղյուսակ 12

Ապարի անվանումը	Ֆիլտրացիայի գործակիցը, մ/օր
Գլաքարեր	200-100
Ավազներ գլաքարերի հետ	100-50
Խոշորահատիկ ավազներ	50-15
Միջահատիկ ավազներ	15-5
Կավեր ավազային	1.0-0.5
Կավավազներ	0.5-0.1
Ավազակավեր	0.1-0.001
Կավեր	<0.001

Զրաերկրաբանական հետազոտությունների ժամանակ ֆիլտրացիայի գործակցի կոնկրետ մեծությունները որոշում են դաշտային փորձաֆիլտրացիոն աշխատանքների կատարման արդյունքում ստացված տվյալների և երբեմն լարորատոր աշխատանքների հիման վրա:

Ֆիլտրացիայի գործակիցը լայնորեն օգտագործվում է զրաերկրաբանական տարրեր խնդիրներ լուծելու ժամանակ, երբ ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում քաղցրահամ ստորերկրյա ջրերը: Այլ կազմի հեղուկների (ջուր-նավթ) կամ խորը ստորերկրյա ջրատար հորիզոնների ջրերի, որոնք բնութագրվում են գազահագեցվածությամբ, բարձր ջերմաստիճանով, բարձր հանքայնացումով և դրանց հատկությունների փոփոխմամբ, շարժման պայմանների ուսումնասիրման դեպքում հաշվարկների համար ֆիլտրացիայի գործակցի օգտագործումը կարող է բերել նշանակալի անճշտությունների: Օրինակ՝ նոյն ապարի համար ֆիլտրացիայի գործակիցը, կախված դրա միջով ֆիլտրացվող նյութից՝ քաղցրահամ ջուր կամ աղաջուր, նավթ կամ գազ, ընդունում է տարբեր արժեքներ: Նման դեպքերում ապարների ֆիլտրացիոն հատկությունները բնութագրելու համար օգտագործում են քափանցելիության գործակիցը:

Թափանցելիության գործակից (K_ρ): Թափանցելիության գործակից ասելով հասկանում են ապարի ծակոտինային միջավայրի միջով

հեղուկ կամ զագ բաց թողնելու հատկությունը, երբ առկա է ճնշման գրադիենտը: Այն բնութագրում է ապարի ծակոտինային միջավայրի երկրաշափությունը և կախված չէ ֆիլտրացվող հեղուկի տեսակից:

Թափանցելիությունը քանակապես բնութագրվում է թափանցելիության գործակցով և ֆիլտրացիայի գործակցի հետ կապված է հետևյալ արտահայտությամբ.

$$K_p = k \frac{\gamma}{g} \quad (74)$$

որտեղ՝

K_p -ը թափանցելիության գործակցիցն է, սմ²,

g -ն ազատ անկման (ծանրության ուժի) արագացումն է, սմ/վ²

γ -ն մածուցիկության կինեմատիկ գործակցիցն է, սմ²/վ:

Զրաերկրաբանական հաշվարկների պրակտիկայում՝ հատկապես նախային ջրաերկրաբանությունում, ապարների թափանցելիության բնութագրման համար օգտագործում են նաև Դարսի (D) միավորը ($1D = 10^{-12}$ մ² = 10^{-8} սմ²):

Համաձայն [33] ըստ ապարների թափանցելիության գործակցի դասակարգվում են՝ (աղ.13)

Աղյուսակ 13

Ապարի բնութագիրը	$K_p(D)$
Շատ լավ թափանցելի	116-1160
Լավ թափանցելի	116-11.6
Թափանցելի	11.6-1.16
Թույլ թափանցելի	1.16-0.12
Շատ թույլ թափանցելի	(0.12-1.2)x10 ⁻³
Համարյա (գործնականում) անթափանցելի	<0.12x10 ⁻³

Զրահաղորդականության գործակից (T): Այն իրենից ներկայացնում է ֆիլտրացիայի գործակցի և ջրատար հորիզոնի (շերտի) հաստության (հզորության) արտադրյալը.

$$T = km \text{ կամ } T = kh_{\alpha\beta\gamma} \quad (75)$$

որտեղ՝

մ և h_{η_2} - արտեղյան և գրունտային ջրատար հորիզոնների հզորություններն են:

Ջրահաղորդականության գործակցի չափողականությունը $\text{մ}^2/\text{օր}$ է: Այն արտահայտում է մ հզորության և 1մ լայնության միավոր ժամանակում ջրատար շերտի ջուր տալու ունակությունը, եթե ճնշման գրադիենտը հավասար է մեկ միավորի:

Մակարդակահաղորդականության գործակից (α): Այն բնութագրում է գրունտային ջրերի մակարդակի տատանումների տարածման արագությունը՝ կապված հոսքի սահմանում ջրի հորիզոնի փոփոխման հետ: Մակարդակահաղորդականության գործակիցը որոշվում է.

$$\alpha = \frac{k h_{\eta_2}}{\mu} \quad (76)$$

որտեղ՝

k -ն ֆիլտրացիայի գործակիցն է,

h_{η_2} -ը ջրատար շերտի միջին հզորությունն է,

μ -ն ջրատվության գործակիցն է:

Մակարդակահաղորդականության գործակիցը արտահայտվում է $\text{մ}^2/\text{օր}\cdot\text{ով}$: Դրա մեծությունը ջրատար հորիզոնների համար, որոնք օգտագործվում են ջրամատակարարման համար, սովորաբար, տատանվում է $10^2\text{-}10^4 \text{մ}^2/\text{օր}$ սահմաններում:

Պիեզոհաղորդականության գործակից (α_w): Այն բնութագրում է ֆիլտրացիայի առաձգական ռեժիմի տարածման գործընթացներն ըստ ժամանակի և արտահայտում է ճնշման կամ ճնշումների տարածման արագությունները ճնշումային ջրատար հորիզոններում (համալրներում):

Պիեզոհաղորդականության գործակցի կապը ջրի և ջրատար հորիզոնի ապարների առաձգական հատկությունների բնութագրի հետ արտահայտվում է հետևյալ բանաձևով:

$$a_w = \frac{k}{n\beta_2 + \beta_w} \quad (77)$$

$$\beta^* = n\beta_2 + \beta_w \quad (78)$$

որտեղ՝

k -ն ֆիլտրացիայի գործակիցն է, մ/օր,

n -ը բաց (ակտիվ) ծակոտվենությունն է (միավորի մասերով),

β^* -ը շերտի առաձգակատարողունակության գործակիցն է, 1/մ,

β_ϱ -ն ջրի ծավալային սեղմելիության գործակիցն է,

β_w -ն ջրատար հորիզոնի ապարների ծավալային սեղմելիության գործակիցն է:

Ըստ Վ. Ն. Շչելկաչևի β_ϱ և β_w թվապես հավասար են.

$$\beta_\varrho = (2.7 - 5) * 10^{-6} \text{ 1/մ}, \quad \beta_w = (0.3 - 2) * 10^{-6} \text{ 1/մ}:$$

Բերված արտահայտություններից երևում է, որ ճնշման 1 մետրի իշեցման դեպքում ջրի և ապարի ծավալները մեծանում են. ջրի համար՝ 2.7-ից մինչև 5, իսկ ապարների համար 0.3-ից մինչև 2 միլիոններորդական մասերով իրենց սկզբնական ծավալներից, այսինքն՝ առաձգական պաշարները անհամենատ փոքր են գրավիտացիոն պաշարներից:

β^* -ն բնութագրում է ջրի ծավալի փոփոխությունը միավոր ծավալ ապարում միավոր ճնշման փոփոխության դեպքում: Իսկ ամբողջ ջրատար հորիզոնի համար այդպիսի բնութագրից է հանդիսանում շերտի (հորիզոնի) առաձգականության ծավալի գործակիցը (μ^*), որն իրենից ներկայացնում է շերտի միավոր էլեմենտում փոփոխվող ջրի ծավալի (ΔV_0) հարաբերությունը փոփոխվող ճնշմանը (ΔH) [5].

$$\mu^* = \frac{\Delta V_0}{F \Delta H} = \beta^* m \quad (79)$$

որտեղ՝

m -ը շերտի հաստությունն է, մ:

Այս դեպքում (77) բանաձևը կընդունի հետևյալ տեսքը.

$$a_w = \frac{Km}{\mu^*} \quad (80)$$

Պիեզոհաղորդականության գործակի մեծությունը ջրատար հորիզոնների համար, որոնք օգտագործվում են ջրամատակարարման նպատակով, սովորաբար տատանվում են $10^4 - 10^7 \text{ մ}^2/\text{օր}$ սահմաններում:

Սպորերկրյա ջրերի կայունացած և չկայունացած շարժումներ: Շարժումը կոչվում է կայունացած, եթե այս կամ այն ջրափար հորիզոնակի սննան և դրենացման (բեռնաբախման) պայմանները հասպարուն են ժամանակի մեջ: Կայունացած շարժման դեպքում ստորերկրյա ջրերի հոսքի ջրադիմամիկական բոլոր էլեմենտները (տարրերը՝ ծախս, արագություն, թերություն, ուղղություն և այլն, ըստ ժամանակի մնում են անփոփոխ:

Հսկ ժամանակի, սննան և դրենացման պայմանների փոփոխության դեպքում փոփոխվում են նաև սպորերկրյա ջրերի հոսքի էլեմենտները: Այդպիսի շարժումը կոչվում է չկայունացած:

Բնության մեջ ստորերկրյա ջրերը հիմնականում ունեն չկայունացած շարժում: Եվ միայն ժամանակի առանձին միջակայրի համար բնական պայմանների սխեմատիզացման դեպքում, եթե սննան և դրենացման պայմանները փոփոխվում են աննշան չափով շարժումը ընթանում է կայունացած:

Ֆիլտրացիայի կոչք և առաջգական ռեժիմներ: Ֆիլտրացիայի կոչքը ուժիմ է կոչվում այն ռեժիմը, որի դեպքում հեղուկի շարժումը պայմանավորված է ջրի ծանրության ուժով և ճնշմամբ, այլ ուժերը (էլերգիայի, առաձգական ուժեր և այլն) աննշան են և դրանք անտեսում են: Այդ ռեժիմը բնորոշ է հիմնականում գրունտային ջրերին, ինչպես նաև ոչ խորը տեղադրված արտեզյան ջրերին:

Արտեզյան (ճնշումային) ջրերի համար, որոնք տեղադրված են նշանակալի խորը, բնորոշ է ֆիլտրացիայի առաջգական ռեժիմը, որի համար շերտային էլերգիայի գերավշտող ձևը հանդիսանում են շերտի առաձգական դեֆորմացիան և հեղուկի սեղմվելը:

Արտեզյան ջրերը հորատանցքերով բացելու ժամանակ շերտում տեղի է ունենում ճնշման իջեցում, որի արդյունքում՝ ջրի ծավալի մեծացում: Շերտում ճնշման իջեցումը միաժամանակ առաջ է բերում ապարների առաձգական ընդարձակում և դրանց ծակոտիների փոքրացում, որի ազդեցության տակ ջուրը մղվում է հորատանցք: Այսպիսով, ճնավորվում է առաձգական ռեժիմը, որի տեսությունը առավել մանրամասն տվել է Վ. Ն. Շենկաչնը:

9.4. ՖԻԼՏՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԶՐԱԴԻՆԱՍԻԿԱՎԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Հիմնական ջրադինամիկական տարրերը (էլեմենտները) հանդիսանում են պիեզոմետրիկ ճնշումը, ճնշման գրադինտը, ծախսը, հոսքի գծերը և հավասար ճնշման գծերը:

Ինչպես ցույց տրվեց վերը, ստորերկրյա ջրերի գրավիտացիոն շարժումը տեղի է ունենում ծանրության ուժի և ճնշման գրադինտի ազդեցուրյան տակ: Ֆիլտրացիան բնորոշող ուժի անալիզի (վերլուծության) համար դիտարկենք խողովակով անցնող իդեալական հեղուկի հոսքի համար Բերնուլիի հավասարումը, որը պատկերված է 25-րդ նկարում [4].

$$Z_1 + \frac{P_1}{\gamma} + \frac{V_1^2}{2g} = Z_2 + \frac{P_2}{\gamma} + \frac{V_2^2}{2g} + \Delta H_{l-2} \quad (81)$$

որտեղ՝

P_1 և P_2 -ը հիդրոստատիկ ճնշումներ են համապատասխանաբար 1 և 2 կտրվածքներում,


Z_1 և Z_2 -ը հոսքի հետազոտվող կետերի (1 և 2) հեռավորությունն է մինչև ընտրված համեմատական հարթություն,

γ -ն ջրի կշիռն է միավոր ծավալում,

V_1 և V_2 -ը հեղուկի շարժման արագություններն են համապատասխանաբար 1 և 2 կտրվածքներում (հատվածքներում),

g -ն ծանրության ուժի արագացումն է,

ΔH_{l-2} -ը հեղուկի կորցրած էներգիան է 1 և 2 կտրվածքների միջև:



Նկ. 25 Հեղուկի կայունացած լամինար շարժումը գլանածև խողովակում
(ըստ Ռ. դե Ռիստի, 1969)

Բերնուլի հավասարումն արտահայտում է էներգիայի պահպանաման օրենքը: Իլոր, (81) հավասարման յուրաքանչյուր անդամ իրենից ներկայացնում է տեսակարար, այսինքն՝ հեղուկի միավոր զանգվածին ընկնող էներգիա: Հավասարման էներգետիկ իմաստը կայանում է ներանում, որ հեղուկի հաստատված շարժնան ժամանակ տեսակարար էներգիաների գումարը տվյալ էլեմենտար շիթի վրա մնում է անփոփոխ: Բերնուլի հավասարման երկրաչափական իմաստը կայանում է նրանում, որ հեղուկի շարժնան դեպքում երկրաչափական (Z), պիեզոնետրիկական ($\frac{P}{\gamma}$) և արագության ($\frac{V^2}{2g}$) երեք բարձրությունների գումարը, ըստ տվյալ էլեմենտների շիթի, մնում է անփոփոխ և բնութագրվում է ջրադիմամիկական ճնշման մեծությունով (H_g): Վերջինիս համապատասխան՝

$$H_g = \frac{P}{\gamma} + Z + \frac{V^2}{2g} = \text{const} \quad (82)$$

որտեղ՝

$$\frac{P}{\gamma} = h_p - \text{պիեզոմետրիկ բարձրությունն է, պայմանավորված հեղու-$$

կի հիդրոստատիկ ճնշումով (P),

Z-հոսքի դիտարկվող կետից մինչև համեմատական հարթություն եղած հեռավորությունն է,

$$h_0 = \frac{V^2}{2g} - \text{արագության ճնշման բարձրությունն է:}$$


Բերնոլի հավասարման (82) առաջին երկու անդամների գումարը ($H = \frac{P}{\gamma} + Z$) իրենից ներկայացնում է պիեզոմետրիկական (ջրաստատիկական) ճնշում:

Իրական պայմաններում ստորերկրյա ջրերի ֆիլտրացիայի ժամանակ դրանց շարժման արագությունը մեծ չէ, դրա համար էլ արագության ճնշման մեծությունը (h_0), փոքր լինելու հանգամանքից ելնելով, կարելի է անտեսել: Հետևապես, համաձայն (82) բանաձևի, հոսքի էներգիան որոշվում է պիեզոմետրիկ ճնշումով, որն իրենից ներկայացնում է Բերնոլի հավասարման առաջին երկու անդամների գումարը.

$$H = \frac{P}{\gamma} + Z = h_p + Z \quad (83)$$

Բնական պայմաններում ստորերկրյա ջրերի պիեզոմետրիկ ճնշման կամ ուղղակի ճնշման որոշման դեպքում որպես համեմատական հարթություն կարելի է վերցնել ջրատար շերտից ներքև տեղադրված ջրամերժի մակերևույթը (Եթե այն տեղադրված է հորիզոնական) կամ ցանկացած հորիզոնական մակերևույթ (տես նկ. 26): Եթե համեմատական հարթությունը ջրամերժ շերտն է, ստորերկրյա ջրերի պիեզոմետրիկ բարձրությունը թվապես հավասար է դառնում տվյալ կտրվածքում հոսքի հաստությանը ($H_1 = m_1$, $H_2 = m_2$) (գրունտային ջրերի համար): Իրական պայմաններում հոսքի տարբեր կետերում ստորերկրյա ջրերի ճնշումների համեմատության ժամանակ որպես միասնական համեմատական հարթություն սովորաբար վերցնում են Համաշխարհային օվկիանոսի մակարդակը ($Z = 0$): Այս դեպքում (տես նկ. 26)

պիեզոմետրիկ ճնշման մեծությունը (Δ) հավասար է հիդրոստատիկ ճնշման ազդեցության տակ հոսքի դիտարկվող կետում ջրի բարձրացման մակարդակի (այսպիս կոչված ջրի կայունացած մակարդակի) բարձրացման մակարդակին:



Նկ. 26 Ազատ մակերևույթով ստորերկրյա ջրերի հոսքի սխեմա.

- 1- աէրացիայի գումայի և ջրալու հորիզոնի ապարաներ,
- 2- ջրամերժ ապարաներ,
- 3- սրորերկրյա ջրերի ազատ մակերևույթը,
- 4- պիեզոմետր (հորակուանցք),
- 5- սրորերկրյա ջրերի հոսքի շարժման ուղղությունը

Ծակոտինային միջավայրում հեղուկի շարժման (ֆիլտրացիայի) կամ քննական պայմաններում ստորերկրյա ջրերի հոսքի շարժման ժամանակ ճնշումը (հոսքի էներգիան) ծախսվում է շփման ուժերի հաղթահարման վրա (տես 81 բանաձև), որի հետ կապված ստորերկրյա ջրերի հոսքի շարժման ուղղությամբ ընկնում է պիեզոմետրիկ ճնշումը (ΔH մեծությամբ): Այսպիսով, կարելի է հաշվել, որ բոլոր դեպքերում ստորերկրյա ջրերի շարժումը տեղի է ունենում բարձր ճնշում ունեցող մարգերից (տեղամաս, կետ և այլն) դեպքի փոքր ճնշում (մակարդակ) ունեցող մարգեր (տես նկ. 26):

Ստորերկրյա ջրերի ճնշման կորուսդի (ΔH, մ) հոսքի դիտարկվող երկու կտրվածքների միջև (տես նկ. 26) հարաբերությունը երկու կտրվածքների միջև եղած հեռավորությանը (L -ֆիլտրացիայի ճանապարհի երկարությանը, մ) կոչվում է պիեզոմետրիական ճնշման գրա-

դիենտ (ճնշման գրադիենտ) և որոշվում է հետևյալ արտահայտությունից:

$$I = \frac{H_1 - H_2}{L} = \frac{\Delta H}{L} = \lim\left(\frac{\Delta H}{\Delta X}\right) = -\frac{dh}{dx} \text{ եթե } x = L \rightarrow 0 \quad (84)$$

Արտահայտությունում (84) «-> նշանը ցույց է տալիս, որ ստորերկրյա ջրերի շարժման ուղղությամբ (X -ի մեծացման հետ) ճնշման մեծությունը փոքրանում է:

Սկզբանական ջրերի հոսքի ծախսը (Q): Այն ջրատար շերտի ընդլայնական կտրվածքով միավոր ժամանակում անցած ջրի քանակն է.

$$Q = vF \quad (85)$$

որտեղ՝

v -ն ֆիլտրացիայի արագությունն է, մ/օր, մ/վրկ,

F -ը ջրատար շերտի ընդլայնական կտրվածքն է, մ²:

Ֆիլտրացիայի գծային օրենքի դեպքում հոսքի ծախսը որոշվում է հետևյալ կերպ [11].

$$\text{Գրունտային հոսքի համար՝ } Q = k_{\phi} x I_{\phi} x h_{\phi} x B_{\phi} \quad (86)$$

$$\text{Ճնշումային հոսքի համար՝ } Q = k_{\phi} x I_{\phi} x m_{\phi} x B_{\phi} \quad (87)$$

Ուսումնասիրվող տեղամասերի համար, ըստ (86) և (87) բանաձևերի, ընդունվում են ֆիլտրացիայի գործակիցների (k_{ϕ}), ճնշման գրադիենտների (I_{ϕ}), հոսքի հասությունների (h_{ϕ} և m_{ϕ}) և լայնությունների (B_{ϕ}) միջին արժեքները:

Սովորաբար ֆիլտրացիայի գնահատման ժամանակ որոշում են միավոր ծախսը, այսինքն՝ հոսքի ծախս, որն անցնում է դրա 1մ լայնությամբ: Միավոր ծախսի համար բանաձևերն ունեն հետևյալ տեսքը.

$$\text{Գրունտային հոսքի համար՝ } q = \frac{Q}{B_{\phi}} = k_{\phi} x I_{\phi} x h_{\phi} \quad (88)$$

$$\text{Ճնշումային հոսքի համար՝ } q = \frac{Q}{B_{\phi}} = k_{\phi} x I_{\phi} x m_{\phi} \quad (89)$$

Ստորերկրյա հոսքի շարժման ուղղությունը բնութագրվում է *հոսքի գծերով*, որոնք համընկնում են ֆիլտրացիայի հոսքի շարժվող հեղուկ մասնիկների հետազօծի հետո: Վերջինս իրական է միայն ստորերկրյա ջրերի կայունացած ֆիլտրացիայի դեպքում, եթե հոսքի ցանկացած կետում շարժման ուղղությունը և արագությունը, ըստ ժամանակի, չեն փոփոխվում: Զկայունացած ֆիլտրացիայի դեպքում հոսքի գծերը ժամանակի տվյալ պահին տալիս են հոսքի տարրեր մասնիկների ակնքարքային բնութագիրը կամ, այլ կերպ ասած, կարելի է ստանալ տեղեկատվություն ժամանակի որոշակի պահի հոսքի տարրեր մասնիկների շարժման ուղղությունների մասին:

Գծեր, որոնք ուղղահայաց են հոսքի գծերին, իրենցից ներկայացնում են *հավասար ճնշման գծեր* կամ *էկվիպուրենցիալներ* (համապատենցիալ, հավասարակարողական): Այդ գծերի պրոյեկցիան հորիզոնական հարթության վրա կոչվում է *հիդրոիզոգիծ* (*հիդրոիզոհիպսեր*)՝ գրունտային ջրերի համար կամ *հիդրոիզոպիեզներ* (*այնզոիզոգծեր*)՝ ճնշումային ջրերի համար:

Հավասար ճնշման գծերի և դրանց ուղղահայաց հոսքի գծերի համակարգը ձևավորում է *հիդրոլիմամիկական ցանց* կամ *սրութերկրյա ջրերի շարժման ցանց*: Կայունացած շարժման պայմաններում հիդրոլիմամիկական ցանցը հաստատում է ըստ ժամանակի, իսկ չկայունացած շարժման պայմաններում՝ փոփոխական:

ԳԼՈՒԽ X

ԱՍՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ստորերկրյա ջրերի դասակարգման մշակումներով զբաղվել են նախկին Խորհրդային միության և արտասահմանյան շատ գիտնականներ: Նրանց կողմից տարբեր ժամանակներում առաջարկվել են ստորերկրյա ջրերի տարբեր դասակարգումներ: Նրանք հիմնված են մեկ կամ մի քանի ցուցանիշների վրա և բնութագրվում են ստորերկրյա ջրերի՝ կամ միայն քիմիական առանձնահատկություններով, կամ նրանց գոյության այլ կողմերով և հատկություններով (ծագում, տեղադրման պայմաններ, ջրադինամիկ հատկանիշներ, ջերմաստիճան, հաճքայնացում, քիմիական բաղադրություն, ապարների քարարանական կազմ և հասակ, շարժման ռեժիմ և այլն): Այդ պատճառով դասակարգումները բազմաթիվ են, սակայն ստորերկրյա ջրերի բոլոր օրինաչափություններն ու առանձնահատկությունները բնութագրող մեկ միասնական դասակարգում գոյություն չունի:

Դա բացատրվում է ստորերկրյա ջրերի բնական բարդ օբյեկտ լինելու հանգամանքով՝ պայմանավորված դրանց վրա ազդող բազմաթիվ բնական և արհեստական գործուններով՝ ստորերկրյա ջրերի տեղադրման երկրաբանական պայմանների բազմազանությամբ, դրանց մշտական և զանազանակերպ շարժումներով (ֆիլտրացիա, դիֆուզիա, միգրացիա և այլն), ինչպես նաև նրանով, որ դեռևս վերջնականորեն չի մշակված ջրաերկրաբանական տերմինաբանությունը: Դրա հետևանքով էլ որոշ դեպքերում միևնույն ստորերկրյա ջրերը տարբեր հեղինակների կողմից անվանվում են տարբեր ձևերով:

Այդ ամենով հանդերձ, գոյություն ունեցող բոլոր դասակարգումները կարելի միավորել երեք հիմնական խմբերի մեջ [33]:

1. Բնական, այդ թվում և ստորերկրյա ջրերի (ներառյալ հաճքային և նավթային ջրերի) քիմիական դասակարգումներ:

2. Ստորերկրյա ջրերի ընդհանուր դասակարգումներ՝ ըստ ծագման, տեղադրման պայմանների կամ ըստ ծագման և նրանց հետ համալիր այլ ցուցանիշների:

3. Որոշ հեղինակների մասնակի դասակարգումներ, որոնք միացված են ընդհանուրի (կետ 2) հետ և մշակված են մեկ կամ մի քանի ցուցանիշներով՝ բազմամյա սաղցութային մարգերի ստորերկրյա ջրերի,

աղային հանքավայրերի ջրերի, երիտասարդ հրաբխականության շրջանների ջրերի, ռազմական ջրերի, օգտակար հանածոների ստորելքրյա ջրերի, ջրամատակարարման նպատակով օգտագործվող ջրերի համար:

Ստորերկրյա ջրերի քիմիական դասակարգումները տրված են VII գլխում:

Հստ ծագման՝ ստորերկրյա ջրերը բաժանված են հինգ տեսակի՝ ինֆիլտրացիոն, կոնդենսացիոն, սեղմենտացիոն, յուվենիլ (վերածընված գազագլուխման, դեհիդրատացված) (տե՛ս գլ. IV):

Հարկ է նշել, որ ապարներում ինֆիլտրացիոն, կոնդենսացիոն, սեղմենտացիոն և յուվենիլ ջրերն իրենց շարժման ժամանակ կարող են խառնվել իրար տարրեր հարաբերակցությամբ և առաջացնել խառը ծագման ստորերկրյա ջրեր:

Ջրերի իրար խառնվելը և դրանց հետ հողի, ապարների, մթնոլորտի, ջրոլորտի փոխազդեցությունները, ինչպես նաև երկրակեղևում մշտապես ընթացող մագմատիկ, կենսաքիմիական, ռազմական ջրերի փոփկաքիմիական և շատ այլ գործընթացներ պայմանավորում են այս կամ այս տիպի և՝ քիմիական կազմի, և՝ փոփկաքիմիական հատկությունների ստորերկրյա ջրերի ձևավորմանը:

Գ. Ն. Կամենսկին (1947) երկրակեղևում առանձնացնում է ստորերկրյա ջրերի ձևավորման երեք ծագումնարանական (գենետիկական) ցիկլեր (բոլորաշրջաններ):

1) Ինֆիլտրացիոն կամ մայրցամաքային, որը կապված է մթնոլորտային տեղումների ինֆիլտրացման, երկրակեղևի վերին շերտերում ընթացող համալիր երկրաքիմիական գործընթացների հետ,

2) Ծովային կամ նատվածքային, որը կապված է նատվածքառաջացման ընթացքում ծովային ջրերի ներդրման (ներթափանցման) և հետագայում նատվածքների ապարագոյացման (դիագենեզի) գործընթացների ու դրանցում ամփոփված ջրերի մետամորֆիզացման հետ,

3) Մետամորֆային և մագմատիկական. դրանց են վերաբերվում խորքային ջրերի ձևավորման գործընթացները, որոնք կապված են թերմալ, դինամիկ ու ոեզիոնալ մետամորֆիզմի և մագմատիկ գործընթացների հետ:

Վերջին ցիկլին է վերագրվում խորքային ջերմաջրերի ձևավորումը, որն իր մեջ ներառում է մետամորֆիզացման գործընթացների ազդեցության տակ ապարներից առաջացած յուվենիլ ջրերը:

Առաջին ցիկլում առաջատար գործընթացներ են հանդիսանում մբնողորտային և մակերևուրային ջրերի ապարների ծակոտիների և ճեղքերի միջով ինֆիլտրացիան դեպի Երկրի խորքը, ինչպես նաև ջրային գոլորշիների կրնդենսացումը:

Տարբեր երկրաբանական և ֆիզիկաաշխարհագրական պայմաններում, կախված ինֆիլտրացիոն ցիկլի ծագումնաբանական գործընթացների ուղղվածությունից, կարող են ձևավորվել ստորերկրյա ջրերի հետևյալ տիպերը.

I տիպ: Տարրալուծման (վագահանման) գրունտային ջրեր, որոնք ձևավորվում են ինֆիլտրացիոն գործընթացների ինտենսիվ գարգացման արդյունքում, որը տեղի է ունենում բավարար խոնավ կլիմայական պայմաններում:

II տիպ: Մայրցամաքային աղակալման գրունտային ջրեր, որոնք ձևավորվում են ինտենսիվ գոլորշիացման ազդեցության տակ՝ տափատանային և անապատային չորային շրջաններում:

III տիպ: Տարրալուծման արտեզյան ջրեր կամ խորը շրջանառության (ցիրկուլյացիոն) ջրեր, որոնք ներառում են երկու ենթատիպ՝ 1) պլատֆորմային ընդարձակ իջվածքների արտեզյան ավագանների ջրեր, որոնք պայմանավորված են ավագանների նշանակալից երկարաձգմամբ և բեռնաբափման մարգերի նկատմամբ սնման նարզերի համեմատաբար ոչ բարձր դիրքով, բնութագրվում են փոքր արագությամբ և շրջանառության երկար ճանապարհով, 2) լեռնածալքավոր նարզերի տեկտոնական կառուցվածքներում խորը շրջանառության ջրեր, որոնք բնութագրվում են համեմատաբար ինտենսիվ շրջանառությամբ և երբեմն ուղեկցվում են ջերմային ջրերի վերընթաց աղբյուրներով:

Բացի Գ. Ն. Կամենսկու ստորերկրյա ջրերի ծագումնաբանական ցիկլերից ստորերկրյա ջրերի ձևավորման ուսումնասիրությունների ժամանակ առանձնացվում են ջրաերկրաբանական ցիկլեր: Ցիկլի տակ Ա. Ա. Կարցեր հասկանում է շրջանի կամ մարզի ջրաերկրաբանական պատմության ժամանակշրջան, որը սկսվում է ծովարշավով (տրանսգրեսիա), նստվածքակուտակումով և սեղմենտացիոն ջրերի առաջացումով, ներառելով հետագա հետընթացի (ուեգրեսիայի) էտապը, լերկացումը (դենուդացիա) և ինֆիլտրացիան ու վերջանում է նոր ծովարշավով և ինֆիլտրացիայի դադարեցումով:

Տվյալ սահմանումից հետևում է, որ յուրաքանչյուր ջրաերկրաբանական ցիկլի իր մեջ ներառում է երկու փոխակերպված էտապներ՝ սեղի-

մենտացիոն և ինֆիլտրացիոն: Ուսումնասիրվող շրջանի կամ մարզի առաջին էտապը շարունակվում է մինչև ցամաքի բարձրացումը և հետևապես մինչև ծովի հետնահանջի սկավելը և ջրատար ապարների լերկացումը: Այդ էտապի ժամանակաշրջացքում ձևավորվում են սեղմենտացիոն ջրերը: Սեղմենտացիոն էտապից անմիջապես հետո սկսվում է ինֆիլտրացիոնը, երբ ձևավորվում են ինֆիլտրացիոն ջրերը, դրանք աստիճանաբար դուրս են մղում և փոխարինում սեղմենտացիոն ջրերին, որը բերում է ինֆիլտրացիոն և խառը տիպի ստորերկրյա ջրերի ձևավորման:

Միանգամայն ակներև է, որ շրջանի կամ մարզի երկրաբանական զարգացման ընթացքում կարող են տեղի ունենալ իրար փոխարինող մի քանի ջրաերկրաբանական ցիկլեր: Դրա համար էլ յուրաքանչյուր նոր ցիկլի ինֆիլտրացիոն ջրերը կարող են դուրս մղել ինչպես նույն, այնպես էլ նախորդ ցիկլի հին սեղմենտացիոն և ինֆիլտրացիոն ջրերը, իսկ երբեմն էլ խորքային ծագում ունեցող ջրերը: Առավել ևս, երբ երկրակեղենի նույն շրջանի որոշ տեղամասեր խորասուզվում են, ուրիշները հակառակ՝ բարձրանում, ապա նույն ժամանակում ուսումնասիրվող շրջանում կղիտվի ցիկլի տարրեր էտապներ, որոշ տեղամասերում՝ սեղմենտացիոն, այլ տեղամասերում՝ ինֆիլտրացիոն:

Ջրաերկրաբանական ցիկլի յուրաքանչյուր էտապի հետ կապված է նրան համապատասխան ջրափոխանակում՝ սեղմենտացիոն կամ ինֆիլտրացիոն: Սեղմենտացիոն ջրափոխանակման ժամանակ ջրաբափանց ապարների սինգենետիկ ջրերը (առաջանում են ներփակող ապարների հետ համատեղ) խտացման ազդեցության տակ փոխարինվում են կավերից քամված ջրերով:

Ինֆիլտրացիոն ջրափոխանակման ժամանակ սեղմենտացիոն ջրերն արդեն հիդրոստատիկ ճնշումների և գրադիենտների հաշվին փոփխարինվում են ինֆիլտրացիոն ջրերով: Հաջորդող ջրաերկրաբանական ցիկլերում ջրափոխանակումը նշանակալի բարդանում է, քանի որ ինֆիլտրացիոն նոր ջրերն աստիճանաբար պեսք է փոխարինեն առավել հին սեղմենտացիոն, խառնակազմ և ինֆիլտրացիոն ջրերի:

Բնական է, որ այս կամ այն ժամանակում գրավիտացիոն ջուրը շերտի ջրափոխանակման դեպքում կարող է ամքողջությամբ բարձագույն պահանջանքների մեջ մտնել: Այդ ժամանակամիջոցն անվանում են ջրափոխանակման ցիկլ, որի տևողության ցուցանիշը հանդիսանում է ջրափոխանակման գործակիցը: Այն որոշում են հետևյալ բանաձևով՝

$$K_0 = \frac{q}{Q} \quad (90)$$

որտեղ՝

$$K_0 - ն ջրափոխանակման գործակիցն է, \frac{1}{տարի},$$

գ -ն տվյալ շերտի համար ստորերկրյա հոսքի տարեկան ծախսը, մ³/տարի,

Q -ն շերտում գրավիտացիոն ջրի քանակությունը, մ³:

Քանի որ, ստորերկրյա տարեկան հոսքի ծախսը կախված է շերտը կազմող ապարների ֆիլտրացիոն հատկություններից, շերտի տեղադրման խորությունից, դրա սմբան մարզի և հոսքի մոտիկությունից կամ հեռու լինելուց, ճնշման գրադիենտից, ջրի մածուցիկությունից (կախված շերտի ջերմաստիճանից), ջրափոխանակման գործակից մեծությունը, կարող է տատանվել լայն սահմաններում միավորի մասերից մինչև մեկ միավոր:

Եթե K₀-ն հավասար է մեկի, ապա շերտի ջրի պարունակությունը ինֆիլտրացիոն ծագման է, իսկ եթե K₀-ն փոքր է մեկից, ապա շերտը կարող է հազեցած լինել տվյալ և նախորդող ջրաերկրաբանական ցիկլի ինֆիլտրացուն-սեղմմենտացիոն խառնվածքի ջրերով:

Նկատենք, որ առաջին դեպքը բնորոշ է այն ջրատար հորիզոնների և համալիրների համար, որոնք տեղադրված են շատ ինտենսիվ ջրափոխանակման զոնայում և գտնվում է ժամանակակից ջրագրաֆիական ցանցի դրենացնող ազդեցության ոլորտում:

Երկրորդը բնորոշ է երկրակեղևի դժվարեցված և հատկապես խիստ դժվարեցված ջրափոխանակման զոնաներում տեղադրված տեղական և ընդհանուր էռողիոն բազիսից ներքև գտնվող ջրատար հորիզոնների և համալիրների համար:

Հստ տեղադրման պայմանների և ջրապարունակ ապարների՝ ստորերկրյա ջրերը կարելի է ստորաբաժանել հետևյալ տեսակների՝

1) Ծակոտինային ջրեր: Տեղադրված են և շարժվում են տարրեր ծագման ապարների ծակոտինների մեջ: Դրանք գերազանցապես տարածված են փուխը բեկորային շաղկապված նատվածքային ապարներում, ինչպես նաև հրաբխային խարամներում:

2) Ծերտային ջրեր: Տեղադրված են և շրջանառվում են նստվածքային ապարների շերտերում, ստորաբաժանվում են երկու խմբի՝ ծակոտենաշերտային և ճեղքաշերտային:

3) Ճեղքային ջրեր: Տեղադրված են և շրջանառվում են նստվածքային, պինդ մազմատիկ և մետամորֆային ապարների հողմնահարման ճեղքերում:

4) Ճեղքաերակային ջրեր: Տեղադրված են և շրջանառվում են առանձին տեկտոնական քաց ճեղքերում և տեկտոնական խախտումների գոնամերում:

Ստորերկրյա ջրերը, ըստ հիդրավլիկական հատկանիշների, քածանվում են ճնշումային և ոչ ճնշումային տիպերի:

Կախված կլիմայական գործուներից, որոնք հիմնականում պայմանավորում են ստորերկրյա ջրերի ռեժիմը, այսինքն՝ ստորերկրյա ջրերի ծախսի, կազմի, ջերմաստիճանի և մակարդակի փոփոխություններն ըստ ժամանակի, վերջիններս ստորաբաժանվում են գոնայական, ազոնայական և ինտերգոնայական (ներզոնայական):

Զոնայականի են դասվում ստորերկրյա այն ջրերը, որոնց տեղադրման պայմանները, սնումը, ջերմաստիճանը, որակը և ռեժիմը օրինաչափ փոփոխվում են հորիզոնական և ուղղաձիգ ուղղությամբ՝ կապված կլիմայի գոնայական փոփոխության հետ:

Ազոնայականի են դասվում խորը տեղադրված ստորերկրյա ջրերը, որոնք գտնվում են երկրակեղեսի կլիմայական գոնաներից դուրս:

Ինտերգոնայականի են դասվում ստորերկրյա այն ջրերը, որոնք հանդիպում են ցանկացած կլիմայական գոնաներում, սակայն ումեն իրենց յուրահատուկ առանձնահատկությունները, օրինակ՝ հողային ջրերը, վերնաջրերը և այլն:

Ստորերկրյա ջրերը, ըստ ջերմաստիճանի (ըստ O. A. Ալյոկինի, 1953), ստորաբաժանվում են՝ գերատը (0°C -ից ցածր), շատ սառը ($0\text{-}4^{\circ}\text{C}$), սառը ($4\text{-}20^{\circ}\text{C}$), գող ($20\text{-}37^{\circ}\text{C}$), տաք ($37\text{-}42^{\circ}\text{C}$), շատ տաք ($42\text{-}100^{\circ}\text{C}$) և գերտաք (թերմալ) (100°C -ից բարձր):

Ստորերկրյա ջրերի ընդհանուր դասակարգումները, չնայած որ կառուցված են համալիր ցուցանիշների հիման վրա, հեռու են ստորերկրյա ջրերի բոլոր հատկություններն ընդգրկելուց: Ընդհանուր դասակարգումներից այստեղ բերվում են Ֆ. Պ. Սավարենսկու (1939) և Ա. Մ.

Օվչիննիկովի (1955) դասակարգումները (աղյուսակներ 14 և 15) [33, 4 և այլն]:

Թերված ընդհանուր դասակարգումները (Ֆ. Պ. Սավարենսկու և Ա. Մ. Օվչիննիկովի) ունեն առավել լայն կիրառություն և օգտագործվում են ստորերկրյա ջրերի տարբեր նպատակներով ուսումնասիրելու ժամանակ:

Այլ գիտնականների կողմից առաջադրված ընդհանուր դասակարգումները լայն տարածում չեն ստացել, քանի որ դրանք հանդիսանում են կամ հնացած, կամ ստորերկրյա ջրերի տեղադրման պայմանների տեսակետից ոչ լիարժեք, կամ մեծածավալ են և ներառում են մեծ քանակությամբ սակավ գործածական տերմիններ:

Ստորերկրյա ջրերը հաճախ ստորարածանվում են ըստ երկրաբան-շերտագրական ցուցանիշների՝ շրջանում տարածված նստվածքային, մետամորֆային և մազմատիկ ապարների շերտագրությանը համապատասխան:

Այս դեպքում ստորերկրյա ջրերն անվանում են ըստ հասակի կամ ջրապարունակ ապարների ծագումնաբանության, օրինակ՝ «քեմքրի նստվածքների ջրեր», «յուրային նստվածքների ջրեր», «պրոյուվիալ նստվածքների ջրեր» և այլն: Ըստ որում, միշտ պետք է ի նկատի ունենալ, որ ապարների հասակը չի համընկնում ստորերկրյա ջրերի հասակին, քանի որ վերջինն մշտապես գտնվում է շարժման մեջ և հանդես է գալիս տարբեր ձևերով:

Վերը շարադրվածից հետևում է, որ ստորերկրյա ջրերի հիմնական առանձնահատկությունները՝ սմնամ բնույթը, հիդրավլիկական հատկանիշները, շարժման օրինաչափությունները, ջերմաստիճանը, գազային և քիմիական հատկությունները, պայմանավորված են համապատասխան աշխարհագրական և ուղղաձիգ գոնաներում ջրի գտնվելուց, այսինքն՝ դրանց գոյության օրինաչափությունները կախված են ույինքի բնույթից, կիմիայական առանձնահատկություններից, երկրաբանական կառուցվածքից, տեկտոնիկայից, լիբոլոգիական (քարաբանական) և երկրածնաբանական պայմաններից:

Դասագրքի հետագա շարադրանքում կառաջնորդվենք ստորերկրյա ջրերն ըստ տեղադրման պայմանների դասակարգման սխեմայից՝ առաջարկված Ա. Մ. Օվչիննիկովի կողմից (աղ. 14):

Մանեկիում շենքի պահպանություն և Ս. Օվերալինի (1955 թ.)

Քաղաքական- տեղական գործադրություն	Գործադրություն	Վարչական գործադրություն	Վարչական գործադրություն	Վարչական գործադրություն
Աստղաբարձրությունը տպաց սովորական	Վարչական գործադրությունը է սովորական	Վարչական գործադրությունը է սովորական	Վարչական գործադրությունը է սովորական	Վարչական գործադրությունը է սովորական
(Սովորական) սովորական է	Սովորական	Սովորական	Սովորական	Սովորական
Արդյունք Խոհեմուտիւնը - կազմակերպություն Ու	Արդյունք (Արդյունքը) կազմակերպություն Ն	Արդյունք և - գործադրություն Ու	Արդյունք և - կազմակերպություն Ն	Արդյունք և - կազմակերպություն Ն
Անդամական խոհեմուտիւն				
Անդամական օրինականություն առջևական շահագործություն - պատ	Անդամական օրինականություն առջևական շահագործություն - պատ	Անդամական օրինականություն առջևական շահագործություն - պատ	Անդամական օրինականություն առջևական շահագործություն - պատ	Անդամական օրինականություն առջևական շահագործություն - պատ
Անդամական խոհեմուտիւն				
Համակարգություն առջևական շահագործություն - պատ	Համակարգություն առջևական շահագործություն - պատ	Համակարգություն առջևական շահագործություն - պատ	Համակարգություն առջևական շահագործություն - պատ	Համակարգություն առջևական շահագործություն - պատ
Համակարգություն	Համակարգություն	Համակարգություն	Համակարգություն	Համակարգություն

Զատկիրություն զիսկանի զբանակը	Տարրավորնեն և տեղ-տեղ արտակարգած զբանակը			
Քենդիկապան կազմը	Քաղցրահան, որոշ տեղեր արտակարգած կազմը	Քաղցրահան, արդիականած ստեղծություն կողու	Քաղցրահան, արդիականած ստեղծություն կողու	Քաղցրահան, արդիականած ստեղծություն կողու

ԳԼՈՒԽ XI

ՀՈՂԱՅԻՆ ԶՐԵՐ, ՎԵՐՆԱԶՐԵՐ, ԳՐՈՒՏԱՅԻՆ ԶՐԵՐ

Հողային ջրերը, վերնաջրերը և գրունտային ջրերը ազատ կապի մեջ են մքնոլորտի հետ և ձևավորվում են ֆիզիկաաշխարհագրական միջավայրի անմիջական ներգործության տակ: Հողային ջրերը և վերնաջրերը տեղադրված են աէրացիայի գոնայի ապարներում, իսկ գրունտային ջրերը՝ ջրահագեցման գոնայում:

11.1. ՀՈՂԱՅԻՆ ԶՐԵՐ

Ինչպես վերը ասվել է, աէրացիայի գոնան զբաղեցնում է երկրակեղեկի կտրվածքի վերին մասը, վերևից սահմանափակված հողի մակերևույթով և ներքևից՝ ստորերկրյա առաջին ջրատար հորիզոնի ջրերի ազատ մակերևույթով: Աէրացիայի գոնայի հաստությունը գործնականորեն փոփոխվում է 0-ից մինչև 200-250 մ և ավելի (տես. գլ. IV):

Հողային ջրեր ասելով հասկանում են հողային շերտի հետ կապված ջրեր, որոնք մասնակցում են բույսերի արմատական համակարգի սնմանը, կապված են մքնոլորտի հետ և տեղադրված են վերնաջրերից և գրունտային ջրերից վերև:

Կամպած հողի տիպից, շրջանի աշխարհագրական դիրքից, կլիմայական պայմաններից՝ հողաշերտի հաստությունը փոփոխվում է մի քանի սանտիմետրից մինչև 1.5 մ և ավելի: Ըստ գույնի, հողի կառուցվածքի և դրա խտության՝ հողային շերտում աճատում են հորիզոններ՝ բուսահողահումուսային (A_1), էլուվիլային (տեղակուտակային) (A_2), իլուվիլային (տղմակուտակային) (B) և հողագոյացման՝ մայրական ապար ունեցող հորիզոն (C):

Այդ հորիզոնների հաստությունը տարրեր հողերի համար տարրեր են ($A_1 = 0.2 - 0.7$ մ; $A_2 = 0.2 - 0.3$ մ; $B = 0.2 - 0.7$ մ;): C -ի հաստությունը որոշվում է հողառաջացնող ապարի ծագումով, կազմով, կառուցվածքով և այլն:

Ինչպես հողերում, այնպես էլ ապարներում պարունակում են ամուր և բույլ կապակցված, մազանոթային և գրավիտացիոն ջրեր: Գրավի-

տացիոն ջրերը բաժանվում են ժամանակավոր և մշտական ջրերի: Հողերում ժամանակավոր ջուրը առաջանում է մթնոլորտային տեղումների, ձնհալքների, հողերի ջրան շրջաններում: Մշտական ջուրը տարածված է ճահճային և տիղմային հողերում, երբ գրունտային ջրերը, երկրի մակերևույթի հաշված, տեղադրված են ոչ խորը:

Բույսերի սննան գործում կարևոր նշանակություն ունեն գրավիտացիոն և հատկապես մազանորային (մազական) ջրերը: Բույսերի կողմից թույլ կապված ջրերը դժվար են յուրացվում: Դրանց կողմից ամուր կապացված ջրերը չեն յուրացվում, քանի որ դրանք հողային մասնիկների հետ մոլեկուլար ձգողական ուժերով շատ անգամ ավելի մեծ ուժերով են կապված, քան բույսերի արմատական համակարգի ներծծման ուժերն են:

Հողային գրավիտացիոն և մազանորային ջրերը ունեն յուրահատուկ հատկանիշներ, որոնցից կարևորներն են.

- սննան և բեռնաբափման մարզերը համընկնում են,
- գտնվում են լրիվ կախվածության մեջ օդերևութաբանական պայմաններից,
- դրանց շարժումը գերազանցապես կատարվում է ուղղաձիգ ուղղությամբ (վարընթաց), ոչ ճնշումային են, շարժումը լամինար է, ենթարկվում է Դարսի օրենքին (տես գլ. IX),
- մասնակցում են ջրի շրջանառությանը բնության մեջ,
- ճահճային և տորֆային հողերում ունեն անշարժ ռեժիմ,

Միքապետում են յուրահատուկ քիմիական կազմի, դրանցում բարձր կոնցենտրացիայով պարունակվում են օրգանական ծագում ունեցող բրուներ (հումինային, ֆոլվինային), որոնք դրան տալիս են դեղին, դեղնավուն և նույնիսկ սև և սևագործ գույն:

Հողային ջրերն ունեն մեծ ազդեցություն գրունտային ջրերի քիմիական կազմի ձևավորման վրա: Դա բացատրվում է նրանով, որ հողերը պարունակում են (նվազման կարգով) SiO_2 , Al_2O_3 , Fe_2O_3 , K_2O , Na_2O , MgO , CaO ; կարբոնատային հողերը՝ շատ CaO , CO_2 , աղակալված հողերը՝ Cl , SO_4 , CaO , Na_2O , MgO :


Գրունտային ջրերի բարձր տեղադիրքի դեպքում հողը ենթարկվում է ավելցուկային խոնավացման, զարգանում են վերականգնման գրծընթացները, սկսում է ճահճակալել: Այս դեպքում գրունտային ջրերի

գոլորշիացումը հողում բերում է Ca , Mg սուլֆիդների, Ca և Mg , Na , Fe և P քլորիդների կուտակմանը: Գրունտային ջրերի խորը տեղադիրքի դեպքում հողային ջրերը գրունտային ջրատար հորիզոն են մտցնում (տանում) տարբեր աղեր, դրանով իսկ ձևավորում գրունտային ջրերի քիմիական կազմը:

Հողում գրավիտացիոն ջուրը ջրատար հորիզոն չի առաջացնում, որի հետ կապված, այն չի կարող ճնշման գրադիենտի ազդեցության տակ շարժվել հորիզոնական հարթությամբ, այլ ծանրության ուժի ազդեցության տակ շարժվում է միայն ուղղաձիգ ներքև կամ մազանոթային ուժերի ազդեցության տակ՝ տարբեր ուղղություններով, և դրա համար էլ հողային ջուրը չի կարող ստեղծել «ներհողային կողային հոր»:

11.2. ՎԵՐՆԱՉՐԵՐ

Վերնաջուրը ստորերկրյա ջրի տիպ է, որն առաջանում է աէրացիայի (օդահագեցման) գոնայի փոխը ապարների (հողագրունտների) միջավայրում կավային կամ սեպածն վերջացող ջրամերժ շերտի վրա ի հաշիվ մընոլորտային, մակերևութային և ջրային գոլորշիների խտացման ջրերի ինֆիլտրացիայի (նկ. 27, [8]): Վերնաջրերը սովորաբար կապված են ծակոտկեն չորրորդական հասակի ապարների՝ ավագներ, կավավազներ, լուսեր և այլնի հետ: Վերնաջուրը հանդիպում է նաև հողմնահարված ժայռային ապարների վերին շերտերում: Բացի այդ՝ տարածված է հավերժական սաղցութային շրջաններում, որտեղ ձմռանը ամբողջությամբ սառչում է: Վերնաջրի հաստությունը հաճախ կազմում է 0.4-1.0 մ, երբեմն այն հասնում է 2-5 մ:



Նկ. 27 Վերնաջրերի և գրունտային ջրերի տեղադրման սխեմա

1- վերնաջրուր, 2- աէրացիայի զոնա, 3- մազանորային զոնայի (հզրաշերպի) մակերևույթը, 4- մազանորային զոնա, 5- գրունտային ջրերի մակերևույթը, 6- ջրահագեցված զոնա, 7- ջրամերժ շերտ

Վերնաջրերի ձևավորման համար անբարենպաստ են համարվում լավ ջրաթափանց և ոչ խոնավատար համասեռ ապարները (խոչորահատիկ ավազներ, ճեղքավորված ապարներ), ինչպես նաև կավային ապարները, քանի որ կողոյինների ուռչելու հետևանքով կավային շերտի վերին մասը (ոչ մեծ հաստությամբ) համեմատաբար շուտ ջրահագեցնում է և հողի մակերևույթից ջրերի ինֆիլտրացիայի համար դառնում անբահանցելի:

Վերնաջրերի առաջացման վրա նշանակալի ազդեցություն է քողոնում ռելիեֆի բնույթը: Հատկապես թեք լանջերի վրա, որոնք բարենպաստ են մակերևութային հոսքերի և ոչ բարենպաստ ինֆիլտրացիայի համար, վերնաջրուր չի ձևավորվում կամ ձևավորվում է վերնաջրի շատ փոքր շերտ կարծ ժամանակով: Վերնաջրերի ձևավորումը տիպական է նշանակալի հզրության աէրացիոն զոնա ունեցող տարածքների համար (միջգետային կենտրոնական մասերի տարածքներ, նախալեռնային հարթավայրեր, չորային շրջաններ՝ գրունտային ջրերի խորը տեղադրված մակարդակով): Վերնաջրերի առաջացման համար առավել լավ պայմաններ ստեղծվում են հարթ ջրբաժաններում և տեղային իջեցումներով (գոգավորություններով) տափաստանային տարածքներում, որ հոսում են անձրևային ջրերը և պահպում են ձնիալքի ջրերը: Դրանք ժամանակի տեսակետից առավել կայուն են, երբեմն ունենում են այնպիսի պաշարներ, որոնք բավարարում են ժամանակավոր տնտեսական

ջրամատակարարմանը, հատկապես գարնան և ամառ-աշուն շրջանում, եթք տեղումները շատ են:

Քաղաքների տարածքներում և խոշոր արդյունաբերական մակերեսների վրա վերնաջրերի առաջացմանը նպաստում են նաև բազմաթիվ իջեցումները, փոսերը, ինչ փորփածքները, որոնք մնացել են նախորդ շինարարական աշխատանքներից և լցված են հանված փուխր շինարարական գրութներով:

Վերնաջրերի տարրերից հատկանիշներն են.

- տարածման սահմանափակ մակերեսը, որը պայմանավորված է ջրամերժ ապարների չափերով,

- ջրի մակարդակի, կազմի և պաշարների կտրուկ փոփոխությունը՝ կախված վերնաջրերի տարածման շրջանի կիմայական պայմաններից,

- հիդրավլիկական կապի բացակայությունը գետաջրերի հետ,

- ջրերի հեշտ աղտոտումը այլ ջրերով (հողային, ճահճային, արդյունաբերական և այլն),

- մեծամասամբ ոչ պիտանի լինելը մշտական ջրամատակարարման համար,

- վերնաջրերի առանձնահատուկ դինամիկան՝ դրանք կարող են մասնակցել գրունտային ջրերի սննանը և ամբողջությամբ ծախսվել գոլորշիացման վրա:

Վերնաջրերի կազմը շատ խայտաբղետ է. հյուսիսային շրջաններում դրանք բաղրահամ կամ թույլ հանքայնացված են օրգանական նյութերի, երկարի, սիլիկաթրուների բարձր պարունակությամբ: Հարավային շրջաններում, որտեղ առկա է ինտենսիվ գոլորշիացումը, սովորաբար հանքայնացված են և ունեն տարբեր կազմ: Քաղաքների և բնակավայրերի տարածքներում, երկրի մակերևույթից դրանց ոչ խորը տեղադրման հետևանքով, վերնաջրերը ենթարկվում են խիստ աղտոտման:

Շինարարական աշխատանքների ժամանակ վերնաջրերի առկայությունը ոչ բարենպաստ գործոն է: Սովորաբար քաղաքներում և արդյունաբերական տարածքներում (մակերեսներում) վերնաջրերի վնասակար ազդեցությունը վերացնելու համար կիրառում են դրենաժ (չորացուցիչ, ցամաքուրդ), որը կիրառվում է ոչ միայն առանձին շենքերի շուրջը կամ նշանակած օբյեկտների սահմաններում, այլ նաև դրանց մերձակա տարածքներում:

11.3. ԳՐՈՒՆՏԱՎՅԻՆ ԶՐԵՐ

Գրունտային ջրերը լայնորեն տարածված են բոլոր կլիմայական պայմաններում, որտեղ մթնոլորտի ջերմաստիճանային ռեժիմը և ապարների վերին շերտերը թույլ են տալիս ջրի կուտակմանը հեղուկ ֆազայով (վիճակով):

Գրունտային ջրերը, լինելով առաջին ջրատար հորիզոնը երկրի մակերևույթից հաշված, կարևոր նշանակություն ունեն գյուղատնտեսության մեջ: Գյուղական բնակավայրերի շուրջ 80%-ը ջրամատակարաման համար օգտագործում է գրունտային ջրերը: Դրանց նշանակությունը առավել ևս մեծանում է նակերևութային ջրերով աղքատ չորային շրջաններում: Գրունտային ջրերը շատ վաղ անցյալից օգտագործվում է ոռոգման համար:

11.3.1. ՏԵՂԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Գրունտային կոչվում են երկրի մակերևույթից հաշված առաջին տարածում ջրամերժ շերտի վրա տեղադրված ջրերը, որոնք գրադեցնում են ընդարձակ տարածքներ և մշտապես գոյություն ունեն: Գրունտային ջրերին կարելի է վերագրել հետևյալ առանձնահատկությունները.

1. Գրունտային ջրերի հորիզոնը սովորաբար ջրամերժ ապարներով ծածկված չէ, իսկ ջրատար շերտը ամբողջությամբ ջրով չի լցված, դրա համար էլ գրունտային ջրերի մակերևույթը համարվում է ազատ, ոչ ճնշումային և մթնոլորտի հետ գտնվում է անմիջական կապի մեջ (ճնշումը գրունտային ջրերի մակերևույթի վրա հավասար է մթնոլորտային ճնշմանը): Հորատանցքերով կամ ջրհորերով գրունտային ջրերի հորիզոնը հատելիս դրա մակարդակը կանգնում է սկզբնապես բացված մակարդակի վրա:

Առանձին տեղամասերում, որտեղ գրունտային ջրերը վերևից ծածկված են լոկալ ջրամերժ շերտով, ձեռք են բերում տեղական փոքր ճնշում, այսինքն՝ գրունտային ջրերի հորիզոնը հատելիս գրունտային ջրերի մակարդակը բարձր է կանգնում այդ ջրամերժի հատակից:

2. Զգայուն են մթնոլորտում տեղի ունեցող փոփոխական գործընթացների նկատմամբ, այդ պատճառով ջրերի տեղադրման խորությու-

Ար, ջերմաստիճանը, հանքայնացումը, ծախսը մշտապես ենթարկվում են տատանումների: Դրանք, որպես կանոն, տեղի են ունենում օրվա, ամսվա, սեզոնի և տարվա կտրվածքներում:

3. Սննան և տարածման մարզերը համընկնում են: Սնումը տեղի է ունենում ի հաշիվ

- մթնոլորտային և ձնիալքի ջրերի ինֆիլտրացիայի և ինֆլյուացիայի,

- գետերից, լճերից, տարբեր ջրանցքներից ֆիլտրացվող ջրերի,

- աերացիայի զոնայում ջրային գոլորշիների խտացման (կոնդենսացման),

- առավել խորը տեղադրված ջրատար հորիզոնների ջրերի ներփակում (ներլլաման):

4. Բնության մեջ տեղադրված են համարյա ամենուր, գերազանցապես կուտակվում (տեղադրված) են չորրորդական հասակի նորագոյացումներում, ինչպես նաև արմատական ապարների հողմնահարման կեղևում: Դրանց տեղադրման պայմանները բազմազան են և պայմանավորված են տեղանքի ֆիզիկաաշխարհագրական, երկրաբանալիքութիւնական, երկրամասաբանական և այլ գործոններով:

5. Առավել մատչելի են գործնական (արակտիկ) օգտագործման համար: Սակայն դրանց ոչ խորը տեղադրման պատճառով հաճախ ենթակա են աղտոտման և վարակման:

Անջրաբափանց ապարները, որոնց վրա ձևավորվում են գրունտային ջրերը, կոչվում են ջրամերժ հատակ (հիմք) կամ ջրամերժ շերտ գրունտային ջրերի համար:


Գրունտային ջրերի ազատ մակերևույթը կոչվում է *հայելի կամ սիփոռց*: Քանի որ այն ենթակա է տատանումների, ապա օգտագործվում է գրունդային ջրերի մակարդակի հասկացությունը, որը նշանակում է ջրերի հորիզոնի վերին սահմանի տեղադրությունը՝ հաշված ջրամերժ շերտից:

Ջրամերժ շերտի առաստաղից մինչև գրունտային ջրերի մակարդակն ընկած հեռավորությունը կոչվում է *գրունդային ջրալրար հորիզոննի հասկացություն* (հզորություն): Քանի որ գրունտային ջրերի մակարդակը ժամանակի ընթացքում կրում է նշանակալի տատանումներ (տես վերը), ուստի գրունտային ջրատար հորիզոնի հզորությունը հաստատուն չէ: Գրունտային ջրերի մակարդակից (հայելոց) վերև տեղադրված է մազանոթային ջրերի զոնան (եզրաշերտը) (տես նկ. 27):

Կախված ապարների լիքոլոգիական կազմից, այն ունի տարբեր հաստություն։ Խոշոր բեկորային, ավագային ապարներում դրա հաստությունը աննշան է, իսկ փոշային և կավային ապարներում ավելի մեծ է։ Մազանորային եզրաշերտի ջրերը հիդրավլիկորեն կապված են գրունտային հորիզոնի ջրերի հետ և կրում են նույն փոփոխությունները, ինչպիսին կրում է գրունտային ջրերի մակարդակը։

Կախված տեղանքի երկրաբանաձևաբանական և երկրաբանական կառուցվածքից՝ բնության մեջ գրունտային ջրերը առաջացնում են տեղադրման երեք ձև՝ 1) գրունտային հոսք, 2) գրունտային ավագան, 3) գրունտային հոսքի և գրունտային ավագանի գուգորդում։


Գրունտային հոսք: Ոչ ճնշումային ջրատար հորիզոն, որում ջրի շարժումը կատարվում է գրունտային ջրերի մակարդակի թեքության ուղղությամբ ծանրության ուժի ազդեցության տակ։ Գրունտային ջրերի հոսքի տարածման մակերեսը կոչվում է այդ ջրերի հոսքի ավագան (նկ. 28)։



Նկ. 28 Գրունտային ջրերի հոսքի սխեմա.

առ - հողի մակերևույթ, բե - մազանորային ջրերի մակերևույթ, աբ - մազանորային ջրերի եզրաշերտ, բե - գրունտային ջրերի մակերևույթ, բբ - ջրամերժ շերտի մակերևույթ, բը - ջրահագեցած զուս, հ - գրունտային ջրերի հոսքի հասկություն 1, 2, 3-ը լրիւ (նկ. 29)


Գրունտային ավագան: Ջրամերժ հիմքում (հատակում) գոգավորությունները, իջվածքները, որոնք լցված են ջրատար ապարներով, ջրահագեցված են և ջրերի մակերևույթը հորիզոնական է (նկ. 29)։ Այդ գոգավորությունների չափից շատ լցվելու դեպքում առաջանում է գրունտային հոսքի գուգորդում ավագանութիւն (նկ. 30)։



Նկ. 29 Գրունտային ջրերի ավազանի սխեմա

աա - գրունտային ջրերի մակերևույթ, բբ- ջրամերժ հիմքի մակերևույթ, 1- ավազ,
2- ավազ ջրալիքար, 3- կալ

Սակայն չպետք է ենթադրել, որ գրունտային հոսքի և գրունտային ավազանի միջև գոյություն ունի ջրբաժան՝ շարժվող և անշարժ սահմաններում գրունտային ջրեր: Գրունտային հոսքի շարժումն ընդգրկում է ըստ խորության և արագության մշտապես նվազող գրունտային ավազանի մարզը: Ջրամերժ հիմքի գոգավորություններում գրունտային ջրերը գտնվում են կանգուն վիճակում, իսկ վերևից տեղի է ունենում գրունտային ջրերի ազատ հոսք:



Նկ. 30 Գրունտային հոսքի և գրունտային ավազանի գուգրղման սխեմա

1- ավազ, 2- ավազ ջրալիքար, 3- ջրամերժ ապարներ, 4- գրունտային ջրերի մակարդակ, 5- գրունտային ջրերի շարժման ուղղություն, 6- մթնողորդային լրեղումների ինֆիլտրացիա (ներծծում)

Գրունտային ջրերն գտնվում են անընդհատ շարժման մեջ: Դրանք ծանրության ուժի շնորհիվ շարժվում են բարձրադիր տեղամասերից (սկսած գրունտային ջրերի ջրբաժանից) դեպի ցածրադիրները, լսու որում ապարների ճնշքերում և ծակոտիներում ջուրը կատարում է բարդ և տարրեր բնույթի շարժում: Գետահովիտներում՝ հատկապես մերձհունային հատվածներում, գրունտային ջրերի շարժման ուղղությունը համընկնում է մակերևութային հոսքի ուղղությանը:

Գրունտային ջրերի մակերևույթի հաճախ դիտվող 0.001-0.007 հիդրավիկ թեքությունների դեպքում, ստորերկրյա ջրի շարժման արագությունը կազմում է գլաքարերում՝ 2.0-5.0 մ/օր, խոշորահաստիկ ավագներում՝ 1.5-2.5 մ/օր, մանրահաստիկ ավագներում և կավավազաններում՝ 0.5-1.5 մ/օր, ավազակավերում և լոսային ապարներում 0.1-0.5 մ/օր [19]:

Տեղանքի ցածրադիր մասերում, որտեղ գրունտային ջրերի հորիզոնը հատվում է գետահովիտներով, ձորակներով, լճային գոգավորություններով և այլ էրոզիոն խրվածքներով, նման հատումների դեպքում տեղի է ունենում թեռնարափում. գրունտային ջրերը երկրի մակերևույթ են դուրս գալիս վարդներաց աղբյուրների և թացույթների ձևով: Գրունտային հոսքի մակերևույթը դեպի թեռնարափման վայրը (տեղը) սահուն իշնում է՝ առաջացնելով կորագիծ մակերևույթ: Կորագիծը ուղղաձիգ հարթության վրա կոչվում է **դեպրեսիոն** (իջորային մակերևույթը) կոր:

Հարկ է նշել, որ գրունտային ջրերի շարժումը ջրամերժ հիմքի դիրքով չի պայմանավորված, այլ այն պայմանավորված է դեպքեսիոն կորի դիրքով և միշտ ուղղված է ջրատար հորիզոնի դրենացման կողմը: Քիչ չեն դեպքերը, երբ գրունտային հոսքի շարժումն ուղղված է ջրամերժ հիմքի թեքության հակառակ ուղղությամբ: Այսպիսով, անջրաբափանց շերտերը հանդիսանում են ջրատար հորիզոնների առաջացման համար անհրաժեշտ պայման, սակայն չեն որոշում շարժման ուղղությունը ջրատար հորիզոններում:

11.3.2. ԳՐՈՒՆՏԱՅՅԻՆ ՋՐԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ ԵՎ ՏԵՂԱԳՐՄԱՆ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գրունտային ջրերի մակերևույթը շատ մասերում հարթ չէ, իրենից ներկայացնում է թույլ ալիքավոր մակերևույթ, որի ընդհանուր թեքությու-

Աը ուղղված է դեպի տեղանքի մոտակա ցածրությունները: Հաճախ այն կրկնում է երկրի մակերևույթի հարթեցված ռելիեֆը, սակայն առանձին տեղանասերում տարբեր պատճառներով (գետահովիտներով գրունտային հոսքի դրենացումը, ջրատար հորիզոնի հաստության կտրուկ մեծացումը, ջրատար ապարների փիլտրացիոն հատկությունների փոփոխումը և այլն) երկրի մակերևույթի և գրունտային ջրերի մակերևույթի այդպիսի հարաբերակցությունը կարող է խախտվել:


Գրունտային ջրերի մակերևույթը հիդրոիզոգծերի (ջրափոխիպսերի) տեսքով պատկերված են քարտեզի վրա: Հիդրոիզոգծերը գրունտային ջրերի մակերևույթի միևնույն քարձրության կետերի միացման գծերն են: Հիդրոիզոգծերն արտահայտվում են քացարձակ կամ հարաբերական նիշերով՝ կախված համեմատության հարթության ընտրությունից (ծովի մակերևույթ կամ որևէ պայմանական հարթություն):

Ուսումնասիրվող տեղանքում հիդրոիզոգծերի քարտեզի կազմման համար, ջրերի մակարդակների միաժամանակյա չափումների տվյալները հորատանցքերում, ջրհորերում, շուրֆերում և աղբյուրներում անց են կացվում քացարձակ կամ հարաբերական նիշերով, տոպոգրաֆիական քարտեզների կամ պլանի վրա, և այդ տվյալներով ստանում են հիդրոիզոգծեր: Հիդրոիզոգծերը կազմվում են ռելիեֆի հորիզոնականների (իզոգծերի) անալոգիայով, սակայն այս դեպքում գծերով միացնում են ստորերկրյա ջրերի հավասար մակարդակներ ցույց տվող կետերը (նկ. 31): Կախված տոպոգրաֆիական հիմքի (քարտեզի) մասշտաբից, գրունտային ջրերի մակարդակների դիտման կետից, քանակից, հիդրոիզոգծերի քարտեզի նպատակայնությունից՝ վերջին կազմվում է տարբեր մասշտաբների՝ հիդրոիզոգծերը տանելով 0.5, 1.0, 2.0 և 5.0 մետր քայլերով (ինտերվալներով):

Ունենալով հիդրոիզոգծերի քարտեզը՝ համադրված ռելիեֆի իզոգծերի վրա՝ քարտեզի ցանկացած հատման կետում այդ երկու նիշերի տարբերությամբ կարելի է որոշել գրունտային ջրի տեղադրման խորությունը:

Գրունտային ջրերի հիդրոիզոգծերի քարտեզի օգնությամբ կարելի է որոշել գործնականում շատ անհրաժեշտ հետևյալ ցուցանիշները՝ 1) գրունտային ջրերի հոսքի ուղղությունը և հիդրավիկ թեքությունը, 2) գրունտային ջրերի խորությունը ցանկացած կետում կամ տեղանասում (տես վերը), 3) ջրատար շերտի հզորությունը (հաստությունը), իսկ

Քիլտրացիայի գործակցի հայտնի լինելու դեպքում նաև գրունտային ջրերի ծախսը:



Նկ. 31 Հիդրոիզոգրաֆիկ քարտեզ

- 1- գեղեցիկ, 2- ռելիեֆի իզոգրաֆ, 3- հիդրոիզոգրաֆ, 4- հորավանցքեր, 5- ջրհորեր,
6- շուրջիկներ: Խվերը-ձախից՝ համարև ըստ կալվարդի, աջից համարիչում՝ ջրի
խորությունը երկրի մակերևույթից, հայտարարում՝ երկրի մակերևույթի բացարձակ
նիշերը:

Գրունտային ջրերի հոսքի ուղղությունը որոշում են բարձր միշտ ուժեցող հիդրոիզոգրաֆից դեպի ցածր նիշ ունեցող հիդրոիզոգրաֆին տարված ուղղահայացով: Գրունտային հոսքի շարժման ուղղությունը համընկնում է տարված ուղղաձիգի հետ:

Գրունտային ջրերի հոսքի (հիդրավլիկ) թեքությունը որոշելու համար հիդրոիզոգրաֆի քարտեզի ցանկացած տեղամասի համար վերցվում է այդ տեղամասի ծայրամասային իզոգրաֆի նիշերի տարբերությունը և բաժանում դրանց միջև եղած հեռավորության վրա: Նոյն եղանակով որոշվում է նաև մնացած տեղամասերի համար:

Գրունտային ջրատար հորիզոննի հաստության որոշման համար բացի հիդրոիզոգրաֆից հարկավոր է կազմել նաև ջրամերժ շերտի՝ հիմքի, մակերևույթի իզոգրաֆ: Հիդրոիզոգրաֆի նիշերի և ջրամերժ շերտի հիմքի իզոգրաֆի նիշերի տարբերությունը տալիս է գրունտային ջրատար հորիզոնի հաստությունը:

Գրունտային ջրերի մակարդակը ենթարկվում է տատանումների, դրա համար էլ հիդրոիդոգծերի քարտեզը արտահայտում է գրունտային ջրերի մակերևույթը միայն այն պահին (օր, շաբաթ), երբ կատարվել են չափումները և իհմք են հանդիսացել տվյալ քարտեզի կազմման համար:

Գրունտային ջրերի տեղադրման խորությունը փոփոխվում է գրոյից մինչև տասնյակ, երրեսն՝ հարյուրավոր մետր: Այն կախված է ռելիեֆից և երկրաբանական կառուցվածքից (ջրամերժ շերտի տեղադրման խորություն, նատվածքների ջրաբափանցելիություն), ինչպես նաև գրունտային ջրերի սննման և բեռնաբափման ինտենսիվությունից: Գրունտային ջրերի տեղադրման խորությունն էլ ավելի փոքր է, եթե ջրամերժ շերտը տեղադրված է երկրի մակերևույթին մոտ. որքան փոքր է երկրի մակերևույթի թեքությունը, ուշինեֆի կտրտվածությունը և ստորերկրյա արտահոսքը, այնքան մեծ է գրունտային ջրերի սնումը՝ ի հաշիվ մբնուրուտային տեղումների, ստորերկրյա ներհոսքի և ոռոգման ջրերի: Ուշինեֆի բարձրացնանը զուգընթաց մեծանում է գրունտային ջրերի տեղադրման խորությունը՝ ջրբաժանների, բլրակների և այլ բարձրացումների վրա՝ հասնելով մի քանի տասնյակ մետրերի:

Գրունտային ջրերի տեղադրման խորության վրա նշանակալի ազդեցություն է բողնում բուսականությունը: Օրինակ՝ անտառը խոնավ շրջաններում ինտենսիվ տրանսպիրացիայի հետևանքով իջեցնում է գրունտային ջրերի մակարդակը: Տրանսպիրացիայի մասին կարելի է դատել թուրքմենիայում փորձերի միջոցով ստացված հետևյալ տվյալներով: Վեգետացիայի շրջանում (ապրիլ-հոկտեմբեր) 14 տարեկան մեկ ծառը գոլորշիացնում է հետևյալ քանակություններով ջուր (մ^3). ուշնին՝ 91.4, բարդին՝ 82.9, բրենիմ՝ 65.8, ծիրաններին՝ 32.9, փշատենին՝ 24.0 (ըստ Լ. Վ. Ելիսևի): Խոնավ շրջաններից դուրս անտառը կարող է բռնել տարբեր ազդեցություն գրունտային ջրերի տեղադրման խորության վրա՝ կախված կիմայական պայմաններից, ուշինեֆի և երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններից:

Գրունտային ջրերի մակարդակի վրա էական ազդեցություն են թողնում տնտեսական աշխատանքները: Զրամքարի կառուցումը, ոռոգումը և հողերի ջրաբիացումը փոքրացնում են գրունտային ջրերի տեղադրման խորությունը, իսկ դրենաժային համակարգերը և տարբեր նպատակների համար ջրառը (ջրհանումը) մեծացնում են դրանց տեղադրման խորությունը:

Խոնավ զռնայի պլատֆորմային տարածքների սահմաններում գրունտային ջրատար հորիզոնը տեղադրված է մինչև 10-15 մ խորությունների վրա և հիմնականում ձևավորվում է չորրորդական և նեղդեմ-չորրորդական հասակների փոխը առաջացումներում։ Չորային և կիսաշորային զռնաներում գրունտային ջրերը տեղադրված են մինչև 50 մ և ավելի խորությունների վրա, ձևավորվում են ոչ միայն չորրորդական, այլ նաև տարբեր հասակի և կազմի ապարներում։ Հին բյուրեղային ապարների զանգվածներում և լեռնածալքավոր մարգերում (քացառությամբ միջլեռնային իջվածքների և նշանակալի հաստության փոխը նստվածքների ապարների տարածման տեղամասերի) գրունտային ջրերը, որպես կանոն, կապված են ճեղքավորված ապարների վերին զռնայի լիթիվկացված (քարացած) նստվածքային, մազմատիկ, մետամորֆիկ ապարների հետ։ Այդ շրջանների համար ռելիեֆի ինտենսիվ էռոգիոն կտրվածության դեպքում (լեռնածալքավոր մարգեր) բնորոշ են գրունտային ջրերի տեղադրման առավելագույն (մինչև 200-250 մ, հնարավոր է ավելի) խորություններ [4]:

Գրունտային ջրերի խորությունն ըստ տարածման (մակերեսի) բնորթագրելու համար կազմում են *հզորաքերիք* քարտեզներ։ *Իզորաքերը* գրունտային ջրերի միննույն խորության վրա գտնվող կետերի միացման գծերն են։ *Իզորաքերիք* քարտեզի կազմումը կատարվում է հիդրոիզոգծերի քարտեզների կազմնան անալոգիայով։ Երեսն, առավել ցայտուն արտահայտման համար հիդրոիզոգծերի, իզորաքերի և ջրամերժ շերտի առաստաղի իզոգծերի քարտեզները անցկացնում են նույն տոպոգրաֆիական հիմքի վրա համատեղ։ Գրունտային ջրերի օգտագործման բոլոր քարտեզները, լայնորեն կիրառվում են քազմաքիվ ժողովրդատնտեսական խնդիրներ լուծելու համար։

Հարկ է նշել, որ առանձին շրջաններում կարող է գրունտային ջրեր չլինեն։ Դա կարող է լինել այնտեղ, որտեղ երկրի մակերևույթից սկսած տեղադրված են անջրաբափանց ապարներ, ինչպես նաև չորային այն շրջաններում, որտեղ գրունտային ջրերի սնումը նշանակալի փոքր է գոլորշիացումից և դրանց ստորերկրյա արտահոսքից։ Այդ պայմաններում կայուն, համատարած տարածում ունեցող ջրատար հորիզոն չի ստեղծվում, սակայն հնարավոր է վերնաջրերի առաջացում [25]:

11.3.3. ՄՆԱԾՎՆ ԵՎ ԲԵՌՆԱՔԹԱՓՄԱՆ ՊԱՅՄԱՆԵՐԸ

Բնության մեջ գրունտային ջրերը կարող են գրյություն ունենալ միայն դրանց սննան աղբյուրների առկայության դեպքում:

Ընդհանուր առմամբ գրունտային ջրերի սնումը իրականացվում է հաճախ իրար հետ սերտ կապի մեջ գտնվող հետևյալ ջրաղբյուրների հաշվին՝ 1) մքնողորտային տեղումների ինֆիլտրացիա, 2) կոնդենսացիա, 3) մակերևութային ջրերի ներծծում, 4) ճնշումային ջրերի ներհոսք, 5) գրունտային ջրերի արհեստական սնում:

Գրունտային ջրերի սննան իհմնական ձևը մքնողորտային տեղումների (անձրև, հալվող ձյուն, ցող և այլն) ներծծումն է՝ *ինֆիլտրացիան*:

Ինֆիլտրացիայի մեծությունը սովորաբար արտահայտվում է ջրի շերտի հաստությամբ՝ արտահայտված միլիմետրերով, որը հասնում է գրունտային ջրերի մակարդակին որոշակի ժամանակահատվածում (մմ/օր, մմ/ամիս, մմ/տարի): Անհրաժեշտության դեպքում այն կարելի է արտահայտել ջրի ծախսով, որը որոշակի ժամանակահատվածում հասնում է գրունտային ջրատար հորիզոնի միավոր մակերեսին, օրինակ՝ ինֆիլտրացիայի սննան մոլուզով (/*Վչկմ*²):

Գրունտային ջրերի սննան ինֆիլտրացիոն մեծությունը, ընդհանուր առմամբ, որոշվում է երկրի մակերևույթի խոնավացման ինտենսիվությամբ, աէրացիոն գոնայի ապարների կազմով և կառուցվածքով, ջերմային ռեժիմով և ապարների խոնավությամբ՝ բուսածածկույթի տեսակից կախված և այլն:

Հարկ է նշել, որ ջրի այն ծավալը, որն անցնում է հողի մակերևույթից հողային շերտ և այնուհետև աէրացիոն գոնայի ապարներ, այս կամ այն չափով գերազանցում է գրունտային ջրատար հորիզոնի ջրերի մակարդակին հասնող ինֆիլտրացիոն սնումը: Ջրի մի մասը ծախսվում է ներգրունտային գոլորշիացման, բույսերի արմատական համակարգի հագեցման և տրանսպիրացիայի, ինչպես նաև մազանոթային և բույլ կապակցված ջրերի ձևափորման վրա (եթե աէրացիայի գոնայի ապարների խոնավությունը ցածր է ամենափոքր խոնավատարողունակությունից):

Ինֆիլտրացիան կախված է տեղումների բնույթից և ինտենսիվությունից, ինչպես նաև աէրացիայի գոնայի հողի և ապարների ջրաբափանցելիությունից: Գրունտային ջրերի սննան համար առավել կարևոր

Աշանակություն ունեն ինտենսիվ երկարաժամկետ համատարափ անձրևները, որոնք թափվում են օդի բարձր հարաբերական խոնավության (100%) ժամանակ: Տեղումները, որոնք թափվում են ձմռան շրջանում, կարող են գրունտային ջրերի սննման աղբյուր հանդիսանալ գերազացապես զարնանը, ձմռան շրջանում սառած ապարների հալեցման և կարծի (այնոյ) տեղումները հեղուկ-կարիլային վիճակի անցնելուց հետո: Հալոցքի և հողային շերտի դրական շերմաստիճանի դեպքում ձմռան ամիսներին նույնպես հնարավոր է տեղումների ինֆիլտրացիա:

Տափաստանային շրջաններում, որտեղ ձյան շերտի հաստությունը չնշին է, իսկ ձմռան ուժեղ քամիները մեծ քանակությամբ ձյունը տանում են ձորակները և գետահովտները, հետևապես այդ տարածքներում ձմեռային այնոյ տեղումների չնշին մասն է, որ զարնան ամիսներին հալվելով հասցնում է ներծծվել հողագրունտային շերտեր, այն էլ՝ ոչ մեծ խորությունների վրա: Գարնան շրջանում տափաստաններում գրունտային ջրերի առավել ինտենսիվ սննում տեղի է ունենում ցարծրադիր տեղամասերում: Բնական է, որ տափաստանային սննման տեղամասերում զարնանը գրունտային ջրերի մակարդակը նշանակալի բարձրանում է, իսկ ստորերկրյա ջրերը՝ քաղցրանում: Հաճախ այդ ջրերը, որոնք տեղադրված են երկրի մակերևույթից մի քանի մետր խորության վրա և համարվում են քաղցրահամ, ջրհորերի օգնությամբ օգտագործվում են խմելու համար, որպես քաղցրահամ ջրերի միակ աղբյուր: Սակայն դրանք բույլ ջրառատ են (թիզ է ծախսը):

Լեռնային շրջաններում գրունտային ջրերի սննմանը, քացի անձրևային և պինդ տեղումներից, կարող են մասնակցել եղյամը և ցողը (շաղը):

Անապատային շրջաններում կարող է տեղի ունենալ նաև գրունտային ջրերի կոնդենսացիոն սննում, այսինքն՝ սննում ի հաշիվ ապարներում օդի ջրային գոլորշիների խտացման:

Գրունտային ջրերի կոնդենսացիոն սննման հիմնական ծավալը ձևավորվում է անոնան (տաք) շրջանում, երբ օդի ջերմաստիճանի օրական նշանակալից անկումները և աէրացիոն զոնային կտրվածքում (հաշված երկրի մակերույթից) ջերմաստիճանի տարածումը նպաստում են ջրային գոլորշու մոլեկուլների վարընթաց շարժմանը ջերմաստիճանային գրադիտների ազդեցության տակ: Այդ գործընթացը առավել ինտենսիվ է ընթանում, երբ ծակոտիների (ճեղքերի) կառուցվածքը և


ստրուկտուրան նպաստավոր պայմաններ են ստեղծում խոնավ գոլորշիների համեմատաբար ազատ ներթափանցմանը երկրի մակերևույթից աերացիոն գոնայի ապարների մեջ (կարատի, ապարների ճեղքավորման և այլ մակերևութային դրասորումներ): Փորձնական արդյունքների գնահատումը, որոնք կատարվում են տարբեր բնական պայմաններ ունեցող շրջաններում, ցուց են տվել, որ գրունտային ջրերի կոնդենսացիոն սննան մեծությունը փոփոխվում է 5.0-ից մինչև 80մմ/տարի (0.15-2.5/վշկմ²) սահմաններում:

Գրունտային ջրերի սննումը մերքև տեղադրված ջրաւար հորիզոններից վերընթաց ֆիլտրացիայի հաշվին հնարավոր է այն տեղամասերում, որտեղ ճնշումային ջրերի պիեզոնմետրիկ մակերևույթը բարձր է կանգնում գրունտային ջրաւար հորիզոնի մակարդակից: Տեղամասի սահմաններում (F) ճնշումների տարրերության հաստատուն մեծությունների (ΔH) դեպքում վերընթաց ֆիլտրացիայի բնույթը և մեծությունը դեպի գրունտային ջրաւար հորիզոն հիմնականում կախված է բաժանարար բույլ ջրաթափանց շերտի ֆիլտրացիայի գործակցից (k_0) և հաստությունից (m_0) (նկ. 32):

Վերընթաց ֆիլտրացիայի մոտավոր մեծությունը (Q մ³/օր) կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$Q = k_0 \frac{\Delta H}{m_0} : \quad (90')$$

Առավել բարենպաստ պայմաններ են ստեղծվում ճնշումային ջրերից գրունտային ջրերի սննան, այն տեղամասերում, որտեղ գործում է բաց հիդրավլիկական կապը նշված ջրաւար հորիզոնների միջև: Այդպիսի տեղամասերը կապված են ջրամերժ շերտի ապարների ֆացիալ փոփոխության գոնաների, խորքային էրոզիոն ողողվածքների, տեկսոնական խախտառումների գոնաների և այլնի հետ և պայմանականորեն կոչվում են «ջրաերկրաբանական պատուհաններ», որոնց միջոցով իրականացվում է երկու սահմանակից ջրաւար հորիզոնների միջև բաց հիդրավլիկական կապը (նկ. 32):



Նկ. 32 Գրունտային և արտեզյան ջրերի հիդրավլիկական կապի սխեմա

I- գրունտային ջրերի գեղադիրքը ջրամերժի ողղղվածքի գեղամասում, երբ գրունտային ջրերը սնվում են արտեզյան ջրերով, II- նույնը, սակայն գրունտային ջրերի ներհոսքը արտեզյան ավազան, 1- ջրափար ապարներ, 2- ջրամերժ ապարներ

Սակերևութային ջրերի ներծծումը (կլանումը) ձևավորվում է այն տեղամասերում, որտեղ նակերևութային ջրավազաններում (ճահիճ, լիճ, ջրամբար) և ջրհոսքերում (գետ, վտակ, ջրանցք և այլն) ջրի մակարդակը գտնվում է ավելի բարձր հիպսոմետրիկ նիշերի վրա, քան ստորերկրյա առաջին ջրատար հորիզոնի ջրերի մակարդակն է:

Այդպիսի պայմաններն առավել բնորոշ են միջգետային տարածության կենտրոնական բարձր մասերի, նախալեռնային հարթավայրերի, լեռնային ռելիեֆի բարձրացված տեղամասերի, կարստերի տարածման շրջանների համար և այլն: Ջրի մակարդակների տարբերությունը պայմանավորում է ճնշման գրադիենտի առկայությունը՝ հնարավորություն ստեղծելով ջրավազանների հատակով վարդնթաց ֆիլտրացիա դեպի գրունտային ջրատար հորիզոն:

Գրունտային ջրերի արհեստական սնումը: Կապված տնտեսության գործունեության ինտենսիվ զարգացման հետ՝ տեղի է ունենում բնական պայմաններում գրունտային ջրերի սնման տարածքների անընդհատ նվազում: Խոսքան հողերի վարը, անտառների հատումը, գյուղատնտեսական մելիորացիան, ջրատեխնիկական կառույցները և

մարդու տնտեսական գործունեության այլ ձևերը ընդարձակ տարածքների վրա բերում են գրունտային ջրերի բնական սննան այս կամ այն փոփոխությունների: Գրունտային ջրերի սննան պայմանների վրա հատկապես ուժեղ ազդեցություն են գործում տնտեսական գործունեության այն ձևերը, որոնց հետ կապված են ջրային ռեժիմի կտրուկ փոփոխությունները և երկրի մակերևույթի խոնավացնան ինտենսիվությունը (ռոռոգում, արտօնավայրերի ջրարքիացում, արհեստական լճակենրի և ջրամբարների ստեղծում և այլն): Ընդհանրապես կարելի է ասել, որ երկրագնդի վրա՝ տնտեսապես զարգացած երկրներում, ներկա ժամանակներում, գործնականում բացակայում են այս կամ այն չափով խոշոր ռեգիոններ, որոնցում պահպանված լինեն գրունտային ջրերի սննան ձևավորման բացարձակապես բնական (չսահստված) պայմաններ: Դիտարկելով գրունտային ջրերի սննան ձևավորման բնական պայմանների տարբեր ձևերը և դրանց փոփոխությունների աստիճանը՝ ավելի ճիշտ կլինի դրանք անվանել բնական-անտրոպոգենային պայմաններ, այսինքն՝ բնական պայմաններ, որոնք այս կամ այն չափով փոփոխվել են անտրոպոգեն ներգործություններով:

Ընդ որում, որպես գրունտային ջրերի իրական *արհեստական սևում պետք* է դիտարկել այն սնումը, որը ձևավորվում է ինժեներատքնական միջոցառումների հետ կապված, որոնց անմիջական նպատակը գրունտային ջրերի պաշարի ավելացումն է: Այդ տիպի իմնական միջոցառումներ են՝ ինֆիլտրացիոն ավագանների, կլանող հորատանցքերի և այլնի ստեղծումը:


Գրունտային ջրերի բեռնաբախումը (դրենացում) իրականացվում է աղբյուրների (բնադրյուրների), գետահուններում կամ ջրավագանների հատակներում ֆիլտրացման ձևով, եթե ինդրավիկական կապ կա գրունտային և մակերևութային ջրերի միջև, գոլորշիացման, ինչպես նաևնեկ ջրատար հորիզոնից մեկ այլ ջրատար հորիզոն ներհոսման արհեստական և ճանապարհով:

Սղբյուր (ակունք) կոչվում է ստորերկյա ջրերի (այդ թվում գրունտային) բնական ելքը երկրի մակերևույթը: Աղբյուր առաջացումը՝ որպես գրունտային ջրերի բեռնաբախման ձև, գերազանցապես որոշվում է երկու պառճառով՝ ռելիեֆի երողին կտրտվածությամբ, որը պայմանավորում է գրունտային ջրատար հորիզոնի բացումը և ջրատար ապարների ֆիլտրացիոն անհամասեռությամբ, որը պայմանավորում է կտրվածքի

անհամասեռ ջրակալումով, բարձր ջրաթափանցելի տեղամասերի, ինտենսիվ ճեղքավորված և կարստավորված գոնաների, թույլ ջրաթափանց ծածկոցների առկայությամբ և այլն:

Որպես կանոն, խևական աղբյուրներ են կոչվում ստորերկրյա ջրերի կենտրոնացված միայնակ ելքերը, սակայն այդպիսի բեռնաթափում տեղի է ունենում նաև փոքրածախս ապակենտրոնացված՝ զծային կամ շերտային ելքերի տեսքով, որոնք ունեն որոշակի երկարություն (տարածականություն) խմբային ելքեր (մի շարք իրար մոտիկ տեղակայված աղբյուրներ) և այլն:

Հստ բնույթի և երկրի մակերևույթ խևական գրունտային ջրերի ելքերի՝ աղբյուրները ստորաբաժանվում են՝ կոնտակտային, էրոզիոն, էկրանացված (ծածկոցային), սուբֆլուվիալային, սուբակվալային (ստորջրյա) (նկ. 33):



Նկ. 33 Գրունտային ջրերի բնական ելքերի (աղբյուրների) ձևավորման հիմնական միտեմաները

ա- կոնտակտային, բ-էկրանային, գ-էկրանային, դ-սուբֆլուվիալային, 1- ջրաթափանց (ջրադար) ապարներ, 2- թույլ ջրաթափանց ապարներ, 3- փոփոխական առաջացումներ, 4- ջրունդային ջրերի մակարդակը, 5- աղբյուր, 6- գրունդային ջրերի շարժման ուղղությունը, 7- գրունդային ջրերի բեռնաթափումը գոլորշիացումով

Գրունտային ջրերի կոնտակտային ելքերը (աղբյուրները) առաջանում են այն դեպքում, երբ էրոզիոն խզվածքները բացում են ջրատար (գրունտային հորիզոննի) ապարների կոնտակտը ներքև տեղադրված թույլ ջրաթափանց ապարների հետ:

Զրատար և թույլ ջրաբափանց ապարների շերտադարսությունը է-րոգիոն խզվածքներով բացման դեպքում կոնտակտային բեռնաթափումը կարող է ի հայտ գալ ստորերկրյա ջրերի ելքերի հարկային դասավորության ձևով՝ տեղադրված մի քանի ջրատար հորիզոնների և ջրամերժ ապարների կոնտակտներում։ Կոնտակտային աղբյուրները, ըստ ելքի պայմանների, միշտ վարընթաց են։ Որպես կանոն, դրանք տալիս են հուսալի տեղեկատվություն ջրատար հորիզոնի տարածման սահմանների, դրա ջրատարության, ստորերկրյա ջրերի հանքայնացման և ջերմաստիճանի մասին և այլն (Ակ. 33ա):

Երրորդային (ավելի ճիշդ իջուրային, դեպքեսիոն) աղբյուրները առաջանում են, եթե էրոգիոն խզվածքները բացում են գրունտային ջրերի մակերևույթը՝ չկտրելով մինչև ջրամերժի վրա նստած ամբողջ ջրատար հորիզոնը։ Նմանատիպ ելքերի ձևավորումը բնորոշ է գետերի և լճերի ցածրադիր դարավանդների, ճահճակալած իջեցումների համար, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների ոչ խորը տեղադրված տեղամասերում փոքր էրոգիոն խրվածքների (ձորակ, հեղեղատ և այլն) համար (Ակ. 33բ)։ Այս տիպի աղբյուրները մեծ մասամբ ունեն սեղոնային բնույթ, քանի որ գրունտային ջրերի մակարդակի ցածր տեղադրիքի դեպքում փոքր (ոչ մեծ) էրոգիոն խրվածքները չեն հասնում ջրատար հորիզոնի մակերևույթին։ Ընդհանուր առմամբ գրունտային ջրերի իջութային ելքերը դրենացմում են ջրատար հորիզոնի վերին մասը, իսկ հիմնական բեռնաթափումը կատարվում է հոսքի շարժման ուղղությամբ առավել խորը էրոգիոն խզվածքներում։

Գրունտային ջրերի ծածկոցային ելքերը (*աղբյուրները*) ձևավորվում են այնպիսի պայմաններում, եթե գրունտային ջրերի հոսքը (հոսքի շարժման ուղղությամբ) հասնում է թույլ ջրաբափանց ապարների տարածման սահմաններին (Էկրանին)։ Բեռնաթափման նման պայմանները բնորոշ են սողանքային լանջերին, ինչպես նաև ջրատար ապարների ֆացիալ էկրանացված տեղամասերին (Ակ. 33գ)։

Թույլ ջրաբափանց էկրանի առկայությունը բերում է գրունտային ջրերի մակարդակի տեղական բարձրացմանը և առավել բարձր նիշերի վրա որոշակի ձևով «վերընթաց» (դիմիարված) գրունտային ջրերի բեռնաթափման ձևավորմանը։

Սուրֆլուսվիլիալային։ Ա. Մ. Օվչիննիկովը անվանում է գրունտային ջրերի այնպիսի ելքերին, որոնք ծածկված են լանջային փուխր

Աստվածքներով, և առաջանում են մեծապես կոնտակտային ձևի բեռնարափման դեպքում (նկ. 33դ): Լանջային փոխը առաջացումների առկայությունը բերում է նրան, որ ջրատար և ջրամերժ ապարների կոնտակտներում բեռնարափմով գրունտային ջրերը չեն առաջացնում առանձին ելքեր (աղբյուր), այլ ֆիլտրացվում են փոխը առաջացումների մեջ, առավել ցածր նիշերում բեռնարափմով աղբյուրների կամ գոլորշիացման և տրանսպիրացիայի ձևով:

Սուրբակվալային կոչվում են ստորերկրյա ջրերի (խմբային ելքեր, շերտային բեռնարափում և այլն) ելքերը, որոնք ձևավորվում են մակերևութային ջրերի մակարդակներից ներքև գետահուներում կամ ջրավազանների հատակում:

Աղբյուրների ծախսը (լ/վ, մ³/վ և այլն), կախված ջրապարունակ ապարների կազմից և ջրաբափանցելիությունից, ինչպես նաև ջրատար հորիզոնի բացման պայմանների բնույթից, տատանվում են մեծ սահմաններում (տես. գլ. XV 15.5):

Գոլորշիացումը հանդիսանում է գրունտային ջրերի բեռնարափման հիմնական ձևերից մեկը այն տեղամասերում, որտեղ դրանք տեղադրված են ոչ խորը:

Գրունտային ջրերի բեռնարափումը ներքև տեղադրված հորիզոններ հնարավոր է այն տեղամասերում, որտեղ գրունտային ջրատար հորիզոնի ջրերի մակերևույթը տեղադրված է ավելի բարձր հիպսոմետրիկ նիշերի վրա, քան առավել խորը տեղադրված ստորերկրյա ջրերի պիեզոմետրիկ մակարդակը: Գրունտային ջրերի միջշերտային վարքներաց ֆիլտրացիայի ձևավորման պայմանները, դրանց մեծության այլ պարամետրի բաշխումը համանման է վերը դիտարկվածին (տես նկ. 32 հակառակ նշանով):


Գրունտային ջրերի *արհեստական բեռնարափումը* ձևավորվում է այն տեղամասերում, որտեղ գրունտային ջրատար հորիզոնի մակարդակը բացվում է երկրի մակերևույթին ստեղծած լեռնային փորբածքների կամ ցամկացած տեխնածին միջոցներով (հանքափող, բովանք, փոտրակ և այլն): Բեռնարափման յուրահատուկ տեղամասեր են հանդիսանում դրենաժային (ցամաքուրդային) կառույցները, որոնք ստեղծվում են հատուկ գրունտային ջրերի մակարդակների իշեցման համար և ջրհան (ջրառու) կառույցները, որոնց օգնությամբ իրականացվում է գրունտային ջրերի շահագործումը (ջրհանումը):

11.3.4. ԳՐՈՒՆՏԱՎՅԻՆ ԶՐԵՐԻ ԿԱՊԸ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՅԻՆ ԶՐԵՐԻ ՀԵՏ

Գրունտային ջրերը սովորաբար հիդրավլիկական կապի մեջ են մակերևութային հոսքերի և ջրավազանների հետ (գետեր, լճեր, ջրամբարներ, արհեստական լճակներ և այլն): Գետահովիտները կարող են լցված լինել այսովհայ կամ որոշ շրջաններում ֆլյուվիոգլացիալ նստվածքներով՝ ներկայացված ավագներով և ավելի խոչոր ավազագլացիալ առաջանակությամբ: Այդ նստվածքներում հաճախ պարունակվում են առաս և բարձր որակի գրունտային ջրեր:

Գրունտային և գետային ջրերի միջև կապը, կախված ուղիեֆային, երկրաբանաձևաբանական և կլիմայական պայմաններից, կարող են արտահայտվել տարբեր ձևերով, որոնցից հիմնականներն են՝ 1) գետը դրենացնում է գրունտային ջրերը, 2) գետը սնվում է գրունտային ջրերից, 3) գետը մնում ափով սնում է գրունտային ջրերը, իսկ մյուս ափով դրենացնում այն (նկ. 34):

Խորը խրված (մխրճված) գետահովիտները ծառայում են գրունտային ջրերի ընդունիչներ՝ դրենացնելով մերձակա և կլիմա (նկ. 34ա) տարածքները: Ոչ մեծ խրվածների դեպքում, որը բնորոշ է գետերի ստորին հոսանքներին, հատկապես գետաբերանային մասերին, գետերը սնում են գրունտային ջրերը (նկ. 34բ): Խոնավ և մեղմ կլիմա ունեցող շրջաններում, գետահովիտները, որպես կանոն, դրենացնում են գրունտային ջրերը, այսինքն՝ գրունտային ջրերի մակերևույթը (դեպքեսիոն կորը) ունի թեքություն դեպի գետը և գետային ջրերը սնվում են գրունտային ջրերից:



Նկ. 34 Գրունտային և մակերևութային ջրերի կապի սխեմա
Ա-գիրը դրենացնում է գրունտային ջրերը, Բ-գիրը սնում է գրունտային ջրերը,
Գ-գիրը սնում և դրենացնում է գրունտային ջրերը

Չորային կլիմա ունեցող շրջաններում հաճախ գրունտային ջրերի մակերևույթը ցածր է գետի ջրի մակարդակից: Այստեղ գետի ջրերը նույնական ծախսվում են գրունտային ջրերի սննան վրա (նկ. 34р):

Բնության մեջ դիտվում են գրունտային և գետային ջրերի փոխկապակցվածության առավել բարդ ձևեր: Օրինակ՝ լեռնային շրջաններում գետահովտի մեջ լանջով գետահուն կարող են մուտք գործել գրունտային ջրերը, միաժամանակ գետի հակառակ ափը սնում են գրունտային ջրերը (նկ. 34գ):

Մակերևութային ջրերի հետ կապված լինելու հետևանքով մերձափնյա զբնաներում գրունտային ջրերի մակարդակը տարվա ընթացքում ենթարկվում է փոփոխության: Օրինակ՝ գետում ջրի մակարդակի բարձր տեղադիրքի ժամանակ, որը տեղի է ունենում գետի հորդացման կամ վարարումների շրջանում, մերձակա տարածքներում տեղի է ունենում գրունտային ջրերի մակարդակների բարձրացում: Դիմիարման (դեպքեսիտն) կորը տարածվում է գետահունից մի քանի հարյուր մետր, երբեմն՝ կիլոմետր հեռավորությունների վրա: Հորդացման անկումից հետո ժամանակի ընթացքում գրունտային ջրի մակարդակը վերականգնվում է և ընդունում սկզբնական դիրքը (մինչև հորդացումը):

Գետերի վրա ջրամբարների կառուցման ժամանակ գրունտային ջրերի դիմիարվածությունը կրում է համեմատաբար կայուն բնույթ: Ընդ որում, ջրամբարի լցման առաջին շրջանի ժամանակ և լրիվ լցումից հետո որոշ ժամանակ անց տեղի է ունենում ջրի շարժում ջրամբարի դեպի ափերը և գրունտային ջրերի մակարդակը մշտապես փոխում է իր տեղադիրքը: Գրունտային ջրերի դեպքեսիտն մակերևույթի նոր տեղադիրքը ձևավորումը մեծ գետերի դիմիարման զբնաներում ընթանում է մի քանի ամիս, իսկ երբեմն այն ճգփում է 2-3 տարի:

Առանձին տեղամասերում գրունտային ջրերի դիմիարման դեպում դրանց մակարդակը կարող է գտնվել ոչ մեծ խորությունների վրա և նոյնիսկ որոշ տեղերում առաջացնել մակերևույթի ճահճակալում: Եթե այն տեղի է ունենում խոշոր բնակավայրերի՝ քաղաքների կամ արդյունաբերական ձեռնարկությունների տարածքներում, հարկ է լինում գրունտային ջրերի մակարդակը իջեցնել արհեստական ճանապարհով:


Շահիճ է կոչվում գերխոնակ կամ ջրի համատարած շերտով ծածկված (տարվա զգալի ժամանակահատվածում) այն տեղամասը, որտեղ աճում է յուրատեսակ ճահճային բուսականություն և տեղի են ունենում

տորֆառաջացման գործընթացներ: Ծահիճները տարածված են բոլոր կլիմայական գոտիներում, դրանց առաջացումը պայմանավորված է ֆիզիկաաշխարհագրական (առատ տեղումներ, աննշան գորդշխացում, դժվարեցված հոսք, գոգավոր ռելիեֆ), ջրաերկրաբանական (ստորերկրյա ջրերի բեռնաբափում) և այլ գործոններով:

Երեմն գրունտային ջրերը հիդրավիլիկ կապի մեջ են ճահճային ջրերի հետ: Ճահճային ջրերի հետ կապի մեջ կարող են լինել նաև վերնացրեր:

Կախված ջրային սննման պայմաններից, տեղադիրքից և դրանցում աճող բուսականության տեսակներից՝ բոլոր ճահճները բաժանվում են երեք տիպի՝ բարձրադիր, ցածրադիր և անցումային (նկ. 35) [19]:

Բարձրադիր (օլիգոդրոֆ) ճահճներն ստվորաբար առաջանում են ջրբաժանային տարածքներում (միջգետային սարահարթերում) (նկ. 35ա): Դրանք հիմնականում սնվում են մքնուրոտային տեղումներից, սակայն որոշ բնական պայմաններում կարող են լրացնիչ սնում ստանալ նաև գրունտային ջրերից: Տարվա չոր ժամանակահատվածում ճահճների ջրի մակարդակի իջեցման արդյունքում տեղի են ունենում նաև մերձճահճային տարածքներում գրունտային ջրերի մակարդակի իջեցումներ, որոնք իրենց հերթին առաջ են բերում գրունտային ջրերի կողային արտահոսք:



Նկ. 35 Ճահճների տիպերն ըստ դրանց տեղադրման և սննման պայմանների
Ա-բարձրադիր, Բ-ցածրադիր, Գ-անցումային, 1- ջուր, 2- լոռք, 3- ավագ ջրադար,
4- կավ, 5- գրունտային ջրերի մակարդակը

Բարձրադիր ճահիճներն ունեն ուռուցիկ տեսք: Շահճային ջրերում դրանց միներալային աղերով աղքատ լինելու պատճառով զարգանում է օլիգոտրոֆ բուսականություն, որի տարրապուծնան գործընթացների արդյունքում ձևավորվում են բարձրադիր տորֆեր:

Յածրադիր (էֆիլրոֆ) ճահիճները ձևավորվում են ռելիեֆի ցածրադիր էլեմենտների՝ հովտամասի դարավանդների վրա (նկ. 35թ): Հաճախ առաջանում են լճերի և հնահուների բուսածածկման դեպքում: Ունեն հարթ կամ գոգավոր մակերևույթ: Անմաս տիպերն են խառը, գրունտաճնշումային, գրունտային կամ լանջային (առավել տարածված են խառը և գրունտայինը): Յածրադիր ճահիճները հաճախ խոնավանում են հիմնականում կոչու հանքայնացված ջրերով: Դրանց առաջացումը տեղի է ունենում էֆիլրոֆ և մեզոտրոֆ (եղեգներ, կեշի, լաստենի, ուռենի, մամուռներ և այլն) բուսականության ազդեցությամբ: Տորֆաշերտի հաստությունը սովորաբար կազմում է 0.8-1.5 մ, այն երեսն հասնում է մինչև 10 մ-ի:

Անցումային (մեզոլիլրոֆ) ճահիճները ձևավորվում են այնպիսի պայմաններում, երբ տորֆային հանքավայրի բնականոն զարգացման հետ կապված բարձրանում է տեղանքի մակերևույթը և բարձր է կանգնում ջրարրիացնող գրունտային ջրերի մակերևույթից, միաժամանակ վատանում է դրա միներալային սննումը (նկ. 35գ): Դրանք միջանկյալ տեղ են զբաղեցնում բարձրադիր և ցածրադիր ճահիճների միջև: Այդ ճահիճները սննում են և գրունտային, և մթնոլորտային ջրերով: Շահիճները լայն տարածում ունեն եվրոպական երկրներում, բավական է արձանագրել, որ միայն Քելոռուփայում դրանք զբաղեցնում են 2.5Ն.հա մակերես (1984 թ.) և հիմնականում կենտրոնացված են «քելոռուսական անտառաստաններում» (ուղարկելու համար):

11.3.5. ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԶՈՆԱԼՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես վերը նշվել է, գրունտային ջրերի քանակը, որակը և տեղադրման խորությունը կախված են ոչ միայն որոշակի երկրաբանական գործուներից, այլ նաև ֆիզիկաաշխարհագրական, մասնավորապես կլիմայական պայմաններից:

Հայտնի է, որ երկրագնդի վրա կլիման, հողերը և բուսականությունը բևեռային գոտիներից դեպի մերձարևադարձային գոտի կրում են օրինաշափ փոփոխություններ:

Չոճալական օրինաշափությունները՝ որպես քնական երևոյթ, առաջինը հայտնաբերել է Վ. Վ. Դոկուչաևը 1899 թ.: Նա հիմնավորել է, որ հողերը՝ որպես կլիմայի հողառաջացնոր ապարների, բուսականության, կենդանի օրգանիզմների գործունեությունների համատեղ ազդեցության արդյունք, ունեն տարածման լայնական գոճալականություն: Այդ գաղափարները մեծ ազդեցություն գործեցին նաև գրունտային ջրերի գոճալականության պատկերացումների զարգացման վրա, այն է, գրունտային ջրերի տեղադրման խորության, հանքայնացման և քիմիական կազմի հաջորդական հերթափոխումն՝ կախված կլիմայի լայնական գոճաների, ինչպես նաև ռելիեֆի և երկրաբանական կառուցվածքի հերթափոխումից:

Գրունտային ջրերի գոճալականության ուսմունքը մշակվել են ջրաերկրաբաններ Ի. Վ. Գարնոնվի, Վ. Ս. Իլինի, Գ. Ն. Կամենսկու, Օ. Կ. Լանգեկի և այլոց կողմից: Նրանց հետազոտություններով հաստատվել են գրունտային ջրերի տեղաբաշխման դրոշակի օրինաշափություններ, որոնք նախկին ԽՍՀՄ տարածքի ասիսկան մասում ունեն հյուսիսից հարավ, իսկ Եվրոպական մասում՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ընդհանուր ուղղվածություն:

Տարբեր հեղինակների կողմից առաջադրված գրունտային ջրերի գոճալական սխեմաների վրա կանգ չառնելով նշենք, որ Վ. Ս. Իլինը (1923) նախկին ԽՍՀՄ Եվրոպական մասի համար աճատում էր գոճալական և ոչ գոճալական (ազոնալ) գրունտային ջրեր: Դրանցից առաջինն է Վերագրվում տունդրայի, հյուսիսի բարձր ջրերի, ոչ խորը ձորակների, ձորակահեղեղատային, մերձանձովյան հեղեղատների և մերձկասպիական հեղեղատների զոնաների ջրեր, երկրորդին դասվում է Վերջնային մորենների մարզերի ջրեր, զանգվածային ապարների ճեղքային ջրեր, կարստային, ճահճային ջրեր, ֆլուվիոգլացիալ նատվածքներ և աղուտների ջրեր:

Օ. Կ. Լանգեկն (1947) նախկին ԽՍՀՄ տարածքում առանձնացնում է գոճալական գրունտային ջրերի երեք պրովինցիաներ. հավերժական սաղցույթի պրովինցիա՝ տարեկան միջին բացասական ջերմաստիճանով, ողի բարձր խոնավության պրովինցիա՝ տարեկան միջին դրական

Չերմաստիճանով և ջերմաստիճանի ամպլիտուդայի օրական, սեզոնային և տարեկան ոչ մեծ տատանումներով, ողի բարձր չորության պրովինցիա՝ ջերմաստիճանի ամպլիտուդայի բարձր տատանումներով:

Ի. Գ. Գրոմովը (1948), ըստ քիմիական կազմի, առանձնացնում է՝ 1) հիդրոկարբոնատ-սիլիկահողային 2) հիդրոկարբոնատ-կալցիումային 3) սուլֆատ-քլորիդային 4) ցամաքային արոտացման և 5) լեռնային շրջանների հիդրոկարբոնատ-կալցիումային գրունտային ջրերի գոնաներ: Գ. Ն. Կամենսկին (1948) առանձնացնում է գրունտային ջրերի երկու գոնա՝ տարրալուծման և ցամաքային արոտացման:

Տարրալուծման գոնայի գրունտային ջրերի ձևավորումը տեղի է ունենում հավելուրդային և փոփոխական խոնավության կիմայական գոտիներում: Ոչ բավարար խոնավության գոտում դրանք կարող են առաջանալ երկրաբանա-լիքոլոգիական բավարար պայմաններում՝ ապարների բարձր ջրաթափանցելիություն և գրունտային ջրերի ինտենսիվ դրենացում: Այստեղ ստորերկրյա հոսքը գերազանցում է գոլորշիացմանը և գրունտային ջրերի քիմիական կազմը ձևավորվում է հողի և ապարների տարրալուծման գործընթացների ազդեցության տակ:

Այս գոնայում գրունտային ջրերի հանքայնացումը հյուսիսից հարավ ավելանում է: Հյուսիսում տարածված են հիդրոկարբոնատային ջրերը՝ տվորաբար 300մգ/լ-ը չգերազանցող ընդհանուր հանքայնացումով: Դեպի հարավ տեղակայված են հիդրոկարբոնատ-կալցիումային տիպի և 300-500մգ/լ հանքայնացումով գրունտային ջրերը, ավելի հարավ տեղակայված են բարձր հանքայնացումով սուլֆատային և սուլֆատ-քլորիդային տիպի ու 1000մգ/լ-ից ավելի հանքայնացման գրունտային ջրերը:

Ցամաքային աղուկացման գոնան բնութագրվում է մթնոլորտային տեղումների քիչ քանակությամբ, ինտենսիվ գոլորշիացումով և քնական դրենացման համարյա լրիվ բացակայությամբ: Ցամաքային աղուտացման գոնայի գրունտային ջրերի ձևավորումը տեղի է ունենում ոչ բավարար խոնավության կիմայական գոտում, որտեղ աննշան են մթնոլորտային տեղումները, ինտենսիվ է գոլորշիացումը և համարյա լրիվությամբ բացակայում է քնական դրենացումը: Գրունտային ջրերի ոչ խորը տեղադրման դեպքում դրանց ինտենսիվ գոլորշիացման հետևանքով տեղի է ունենում աղակուտակում երկրի մակերևույթին, հողերում և աէրացիայի գոնայի վերին շերտի ապարներում: Գարնանային ձնիալները

և ամառ-աշնան անձրևները մասամբ լուծում են կուտակված աղերը և աերացիայի ապարների միջոցով տեղափոխում մինչև գրունտային ջրերը բարձրացնելով վերջիններիս հանքայնացումը: Գրունտային ջրերի հանքայնացման մեծացմանը նպաստում է նաև բույսերի տրանսպիրացիոն գործունեությունը: Գրունտային ջրերը, ըստ հանքայնացման աստիճանի, փոփոխվում են թույլ աղայնությունից մինչև աղայինի և երթեմն՝ աղաջրերի: Դրանց քիմիական կազմը սովորաբար քլորիդային և քլորիդային է: Առանձին տեղամասերում, որտեղ կան ինչիլտրացիայի և ստորերկրյա հոսքի բարենպաստ պայմաններ, հանդիպում են քաղցրահամ հիդրոկարբոնատ-կալցիումային ջրեր՝ ուսպնյական տեղադրումներով:

Գրունտային ջրերը բացի կլիմայական գոնալականությունից, ենթարկվում են ջրադինամիկ և սննման գոնալականություններին:

Ջրադինամիկ գոնալականությունը կամ ստորերկրյա արտահոսքի գոնալականությունը, ըստ Դ. Ս. Կացի [17], ի հայտ է գալիս գրունտային ջրերի տեղադրման խորության աստիճանական բարձրացումով և իջեցումով՝ տարածքի բնական դրենացման վատացմանը գուգընթաց: Բնական դրենացման ցուցանիշը է հանդիսանում ուսումնասիրվող շրջանից գրունտային ջրերի պոտենցիալ արտահոսքը՝ արտահայտված ջրի շերտի հաստությամբ մեկ հեկտարի վրա (մմ/հա) կամ ջրի ծավալով ($\text{մ}^3/\text{հա}$), որը արտահոսում է մեկ տարում կամ ավելի կարճ ժամանակահատվածում: Ինչքան մեծ է ստորերկրյա հոսքը, այնքան լավ է տարածքի բնական դրենացումը: Բնական դրենացումը ըստ Դարսի, որոշվում է ստորերկրյա արտահոսքի ծախսի, հաշվարկումով (տես զլ. IX) կամ որոշվում է այլ մեթոդներով:

Կախված ստորերկրյա արտահոսքից՝ Դ. Ս. Կացը առանձնացնում է բնական դրենացման հինգ գոնա, որոնց անվանում են ջրադինամիկ [16].

1. ինտենսիվ դրենացվող – 500-700 մմ/տարի 1հա-ից
2. դրենացվող – 300-500 մմ/տարի
3. թույլ դրենացվող – 150-300 մմ/տարի
4. չափազանց թույլ դրենացվող – 50-150 մմ/տարի
5. գործնականում անհոսք - փոքր 50 մմ/տարի:

Չորային մարզերում ջրադինամիկ գոնալականությունը առավել կտրուկ ի հայտ է գալիս գրունտային ջրերի քիմիական կազմի մեջ:

Գրունտային ջրերի հանքայնացումը առաջինից հիմգերորդ զոնա մեծանում է կապված գրունտային ջրերի ստորերկրյա արտահոսքի և դրանց գոլորշիացման ու տրանսպիրացիայի ծախսի հարաբերակցության վոփոխությունից:

Առաջին երկու զոնաներում ստորերկրյա արտահոսքի գերակայությունը (այստեղ գրունտային ջրերը կամ տեղադրված են խորը, կամ շարժվում են նշանակալի արագությամբ) խոշընդոտում է ջրի գոլորշիացումը և աղերի կուտակումը: Աղերը, որոնք տարրալուծվում են աերացիայի զոնայից և ջրատար ապարներից տարվում են գրունտային ջրերի հոսքով և կուտակվում են այն զոնաներում, որտեղ դանդաղում է գրունտային ջրերի շարժումը: Դրա համար էլ դրանց մակարդակը մոտենում է երկրի մակերևույթին և գոլորշիացումը սկսում է գերակայել արտահոսքին: Այդպիսի բոլոյ դրենացվող զոնաներում տեղի է ունենում գրունտային ջրերի շոգեհարում և դրանց հանքայնացման բարձրացում: Դրանք հողագրունտներում և գրունտային ջրերում աղակալման զոնաներ են: Առավել բարձր հանքայնացմանք են բնութագրվում անպատային գրունտային ջրերը:

Զոնաների հաջորդական հերթափոխումը ցայտուն արտահայտվում է նախալեռնային մարզերում, որտեղ լեռնային կառուցվածքներից դեպի ցածրադիր հարթավայրեր հեռացմանը գուգընթաց դիտվում է դրենացման մշտապես վատացում:

Հարկ է նշել, որ գրունտային ջրերի ջրադինամիկ զոնաները, որոնք բնորոշվում են տարածքի ռելիեֆով և երկրաբանական կառուցվածքով, սերտորեն կապված են այդ տարածքի երկրաստրուկտորային պայմանների հետ: Ինտենսիվ դրենացվող զոնաները յուրահատուկ են լեռնային և նախալեռնային մարզերին, ինչպես նաև պլատֆորմաների սահմաններում՝ բարձրացումներին: Ոչ ինտենսիվ բնական դրենացման զոնաներին բնորոշ է պլատֆորմային հարթավայրերի իջվածքներին և կորացումներին և նախալեռնային ու միջլեռնային կենտրոնական մասերի իջվածքներին և կորացումներին:

Գրունտային ջրերի սևման զոնալականությունը առավել ցայտուն ի հայտ է գալիս չորային շրջանների բնական ցածր դրենացվող զոնաներում: Այն հանդես է գալիս գրունտային ջրերի հանքայնացման աստիճանական մեծացմանք և սննման աղբյուրներից՝ գետերից, ջրանցքներից, ռելիեֆային իջեցումների ջրածածկումից և այլնից հեռանալուն

զուգընթաց: Դրա համար էլ չորային շրջաններում ջրամատակարարման համար ջրհորերը և հորատանցքերը տեղակայում են գետերի և ջրանցքերի երկայնքով, որը երաշխավորում է ջրի անհրաժեշտ որակը և ջրառման քանակը (ծախսը):

Կլիմայական և ջրադինամիկ գոնալականություններին չենթարկվող *ազունալ* գրունտային ջրերին, ըստ Դ. Մ. Կացի [16], վերագրվում են հետևյալ շրջանների գրունտային ջրերը՝ ժամանակակից կամ հին ծովային աղակալման ապարների, մինչորորդական աղաբեր ապարների հողմնահարման, աղային ճնշումային սննան գրունտային ջրերի, ցեխային հրաբուխների, աղային գմբեթների ջրեր: Այդ շրջաններում գրունտային ջրերը, անկախ կլիմայական պայմաններից և տարածքների բնական դրենացումից, ունեն բարձր հանքայնացում, իսկ հողագրունտները՝ բարձր բնական աղակալում:

Ներկայում նախկին ԽՍՀՄ տարածքի, Եվրոպայի և այլ աշխարհամասերի համար կազմված են գրունտային ջրերի գոնալականության սխեմատիկ քարտեզներ, որոնք զգալի ճշտությամբ վերարտադրում են դրանց տեղաբաշխման հիմնական օրինաչափությունները:

Սակայն այդ սխեմաների կազմման սկզբունքները մինչև ներկա ժամանակներս մշակված են դեռևս ոչ բավարար, և գոնալական սխեմաները լրիվ պատկերացում չեն տալիս գրունտային ջրերի տեղադրման, ձևավորման պայմանների և դրանց տիպերի առանձնահատկությունների մասին: Ուստի անհրաժեշտություն են գրունտային ջրերի բնական գոնալականության ձևավորման հիմնահարցերի հետագա մշակումները, գոնայական սխեմաների կազմման սկզբունքների հիմնավորումները, գրունտային ջրերի սննան և բեռնաբախման ձևերի և մեծությունների գոնալական բնուրագրերը, դրանց ռեժիմի և այլ գործոնների առանձնահատկությունները առավել մանրակրկիտ ուսումնասիրման և դրանք տնտեսական նպատակով օգտագործման և պահպանման համար:

11.3.6. ԳՐՈՒՆՏԱՎՅԻՆ ՋՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐՆ ԸՆՏԱԿԱՆ ԴԱՏԱԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹՅԱԳՐԵՐԸ

Ըստ տեղադրման պայմանների առանձնացնում են գրունտային ջրերի հետևյալ տիպերը՝ գետահովտային, սաղցաղաշտային

նստվածքների, տափաստանային, կիսաանապատային և անապատային, լեռնային մարզերի, միջլեռնային իջվածքների և նախալեռնային թեր հարթավայրերի, ծովափնյա ավագների:

11.3.6.1. Գետահովիրների գրումային ջրեր

Գետահովիտների ալյուվիալ նստվածքներում տեղադրված գրումային ջրերն ունեն ջրաերկրաբանական նշանակություն, քանի որ մասնակցում են գետահոսքի ձևափորմանը, ինչպես նաև լայնորեն օգտագործվում են բնակավայրերի ջրանատակարարման համար:

Գետահովիտները սովորաբար ներկայացված են ավազային-կավային ալյուվիալ (գետաբերուկային) նստվածքներով, որոնք առաջանում են առաջնային ապարների քայլայված փուլիր նյութերի գետային հոսանքներով վերանստեցման արդյունքում: Գետի զարգացման նորմալ ցիկլի պայմանի դեպքում, դրա հոսքի առանձին տեղամասեր կունենան հոսքի տարրեր ուժիմներ, որոնց հետևանքով նյութերի նստեցումը կլինի տարրեր: Ընդ որում, հարթավայրային պայմաններում հովտի ալյուվիալային կառուցվածքը էապես տարրերվում է լեռնային ջրանների հովտի կառուցվածքից:

Հարթավայրային գետահովիտները, որպես կանոն, բնութագրվում են ալյուվիալային նստվածքների երկշերտ կառուցվածքով: Ներքևի մասում, որը կազմում է կտրվածքի մեծ մասը, ներկայացված է հունային ֆացիայի ալյուվիալով, որի հաստությունը սովորաբար չի գերազանցում 20 մ-ից: Այն ներկայացված է ավազներով՝ կոպիկների և գլաքարերի հետ միասին, և հիմքում պարունակում է ենթաշերտ՝ հիմքային հորիզոն, որը հագեցված է կոպճա-գլաքարային նյութերով: Ալյուվիալ նստվածքների վերին մասում տեղակայված են նրբավազային, կավավազային և ավազակավային տարատեսակներ՝ ողողահունային (հովտահատակային) ֆացիայի ալյուվիալով: Ողողահունային ալյուվիալ հաստությունը սովորաբար չի գերազանցում 7 մ-ը: Լեռնային գետերի ալյուվիալ կոպտահատիկ է և բնութագրվում է միաշերտ կառուցվածքով: Դրա հաստությունը որոշ տեղերում հասնում է 100 մ և ավելի:

Ալյուվիալ նստվածքները, որոնք լցված են հին և ժամանակակից գետահովիտներում, սովորաբար պարունակում են ջրառատ գրունտային ջրեր: Հովտի հունային մասերում և չոր հովիտների հեղեղահունե-

րում գրունտային ջրերն առաջացնում են բնորոշ հունատակ հոսքեր: Դարավանդային առաջացումներում և հովտի լանջերում գրունտային ջրերը համեմատաբար սակավ են:

Առավել հզոր հունատակ գրունտային ջրեր տեղակայված են խոշոր գետերի հնահովիտներում: Այդպիսի ստորերկրյա հոսքերի ծախսը հաճախ մեկ օրում հասնում է տասնյակ հազար խորանարդ մետրի: Խոշոր գետահովիտներում հզոր այլովիալ նստվածքների հաստվածքով հաճախ անջատվում են երկու այլովիալային հոսքեր՝ վերևի ոչ ճնշումային և ներքևի ճնշումային ջրերով: Ներքևի հունատակ հոսքն ունի որոշ ջրադինամիկ ճնշում՝ պայմանավորված դրանով, որ նրան ծածկող ժամանակակից նստվածքներն ունեն նշանակալից փոքր ջրաթափանցելիություն:

Այլովիալային նստվածքներում գրունտային ջրերը տեղադրված են տարբեր խորությունների վրա: Գրունտային ջրերի մակարդակը գետերի ողողադաշտերում առվորաքար տեղադրված է երկրի մակերևույթին մոտ (ոչ մեծ խորությունների վրա), նույնիսկ ողողադաշտային դարավանդների որոշ տեղերից այն դրւում է զայիս երկրի մակերևույթ՝ առաջացնելով ոչ մեծ լճեր և ճահիճներ, իսկ վերողողադաշտային դարավանդների սահմաններում գրունտային ջրերի տեղադրման խորությունը մեծանում է՝ հասնելով մինչև 20 մ-ի:

Այլովիալ նստվածքներում գրունտային ջրերի սննան ծավալը և բնույթը տարբեր են ոչ միայն տարբեր կլիմայական գոնաներում, այլև փոփոխվում են սեզոնից սեզոն:

Հավելուրդային և փոփոխական խոնավության մարզերում գետաբերուկային նստվածքների գրունտային ջրերի սննան աղբյուրներ կարող են լինել մքննողրտային տեղումները (կարծր և հեղուկ), ջրբաժանային տարածքների ստորերկրյա ջրատար հորիզոնները, արտեզյան, ինչպես նաև գետերի ջրերը հեղեղումների ժամանակ: Գետահովիտային գրունտային ջրերը հավելուրդային և փոփոխական խոնավության մարզերում գետային հոսքի վրա բոլորում են էական ազդեցություն: Մեծենի (գետաջրի ամենացածր մակարդակը) շրջանում հիմնականում ձմռանը, գրունտային ջրերը մակերևութային հոսքերի սննան միակ աղբյուրն են:

Անբավարար խոնավության կլիմայական գոտու սահմաններում այլովիալ նստվածքներով գրունտային ջրերի սննան աղբյուրներ են գարնանային ձնիալի ջրերը, որոնք ջրահագեցնում են միջգետային

տարածքը և ներհոսում այլովիալ հաստվածք, գետաջրերը, որոնք գետահունով և ափերով ֆիլտրացվում են ջրատար հորիզոն, և օդի ջրային գոլորշիների կոնդենսացման ճանապարհով առաջացող ջրերը:

Այլովիալ նատվածքներում գրունտային ջրերի քիմիական կազմը մոտ է մակերևութային ջրերի քիմիական կազմին: Սովորաբար դրանք հիդրոկարբոնատ-կալցիումային տիպի քաղցրահամ ջրեր են, մինչև 1գ/լ համբայնացումով: Այնտեղ, որտեղ գրունտային ջրերը ստանում են լրացուցիչ սնում խորը ճնշումային ջրերից կամ շրջանառվում են հեշտ լուծելի աղերով հարուստ ապարների մեջ, դրանց հանքայնացումը կարող է բարձրանալ, իսկ քիմիական կազմը՝ փոփոխվել:

11.3.6.2. Սառցադաշտային նատվածքների գրունտային ջրեր

Սառցադաշտային նատվածքները լայնորեն տարածված են Ո-ուսատանի եվլոպական մասի հյուսիսային, արևմտյան և հյուսիսարևմտյան շրջաններում, Արևմտյան Եվլոպայում և Հյուսիսային Ամերիկայում: Դրանք ներկայացված են իսկական սառցադաշտային առաջացումներով՝ մորենային ավազակավերով, և՝ կավերով, և՝ ֆյուզիոնալացիալ (ջրասառցադաշտային) նատվածքներով՝ հիմնականում ավազներից կազմված:


Մորենային ավազակավերը և կավերը գործնականում պատկանում են ջրամերժ ապարներին, սակայն դրանք սովորաբար իրենց մեջ ներառում են մեծ քանակությամբ ավազների և կավավազների ոսպընյակներ (երկրաբանական մարմին, որը բոլոր ուղղություններով սեպավորվում է) և շերտիկներ, որոնք շատ հաճախ լինում են ջրատար: Մորենային ավազակավերի և կավերի առանձին տարբերահասակ ստվարաշերտը (հաստվածքը) հաճախ բաժանված է ֆյուզիոնալացիալ նատվածքներով, որոնք տարածված են բավականին նշանակալից մակերեսների վրա: Երբեմն այդպիսի նատվածքները տեղադրված են մորենային ավազակավերի և կավերի տակ:

Վերջիններիս համապատասխան առանձնացնում են վերմորենային, միջնորենային և ենթամորենային ջրատար հորիզոններ (նկ. 36): Բնութագրվում են ձևավորման (սնման, հոսքի) ընդհանուր պայմաններով, սակայն հիդրավիկական տեսակետից դրանք տարբեր են. առա-

զիններն ունեն ազատ, ոչ ճնշումային մակերևույթ, իսկ երկրորդը և երրորդը՝ ճնշումային:

Մորենային ավազակավերի և կավերի, ինչպես նաև միջմորենային և ենթամորենային ֆլյուվիոգլացիալ նստվածքների միջև տեղադրված ավազային ոսպնյակների և շերտիկների ջրառատությունը խիստ փոփոխական է, քանի որ նշված նստվածքների լիբրոգլազան կազմը ըստ տարածման շատ հաճախ փոխվում է անջրաբափանց ավազակավերով և կավերով: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ մորենային նստվածքների տարածման մարգերում գրունտային ջրերի տեղադրման խորությունները շատ տարբեր են: Այդ են վկայում իրարից 30-40 մ հեռավորության վրա տեղադրված հորատանցքներում ջրի մակարդակների չափումները. մեկում այն եղել է մի քանի մետր, իսկ մյուսում մի քանի տասնյակ մետր խորությունների վրա [8]:

Ֆլյուվիոգլացիալ նստվածքներում գրունտային ջրերի առավել շատ պաշարներ կենտրոնացված են օգովներում (ձգված ավազային թմբեր) և հատկապես ավազային հզոր ստվարաշերտերում (տարածված են մորենային նստվածքների կողային մասերում և առաջացնում են ընդարձակ «ավազային ստվարաշերտ դաշտեր»), ինչպես նաև հոսքի սառցահովտներում, որոնք լցված են ավազագլաքարային առաջցումներով (նկ. 36):



Նկ. 36 Սառցահովտային նստվածքներում ջրատար հորիզոնների տեղադրման պիեմա

1- վերջավոր մորեններ, 2- հալբակային մորեններ, 3- զանդորային ախեմա (սրբաշերպային) ավազներ, 4- միջնորենային ավազներ, 5- ավազային ապարներ կավերի ենթաշերպերով, տեղադրված մորենային նստվածքների միջև, 6- սրբորերկյա ջրերի շարժման ուղղությունը, 7- աղբյուր

Սառցադաշտային նստվածքների գրունտային ջրերը սովորաբար քաղցրահամ են: Դրանք օգտագործվում են բնակավայրերի, հաճախ մեծ քաղաքների ջրամատակարարման համար:

Մերձմուկովյան ք. Միտիշչի շրջանի գրունտային ջրերը, որոնք տեղակայված են ֆլյուվիոզացիալ ավազային նստվածքներում, երկար ժամանակ օգտագործվել են Մուսկվայի ջրամատակարարման համար, իսկ ներկայումս դրանք օգտագործվում են տեղական բնակավայրերի և ձեռնարկությունների ջրամատակարարման համար:

11.3.6.3. Տափասպանային, կիսաանապատային և անապատային գրունտային ջրեր

Տափաստանային և անապատային շրջանները տարածված են Ուկրաինայի հարավային մասում, Մերձբալթյան հջափածում, Մերձկովկասում, Ղազախստանի հարավային մասում և Միջին Ասիայում, որտեղ գտնվում են Կարակում, Կիզիլկում, Սարի-Իշկուտրաու, Մայունկում, Բետպակ-Դալա անապատները: Տափաստանները և հատկապես կիսաանապատները բնութագրվում են սակավ մթնոլորտային տեղումներով (միջինը 150-200մ/տարի), բարձր գոլորշիացումով (միջինը 2500 մմ/տարի և ավելի): Գետային ցանցը շատ բույլ է զարգացած: Նշանակալի շրջաններում նշանակալից տարածքներ են գրադացնում չոր ավազները, լյոսանման (փխրահողանման) և կավային ապարները: Տարվա տաք ժամանակաշրջանում տափաստանային, կիսաանապատային և անապատային շրջաններում թափվող մթնոլորտային տեղումները հիմնականում ծախսվում են գոլորշիացման և շնչին քանակությամբ ինֆիլտրացիայի վրա, որոշ շրջաններում կարող է տեղի ունենալ օդից ջրային գոլորշիների կոնդենսացում (խտացում): Այսպիսով, տափաստաններում և հատկապես կիսաանապատներում և անապատներում գրունտային ջրերի կուտակման պայմանները շատ անբարենպաստ են:

Այստեղ գրունտային ջրերը բնութագրվում են իրենց խայտաբղետությամբ, ինչպես ըստ տեղադրման, այնպես էլ ըստ հանքայնացման ու քիմիական կազմի: Գրունտային ջրերի բարձր հանքայնացումը արդյունք է ինտենսիվ գոլորշիացման, որը տեղի է ունենում ոչ միայն ցանաքի ջրային մակերևույթից, այլ նաև գրունտային ջրերի մակերևույթից, եթե դրանք տեղադրված են այնպիսի խորությունների վրա, որ չի գերա-

զանցում գրունտային ջրերի մակերևույթից վերև տեղադրված ապարների մազանորային բարձրացումը: Այս դեպքում, մազական անցքերը համեյս են զալիս որպես գրունտային ջրերի շարժման ուղիներ դեպի մակերևույթ, որտեղ այդ ջրերը գոլորշիանում են մքնոլորտ և առաջ բերում հողածածկի աղակալում և աղուտների առաջացում:

Լյուսային առաջացումներում և լյուսանման ավազակավերում գրունտային ջրերը տպվորաքար տեղադրված են 20-30 մ խորությունների վրա, որը լյուսային նստվածքների՝ ուղղաձրգ ուղղությամբ լավ ջրաքաղանց լինելու հետևանք է: Գրունտային ջրերի հանքայնացումը օրինաչափորեն մեծանում է քաղցրահամից մինչև 20 գ/լ և ավելի հարավ և հարավ-արևելք ուղղությամբ:


Չոր տափաստանային և կիսաանապատային շրջաններում քաղցրահամ գրունտային ջրերը տարածված են ոչ մեծ իջվածքային տեղամասերում, որտեղ մքնոլորտային տեղումները ներծծվում են ավելի խորը և մեծ քանակությամբ քան բարձրադիր տարածքներում և մերձջրաժանային լանջերում:

Անապատային գրունտային ջրերը մեծ մասամբ ուժեղ հանքայնացած են: Դրան նպաստում են կլիմայական պայմանները և ռելիեֆի հարթավայրային բնույթը, որի հետևանքով դանդաղում է գրունտային ջրերի շարժումը: Սակայն շատ շրջաններում հանքայնացված գրունտային ջրերի մակերևույթի վրա «լողում են» քաղցրահամ ջրերի ոսպնյակներ հաճախ զբաղեցնելով նշանակալի մակերեսներ: Քաղցրահամ ջրերը գերազանցապես առաջանում են ի հաշիվ մքնոլորտային տեղումների և ջրային գոլորշիների կոնդենսացման: Քաղցրահամ ջրերը, ունենալով փոքր խտորդյուն, մնում են աղի ջրերի մակերևույթին և ի շնորհիվ ոչ մեծ մոլեկուլար դիֆուզիայի դրանց հետ «չեն խառնվում»:

Առանձնացնում են հետևյալ տիպի քաղցրահամ ջրերով ոսպնյակներ (ըստ Վ. Ն. Կունինի):

Ենթաբակիրային ուսպնյակներ: Թակիրը կավային ցածրադիր հարթավայր է: Չոր ժամանակ դրանք չորանում են, կավերը կոշտանում՝ մակերևույթին առաջացնելով կծկման բազմանկյուն առանձնացումներ (սալիկներ), խոնավ վիճակում կավերը դառնում են մածուցիկ, կպչուն, տրանսպորտի համար համարյա անանցանելի: Անձրևների սեզոնում թակիրները կարող են ծածկվել ջրի շերտով՝ առաջացնելով ծանծաղ քաղցրահամ լճակներ:

Թակիրների վրա, որոնք ունեն հարթ կավային մակերևույթ, հավաքվում են մթնոլորտային տեղումները և մակերևութային ժամանակավոր ջրհոսքերը: Այդ ջրերը, կավային կեղևի ճեղքերով (միջապահկային ճեղքերով) ներծծվելով աղային ջրերի վրա, առաջացնում են քաղցրահամ ջրերի ոսպնյակ: Նման ոսպնյակների ծավալը տատանվում է տասնյակ խորանարդ մետրից մինչև հարյուրհազարավոր խորանարդ մետր: Ոսպնյակային ջրերը լայնորեն օգտագործվում են (ջրհորերի օգնությամբ) ջրամատակարարման համար (Ակ. 37):



Ակ. 37 Թակիրի վրա ջրհավաք հորի տեղադիրքը (ըստ Մ. Ս. Մակենի)
1-քորակի սահմանները, 2-ջրհավաք առունելիք, 3-ջրհորեր, 4-ավազաքմբեր

Չոր ջորակային (գոգահովիրային) ավազանների ոսպնյակները առաջանում են գոգահովիրային ճորակներով (ճորակներով) անցնող ժամանակավոր ջրային հոսքերի ինֆիլտրացիայի արդյունքում: Այդպիսի ճորակներ տարածված են անապատների և նախալեռնային հարթավայրերի ծայրակցատեղերում: Քաղցրահամ ջրերի պաշարները այդ ոսպնյակներում տարբեր են: Չորակներում հատուկ թմբեր ստեղծելու ճանապարհով արգելափակվում են մակերևութային հոսքը և համալրում ոսպնյակաձև առաջացնումներում ջրի պաշարները:

Ավազակակ ոսպնյակները ծևափորվում են ավազաքմբային (քարխանային) զանգվածների տակ, ավազաքմբուների (դյուների) և այլ ձևի ավազային կուտակումների տակ: Դրանց ջրերը տեղակայված են ման-

րահատիկ ավագներում: Ավագատակ ոսպնյակային ջրերի սնման աղբյուր են հանդիսանում մքնողրտային տեղումները և կոնդենսացիոն ջրերը:

Անապատային առանձին գոնաներում քաղցրահամ կազմով գրունտային ջրերը գոյանում են նաև մակերևութային հոսքերի և ոռոգման ջրանցքների մերձակա տարածքներում, որոնք գոյանում են նշված ջրհոսքերից ջրի կորուստների հաշվին: Դրանք հորատանցքերի և ջրհոսքերի միջոցով օգտագործվում են տարբեր նպատակներով:

11.3.6.4. Լեռնային մարզերի, միջլեռնային իջվածքների և նախալեռնային թեր հարթակայրերի գրունտային ջրեր

Լեռնային մարզերում գրունտային ջրերը տարածված են հողմնահարման զոնայի ապարներում, ինչպես նաև հանդիպում են մինչչորրոդական ապարների ճեղքերում և առավել խոշոր տեկտոնական խախտումներում:

Լեռնաշրաներին բնորոշ են ռելիեֆի կտրտվածությունը և կլիմայի ուղղաձիգ գրնալականությունը, ծովի մակերևույթից հաշված տեղանքի բարձրացմանը զուգընթաց օդի ջերմաստիճանի նվազումը և տեղումների մեծացումը: Մքնողրտային տեղումներով սնվող գրունտային ջրերը սեպանում են գետահովիտների լանջերին և կիրճերում դրւս են գալիս աղբյուրների տեսքով: Ինտենսիվ շրջանառության շնորհիվ ջրերը քաղցրահամ են: Բացառություն են կազմում այն աղբյուրները, որոնք դրւս են գալիս աղատար նստվածքներից: Լեռնաշրաները իրենց պարուրող նախալեռնային թեր հարթավայրերով (շլեյֆներով) հանդիսանում են հարթավայրային տարածքների ստորերկրյա ջրերի սնման մարզեր:

Միջլեռնային գոգավորություններում գրունտային ջրերը պարփակված են արտաքերման կոների, նախալեռնային հարթավայրերի այսուվիալ-պրոյուվիալ տեռասաների և գետահովիտների այսուվիալ հզոր (հաստ) նստվածքներում: Հարթավայրերը հատող խոշոր գետերը դրենացնում են ստորերկրյա ջրերը և դրա հետ կապված դրանց ծախսը հոսքի ուղղությամբ մեծանում է:

Արտաքերման կոների բարձրադիր մասերից գետաքարա-գլաքարային նստվածքները, շարժվելով դրա ծայրամասերը, աստիճանարար հերթափոխվում են ավազագլաքարային, իսկ հետո ավազակավակա-

վային նստվածքների: Վերջիններս հանդես են գալիս որպես պատվար և ստեղծում են դիմար գրունտային ջրերի համար:

Ջրերը, որոնք պարփակված են գլաքարերի կամ ավազների մեջ և տեղակայված են ավազակավա-կավային նստվածքների (գրունտային ջրատար հորիզոնի) տակ, ձեռք են բերում ճնշումայնություն (տեղական ճնշում): Այս դեպքում առաջանում է գրունտային և ճնշումային ջրերի մեկ միասնական ջրատար համալիր, որում առանձնացնում են հետևյալ ջրաերկրաբանական շրջանները.

1. Մթնոլորտային տեղումների և գետահումներից ֆիլտրացվող, ինչպես նաև լեռնալանջերից հոսող ջրերի ներծծման շրջան: Գրունտային ջրերը տեղադրված են մի քանի տասնյակ և նույնիսկ հարյուրավոր մետր խորությունների վրա: Ջրերը քաղցրահամ են և ըստ կազմի մոտ են գետային ջրերին:

2. Գրունտային և ճնշումային ջրերի մասնակի ծայրակցային շրջան: Գրունտային ջրերի տեղադրման խորությունը 0-3մ սահմաններում է: Ուկիեփի իջեցումներում դրանք դուրս են գալիս երկրի մակերևույթ՝ առաջ բերելով ճահճակալում և քաղցրահամ աղբյուրների ու ջրհոսքերի սնում: Վերջիններս, Միջին Ասիայում հայտնի են «կարսու» անվան տակ, որոնք լայնորեն օգտագործվում են ոռոգման համար: Այդ ջրերը կոչվում են վերադարձվող ջրեր՝ ի նկատի ունենալով, որ դրանք մեկ անգամ դուրս են եկել երկրի մակերևույթ և որոշ ստորերկրյա ճանապարհ անցնելուց հետո նորից վերադարձել են մակերևույթ: Ուկիեփի իջեցված մակերևույթին ջրերի դուրս գալուց բացի, որոնք կոչվում են մակերևութային ծայրակցվածքային, տարբերակում են նաև հումային ծայրակցվածքային, որի դեպքում վերադարձվող ջրերը դուրս են գալիս արտաքերման կոներ հատող գետի հուն և իջվածքը (տարածքը) դենուդացնող գլխավոր գետ:

Ծայրակցվածքային շրջաններում փորված ճնշումային ջրերը (սովորաբար քաղցրահամ) հորատանցքերով բարձրանալիս հաճախ շատրվանում (ինքնաթափակվում) են: Հորատանցքերի ծախսը կարող է հասնել մինչև 100լ/վ և ավելի: Գրունտային ջրերը քաղցրահամ կամ թույլ հանքայնացված են (չոր կլիմայի դեպքում), դրանք ինտենսիվ սնվում են ճնշումային ջրերից: Հողային ծածկը ենթակա է ճահճակալման գրունտային ջրերով:

3. Ոչ խորը տեղադրման և բարձր հանքայնացման գրունտային ջրերի շրջան (չորային մարզերում): Զբաղեցնում են արտաքերման կոների ծայրամասերը և սահմանակցող կոների իջվածքները: Բնական թույլ դրենացում ունենալու հետևանքով գրունտային ջրերը չոռոգվող հողատարածքներում տեղադրված են 1-6 մ, իսկ ոռոգելի հողատարածքներում՝ հիմնականում 3 մ խորությունների վրա:

4. Իջվածքը դրենացնող գլխավոր գետի հովտի շրջան: Գրունտային ջրերը սնվում են արտաքերման կոների գրունտային և ճնշումային ջրերից, տեղումներից և գետաջրերից: Դրանց տեղադրման խորությունը և հանքայնացումը կախված են դարավանդների բնական դրենացումից և կլիմայական պայմաններից:


Նախալեռնային թեք հարթավայրերը հիմնականում լցված են գետերի արտաքերման կոների թերվածքներով: Այստեղ կարելի է առանձնացնել նոյն ջրաերկրաբանական շրջանները, ինչպիսին էին արտաքերման կոների մոտ: Ծայրակցվածքային շրջաններում ինչպես արտաքերման կոների վրա, այնպես էլ այստեղ թեռնաբափվում են գրունտային և ճնշումային ջրերը, որոնք առաջ են թերում ճահճակալած տարածքներ և սնում աղբյուրները և կարասուները: Ծայրակցվածքային գոնաների լայնությունը հասնում է քազմաքիվ կիլոմետրերի: Այդ գոնաների մակերեսից հեռացմանը գուգընթաց մեծանում է գրունտային ջրերի տեղադրման խորությունը՝ հասնելով 15 մ և ավելի: Նախալեռնային թեք հարթավայրի հզոր ցամաքային նատվածքները շատ հաճախ հանդիսանում են ինչպես գրունտային, այնպես էլ ճնշումային ջրերի կուտակիչներ: Ստորերկրյա ջրերի պաշարները ծևավորվում են մակերևութային ջրհոսքերի, ինչպես նաև մքնողորտային ջրերի ինֆիլտրացիայի ճանապարհով:

Նախալեռնային թեք հարթավայրի ստորերկրյա ջրերի կառուցվածքի բնույթի և սննման պայմանների համակցությունը կլիմայական առանձնահատկությունների հետ որոշում է դրանց հանքայնացման աստիճանը: Ստորերկրյա ջրերի հանքայնացումը սննման մարզից, այսինքն՝ լեռներից հեռանալուն գուգընթաց մեծանում է, դրանում գլխավոր նշանակություն ունի գոլորշիացման գործընթացը:

Նախալեռնային հարթավայրերի, ինչպես նաև չոր գետահովտների ստորերկրյա ջրերը լայնորեն օգտագործում են ջրամատակարարման և ոռոգման համար:

Դեռևս վաղ անցյալում այդ ջրերը կապտաժվել և ինքնահոս ձևով քյարիզների միջոցով դուրս են բերվել երկրի մակերևույթ:

Քյարիզը ջրհավաք հորիզոնական փորվածք է՝ ուղղված գրունտային ջրերի հոսանքով դեպի վերև, որը փորվում է այդ ջրերը «բռնելու» և ինքնահոսով երկրի մակերևույթ դուրս բերելու նպատակով (Ակ. 38):



Ակ. 38 Քյարիզի ընդլայնական կտրվածքի սխեմա
1-ջրամեխր կավեր, 2- ջրագուար ավազներ

Քյարիզը համարվում է հնագույն ջրատեխնիկական կառույցներից. դեռևս իին Բաբելոնի ու Սիցին Արևելքի, Անդրկովկասի ու Միջին Ասիայի նախալեռնային գոնաներում 2-3 հազարամյակ առաջ կառուցվել են քյարիզներ, որոնք օգտագործվել են խմելու և ոռոգման ջուր ստանալու համար: Քյարիզները հայտնի են Հայաստանում և Աղքարեցանում:

Քյարիզները մինչև այսօր ել գոյություն ունեն Անդրկովկասում և Սիցին Ասիայում: Քյարիզների միջոցով ստացվող ջրաքանակը, կախված ջրատար շերտերի լիքոլոգիական առանձնահատկություններից և դրանց սննան պայմաններից, շատ տարբեր է: Այսպես, ըստ Ն. Ս. Պոբեդոնոսցովի՝ ներկա ժամանակներում Աղքարեցանում հաշվարկվում են մոտ 900 գործող քյարիզներ, որոնց գումարային ծախսը կազմում է 20-30մ³/վ: Այստեղ քյարիզների ջրերով ոռոգվում են մինչև 50 հազ.հա հողեր:

Իրանում քյարիզների քանակը հասնում է 300-ի՝ 15 հազ.կմ ընդհանուր երկարությամբ: Քյարիզներով սնվող ընդհանուր ջրի քանակը կազմում է 500մ³/վ: Իրանում, այդ ստորեկրյա ջրերով ոռոգում են ընդհանուր ոռոգելի հողատարածքների մինչև 50% և խմելու ջուր են մատակարարում շուրջ 18 հազ. քնակավայրերի [3]:

11.3.6.5. Ծովափելյա ավագների գրումային ջրեր

Ծովափելյա ավագների վրա դյուսերի (ավազաքթերի, ավազաբլորների) տեսքով հանդես եկող ավագների առանձին տեղամասերում տարածված են համեմատաբար քաղցրահամ գրումտային ջրեր: Այդ ջրերի սնումը տեղի է ունենում մթնոլորտային տեղումների ավագների մեջ ներծծման և ներգրունտային գոլորշիացման հաշվին, և որոշ չափով մերձակա քարձարադիր տեղամասերից եկող հոսքերի հաշվին: Այստեղ գրումտային ջրերի մակերևույթը հարթեցված ձևով արտապատկերում է ավազաքթերի լանդշաֆտը:

Ավազաքթերի մերձակա տեղամասերում և ծովային ավազային կրղիներում քաղցրահամ գրումտային ջրերն ըստ խորության մշտապես փոխարինվում են աղայինի: Որպես կանոն, քաղցրահամ ջրերի մակարդակը քարձը է ծովի ջրի մակարդակից, ընդ որում, ինչքան հեռու է ծովից, այնքան քարձը է մակարդակը և մեծ է աղային ջրերի վրա նստած քաղցրահամ ջրի շերտի հաստությունը:

Մերձծովյա ավագների և ծովային կղզիների մակերևույթից մթնոլորտային տեղումների (որոշ տեղերում, հնարավոր է նաև կոնյենսացվող ջուրը) ինֆիլտրացվող ջրերը կուտակվում են շերտերի ծակոտիներում այս կամ այս հզորության քաղցրահամ ջրերի շերտերի ձևով ծովային աղի ջրերի մակերևույթի վրա: Քաղցրահամ կամ թույլ հանքայնացում ունեցող ջրերի խառնումը ծովային աղի ջրերի հետ դիմուգություն հանապարհով տեղի է ունենում վերին աստիճանի դանդաղ և դրանք երկար ժամանակ շարունակում են մնալ քաղցրահամ կամ թույլ հանքայնացված:

Ծովային կղզիների կենտրոնական մասերում քաղցրահամ ջրերով ավազային շերտի հաստությունը որոշվում է հետևյալ կերպ: Ենթադրենք՝ քաղցրահամ ջրերի տարածման խորությունը կղզու կենտրոնական մասում, ծովի մակերևույթից հաշված, հավասար է H , իսկ քաղցրահամ ջրերի մակարդակի քարձությունը կզբու կենտրոնական մասում, ծովի մակերևույթից՝ h (Ակ. 39): Այս դեպքում քանի որ ծովի ջրի խոտությունը միջինը հավասար է 1.024, իսկ քաղցրահամինը՝ 1, ապա կարելի է գրել հետևյալ հավասարումը, որը արտահայտում է հիդ-

բուտատիկ հավասարակշռության պայման \overline{AA} սահմանային հարթության համար:

$$H + h = 1.024H \quad (91)$$


որտեղից՝

$$h = 0.024H \approx \frac{1}{42}H \quad (92)$$

Քաղցրահամ ջրերի հաստությունը (H_n) որոշվում է

$$H_n = h + H = h + 42h = 43h \quad (93)$$

Ուստի կենտրոնական մասերում քաղցրահամ ջրերով շերտի հաստությունը, հաշված ծովի մակերևույթից, հասնում է 5 մ-ի, իսկ դեպի ծայրամասերը այն աստիճանաբար փոքրանում է և վերանում:



Նկ. 39 Ծովի ավագային կզզում գրունտային ջրերի տեղադրման սխեմա

1- քաղցրահամ գրունտային ջրերի մակարդակ, 2- ծովի մակերևույթը, 3- քաղցրահամ ջրերով ավագաների ջրագար հորիզոն, 4- աղի ջրերով ջրագար ավագաներ, 5- քաղցրահամ և աղի ջրերի միջև սահմանը

Ավագարմբերի և ավագային կղզիների քաղցրահամ գրունտային ջրերի շահագործման ռեժիմը պետք է որոշել ըստ փորձնական արտամղումների և մշտական (ստացիոնար) դիտարկումների տվյալների, որոնցով որոշվում է վերցվող ջրի քանակի և քաղցրահամ ջրերի մուտքի միջև գոյություն ունեցող հարաբերակցությունը:

Ավագարմբերի գրունտային ջրերը Հողանդիայում լայնորեն օգտագործում են որոշ քաղաքների և գյուղերի ջրամատակարարման համար:

ԳԼՈՒԽ XII

ԱՐՏԵԶՅԱՆ ԶՐԵՐ

12.1. ԱՐՏԵԶՅԱՆ ԶՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԱՋԱՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ

Արդեզյան կոչվում են այն ստորերկրյա ջրերը, որոնք տեղադրված են վերևից և ներքևից ջրամերժ կամ համեմատաբար ջրամերժ շերտերով պարփակված ջրատար հորիզոններում (համալիրներում) և օժտված են հիդրոստատիկ ճնշումով: Հորատանցքերով կամ այլ փորփածքներով արտեզյան ջրերը հատելու դեպքում ջուրը բարձրանում է ջրատար ապարների առաստաղից վեր և, եթե տվյալ կետում ճնշումային մակարդակը բարձր է երկրի մակերևույթից, ապա տեղի է ունենում ջրի ինքնահու բեռնաբափում կամ շատրվանում:

Արտեզյան ջրերն իրենց անվանումը ստացել են Հարավային Ֆրանսիայի Արտուր (հնում լատիներեն՝ Արտեզիա) նահանգի անունից, որը 1126 թ. առաջին անգամ փորփած հորատանցքերը տվել են շատրվանող ջուր:

Արտեզյան ջրերի տարածման համար նպաստավոր են սինկինալ-ները, ճկվածքները, նախալեռնային իջվածքների միաբերք կառուցվածքները, միջլեռնային գրգավորությունները, տեկտոնական խզվածքները, գրաբենային իջվածքները և այլն: Դրանք սովորաբար կապված են հին հասակի, երբեմն նաև՝ չորրորդական հասակի հզոր շերտախմբերի հետ:

Զրահագեցման գոնայում երբեմն հանդիպում են նաև արտեզյան ջրերի հորիզոններ, որոնք տեղադրված են ջրամերժ շերտերի միջև, սակայն ճնշումից գործիք են: Դրանց անվանում են միջշերպային ոչ ճնշումային ջրեր և միջանկյալ դիրք են գրավում գրունտային և արտեզյան ջրերի միջև: Սահմանափակ տարածում ունեցող այս ջրերի տիպերը առավելապես հանդիպում են կտրտված ռելիեֆով միջինվային տեղամասերում:

Երկրաբանական կառուցվածքներում, որոնք լցված են նստվածքային շերտավոր ապարներով, արտեզյան (միջշերտային) ջրերը տարածված են մոտ 10 մ մինչև 7 կմ խորությունների վրա, իսկ պլատֆոր-

մային կառուցվածքներում՝ հնարավոր է մինչև 15-20 կմ (Նախառարայշան ճկվածք, Սերձկասպյան իջվածք և այլն) [4]:

Արտեզյան ջրատար հորիզոններում ճնշումը ատեղծվում է հիդրոստատիկ ճնշումներով (ջրի կշռով), երկրաստատիկ (գեոստատիկ) բեռնավորումով, տեկունական լարվածություններով, ինչպես նաև ֆիզիկաքիմիական գործընթացներով պայմանավորված՝ նոր միներալների առաջացման և նստեցման արդյունքում ապարների ծակոտիների փոփոխումով:

Ներկա ժամանակներում շատ հաճախ որպես հոմանիշներ օգտագործվում են «արտեզյան» և «ճնշումային» ջրեր տերմինները:

Արտեզյան ջրերի բնորոշ առանձնահատկություններն են.

1) դրանք սովորաբար տեղադրված են գրունտային ջրերից խորը ջրատար հորիզոնների և համալիրների մեջ, նստած և ծածկված ջրամերժ (կամ համեմատաբար ջրամերժ) շերտերով,

2) արտեզյան ջրերի սննան և տարածման մարգերը չեն համընկնում և հաճախ գտնվում են իրարից մեծ հեռավորությունների վրա,

3) արտեզյան ջրատար հորիզոնը հորատանցքով բացելու (հատելու) դեպքում, ջուրը դրանով բարձրանում է ջրատար հորիզոնի առաստաղից բարձր, այսինքն՝ հորատանցքում ջրի հանդես գալը միշտ ցածր է իր կայունացած մակարդակից,

4) արտեզյան ջրերի ռեժիմը, համեմատած գրունտային ջրերի հետ, առավել կայուն է, պիեզոմետրիկ մակարդակը քիչ է ենթարկվում ամսական և սեզոնային տատանումներին: Ջրերի ջերմաստիճանը, ըստ խորության, որպես կանոն, մեծամուլ է,

5) արտեզյան ջրատար հորիզոնները տիրապետում են առաձգական ռեժիմի, որը յուրահասուով կերպով արտահայտվում է դրանց շահագործման ժամանակ (տես զլ. XII),

6) արտեզյան ջրերը, գրունտային ջրերի հետ համեմատած, երկրի մակերևույթից քիչ են ենթարկվում աղտոտման, քանի որ դրանք վերևից ծածկվում են ջրամերժ ապարներով:


Ըստ տեղադրման պայմանների առանձնացնում են սոորերկրյա արտեզյան ջրերի հետևյալ տիպերը՝ արտեզյան ավազաններ, արտեզյան լանջեր և մերձարտեզյան (սուրարտեզյան) ավազաններ:

12.1.1. ԱՐՏԵԶՅԱՆ ԱՎԱՋԱՆԵՐ

Արտեզյան ավազան ասելով հասկանում են ճնշումային ջրատար հորիզոնների համակարգ, որոնք տեղադրված են գերազանցապես սինկլինալային ծվածքային ստրուկտորաներում: Մասնավոր դեպքում արտեզյան ավազանը կարող է ներկայացված լինել միայն մեկ ճնշումային հորիզոնով:

Արտեզյան ավազաններն ըստ մակերեսի (Ա. Ս. Օվչիննիկով) ստորաբաժանվում են՝ խոշոր (մոտ 100000 կմ²), միջին (100000-10000 կմ²) և փոքր (փոքր 10000 կմ²):

Ցուրաքանչյուր արտեզյան ավազանի սահմաններում առանձնացնում են՝ ժամանակակից սննան մարզ, ճնշման (հոսքի) տարածման մարզ, բեռնաբափման մարզ (նկ. 40):



Նկ. 40 Արտեզյան ավազանի կառուցվածքի սիմեմա

A - արտեզյան ջրերի լուսածման սահմաններ, a - սննան մարզ, b - ճնշման մարզ,

c - բնունաբափման մարզ, B - գրունական ջրերի լուսածման սահմաններ,

H₁ - դրական ճնշման մակարդակ, H₂ - քացանական ճնշման մակարդակ,

NN' - ճնշման մակարդակ, m - ջրասրար շերտի հղորություն, 1 - ջրասրար ավազանի շերտ, 2 - ջրամեռժ կավային ապարներ, 3 - սպրիներկյան ջրերի մակարդակ,

Սննան մարզը դա ջրատար ապարների մակերեսն է, որը դուրս է եկել երկրի մակերևույթ և տեղադրված է առավել բարձր հիպսոմետրիկ նիշերի վրա: Ժամանակակից սննան մարզը միաժամանակ հանդիսանում է ամբողջ ավազանի հիդրոստատիկ ճնշման հաղորդման մարզ: Այստեղ տեղի է ունենում արտեզյան ջրերի սննումը՝ ի հաշիվ նթնողրտային տեղումների, մակերևութային ջրերի և այլ աղբյուրների:

Որոշ հետազոտողներ առանձնացնում են ջրատար հորիզոնների արտաքին և ներքին ինֆիլտրացիոն սննան մարզեր [15]:

Արտաքին սնման մարզը գտնվում է արտեզյան ավազանի սահմաններից դուրս՝ հաճախ լեռնածալքավոր կամ բարձրացումների տարածքում։ Արտաքին սնման մարզերից ինֆիլտրացիոն ջրերը հոսում են արտեզյան ավազանի տարածք։ Ըստ արտեզյան ավազանների համար, հատկապես տեղադրված նախալեռնային ճկվածքներում և իջվածքներում, կարևոր նշանակություն ունեն հենց արտաքին սնման մարզերը։ Օրինակ՝ Ազրու-Կուրանսկի և Թերեք-Կումսկի ավազանների համար արտաքին սնման մարզեր են ծառայում Սեծ Կովկասի լեռնածալքավոր կառուցվածքների հարավային լանջերը։

Հարևան կառուցվածքների ստորերկրյա ջրերի ներհոսի համար դեպի արտեզյան ավազան առավել նապաստավոր պայմաններ են ստեղծվում հումիդ կլիմայական շրջանների այն տեղամասերում, որտեղ տարածված են լավ ջրաքափանց ապարներ (օրինակ՝ Արևմտա-Սիրիական ավազանի հարավարևելյան հատվածը Ալտայի հետ սահմանագծում, Մերձագործյան արտեզյան ավազանի հարավային մասը, Հյուսիսային Կովկասի սահմանագծում)։

Ներքին սնման մարզը գտնվում է արտեզյան ավազանի տարածման սահմաններում, որտեղ մթնոլորտային տեղումները սնում են գետային ցանցը, գրունտային ջրերը և դրանց միջոցով ներթափանցում արտեզյան ջրեր։ Պլատֆորմաններում ներքին սնման մարզերը գերազանցապես կապված են բարձրացումների և անտիկլինալների հետ, ինչպես նաև նախալեռնային գոգավորություններում անտիկլինալային կառուցվածքների հետ, որոնց սահմաններում արտեզյան ջրատար հորիզոնները դուրս են գալիս մակերևույթ կամ տեղադրվում են առավել երիտասարդ, փոխան նատվածքային ապարների տակ։

Բնության մեջ որոշ արտեզյան ջրատար հորիզոնների սնումը իրականացվում է նաև հարավից մեկ ջրատար հորիզոնից, մյուսի մեջ ներհոսի ճանապարհով։ Կախված ճնշումների հարաբերակցություններից, ջրի ներհոս կարող է տեղի ունենալ ինչպես վերին հորիզոններից դեպի ներքևի հորիզոն, այնպես էլ հակառակ՝ ներքեւից վերև։

Արտեզյան ջրերը կարող են հիդրավիկ կապի մեջ լինել գրունտային ջրերի հետ, եթե ողողահարվել է ջրատար հորիզոնը ծածկող ջրամերժ շերտը կամ վերջիններիս ֆացիալ փոփոխությունների արդյունքում, այսինքն՝ ջրամերժ շերտի որոշ հատված փոխարինվել է ջրատար ապարներով (տես նկ. 42)։ Այդպիսի տեղամասերում կապված ստոր-


Երկրյա ջրերի մակարդակների հարաբերակցությունից կարող է տեղի ունենալ արտեզյան ջրերի ծախսում կամ համալրում:

Ծննդման դարածման մարզ (հոսքի տարածման մարզ): Դա արտեզյան ավազանի տարածման մարզն է, որտեղ ի հայտ է գալիս ջրատար հորիզոնի ճնշումը: Ճնշումային ջրերի մակարդակն անվանում են *պիեզոնէտիրիկ մակարդակ*:

Պիեզոնմետրիկ մակարդակը միշտ բարձր է կանգնում ջրատար հորիզոնի առաստաղից: Հեռավորությունը ջրատար հորիզոնի առաստաղից ուղղաձիգ ուղղությամբ մինչև այլեզոնմետրիկ մակարդակը անվանում են *ճնշում*: Պիեզոնմետրիկ մակարդակների բաշխումը արտեզյան ջրերի տարածման ամբողջ մակերեսի վրա որոշում են սննան և բեռնաթափման մարզերում դրանց նիշերի հարաբերակցությունից: Պիեզոնմետրիկ մակարդակը ունակ էրարարություն ունի ջրատար հորիզոնը բացած հորատանցքով: Սի քանի արտեզյան հորիզոնների առկայության դեպքում դրանց պիեզոնմետրիկ մակերևույթները կիամընկնեն միայն այն դեպքում, եթե դրանց միջև կա հիդրավիկ կապ կամ դրանց սննան և բեռնաթափման հիպսոնմետրիկ դիրքերը համընկնում են:

Բեռնաթափման մարզը երկրի մակերևույթի ավելի ցածրադիր նիշերի վրա ջրատար հորիզոնների և համալիրների դուրս գալու տեղամասերն են՝ համեմատած սննան մարզի հետ: Բեռնաթափման օջախները, ըստ Ա.Վ.Օվչիննիկովի, լինում են քաց, թաքնված և արհեստական [19]:


Քաց օջախներն են՝ էրոզիոն (գետահովտներում, անապատային շրջանների անհոսք ճկվածքներում բեռնաթափվող օջախներ), դիմհարային (արտեզյան ջրերի շարժման ուղղությամբ արգելվների առկայության դեպքում), կառուցվածքատեկտոնական (հանդես են գալիս լեռնածալքավոր մարզերի անտիկլինալային կառուցվածքներում, տեկտոնական բեկվածքների գոնաներում և այլն) (տես նկ. 41):



Նկ. 41 Արտեզյան ջրերի բեռնաբափման բնական բաց օջախները

Ա - սպորելքյան ճնշումային ջրերի բեռնաբափման էրոզիոն օջախներ, ա- գելահողվորում բեռնաբափումը ջրի մակարդակից բարձր, օ - չոր կիմայական պայմաններում էրոզիոն-գելակոնական իջվածքներում, Բ - բեռնաբափման դիմարային օջախներ, Յ - սպորելքյան ջրերի շարժման ճանապարհին մագմատիկական, մննամորֆիզացված և արագար անցրաբափմանց առաջացներ, Ղ - սպորելքյան ճնշումային ջրերի շարժման ճանապարհին ջրամերժ ապարների ծալվածքներ, Ե - սպորելքյան ջրերի բեռնաբափման կառուցվածքա-գելակոնական օջախներ, Զ - ջրաբափման ապարների ծալվածք կարագային մասերով, Ե - էկրանացված ջրալիքար հորիզոնների լուսաբերություն (պարնիկքով), 1-ջրալիքար ապարներ, 2-ջրամերժ ապարներ, 3-համեմատաբար ջրամերժ ապարներ, 4-մագմատիկական ապարներ, 5-պինդունիդրիկական մակարդակներ, 6-արդեզյան ջրերի շարժման ուղղություն, 7-վերընթաց աղբյուրներ:

Բեռնաբափման բարձնված օջախները ստորաբաժանվում են արտաքինի և ներքինի (տես նկ. 42): Բեռնաբափման արտաքին բարձնված օջախների օրինակ կարող են հանդիսանալ սուբֆլյուվիալ (գետահուների և ալյուվիալ նաստվածքների տակի օջախներ), ենթածովային (ծովերի հատակային աղբյուրներ) օջախները և այլն: Բեռնաբափման արտաքին բարձնված օջախներին են դասվում նաև ստորերկրյա ջրերի կենտրոնացված բեռնաբափումները ջրամերժ հաստվածքների միջոցով, եթե առկա են ճնշման բարձր գրադիենտներ:



Նկ. 42 Արտեզյան ջրերի բեռնաբափման բնական թաքնված օջախներ

Ա-սուրելպրյա ճաղումային ջրերի բեռնաբափման արդարքի օջախներ, ա և հ-մերձյուղալային (ա-գերանունի ջրերի մակարդակից ցածր, ծ-չորրորդական այլուղիան նախվածքներու), Ե-մերձմարինային (բեռնաբափումը ծովի հասրակում), 2-ցրված բեռնաբափում համեմարտաքար անջրաբափանց ապարների հասրվածքով. Բ-արդեզյան ջրերի բեռնաբափման ներքին օջախների Ծ-ջրամերժ ապարների հասրվածքում ֆացիալ փոփոխված «պարուիաների» միջոցով, ծ-տեկուրնական բաղված խախորուների միջոցով. Յ-աղային թմբերի, զմբերների, ինդրուզիաների և այլ մարմինների թաքնված դիմարների լրեղամասերով. Ղ-թաղված ծալքերի կարարային մասերով: 1-ջրապար ապարներ, 2-ջրամերժ ապարներ, 3-համեմարտաքար ջրամերժ ապարներ, 4-աղաբեր նախվածքներ, 5-պիկոնների կական մակարդակներ, 6-պիկոնների կական ձևաչփներ, 7-արդեզյան ջրերի շարժման ուղղություն: I-II-ջրապար հորիզոններ:

Բեռնաթափման ներքին թաքնված օջախները լայնորեն տարածված են ստորերկրյա ջրապատյանի (հիդրոֆերայի) ջրահագեցված զոնաներում և հաճախ երևան են գալիս շերտախմբի աններդաշնակության տեղերում, «ֆացիալային պատոհանների» տեղամասերում, բացի այդ, նատվածքային ապարներով ծածկված տեկտոնական բեկվածքների զոնաներում, անտիկլինալմերի (կորածալքերի) առանցքային մասերում, երկրի մակերևույթ դուրս չեկած գմբեթներում և բարձրացումներում:


Հավերժական սառցութային ապարների տարածման շրջաններում արտեզյան ջրերի բեռնաթափումն իրականացվում է միջանցիկ հալութային (տախիկների) միջոցով: Զնոսան շրջանում բեռնաթափման օջախները հանդես են գալիս սառցաբլորների (նայեղ), ջրալակոլիտների (հիդրոլակոլիտ) ձևով (տե՛ս զլ. XIV):

Անիրաժեշտ է նշել, որ շատ արտեզյան ավազանների համար ճնշումային ջրերի բեռնաթափման բաց օջախներն ունեն շատ սահմանափակ տարածում: Մեծ նշանակություն ունեն բեռնաթափման թաքրներ օջախները, որոնց միջոցով ջորին աննկատ մեկ ջրատար հորիզոնից կամ համալիրից հոսում (ներհոսում) է մի այնի մեջ կամ՝ հակառակ:

Արիհապական բեռնաթափման օջախներ են հանդիսանում ստորերկրյա ջրերի խոշոր ջրհանումները (խումբ հորատանցքերով մեծ քանակի ջրհանումներ ջրամատակարարման կամ այլ նապատակների համար) և միայնակ ջրհանման կառույցները (սովորաբար հորատանցքեր), որոնց երկարաժամկետ շահագործման ժամանակ ջրատար հորիզոններում ջրի ստատիկ մակարդակների իջեցումը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Սովորաբար, ինչպես արդեն ասվել է, արտեզյան ավազաններում տարածված են մի քանի հորիզոններ կամ համալիրներ, որոնցում ամփոփված են ճնշումային ջրեր: Այսպես կոչված *ուղիղ ռելիեֆի* և շերտերի սինկլինալային տարածման դեպքում ներքին ջրատար հորիզոնները տիրապետում են ավելի մեծ ճնշումների և տեղակայվում են ավելի բարձր նիշերի վրա, դրա համար էլ շատ հաճախ դրանց ջրերը ինքնաթափվում են (նկ. 43ա): *Շրջված ռելիեֆի* դեպքում (արտեզյան ավազանի ծայրամասերը ողողահարվել են) ներքին ջրատար հորիզոնների

պիեզոմետրիկ մակարդակները կգտնվեն ավելի ցածր հիպսոմետրիկ նիշերի վրա (նկ. 43թ):




Նկ. 43 Արտեզյան ավազանների տիպերը

A-ուղիղ ռելիէֆ, B - շրջված ռելիէֆ, 1- ջրալիք ապարներ, 2- ջրամերժ ապարներ,
3- պիեզոմետրիկ մակարդակ, I-արտեզյան վերին ջրալիք հորիզոն,
II - արտեզյան ստորին ջրալիք հորիզոն

Կախված սննան և բեռնաթափման մարգերի հիպսոմետրիկ տեղադրությունից, ինչպես նաև արտեզյան ավազանի սահմաններում դրանց գտնվելու տեղից՝ ստորերկրյա հոսքի պայմանները կարող են լինել բոլորովին տարբեր: Մասնավորապես բնական պայմաններում դիտվում են դանդաղեցված ջրափոխակումով արտեզյան ավազաններ (նկ. 44): Նման ավազաններում սննան մարգերն ունեն մոտավորապես նույն բարձրության նիշեր, իսկ տեսանելի բեռնաթափման մարգերը բացակայում են:

Նմանատիպ ավազաններում ստորերկրյա ջրերի շարժումը և դրանց բեռնաթափումը իրականացվում են շատ դանդաղ թույլ ջրաթափանց կամ ջրամերժ (ճնշումների նշանալակի տարբերությունների դեպքում) առաստաղի ապարներով, դրանց տարածման ամբողջ մակերեսով:




**Նկ. 44 Դանդաղ ջրափոխանակությամբ արտեզյան ավազան
(ըստ Ա. Ս. Շագոյանցի)**

A- ավազանի սահմանները լույսակացում, α- սննման մարզեր (մասամբ հոսքեր), δ-ձնչման մարզ և դժվարացված բեռնաբավում առասպաղի բույլ ջրաբափանց ապարների միջով, 1- ջրապար հորիզոնն հանքայնացված ջրերով,

2- բույլ ջրաբափանց ապարներ, 3- ջրամերժ ապարներ, 4- պիեզոնիգրիկ մակարդակ, 5- գրունտային ջրերի մակարդակ, 6- քաղցրահամ և հանքայնացված ջրերի սահմանը

12.1.2. ԱՐՏԵԶՅԱՆ ԼԱՆՋԵՐ

Արտեզյան լանջ կոչվում է միաբեր (մոնոկլինալ) տեղադրված ջրատար հորիզոններով դեպի խորքը սեպածն վերջացող կամ ֆացիալ խառնվածքով և բույլ ջրաբափանց կամ ջրամերժ ապարներով ներփակված արտեզյան ջրերի ասիմետրիկ ավազանները (նկ. 45):



Նկ. 45 Արտեզյան լանջի սխեմա


I- ջրալար հորիզոնի սեպացնան պայմաններում, II- ջրալար հորիզոնի սպարևիքի ֆացիալ փուլուման պայմաններում, α- սննան և ճնշման սպիտակության մարզ, δ- ճնշման գուբածման մարզ, σ-քեռնարափակման մարզ, H_1 , H_2 , H_3 - համապատասխանարար սննան, քեռնարափակման և ճնշման գուբածման մարզերի պիեզոնների կազմակերպությունները: 1- խոշորահարիկ ավազներ, 2- մանրահարիկ ավազներ, 3- ներքահարիկ ավազներ, 4- ուժեղ կավային և ներքահարիկ ավազներ, 5- ջրամերժ ավազներ, 6- գրունտային ջրերի մակարդակ, 7- պիեզոնների կազմակերպություն, 8- վերընթաց աղբյուր, 9- մքննողուրային գեղումների ինֆիլտրացման գրեղամասեր, 10- արորերկրյա ջրերի շարժման ուղղությունները

Արտեզյան լանջերը բնորոշ են նախալեռնային և միջլեռնային ճկվածքների եղուային մասերին, սինեկլիզի լանջերին և պլատֆորմային իջվածքներին, մոնակլինալներին (միաթեքվածքներին): Այդպիսի ար-

տեղյան ջրերի սնման, բեռնաբափման պայմանները խիստ տարրեր են. դրանք առաջմ բավարար ուսումնասիրված չեն: Արտեզյան լանջերում սովորաբար սնման (ժամանակակից ինֆիլտրացիայի և ճնշման ստեղծման) և բեռնաբափման մարզերը դասավորված են անմիջապես մեկը մյուսին մոտիկ, իսկ ճնշման տարածման մարզը՝ ավելի ցածր բացարձակ նիշերի վրա: Այլ կերպ ասած՝ ճնշման մարզը գտնվում է սնման մարզից փոքր, իսկ բեռնաբափման մարզից մեծ բացարձակ նիշերի վրա ($H_1 > H_2 > H_3$) (տես նկ.45): Բայտ չափերի արտեզյան լանջերն ի նշանակալի փոքր են արտեզյան ավազաններից և բնութագրվում են ստորերկրյա ջրերի վարդնթաց-վերընթաց շարժումների առկայությամբ:

12.1.3. ՄԵՐՁԱՐՏԵԶՅԱՆ ԱՎԱԶԱՆՆԵՐ

Մերձարտեզյան (սուբարտեզյան) ջրերին են վերագրվում այն ստորերկրյա ջրերը, որոնք համատարած և կայուն ճնշումով օժտված չեն. ինչպես պլանում, այնպես էլ ժամանակի ընթացքում այն զգալի փոփոխություններ է կրում: Առանձին տեղերում՝ մասնավորապես, ճնշումային ջրատար շերտի անտիկլինալային ծալքերում, որտեղ երեմն վերին ջրամերժ շերտը բացակայում է, մերձարտեզյան ջրերը ձեռք են բերում գրունտային ջրերի բնույթը (նկ. 46):



Նկ. 46 Մերձարտեզյան ջրերի տարածման սխեմա

1- ջրափար ապարներ, 2- ջրամերժ ապարներ, 3- կիմքի բյուրեղացված ապարներ, 4- գրունտային ջրերի մակարդակ, 5- պիեզոմետրիկ մակարդակ, 6- մքունորդային դեղումների ինֆիլտրացիան լրիդամասեր

Ֆ. Պ. Սավարենսկին մերձարտեզյան ավագաններին է վերագրում պարբերաբար սննման մարզերով հանդես եկող միջշերտային ջրերը:

Երեմսն մերձարտեզյան ավագաններին են վերագրվում միջգետային տարածությունների վերևի ընդարձակ մասերի նատվածքային ապարներում համեմատաբար հորիզոնական տեղադրված ջրատար համալիրներին, որոնց մակերեսի առանձին տեղամասերում նկատվում են գրունտային կամ միջշերտային ոչ ճնշումային ջրեր, իսկ մյուսներում՝ ճնշումային:

Մերձարտեզյան ջրերի տեղադրման և ձևավորման պայմանները սահմանում են դրանց խայտաբղետ հանքայնացումը և քիմիական կազմը: Սովորաբար մքննողրտային տեղումների ժամանակակից ինֆիլտրացիոն տեղամասերում ձևավորվում են քաղցրահամ կամ աղահամ ջրեր, որոնք ջրատար հորիզոնի խորասուզմանը զուգընթաց ջրամերժ ապարների ծածկի տակ դառնում են աղի:

12.2. ԱՐՏԵԶՅԱՆ ՋՐԵՐԻ ԶՈՆԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պլատֆորմային մարզերի և միջեռնային գոգավորությունների արտեզյան ավագաններում կենտրոնացված են հսկայական քանակությամբ քաղցրահամ, բուժական, արդյունաբերական և ջերմային ջրեր, որոնք կապված են ավագանների երկրաբան-ջրաներկրաբանական պայմանների առանձնահատկությունների հետ: Հատկապես նման ավագանների ջրերի վրա են հենվում ժողովրդական տնտեսության տնտեսական-խմելու օբյեկտների ջրամատակարարումը:

Սակայն արտեզյան ջրերի օգտագործումը հնարավոր է միայն դրանց քավարար պաշարների առկայության դեպքում, որոնք կախված են արտեզյան ավագանների մեծությունից, դրանց սննման մարզերի չափերից, ջրատար հորիզոնների քանակից, դրանց հաստությունից և ֆիլտրացիոն հատկություններից, ապարների ջրատվությունից, կիմայական պայմաններից և այլ գործոններից: Արտեզյան ջրերի պաշարները սահմանվում են դրանց հետախուզական և փորձարարական տվյալների հիման վրա:

Արտեզյան ջրերի հետախուզումը և շահագործումը իրականացվում են տարբեր խորությունների և կոնստրուկցիաների հորատանցքերի մի-

զոցով, որոնք հորատվում են՝ ելնելով տվյալ արտեզյան ավազանի ջրաերկրաբանական պայմաններից:

Արտեզյան ավազանների սահմաններում ստորերկրյա ջրերի հետախուզական աշխատանքների ընդհանրացումը հնարավորության է ընձեռնել գիտնականներին (Վ. Ի. Վերնադսկի, Դ. Լ. Լիչկով, Ի. Կ. Զայցև, Ն. Ի. Տոլստիխին և այլոց) հանդես բերելու և բացատրելու արտեզյան ստորերկրյա ջրերի ուղղաձիգ գոնալականությունը:

Ժամանակակից ջրաերկրաբանական գրականության մեջ արտեզյան ավազանների ուղղաձիգ կտրվածքներում առանձնացնում են հետևյալ հիմնական գոնաները՝ ջրաերկրադինամիկական, ջրաերկրաքիմիական և ջրաերկրաջերմային:

12.2.1. ՋՐԱԵՐԿՐԱՊԵԽԱՎՄԻԿԱԿԱՆ ԶՈՆԱԼԱԿԱՎՆՈՒԹՅՈՒՆ

Ջրաերկրադինամիկական գոնալականությունը իրենից ներկայացնում է արտեզյան ավազանի ուղղաձիգ կտրվածքում ստորերկրյա ջրերի շարժման արագությունների (ջրափոխանակման տեմպի) սահմանագատումը: Արտեզյան ավազանների ուղղաձիգ կտրվածքում առանձնացնում են վերին (ազատ, ինտենսիվ, ակտիվ ջրափոխանակման), միջին (դանդաղ, դժվար ջրափոխանակման) և ստորին (չափազանց դանդաղ, չափազանց դժվար ջրափոխանակման) ջրադինամիկական գոնաներ: Ցուրաքանչյուր արտեզյան ավազանում այդ գոնաների հաստությունը յուրովի է: Դրանք պայմանավորված են ավազանի ջրաերկրաբանական պայմաններով և երկրաբանական կառուցվածքով: Անհարժեշտ է նշել, որ այդ գոնաների անշատումը, դրանց միջև սահմանների անցկացումը շատ պայմանական է, քանի որ արտեզյան ավազաններում դիտվում է ջրադինամիկական պայմանների մեծ գոնալականություն և չի տեղափոխվում երեք ջրադինամիկական գոնաների մեջ:

Ազար ջրափոխանակման գոնայի համար բնորոշ է ջրատար հորիզոնների հիդրավլիկական «քաց» կապը արտեզյան ավազանի նակերևույթի հետ: Այս գոնայի կազմի մեջ մտնում են աէրացիայի գոնան, գրունտային ջրերի հորիզոննը և վերին արտեզյան ջրատար հորիզոնները, ինչպես նաև արտեզյան ավազանի ֆունդամենտի (հիմքի) հողմնահարված ճեղքային ջրերի հատվածը, եթե դրանք դրենացվում են գետահովիտների ցանցով (գետային ցանցի հովիտներով):

Ազատ ջրափոխանակման գոնայի ստորերկրյա ջրերը սերտորեն կապված են մակերևութային ջրհոսքերի (գետ, վտակ), ջրավազանների (լիճ, ճահիճ) և մթնոլորտային ջրերի հետ: Դրանք դրշում են վերին ջրադիմամիկական գոնայի ստորերկրյա ջրերի ռեժիմի կապը մթնոլորտային և մակերևութային ջրոլորտի ռեժիմների հետ:

Ազատ կամ ինտենսիվ ջրափոխանակման գոնայի ստորին սահմանը պայմանականորեն ընդունում են տվյալ արտեզյան ավազանի գետերի էրոզիոն բազիսի մակերևույթը, և գոնան ընդգրկում է դրանից վերև գտնվող բարձրադիր տեղանասերը: Ազատ ջրափոխանակման գոնայի ստորին սահմանը սովորաբար տեղադրված է գետերի ջրագծերից ներքև 100-150 մ խորությունների վրա, իսկ գոնայի ընդհանուր հաստությունը կազմում է 500-1500 մ:

Ազատ ջրափոխանակման գոնան շերտավորված է հարկերի, որոնցից առաջին հարկը, որն ընկած է տեղական էրոզիոն խրվածքներից (հիմքից) վերև 10-20 անգամ դիմամիկ է ամրուց գոնայի միջին դիմամիկությունից: Ազատ ջրափոխանակման գոնայի ստորերկրյա ջրերի ֆիլտրացիայի արագությունները տարեկան փոփոխվում են կիրածետրերից մինչև մի քանի մետր: Այդ գոնայում ստորերկրյա ջրերի վերականգնման ընթացքը (տեմպը) կազմում է միջինը 330 տարի:

Դանդաղ ջրափոխանակման գոնան բնութագրվում է մթնոլորտային, մակերևութային և ստորերկրյա ջրերի միջև կապի բոլացմանը և ստորերկրյա հոսքի դանդաղացումով: Այդ գոնայի ստորերկրյա հոսքի դիմամիկան որոշվում է (սահմանվում է) իրենց խորը կտրտված էրոզիոն հովհատներով գիսավոր ջրային զարկերակների դրենացման ազդեցությունից ելնելով:

Դանդաղ ջրափոխանակման գոնան ընդգրկում է արտեզյան ավազանի այն տեղամասերը, որոնք գտնվում են ծովի մակարդակի և ազատ ջրափոխանակման գոնայի ստորին սահմանի՝ տեղանքի ժամանակակից էրոզիոն խրվածքի միջև:

Դրս հաստությունը պլատֆորմներում հասնում է մինչև 500-600մ, իսկ լեռնածալքավոր մարգերում՝ մինչև 1000-2000 մ: Ստորերկրյա ջրերը, որպես կանոն, տիրապետում են նշանակալի ճնշումների: Այդ գոնայի ստորերկրյա ջրերի վերականգնման տեմպը կազմում է տասնյակ և հարյուրհազարավոր տարիներ:

Չափազանց դանդաղ ջրափոխանակման գոնան պայմանականութեն տեղադրված է ծովի ջրի մակարդակից ցածր (մինչև 8-10 կմ խորությունների վրա), որտեղ ջրադինամիկ շարժման պայմանները խիստ դժվարացված են:

Ջրադինամիկական միջին և ստորին գոնանների միջև սահմանների բաժանման համար գույություն ունեն քանակական ցուցանիշներ (կրիտերիաներ)՝ ըստ շերտային հոսքի ծախսի, ջրափոխանակման ժամկետների տևողության, ըստ ճնշումների փոփոխարաբերակցության տվյալների, այլեզրմներիկ մակարդակների տեղադրքի, ինչպես նաև ըստ ջրադինամիկական իրավիճակի անողության ցուցանիշների՝ ջրաքիմիական գոնալականության, ջրի «հասակի», իզոտոպային խտության, *He/Ar* հարաբերության և այլն:

Չափազանց դանդաղ ջրափոխանակման գոնայում ստորերկրյա ջրերի շարժման իրական արագությունը տարեկան չեն գերազանցում մի քանի միլիմետրից, այսինքն՝ զգացվում են երկրաբանական ժամանակշրջանում: Ստորերկրյա հոսքն իրականացվում է ծովային և օվկիանոսային իջվածքների և երկրակեղեղի խորը տեկտոնական բեկվածքների սահմանափակ ազդեցության տակ: Ավազանի չափազանց դանդաղ ջրափոխանակման գոնայում ստորերկրյա ջրերի շարժումը կատարվում է ոչ միայն ի հաշիվ ջրադինամիկ գրադիենտի, այլ նաև ապարների գրավիտացիոն խտացման, հնատեկտոնական (նեոտեկտոնական) և այլ գործոնների ազդեցության տակ:

Ինֆիլտրացիոն, էլիզիոն և ջերմաառաձգական ռեժիմի շարժումները հնարավոր են տարբեր ջրադինամիկական գոնաններում: Օրինակ, ինֆիլտրացիոն ռեժիմը կարող է դիտվել բոլոր երեք գոնաններում: Էլիզիոն ռեժիմը բնորոշ է դժվար և չափազանց դժվար ջրափոխանակման գոնանների համար: Ջերմաառաձգական ռեժիմը կարող է հանդիպել միայն չափազանց դանդաղ ջրափոխանակման գոնայում: Ջրափոխանակման արագությունը կախված է նաև ստորերկրյա ջրերի շարժման արագությունից, արտեզյան ավազանի չափերից և կոնկրետ ջրատար համալիրի սահմաններում կոլեկտորների (ծակոտինների, ձեղքերի, դատարկությունների) ծավալից: Խոշոր միջլեռնային գոգավորությունների համար հատկանշական է առավել փոքր, ոչ մեծ ինտենսիվության ջրափոխանակությունը: Առավել փոքր ինտենսիվության ջրափոխանակությունը

յուրահատուկ է պլատֆորմային տիպի արտեզյան ավագաններին, որոնք կապված չեն լեռնային համակարգերի հետ:

Զրաերկրադինամիկական գոնայականությունը ստորերկրյա ջրերի աղային, գազային, միկրոբաղադրիչային, մանրէաբանական կազմի հետ լայնորեն օգտագործում են նավքի և գազի նոր հանքավայրերի որոշման ժամանակ:

12.2.2. ԶՐԱԵՐԿՐԱԳԻՄԻՎԱՆ ԶՈՒԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արտեզյան ավագանների ուղղաձիգ ջրաերկրաքիմիական գոնալականությունը արտահայտվում է ջրերի հանքայնացման աստիճանի և քիմիական կազմի փոփոխմամբ՝ ըստ խորության: Այն սերտորեն կապված է ջրադինամիկական գոնալականության հետ, քանի որ այն գործոնները որոնցով բնորոշվում են վերջիններս, ամիջականորեն ազդում են ստորերկրյա ջրերի հանքայնացման աստիճանի և քիմիական կազմի վրա: Այդ գործոնները ստորերկրյա ջրերի քիմիական կազմի վրա առավել մեծ ազդեցություն են թողնում ինտենսիվ ջրափոխանակման գոնայում:

Դժվար և չափազանց դժվար ջրափոխանակման գոնաներում ջրաերկրադինամիկական ցուցանիշների՝ ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ծևափորման գործում, ըստ երևույթին, ունեն երկրորդական նշանակություն: Ստորերկրյա ջրերի քիմիական կազմի ծևափորման վրա, բացի ջրադինամիկ գործոնների ազդեցությունից, ազդում են նաև այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են ջրատար ապարների լիբոլոգիական առանձնահատկությունները և քիմիական կազմը, երկրաբանական կառուցվածքների հասակը և դրանց զարգացման պատմությունը, կտրվածքում հավերժական սաշցորային ապարների առկայությունը, արտեզյան ավագանի սահմաններում սեղմիմենտացիոն ջրերի՝ ինֆիլտրացիոն ջրերով փոխանակման գործընթացների զարգացման աստիճանը և տարրեր ծագումնաբանական ջրերի իրար խառնվելը:

Ազատ (ակտիվ, ինտենսիվ) ջրափոխանակման գոնային բնորոշ են օրիդացնող պրոցեսները: Ջրի ջերմաստիճանը այստեղ մեծ չէ՝ մինչև 25°C , ջրերը սովորաբար քաղցրահամ և աղահամ են, սակայն կտրվածքում աղատար նատվածքների առկայության դեպքում հանդիպում են աղի ջրեր և աղաջրեր: Տափաստանային, կիսանապատային և անապա-

տային պայմաններում ցամաքային (կրնտինենտալ) աղակալման գործնքացների ժամանակ վերին ջրադինամիկ զոնայում ձևավորվում են խայտարդես (քաղցրահամից մինչև աղաջրեր) կազմի և հանքայնացման աստիճանի ջրեր:

Դանդաղ ջրափոխանակման զոնային բնորոշ են օրսիդացումից դեպի վերականգնում ընթացող գրդմթացները (10-ից մինչև 40°C և ավելի) ջերմաստիճանային ջրերի առկայությամբ, տարբեր քիմիական կազմի (գերակշռում են սովֆատ և քլորիդ իոնները), հանքայնացումը մինչև 50գ/լ և ավելի (հալոգեն նստվածքների առկայության դեպքում) հասնող ջրերում:

Զափազանց դանդաղ ջրափոխանակման զոնան բնութագրվում է վերականգնման միջավայրով: Ջրի ջերմաստիճանը տատանվում է 40-150°C և ավելի սահմաններում, դրանք, ըստ կազմի, գերազանցապես քլորիդ-նատրիումային, քլորիդ-կալցիումային տիպի են՝ (50-500գ/լ և ավելի հանքայնացման աստիճանով (հալոգեն նստվածքների հզոր հաստվածքով ավազաններ):

Այսպիսով, խորացմանը և ջրափոխանակման ինտենսիվության փոքրացմանը զուգընթաց օրսիդացման իրավիճակը փոխարինվում է վերականգնողականով, մեծանում է ստորերկրյա ջրերի հանքայնացումը, փոփոխվում է քիմիական կազմը հիդրոկարբոնատայինից սովֆատայինի, սոլֆատայինից՝ քլորիդայինի: Սակայն, ջրաքիմիական զոնալականությունը, վերը շարադրված ընդհանուր տեսքով ներկայացրածը, չի կարելի օգտագործել ջրաերկրաբանական քարտեզների և կտրվածքների կազմնամատանական ժամանակ, քանի որ ջրաքիմիական զոնաների սահմանների տարանջատման համար բացակայում են կոնկրետ ցուցանիշները:

Ջրաքիմիական զոնաների տարանջատման համար որպես կարևոր ցուցանիշ (Ի. Կ. Զայցև, Ն. Ի. Տոլստիխին, Մ. Ս. Գուրևիչ) ընդունել են ստորերկրյա ջրերի հանքայնացման աստիճանը: Համաձայն վերջիններիս՝ արտեզյան ավազանների կտրվածքում առանձնացնում են չորս ջրաքիմիական զոնաներ [33].

1. զոնա A - քաղցրահամ ջրեր 1գ/լ-ից փոքր հանքայնացումով
2. զոնա B - աղահամ ջրեր 1-ից մինչև 10գ/լ հանքայնացումով
3. զոնա B - աղի ջրեր 10-ից մինչև 50գ/լ հանքայնացումով
4. զոնա Γ - աղաջրեր 50գ/լ-ից ավելի հանքայնացումով:

Ըստ նշված հեղինակների՝ ջրաքիմիական գոնան իրենից ներկայացնում է արտեզյան ավազանի կտրվածքի մի մասը, որը, ըստ ջրաքիմիական կառուցվածքի, համեմատաբար համաստում է, դրա սահմաններում ջրի հանքայնացումը և քիմիական կազմը փոփոխվում են համեմատաբար փոքր ինտերվալներում:

Հարկ է նշել, որ, ինչպես վերը նշվեց, այստեղ ևս ջրաքիմիական գոնաների անջատումը և դրանց միջև սահմանների անցկացումը հանդիսանում է մոտավոր, քանի որ ստորերկրյա ջրերի հանքայնացումը և քիմիական կազմն ըստ խորության փոփոխվում է աստիճանաբար և ոչ հավասարաչափ:

Կախված ավազանների երկրաբանակառուցվածքային կազմությունից և ջրադիմամիկ պայմաններից վերջիններիս կտրվածքում կարող են տարածված լինել միայն A գոնան, A + B գոնանները, A + B + C գոնանները և A + B + B+C գոնանները: Ընդ որում, հավերժական սառցույթի մարզերում A գոնայի և երբեմն նաև B գոնայի ջրատար հորիզոնները և համալիրները հաճախ գտնվում են սառցված վիճակում:

Ա գոնայի ջրերի քիմիական կազմը հիմնականում հիդրոկարբոնատ կալցիումային են: Այն քաղցրահամ ջրերով առավել լայն տարածում ունի հավելուրդային խոնավության կլիմայական գոտում:

Ա գոնան ընդգրկում է գրունտային ջրերը և վերին արտեզյան ջրատար հորիզոնները, որոշ տեղերում մինչև 1000 մ խորությունը և կապված է ինտենսիվ ջրափոխանակման ջրադիմամիկական գոնայի հետ: Ոչ բավարար խոնավության գոտում արտեզյան ջրատար հորիզոններում քաղցրահամ ջրերը բացակայում են և հանդիպում են միայն ոսպնյակների ձևով, երբեմն խոշոր՝ գրունտային աղի ջրերի վրա «լողացող» (տե՛ս գլ. XI. 4, 11.3.6.3.):

Արտեզյան ավազաններում B ջրաքիմիական գոնան լայն տարածում ունի: Դրա հաստությունը չափվում է հարյուրավոր և նույնիսկ հազարավոր մետրերով և կապված է դանդաղ ջրափոխանակման ջրադիմամիկական գոնայի հետ: Աղահամ ջրերը հիդրոկարբոնատային կազմի են՝ գերազանցապես նատրիումային: Որոշ աղահամ ջրեր օգտագործվում են խմելու և ջրարդիացման նպատակներով:

Արտեզյան ավազաններում բավական լայն տարածում ունի նաև B ջրաքիմիական գոնան: Դրա հաստությունը չափվում է հազարավոր մետրերով:

Γ ρωαρχήμβιακαն զոնայի աղաջրերը բացառապես քլորիդային են: Դրանց կատիոնային կազմում գերակշռում են քլորիդ-նատրիումային, իսկ առավել բարձր հանքայնացման դեպքում՝ քլորիդ-կալցիումային և հազվագյուտ՝ քլորիդ-մագնեզիումային քիմիական տիպի ջրերը: Աղաջրերն ունեն ոչ միայն բուժիչ, այլ գերազանցապես արդյունաբերական նշանակություն, քանի որ այն հարատացված է յորով, բրոնվ, բորով և ուրիշ միկրոբաղադրիչներով: Վերջին երկու զոնաների (B և Γ) ջրերը տեղադրված են չափազանց դանդաղ ջրափոխանակման զոնայում:

Հարկ է նշել, որ ավազանների կտրվածքների վերին նաևերում գիպսերի, անհիդրիդների, աղերի, իսկ ավելի խորը՝ լավ ջրաբափանց ապարների առկայության դեպքում արտեզյան ավազաններում կարող է տեղի ունենալ, այսպես կոչված, ջրարհիմիական ինվերսիա (շրջում, հակադարձում), այսինքն՝ ըստ խորության ջրերի հանքայնացման և քիմիական կազմի օրինաչափ փոփոխություններից անբնականոնության անցում:

Արտեզյան ավազանների ստորերկրյա ջրերի քիմիական կազմը պայմանավորված է ջրատար և ջրամերժ ապարների կազմով, սննան և բեռնաբափման մարզերի միջև եղած հարաբերակցությամբ, ջրադինամիկական և ջրարհիմիական զոնալականությամբ, երկրաբանակառուցվածքային և ֆիզիկաաշխարհագրական գործուներով, ֆիզիկաարհիմիական, կենսաքիմիական և ռադիոակտիվ գործընթացներով, որոնք ընթանում են երկրակենսում:

Չղիտարկելով արտեզյան ջրերի քիմիական կազմի ձևավորմանն առնչվող բոլոր գործուները՝ միայն նշենք, որ երբ սննան մարզի դիրքը նշանակալից գերակշռում է բեռնաբափման մարզին, ապա արտեզյան ավազանում կատարվում է ակտիվ ջրափոխանակում, ուստի նմանատիպ ավազաններում գերակշռող տարածում ունեն քաղցրահամ ջրերը: Խոչոր արտեզյան ավազաններում, որոնք ունեն ոչ մեծ մակերեսով սննան մարզ և մեծ մակերեսի վրա տարածում ունեցող ճնշման մարզ, զգալի տարածում ունեն հանքայնացված ջրերը:

Բոլոր տիպերի և չափերի արտեզյան ավազաններում, երբ դրանց ուղղաձիգ կտրվածքներում բացակայում են գիպսերը, անհիդրիդները և աղերը, ինչպես նաև խոր տեղադրված և ավազանների սննան մարզերում երկրի մակերեսույթ դուրս եկած բարձր բափանցելիության ապարները, ապա հիդրոկարբոնատային կազմի քաղցրահամ ջրերը սովորա-

բար տեղադրված են լինում ինտենսիվ ջրափոխանակման գոնայում, հիդրոկարբոնատ-սուլֆատային, սոլֆատային և սոլֆատ-քլորիդային կազմի հանքայնացված ջրերը՝ դանդաղ ջրափոխանակման գոնայում, քլորնատրիում-կալցիումային տիպի բարձր հանքայնացված ջրերը և աղաջրերը՝ չափազանց դանդաղ ջրափոխանակման գոնայում:

12.2.3. ՋՐԱԵՐԿՐԱԶԵՐՄԱՅԻՆ ԶՈՒԱՎԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ջրաերկրաջերմային զունալականությունն արտահայտում է երկրակեղինի վրա արտաքին և խորքային գործոնների ազդեցությունների արդյունքում ստորերկրյա ջրերի ջերմաստիճանի փոփոխությունները, ուղղաձիգ կտրվածքում: Երկրակեղինի վերին հորիզոնների ջերմաստիճանային ռեժիմում արտաքին գործոնների շարքում մեծ դեր են խաղում կլիմայական պայմանները: Կլիմայական պայմանների տատանումների ազդեցության տակ բևեռային շրջաններում և դրանց հարակից բարձրադիր լայնություններում պարբերաբար տեղի են ունենում դարավոր սառեցում և տաքացում և որպես հետևանք, երկրակեղինի վերին մասերում սառեցման և հալեցման պարբերաբար խորացում:

Երկրակեղինի խորը հորիզոններում դարավոր բացասական ջերմաստիճանի, ներքափանցման օրինակ կապված սառցակալման էպիխայում կլիմայի տատանումների հետ, կարող է հանդիսանալ բազմամյա (հավերժական) սառածության զոնան, որի հաստությունը հյուսիսային կիսագնդում կազմում է մինչև 1.5 կմ և ավելի և մինչև 4 կմ՝ հարավայինում:

Հասարակածային և մերձհասարակածային լայնություններում, հակառակ՝ երկրակեղևում տեղի է ունենում դարավոր տաքացման խորացում: Երկրակեղևում ջերմաստիճանային տատանումների բափանցման խորությունը կախված է երկրի մակերևույթի վրա ջերմաստիճանային տատանումների ամպլիտուդայից և տատանումների ժամանակահատվածների տևողությունից:

Խորքային գործոնների դերը, կապված Երկրի ներքին ջերմային հոսանքների ազդեցության հետ, իր արտահայտությունն է գտնում երկրաջերմային գրադիենտի մեծություններում: Երկրաջերմային գրադիենտի ամենափոքր մեծությունները տեղի են ունենում պլատֆորմաների սահմաններում և հատկապես պլատֆորմային բյուրեղային հիմքի երկ-

րի մակերևույթ դուրս եկած ելքերի սահմաններում: Երկրաջերմային գրաղիննտի ամենամեծ արժեքները յուրահասուկ են երիտասարդ ծալքավոր նարզերին (Կավկազ, Կարպատներ, Պամիր և այլն) և հատկապես ժամանակակից հրաբխականության գործունեության մարզերին (Կամչատկա): Այդ տեղերի հաճար շատ մեծ է տեկտոնական խզվածքի դերը՝ որպես ջերմային հաղորդիչների:

Արտաքին և ներքին գործուների փոխազդեցության արդյունքում ձևավորվում են արտեզյան ավազանների ստորերկրյա ջրերի անշափ տարրեր ջերմաստիճանները: Արտեզյան ավազանների մերձմակերևութային նասերում, որոնք տարածված են հավերժական սաղոցութային տարածքներում, ստորերկրյա ջրերը հաճախ ունեն բացասական ջերմաստիճան: Զրատար հորիզոնների սառեցումը ուղեկցվում է ջրերի բաժանման՝ պինդ (ստորերկրյա սաղոցոյթներ) և բասացական ջերմաստիճանով հեղուկ (կրիոպեզներ) ֆազաներով: Կրիոպեզները աղային ջրեր են և աղաջրերը, որոնք ընդերքում չեն սառչում մինչև -12°C ջերմաստիճանային պայմաններում (Ն. Ի. Տոլստիխին, Վ. Ա. Կրիյախին):

Ջերմաստիճանա-բացասական ոլորտի (սառույցներ և կրիպոգեններ), ինչպես նաև դրանցից հարավ ընկած ջրերի տակ տեղադրված է հեղուկ ֆազային ջրերի ոլորտը, որը ստորաբաժանվում է հետևյալ զուանների (կտրվածքում)

- 1) սառը և գոլ ջրեր – ջերմաստիճանը $0\text{-}35^{\circ}\text{C}$
- 2) գոլ և շատ տաք ջրեր (ջերմաջրեր) – ջերմաստիճանը $35\text{-}100^{\circ}\text{C}$
- 3) բացառիկ տաք եռացող (հիպերբերմալ) ջրեր – ջերմաստիճանը $100\text{-}500^{\circ}\text{C}$

Բոլոր հիմքերը կան ասելու, որ խորը տեղադրված արտեզյան ջրատար հորիզոններում գտնվում են 150°C ջերմաստիճանը գերազանցող ջրեր:

Երկրակեղևի առավել խորը նասերում հնարավոր է, որ բացահայտվեն ջրի տաք գոլորշիներ: Այդ երրորդ ոլորտի ջրերի ջերմաստիճանը մոտավորապես 500-ից մինչև 1200°C է: Ենթադրում են, որ էլ ավելի մեծ խորությունների վրա և առավել բարձր ջերմաստիճաններում գոյություն ունի չորրորդ ոլորտը՝ ջրի դիսոցման (տարրաբաժանման) ջրածնի և հիդրօքսիդի ոլորտը:

Բնեռայինց դեպի հասարակածային տարածքները դիտվում է արտեզյան ջրերի ընդհանուր տաքացում: Ակզրում վերանում է ջերմաստի-

ճանա-բացասական ոլորտի ջրերը, հետո աստիճանաբար՝ սառը ջրերի զոնան: Եվ վերջապես հասարակածային արտեզյան ավազանների վերին ջրատար հորիզոններում գերակշռող են դառնում գոլ ջրերը, իսկ ոչ մեծ խորությունների վրա՝ երկրորդ ոլորտի տաք ջրերը:

Այսպիսով, արտեզյան ավազաններում դիտվում է ջերմաստիճանի լայնական և խորքային (ուղղաձիգ) գոնալականություն, որն արտահայտվում է ըստ խորության ջերմաստիճանի մշտական բարձրացմանք: Բացադիկ դեպքերում արտեզյան ավազաններում դիտվում է ջերմաստիճանային անբնականություն (անոնմալիաներ), երբ սառը ջերմաստիճանի ջրերի վրա տեղադրված են գոլ ջրերը: Նման անբնականությունները տարաբնույթ են և յուրաքանչյուր անգամ պետք է մանրազնին ուսումնասիրվեն:

Բնութագրված բոլոր ձևերի գոնալականությունների ձևավորումը տեղի է ունենում երկու հակադիր գործունեությունների երկարատև փոխազդեցության արդյունքում.

1) մակերևութային՝ ներկայացված ֆիզիկաաշխարհագրական, ֆիզիկաքիմիական, կենսաբանական և այլ էկզոգեն համալիր գործոններով և ինֆիլտրացիոն ջրերի երկրի ընդերք ներդրման, ապարներից քիմիական տարրերի դրւու հանման հետ կապված գործընթացներով, ցածր ջերմաստիճանով և ճնշումով,

2) խորքային՝ ներկայացված ենրոգեն գործընթացներով:

Զննալականությունը, ընդհանրապես, պայմանավորված է ֆիզիկաաշխարհագրական, երկրաբանակառուցվածքային, ջերմադինամիկական և այլ գործոններով:

Տարբեր տիպի ուղղաձիգ գոնալականությունները իրար հետ կապված են: Եվ՝ ջրաերկրաքիմիական, և՝ ջրաերկրաջերմային գոնաների ցուցանիշները ինչ-որ չափով համապատասխանում են ջրաերկրադինամիկական գոնալականությանը և, շատ հաճախ համընկնում են դրա սահմանների հետ՝ հատկապես վերին:

12.3. ԱՐՏԵՉՅԱՆ ՋՐԵՐԻ ՌԵԺԻՄԻ ԱՌԱՋՎԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտեզյան ջրատար հորիզոնների բնորոշ առանձնահատկություններից մեկը առաձգական ռեժիմի առկայությունն է: Համաձայն Վ. Ի.

Ծելկաշովի՝ դա այնպիսի ռեժիմ է, որի դեպքում ջրատար հորիզոնի վարքի վրա շահագործման գործընթացում էապես ներգործում են ապարների և դրանց հագեցնող հեղուկների (նավք և ջուր) առաձգականությունները:

Եթե արտեզյան ջրատար հորիզոններն ունենային իդեալական կոչտ միջավայր և լցված լինեին անմածուցիկ և անսեղմելի հեղուկով, ապա ջրառի (ջրհանճան) արդյունքում ջրի մակարդակը հորատանցքերում և սննան մարզերում կիշներ ակնթարքորեն, սակայն իրականության մեջ այն չի պատահում: Սովորաբար այդ ջրերի հորատանցքով ջրառման դեպքում, դրանց ազդեցությունը տարածվում է համեմատաբար ոչ մեծ հեռավորությունների վրա:

Արտեզյան ջրատար հորիզոնում առաձգական ռեժիմը կարող է դրսւորվել մի շարք բնական և արհեստական պատճառների ազդեցությամբ: Բնական պատճառների շարքին դասվում են մթնոլորտային ճնշման և սննան մարզում գրունտային ջրերի մակարդակների փոփոխությունները, ծովային մակրներացությունները և տեղատվությունները, երկրաշարժերը, արհեստականին՝ հորատանցքով շահագործումը, դրանց աշխատանքի ռեժիմի փոփոխականությունը, ջրատար հորիզոնի առաստաղի վրա արտաքին քեննվածության փոփոխությունը:

Առաձգական ռեժիմի պայմաններով օժտված ջրատար հորիզոնի շահագործման դեպքում դրանում ի հայտ են գալիս իրար հետ սերտ կապի մեջ գտնվող երկու բնորոշ երևույթներ՝¹⁾ 1) նավթագազատար շերտի շահագործումը սկսելուց հետո և դրանց հումքի հանույթի ռիթմի փոխանցումից հետո շերտային ճնշման երկարատև տատանման գործընթացները, 2) շերտում ճնշման իջեցում դրանց հեղուկի առաձգական պաշարի կորզման ժամանակ և հակառակը՝ շերտում հեղուկի առաձգական պաշարի կուտակում, երբ դրանում բարձրանում է ճնշումը:

Ընդհանուր առմամբ, արտեզյան ջրերի ռեսուրսների, դրանց ֆիզիկական հատկությունների և քիմիական կազմի փոփոխությունների գործընթացները բնական և արհեստական գործունների ազդեցության տակ, այսինքն՝ դրանց ռեժիմը թույլ է ուսումնասիրված: Որոշ տեղեկատվություններ կան միայն ոչ խորը տեղադրված արտեզյան ջրատար հորիզոնների ջրերի ռեժիմի վերաբերյալ: Զրերի ռեժիմը նման հորիզոններում ստվորաբար սերտ կապի մեջ է գրունտային ջրերի ռեժիմի, մակերևութային հոսքերի և ջրավազանների, ինչպես նաև օդերևութաբանական

գործոնների ռեժիմի հետ: Ընդ որում, որքան բարձր է արտեզյան ջրատար հորիզոնների մեկուսացվածության աստիճանը մակերևույթից, այնքան թույլ են նշված կապերը:

Վ.Ս.Կավալեսկին ոչ խորը տեղադրված արտեզյան ջրերի ռեժիմի առանձնահատկությունները բնորոշող հիմնական գործոնների շարքին է դասում՝

- 1) սննան մարզի կլիմայական առանձնահատկությունները,
- 2) երկրի մակերևույթից ջրատար հորիզոնի մեկուսացվածության աստիճանը,
- 3) ջրատար հորիզոնի դրենացման աստիճանը, որը բնորոշում է ստորերկրյա ջրերի ջրափոխանակման ինտենսիվությունը:

Արտեզյան ջրերի մեկուսացված լինելը գրունտային և մակերևութային ջրերից, ինչպես նաև սննան մարզերի հեռու տեղադրումը դրանց համար ապահովում է առավել կայուն ռեժիմ:

12.4. ՊԻԵԶՈՒԶՈՀԻՊՍԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱՂՄՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ

Պիեզոիզոհիպսերի քարտեզները պատկերում են ճնշումային ջրատար հորիզոնի պիեզոմետրիական մակերևույթների բացարձակ նիշերը իզոգծերի տեսքով:

Պիեզոիզոհիպսերի քարտեզները, ինչպես և ռելիեֆի իզոգծերի ու հիդրոիզոգծերի քարտեզները (տես զլ. XI, կետ 11.3.2) կազմվում են միջարկման (ինտերպոլյացիայի) մերորդով: Սակայն պիեզոիզոհիպսերի քարտեզների կազմման մեթոդիկայում գոյություն ունեն որոշ առանձնահատկություններ՝ պայմանավորված արտեզյան ջրերի տեղադրման պայմաններով: Այսպես, պիեզոիզոհիպսերի քարտեզների կազմման ժամանակ թույլատրելի է տարբեր ժամանակներում չափված պիեզոմետրիկական կայունացած մակարդակների օգտագործումը: Դա պայմանավորված է նրանով, որ նույնիսկ ոչ խորը տեղադրված արտեզյան ջրատար հորիզոնները, կապված ճնշման տարածման մարզում ջրամերժ առաստաղի առկայությունից, պիեզոմետրիկական մակարդակներն ըստ ժամանակի օրենսութարանական գործուների ազբեցության տակ էական փոփոխություններ չեն կրում: Բացի այդ՝ արտեզյան ջրատար հորիզոնները սովորաբար հիդրավլիկական կապի մեջ չեն ոչ խորը

տեղադրված ջրատար հորիզոնների (կամ թույլ կապի մեջ են), գետացրերի, լճերի, ճահիճների և այլ տիպի մակերևութային ջրհոսքերի և ջրավազանների հետ: Դրանք տալիս են հիմք միջարկման ժամանակ օգտագործել գետահովիտների, լճերի, ջրավազանների, ճահիճների և այլ տարբեր ափերում կամ մերձակա տարածքներում գտնվող արտեգյան ջրերի դիտարկային տվյալները: Երբեմն պիեզոիզոհիպսերի քարտեզների հետ:

Պիեզոիզոհիպսերի քարտեզը անպայման ուղեկցվում է ջրաերկրաբանական կտրվածքով: Այդ կարգի կտրվածքների վրա ցոյց են տրվում ստրատիգրաֆիական սահմանները, ապարների լիքոլոգիական առանձնահատկությունները, ջրամերժ շերտերը, ապարների ջրաթափանցելիությունը:

Պիեզոիզոհիպսերի քարտեզի հիմքի վրա կարելի է որոշել ջրաերկրաբանական մի քանի կարևոր ցուցանիշներ և սահմանել ջրատար հորիզոնի տեղադրման և կառուցվածքի առանձնահատկությունները: Այսպես, պիեզոիզոհիպսերի առավելագույն նիշերը բնորոշ են սննան և ճնշման տարածման մարգերի համար, նվազագույնները՝ բեռնաթափման մարգի: Ըստ պիեզոիզոհիպսերի քարտեզի՝ հեշտությամբ որոշվում են արտեզյան հոսքի շարժման ուղղությունը (եթե պիեզոիզոհիպսերի անկման ուղղությամբ ուղղահայաց գիծ է անցկացվում), սովորաբար այն ցոյց է տրվում սլաքների տեսքով, պիեզոմետրիկական թերությունը (երկու կետերում պիեզոմետրիկ մակարդակների տարբերությունը հարաբերելով կետերի միջև եղած հեռավորությանը), կայունացած (հաստատված) պիեզոմետրիկական մակարդակը ցանկացած կետում (ռելիեֆի հզոգետերի և պիեզոիզոհիպսերի նիշերի տարբերությամբ տվյալ կետում):

Ըստ պիեզոիզոհիպսերի խտացման կամ նոսրացման՝ կարելի է գաղափար կազմել ջրատար հորիզոնի հզորության կամ ջրաթափանցելիության մեծության փոփոխությունների մասին: Դարսի հայտնի բանաձևի (տես գլ. IX) հանաձայն պիեզոմետրիկական թերությունը հակադարձ կախվածության մեջ է ֆիլտրացիայի գործակցի, հոսքի լայնության և հաստության հետ: Հետևապես պիեզոիզոհիպսերի խտացումը (հոսքի թերության մեծացումը) սովորաբար վկայում է հոսքի հզորության և լայնության փոքրացման կամ էլ ապարների ջրաթափանցելիության

փոքրացման մասին: Պիեզոիզոհիպսերի քարտեզի վրա ջրատար հորիզոնի առաստաղի հզոգծերի նիշերի առկայության դեպքում ցանկացած կետում հեշտությամբ կարելի է որոշել ճնշման մեծությունը ջրատար հորիզոնի առաստաղի վրա:

Տեղանքի ռելիեֆից կախված պիեզոմետրիկական մակարդակը կարող է տեղադրված լինել երկրի մակերևույթից բարձր կամ ցածր: Ճնշման տարածման մարզում պիեզոմետրիկական մակարդակը սովորաբար երկրի մակերևույթից բարձր դիտվում է գետահովվիտներում, խոչոր ձորակներում (հեղեղատներում) և այլ ցածրացումներում: Նման տեղամասերում հորատանցքի միջոցով ջրատար հորիզոնի բացման (հորատման) դեպքում ջուրը ազատ կերպով կրաքիվ դրանցից կամ կշատրվանի: Պիեզոիզոհիպսերի քարտեզի առկայության դեպքում համատեղված ռելիեֆի հզոգծերի հետ կարելի է գետեղել արտեզյան ջրերի ինքնարափման տեղամասերը, այսինքն՝ այն մակերեսները, որոնց վրա պիեզոմետրիկական մակարդակների բացարձակ նիշերը բարձր են կանգնած երկրի մակերևույթի հիպսոմետրիկ նիշերից:

Դրական ճնշում են անվանում երբ պիեզոմետրիկական մակարդակը բարձր է երկրի մակերևույթից: Իսկ եթե այն չի հասնում երկրի մակերևույթ, անվանում են *բացասական ճնշում*:

Ծատ հաճախ արտեզյան ջրերը հորատանցքերում բարձրանում են հորատանցքաբերաններից (երկրի մակերևույթին հորատանցքի հարած սկզբնամաս) 30 մ և նույնիսկ 150 մ և ավելի բարձր: Սակայն արտեզյան ջրերի պիեզոմետրիկական մակարդակները մեծամասամբ տեղադրված են երկրի մակերևույթից ցածր և դրանց շահագործման ժամանակ հարկ է լինում հորատանցքերը կահավորել պոմպերով:

Հարկ է նշել, որ պիեզոմետրիկական մակարդակների ստորաբաժանումը դրականի և բացասականի պայմանական է: Երբ արտեզյան ջրատար հորիզոնից ջրհան հորատանցքերի (շահագործական) համակարգի միջոցով երկարատև ջուր է Վերցվում, բերում է դրական պիեզոմակարդակի իշեցմանը երկրի մակերևույթից ներքի: Այսպիսով, արհեստական ճանապարհով կարելի է հասնել դրական պիեզոմետրիկական մակարդակի փոխարինմանը բացասականի:

Զափափոր շահագործման դեպքում արտեզյան ջրերի մակարդակը, ի տարբերություն գրունտային ջրերի, տևական ժամանակի ընթացքում էական փոփոխությունների չի ենթարկվում: Սակայն չիմնավորված և

անհաշիվ հորատանցքերով արտեզյան ջրերի շահագործումը (ինչպես Արարատյան հարթավայրն է) հանգեցնում է ամենախոշոր արտեզյան ավազաններում անգամ դրանց ռեժիմի էական վոփոխության: Բավական է նշել, որ Վերջին հինգ տասնամյակներում արտեզյան ջրերի պիեզոմետրիկ մակարդակը Լոնդոնի շրջակայքում իջել է 100-110 մ և ավելի, Փարիզում՝ 120-130 մ և ավելի, Կիևի տարածքում՝ 60-70 մ և ավելի, իսկ Արարատյան հարթավայրում վերջին երկու տասնամյակներում՝ 8-10 մ և ավելի:

ԳԼՈՒԽ XIII

ՃԵՂՔԱՎՈՐՎԱԾ ԵՎ ԿԱՐՍՏԱՎՈՐՎԱԾ ԱՊԱՐՆԵՐԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ: ԽՈՐՁԱՅԻՆ ԶՐԵՐ

Ապարների միներալային կմախրում ազատ տարածությունների ծագման և կառուցվածքների տարբեր լինելու հանգամանքից ելնելով՝ ճեղքային և ճեղքա-կարստային ջրերն առանձնացվում են որպես ստորերկրյա ջրերի առանձին տիպեր, որոնք իրենց տեղադրման պայմաններով և իիդրոդիմամիկ հատկանիշներով կարող են դասվել գրունտային (ոչ ճնշումային) կամ ճնշումային ջրերի տիպերին:

Ճեղքավորված և կարստավորված ապարներում ստորերկրյա ջրերը բնուրագրվում են ձևավորման, տարածման, շարժման և կուտակման յուրահատուկ առանձնահատկություններով:

13.1. ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՊԱՐՆԵՐԻ ՃԵՂՔԱՎՈՐՎԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ապարներում ճեղքային երևակումները, որոնք բնորոշ են իիմնականում բյուրեղային, փոխակերպային և հոծ նստվածքային ապարներին, կարող են պայմանավորված լինել տեկտոնական գործընթացներով, հողմնահարումով, տարրալուծումով, լուծումով և այլ գործուներով:

Հստ ծագման ապարներում առանձնացնում են ճեղքերի առաջացման երեք հիմնական տիպեր՝

- 1) լիթոգենետիկական (քարածագումնարանական)
- 2) հողմնահարման
- 3) տեկտոնական:

Լիթոգենետիկական ճեղքերն առաջանում են բուն ապարի առաջացման գործընթացում: Սովորաբար այդպիսի ճեղքերը հանդես են զալիս ապարի ամրող հաստվածքով: Չնայած ճեղքերը ապարներում հանդես են զալիս խիտ ցանցով, սակայն դրանք ունեն շատ աննշան չափեր: Այդպիսի ապարների, եթե չեն ենթարկվել լեռնազոյացման, էպերոգեն (ցամաքաստեղծ) շարժումների ազդեցություններին կամ օդերևութաբանական ազդակների ազդեցություններին, ճեղքերը շատ հաճախ աննկատելի են անգեն աշքով, և այդպիսի ճեղքերի ջրառատությունը շատ փոքր է:

Նման ծագումնաբանական ճեղքերը սովորաբար անցնում են ապարաշերտի ամբողջ զանգվածով: Այսպես, օրինակ՝ բազալտներում, որոնք ունեն տիպիկ ուղղաձիգ սյունաձև կառուցվածք, շատ հաճախ դիտվում են բազմաթիվ ուղղաձիգ ճեղքեր, որոնք մակերևույթից զնում են դեպի խորքը (օրինակ՝ Գառնիի կիրճը): Կարևոր է նշել նաև, որ ինչպես բազալտներում (հատկապես իին լավային առաջացումներում), այնպես էլ մի շարք այլ տարատեսակ ապարներում (օրինակ՝ ավազաքարերում, կոնգլոմերատներում) ջրի շարժումն իրականացվում է ճեղքեր և ծակոտիներ համակարգով, այսինքն՝ լրանք հանդիսանում են ճեղքա-ծակոտինային ջրերի կուտակիչներ (կողեկտորներ):

Հողմնահարման ճեղքերն առաջանում են էկզոգեն (արտածին) գործոնների (ջերմաստիճան, ջուր, քիմիական և մեխանիկական հողմահարում) ազդեցության արդյունքում: Ճեղքերի առաջացումն առավել ինտենսիվ է ընթանում այնպիսի տեղամասերի ապարներում, որոնք ունեն լիքոգենետիկական և տեկտոնական ժառանգության ճեղքեր: Հողմնահարման ճեղքերի տարածման խորությունը սովորաբար հասնում է մինչև 30-50 մ և երբեմն 100 մ:

Տեկտոնական ճեղքերը առաջանում են երկրակեղի ուղղաձիգ և հորիզոնական շարժումների արդյունքում: Տեկտոնական շարժումները թարմացնում և ընդարձակում են լիքոգենետիկական մասն ճեղքերի համակարգը, ինչպես նաև այդ ուղղություններով առաջանալում են ճեղքերի նոր համակարգեր: Երբեմն ձևափորվում են տասնյակ կիլոմետրերի հասնող ճեղքեր-խզվածքներ: Տեկտոնապես ակտիվ գոնաներում ապարների զանգվածներում խորը խորասուզված ճեղքա-խզվածքները, որոնք հասնում են մի քանի կիլոմետրերի համեմատաբար քիչ են հանդիպում: Նշանակալից տարածում ունեն տեկտոնական խոշոր խախտումներն ու բեկվածքները, որոնք սահմանափակվում են առաջին մի քանի հարյուր մետրերում:

Բոլոր տիպի ճեղքերը կարող են լինել *բաց* և *փակ*, այսինքն՝ չլցված կամ լցված ավազային-կավային, միներալային առաջացումներով: Ապարներում տարրեր տիպի ճեղքավորվածությունները ստեղծում են բավականին բարդ համակարգ ստորերկրյա ջրերի կուտակման, տարածման և շարժման համար:

Ապարների ճեղքավորվածության ջրաերկրաբանական ուսումնամիրությունների ժամանակ, բացի ճեղքերի ծագման, կառուցվածքային

առանձնահատկությունների, մորֆոլոգիայի և ուղղությունների պարզաբնումից, տրվում են նաև ապարների ջրատարությունը բնութագրող պարամետրերի քանակական գնահատականները։ Այդիսի պարամետրերի շարքին են դասվում՝ 1) ճեղքերի կողմնորոշվածությունը, 2) ճեղքերի բացվածքը, 3) ճեղքային դատարկության գործակիցը (ապարի բացվածության աստիճանը):

Ապարի բլոկում **ճեղքերի կողմնորոշվածությունը** կախված է տեկտոնական լարվածություններից, որոնց ազդեցության տակ տեղի է ունենում ապարի ճեղքավորումը։ Սովորաբար քառսային ուղղվածության մասը ճեղքային ցանցում առանձնացվում են մի քանի գլխավոր համակարգեր (մերձգործական ճեղքերի համակարգ): Այդ համակարգի ճեղքերը, իրար հետ հատվելով, ձևավորում են ջրատարների ցանց։ Այդպիսի համակարգերը լինում են երկուսը-երեքը։ Ճեղքերի ուղղվածությունը որոշվում է ապարի տարրեր բլոկների ջրատարությունը տարածության մեջ՝ ըստ ճեղքերի գլխավոր համակարգերի։

Ճեղքերի բացվածքը (S)՝ դրանց պատերի միջև հեռավորությունը։ Այն տարրեր ապարներում նշանակալի փոփոխվում է։ Ըստ մեծության՝ ճեղքերը բաժանվում են մակրո ($S > 0.1\text{մմ}$) և միկրոճեղքերի ($S < 0.1\text{մմ}$)։ Բացի այդ՝ մեծ դեր է խաղում միներալներով ճեղքի լցվածության կամ դրա բացակայության առկայությունը։ **Ճեղքային դաւարկության** գործակիցը ճեղքավորվածության գլխավոր պարամետրն է, ապարի բացվածության (ջարդոտվածության) քանակական գնահատման ժամանակ։

13.2. ՃԵՂՔԱՎՈՐՎԱԾ ԱՊԱՐՆԵՐԻ ԶՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ճեղքային ջրերը մագմատիկ, փոխակերպային և նատվածքային հող ապարների ճեղքերում տեղադրված և շրջանավող ստորերկրյա ջրեր են։

Ստորերկրյա ջրերը ճեղքային արտաժայքային, փոխակերպային, ուժեղ լիտիֆիկացված (քարացած) նատվածքային և հրաբխային ապարներում ազատ (գրավիտացիոն) ջրերի հիմնական տիպ է, որոնց ֆիլտրացիոն և տարողունակության հատկությունները որոշվում են տարրեր ծագումնաբանական ճեղքերի (ճեղքավորվածության) գարգացվածությամբ։

Կախված ճեղքավորվածության ինտենսիվությունից, ճեղքերի բացվածությունից, լցանյութի առկայությունից կամ բացակայությունից (Երկրորդային միներալներ կամ փուլս նյութեր)՝ ճեղքավորված ապարների (նույնիսկ նույն կազմի) ջրաբափանցելիությունը կարող է փոփոխվել գործնականում $0\text{-}10^2 \text{մ/օր}$ և ավելի: Ծեղքային ապարների գրավիտացիոն ջրատարողունակությունը (քանակապես արտահայտվում է ջրատվության գործակցով), ի տարրերություն ծակոտինային միջավայրի, միշտ առավել փոքր է և որպես կանոն, չի գերազանցում 1-5% (0.01-0.05):

Ծեղքավորված ապարներում ստորերկրյա ջրերի շարժումը ինչպես ցույց են տվել բազմաթիվ փորձեր, ենթարկվում է ֆիլտրացիայի գծային օրենքին: Դա սովորաբար բացատրվում է ճեղքերի ոչ մեծ լայնությամբ, ինչպես նաև նրանով, որ համեմատարար առավել լայն ճեղքերը մեծ մասամբ այս կամ այն չափով լցված են ավագային-կավային կամ այլ նյութերով: Նույնիսկ խոշոր բաց ճեղքերում և անցքերում, որոնք իրար հետ կապված են բարդ համակարգի ներ ճեղքերով, ջրի շարժումը ենթարկվում է ֆիլտրացիայի գծային օրենքին:

Ծեղքավորված ապարներում ստորերկրյա ջրերի տարածումը և շարժումը, կախված ճեղքերի բնույթից, ծագումից և չափերից տարրեր են: Ապառաժային ապարների ճեղքերում ամփոփված են ինչպես ոչ ճնշումային (գրունտային), այնպես էլ ճնշումային ջրեր: Ծեղքերում ստորերկրյա ջրերի ճնշումը պայմանավորված է իրար փոխադարձ կտրող-անցնող ճեղքային ջրերի հիդրոստատիկ ճնշումով, որոնց մի մասը տարածված է առավել բարձր նիշերի վրա գտնվող սննման գոնայում, որտեղ դրանք կլանում են մքնուրուտային տեղումները և մակերևութային ջրերը, իսկ ներքեւ՝ ցածր նիշերի վրա տարածված ճեղքերից ճնշման տակ դրված են գալիս աղբյուրներ: Այլ տեղամասերում ճեղքերում ջրի ճնշումը կապված է գազի ճնշման հետ, որը բարձրանում է լիբուֆերայի ավելի խոր գոնաներից: Երիտասարդ հրաբխականության գործունեության շրջաններում ապարների ճեղքերով ջրի բարձրացումը երբեմն պայմանավորված է 100°C -ից բարձր ջերմաստիճանի ջրային գոլորշիների ճնշումով (տես գլ. XV):

Ծեղքավորված ապարների ջրառատության աստիճանի վրա մեծ ազդեցություն է գործում նաև ճեղքերի և դրանցում լցված ապարների հողմնահարված ու լուծված նյութերի տղմակալումը: Չուրը, շարժվելով

ճեղքերով, հաճախ դրանք տղմակալում է կավային մասնիկներով, որնք առաջանում են դաշտային շպատների և կավային թերթաքարերի հողմնահարումից: Բացի այդ՝ տեղի է ունենում ճեղքերի լցում նաև լուծույթից անջատվող կալցիտային, սիլիկատային, տարբեր հանքային նյութերի առաջացումներով:

Այսպիսով, ճեղքավորված ապարների ժամանակակից ջրատարության բնույթը երկարատև երկրաբանական պատմության արդյունք է:

Ճեղքային ջրերն ըստ ջրակալվածության աստիճանի և տարածման բնույթի բաժանվում են երկու հիմնական ենթատիպերի՝ 1) արտածին (Էկզոգեն) ճեղքավորվածության (հողմնահարման) գոնայի ստորերկրյա ճեղքային ջրեր, 2) տեկտոնական խախտումների գոնայի ճեղքա-երակային ջրեր:

13.2.1. ԱՐՏԱԾԻՆ ՃԵՂՔԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԶՈՆԱՅԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՃԵՂՔԱՅԻՆ ՋՐԵՐ


Այս ենթատիպի ջրերին հաճախ անվանում են ռեզիոնալ-ճեղքային ջրեր: Դրանք տարածված են արմատական ապարների երկրաբանական կտրվածքի վերին մասի հողմնահարման ճեղքերով առավելապես զարգացած գոնայի սահմաններում:

Արտածին ինտենսիվ ճեղքավորվածությամբ վերին գոնայի հաստությունը կախված ապարների կազմից և հասակից, դրանց տեղախախտվածության (դիպոլկացիայի) աստիճանից, ռելիեֆից, կլիմայական գործուներից, նշանակալի փոփոխվում է՝ մի քանի մետրից մինչև 100-150 մ: Սակայն արտածին տիպի իրական ճեղքերը կարող են տարածվել նշանակալի խորությունների վրա (մինչև 500 մ): Ապարների ճեղքավորվածության և ջրաբափանցելիության ինտենսիվությունները վերին գոնայում, ըստ խորության, նույնպես փոփոխվում են մեծ սահմաններում: Ելնելով դրանից՝ արտածին ճեղքավորվածության գոնան բաժնում են երեք ենթագոնաների [4]՝ 1)վերին (մինչև 10-15 մ) ճեղքավորված ապարների համեմատաբար բարձր ջրաբափանցելիությամբ, որը կախված դրանց կազմից և այլ գործուններից փոփոխվում է 0.5 մ/օրից մինչև 30 մ/օր և ավելի: Ենթագոնայի ամենավերին մասներում ջրաբափանցելիությունը կարող է կտրուկ ընկնել՝ ի հաշիվ ճեղքավոր տա-

բածքի կավային նյութերով կոլմատացիայի (տղմանստեցման), որն առաջանում է ապառաժային ապարների հողմնահարումից, 2) միջին (60-80 մ), որի համար հատկանշական է ջրաքափանցելիության աստիճանական նվազումը մինչև 10^{-2} - 10^{-3} մ/օր, 3) ներքին, որի համար կապված արտածին ճեղքավորվածության «մարման» հետ ընդհանուր առնամբ բնորոշ է ապարների չափազանց թույլ ջրաքափանցելիությունը:

Այնուհանդերձ, արտածին ճեղքավորվածության գոնայի ջրերը առաջանում են մեկ միասնական ջրատար հորիզոն, որը զանգվածի վերին մասում կամ ճեղքավորված ապարների տարածման մարգերում ունի համատարած տարածում:

Արտածին ճեղքավորվածության գոնայում ստորերկրյա ճեղքային ջրերի տեղադրման պայմանները դրանց սնումը և բեռնաթափումը որոշվում են ջրաերկրաբանական կտրվածքի կառուցվածքով ներառյալ ճեղքավորված ապառաժային ապարները վերևից սահմանափակող չորրորդական կամ ավելի հիմ փուլիր առաջացումների կտրվածքը (հաստությունը, կազմը): Այդ տեսակետից առանձնացնում են երեք տիպի ջրաերկրաբանական կառուցվածքներ (նկ. 47) [4]:



Նկ. 47 Արագիայի գոնայի ճեղքավորված ապարների զանգվածի կառուցվածքի տարրեր պիտմաներ

- 1- ժայռային ճեղքավորված ապարներ, 2- փուլիր լավ ջրաքափանց ապարներ,
- 3- փուլիր՝ թույլ ջրաքափանց ապարներ, 4- գրունտային ջրերի մակարդակ,
- 5- գրունտային ջրերի դեկական ձևություն

Առաջին տիպի կտրվածքներում վերին զոնայի ճեղքային ջրերն ըստ տեղադրման պայմանների միշտ հանդիսանում են գրունտային: Երկրորդ տիպի կտրվածքներում, եթե ճեղքային ջրերի մակարդակը տեղադրված է ոչ խորը, դրանք փուլսը առաջացումների ջրերի հետ միասին ձևավորում են մեկ միասնական ջրատար հորիզոն (նույնպես ազատ մակերևույթով գրունտային ջրեր) (նկ. 47 ա): Եթե ճեղքային ջրերի մակարդակը տեղադրված է խորը, լավ ջրաբափանց փուլսը առաջացումները հանդես են զախս որպես աէրացիայի զոնայի նատվածքներ, որոնք որոշ չափով պայմանավորում են ճեղքային ջրերի ինֆիլտրացիոն սննման ձևավորման պայմանները, սննման քանակը և դրանց բաշխումն ըստ ժամանակի: Երրորդ տիպի կտրվածքներում, եթե ճեղքային ջրերի մակարդակը տեղադրված է խորը և վերևից սահանանափակված են բույլ ջրաբափանց ապարներով, այդ ապարները հանդես են զախս որպես ճեղքային ջրատար հորիզոնի առաստաղ: Վերջինիս հետ կապված ճեղքային ջրերը ձեռք են բերում տեղական ճնշում, որի մեծությունը, կախված ուկիւնքից, փուլսը նատվածքների կազմից, հաստությունից և այլ գործոններից կարող է հասնել 10-15մ և ավելի (նկ. 47 բ):

Ինֆիլտրացիայի առավել նպաստավոր պայմանները բնորոշ են առաջին և հատկապես երկրորդ տիպի կտրվածքներում, եթե ապարների հողմնահարման զոնայում ամփոփված ջրերը շատ հաճախ գրունտային ջրերի հզոր հոսքերի տեսքով շարժվում են քաղալուների և անդեգիտաբազմությունների ճեղքերով՝ հատկապես քաղված հնահովիտներով ուկիւնքի ցածրադիր տարածքները: Այդպիսի շրջանների ցածրադիր տեղանասերում դիտվում են քաղցրահամ ջրերով հզոր աղբյուրների ելքեր: Աղբյուրների ծախսերը, որոնց ջրերը արտահոսում են անդեգիտաբազմային հաստվածքի ճեղքերից, հաճախ մեծ են, իսկ հաճքայնացումը՝ փոքր: Այդպիսի աղբյուրներ կան Հայաստանում, Վրաստանում և Ադրբեյջանում:

Որպես օրինակ կարելի է բերել Հայաստանում՝ Արագածի զանգվածի հարավային լանջի ստորին մասերում գտնվող աղբյուրը՝ Այրելիճ, որը դրենացնում է նշված զանգվածի ջրհավաք ավազանի հանարյա ամքող ջրերը: Դրա ծախսը կազմում է մոտ 20.5 մ³/վ, ջրերը քաղցրահամ են:

Քաղալուներից ջրի հզոր ելքեր հայտնի են Ամերիկայում և Հավայան կղզիներում: Հավայան կղզիներում այդպիսի աղբյուրների ջրերի

գումարային ծախսը հասնում է հսկայական մեծությունների (110-140մ³/վ): Սակայն, եթե լանջային մասերում ճեղքավորված ապարները ծածկված են համեմատաբար թույլ ջրաթափանց փուլոր առաջացումներով (կտրվածքի երրորդ տիպը), մթնոլորտային տեղումների զգալի մասը ծախսվում է մակերևութային հոսքի ձևավորման վրա, որը բերում է գրունտային ջրերի ինֆիլտրացիոն սննման կտրուկ անկնան: Տարածքների ցածրադիր տեղամասերում, կտրվածքի վերին մասում թույլ ջրաթափանց ապարների առկայության դեպքում հորատանցքերը շատ հաճախ բացում են ճնշումային ինքնարափակող ճեղքային ջրեր, որոնց թե՛նարափումը կատարվում է ուղղաձիգ՝ դեպի վերև ֆիլտրացիոն ճանապարհով:

Արտածին ճեղքավորության գոնայի գրունտային ճեղքային ջրերի քիմիական կազմի չևալորումը պայմանավորված է երկու հիմնական գործուներով՝ 1) ֆիլտրացիայի կարծ (տեղական) ճանապարհով և գրունտային ջրերի շարժման բարձր արագությունով, 2) որպես կանոն, ապառաժային ապարների զանգվածի վերևի գոնայում հեշտ լուծելի միներալային միացությունների բացակայությամբ: Այդպիսի պայմաններում գլխավորապես ձևավորվում են ուլտրաքաղցրահամ (գերբաղցրահամ) և փոքր հանքայնացումով (մինչև 150-200 մգ/լ, մասամբ ավելի) հիդրոկարբոնատ-կալցիոնային (կալցիում-մագնեզիումային, երբեմն՝ կալցիում-նատրիումային) կազմի գրունտային ջրեր: Սուլֆատային և քլորիդային կազմի մինչև 2.0-3.0 գ/լ և ավելի հանքայնացմամբ ջրեր, արտածին ճեղքավորվածության գոնայում, կարող են ձևավորվել, եթե այն մերկայացված է գիպս-ամիկրիտային և ուժեղ գիպսացված ապարներով: Արտածին ճեղքավորվածության գոնայում առանձին դեպքերում (Հարավային Ուրալ, Արավիական անապատ և այլն) հնարավոր է ձևավորվեն քլոր-նատրիումային, սուլֆատային, քլոր-կալցիումային, նատրիումային կազմի մինչև 10-30 գ/լ և ավելի հանքայնացում ունեցող ստորերկրյա ջրեր: Նման ջրերի առկայությունը կարող է կապված լինել ցամաքային աղակալման գործընթացների հետ, եթե գրունտային ջրերի թե՛նարափումը կատարվում է գոլորշիացման ճանապարհով խորը ճեղքային ջրերի (բարձր հանքայնացմամբ) վերընթաց թե՛նարափուման տեղամասերի տեխնածին աղտոտվածության և այլնի հետ:

Կիսամետաղական միներալներով հանքայնացման առկայության դեպքում վերին գոնայի ճեղքային ջրերը կարող են պարունակել Fe, Mn, Zn, Pb տարրեր մինչև 10մգ/լ և ավելի բաղադրություններով:

Արտածին ճեղքավորվածության գոնայի գրունտային ճեղքային ջրերի *ուժիմը* ձևավորվում է կլիմայական (օդերևութաբանական) գործոնների ազդեցության տակ և, ընդհանուր առմամբ, բնութագրվում է զգալի փոփոխականությամբ, հատկապես այն տեղամասերում, որտեղ անմիջապես վերևից տեղադրված են ինտենսիվ ճեղքավորված ապարները: Գարնան ձնիալի և հեղուկ մքնողորտային առատ տեղումների շրջանում այստեղ ձևավորվում է ինտենսիվ (արագ) ինֆիլտրացիոն սնում, որն էլ բերում է գրունտային ջրերի մակարդակների կտրուկ բարձրացման, որոշ դեպքերում մինչև 10-15մ և ավելի: Մքնողորտային տեղումների բացակայության շրջանում բեռնաբափումը բերում է գրունտային ջրերի մակարդակների արագ իջեցման: Մակարդակների կտրուկ փոփոխությունները պայմանավորում են աղբյուրների ծախսերի համապատասխան փոփոխություններ՝ ընդհուպ մինչև չորացման:

Այն տեղամասերում, որտեղ ճեղքավորված գոնայի ապարները վերևից ծածկված են բավականին հզորության փուլիր նատվածքներով (նկ. 47), դրանց բարձր գրավիտացիոն տարողունակություն ունենալու հետևանքով թողնում են էական կարգավորիչ ազդեցություն՝ հարթեցնելով մակարդակների տատանումների կտրուկ փոփոխությունները:

13.2.2. ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԽՎԱՏՈՒՄՆԵՐԻ ԶՈՒԱՅԻ ՃԵՂՔԱԵՐԱԿԱՅԻՆ ԶՐԵՐ

Այս ենթատիպին են դասվում այն ստորերկյա ջրերը, որոնք տեղադրված են երկրակեղևի խոշոր տեկտոնական ճեղքերում և խզվածքներում:


Ջրաերկրաբանության տեսանկյունից ճեղքային ջրերի այդ ենթատիպը առաջացնում է գծային տարածում ունեցող ջրատար գոնաներ, որոնցում հաճախ առաջանում են ստորերկյա հզոր հոսքեր: Այդ ջրատար գոնաները մեկուսացված չեն շրջապատող երկրաբանական միջավայրից, այլ հիդրավլիկական կապի մեջ են ճեղքավորված ջրապարունակ ապարների ջրատար համակարգի հետ:

Ճեղքային և ճեղքաերակային ջրերը մեծ մասամբ տարածված են լեռնային ծալքավոր մարզերի ու հրաբխային բարձրավանդակների, ինչպես նաև իման բյուրեղային վահանների և պլատֆորմային գոտիների բեկորացված հիմքերի ապարներում: Դրանք հայտնի են Սիշին Ասիայում, Ուրալում, Կովկասում, Անդրկովկասում և այլ լեռնային շրջաններում: Խոշոր տեկստոնական խախտումների երկարությամբ անցնող բեկորացված և ճեղքավորված գոնաների լայնությունը փոփոխվում է 0.5-ից մինչև 5.0 կմ, գոնաների երկարությունը չի գերազանցում 8.0 կմ, երբեմն հասնում է մի քանի տասնյակ (Ուրալում Սիասկի բեկվածքը 20 կմ) և նույնական հարյուրավոր կիլոմետրերի (Կովկասում՝ Չերմային գոնա): Այդ գոնաներում ստորերկրյա ջրերի տեղադրման խորությունը մեծամասամբ չի գերազանցում 15 մ, իսկ ջրերը հաճախ դրւու են գալիս երկրի մակերևույթ վերընթաց աղբյուների ձևով:

Խախտում գոնաներում ապարները մեծամասամբ բնութագրվում են համեմատաբար բարձր ջրարափանցելիությամբ, զլսավորապես կտրվածքի վերին մասերում՝ արտածին ճեղքավորվածության գոնայի սահմաններում և որոշ չափով ավելի խորը (150-200 մ, որոշ դեպքերում մինչև 500 մ և ավելի), քանի որ խախտում գոնայի սահմաններում (ապարների տեկստոնական բեկորացվածության) հողմնահարման գործընթացները ընթանում են համեմատաբար մեծ խորությունների վրա: Հողմնահարման գործընթացները բերում են տեկստոնական ճեղքավորվածության ճեղքերի լայնացմանը, դրանցից միներալային նյութերի լուծման և դրւու հաճանար, դրանով իսկ մեծանում է տեկստոնական գոնայի կտրվածքի՝ հատկապես վերին մասերի ապարների ջրարափանցելիությունը: Դրանով հանդերձ խորը հորատված հորատանցքերից ստացվող նյութերը և անուղղակի տվյալները վկայում են այն մասին, որ մի շարք դեպքերում տեկստոնական խախտումների գոնաներում ապարների ճեղքայնության և ջրարափանցելիության մեծացումը պահպանվում է առավել զգայի խորությունների վրա: Այսպես, Կոլա թերակղզում գերխորը հորատանցքով (մոտ 12.5 կմ) 9-11 կմ խորությունների միջակայքում բացվել են մի քանի համեմատաբար բափանցելի և ջրավորված տեկստոնական խախտումների գոնաներ: Զրաերկրաքիմիական և ջրաերկրածերմային տվյալները վկայում են այն մասին, որ խախտված տեկստոնական գոնաներում ստորերկրյա ջրերի շրջանառման խորությունը հասնում է 4.0-5.0 կմ և ավելի: Ենթադրվում է, որ առանձին դեպք-

րում, այդ խորությունը կարող է հասնել տասնյակ կիլոմետրերի (Զայցև, 1986):

Ստորերկրյա ճեղքաերակային ջրերը, ըստ տեղադրման պայմանների, մեկ միասնական ջրատար հորիզոն չեն ձևավորում, այլ առաջացնում են լոկալ (լոկալ-գծային) մերձուղղաձիգ ստորերկրյա ջրերի հոսքեր, սահմանափակված տեկտոնական խախտման իրական գոնայում (նկ. 48): Նման զանգվածներում փորված հորատանցքերը կարող են հատել մի տեղում միայն «չոր» ապարներ (հորատանցք 3,5), մեկ այլ տեղում՝ ճնշումային բնույթի ջրատար ապարներ, ըստ որում, ջրերը կարող են լինել ինչպես դրական (հորատանցք 2,4), այնպես էլ բացասական (հորատանցք 4,6) ճնշումով: Ընդ որում, դրանցում ստորերկրյա ջրերի հոսքերի ծախսը, ուղղությունը և ֆիլտրացիայի արագությունը, շրջանառման խորությունները կարող են լինել տարբեր:



**Նկ. 48 Ճեղքավոր ապարների զանգվածում ջրակալված ճեղքերի հատումը
հորատանցքերով 1, 2, 3, 4, 5, 6 – հորատանցքեր, վերընթաց աղբյուր**

Սակայն, ինչպես վերն ասվեց, ճեղքային ջրերի հիմնական ծավալը սովորաբար ձևավորվում է կտրվածքի վերին մասում (մինչև 300-500 մ, երբեմն խորը): Ուղիեֆի բարձրադիր էլեմենտների վրա (սնման մարգեր) ջրերը, որպես կանոն, գրունտային են, որոնց մակերևույթը համապատասխանում է էկզոգեն ճեղքավորվածության գոնայի ջրատար հորիզոնի մակարդակին: Կտրվածքի առավել խորը մասերում ջրերը ճնշումային են, ուղիեֆի ցածրադիր տեղամասերում՝ հաճախ ինքնարժափող:

Ճեղքաերակային ջրերի սնման մարզը գտնվում է դրանց տարածման սահմաններից դուրս: Սնման հիմնական աղբյուրներ են մթնոլորտային տեղումները և գետերից, լճերից, լճակներից և այլ ջրավազաններից:

թից ֆիլտրացվող ջրերը: Բացի այդ՝ որոշ տեղամասերում ներքափանցում են նաև մերձակա ջրատար հորիզոնների և առավել խորը տեղադրված ջրատար հորիզոնների ջրերը:

Ներքաերակային ջրերը, ըստ հանքայնացման և քիմիական կազմի արտակարգ տարբեր են: Բեկվածքների ոչ խորը (100-200 մ) տեղադրման դեպքում լրանք սովորաբար քաղցրահամ են: Բեկվածքների առավել խորը հորատանցքերի ապարների մեջ ներքափանցման դեպքում ջրերը կարող են լինել տաք (թերմալ), աղային և աղի (մինչև 300 գ/լ և ավելի հանքայնացումով):

Բեկվածքային գոնաների հետ կապված են տարբեր կազմի հանքային և հանքաջրաբուժական նշանակության ջրերի խոշոր հանքավայրեր: Տարբեր ձևի հանքային ջրերի համակցության (սառը ածխարքային և ջերմային, ազոտային և մեթանային ջերմային և այլն) ցայտում օրինակ է դագախական հանքային ջրերի շրջանը:

Զրամատակարարման համար առավել գործնական հետաքրքրություն են ներկայացնում խոշոր տեկտոնական խախտումների գոնաների կարբոնատային ապարների ստորերկրյա ջրերը: Միջին Ասխայի և Ղազախստանի առանձին քաղցրահամ ջրերի հանքավայրերը կապված են նման գոնաների հետ և օգտագործվում են (մինչև 230-540լ/վ ծախսով) ջրամատակարարման համար:

13.3. ԿԱՐՍՏԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՐՍՏՎՈՐՎԱԾ ԱՊԱՐՆԵՐԻ ԶՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Կարստ» տերմինը ծագել է Դինարական լեռան հյուսիսարևմտյան սարահարթում տեղադրված կավճի հասակի կրաքարերի անվանումից, որը գտնվում է Հարավսլավիայի և Խոտավիայի սահմանում՝ Աղրիատիկ ծովի ափամերձ տարածքներում: Կարստ ասելով հասկացվում է բոլոր այն գործընթացների և երևոյթների ամբողջականությունը, որը հանգեցնում է լեռնային ապարների՝ բնական ջրերով տարրալուծմանն ու հեռացմանը:

Կարստը զարգանում է տարրալուծվող և լուծվող ապարներում՝ կրաքարերում, դրուժիտներում, մարմարներում, գիպսերում, անիդրիտներում, աղային հանքակուտակումներում և այլն: Հայտնի է, որ ջրում կարբոնատային ապարները տարրալուծվում են շատ շնչին չափով, սա-

կայն դրանց տարրալուծման ունակությունը կտրուկ բարձրանում է, եթք ջրում առկա է ազրեսիվ ածխաքրուն: Նշանակալի լուծելիությամբ հայտնի են գլիպսերը և անհիպիտները: Առավել բարձր լուծելիությամբ են բնորոշվում աղային հանքակուտակները՝ քլորիդները և նատրիումի, կալիումի ու մագնեզիումի ծծմբաբարքվային աղերը: Թվարկած ապարները սովորաբար ենթարկվում են ռեզիտունալ կարստափորման՝ կախված կլիմայական, երկրածնաբանական և տեկտոնական պայմաններից:

Հարկ է նշել, որ կարստերի, ինչպես ներքին դատարկությունները, այնպես էլ մակերևութային առաջացումները, սովորաբար կապված են ապարների ճեղքավորվածության հետ, որոնց տարածման ուղղությամբ էլ ավելի ինտենսիվ զարգանում են կարստային գործընթացները: Կարստավորվող հաստվածքներում ճեղքերի ու դատարկությունների (հատկապես խոշորների) զարգացման տարրալուծման և լուծման գործընթացներին զուգահեռ մասնակցում են նաև էրոզիոն երևույթները: Խոչոր կարստային դատարկություններում և բացվածքներում ստորերկրյա հոսքերը տիրապետում են բավականին մեծ կենդանի ոժի, որն էլ նպաստում է ստորերկրյա ջրերի շարժման ուղիների լայնացմանը և խորացմանը:

Երկրի մակերևույթի վրա կարստային երևակումները լինում են տարբեր ձևերի՝ ձագարածն, քարայրների, հորերի, գետնուղիների, չոր «քարային անտառների», գետահոմների և այլն: Կարստային ձագարներն ունեն 5-10 մինչև 30-50 մ ընդլայնական և մինչև 10-25 մ խորության չափեր: Ուժեղ կարստավորված շրջաններում կարստային ձագարների քանակը երեսմ հասնում է 100-200 հատի 1կմ² մակերեսի վրա (100-200 հատ/կմ²): Շատ հաճախ կարստային ձագարները տեղադրված են կարստավորվող և չկարստավորվող ապարների կոնտակտային մասերում, ինչպես նաև դիզյոնկտիվ խախտումների երկայնքով, որտեղ կարբոնատային ապարները լինում են ջարդութած: Կարստային ձագարների և անցքերի գծային դասավորությունը ստորերկրյա հոսքերի գոյության և շարժման ուղղությունների ուղեցույցն է կարստավորվող ապարների հաստվածքներում (շերտախմբում): Առանձին կարստային ձագարներ կլանում են մինչև 200մ³/ժամ անձրևային և ձնիալային ջրեր:


Կարստային գործընթացները առավել ինտենսիվ զարգանում են տեկտոնական, հողմնահարման և այլ ճեղքերի ուղղություններով:

Կարստավորվող ապարներում ճեղքերի ուղղաձիգ և հորիզոնական լայնացումների գործընթացները հանգեցնում են այսպես կոչված բացվածքների առաջացման: Կարստավորումը տարածվում է մինչև ուղիղնալ էրոզիոն եզրագծի (բազիսի) մակարդակ, այսինքն՝ կարող է հասնել մի քանի հարյուր մետրի: Ստորերկրյա կարստքարայրային, բաց ճեղքային և տարրեր սեղի գետնուղային ձևերը ձգվում են կիլոմետրերով և առաջացնում են դատարկությունների և խոռոչների բարդ ցանց, որոնք շատ հաճախ լրիվ կամ մասնակիորեն լցված են լինում ստորերկրյա ջրերով:

Կարստավորված և ճեղքավորված ապարների ջրաերկրաբանական պայմանները հիմնականում նման են, սակայն կարստային պայմաններում (հատկապես վերին գրնաներում) ստորերկրյա ջրերի շարժումը կատարվում է առավել ինտենսիվ, և սփորաբար կարստային ջրերի հոսքի արտադրողականությունը զգալի բարձր է: Նման պայմաններ ավելի հաճախ ստեղծվում են ակտիվ (ինտենսիվ) ջրավոխանակության գոնայում, երբ տեղանքը գտնվում է տեղական էրոզիոն բազիսից բարձր և կտրտված է խորը գետային ցանցով:

Կարստի ձևավորման և զարգացման համար, ըստ Դ. Ս. Սոկոլովի, անհրաժեշտ է չորս պայման՝ 1) շրջանում պետք է տարածված լինեն տարրալուծվող և լուծվող ապարներ, 2) ապարները պետք է օժտված լինեն ջրի համար թափանցելիությամբ, 3) ստորերկրյա ջրերը գտնվեն շարժման մեջ, առաջացնեն հոսքեր, 4) ունենան լուծելու հատկություն (ազրեսիվություն): Ըստ որում, ազրեսիվ գործունեությամբ ջրերը պարտադիր չեն, որ թափանցեն միայն երկրի մակերևույթից, առանձին շրջաններում այն բարձրանում է խորը արտեզյան ճնշումային ջրատար շերտերից: Վերջինիս օրինակ կարող է հանդիսանալ Հյուսիսային Կովկասում, Նալչիկ քաղաքի մոտակայքում դուրս եկող աղբյուրների քաղցրահամ ջրերով (մշտական ջերմաստիճանը 93°C) Գոլուբոյ լճի առաջացումը: Այդ լճի ջրերը օրական տարրալուծում են $35\text{-}50\text{մ}^3$ կարբոնատային ապարներ:

Կարստավորված ապարներում Դ. Ս. Սոկոլովը, ըստ ջրի շարժման բնույթի և ռեժիմի, առանձնացնում է հետևյալ չորս ուղղաձիգ ջրադինամիկական գոնաները՝ 1) ակրացիայի գոնա, 2) կարստային ջրերի մակարդակի սեղոնային տատանումների գոնա, 3) լրիվ հազեցված գոնա, 4) խորը շրջանառության գոնա (նկ. 49):



Նկ. 49 Կարստային ջրերի գոնալականության սխեմա (ըստ Գ. Ս. Սոկոլովի)

I- աէրացիայի զոնա, II- սեղոնային լրաւանման զոնա, III- լրիվ ջրահագեցված զոնա, IV- խորը շրջանառության զոնա, 1- կրաքարեր, 2- կարստային ջրերի բարձր մակարդակ, 3- կարստային ջրերի ցածր մակարդակ, 4- ջրի շարժման ուղղությունը

1. *Աէրացիայի զոնայում* տեղի են ունենում հիմնական ինֆիլտրացիոն և ինֆլյուացիոն ջրերի վարընթաց շարժումներ: Դրա հզորությունը տարբեր շրջանների համար տարբեր է և կախված է կարստավորվող շրջանի կլիմայից, մքնալորտային տեղորմների ինֆիլտրացիայի և ինֆլյուացիայի պայմաններից, ապարների ջրաբափանցելիությունից, շրջանի էրոզիոն խորացումից և այլ գործոններից: Աէրացիայի զոնայի որոշ տեղամասերում (կտրվածքներում) տեղադրված են, այսպես կոչված, կարստային կախված ջրեր, որոնք առաջանում են կարստավորվող ապարների անհամատեղ ջրաբափանցելիության և դրանցում տեղական ջրամերժ ապարների՝ կավային կամ հոծ կրաքարերի, կալմատավորված տեղամասերի և ոսպնյակածն առաջացումների առկայության հետևանքով: Տեղական ջրամերժերը արգելակում են ինֆիլտրացիոն և ինֆլյուացիոն ջրերը, որը և տեղիք է տալիս կարստային կախված հոսքերի առաջացման:

2. *Կարստային ջրերի մակարդակի սեղոնային լրաւանման զոնա:* Այս զոնան առաւտ սեմնան ժամանակաշրջաններում և ջրերի մակարդակների բարձրացման դեպքում միախառնվում է ստորին զոնայի հետ, իսկ իջեցման ժամանակաշրջաններում միանում (հարում) է աէրացիայի

զոնային: Այդ զոնայում ջրի բարձր մակարդակի դեպքում այն շարժվում հասնում է հորիզոնական ուղղության, իսկ ցածրի դեպքում՝ ուղղաձիգ:

Կարստային ջրերի մակարդակի սեղոնային տատանումների զոնայի հաստությունը փոփոխվում է ոչ միայն տարրեր շրջաններում, այլև յուրաքանչյուրում: Այդ փոփոխությունները բնորոշվում են՝ 1) աէրացիայի զոնայում տարվա ընթացքում մընոլորտային տեղումների անհամաշփությամբ, 2) ապարների տարրեր ճեղքավորվածությամբ և ջրաթափանցելիությամբ, 3) զոնայի հետ կապված գետերի ջրերի մակարդակի տատանումներով, 4) աէրացիայի զոնայում կախյալ ջրերի առկայությամբ, որոնք արգելակում են իմֆիլտրացիոն ջրերը և դրանով իսկ փոքրացնում են հագեցված զոնայի կարստային ջրերի մակարդակի տատանումները:

3. *Lրիվ ջրհագեցլած զոնա:* Գտնվում է կարստավորվող ապարների զանգվածը կտրող (հատող) տեղական ջրագրական ցանցի դրենացնող ազդեցության սֆերայում (ոլորտում): Այս զոնայում ջրերի շարժումը տեղի է ունենում գետահովտի կողմը: Այս զոնայի հիմքը (հատակը) տեղադրված է մակերևութային (գետի) ջրերի մակարդակից ցածր, և դրան մոտիկ հատվածում ջրի շարժումը ուղղված է ներքևից վերև (նկ. 49):

Լրիվ հագեցված զոնան հանդիսանում է կարստային ջրերի պաշարների հիմնական զոնան: Դրա ստորին սահմանի տեղադրման խորությունը կախված է բազմաթիվ բնական գործումներից, որոնցից կարևորները հետևյալներն են՝ 1) էրոզիոն ներփորվածքի խորությունը (ինչքան խորն է ներփորվածքը, այնքան մեծ է հագեցման զոնայի հաստությունը), 2) գետահովտի լայնությունը (ինչքան լայն է գետահովլիտը, այնքան խորն է հագեցված զոնայի ստորին սահմանը), 3) ապարների ջրաթափանցելիությունը (թույլ ջրաթափանց կամ անջրաթափանց շերտերը կարող են հանդիսանալ հագեցված զոնայի ստորին սահմանը), 4) գետում ջրի և կարստավորվող զանգվածի ջրաժանի ջրի մակարդակների տարրերությունը (որքան մեծ է այդ տարրերությունը, այնքան մեծ է հագեցված զոնայի հաստությունը) 5) ապարների ճեղքավորվածության և կարստավորվածության փոփոխությունները ըստ խորության (որքան խորն է տարածվում ապարների ճեղքավորվածությունը և կարստավորվածությունը, այնքան մեծ է հագեցված զոնայի հաստությունը):

Լրիվ ջրահագեցված զոնայում կարստային ջրերի շարժումը հանդիսանում է լամինար և միայն աէրացիայի զոնայում հագեցված զոնայի վերին մասերում կարող է առաջանալ շարժման սուլրութեանտ ռեժիմ:

4. *Խորլ շրջանառության զոնա:* Այստեղ ջրերի շարժումը տեղի է ունենում տեղական ջրագրական ցանցի անմիջական դրենացնող ագդեցությունից դրու: Ստորերկրյա ջրերի շարժման ուղղությունը հիմնականում պայմանավորված է տեկտոնական կառուցվածքի և բեռնաթափման մարգերի տեղադրիքերի առանձնահատկություններով, որոնք կարող են գտնվել ծովի մակերևույթից վերև և ներքև: Այդ զոնայի ջրերի բեռնաթափման գործում մեծ նշանակություն ունեն տեկտոնական խորը ճեղքերը և խզումնային խախտումները: Ստորերկրյա ջրերը դանդաղ շարժվում են դեպի տեկտոնական դեպքեսիաները կամ առավել խոր երողին խրվածքները, որոնք գտնվում են կարստավորվող զանգվածի սահմաններից դրու: Ջրերի շարժման արագությունները չափվում են տարվա ընթացքում՝ սանտիմետրերով, ջրափոխանակումն ու կարստառաջացման գործընթացներն ընթանում են անհամենատ դանդաղ:

Կարստային շրջաններում, հորիզոնական հարթությունում առանձնացնում են երեք մարզ՝ 1) կարստային ջրերի տարածման մարզ, որը կարող է համընկնել (բաց կարստ) կամ չհամընկնել (փակ կարստ) կարստավորվող ապարների տարածման մակերեսի հետ, 2) կարստային ջրերի սննման մարզ, որը համապատասխանում է մթնոլորտային տեղումների ինֆիլտրացիայի և ինֆլյուացիայի մակերեսների հետ, 3) կարստային ջրերի բեռնաթափման մարզ, որը կարող է տեղակայված լինել ծովի մակերևույթից բարձր կամ ցածր, այսինքն՝ լինել սուբաերալային (մակացածաքային, մերձմակերևութային) և սուբմարինային (ստորջրյա, ենթածովային):

Կարստավորված ապարների կազմը, երկրակեղևի հիդրոլինամիկական զոնալականությունը, քիմիական, կենսաբանական և ուրիշ գործընթացները, որոնք ընթանում են հողերում և երկրակեղևում, բնորոշում են կարստային ջրերի քիմիական կազմը և հանքայնացումը [33]:

Ինտենսիվ ջրափոխանակման զոնաներում կրաքարերի, դղումիտների, մարմարների կարստային ջրերը սովորաբար քաղցրահամ են, հիդրոկարբոնատային, դանդաղ ջրափոխանակման զոնաներում հանքայնացված՝ սուլֆատային և քլորիդային, չափազանց դանդաղ ջրա-

փոխանակման գրնաներում աղի են, ինչպես նաև քլորիդային կազմի աղաջրեր են:

Կարստը լայնորեն տարածված է աշխարհի շատ երկրներում՝ Կանադա, ԱՄՆ, Ֆրանսիա, Հարավալավիա, Իտալիա և այլն: Նախկին ԽՍՀՄ-ում կարստային մարզեր են համարվում Հարավային Ռուսաստանը, Ղրիմը, Կովկասը և այլն: Հատկանշական է, որ աշխարհում հայտնի խոշորագույն աղբյուրները մեծ մասամբ կապված են կարստավորված ապարների հետ: Այսպես, օրինակ՝ կարստավորված կրաքարերի հետ են կապված հոչակավոր Վոկյուզի աղբյուրները Ֆրանսիայում, որի տարեկան միջին ծախսը կազմում է $17\text{մ}^3/\text{վ}$, իսկ գարնանային առավելագույն ծախսը հասնում է $152\text{մ}^3/\text{վ}$: Մեծ ծախսով աշքի է ընկնում Ուֆա գետի հովտում գործող «Կրասնի կլյուչ» աղբյուրը, որի ծախսը մեժենի ժամանակ կազմում է $12\text{-}15\text{մ}^3/\text{վ}$, իսկ գարնանը քարձրանում է մինչև $50\text{մ}^3/\text{վ}$:

Կարստային քարանձավները ծգվում են մինչև մի քանի տասնյակ կիլոմետրեր՝ նմանվելով ստորերկրյա գետակների: Խոշոր կարստային քարանձավները տարածված են Ղրիմում, Հյուսիսային Կովկասում, Ալթայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում: Ուրալի արևմտյան լանջի Կունկուրսկի գիպսային ապարներով անցնող քարանձավի ընդհանուր երկարությունը կազմում է 4.6կմ: Այդ քարանձավում հայտնաբերվել են 58 և մոտ 300 լմեր՝ լցված քարձր հանքայանցնան ջրերով: Աշխարհում հայտնի կարստային քարանձավներից ամենախոշորը համարվում է Մամոնտի քարանձավը Ամերիկայում (Կենտուկի նահանգ), որի երկարությունը կողային ճյուղավորումների հետ միասին կազմում է 240 կմ:

Կարստային ջրերի ուժիմը բնորոշվում է դրանց մակարդակի և աղբյուրների ծախսի կտրուկ փոփոխություններով, որոնց հետ կապված՝ ավելի նվազ չափով փոխվում են նաև ջրերի հանքայնացումը, քիմիական կազմը և ջերմաստիճանը: Մակերևությային ջրերի հետ անմիջական կապի հետևանքով կարստային ջրերը հեշտությամբ աղտոտվում և վարակվում են:

Կարբոնատային ապարների կարստավորված տեղանասերում կորչում են գետակներ, և նվազում է նույնական մեծ գետերի (Անգարա) ծախսը: Եթե կարստային ստորերկրյա ջրերի հոսքի ծավալը ընդունենք տվյալ շրջանից դուրս եկող բոլոր աղբյուրների գումարային ծախսը,

կարելի է գալ ոչ ճիշտ եզրահանգման, քանի որ որոշ աղբյուրներ երկրի մակերևույթ են դուրս գալիս մի քանի անգամ:

13.4. ԽՈՐՔՎՅԻՆ ԶՐԵՐ

Մեծ խորությունների վրա շերտային ջրերի ավազաններում, բյուրեղային հիմքերում (ֆունդամենտներում) և խորը բեկվածքներում հանդիպել են ստորերկրյա ջրեր, որոնք գտնվում են հիդրոստատիկ ճնշման մեծությանը գերազանցող (շերտային ավելցուկային) ճնշման տակ [11]:

Շերտային ավելցուկային ճնշումը կապված է նստվածքների խտացման, երկրատեկտոնական լարվածությունների, մանտիայից ֆլյուիդների ներհոսքի և այլ գործընթացների հետ: Այդպիսի ջրերն ունեն լայն տարածում, սակայն դրանք խորքային վերագրելու համար դեռևս համընդիանուր չափանիշներ գոյություն չունեն: Ըստ Ի. Վ. Վերնադսկու, այդ ջրերին կարելի է վերագրել բյուրեղացված ապարներում ամփոփիված ջրերը, որոնք տեղադրված են ստորերկրյա սովորական ջրերից ներքև:

Խորքային ջրերը կտրուկ տարբերվում են վերը նկարագրված ստորերկրյա ջրերից ոչ միայն իրենց տեղադրման խորությամբ ու բնույթով, այլ նաև մի շարք ֆիզիկաքիմիական հատկանիշներով:

Այդպիսի ջրեր հորատանցքերով բացվել են Կոմ գետի ավազանում մոտ 5 կմ խորությունից, որոնք բաղված են եղել 3 կմ հաստության նստվածքային առաջացումների տակ:

Կուա թերակղու գերխորը հորատանցքով նմանատիպ ջրեր բացվել են (СГ-3) 6350 մ և ավելի խորության վրա, այդ խորության վրա դրանց շերտային ճնշումը գերազանցել է հիդրոստատիկ ճնշմանը մոտ 2 անգամ և մոտ է եղել գետատատիկ ճնշմանը: Դրանում ջրերի ճնշումը եղել է այնքան հզոր, որ եթե հնարավոր լիներ հորատանցքի թերանից վերև խողովակաշար անցկացնել, ապա դրանով ջուրը կրածրանար 5.3 կմ բարձրության վրա: Հազիվ թե սովորական ստորերկրյա ջուրը ի վիճակի է այդպիսի բարձրություններ բարձրանալ: 7 կմ-ից ավել խորությունների վրա ի հայտ են եկել միներալագոյացման ակտիվ ջրաջերմային (հիդրոթերմալ) գործընթացներ, իսկ մոտ 10.5 կմ խորության վրա հանդիպել են բարձր հանքայնացման հեղուկա-գազային լուծույթների: Սեկ օրինակ ևս. Ամերիկայի Օկլախոմա նահանգում խորքային ջրերը

հորատման ժամանակ հանդիպել են 9853մ խորության վրա, ունեցել են այնպիսի բարձր շերտային ճնշում և ջերմաստիճան (մոտ 200°C), որ հնարավոր չի եղել հորատանցքի հետագա հորատումը (անցում):

Հետևապես, խորքային, ինչպես նաև արտեզյան ավազանների խորը մասերի ջրերը՝ տեղադրված են չափազանց դանդաղ ջրափոխանակման զոնայում (Ե. Վ. Պիննեկեր և ուրիշներ, 1980) [11]:

ԳԼՈՒԽ XIV

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԱԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ

14.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԱԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հավերժական սառածության ապարների կոչվում են այն ապարները, որոնք իրենց ծակոտիներում, ճեղքերում և դատարկություններում պարունակում են կարծր վիճակի ջրեր (սառույցներ) և ունեն բացասական կամ գրոյական ջերմաստիճան տևական ժամանակամիջոցի ընթացքում (դարեր, հազարամյակներ):

Հավերժական սառածության ապարների ձևավորումը, դրանց տարածումն ըստ մակերեսի և կտրվածքի որոշվում են լիքոսֆերայի վերին մասերի և մթնոլորտի միջև ջերմա և խոնավափոխանակման ֆիզիկակաշխարհագրական պայմաններով, կլիմայով և դրա պատմությամբ, լեռնագրությամբ, երկրաբանակառուցվածքային իրավիճակով, չորրորդական ժամանակաշրջանում տարածքի երկրաբանական զարգացման պատմությամբ և ջրաերկրաբանական պայմաններով:

Հավերժական սառածության ապարները գրաղեցնում են երկրագնդի ցանաքի շուրջ 24%-ը (35մլ.կմ² և ավելի տարածք) և ընդգրկում են Եվրասիայի և Ամերիկայի հյուսիսային մասերը, արկտիկական կղզիները (հյուսիսային բևեռաշրջան), Գրենլանդիան, Անտարկտիդան (հարավային բևեռաշրջան) և բոլոր մայրցամաքների բարձրալեռ գոտիները: Հավերժական սառցութային ապարները նախկին ԽՍՀՄ-ում գրաղեցնում են 11.115 մլ.կմ², որը կազմում է ընդհանուր տարածքի 49.7 %-ը:

Այդ տարածներում սառածության բնույթը միանման չէ: Ծայր հյուսիսում և հյուսիս-արևելքում հավերժական սառածությունը տարածված է ամենուր: Այն կոչվում է *համալրարած սառածության գորի* -1-ից մինչև -9°C և ավելի ցածր ապարների ջերմաստիճանով: Այսուղ հավերժական սառածության ապարների հաստությունը փոփոխվում է 50-ից մինչև 1000 մ և ավելի [11]: Համատարած սառածության գոտու տակ հասկացվում է տվյալ ռեգիոնի ռելիեֆի բոլոր էլեմենտների վրա հավերժական սառածության հաստվածքի առկայությունը, որն ընդհատվում է

միջանցական հալույթներով (տալիկներով), հալված ապարներին մասնաբաժնի է ընկնում ընդհանուր տարածքի մինչև 5%-ը:

Հալույթ (լուսիլի) ասելով հասկանում են հավերժական սառցույթի գոտում այնպիսի տեղամասեր, որտեղ ապարների տարեկան միջին ջերմաստիճանը դրական է և դրանց մեջ եղած ջուրը գտնվում է հեղուկ-կարիլային (գրավիտացիոն) վիճակում: Տեղանքի ուղղաձիգ կտրվածքում հալույթները կարող են լինել միջանցական՝ սառցութային զանգվածի ողջ հզորությամբ կամ սահմանափակ՝ ընդգրկելով սառած զոնայի միայն մի մասը (վերևսից, կողերից կամ ներքևսից): Համեմատում են նաև հալույթային խորվակապատկեր զանգվածներ՝ կապված տաք ջրերի ելքերի տեղամասերի հետ, ինչպես նաև անջուր, չոր հալույթներ:

Հավերժական սառցութային գոտու դեպի հարավ տարածվում է հավերժական սառածության ապարների ընդհակուսներով լուսածման գորիին՝ հալութային կղզիներով հանդերձ: Այստեղ հալած գոտու ընդհանուր մակերեսը զգալիորեն մեծ է և գրավում է ընդհանուրի մոտ 50%: Սառցութային զոնայի հաստությունը չի գերազանցում 100 մ-ը: Այս մարզին հարավից միանում է կղզիածու սառածության զոնան, որի սահմաններում հալույթների մակերեսը հասնում է 80 % և ավելի, սառածության ապարները ընկած են հիմնականում գետահովիտների հատակային ճահճակալած, տորֆային թմբերի ստորին մասերի տեղամասերում:

Հավերժական սառածության մարզերում ըստ ուղղաձիգ կտրվածքի առանձնացնում են՝ 1) գործունյա շերտ՝ սեզոնային սառեցման և հալման շերտ, որի հաստությունը, կախված շրջանում տարածված ապարների բնույթից, խոնավությունից, աշխարհագրական դիրքից և կլիմայից կարող է տատանվել սանտիմետրից մինչև 3-5 մ, իսկ զարիքափ լանջերի վրա, երբ ապարները ապառաժային են և բացակայում է ձյան ծածկը, սեզոնային առավելագույն սառեցումը կարող է հասնել 10 մ և ավելի, 2) հավերժական սառածության զոնա հաճախ հալույթներով հանդերձ, որոնց հետ կապված են լինում ստորերկրյա ջրերը, 3) հալած ապարների զոնա, որոնց ջրաբափանց տարատեսակներում տեղադրվում և շարժվում են ստորերկրյա ջրերը:

Հավերժական սառածության ապարների տարածման նարզերի հիմնական առանձնահատկություններն են՝ 1) ջրի գոյությունը երեք ֆազային ձևերով՝ կարծր (սառցի), հեղուկ (ազատ և կապված ջրեր) և

գոլորշածն, 2) ջրի բոլոր ֆազաների փոխկապակցվածությունը և՝ հալված, և՝ սառած ջրապարունակ ապարներում, 3) հալված վիճակում լավ ջրաքաղաքանց ապարների վերափոխումը ջրամերժի, դրանց սառուցով ցեմենտացման դեպքում:

Հավերժական սառածության մարզերի ջրաերկրաբանական պայմանների հիմնական առանձնահատկությունները հանդիսանում են հետևյալները [4].

1) Հավերժական սառածության մարզերի տարածման սահմաններում նշանակալի ծավալով ստորերկրյա ազատ գրավիտացիոն ջրերը մշտապես գտնվում են պինդ (կարծր) վիճակում և դրանով իսկ (այդ շրջաններում ժամանակավորապես երկրաբանական պատմության տեսանկյունից) դրւում են մնում լիքոսֆերային ջրերի ընդհանուր շրջապտույտից:


2) Ստորերկրյա ազատ գրավիտացիոն ջրերի համար սառած ապարները հանդիսանում են անթափանցելի և կարելի է դիտարկել որպես սաղցածին ջրամերժերի: Ստորերկրյա ջրերի տեղադրքը հավերժական սառածության ապարների (ջրամերժերի) հաստվածքի նկատմամբ որոշում է դրանց ձևավորման տարրեր պայմանները և ծառայուն է որպես հիմք կրիոլիքոզոնայի ստորերկրյա ջրերի դասակարգման համար:

3) Գործնականում երկրի մակերևույթից մինչև 200-300 մ խորությունը, իսկ մի շարք դեպքերում մինչև 1000 մ և ավելի սառած անցրաբափանց ապարները 0°C ցածր ջերմաստիճանով բերում են ստորերկրյա ջրերի բոլոր տիպերի հիդրոդիմամիկական, ջրաքիմիական և ջրաջերմական (հիդրոքերմական) պայմանների ձևավորման կտրուկ փոփոխմանը՝ որոշելով ջրաերկրաբանական կառուցվածքների խորքային «սաղցածնային» (կրիոզոն) վերափոխումները: Դրա հետ կապված արտեզյան ավազանները, ջրաերկրաբանական զանգվածները և համատարած սառածության գոտու սահմաններում տարածված այլ տիպի ջրաերկրաբանական շրջանները, նշանակալիորեն հզոր հավերժական սառածության ապարները պետք է դիտարկել (Ն. Ն. Ռոմանովսկի և ուրիշներ) որպես յուրահատուկ կրիոջրաերկրաբանական կառուցվածքի (կրիոարտեզյան ավազաններ, կրիոջրաերկրաբանական զանգվածներ և այլն):

14.2. ԱՏՈՐԵՐԿՐՅԱՎ ԶՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ

Հավերժական սառածության ապարների մարզերում տարածված ստորերկրյա ջրերը, ըստ ջրապարունակ ապարների բնույթի, ջրի ֆազային վիճակի և երկրակեղևում սառածության զոնայի առկայության, Ն. Ն. Ուռմանովսկին բաժանում է հինգ տիպերի՝ 1) վերսացութային, 2) միջսացութային, 3) ներսացութային, 4) ենթասացութային և 5) միջանցիկ հալույթների զոնայի ջրերի [4]:

Ստորերկրյա ջրերի բվարկած տիպերի տեղադրման պայմանները և դրանց փոխագրեցությունը հավերժական սառածության ապարների հետ ցույց է տրվում 50-րդ նկարում:



Նկ. 50 Հավերժական սառածության ապարների նկատմամբ ստորերկրյա ջրերի տարրեր տիպերի տեղադրման սխեմա (ըստ Ն. Ն. Ռոմանովիու, 1983)

Ա- վերասոցուրային ջրեր սեղոնահալ շերտում, Բ- անձրևա-ճառագայթային միջանցիկ հալուրային ջրեր, Վ-հնարալճային ոչ միջանցիկ հալույրների վերասոցուրային ջրեր, Ղ- հնարահնային միջանցիկ հալույրների ջրեր,

Ե - միջանցուրային ջրեր, Ժ- հնարասոցուրային չկոնյակիրվող անձնությ (ոչ ճնշումային) ջրեր, Յ- հնարասոցուրային չկոնյակիրվող ճնշումային ջրեր,

И - հնարասոցուրային կոնյակիրվող ճնշումային ջրեր, Կ- անձրևա-ճառագայթային ոչ միջանցիկ հալուրային վերասոցուրային ջրեր,

1- արդաժայըքային ճնշուավորված ապարներ, 2- կուպիճ և խճավազ,

3- ավազակավեր, 4- ավազներ, գլաքարներ, 5- հավերժական սառածության ապարներ և դրանց սահմանները, 6- ապարների ջրարրիացումը մշտական է (ա), պարերական է (б), 7- սլաքը՝ սլորերկրյա ջրերի շարժման ուղղությունը,

8- սեղոնահալ շերտի հալուակը (օ), սեղոնասառած շերտի հալուակը (ա),

9- հորարանցքեր, սլաքներով ցույց է դրված սլորերկրյա ջրերի հայդրալու խորությունը և կայտնացած մակարդակը

Ներկա ժամանակներում սովորաբար այդ դասակարգումն են օգտագործում հավերժական սառածության ապարների մարզերում ստորերկրյա ջրերի տիպերի բնութագրման ժամանակ:

14.2.1. ՎԵՐՍԱՌԱՋՈՒԹԱՎՅԻՆ ԶՐԵԲ

Վերսացութային ջրերը ստորերկրյա ազատ ջրերն են, որոնք տեղադրված են հողագրունտներում և մայրական ապարների հողմնահարման կեղևում՝ ջրամերժ հիմք ծառայող սառած ապարների վրա: Վերսացութային ջրերը, լստ տեղադրման պայմանների և ռեժիմի ստորաբաժանվում են երեք խմբի՝ 1) սեղոնային սառչող ջրեր, 2) սեղոնամասմբ սառչող ջրեր, 3) սեղոնային չսառչող ջրեր (Ն. Ի. Տոլստիխին, Օ. Ն. Տոլստիխին, 1974):

Սեղոնային սառչող ջրերը տեղակայված են գործունյա շերտում և տարածված են ամենուր: Դրանք կապված են տարբեր ծագման, հասակի և կազմի ջրաբափանց ապարների հետ: Դրանց սննան և տարածման մարգերը ամռան շրջաններում համընկնում են իրար հետ: Այդ ժամանակահատվածում (ամռանը) սննան հիմնական աղբյուրներ են հանդիսանում մթնոլորտային տեղումները, իսկ հովտային տեղանասերում (տեղադրված ջրաբափանց ապարներով): Մակերևութային ջրերը: Այդ ջրերը ոչ ճնշումային-ճնշումային են: Ամռան շրջանում վերսացութային ջրերը անճնշումային են, բացասական ջերմաստիճանի հասնելուն պես դրանք աստիճանաբար սառչում են և ձեռք են բերում տեղական «սառցածին» ճնշում: Առանձին տեղանասերում տեղի է ունենում գործունյա շերտի խզում (ճեղքում) և ենթասացութային ջրերի մի մասը դուրս են գալիս մակերևույթ, որտեղ և կարծրանալով վեր են ածվում սառցալուրների:

Սեղոնային սառչող ջրերի բեռնաբափումը կատարվում է գետահովիտներում և ռելիեֆի այլ ցածրադիր մասերում բազմաթիվ աղբյուրների ձևով, որոնց ծախսը տատանվում է նշանակալի սահմաններում, անձրևների շրջանում երթեմն հասնում է 10լ/վ: Ջրերի ջերմաստիճանը շատ մոտ է զրոյին, սակայն երթեմն բարձրանում է մինչև 5°C և ավելի: Դրանք սովորաբար շատ քոյլ հանքայնացված, գերբաղցրահամ, մինչև 0.1գ/լ հանքայնացում ունեցող ջրեր են: Ըստ քիմիական կազմի՝ փոփոխվում են քլորիդ-հիդրոկարբոնատ-նատրիումայինից մինչև հիդրոկարբոնատ-կալցիումայինի:

Վերսացութային գործունյա շերտի աննշան հաստոթյան (1-2մ), սառեցումը ձմռանը և հալչումը ամռանը սահմանափակում է այդ ջրերի

մշտապես օգտագործումը բնակավայրերի և արդյունաբերական օր-յեկտների ջրամատակարարման համար:

Սիզոնամասամբ սառչող ջրերը հազվադեպ են հանդիպում այն տեղամասերում, որտեղ լավ ջրաբափանց ապարներով ներկայացված գործունյա շերտը ծածկում է ջրատար հալույքը (տալիկը): Այս դեպքում գործունյա շերտի ջրերը ձմռանը չեն սառչում իրենց ամբողջ հզրությամբ և ստորին մասերում առանձին տարիներ պահպանվում են հեղուկ ֆազայի ջրեր: Այդպիսի տեղամասերը սովորաբար տեղադրված են արտաքերման կոների նախալեռնային մասերում, գետահովիտներում և լճային իջեցումներում: Ըստ ռեժիմի այդ ջրերը տարբերվում են սեզոնային ջրերից միայն ճնշման առկայությամբ, որը արդյունք է ձմռանը այդ ջրերի հեղուկ ֆազայում պահպանվելու, իսկ ըստ քիմիական կազմի՝ շատ մոտ են վերը նկարագրված տիպին:

Սիզոնային չսառչող ջրերը կապված են ոչ միջանցական հալույքների հետ: Որոշ հալույքների հզրությունը փոքր է հավերժական սառածության զոնայի հզրությունից, այսինքն՝ չեն հասնում միջանցության և ենթասառցութային ջրատար հորիզոնների ջրերին և չեն հանդիսանում դրանց վերասառցութային ջրերի հետ կապվածության տեղամասեր: Հալույքները ծևափորվում են գետահովիտների ողբղատային և ցածրադիր դարավանդների տեղամասերում (ենթահունային հալույքներ), լճերի տակ և լճային դարավանդներում (ենթալճային հալույքներ) և արտաքերման կոների լեռնալանջների ստորոտներում (լանջային հալույքներ), լավ ջրաբափանց գերազանցապես կոպճագլաքարային, ավազային և բեկորային առաջացումներում:

Հալույքները առաջանում են հավերժական սառածության ապարների վրա մակերևութային ջրերի տարացուցիչ ազդեցության արդյունքում: Բոլոր տիպի հալույքները լայն տարածում ունեն Յակուտիայում և Ռուսաստանի հյուսիս-արևելքում: Վերսառցութային որոշ հալույքների բնութագրերը բերվում է ստորև:

Ենթահունային հալույքները տարածված են ինչպես գետերի ենթահուներում, այնպես էլ մերձական դարավանդներում: Ենթահունային հալույքների հաստությունը, երբ ընդգրկում է ալյուվիալ նստվածքները և դրանց տակ տեղադրված արմատական ապարները, կարող է հասնել 20-30 մ և նույնիսկ 60 մ: Հալույքների նստվածքների ֆիլտրացիոն հատկությունները ուժեղ փոփոխական են (ֆիլտրացիայի գործակիցը՝ միա-

Վորի մասերից մինչև 50մ/օր է): Վերսառցութային ենթահունային հալույթների ջրերի ռեժիմը անմիջականրեն կախված է մակերևութային ջրերի հիդրավիկական կապից: Ենթահունային ջրերի հանքայնացումը փոփոխվում է 0.1-ից մինչև 0.5գ/լ սահմաններում, իսկ կազմը հիդրոկարբոնատային-մագնեզիում-կալցիումայինից մինչև քլորիդ-հիդրոկարբոնատ-կալցիում-նատրիումայինից: Վերսառցութային ենթահունային հալույթների ջրերի պաշարները կտրուկ նվազում են աշնան-ձմռան (կրիտիկական) շրջաններում և հասնում են առավելագույնի ամառվա կեսերին:

Ենթալճային հալույթները ձևավորվում են խոշոր լճային գոգավորությունների ինչպես փուխր, այնպես էլ արմատական ապարներում: Լճերը կարող են լինել ջերմակուտակային, ծովալճակային, գետահովտային, հրաբխային, տեկտոնական, կուտակային և այլն [11]:

Զերմակուրսակային լճերը առավել լայն տարածում ունեն և ուսումնասիրված են Լեռ-Անդինսկի միջգետային տարածքի սահմաններում:

Սառցադաշտային լճերն ունեն տարբեր ձևեր և չափեր: Այս տիպի լճերը տարածված են հյուսիս-արևելքում, գերազանցապես տարբեր բարձրությունների վրա գտնվող խորը լեռնահովտներում: Լճերը թույլ են ուսումնասիրված, իսկ ենթալճային հալույթները չեն ուսումնասիրված:

Ծովալճակային լճերը լայն տարածված են ափամասերում: Լճերը առաջանում են, երբ ծովից անջատվում են ծանծաղուտ ծովախորշեր և ծովածոց՝ ցամաքալեզվակներով: Ծովալճակային հալույթները, ըստ մակերեսի, կարող են էապես գերազանցել մակերևութային ջրերի մակերեսը և մեծամասամբ պարունակում են այդ ջրեր:

Գերահովտային լճերը տարածված են ողողատային դարավանդներում, լցվում են գետավարարումների և հորդառատ անձրևների ջրերով: Ողողատային լճերի խորությունը 5 մ չի գերազանցում: Լճերի հատակը տղմակալված է: Ողողատային փոքր լճերն ամռան շրջանում լիիվ ցամաքում են, իսկ ձմռանը՝ լիիվ սառչում:

Հրաբխային լճերը շատ հազվադեպ են և վատ են ուսումնասիրված: Դրանց տակի ենթալճային հալույթները գործնական հետաքրքրություն չեն ներկայացնում, քանի որ այդ տիպի լճեր կարող են հանդիպել միայն լեռներում:

Տեկունական լճերն առաջանում են, երբ տեկտոնական ծագման գորգավորությունները լցվում են ջրով: Լճերի հատակը ներկայացված է արմատական ապարներով: Ենթալճային հալույթների ձևավորումը հնարավոր է, սակայն ուսումնասիրված չեն:

Կարսկրային լճերը սովորաբար ունեն փոքր ջրային մակերևույթի մակերես: Այդ լճերի տակ գոյություն ունեցող հալույթները ծառայում են Ենթասացութային ջրերի սնման և բեռնաբափման ուղիների:

Ենթալճային հալույթների ուսումնասիրման հիմնական օբյեկտ են թերմակարատային (ջերմակարատային) գոգավորությունների հալույթները: Այդպիսի հալույթների հաստությունը կենտրոնական Յակուտիայում կարող է հասնել 40-60 մ: Սի շաքր միջանցիկական հալույթների ջրերի պաշարները սովորաբար սահմանափակվում են լճային գոգավորությունների սահմաններում: Ջրերն ըստ կազմի լինում են ինչպես քաղցրահամ, այնպես էլ աղահամ և նույնիսկ աղային՝ 0.2-ից մինչև 64/լ հանքայնացմանը, իսկ չորացող լճային գոգավորություններում կարող է հասնել 60գ/լ: Սովորաբար ջրի կազմը փոխվում է հանքայնացման բարձրացման հետ զուգահեռ՝ հիդրոկարբոնատ-կալցիումայինից մինչև սոլֆատ-մագնիսիումային:

Հանգային հալույթները հանդիպում են լեռնաշղթաների ստորոտների մոտ ջրահոսքերի ելանցքերում, անկումներում, որտեղ ձևավորվում են արտաքերման կոները՝ լցված թեկորային և խոշորաբեկոր նյութերով: Հզորությունը կարող է հասնել մի քանի տասնյակ մետրի: Ստորերկրյա ջրերի սնումը իրականացվում է ի հաշիվ մթնոլորտային տեղումների, ջրային գոլորշիների խտացման (կոնդենսացման) և վերասացութային Ենթահունային ջրերի ներհոսքի: Բեռնաբափումը կատարվում է կամ աղբյուրների, որոնց ծախսն ըստ ժամանակի կտրուկ փոփոխությունների է Ենթարկվում, կամ լանջերի արտաքին ծայրամասերի մոտ ճահճացումներում և քացույթներում: Աշնան-ամռան շրջանում ուսուրսները կտրուկ հյուծվում են, դրանց հիմնական մասը ծախսվում է սաղցարլուրների առաջացման վրա: Ջրերի հանքայնացումը չի գերազանցում 0.2գ/լ-ը, կազմը հիդրոկարբոնատ-կալցիումային և նատրիումային է:

14.2.2. ՄԻՋԱԿՈՅՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՍԱԿՈՅՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐ

Սիցասոցութային սպորտերկրյա ջրերի շարքին են դասվում շերտերի հեղուկ լուծույթները, որոնք վերևսից և ներքևսից սահմանափակված են հավերժական սառածության ապարների հաստվածքով: Այդ ջրերը շատ հաճախ հիդրավիլկական կապի մեջ են վերսացութային կամ ենթասացութային ստորերկրյա ջրերի հետ, այսինքն՝ դրանց հետ ստեղծում են միասնական ջրատար հորիզոն: *Նիջասոցութային սպորտերկրյա ջրերը* հեղուկ լուծույթներ են ոսպնյակների և շերտիկների մեջ, որոնք բոլոր կողմերից սահմանափակված են հավերժական սառածության ապարներով և այլ տիպի ստորերկրյա ջրերի հետ հիդրավիլկական կապի մեջ չեն (Ե. Վ. Պիննեկեր և ուղիշներ, 1980):

Առանձնացնում են միջասոցութա-ներսացութային ջրերի երկու հիմնական խմբեր՝ դրական և բացասական ջերմաստիճաններով:

Սիցասոցութային ջրերը հեղուկ ֆազայով տեղադրված են հավերժական սառածության գոտու նատվածքային, փոխակերպային և մագմատիկ ապարներում: Այդ ջրերը հաճախ հիդրավիլկական կապի մեջ են լինում վերսացութային և ենթասացութային ջրերի հետ: Սառած ապարներում բացասական ջերմաստիճանով ստորերկրյա ջրերի հեղուկ ֆազայում գոյությունը պայմանավորված է դրանց անընդհատ շարժումով, խոշմնդրութելով ջրատար ուղիների սառեցնանը, և ջրի հանքայնացմանը, որը նպաստում է շրջապատող սառած ապարների միջավայրում սառչելու բացասական ջերմաստիճաններից ցածր ջերմաստիճանում:

Սիցասոցութային ջրերը կարող են լինել ոչ ճնշումային և ճնշումային, քիմիական կազմը տարբեր է սառած ապարների տարածման մարզով տարբեր շրջաններում և որոշվում է ապարների կազմով, որոնց մեջ տեղադրված են այդ ջրերը, դրանց սննան պայմաններով, վերսացութային և ենթասացութային ջրերի հետ կապի առկայությամբ կամ բացակայությամբ, ջրատար հորիզոնների տեղադրման խորություններով, ջրաերկրաբանական կտրվածքներում գիպսերի, անհիդրիտների, քարաղերի առկայությամբ և այլ գործոններով: Հանքայնացնան տեսակետից այդ ջրերը կարող են լինել քաղցրահամ և աղահամ, իսկ սառչող լճերի տակ կարող են ձևավորվել բարձր հանքայնացնան ոսպնյակային ջրեր: Սիցասոցութային ջրերը բեռնաբափկում են աղբյուրների տեսքով՝ առաջացնելով խոշոր սառցաբլուրներ: Սիցասոցութային հորիզոնները

Աերկայացված են լինում նաև կարծր ֆազայով՝ սառած ապարներում ստորերկրյա սառջի կուտակումների ձևով: Ստորերկրյա սառույցները տեղադրված են լինում շերտերի, ոսպնյակների, երակների, սեպերի ձևերով, որոնց հաստությունները չափվում են մետրերով և տասնյակ մետրերով:

14.2.3. ԵՆԹԱՍՍՈՅՈՒԹՎՅԻՆ ԶՐԵՐ

Այդ ջրերին են դասվում հեղուկ ջրային լուծույթները, որոնք տեղադրված են բազմամյա սառած ապարների զանգվածներից ներքև: Դրանք ստորաբաժանվում են՝ հպումային (կոնտակտային), ոչ հպումային և «խորքային»:

Ենթասացուրային հպումային ջրերը տեղադրված են բազմամյա սառած ապարների տարածման զոնայի անմիջապես տակը, որոնք այդ ջրերի համար հանդիսանում են վերին ջրամերժը:

Ենթասացուրային ոչ հպումային ջրերը սառած ապարների հաստվածքից բաժանված են կամ ջրամերժ ապարներով (այդ դեպքում դրանք դառնում են ճնշումային), կամ դրանց տեղադիրքը ջրաթափանց ապարներում բնութագրվում է ազատ մակերևույթով:

«Խորքային» ջրերը սառած հաստվածքից բաժանված են հարյուրավոր մետրերով, հավանական է, որ նրանք մեկուսացված են սառած ապարների հետ փոխադարձ կապից:

Ենթասացուրային ջրերը տեղադրված են գետաբերուկային, հեղեղաբերուկային նատվածքների և արմատական ապարների մեջ: Ենթասացուրային ջրերը, ի տարրերություն վեր և միջասացուրային ջրերի, հանդիպում են միայն հեղուկ վիճակում: Ենթասացուրային ջրերի սննան, ճնշման և բեռնաթափման մարզերը տարրերվում են իրարից ինչպես ըստ մակերեսի, այնպես էլ ջրաերկրաբանական ավագանների, ջրաերկրաբանական զանգվածների կամ շրջանների սահմաններում՝ ըստ տեղադրման պայմանների: Ենթասացուրային ջրատար հորիզոնների սնումը իրականացվում է մասնակի տեղամասերում միջանցիկ հալույթների միջոցով: Հալեցման և սառեցման շրջաններում փոփոխվում են նաև ջրափոխանակման պայմանները: Ենթասացուրային ջրերի բեռնաթափման մարզեր են հանդիսանում ծովային և լճային գողավո-

բությունները, գետահովիտները, ձորակները, տեկտոնական ճեղքերն ու խզվածքները, խոշոր գետերի տակ տեղադրված հալույթները:

Ենթասաղութային ջրերի տեղադրման խորությունը հարավից դեպի հյուսիս մեծանում է՝ կենտրոնական և հյուսիսային շրջաններում հասնելով 300-600 մ և ավելի:

Ենթասաղութային ջրերի քիմիական կազմի ձևավորումը պայմանավորված է ջրատար ապարների կազմով, սննան պայմաններով, ջրատար հորիզոնների տեղադրման խորությամբ, կտրվածքներում աղատար և գիպսատար ապարների առկայությամբ: Հետևապես, դրանց հանքայնացումը, աղային և գազային կազմերը խիստ տարաբնույթ են, հանդիպում են ինչպես քաղցրահամ, ջրամատակարարման համար պիտանի, այնպես էլ հանքայնացված, երբեմն աղաջրերի տիպի ջրեր, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն և պարունակում են Br, I, B, Ba, Sr, Ra և այլ միկրոբաղադրիչներ, գազեր՝ H_2S , CH_4 , ծանր ածխաջրածիններ, որոնք բնորոշ են նավթագագատար և աղատար նաև ստվածքների ստորերկրյա ջրերին:

14.2.4. ՄԻՋԱՆՑԱԿԱՆ ՀԱԼՈՒՅԹՆԵՐԻ ԶՐԵՐ

Միջանցական հալույթներին (տայլիկներին) վերաբերում են այնպիսի հալույթները կամ հալութային գոնաները, որոնք առաջացնում են հաղորդող (անցկացնող) ուղիներ գրավիտացիոն ջրերի շրջանառման համար՝ ընդորկելով կամ սաղութային զանգվածի ողջ հզորությունը, կամ սառած զոնայի միայն մի մասը սահմանափակ տեղամասի մակերեսի վրա:

Հալույթների կողային հարթությունը սահմանափակված է սառած ապարներով և գործնականորեն բազմադարյան սառածության ապարների տարածման տարածքների համար այն կատարում է տեկտոնական խզվածքների զոնաների նմանօրինակ դեր (Ե. Վ. Պինեկեր, 1980): Այդպիսի հալույթներում ջրերի շարժումը կարող է լինել ինչպես վերընթաց, այնպես էլ վարընթաց: Միջանցական հալույթները կարող են լինել կլանող և արտածումային, որոնք կապում են միայն վերսաղութային ջրերը միջսաղութայինի հետ, կամ միայն ենթասաղութային ջրերի

հետ, կամ ընդգրկում են սառցաջրաերկրաբանական կտրվածքի համակարգի ամբողջ ջրերը:

Միջանցական հալույթների հանքայնացումը և քիմիական կազմը կարող են լինել բոլորովին տարրեր: Կլանող միջանցական հալույթների ջրերը սովորաբար քաղցրահամ են և ըստ կազմի մոտ են մակերևութային ջրհոսքերի ջրերին:

Արլաւածումային միջանցիկ հալույթների ջրերի հանքայնացումը կախված է ենթասառցութային ջրերի հանքայնացման աստիճանից: Այդ հալույթներում կարող են հանդիպել և՛ քաղցրահամ, և՛ աղի ջրեր:

Ըստ ձևավորման պայմանների, ոելինֆում տեղադիրքի և ջրափոխանակման դերի՝ հալույթները սովորաբաժանվում են երեք տիպի՝ օդերևութածին, տեկոտնածին և ջերմածին:

Օդերևութածին հալույթները գերազանցապես կլանող հալույթներ են, որոնք սնում են միջասառցութային և ենթասառցութային ջրերը, երբ սառած ապարների հզորությունը մեծ չէ (մինչև առաջին տասնյակ մետրերը):

Տեկոտնածին հալույթները ինչպես կլանող, այնպես էլ արտածումային հալույթներ են, որոնք նպաստում են վերսառցութային ջրերի փոխկապակցվածությունը միջասառցութային և ենթասառցութային ջրերի հետ, երբ սառած ապարների հզորությունը նշանակալի մեծ է (տասնյակ և հարյուրավոր մետր): Դրանք, սովորաբար կապված են ջրակալված խզվածների և տարրեր ջրաբափանցելիության ապարների կոնտակտային գոնաների հետ: Տեկոտնական հալույթները տարածված են հավերժական սառցութային գոնայի հարավային շրջանների ջրամասներում, հովիտների լանջերին և կողերին, իսկ հյուսիսային շրջաններում՝ գերազանցապես գետահովիտներում:

Ջերմածին (թերմոգեն, ջրաշերմային) հալույթները ձևավորվում են Երկրի ընդերքից բարձրացող բարձր ջերմային հոսքերի տեղանասերում, ժամանակակից հրաբխականության և ակտիվ նեոտեկտոնական գործունեության շրջաններում: Ջերմածին հալույթները հանդիսանում են արտածումային և բեռնաբափիւմ են ենթասառցութային ջրերում, որտեղ սառած ապարների առավելագույն հզորությունը մինչև 1000 մ է:



Միջանցիկ հալութային ջրերն ունեն բացառիկ կարևոր նշանակություն ջրամատակարարման համար:

14.3. ՍԱՌՅԱԾԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Հավերժական սառածության տարածման մարզելում ժամանակի ընթացքում տեղի է ունենում գործունյա շերտի ապարների սառեցում և հալեցում՝ բազմամյա սառած ապարների զոնայի նահանջ (վատթարացում, դեգրադացիա) կամ աճ (ավելացում): Այդ պատճառով՝ էլ վեր-, միջ- և ենթասահցութային ջրատար հորիզոնների ջրերի սնումը և բեռնաբափումը և դրանց փոխադարձ կապի բնույթը, հեղուկ ֆազայից պնդի հերթափոխումը և հակառակը փոփոխվում է ժամանակի ընթացքում: Այդ գործընթացների հետևանքով հավերժական սառածության ապարների տարածման մարզելում տարածված են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ սառցարլուրների, ուշման թմբերի, ջերմակարատների առաջացումները:

Սառցարլուրը սառցային մարմին է, որն առաջանում է գետային կամ ստորերկրյա ջրերի սառեցման դեպքում, երբ դրանք տարածվում են սառցի, ձյան, հողի մակերևույթների վրա կամ գործունյա շերտի սահմաններում այն ջրատարման ուղղութանակությամբ (տրակտի) սառեցման արդյունքում, որով շարժվում է ջուրը (ըստ Ն. Ի. Տուստիսինի):

Հստ ծագման՝ տարրերակում են *գերայիև ջրերի սառցարլուրներ*, որոնք առաջանում են գետերի սառելու դեպքում (նկ. 51) և *վեր-*, *միջ-* և *ենթասահցութայիև ջրերի սառցարլուրներ*: Հանդիպում են նաև խառը տիպի սառցարլուրներ, որոնք առաջանում են գետային և ստորերկրյա ջրերի հաշվին միաժամանակ:



Նկ. 51 Գետային սաղցարլուրների առաջացման սխեմա
(ըստ Բ. Ն. Գևոստովարովի և Վ. Ա. Կուղյացելի)

ա-սաղցարլուրի առաջացման սկզբանական փուլը, բ-սաղցարլուրի
առաջացման երկրորդ փուլը, 1,4 ջուր, 2- սաղցի շերպ, 3- հավերժական սառած
սպար, 5- ջուր, որը սառած է մինչև հապակը, 6-սաղցարլուրի բումը, 7- ջուր, որն
առաջանում է սաղցարլուրի սառեցման գործընթացում

Երկրի մակերևույթի նկատմամբ սաղցարլուրները լինում են
վերելիլյա և սղորեկրյա: Վերերկրյա սաղցարլուրները հանդիպում են
հեղեղատների և գետերի հովիտներում, հաղորդաբաժան լանջերի վրա,
ջրբաժանային տարածքներում և այլրու: Մակերևութային սաղցարլուր-
ներն ունեն տարրեր ձևեր, ծավալներ և չափեր: Ոչ մեծ սաղցարլուրները
զբաղեցնում են մինչև 100 մ² մակերես, զիգանտներինը հասնում են 1-2
կմ²: Դրանց հաստությունը տատանվում է մետրերի մասերից մինչև
տասնյակ մետրերի: Սաղցարլուրների չափերը և ձևերը հաստատուն
չեն մնում: Սաղցարլուրները, որոնք գործում են ամբողջ ձմռանը, իրենց
առավելագույն չափերին հասնում են գարնան սկզբներին, ճնհալից ա-
ռաջ, իսկ մշտապես չգործողները՝ սաղցարլուրային ջրի վերջին քանակի
երկրի մակերևույթ քափվերու (դուրս գալու) ժամանակահատվածում:

Վերերկրյա սաղցարլուրների մակերևույթը հաճախ լինում է ան-
հարթ: Այն բարդանում է 2-3 մ բարձրության մակասաղցաշերտերի
թմբերով և ճեղքածքներով (փոքր ճեղքերով), որոնցով դուրս են գալիս
սաղցարլուրային ջրերը մակերևույթի վրա:

Ստորերկրյա սառցաբլուրներն իրենցից ներկայացնում են սառցային ոսպնյակներ՝ թմբերի միջուկների ուղղեցումներով։ Դրանք, ըստ գոյության տևողության, բաժանվում են մեկանյա (սեղոնային) և բազմամյա։ Սեղոնայինները զարգանում են գործունյա շերտի սահմաններում ձմռան շրջանում և վերանում են աշնան դեմ։ Դրանք արտահայտվում են ոչ մեծ բլրակների ձևով (մինչև 2 մ բարձրության) և մի քանի մետր տրամագծով։ Բազամյա սառցաբլուրների բարձրությունը հասնում է մինչև 10-30 մ, տրամագիծը՝ 60-80 մ, և առաջացնում են խոշոր բլուրներ կամ ջրալակոլիտներ (հիդրոլակոլիտներ)։

Ջրալակոլիտների սննան աղբյուր են վերսառցութային և հիմնականում միջ- և ենթասառցութային ջրերը։ Ջրալակոլիտների կառուցվածքում մասնակցում են (վերևից ներքև) հողաբուսական ծածկը, սառույց, ջուր և սառած ավազային կամ ավազային-կավային ապարները։ Հաճախ սառույցի և ջրի միջև գտնվում է օդային տարածություն՝ լցված խոնավ օրով։ Ջրալակոլիտներն իրենց աճման (մեծացնան) գործընթացում և արեգակնային էներգիայի ազդեցության տակ ճաքճռում են, աստիճանաբար քայլայվում, դեպի հարավ ուղղված դրանց լանջերն ու գագարները նստեցվում են՝ առաջացնելով հարթ ձագարներ, որոնք հաճախ լցված են լինում ջրով։ Այսպիսով, ջրալակոլիտների տեներում առաջանում են հալոցքային լճակներ՝ երբեմն հասնելով զգալի չափերի։

Ուշմասն թմբերը ոչ մեծ չափերի թմբեր են, որոնք առաջանում են գերխտնավ փոլխը բեկորային ապարների սառեցումից։ Դրանք կապված են ծավալի մեծացման հետ ապարներում եղած ջրի սառեցումից։ Ուշմասն թմբերի բարձրությունը սովորաբար հասնում է 1.5-2.0 մ դրանց մակերևույթը պատվում է ճառագայթաձև ճաքերով։

Զերմակարսպերը (թերմոկարսպերը) հողաբուսական ծածկի և ապարների անհավասարաշափ նստեցման կամ փլուզման երևույթներ են՝ կապված դրանցում պարփակված ստորերկրյա սառույցների հալչման հետ։

Ի տարբերություն սովորական կարստի, որը կարստավորվում է հեշտ լուծվող ապարներում (քարաղ, գիպս, կրաքար և այլն) քիմիական տարրալուծման, երբեմն նաև մեխանիկական սուֆոզիայի շնորհիվ, ջերմակարստերը ջերմային կտրուկ տատանումների (քացասական ջերմաստիճանից դրականի անցման) արդյունք է։

Սովորաբար ջերմակարստերի առաջացումը կատարվում է օդի տարեկան միջին ջերմաստիճանի բարձրացման կամ ապարների ջերմային տատանումների անվլխուղայի (միջակայքի) մեծացման հետևանքով, որոնք հանգեցնում են ապարի հալչման խորության մեծացման: Այն կարող է ունենալ ամենատարբեր ձևեր ու չափեր. հանդիպում են մի քանի մետրից մինչև մի քանի կիլոմետր շառավիրով ձագարներ ու գոգավորություններ, որոնք ունենում են մետրի մասերից մինչև մի քանի տասնյակ մետր խորություն՝ մեծամասամբ լցված հալոցքային ջրերով:

ԳԼՈՒԽ XV

ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐ: ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

15.1. ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Հանքային կողվում են այն բնական ջրերը, որոնց կազմի և հատկանիշների առանձնահատկությունները (ռեղիոսակտիվություն, սովորական բաղադրիչների բարձր պարունակություն կամ յուրահատուկ կոմպոնների առկայություն և այլն) բույլ են տալիս դրանց օգտագործումը բուժական կամ արդյունաբերական նպատակով [4]:

Հանքային ջրերի քիմիական կազմի հիմնական առանձնահատկությունը սովորական կամ յուրահատուկ կոմպոննենությունների (բաղադրիչների) առկայությունն է (CO_2 , H_2S , N_2 , Br , I , B , Rn , Fe , As , օրգանական նյութեր և այլք) այնպիսի քանակներով, որոնք գերակշռում են հատուկ մշակված չափանիշներին (կրիտերիաներին):

Ջրաերկրաբանական կտրվածքում (ջրատար հորիզոններ, համալիրներ, զոնաներ, տեղամասեր և այլն) հանքային ջրերում պարունակված տարրերը (էլեմենտները), ըստ պինդ օգտակար հանածոների անալոգիայի, կոչվում են արդյունավետ: Տարրերը կարող են արդյունավետ լինել ինչպես լեռնածալքավոր, այնպես էլ շերտային տարրեր հասակի և կառուցվածքի ջրաերկրաբանական համակարգերում, որոնց հետ կապված հանքային ջրերը բնութագրվում են հանքայնացման, իննային, գազային կազմի և հատկությունների խիստ տարրերությունով:

Հանքային ջրերի մասին գիտությունը զրադարձ է այդ ջրերի քիմիական, միկրոկենսաբանական, գազային, իզոտոպային կազմի համակողմանի ուսումնասիրման հարցերով, որոնման, հետախուզման, կապտամի մեթոդների մշակման, արդյունավետ շահագործման, ինչպես նաև այդ ջրերի հյուծումից, աղտոտումից, քիմիական կազմի փոփոխությունից պաշտպանելու հարցերով:

Հանքային ջրերի ուսումնասիրման ժամանակ բնական-գիտական հիմնահարցերի (ձևափորման պայմանների, ծագման, կազմի, ջրառատության գնահատման և այլ հետազոտություններ) շարքում կարևոր նշանակություն ունի դրանց արդյունահանման և շահագործման շահութաբերության հիմնավորումը, այսինքն՝ դիտարկումը տեխնիկա-տեխ-

սական տեսանկյունից: Այդ տեսանկյունից առավել շահավետ է հանքային ջրերի համարի օգտագործումը:

Նախկին ԽՍՀՄ տարածքի սահմաններում առանձնացվել են ստորերկրյա հանքային ջրերի երեք պրովինցիաներ (Ե. Վ. Պոսխով, Ն. Ի. Տոլստիխին, 1977) [9]:

Պրովինցիան մակերես է, որի սահմաններում տարածված են հանքային ջրերի որոշակի խմբեր, որոնք կապված են երկրաբանակառուցվածքային, ջրաերկրաբանական, ջրաերկրաքիմիական, ջրաերկրաբերմիական և այլ առանձնահատկությունների ընդհանություններով: Պրովինցիաներում առանձնացվում են ջրահանքային մարզեր, որոնք տեղադրված են որոշակի երկրաբանական կառուցվածքում (Կրիմի, Սերձմուսկովյան, Պամիրի և այլն): Մարզերում տարրերակում են շրջաններ՝ որոշակի հանքային ջրերով (Կովկասի ածխաթթվային հանքային ջրերի շրջան և այլն):

Առաջին պրովինցիան բնութագրվում է տարբեր իոնային կազմի ածխաթթվային ջրերի գերակայությամբ և տեղակայված են ժամանակակից և ոչ վաղ անցյալում հանգած հրաբխային գործունեության տարածքներում (Կովկաս, Պամիր, Կամչատկա և այլն):

Երկրորդ պրովինցիան ներառում է ազոտային ջերմային ջրերը: Դրանք ընդգրկում են ժամանակակից սեյսմիկ երևույթների գործունեության տարածքները (ԽՍՀՄ-ի արևելք և հարավ) և կոնյակովով է առաջին պրովինցիայի հետ:

Երրորդ պրովինցիան կապված է առաջնային իջվածքներում պլատֆորմային մարզերի հետ, որտեղ տարածված են աղային, աղաջրային, ազոտ-մեթանային, ազոտ-քլորիդային և ջերմային ջրերը: Այս կամ այն հանքային ջրերի հանքավայրի շահագործման նպատակահարմարությունը դրա հետախուզումից հետո որոշվում է կոնդիցիոն (պահանջվող նորմային համապատասխանող) չափանիշներով, այսինքն ջրի քիմիական կազմի, որոշակի կոմպոնենտների պարունակության, ջրերի տեղադրման խորության, դրանց ծախսի (դեբիտի), շահագործման պայմանների պահանջներից ենթևություն:

Հանքային ջրերի հանքավայրեր կան աշխարհի շատ երկրներում, սակայն դրանց առողջապահական նպատակով կիրառումը լայնորեն օգտագործվում է Ֆրանսիայում, Շվեյցարիայում, ԽՍՀՄ-ում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում և այլուր: Առանձնապես մեծ փառք են վա-

յելում Ֆրանսիայի «Վիշի» և Չեխոսլովակիայի «Կառլովի վարի» հանքային ջրերը, որոնց հիման վրա կառուցվել են աշխարհահոչակ առողջարաններ:

Հայաստանը համարվում է տարբեր տիպի հանքային ջրերի հարուստ ռեզին: Այստեղ հայտնաբերվել են հանքային ջրերի ավելի քան 400 բնական ելքեր, որոնցից մի քանի առ որակական տեսակետից համարվում են աշխարհում լավագույնները ճանաչված հանքային ջրերի նմանակները (անալոգները):

Հանքային ջրերի հիմնական տիպերն են՝ 1) բուժիչ, 2) արդունաբերական, 3) բերմալ (ջերմային):

Ստորև կտրվեն դրանց համառոտ բնութագրերը:

15.2. ՀԱՆՔԱՅԻՆ ԲՈՒԺԻՉ ՋՐԵՐ

Հանքային բուժիչ ջրեր են կոչվում այնպիսի ստորերկրյա ջրերը, որոնք բարերար ֆիզիոլոգիական ազդեցություն են բողնում մարդու օրգանիզմի վրա՝ պայմանավորված ջրի բարձր հանքայնացումով, ինչնային կազմով, գազերի պարունակությամբ, ակտիվ թերապևտիկ միկրոբաղադրիչների ու ռադիոակտիվ տարրերի առկայությամբ, բրվայնությամբ ու հիմնայնությամբ, ինչպես նաև բարձր ջերմաստիճանով:

Հանքաջրաբուժության համար հետաքրքրություն ներկայացնող ստորերկրյա ջրերի կազմում հիմնական բաղադրիչների շարքին են դասվում CO_2 (ազատ), H_2S , Fe, As, Br, I, H_4SiO_4 , Rn և օրգանական նյութերը: Կարևոր նշանակություն ունեն բրու-հիմնային իրադրությունը, ջերմաստիճանը, լուծված բաղադրիչների ընդհանուր բաղադրությունը, ինչպես նաև որոշ բունավոր իոնների բարձր պարունակությունը, մասնավորապես մի շաք մետաղների:

Ստորերկրյա ջրերը բուժական կարգին վերագրելու համար գոյություն ունեն նորմեր և չափորոշիչներ, այսինքն՝ բաղադրիչների պարունակության ստորին սահմաններ, որոնց դեպքում ջուրը սկսում է մարդու օրգանիզմի վրա բարերար հանքաջրաբուժական ազդեցություն գործել, ի տարբերություն սովորական քաղցրահամ ջրերի (աղ. 16): Տարբեր երկրներում նորմերը և չափանիշները կարող են տարբերվել իրարից:

Ինչպես խմելու ջրի, այնպես էլ հանքայինների համար գոյություն ունեն բունավոր իոնների պարունակության բույլատրելի սահմաններ

(ՊԹՍ) (աղ. 17) [4]: Հաշվի է առնվում նաև կոլխիտիտը, որի մեկ հատը պետք է պարունակվի 100 մլ-ը գերազանցող քաղցրահամ խմելու ջրաքանակում, իսկ բուժիչ-խմելու ջրերի համար՝ 300 մլ-ը:

Աղյուսակ 16

Հանքային բուժիչ ջրերի գնահատման հիմնական ցուցանիշները և շափանիշները

h/h	Ցուցանիշները	Զափանիշները
1	Հանքայնացումը, գ/լ	2.0
2	Գազահագեցվածությունը, մլ/դմ ³	50
3	CO_2 գ/դմ ³	1.4 (լողանալու)
		0.5 (խմելու)
4	H_2S	10
5	As	0.7
6	Fe_2O_3	20
7	Br	25
8	I	5
9	$\text{H}_2\text{SiO}_3 + \text{HSiO}_3^-$, մգ/դմ ³	50
10	Rn, մկ/դմ ³ (նանոկուրիֆ/)	5

Ծանոթություն: Բար օրգանական նյութերի պարունակության պաշտոնական չափորոշիչներ չկան: Առասապահում օգտագործում են $C_{օրգ}$ -ը 12-ից մինչև 140 մգ/դմ³ քաղաղորդությամբ ջրերը:

Հանքային ջրերը ստորաբաժանվում են վեց հիմնական հանքաջրաբուժական խմբերի՝ 1) շատ աղի և աղաջրեր, 2) ածխաթթվային, 3) ուղղնային, 4) սիլիկատային թերմալ, 5) երկարային, մկնդեղային և մետաղների (Mn, Cu, Zn, Pb, Al և այլն) բարձր պարունակությամբ, 6) թույլ հանքայնացված ջրեր՝ օրգանական նյութերի բարձր պարունակությամբ:

Աղյուսակ 17

Որոշ բունակող (լիոքսիլ) և վճառակար պարունակության բույլագրենի սահմանները (ՊՄԾՍ) բուժիչ-սեղանի և բուժիչ հանքային ջրերի համար [4]

h/h	Բաղադրիչները	ՊՄԾՍ, մգ/լմ ³	
		բուժիչ-սեղանի ջրեր	բուժիչ ջրեր
1	As	1.5	3.0
2	F	5.0	8.0
3	V	0.4	0.4
4	Hg	0.02	0.02
5	Pb	0.3	0.3
6	Sc	0.05	0.05
7	Cr	0.5	0.5
8	Ra	5×10^{-7}	5×10^{-7}
9	U	0.5	0.5
10	NO ₂	2.0	2.0
11	NO ₃	50.0	50.0
12	NH ₄	2.0	2.0
13	օրգանական նյութեր (զումարային)	1.0	30.0
14	ֆենոլներ	0.001	0.001

Ծար աղի և աղաջրեր: Այդ ջրերը կարող են ունենալ մինչև 500-600 գ/լ հանքայնացում, տարրեր քիմիական և օազային կազմ: Դրանք լայնորեն տարածված են պլատֆորմների և միջլեռնային արտեզյան ավազանների սահմաններում: Առավել մեծ նշանակություն ունեն սուլֆատային ջրերը, որոնց բուժիչ հատկությունները մեծանում են ծծմբաջրածնի առկայության դեպքում (Նախառուալ, Նախակարպատ, Հյուսիսային Կովկաս): Քլորիդային, քլորիդ-ծծմբաջրածնային ջրերը շատ մեծ տարածում ունեն նախկին ԽՍՀՄ-ի սահմաններում և օգտագործվում են բազմաթիվ սանատոր-կուրորտային կազմակերպությունների կողմից: Ուժեղ աղի և աղաջրերի միջավայրում հանդիպում են բրոմային, յոդաբրոմային և յոդային ջրեր, որոնք կապված են արտեզյան ավազանների խորը հորիզոնների հետ:

Ածխարթվային ջրեր: Հանքային բուժիչ ջրերի առավել լայն տարածում ունեցող հայտնի հանքաջրաբուժական տիպն է, որն օգտագործվում է ինչպես լոգանքների ($\text{CO}_2 > 1.4 \text{գ}/\text{դմ}^3$), այնպես էլ խմելու համար ($\text{CO}_2 > 0.5 \text{գ}/\text{դմ}^3$):

Զգալի քանակությամբ ածխաթթու պարունակող ստորերկրյա ջրերի տարածումը առաջին հերթին պայմանավորված է դրա առաջացման (գեներացիա) համար պայմանների առկայությամբ (կարբոնատային ապարների ժամանակակից թերմամետամորֆիզմի օջախները, հրաբխականությունը, համապատասխան կենսաքիմիական իրավիճակները): Դրա համար էլ ածխարթվային ջրերի հանքավայրերը հանդիպում են՝ 1) կայնողյան հասակի (կամ կայնողյում տեկտոնապես ակտիվացած) լեռնածալքավոր մարգերում, ինչպես նաև դրանց սահմանակցվող արտեզյան կառուցվածքների ծայրամասային տեղերում, 2) հրաբխածին ավազաններում, 3) ժամանակակից հրաբխականության մարգերում:

Ստորերկրյա ջրերի համար ածխաթթու ջրերը բնորոշվում են առավելագույն գազահագեցվածությամբ: Գազի և ջրի ծախսերի հարաբերակցությունը (այսպես կոչված «գազային գործոնը») սովորաբար կազմում է 1.5-5.0, սակայն կարող է հասնել 15-20 և, որպես կանոն, այն խորացման հետ մեծանում է:

Ներկայումս որոշված են մոտ 30 տիպի ածխաթթվային ջրեր (քաղցրահամ հիդրոկարբոնատներից և սուլֆատ-հիդրոկարբոնատներից մինչև քլորիդային՝ մինչև $90 \text{գ}/\text{դմ}^3$ հանքայնացումով): Դրանց թվում հանքաջրաբուժության մեջ առավել լայնորեն կիրառվում են տարաբնույթ նարզաններ (անդրայկալյան՝ Դիրասուներ, Արշաներ, կովկասյան՝ Կիսլովոդսկի, Պյատիգորսկի, Ժելեզնովոդսկի), ինչպես նաև Բորժոմի և Եսենտուկիի տիպի ջրերը: Այդ ջրերն իրենց անվանումը ստացել են առավել հայտնի ածխաթթվային աղբյուրներից, մասնավորապես, Կովկասի հանքային ջրերի շրջանի եզական ծախս և զանազան քիմիական կազմ ունեցող ածխաթթվային ջրերի աղբյուրներից, որոնց հիմքի վրա ստեղծվել են՝ Կիսլովոդսկի, Պյատիգորսկի, Ժելեզնովոդսկի և Եսենտուկիի խոշորագույն առողջարանները:

Նարզաններ են կոչվում ածխաթթվային սառը կամ տաք քաղցրահամ և թույլ հանքայնացված ջրերը, որոնք ունեն հիդրոկարբոնատային

(SO_4^{2-} - HCO_3^- , HCO_3^- - SO_4^{2-}), հազվագյուտ սոլֆատային, կալցիո-մային (Na^+ - Ca^{2+} , Mg^{2+} - Ca^{2+}) կազմ:

Հայաստանում հանքային ջրերի մեծամասնությունը պատկանում է ածխաթթվային տիպին (Արգնի, Զերմուկ, Դիլիջան, Հանքավան և այլն), որոնց հիմքի վրա կառուցվել են մեծ համբավ վայելող առողջարաններ (նոյն անուններով) և շշացման գործարաններ: Այդ ջրերում միկրոբա-դարիչներից ավելի շատ դիտվում է ազոտի բարձր պարունակություն, երբեմն նաև ջրերն օժտված են բույլ ռադիոակտիվությամբ: Ջրերի ջեր-մաստիճանը տատանվում է $+4^\circ\text{C}$ -ից (Գոհձոր) մինչև $+64^\circ\text{C}$ (Զերմուկ):

Չատ հետազոտողների (Ա. Մ. Օվշիննիկով, Պ. Ի. Տոլստիխին և ու-րիշների) կարծիքով ջրում լուծված ածխաթթու գազը գերազանցապես ունի մետանորֆային ծագում: Ըստ երևույթին, ինչ որ չափով ածխա-թթուն մուտք է գործում վերին մանտիայից և առաջանում է ի հաշիվ կեն-սաքիմիական ռեակցիաների: Ածխաթթու գազը, մուտք գործելով ստո-րեկրյա ջրեր, հաճախ անմիջական ազդեցություն է գործում դրանց քի-միական կազմի փոփոխման վրա, և որի հետևանքով ջրում ի հայտ են գալիս հիդրոկարբոնատային իոններ: Քլորական ջրերն ածխաթթվով հարատացման հետևանքով ի վիճակի են լինում վերափոխվելու հիդրո-կարբոնատ-քլորիդայինի, իսկ սոլֆատայինը՝ հիդրոկարբոնատ-սոլ-ֆատայինի:

Հանքային ածխաթթու ջրերը, երբ դուրս են գալիս երկրի մա-կերևույթ, սովորաբար կորցնում են ածխաթթվի մի մասը, որը բերում է ջրից կալցիումի կարբոնատի նատեցմանը: Արդյունքում առաջանում է կրաքարային տուֆ կամ տրավերտին:

Ուաղոնային ջրեր: Ստորերկրյա ջրերը վերագրվում են բուժիչ ու-դոնային ջրերին, երբ նրանց պարունակությունը մեծ է $185\text{Ρկ}/\text{լմ}^3$ (Բեկ-կենել/1/): Ստորերկրյա ջրերում ուղղոնի ծագումը կապված է ջրապարու-նակ ապարներում ուղիային միներալների արմատական տեղադրու-մով կամ վերանատեցման վիճակով: Ուաղոն գազ պարունակող (տարրեր քանակությամբ) ստորերկրյա ջրերը լայն տարածում ունեն ծագավոր մարգերում, հատկապես բյուրեղային թքու ապարների տարածման շրջաններում:

Ըստ ծագման և քիմիական կազմի (Ա. Մ. Ելմանով և Վ. Ա. Արբո-ռով, 1975)` ուղղոնային ջրերում առանձնացնում են ջրաքիմիական տի-

պեր՝ 1) հասարակ կազմի, որտեղ ռադոնը (Rn) հանդիսանում է միակ բուժիչ բաղադրամասը (կոմպոնենտը), 2) բարդ կազմի, որտեղ ռադոնը զուգակցվում է այլ բուժիչ բաղադրամասերի (գազերի, ջերմաստիճանի, յուրահատուկ կոմպոնենտների) հետ: Ռադոնային ջրերի հանքավայրերից լայնորեն հայտնի են Բելոկուրիխի (Ալբայ), Յամկուն (Անդրբայկալ), Պյատիգորսկի (Կովկաս) և այլն:

Սիլիկատային ջերմային (թերմայի) ջրեր: Այդ խմբի ջրերը սովորաբար ունեն փոքր հանքայնացում (մինչև 2 գ/լ), սիլիկաթթուների բարձր պարունակություն (50-160 գ/լ), բարձր հիմնայնություն (pH -ը մինչև 9.6), բարձր ջերմաստիճան (20-100°C): Այդպիսի ջրերը տեղադրված են երիտասարդ հրաբխականության, նորագույն կարբոնատառաջացումների և սեյսմիկության զոնաներում: Սիլիկատային ջերմային ջրերի տարածման առավել հետաքրքրական մարզ հանդիսանում է Բայկալ ջրամբներալային մարզը, որտեղ հայտնի են 65 աղբյուրների խմբեր, որոնց մի մասի ծախսը հասնում է մինչև 100լ/վ:

Սիլիկատային ջրերի խումբը ներառում է ազոտային, մերանային և ածխաթթվային ջերմային ջրերը, որոնցում հիմնական հանքառողջարանային բաղադրիչը սիլիկաթթունն է ($H_2SiO_3 > 50\text{մգ/դմ}^3$): Այդ ջրերը կիրառվում են մաշկային, նյարդային, երակային և մկանային հիվանդությունների բուժման ժամանակ:

Ազորական սիլիկատային ջերմերը համեմատած այլ տիպի հանքային ջրերի հետ տիրապետում են որոշակի, քիմիական կազմի առանձնահատկությունների՝ 1) համեմատաբար փոքր (սովորաբար մինչև 1.5գ/դմ³) հանքայնացման, 2) բարձր հիմնային (pH -ը մինչև 9.6-9.8) ռեակցիաների, 3) կատիոնային կազմում նատրիումի և անիոնային կազմում հիդրոկարբոնատ կամ սուլֆատ իոնների գերակայությամբ, 4) ֆոտորի առկայությամբ: Դրանք տարածված են լեռնածալքավոր մարզերում:

Մերանային ջերմային ջրերը ձևավորվում են արտեզյան կառուցվածքների խորը մասերում վերականգնման պայմաններում և ծագումնաբանական տեսակետից կապված են նավթատար և բիտումապարունակ ապարների հետ: Դրանք բնութագրվում են քլորիդ-նատրիումային կազմով, սովորաբար բարձր հանքայնացմանք, հիմնային ռեակցիայով, բրոմի և յոդի առկայությամբ (Մայկոռա և այլն):

Ածխարթվային սիլիկատային ջերմությը տարածված են լեռնածալքավոր մարզերի այնպիսի շրջաններում, որտեղ խորը հորիզոնների վրա առլա են ջերմամետամորֆիզմի օջախներ: Դրանք սովորաբար ունեն սովորակարունատային նատրիումային կազմ հիմնային ռեակցիայով (Պյատիգորսկ, Ժելեզնովոդսկ և այլն):

Երկարային, մկնդեղային և մելչաղների բարձր պարունակությամբ ջրեր: Երկարային միացույցունները ստորերկրյա ջրեր են թափանցում սովորակարունատային հանքավայրերի թթվեցման զննայի կամ հողմնահարման կերևի ապարներից: Առավել մեծ նշանակություն ունեն փոքր հանքայնացման և թթվայնության ջրերը, որոնք պարունակում են երկօքսիդ ածխածին (Մարցիալային ջրեր): Սկննդեղային ջրերը տարբերակվում են ըստ մկնդեղի պարունակության, իոնային կազմի և հանքայնացման: Դրանք բոլորը շատ բուժիչ են: Սովորաբար այդպիսի ջրերում հանդիպում են բոր, բրոմ և այլ բաղադրիչներ: Սկննդեղային ջրերի հայտնաբերված 40 հանքավայրերից (նախկին ԽՍՀՄ-ում) առավել շատ բանակը գտնվում է Կովկասում, Սախալինում, Կամչատկայում:

Թույլ հանքայնացված ջրեր՝ օրգանական նյութերի բարձր պարունակությամբ: Այդպիսի կազմով ստորերկրյա ջրեր հանդիպում են բավականին հազվագեց և հիմնականում հանդես են զալիս օրգանիկայով հարստացած նատվածքային ապարներում: Դրանք, տիրապետելով փոքր հանքայնացման (մինչև 0.8գ/լ), ունեն տարբեր իոնային կազմ, ներառում են օրգանական նյութեր (հումինային թթուներ, բիտումներ, ֆենոլներ, ճարպաթթուներ, օրգանական ածխածին, ազոտ և այլն) և միկրոբարդիչներ: Այդպիսի ջրերի հանքավայր է համաշխարհային ճանաչում ունեցող Տրուկավեցկի (Արևմտյան Ուկրաինա) հանքավայրը, որտեղ օգտագործվում են նշանավոր «Նաֆտոսիխա» ջրերը: Դրա սառը (7°C) հիդրոկարբոնատային մագնեզիում-կալցիումային 0.5-1.0 գ/դմ³ հանքայնացման ջրերը, որոնք իրենց միկրոբարդիչների կազմով չեն տարբերվում սովորական գրունտային ջրերից, պարունակում են տարբեր օրգանական նյութերի համալիր (հումինային նյութեր, ճարպային, նեֆտենային թթուներ, բիտումներ, ֆենոլներ և այլն)` մինչև 120 մգ/դմ³ և ունեն նավթի և կերոսինի հոտ:

Նմանատիպ ջրեր հետախուզված են Կրասնոդարի երկրամասում, Ադրեշանում, Ուրալում, Սիբիրում և այլն:

15.3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶՐԵՐ

Արդյունաբերական են կոչվում այն ջրերը, որոնք պարունակում են օգտակար բաղադրիչներ (բրոմ, բոր, յոդ և այլն) այնպիսի քանակներով, որոնք ապահովում են դրանց արդյունահանման և վերամշակման շահութաբերությունը ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը քիմիական արդյունաբերության համար: Բացի նշված տարրերից՝ ստորերկրյա ջրերից կորզում են լիքիում, ոռուֆիդիում, ցեզիում, կալիում, մագնեզիում, կերակրի աղ, նատրիում, սուլֆատ, ռազիում, ստրոնցիում, հելիում և այլն: Ուստաստանում ստորերկրյա ջրերի այդ տիպն օգտագործում են որպես ջրամբներալային հումք յոդի (100%) և բրոմի (60-70%) ընթանուր արտադրության:

Ստորերկրյա արդյունաբերական ջրերը հիմնականում պատկանում են բարձր հաճայնացման ջրերի և աղաջրերի խմբին: Ստորերկրյա արդյունաբերական ջրերի և աղաջրերի տարածումը ենթարկվում է որոշակի օրինաչափությունների: Այդ ջրերը, որպես կանոն, տեղադրված են խոշոր ջրաճնշումային համակարգերի խոր մասերում, գերազանցապես չափազանց դանդաղ և հազվագյուտ դեաքերում դանդաղ ջրափոխանակման գոնաներում: Այդպիսի ջրաճնշումային համակարգերը կառուցվածքա-տեկստոնական տեսակետից համապատասխանում են հին պլատֆորմային սինկլինալմերին ու հին գոգավորություններին, ինչպես նաև տեկստոնիզմի տարրեր ցիկլերի նախալեռնային ճկվածքներին ու միջեւնային գոգավորություններին: Աղաջրերի տարածումը դանդաղ ջրափոխանակման գոնա կարող է տեղի ունենալ, եթե աղաջրեր նատվածքները տեկստոնական շարժումների շնորհիվ տեղադրվել են հիպերգենեզի (վերնածին) գոնայում: Հասակային տեսակետից արդյունաբերական ջրերը, այդ բվում նաև աղաջրերը, կարող են հանդիպել երկրաբանական ամենատարբեր հասակի ապարներում:

Ստորերկրյա արդյունաբերական ջրերի տեղադրման խորությունը փոփոխվում է մեծ սահմաններում՝ առաջին տասնյակ մետրից մինչև 4-5 կմ և ավելի: Առավել տարածված խորությունները կազմում են 1000-3000 մ, իսկ բնական աղաջրերի համար դրանց լայն տարածման հետևանքով արդյունահանման նպաստավոր խորություն է համարվում մինչև 300 մ:

Ստորերկրյա արդյունաբերական ջրերը սովորաբար պարունակվում են ցամաքային (ավազներ, ավազաքարեր, խճեր, կոնգլոմերատներ և այլն), կարբոնատային (կրաքարեր և դրուժիտներ), աղաքեր ապարներում և անհիդրիտներում՝ կարբոնատային ապարների և երթեմն՝ հրաբխային նստվածքների ենթաշերտերով:

Ստորերկրյա արդյունաբերական ջրերը սովորաբար օժտված են լինում զգայի պիեզոմետրիկ ճնշումով: Որոշ տեղերում, հորատանցքերում դրանց ստատիկ (կայունացած) մակարդակը կանգնում է երկրի մակերևույթից բարձր: Սակայն, մեծամասամբ դրանք տեղադրված են երկրի մակերևույթից հաշված մետրից մինչև 300 մ և նույնիսկ ավելի խորությունների վրա:

Զրապարունակ ապարների ջրառատությունը փոփոխվում է լայն սահմաններում, հորատանցքերի տեսակարար ծախսերը (տես վերը) տատանվում են միավորի մասերից մինչև տասնյակ խորանարդ մետր մեկ օրում:

Ստորերկրյա ջրերում յոդի պարունակությունը փոփոխվում է հետքերից մինչև 80մգ/լ և ավելի, բրոմը՝ մի քանի միլիգրամից մինչև 10գ/լ (Անտարտ-Լենի ջրաճնշումային համակարգ, ստորին քեմքրյան նստվածքներում), կալիումը՝ մինչև 20գ/լ և ավելի: Բացի այդ՝ քրորիդային նատրիում-կալցիումային կազմի ստորերկրյա աղաջրերում դիտվում է ստրոնցիումի և որիշ միկրոբաղադրիչների բարձր պարունակություն:

Ստորերկրյա արդյունաբերական ջրերի ընդհանուր հանքայնացման, դրանց քիմիական կազմի, ինչպես նաև դրանցում միկրոբաղադրիչների փոփոխությունը պայմանավորված են ապարների կազմով, ընդհանուր ջրաերկրաբանական իրադրությամբ և մասնավորապես ջրատար հորիզոնների և համալիրների փակվածությամբ, ինչպես նաև ստորերկրյա ջրերի դինամիկայով:

Կոնկրետ արտեզյան ավազանների սահմաններում բրոմի, ստրոնցիումի և որոշ այլ բաղադրիչների պարունակությունները ավելանում են ստորերկրյա ջրերի ընդհանուր հանքայնացման մեծացման հետ: Միկրոբաղադրիչների պարունակության մեծացումը կատարվում է, որպես կանոն, ըստ խորացման և առավել հիմ ապարների անցման դեպքում: Բրոմի, ստրոնցիումի և կալիումի առավելագույն պարունակությունները դիտվում են այն ավազաններում, որոնց կարվածքներում առկա են աղաքեր՝ հատկապես հալոգեն նստվածքները:

Ժամանակակից հրաբխականության գործունեության մարզերում հանդիպում են մկնդեղի, ֆտորի և այլ միկրոբաղադրիչների բարձր պարունակություններ:

Հանքային արդյունաբերական ջրերի հիմնական ցուցանիշները և գնահատման նորմերը բերվում են 18-րդ ադյուսակում [11]:

Աղյուսակ 18

Հանքային արդյունաբերական ջրերի գնահատման հիմնական ցուցանիշները և նորմերը

Բաղադրիչներ	Չափման միավորներ	Գնահատման նորմաներ	Ջրեր
NaCl	գ/լ	50	Հալիտային
Na ₂ SO ₄	գ/լ	50	Սիրաբիլիտային
NaHCO ₃ + Na ₂ CO ₃	գ/լ	50	Սողային
Br	մգ/լ	250-500	Բրոմային
I	մգ/լ	18	Յոդային
B ₂ O ₂	մգ/լ	200	Բորային
Li	մգ/լ	10-20	Լիթումային
Mg	մգ/լ	1000-5000	Մագնեզիումային
K	մգ/լ	350-1000	Կալիումային
Rn	գ/լ	10 ⁻¹¹ -10 ⁻⁹	Ռադիոսակտիվ

Արդյունաբերական ջրերի մեկ հանքավայրից երկու և ավելի բաղադրիչների արդյունահանումը կատարվում է դրանց առավել փոքր բաղադրությունների դեպքում, որը և ցույց է տրված 18-րդ ադյուսակում: Արդյունաբերական ջրերի տեղադրության խորությունը պետք է լինի ոչ խորը՝ 2-4 կմ, դինամիկ մակարդակը՝ 200-600 մ-ից ոչ խորը, իսկ հորատանցքի ծախսը՝ ոչ փոքր 200-500 մ³/օր:

Որոշ շրջաններում (Ուրալ, Կովկաս և այլն) արդյունաբերական ջրերը պարունակում են մետաղներ (պղինձ, ցինկ, վոլֆրամ, ալյումինում և այլն) և ներկայացնում են հետաքրքրություն՝ որպես հեռանկարային մետաղապարունակ հեղուկներ: Խորը տեղադրված արդյունաբերական ջրերն ունեն բարձր ջերմաստիճան, դրա համար էլ այդ ջրերը հարկավոր է օգտագործել համալիր կերպով:


Նախկին ԽՍՀՄ-ի սահմաններում հայտնաբերվել են ստորերկրյա ջրերի բազմաթիվ հանքավայրեր, որոնք հիմնականում կապված են խոշոր ջերմաստիճանային համակարգերի հետ (Վոլգա-Կամայան, Ազով-Կուրանյան, Արևմտասիրիական, Ջուռ-Արաքսյան, Արևմտաթուրքմենական և այլն): Չահագործական հորատանցքերը, որոնցից ստացվող ջրի տեսակարար ծախսը տատանվում է 100-3000մ³/օր, աշխատում են տնտեսական մեծ արդյունավետությամբ:

Տնտեսական տեսակետից հանքային ջրերի օգտագործման կարևորությունը՝ որպես հանքահումքային բազա, պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նույնիսկ օգտակար բաղադրիչի բարձր պարունակության դեպքում հումքի արդյունահանումը և օգտագործումը տնտեսական տեսակետից կարող է հանդիսանալ ոչ նպատակահարմար դրա խորը տեղադրման, մաքրման և արդյունաբերական բափոնների օգտագործման բարդությունների պատճառով, ինչպես նաև հեռավորությունը սպառողից, տրանսպորտա-ստորերկրյա ճանապարհային բացակայությունից և այլն:

Միաժամանակ ստորերկրյա ջրերը՝ որպես հանքահումքային բազա, ունեն մի շարք առավելություններ: Կապված դրանց ընդարձակ ռեգիոնալ տարածման հետ, նրանք բնութագրվում են մեծ պաշարներով և պարունակում են ոչ թե մեկ, այլ մի քանի օգտակար հանածոներ: Բացի այդ՝ շատ դեպքերում հանված արդյունաբերական ջրերը միաժամանակ կարելի է օգտագործել հանքաջրաբուժական նպատակներով կամ ջրամատակարարման համար:

Արդյունաբերական ջրերը, ըստ հազվագյուտ մետաղների պաշարների, գերազանցում են այնդ հանածոների հանքահումքին: Հորատանցքերից արտամղման ճանապարհով կամ դրանցից ինքնարաֆման դեպքում, արդյունաբերական ջրերի արտահանումը զգալի էժան է լեռնային աշխատանքներից և միաժամանակ հանդիսանում է միջոց դրանց՝ երկրի մակերևույթ տեղափոխման համար: Այս դեպքում, ըստ ամենայնի, կարելի է կիրառել շահագործման երկրատեխնոլոգիական (գետսեխնոլոգիական) եղանակները: Չատ երկրներում աղաքեր հաստվածքները շահագործվում են այդ եղանակով: Այն հաջողությամբ կիրառվում է նաև նախկին ԽՍՀՄ-ի մի շարք հանքավայրերում (Արտյոմվակ, Կալուշ- Նախակարպատներում, Սլյավյանսկ-Դոնբասում, Արովյան, Ավան-Մերձերևսանյան աղատար ավազանում և այլուր):

Երկրատեխնոլոգիական արդյունահանումը, որը հաճգում է հորատանցքերի միջով աղաբեր հաստվածքը ջրով լուծելուն, իրականացվում է հետևյալ կերպ. հասուկ կառուցվածքի հորատանցքի միջոցով աղաբեր հաստվածքի մեջ ներմղվում է քաղցրահամ ջուր, աղը տարրալուծվում է, վերածվում աղաջրի և արտամղվում երկրի մակերևույթ (նկ. 52): Հորատանցքի մերժին խորովակաշարի տեղաշարժումով և պարբերաբար իներտ հեղուկ (նավք) ներմղելով կարգավորվում է աղատար հորատանցքի լվացման գործընթացը՝ նպատակ ունենալով հորատանցքի շորջը ստեղծել լեռնային ճնշման նկատմամբ կայուն ձևի (գլանաձև) դատարկություն: Ստացված աղաջուրը հասցվում է քիմիական արդյունաբերություն, որտեղ զուրմից ու գոլորշիացումից հետո ստանում են կերակրի բարձր որակի աղ:



Նկ. 52 Գետեխնոլոգիական եղանակով աղատար հաստվածքի շահագործման սխեմա

Հարկ է նշել, որ Հայաստանում երկրատեխնոլոգիական եղանակը կիրառվում է կրկնակի արդյունավետությամբ: Այն է՝ աղաբեր հաստ-

վածքի մեջ լվացման հետևանքով առաջացած ստորերկրյա դատարկությունները այնուհետև օգտագործվում են իբրև գազի պաշարների ստորերկրյա պահեստարաններ:

Ներկայումս մի շաբթ պինդ օգտակար հանածոների աղյունահանումը կատարվում է երկրատեխնոլոգիական մեթոդներով, որը միտում ունի զարգանալու լայն թափով [33]:

15.4. ԶԵՐՄԱՉՐԵՐ

Զերմաշրերին (թերմալ ջրերին) դասվում են այն ջրերը, որոնց ջերմաստիճանը բարձր է մարդու մարմնի ջերմաստիճանից (37°C): Բուն իմաստով թերմալ ջրերին են պատկանում $37\text{-}42^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի ստորերկրյա ջրերը: $42\text{-}100^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի ջրերը կոչվում են շատ տար ջրեր (հիպերթերմալ), իսկ 100°C -ից բարձր՝ գերտար (գերջերմ):

Ելնելով ժողովրդական տնտեսության մեջ ստորերկրյա ջրերի գործնական օգտագործման նպատակահարմարությունից առանձնացնում են՝ 1) մինչև 20°C ջերմաստիճանի ջրեր, որոնք առավելապես պիտանի են ջրամատակարարման նպատակների համար, 2) $20\text{-}50^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի ջրեր, որոնք առավելապես պիտանի են հանքաջրաբուժական նպատակների և յոդա-բրոնային արդյունաբերության համար, 3) $50\text{-}75^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի ջրեր, որոնք նպատակահարմար են օգտագործել ջերմոցների տաքացման, գյուղատնտեսական օբյեկտների (ֆերմաներ, պահեստարաններ և այլն) տաքացման համար և հանքաջրաբուժական նպատակով, 4) $75\text{-}100^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի ջրեր, կարող են օգտագործել քաղաքների հանգստյան տների, գյուղատնտեսական օբյեկտների (գյուղեր, խոշոր ջերմոցային կոմբինատներ և այլն) ջերմավորման համար, 5) 100°C -ից բարձր ջերմաստիճանային ջրեր, որոնք խորհուրդ է տրվում զիսավորապես օգտագործել էներգետիկ նպատակների համար: Ըստ որում, ինչքան բարձր է ջրի ջերմաստիճանը, այնքան շատ է դրանց էներգետիկ պոտենցիալը [19]:

Զերմային ջրերն ունեն լայն տարածում ինչպես պլատֆորմային, այնպես էլ լեռնածալքավոր մարզերի սահմաններում: Պլատֆորմային մարզերում և դրանց հետ միացված ճկվածքներում ջերմային են համարվում, արդեն վերը դիտարկված հանքային և արդյունաբերական ջրերը: Դրանք տարածված են արտեզյան ավազանների խորը մասե-

րում: Ընդ որում, այդպիսի ջրաճնշումային համակարգերում սննան մարզերից դեպի բեռնաթափման մարզերը, ինչպես նաև ուղղաձիգ կտրվածքում վերևս դիտվում է ստորերկրյա ջրերի ջերմաստիճանի, հանքայնացման աստիճանի և քիմիական կազմի օրինաչափ փոփոխություններ:

Լեռնածալքավոր մարզերի բնորոշ գիծը դրանց տարածքում ջերմային ջրերի լոկալ տարածումն է: Հաճախ դրանք հանդիպում են խոշոր դիզյունկտիվ խախտումների գծայնորեն ճգված զոնաներում, որոնք հանդիանում են արտեզյան ավազանների ջրերի բեռնաթափման օջախներ: Այդպիսի զոնաները հայտնաբերվում են լեռնածալքավոր կառուցվածքներում, որոնք իրենց վրա կրել են նորագոյն տեկտոնիկայի ազդեցությունը: Ջերմացրերն առավել շատ տարածված են ծալքավոր մարզերի կայնոգոյան ծալքավորումների ժամանակակից և ոչ վաղ անցյալի չորրորդական հրաբխականության շրջաններում (Կամչատկա, Կուրիլյան կղզիներ և այլն): Տվյալ շրջանները պատկանում են ինտենսիվ ջրաշերմային (հիդրոքերմալ) գործունեության շրջանին:

Կախված գազային կազմից, ինչպես նաև երկրաբանական, երկրաքիմիական և ջերմաստիճանային պայմանների ձևավորումից՝ առանձնացնում են ստորերկրյա ջերմային ջրերի ծագումնաբանական հինգ հիմնական տիպեր՝ 1) ծծմբաջրածնա-ածխաթթվային (ֆումարոլային), 2) ածխաթթվային, 3) ազոտա-ածխաթթվային, 4) ազոտային (հիմնային), 5) մեթանային՝ այդ բվում ազոտա-մեթանային և ծծմբաջրածնա-մեթանային (Վ. Վ. Խվանով, 1961):

Ծծմբաջրածնա-ածխաթթվային (ֆումարոլային) ջերմերը ձևավորվում են ժամանակակից հրաբխային օջախների անմիջական ազդեցության տիրույթում և տարածված են Կամչատկայում և Կուրիլյան կղզիներում: Ստորաբաժանվում են՝ ա) «խորքային» ծագման թերմերի, որոնք հագեցված են բարձր ջերմաստիճանային գազերով, այսունակում են HF, HCl, CO₂, CO, SO₂, H₂S ու մակերևույթ դուրս գալու ժամանակ տիրապետում են շատ բարձր ջերմաստիճանի, բ) «մակերևութային» ծագման թերմերի, որոնք ձևավորվում են ապարների ամենավերին հորիզոններում և ունեն սուլֆատային կազմ: Թթու ֆումարոլային ջերմերը ստվորաբար հանդիսանում են գրունտային կամ թույլ ճնշումային, երբեմն՝ մակերևութային, որոնք բնութագրվում են օջախա-

յին տարածումներով: Առանձին դեպքերում դրանք առաջացնում են մակերևության հզոր հոսքեր:

Ծծմբաջրածնա-ածխաթթվային ջրերի հանքայնացումը սովորաբար բարձր չէ (3-5գ/լ), սակայն երբեմն հասնում է 20գ/լ և ավելի, անհոնների շարքում գերակշռող են հանդիսանում քլորիդները և սուլֆատները, կատիոնների շարքում մասնակցում են H, Fe, և Al, երբեմն՝ NH₄: Ջրի ջերմաստիճանը տատանվում է 40-ից մինչև 100°C:

Ածխաթթվային ջերմները գենետիկորեն կապված են նստվածքային ապարների հաստվածքի հետ, որոնք պարուրված են երիտասարդ մագմատիկ ապարներով: Մագմատիկ ապարների օջախների տիրույթում ստորերկրյա ջրերը հագեցնող ածխաթթուն առաջանում է դրանք պարուրող (շրջապատող) ապարների վրա բարձր ջերմաստիճանի ազդեցության տակ: Որպես կանոն՝ ածխաթթվային ջրերը տեղադրված են խորը փակված կամ կիսափակված կառույցներում: Դրանց դինամիկան ամբողջովին կապված է բնական ջրածնշումային հանակարգի դինամիկայի հետ, որոնցում պարփակված են ածխաթթվային ջրերի հանքավայրերը: Ջրաերկրաբանական պատմության ընթացքում առանձին կառուցվածքներում ածխաթթվային ջրերը կարող են դուրս գալ և փոխարինվել երիտասարդ ինֆիլտրացիոն ջրերով: Եթե ստորերկրյա ջրերը դեպի բնոնաթափման օջախներ են շարժվում, դրանց գուգընթաց հագեցնող ածխաթթուն տեղագաղթվում է (միջավայրում) բարձր ճնշման տեղերից դեպի ցածր ճնշման տեղեր, ջերմային ջրերի հետ (կողքին) տարածված են նաև տաք և սառը ածխաթթվային ջրեր:

Ածխաթթու ջերմային ջրերի քիմիական կազմը սովորաբար բարդ և ամբողջովին բազմակերպ է: Անիոնների շարքում գերակշռող են հիդրոկարբոնատները, քլորիդները և սուլֆատները, կատիոններից նատրիումի հետ և մեծ քանակությամբ կալցիում է պարունակվում: Ածխաթթվային ջրերում երբեմն դիտվում են մեծ քանակությամբ (մինչև 100-200մգ/լ) սիլիկաթթվի պարունակություն, ինչպես նաև մկնդեղ, երբեմն՝ յոդ, բրոմ, բռու և այլն: Դրանց ընդհանուր հանքայնացումը փոփոխվում է 2-7-ից մինչև 40 գ/լ սահմաններում:

Ազուրա-ածխաթթվային ջերմները (ջրագոլորշաջերմերը) իրենցից ներկայացնում են ուժեղ գերտաքացած ջրեր, որոնց ջերմաստիճանը համեմատաբար ոչ մեծ խորությունների վրա հասնում է 200-300°C: Ջրերի բարձր ջերմաստիճանը, որոնց երկրի մակերևույթ բարձրացումը բե-

բում է գոլորշիների անջատմանը և ջրատար ապարների համեմատաբար բույլ ջրաբափանցեկիությանը, պայմանավորում են երկրի մակերևույթին դրանց ի հայտ գալը գոլորշաջրային շիրերի տեսքով, մասսամբ հելզերների, ինչպես նաև եռացող աղբյուրների ձևով: Հորատանցքերով ստորերկրյա ազոտա-ածխաթթվային ջերմաջրերի բացման դեպքում նույնական դրանցում առաջանում են գոլորշա-ջրային շատրվաններ: Ազոտա-ածխաթթվային ջերմերի ձևավորումը կատարվում է ակտիվ հրաբխականության օջախներին մոտ տեղամասերում վերականգնողական բարձր ջերմաստիճանային պայմաններում: Այդպիսի ջրերը ստվորաբար տեղադրված են հրաբխածին կամ հրաբխածին-նստվածքային ապարներում:

Ազոտա-ածխաթթվային ջրերը ստվորաբար բնուրագրվում են ոչ մեծ հանքայնացումով (2-5գ/լ) և քլորիդ-նատրիումային կազմով: Տարբերակիշ գիծը հանդիսանում է սիլիկաթթուների բարձր պարունակությունը (մինչև 300-600մգ/լ):

Ազուրային ջերմային ջրերը կարող են լինել ինչպես մթնոլորտային և խորքային, այնպես էլ ծովային ծագումների և զգալի խորությունների վրա ձևավորվում են վերականգնողական պայմաններում:

Մթնոլորտային ծագման ջրերը բնուրագրվում են ցածր հանքայնացումով (1-1.5գ/լ), հիդրոկարբոնատ-նատրիումային, երբեմն՝ քլորիդ և սուլֆատ-նատրիումային կազմով, ինչպես նաև սիլիկաթթուների համեմատաբար բարձր պարունակությամբ (40-50-ից մինչև 80-120մգ/լ):

Ծովային ծագման ջրերը աչքի են ընկնում բարձր հանքայնացումով (մինչև 40գ/լ), քլորիդ-նատրիումային և քլորիդ-կալցիում-նատրիումային կազմով, դրանց կազմում բնորոշ միկրոտարրերի՝ բրոմի և յոդի առկայությամբ: Այդպիսի ջրերի ջերմաստիճանը հասնում է 90°C -ի:

Ծովային ծագման ազոտական ջերմաջրերը ստվորաբար ունեն սահմանափակ տարածում: Երկրի մակերևույթի վրա դրանց ելքերը ստվորաբար տեղադրված են խոշոր տեկտոնական խախտումների գոնաներում:

Սերանային ջերմային ջրերը հանդիպում են ինչպես պլատֆորմային, այնպես էլ լեռնածալքավոր մարգերում: Սերանային ջրերը լայնորեն տարածված են Ռուսական և Սիբիրական պլատֆորմաների խոշորագույն նավթագազաբեր արտեզյան ավազանների սահմաններում,

Արևմտա-սիբիրական հարբավայրում, Սիցին Ասիայում, Սախալինում, Կովկասում և շատ այլ շրջաններում:

Մեթանային ջերմաջրերը տեղադրված են արտեզյան ավազանների խորը մասերի նստվածքային ապարներում: Դրանց ձևավորումը կապված է կենսաքիմիական գործընթացների զարգացման հետ: Կախված ջրերի ձևավորման փուլից, երկրաբանական պայմաններից և դրանց տարածման երկրաքիմիական իրավիճակից՝ մաքուր մեթանային ջրերին զուգընթաց հանդիպում են նաև ծծմբաջրածնա-մեթանային և ազոտա-մեթանային ջերմային ջրեր:

Մեթանային ջրերի հանքայնացումը բազմազան է՝ մի քանի գրամից մինչև 400-500գ/լ:


Ժամանակակից հրաբխականության մարգերի սահմաններում (Կամչատկա, Կուրիլյան կղզիներ, Խալանդիա և այլն) տարածված են խիստ բնորոշ բարձր ջերմաստիճանային ածխաթթու-ազոտային ջրեր ձևավորված գործող հրաբխային օջախների ելքի մոտակայքում: Այդ ջրերը զգալի խորությունների վրա գերտաքացած են (բարձր 300°C), դրանք մակերևույթի վրա ի հայտ են գալիս եռացող ջրա-գոլորշային շիթերի ձևով, շատրվանանման հեյզերային ռեժիմով:

Հեյզերները տաք աղբյուրներ են, որոնցից ժամանակ առ ժամանակ ժայթքում է ջուր և գոլորշի: Դրանք դիտարկվում են որպես հեյզերային ածխաթթու-ազոտային թերմերի հանքավայրերի յուրահատուկ տիպ: Սրանք իրենց անվանումը ստացել են Խալանդիայի Հեյզեր շրջանի անվանումից: Աղբյուրների ջրերից հաճախ գոյանում են սիլիկահողային նստվածքներ (հեյզերիդ՝ սպիտակավուն օպալ), որոնք ելքերի շորջ առաջացնում են սալիկներ և այլ հոսքաձևներ:

Երկրագնդի տարբեր հեյզերային ջրերի ջերմաստիճանը և կազմը իրար շատ մոտ են: Ջերմաստիճանը տատանվում է $73\text{-}97.5^{\circ}\text{C}$, հանքայնացումը՝ $1\text{-}3\text{գ/լ}$ սահմաններում և հիմնականում պատկանում են քլորիդ-մատրիկուլային կազմի տիպին [33]:

Հեյզերների ժայթքման ժամանակ շատրվանի բարձրությունը սովորաբար հասնում է $30\text{-}60$ մ, գործում է 1 րոպեից մինչև մի քանի ամիս ընդմիջումներով: Նոր Զելանդիայի խոշորագույն Վայմանգում հեյզերը, որը գործել է $1899\text{-}1905$ թթ., յուրաքանչյուր ժայթքման ժամանակ արտանետել է շորջ 800 տ ջուր՝ մինչև 400 մ բարձրությամբ:

Հեյզերների գործունեության մեխանիզմը լնդիանրացված տեսքով բացատրվում է հետևյալ կերպ. հեյզերի վերին մաս, որի 100-150 մ խորությունների վրա կան հարորդակցվող դատարկություններ, որոնք հեյզերի նախորդ շատրվանումից հետո մնում են չոր: Այս դեպքում հեյզերի փողանցից որոշ հեռավորության վրա ինչ որ չափով իջնում է ստորերկրյա ջրերի նախնական մակարդակը: Արդյունքում հիդրոստատիկ ճնշման և գոլորշու ճնշման ազդեցության տակ տաք ջուրը հեյզերի փողանցքում նորից սկսում է բարձրանալ և խառնվել այստեղ կողային ապարներից թափանցող ցածր ջերմաստիճանային ջրերի հետ (հեյզերի գործունեության առաջին փուլ՝ կուտակման փուլ (նկ. 53ա):



**Նկ. 53 Կամչատկայի հեյզերների գործունեության հիմնական փուլերը
(բառ S. F. Ուստիանովի)**

1- փողային լուսափեր, 2- հեյզերի նավածքները ձեղքեր լուսափերում, 3- գերլար
ջրի հետ, 4- սառնացած ջրի հետ, 5- գերլար ջուր՝ 100°C -ից բարձր
ջերմաստիճանի, 6- սառնացած ջուր՝ 100°C -ից ցածր ջերմաստիճանի:

Եթե փողանցքը մինչև վերջ ջրով է լցվում, այն կողերից սկսում է թափվել ոչ մեծ շիթերի ձևով, որի ծախսն աստիճանաբար մեծանում է մինչև դրա ժայրքելը (նկ. 53ը), (հեյզերի գործունեության երկրորդ՝ արտահոսման փուլ):

Հեյզերի փողանցքի վերին մասում գտնվող (երկրի մակերևույթին մոտ) ջրի սյան ճնշման պատճառով փողանցքի ստորին մասի գերտաքացած ջրերը մինչև որոշակի ժամանակ գտնվում են համեմատաբար

հանգիստ վիճակում, հետո ջերմային էներգիայի կուտակմանը զուգընթաց գերտարացած ջրերից սկսում է աստիճանաբար անջատվել գոլորշու պղպջակմեր: Գոլորշիների առաջացումը անցնում է ջրի եռմանը, որը բերում է փողանցքից ջրի մասնակի ժայռքման և վերին հակածնշման իջեցման (թուլացման): Այս գործընթացի հետևանքով միջավայրում ճնշումը թուլանում է և որոշակի ակնքարքում գերտարացած ջուրը վեր է ածվում գոլորշու, որից և առաջանում է ջրագոլորշային խառնուրդի հսկայական ուժով ժայռքումը (նկ. 53զ հեյզերի գործունեության երրորդ՝ շատրվանման, ժայռքման փույ):

Գերտարացած ջրի հիմնական զանգվածի արտանետումից հետո ժայռքումը դադարում է: Խորքից նորից բարձրացող ոչ մեծ քանակության գերտարացած ջուրը դատարկված փողանցքում բուն եռում է, իսկ անջատված գոլորշիները ժայռքում են երկրի մակերևույթ (նկ. 53դ հեյզերի գործունեության չորրորդ՝ գոլորշանջատման կամ խորքային եռման փույ):

Հեյզերների սննան հիմնական աղբյուր են հանդիսանում մքնողութային տեղումները, և հնարավոր է դրա աննշան մասը կապված լինի մազմատիկ օջախների հետ:

Հեյզերները մեծ տարածում ունեն Կամչատկայում (Հեյզերների հովիտ), ԱՄՆ-ում (Հելուստոնյան այգի), Իսլանդիայում, Նոր Զելանդիայում, ավելի քիչ՝ Շապոնիայում, Չիլիում, Գվատեմալայում, Կոստա-Ռիկայում, Ազորյան կղզիներում և այլոր:

Ջերմային ջրերը լայնորեն տարածված են նաև ԽՍՀՄ հարավի (Կարպատներ, Լեռնային Ղրիմ, Մեծ Կովկաս, Փոքր Կովկաս, Կոպետ-Դաղ, Պամիր) ալպիական ծալքավորումների գոնայում և առավել հին ծալքավոր մարզերում: Հին լեռնածալքավոր մարզերում ջերմաջրերը մինչև 100°C -ի ջերմաստիճանով հաճախ ունեն ցածր հանքայնացում, հազվագյուտ գերազանցում են 1գ/լ-ը, և դրանցում լուծված են ազոտային կազմի գազեր: Ջերմային ջրերի գգալի ռեսուրսներ երևան են գալիս միջլեռնային գոգավորություններում (ՈՒխոնի, Քուո-Արաքսյան, Ֆերգանայի և այլն) 1500-3000 մ խորությունների վրա: Միջլեռնային գոգավորություններում, որպես կանոն, ստորերկրյա թերմալ ջրերի հանքայնացումը փոփոխվում է լայն սահմաններում՝ 1-ից մինչև 300գ/լ և ավելի:

Ստորերկրյա ջերմային ջրերը լայնորեն օգտագործվում են աշխարհի տարբեր երկրներում:

Իտալիայում ջերմային ջրերն օգտագործում են Տուկանայի և Ֆլեգրեյան դաշտերի (Վեզուվի շրջան) բնակավայրերի ու հարուստ ջերմոցային տնտեսությունների ջեռուցման համար, իսկ Տուկանայում գործող գեղքերմիկ էլեկտրակայանները տալիս են Իտալիայի էլեկտրաէներգիայի ավելի քան 6%-ը:

Իպահնիայում հեյզերմերից և հորատանցքերից ստացվող ջրի և գոլորշու ջերմությունը լիովին բավարարում է բնակավայրերի ջեռուցման, ամենահզոր էլեկտրակայանը աշխատեցնելու, ջերմոցների և այլնի համար:

Նոր Զելանդիայում ընդերքից ստացվող գերտաք գոլորշին գործի է դնում 160 հազ. կվտ հզորության էլեկտրակայանը: ԱՄՆ-ի Օրիգոն նահանգում թերմալ ջրերն օգտագործվում են ավտոճանապարհների ջեռուցման համար, իսկ Կալիֆորնիա նահանգի հոչակավոր Սեծ հեյզերների ջերմության հիման վրա գործում է 400հազ. կվտ հզորության էլեկտրակայան:

Ուսասատանում ընդերքի ջերմության շնորհիվ ջեռուցման հնարավորությունները հսկայական են: Արդեն մեծ աշխատանքներ են տարվում հատկապես Կամչատկայում և Կորիլյան կղզիներում:

Կովկասում թերմալ ջրերի ելքեր (մինչև 100°C) հայտնի են ինչպես Հյուսիսային Կովկասում (Հարավային Դաղստան, Չեչեն-Ինգուչեթիա), այնպես էլ Անդրկովկասում (Վրաստան, Հայաստան):

Հայաստանը ընդհանուր առմամբ հարուստ է թերմալ ջրերի աղբյուրներով: Մեծ ծախսով և ջերմությամբ աշքի են ընկնում Զերմուկը (ջրի ջերմաստիճանը $+64^{\circ}\text{C}$), Արզականը ($+45^{\circ}\text{C}$), Հանքավանը ($+43^{\circ}\text{C}$) և Քշնին ($+39^{\circ}\text{C}$): Սակայն դրանք չեն օգտագործվում որպես ջերմաէներգիայի աղբյուր:

Հարկ է նշել, որ նույնիսկ ստորերկրյա ջրերի բացակայության դեպքում հորատանցքերի մեջ կարելի է ներնել մակերևության ջուր և կորզել խորքային ջերմությունը, այսինքն՝ տվյալ դեպքում ընդերքը կծառայի որպես բնական «կաթսայատուն»: Գետտեխնոլոգիական այս մեթոդի կիրառման շնորհիվ հնարավոր կլինի ավելի մեծ մասշտաբներով ու, ըստ ամենայնի, օգտագործել ընդերկրյա ջերմությունը՝ այդ անհամեմատ ավելի էժան ու բնության աղտոտման տեսակետից «մաքուր» է-ներգիայի տեսակը:

Այդ տեսակետից նպատակահարմար է համարվում Հայաստանի կենտրոնական հրաբխային քարձրավանդակը (Արագածից մինչև Զանգեզուր), քանի որ 1.5-2.0 կմ խորությունների վրա կարելի է սպասել $+100^{\circ}\text{C}$ ջերմություն:

15.5. ԱԴԲՅՈՒՐՆԵՐ

15.5.1. ԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԱՍՎԱՐԳՈՒՄԸ

Աղյուր (ակունք) է կոչվում ստորերկրյա ջրերի բնական ելքը երկրի մակերևույթը: «Աղյուր» տերմինը կիրառվում է ցանկացած ստորերկրյա ջրերի ելքերի համար (քաղցրահամ, հանքային, ջերմային): Ստորերկրյա ջրերի ելքը երկրի մակերևույթի վրա պայմանավորվում է երեք իրար հետ հաճախ կապված գործոններով [25]:

1) Տեղանքի մասնատվածությամբ, այսինքն՝ ջրատար հորիզոնների հասունով էրոզիոն և ժամանակակից ռելիեֆի այլ բացասական ձևերով՝ գետահովտներով, ձորակներով, խոր կիրճերով (խրամների), լճային գոզավորություններով և այլն:

2) Տեղանքի ստրուկտորա-երկրաբանական կառուցվածքով, այսինքն՝ պլիկատիվ և դիպունկտիվ տեղախախտումների (տեկտոնական բաց ճեղքեր, տեկտոնական խախտումների գոնա, անտիկլինիլային ծալքեր խախտված կամարներով, թևերով և այլն) առկայությամբ:


3) Ծրջանում ներժայքումների (ինտրովիաների) և դայկաների առկայություններով, որոնց կոնտակտները (հպումները) նատվածքային ապարների հետ կարող են առաջացնել երկրի մակերևույթ դուրս եկող բաց ճեղքեր: Բացի այլ՝ նատվածքային ապարներում բուն ինտրովիաների և դայկաների ճեղքերով նույնպես ստորերկրյա ջրերը կարող են դուրս գալ երկրի մակերևույթը:

Ներկայումս աղյուրների համընդիանուր դասակարգում, որը արտահայտի դրանց պայմանները, կապը ստորերկրյա ջրերի տարրեր տիպերի հետ, ռեժիմը, պրակտիկ օգտագործումը, գոյություն չունի: Եղած մասնակի դասակարգումները հիմնված են կամ ըստ բնորոշ ապարների, որոնց հետ կապված են աղյուրները, կամ ըստ հիդրավլիկական ցուցանիշների (կապը ճնշումային և ոչ ճնշումային ջրերի հետ): Հաշվի են առ-

Առում նաև աղբյուրային ելքերի պայմանները՝ ըստ ապարների բնույթի գուգորդված ստորերկրյա ջրերի տիպի հետ, ըստ աղբյուրների ռեժիմի, ըստ ծախսի և այլն:

Ըստ ոչ ճնշումային և ճնշումային ջրերի հետ կապի՝ աղբյուրները համապատասխանաբար բաժանվում են՝ *վարընթաց և վերընթացի*:

Ըստ ստորերկրյա ջրերի առանձին տիպերի հետ կապի և տեղադրման պայմանների՝ աղբյուրները բաժանվում են՝ 1) վերնաջրերով սնվող, 2) գրունտային ծակոտենային ջրերի, 3) ճեղքային, 4) կարստային, 5) արտեզյան, 6) հավերժական սաղցութային մարգերի ստորերկրյա ջրերի (նկ. 54):



Նկ. 54 Ստորերկրյա ջրերի աղբյուրների տիպերը

1-5 վարընթաց աղբյուրներ՝ 1- էրոզիոն, 2- կոնվակուային, 3- էրոզիոն դելյուվիոլ դիմիարված, 4- բարաժային (արգելափակոցային), 5- վերալցումային, 6- կարստային, 7- վերընթաց աղբյուրներ

1. **Վերմաջրերով սնվող աղբյուրները** բնութագրվում են ծախսի, ջերմաստիճանի և կազմի կտրուկ էպիզոտիկ տատանումներով, որոնք հիմնականում կախված են աղբյուրների տարածման շրջանների օգերևութաբանական պայմաններից:

2. **Գրունտային ծակոտինային ջրերի աղբյուրները** հանդիսանում են վարընթացային, դրանց ծախսը, ջերմաստիճանը և կազմը ենթարկվում են սեղոնային և քիչ չափով էպիզոտիկ տատանումների, որոնք նույնպես հիմնականում պայմանավորված են շրջանի օգերևութաբանական պայմանների փոփոխություններով: Այդ խճրում անջատվում են մի քանի տիպի աղբյուրներ՝ էրոզիոն, կոնվակուային, շերտերի սեպասպառման, արտահոսքային (կամ էկրանավորված):

Էրողիոն աղբյուրներն առաջանում են ակտիվ էրողիոն գործընթացների արդյունքում, որոնք գրունտային ջրատար հորիզոնը բացում են այս կամ այն խորության:

Կոնկրետացնելու աղբյուրները դուրս են գալիս ոելիեֆի բացասական ձևերում լավ թափանցելի ապարների բույլ թափանցելի կամ ջրամերժ ապարների հետ կրնտակտային մասերից, որոնք տեղադրված են թեր կամ հորիզոնական:

Շերտերի սեպասպառման աղբյուրները ի հայտ են գալիս բուն ջրատար հորիզոնների ստրատիգրաֆիական սեպավորման կամ դրա ընդլայնական կտրվածքի փոքրացման հետևանքով:

Արլահոսային (կամ *Էկրանավորված*) աղբյուրներն ունեն ջրերի վերընթաց շարժում երկրի մակերևույթի վրա ելքային տեղերում: Այդ դեպքում վերընթաց շարժումը ի հայտ է գալիս՝

ա) լանջերի ժամանակակից ոելիեֆի բացասական ձևերի վրա թափանցելի կամ անջրաթափանց դելյուվիլի տարածման հետևանքով,

բ) աղբյուրը սնող ջրատար հորիզոնի ջրամերժ հիմքի մեծ անհարթությունների հետևանքով,

գ) աղբյուրների ելքային մասում վարնետքի (տարեցքի) առկայությամբ, որը խոչընդոտում է գրունտային ջրերի շարժումը (տեկտոնական էկրանավորված աղբյուրներ),

դ) գրունտային ջրատար հորիզոնը ներկայացնող ապարների ֆացիալ փոփոխականության (ֆացիալ-էկրանավորված) հետևանքով:

3. *Գրունտային և ճնշումային ճեղքային ջրերի աղբյուրները* լինում են վարընթաց և վերընթաց: Առաջինները կապված են հողմնահարման զոնայի մագմատիկ, փոխակերպային և նստվածքային ապարների ճեղքավորվածության հետ: Դրանք գրունտային ծակոտինային ջրերից տարրերվում են նրանով, որ սովորաբար ունեն առավել համակենտրոնացված ելքեր: Վերընթաց աղբյուրները սնվում են ճնշումային ճեղքային ջրերից, ընդ որում դրանցում ճնշումը պայմանավորված է հիդրոստատիկ ճնշումով, գազերի ճնշումով կամ ջրային գոլորշիններով (հեյզերներ):


Այդ խմբին են վերաբերում հիմնական հանքային ջրերի ելքերը և ջերմային աղբյուրները:

4. *Գրունտային և ճնշումային կարստային ջրերի աղբյուրներ* հանդիսանում են ինչպես վարընթաց, այնպես և վերընթաց: Սնվում են

կարստային ջրերով, որոնք լայնորեն տարածված են կարբոնատային (կրաքարեր, դղումիտներ, մերգելներ), սովֆատային (գիպսեր, անհիդրիտներ) և աղատար ապարներով ներկայացված շրջաններում:

Տարաբնույթ և բազմազան կարստային աղբյուրներից կարելի է առանձնացնել երեք ենթախմբեր՝ մեջքնդմիջվող (հերթափոխվող), մշտական և սրուրջյա (ենթածովային, սուբմարինային, էժելսորորային) (նկ. 55):

Մեջքնդմիջվող աղբյուրները, ըստ ժամանակի, բնութագրվում են ծախսի կտրուկ ամկայունությամբ, գործում են սիֆոնի սկզբունքով, դրանք տախու են մեկ բարձր, մեկ էլ շատ քիչ ծախս, ընդհուպ մինչև ջրի ելքի դադարեցումով: Նման աղբյուրները կապված են կարստային ջրերի տեղադրման խորությունից բարձր:



Նկ. 55 Կարստային աղբյուրներ

- 1- երկրի մակերևույթ դուրս եկող ճեղքեր և սողանցքեր, 2- կարստային խոռոչ
- 3- սիֆոնային փիպի ճկված սողանցքեր, 4- աղբյուր սեղոնային, 5- մշտական կարստային ջրաբար հորիզոննի ջրի մակարդակը, 6- կարստային սողանցք,
- 7- աղբյուր մշտական, 8- ծովի մակերևույթից ներքի գեղադրված կարստային սողանցք, 9- աղբյուր սուբմարինային

Մշտական աղբյուրները կապված են խոշոր ճեղքերի, ստորերկրյա անքցուղիների, հորիզոնական քարանձավների, հիմնական կարստային ջրատար հորիզոնի տարածման զոնայի հետ: Այդ աղբյուրների ծախսը երբեմն հասնում է մի քանի տասնյակ խորանարդ մետրի մեկ վայրկյանում, ընդ որում այն շատ հաճախ ունենում է կտրուկ տատանումներ տարվա սեղոններում:

Աղբյուրները կապված են ստորերկրյա կարստային անցողիների հետ, որոնք տեղադրված են ծովի մակերևույթից ցածր (նկ.55): Այդ աղբյուրների բնորոշող առանձնահատկությունը կայանում է նրանց ջրի տակ դուրս գալու պարբերությունը, որը կապված է անցքուղիների և աղբյուրների ելքամասերի ճնշումներից: Եթե ճնշումը անցքուղում գերազանցում է աղբյուրի ելքամասում ջրի այան ճնշմանը, ապա վերջինս շատրվանում է (որպես հոսքի արտարկիչ (ժենկտորային) աղդեցության արդյունք): Ճնշումների հակառակ հարաբերակցության դեպքում կատարվում է ծովի ջրի ներծծում դեպի կարստավորված զանգվածի խորքը (ծովային աղաց):

5. Արտեզյան ջրերի աղբյուրները վերընթաց են, նրանք կապված են արտեզյան ավազանների և լանջերի ջրերի հետ: Արտեզյան ավազանների տարածքում աղբյուրները դուրս են գալիս գետային հովհաններում, ձորակներում, լճային գրգավորություններում, վարնետքային բնույթի ճեղքերում, ինտրուզիաների և դայլային զոնաների կոնտակտներում:

Արտեզյան լանջերը բնորոշ են նախալեռնային շրջանների համար, որտեղ միաբեր (մննողինալ) տեղադրված ջրատար ապարները խառնվելով ջրամերժերի տակ, սեպանում են կամ կրում են ֆացիալ փոփոխություններ՝ անցնելով ավելի քույլ ջրաբափանց ապարների: Դրա հետևանքով ստեղծվում է հիդրոստատիկ ճնշում, որը բերում է վերընթաց հզոր աղբյուրների երևան գալուն, երբեմն գծային տեսքով՝ կրկնելով լեռան ստորոտի ուրվագիծը:

6. Հավերժական սառցութային մարգերի սրորերկրյա ջրերի աղբյուրները, համաձայն Ն. Ի. Տոլստիխինի (1941) ստորաբաժանվում են՝ վերսառցութային՝ վարընթաց, միջասառցութային՝ գլխավորապես վերընթաց, ենթասառցութային՝ վերընթաց:

Վերսառցութային աղբյուրները դուրս են գալիս ծամանակակից ռելիեֆի բացասական ձևերում և կախված դրանց սնող վերսառցութային ջրերի տեսակից բաժանվում են երկու ենթախմբի՝ 1) գործունյա շերտի աղբյուրներ, 2) վերսառցութային հալույթների (տալիկ) աղբյուրներ:

Գործունյա շերտի վերսառցութային ջրերի աղբյուրները ամուսն շրջանում սնվում են ծակոտենային կամ ճեղքային ջրերով, որոնք տեղադրված են հավերժական սառածության մակերևույթի վերին մասում չորրորդականի փուլը նստվածքներում կամ հողմնահարման զոնայի մագմատիկ, փոխակերպային կամ նստվածքային ապարների ճեղքե-

բում: Օդի բացասական ջերմաստիճանների վրա հասնելուն պես գործունյա շերտի վերսացութային ջրերը սառչում են: Դրա հետ կապված՝ առաջին ենթախմբի աղբյուրները դադարում են գոյություն ունենալուց: Վերսացութային ջրատար հորիզոնի սառեցման գործընթացը, ինչպես վերը նշվել էր, ուղեկցվում է սառցաբլուրների առաջացումներով:

Վերսացութային հալույթների աղբյուրները կապված են այդ հալույթների ջրերի հետ, որոնք առաջացել են գետերի և գետակների, լճերի և հնահուների հունատակերում: Զնուանը այդ ջրերը, բացառությամբ համեմատարար հզոր հալույթների տեղամասերի, սառչում են (առավել մանրամասն տես զլ. XIV): Դրանք, որպես կանոն, քաղցրահամ են, թույլ հանքայնացված, ունեն հիդրոկարբոնատային, սոլֆատային կամ խառը կազմ:

Սիջասացութային աղբյուրները սնվում են հալութային ճնշումային ջրերից, որոնք կապված են ջրաերկրաբանական կտրվածքի, այսպես կոչված, շերտավոր սառույցների, ճեղքա-կարստային ճնշումային ջրերի հետ: Կախված դրանց սնող հորիզոնների բնույթից՝ ունեն տարրեր ծախսեր՝ լիտրի տասնորդական մասերից մինչև տասնյակ լիտր մեկ վայրկյանում: Զնուանը այդ աղբյուրների ելքերը գետահովտներում առաջացնում են սառցաբլուրներ (տես զլ. XIV): Սիջասացութային աղբյուրների ջրերը քաղցրահամ են կամ թույլ հանքայնացված, ունեն հիդրոկարբոնատային, սոլֆատային, խառը կամ քլորիդային կազմ: Քաղցրահամ միջներտային աղբյուրները օգտագործում են ջրամատակարարման համար:

Ենթասացութային աղբյուրները սնվում են տարրեր ստորերկրյա ջրերով, որոնք տեղադրված են հավերժական սառցութային զոնայի տակ ճեղքա-ծակոտինային, ճեղքա-շերտային, ճեղքային և ճեղքա-կարստային ապարներում: Դրանք բնութագրվում են ջրերի հաստատում ծախսով, ջերմաստիճանով և կազմով: Զնուանը առաջացնում են խոշոր սառցաբլուրներ, որոնց չափերը որոշվում են դրանց սնող աղբյուրների ծախսով:

Աղբյուրների հատուկ խմբերը, որոնք հանդիպում են երիտասարդ հրաբխականության գործունյա ջրջաններում, հեյզերներն են (տես վե-րը):

15.5.2. ԱՊԲՅՈՒՐՆԵՐԻ ՌԵԺԻՄԸ

Աղյուրների ռեժիմի տակ հասկանում են դրա ծախսի, կազմի և շերմաստիճանի փոփոխությունը ժամանակի ընթացքում: Ռեժիմի նշանակած ցուցանիշների իմացությունը բոլոր է տալիս սահմանելու աղյուրների բնույթը, սննման մակերեսը, աղյուրների պլակտիկ նշանակությունը և այլն:

Աղյուրների ռեժիմը պայմանավորված է մի շարք բնական և արհեստական (տեխնածին) գործոններով:

Առաջինների մեջ նախ պետք է առանձնացնել երկրաբանական, կիմայական, ջրաերկրաբանական և հողա-կենսածին (քիոգեն) գործոնները, երկլորդին վերաբերում են այն գործոնները, որոնք պայմանավորված են ջրերի արհեստական կուտակումներով (պատվարներ, ջրանցքներ, ոռոգման համակարգեր, ստորերկրյա արգելափակումներ (բարաժներ) և այլն) կամ ստորերկրյա ջրերի ջրհաններով (ջրիջեցնող սարքավորումներ, ջրառու կառույցներ, հանքարանների ջրհանում և այլն): Աղյուրների ռեժիմը սահմանվում է դիտարկումներ կատարելու ճանապարհով: Դիտարկումները կարող են լինել էալիգոտիկ, սեզոնային և մշտական (ստացիոնար): Վերջիններս տարվում են նվազագույնը մեկից երեք տարի ժամկետով:

Մշտական գործող աղյուրները բնութագրվում են նրանով, որ մշտապես գործում են շատ տարիների ընթացքում՝ ունենալով տարեկան և քաղմանյա ռեժիմի տատանումներ: Դրանց կարելի է դասել առաջին ինչ խմբի աղյուրները, ինչպես նաև ենթասահցութային վերլիքաց աղյուրները (տես վերը):

Սեզոնային գործող աղյուրները տարբերվում են նրանով, որ սննման ինչ-որ յուրահատուկ պայմանների կամ ելքի առանձնահատուկ ջրաերկրաբանական պայմանների հետևանքով գործում են միայն տարվա որոշակի ժամանակներում: Դրանք գլխավորապես վերընթաց աղյուրներն են, որոնք բնութագրվում են գործումներյան յուրահատուկ մեխանիզմով (մեջընդիշվող, վերսացութային, վերաբափող աղյուրներ): Դրանց են վերագրվում և ստորգրյա աղյուրները:

Ոիրմիկ գործող աղյուրներին են պատկանում այն աղյուրները, որոնք այս կամ այն չափով ունեն ծախսի և ճնշման ոիրմիկ տատանումներ կամ կանոնավոր պարբերականություն: Դրանց են պատկա-

Առում հեյզերները և սիֆոնները, ինչպես նաև տարբեր բարախող աղբյուրները, որոնց միջև կամ նվազագույն և առավելագույն ծախսերի միջև ընկած տևողությունը շատ կարճ է:

Աղբյուրների ռեժիմը առավել կարևոր նշանակություն է ստանում, եթե դրանք ընդգրկվում են տարբեր նպատակներով օգտագործելու համար (ջրամատակարարում, հանքաջրաբուժություն և այլն):

Բացի դիտարկված դասակարգումային սխեմաներից՝ կարևոր գործնական նշանակություն ունի աղբյուրի առանձնացումը կատեգորիաների և դասերի՝ ըստ դրանց ծախսի և ջերմաստիճանի [33]:

Հստ ծախսի աղբյուրները բաժանվում են երեք տիպի (փոքրածախս, միջին ծախսի և մեծածախս) և ինը դասի (աղ. 19):

Աղյուսակ 19

Աղբյուրների դասակարգումն ըստ ծախսի

Տիպը	Դասը	Անվանումն ըստ ծախսի	Ծախսը, լ/վ
I	1	Խիստ ամենան	<0.01
	2	Անշան	0.01-0.1
	3	Փոքր	0.1-1.0
II	4	Նշանակալից	1.0-10.0
III	5	Մեծ	10-100
	6	Շատ մեծ	100-1000
	7	Հսկա	1000-10000
	8	Գերհսկա	10000-100000
	9	Բացառիկ գերհսկա	>100000

Գերհսկա և բացառիկ գերհսկա միայնակ կամ խումբ աղբյուրները հանդիպում են համեմատաբար հազվագյուտ և սովորաբար կապված են կարստային և երակային ջրերի հետ:

Հստ ծախսի տատանումների (ռեժիմի) աղբյուրները բաժանվում են հինգ կատեգորիաների, որոնք տարվա կտրվածքում բնութագրվում են նվազագույն և առավելագույն ծախսերի հետևյալ հարաբերակցությամբ (աղ. 20)

Աղյուսակ 20

Աղբյուրների դասակարգումն ըստ դրանց ծախսի փոփոխության

Կատեգորիան	Աղբյուրի բնութագիրը	Հարաբերակցությունը
I	Խիստ կայուն	1:1
II	Կայուն	1:1-1:2
III	Փոփոխական	1:2-1:10

IV	Խիստ փոփոխական	1:10-1:30
V	Բացառիկ փոփոխական	1:30-1:100

Ըստ ջրի ջերմաստիճանի՝ աղբյուրները բաժանվում են յոթ դասի (աղ. 21)

Աղյուսակ 21

Աղբյուրների դասակարգումն ըստ ջերմաստիճանի

Դասը	Անվանումն ըստ ջերմաստիճանի	Ջերմաստիճանը, °C
I	Բացառիկ սառը	ցածր 0
II	Շատ սառը	0-4
III	Սառը	4-20
IV	Գ-ոլ	20-37
V	Տաք	37-42
VI	Շատ տաք	42-100
VII	Բացառիկ տաք	բարձր 100

Հարկ է նշել, որ աղբյուրների ջրերի առաջարկումը այս կամ այն օբյեկտի մշտական ջրամատակարարման համար աղբյուրի շահագործական ծախսը հիմնավորվում է՝ ըստ մի քանի տարիների կատարած դիտարկումային տվյալների, իսկ նման տվյալների բացակայության դեպքում ընդունվում է նվազագույն ծախսը, որը որոշված է սեղոնի (ամառային և ձմեռային) կամ մեկ տարվա կտրվածքում:

Աղբյուրներում ջրերը կարող են ունենալ բազմաբնույթ քիմիական, գազային կազմ և ջերմաստիճան, տալիս են նատվածքներ դեղնդեղի (օխրային) հոսքակուտակների, աղային փառերի, տուֆերի, տարաքնույթ կազմի ցեխների ձևով:

Այսպիսով, աղբյուրների առանձնահատկությունները ուսումնասիրելու, դրանց գործնական նպատակներով օգտագործելու հնարավորությունները պարզելու համար անհրաժեշտ է տանել ոեժիմային դիտարկումներ:

ԳԼՈՒԽ XVI

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԿԱՆ ԶՐԱԾՆՇՈՒՄԱՅԻՆ
ՀԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ: ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ ԵՎ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ԾՐՋԱՆԱՑՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

16.1. ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ԲՆԱԿԱՆ ԶՐԱԾՆՇՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱԿԱՐԳԵՐ

Զրաերկրաբանություն գիտության կարևոր հիմնահարցերից մեկը հանդիսանում է ստորերկրյա ջրերի ավազանների հետագա տիպիզացիան ինչպես ճնշումային, այնպես ոչ ճնշումային: Այն ունի կարևոր նշանակություն ստորերկրյա ջրերի ձևավորման գործընթացների ուսումնասիրման համար և ճշտելու սկզբունքները, ինչպես նաև առավել հիմնավորված լուծելու քաղցրահամ, հանքային, արդյունաբերական և ջերմային ստորերկրյա ջրերի որոնման, հետախուզման և արդյունավետ շահագործման խնդիրները: Ստորերկրյա ջրերի ավազանների տիպավորումն իրենից ներկայացնում է գիտամեթոդական հետաքրքրություն և օգտակար հանածոների հանքավայրերի մասնավորապես նավթի և գազի հանքավայրերի որոնման և հետախուզման խնդիրների լուծման համար:

«Արտեզյան ավազան» հասկացությունը չի որոշում երկրակեղենում ճնշումային ջրերի տեղադրման բնական պայմանների բազմածևությունը, քանի որ առանձնացնում են նաև այլ տիպի ավազաններ (արտեզյան լանջեր և այլն), որոնք բնության մեջ նույնական լայն տարածում ունեն: Հաճախ այդպիսի ավազանները տեղադրված են նույն երկրաբանական կառուցվածքներում:

Էական է հանդիսանում նաև այն, որ ավազաններում ստորերկրյա ջրերի դինամիկան որոշվում է ոչ միայն հիդրոստատիկ ճնշումներով, որը ձևավորվում է սննման և ճնշման ստեղծման մարզերում: Սինեկլիզաներում, գոգավորությունների և նախալեռնային իջվածքների խորք մասերի ջրաերկրաբանական պայմանների առանձնահատկությունների ուսումնասիրությունները թույլ են տվել որոշելու, որ շերտային էներգիայի աղբյուր ծառայում է նաև դրանցից վերև տեղադրված ավարների հաստվածքի գեոստատիկ ճնշումը և երկրատեկտոնական ճնշումները

(Բ. Ա. Տիսոստով, Ն. Բ. Վասոսկիչ, Յու. Վ. Մուխին, Ա. Ա. Կարցև և ուրիշներ): Դրա հետևանքով շատ շրջաններում շերտային ճնշումը զգալի գերակշռում է հիդրոստատիկին, ի հայտ են գալիս, այսպես կոչված, «անօմալ» ճնշումներ և անջատվում են շերտային անոնմալ բարձր ճնշման (ԸԱԲՇ) գոնաներ: Այդպիսի անոնմալ ճնշումները լայն տարածում ունեն հատկապես երիտասարդ գոգավորություններում և իջվածքներում, որոնք կապված են ալյումինական տեկտոնական ցիկլի հետ, դրանցում նստվածքների խտացման գործընթացները շարունակվում են և ներկա ժամանակներում:

Զրատար հորիզոններում ճնշման ձևավորման վրա գեռստատիկ բեռնվածքի ազդեցությունը կայանում է ուժեղ խտացվող նստվածքներից (օրինակ, կավերը) ջրի քանիվ ջրատար հորիզոններ, որոնց ապարները խտացման թիվ են ենթարկվում (ավագներ և այլն): Լրացցից ծավալի ջրերը, որոնք ջրատար ապարներ մուտք են գործում դրան վերևից և ներքևից սահմանափակող կավային հաստվածքներից, բերում են շերտային ճնշման մեծացման, սննման և ճնշումների ստեղծման մարզերի ձևավորման՝ ի հաշվի գեռստատիկ ճնշումների:

Ավազանի խորաստուգման սեղմնենտացիայի գործընթացում, բացի միներալային նստվածքների մեխանիկական խտացումից, ավելանում է տեկտոնական լարվածության ազդեցությունը: Տեկտոնական շարժումները ոչ միայն ազդում են ապարների խտացման ինտենսիվության վրա, այլ ճեղքային և խզվածքային գոնաների ձևավորման արդյունքում զգալի ազդեցություն են դրույմ նաև ջրերի հոսքի ճանապարհների փոփոխման և վերաբաշխման վրա:

Շերտային անոնմալ բարձր ճնշումների (ԸԱԲՇ) ձևավորման համար բարենպատ պայմաններ գոյություն ունեն պլատֆորմի կողային ճկվածքներում և իջվածքներում, որոնք գտնվում են տևական ճկվածքային փուլերում (հատկապես, երբ կտրվածքում առկա են կավային կամ հալոգեն ապարներ): Այդպիսի կառուցվածքների կարելի է վերագրել Մերձկասպյան և Դնեպր-Դնեցկյան իջվածքները, Նախատրալյան ճկվածքը և այլն:

Պետք է հաշվի առնել, որ իջվածքի ճկվածքավորման գործընթացում շերտային ճնշման բարձրացում կարող է տեղի ունենալ նաև ջրերից աղերի նստեցումով կամ նոր միներալների առաջացումով ապարների ծակոտիների փոքրացման արդյունքում ջերմաստիճանի բարձրաց-


մանը զուգընթաց ապարների մասնիկների, ջրերի և գազերի ընդարձակման հետևանքով [19]:

Այսպիսով, երկրակեղևում ստորերկրյա ջրերի հիդրոդինամիկան և ջրաերկրաքիմիական պայմանների ձևավորումը սերտորեն կապված էն նաև վագուածքների ապարագոյացման (դիագենեզի) գործընթացների և կառուցվածքների (ստրուկտորաների) երկրաբանական զարգացման պատմության հետ: Ընդ որում, շատ հաճախ նույն երկրաբանական ստրուկտորայում անջատվում են ստորերկրյա ջրերի ավագաններ, որոնք տարրեր են իրենց կառուցվածքներով, հիդրոդինամիկական պայմաններով և ջրաերկրաքիմիական առանձնահատկություններով, սակայն, այդ ամենով հանդերձ, դրանք այս կամ այն աստիճանի կապված են իրար հետ և միասին վերցրած առաջացմում են մեկ միասնական խոշոր հիդրոդինամիկական համակարգ՝ որպես տարրեր կառուցվածքի ստորերկրյա ջրերի ավագանների համակցություն:

Կապված վերը շարադրվածի հետ՝ Ա. Մ. Օվչիննիկովը առաջ է քաշել ջրաճնշումային համակարգ հասկացությունը: Ներկա ժամանակներում «ջրաճնշումային համակարգ» տերմինը լայն ճանաչում է ստացել ջրաերկրաբանության մեջ:

Հստ Ա. Մ. Օվչիննիկովի բնորոշման ջրաճնշումային համակարգ ասելով պետք է հասկանալ տարրեր ստորերկրյա ջրերի ավագանների համակցություն (երբեմն առանձին խոշոր ավագաններ), որոնք գտնվում են մեկ կամ մի քանի լծորդված երկրաբանական կառուցվածքներում, որի սահմանները երկրաբանակառուցվածքային առանձնահատկությունների և ստորերկրյա ջրերի ձևավորման ու տարածման օրինաչափությունների վերլուծման հիման վրա քիչ թե շատ ցայտուն կարելի է եզրագծել:

Բնական ջրաճնշումային համակարգերը, ըստ ծագման և ճնշման առաջացման մեխամիզմի՝ Ա. Ա. Կարցևը բաժանում է երկու գլխավոր տիպերի [15]՝ էլիպիտն և ինֆիլտրացիոն (նկ. 56):



Նկ. 56 Կտրվածքում ինֆիլտրացիոն և էլիզիոնային ջրաճնշումային համակարգերի տարածական հարաբերակցության սխեմա (ըստ Ա. Ա. Կարցևի)

1- ինֆիլտրացիոն ջրաճնշումային համակարգ, 2- էլիզիոնային համակարգ,
3- ջրամեռժ ապարներ, 4- իւրացվող լիդմեր՝ կավեր, 5- ծով, 6- արրեցյան ջրերի շարժման ուղղություն

Էլիզիոն համակարգերը, որպես կանոն, բնորոշ են պլատֆորմերում, նախալեռնային ճկվածքներում և միջլեռնային իջվածքներում ջրաճնշումային համակարգի զարգացման վաղ շրջաններին, ինչպես նաև օվկիանոսային և ծովային իջվածքների ճկվածքավորվող տեղամասերի սահմաններին: Էլիզիոն համակարգերում ճնշումը ստեղծվում է ի հաշիվ խտացվող միներալային նատվածքներից ճգմաքամվող ջրերի կուտակիչների (առավել ջրատար ապարներ) ներմնման հաշվին և մասսմբ, ի հաշիվ վերջիններիս խտացման արդյունքում, դրանցից ճգմաքամված ջրերի մի մասից մյուս մաս տեղաշարժնան: Նման համակարգերում նատվածքների խտացումը տեղի է ունենում նատվածքակուտակման և գեռստատիկ բեռնվածքի հետևանքով: Այդպիսի գործընթացը անվանում են գեռստատիկ [15]: Չի բացառվում նաև այն հնարավորությունը, որ ապարների խտացումը և դրանցից ջրերի արտագմումը արդյունք լինի երկրադինամիկական ճնշումների, որոնք առաջ են գալիս տեկտոնական լարվածությունների դեպքում: Այդպիսի էլիզիոն ջրաճնշումային համակարգերը Ա. Ա. Կարցևը առաջարկում է անվանել երկրադինամիկական: Ջրաճնշումային համակարգերը առայժմ թույլ են ուսումնասիրված:

Ինֆիլտրացիոն ջրաճնշումային համակարգերը տիպական են երկրաբանական զարգացման առավել ուշ ժամանակաշրջանների համար,

որոնք գերազանցապես ընթանում են մայրցամաքային պայմաններում: Այդպիսի ջրաճնշումային համակարգերում ճնշումները ստեղծվում են ի հաշիվ մքնուղրտային տեղումների և նակերևորային ջրերի ինֆիլտրացիայի դեպի ջրատար հորիզոններ, այսինքն՝ ի հաշիվ հիդրոստատիկ ճնշումների, որոնք տեղի ունեն սննման և ճնշման ձևավորման (ստեղծման) մարգերում: Դրա համար էլ այդպիսի ջրաճնշումային համակարգերը Ա. Ա. Կարցևը անվանում է ինֆիլտրացիոն:

Որոշ ջրաճնշումային համակարգերին հատուկ է ինֆիլտրացիոն և էլիզիոն ռեժիմների միաժամանակյա զարգացումը: Դրա համար էլ, ըստ առաջացման մեխանիզմի, առանձնացնում են նաև իստոր տիպի ջրաճնշումային համակարգ (Սերձկասպյան, Ազովա-Կուբանական, Թերսկո-Կումակի):

Բնական պայմաններում ստորերկրյա ջրերի շարժումը միաժամանակ գործող բազմաթիվ գործուների արդյունք է: Ստորերկրյա ջրերի գրավիտացիոն և էլիզիոն շարժման բաղադրիչների հարաբերակցությունը կարող է լինել խիստ տարբեր:

16.2. ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ ԵՎ ԳՐԱՎԻՑ ՌԱՍՏՐԱԿԱՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Սրորերկրյա ջրերի հանքավայր ասելով հասկացվում է ջրակար հորիզոնների կամ համալիրների այնպիսի մասեր, որոնց սահմաններում բնական կամ արհեստական գործուների շնորհիլ կուրակվող սրորերկրյա ջրերը որակական և քանակական տեսակերպից համեմատաբար կայուն են և լովյալ ժամանակաշրջանում դնուիսապես շահավետ ժողովրդական տիպիներյան մեջ գրարքեր նապարակելու օգրագործելու համար [18,11]:

Ստորերկրյա ջրերի հանքավայրի այն մասերը, որոնց սահմաններում գործնական օգտագործման համար կատարվում է անմիջական ջրառում (ջրհանում), կոչվում են շահագործական կամ ջրհանում տիպամասեր (Ն.Ի. Պլուրակիով, 1985):

Այն հանքավայրերը, որոնք ունեն գործնական մեծ նշանակություն, անվանում են արդյունաբերական տիպի հանքավայրեր: Դրանք ջրաերկրաբանական օրյեկտներ են, որոնք գործնականում հանդիսա-

Առում են նշանակալի շահագործական պաշարների հիմնական մատակարարողները խոշոր քաղաքների, արդյունաբերական կենտրոնների ջրամատակարարման, ինչպես նաև խոշոր հողատարածքների ոռոգման խնդիրների լուծման դեպքում:

Արդյունաբերական տիպի հանքավայրերի համար ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների ներքին սահմանը պայմանականորեն ընդունում են մինչև 5-8 հազ.մ³/օր ջրաքանակը: Քիչ շահագործական պաշարներով հանքավայրերը վերաբերում են փոքր օբյեկտներին և հանդիսանում են *սպորտերկրյա ոչ արդյունավելիք դիպի հանքավայրեր*:

Ստորերկրյա ջրերի հանքավայրերը լինում են բնական (քնական գործուների շնորհիվ ձևավորվող) և արհեստական (միջոցառումների շնորհիվ ձևավորվող): Արհեստական հանքավայրերը կարող են ստեղծվել բարենպաստ երկրաբանա-կառուցվածքային և լիքոլոգիական (քարաբանական) պայմաններում մակերևութային հոսքը արհեստական ճանապարհով ստորերկրյա հոսքի փոխարկման, դրանով իսկ համալրել գոյություն ունեցող ջրատար հորիզոնը կամ ստեղծել նոր ջրատար հորիզոն: Վերջիններիս նպաստում են նաև ջրամբարներից, ոռոգումից, ոռոգման համակարգերից և այլն ինֆիլտրվող ջրերը:

Ստորերկրյա ջրերի հանքավայրերը այլ օգտակար հանածոների հանքավայրերի (պինդ, նավթ, գազ) նման ունեն իրենց եզրագծերը (սահմաններ՝ հատակագծում և կտրվածքում), պարփակում են ստորերկրյա ջրերի որոշակի ծավալ, բայց դրանցից տարբերվում են ջուր-միներալի շարժությամբ, դրա ռեսուրսների վերականգնման և պաշարների լրացման յուրահատկությամբ: Բացի այդ՝ եթե պինդ օգտակար հանածոների, նավթի և գազի հեռանկարային օգտագործման գնահատման դեպքում բավական է մեկ հասկացություն՝ «օգտակար հանածոների պաշարներ», ապա ստորերկրյա ջրերի համար միայն այդ հասկացությունը չի կարող ամբողջությամբ բնութագրել դրանց արդյունավետ շահագործման հնարավորությունը: Դրա հետ կապված՝ ջրաերկրաբանությունում բացի «ստորերկրյա ջրերի պաշարներ» հասկացությունից օգտագործվում է նաև «ստորերկրյա ջրերի ռեսուրսներ» տերմինը, որը բնութագրում է ջրատար հորիզոնի սնումը:

Ստորերկրյա ջրերի պաշարի տակ հասկանում են ջրատար ապար-ների ծակոտիներում և ճեղքերում պարփակված գրավիտացիոն ջրերի ծավալը, որն ունի ծավալի չափողականություն:

Ստորերկրյա ջրերի ռեսուրսների տակ հասկանում են ստորերկրյա ջրերի այն քանակը, որը մուտք է գործում ջրատար հորիզոն մթնոլոր-տային տեղումների և գետային ջրերի ինֆիլտրացիայի, վերև և ներքև տեղադրված սահմանակից տարածների ջրատար հորիզոններից, ջրե-րի ներհոսքից, ինչպես նաև ջրանցքներից, ջրամբարներից, ոռոգվող մակերեսներից և այլ ջրատեխնիկական միջոցառումների իրականա-ցումից կատարվող ջրերի ֆիլտրացիայի հաշվին: Դրանք արտահայտ-վում են ծախսի միավորներով:

Չնայած ստորերկրյա ջրերի հանքավայրերի բնական պայմաննե-րի և լուծվող հարցերի բազմազանությանը, դրանց որոնման և հետա-խուզական աշխատանքների հիմքում դրվում են երկրաբանա-հետա-խուզական աշխատանքների ընդհանուր սկզբունքները, որոնք մշակ-ված են դարավոր փորձով, հիմնված են տարբեր օգտակար հանածոննե-րի ձևավորման և տարածական բաշխման մասին եղած օրինաչափութ-յունների վրա: Այդ սկզբունքների կիրառելության հարցերը ջրաերկրա-բանության մեջ հանգամանորեն բննարկվում են Գ. Ն. Կամենսկու, Ն. Ա. Պլոտնիկովի, Ն. Ն. Բինդեմանի և այլոց աշխատություններում:

Տարբեր տիպի ստորերկրյա ջրերի հանքավայրերի ուսումնասի-րության ընդհանուր սկզբունքների թվին են պատկանում.

1. Յուրաքանչյուր շրջանում, ռեգիոնում, օբյեկտում որոնողա-հե-տախուզական աշխատանքներ սկսելու ջրաերկրաբանական հիմնա-վորվածության և տեխնիկատեսական նպատակահարմարության սկզբունք:

2. Փուլայնության (էտապայնության, ստաղիականության) կամ ստորերկրյա ջրերի հանքավայրի ուսումնասիրության աստիճական մո-տեցման սկզբունք:

3. Օրյեկտի հավասարանշանակ ուսումնասիրության սկզբունք:

4. Ստորերկրյա ջրերի շահագործման ժամանակ շրջակա էկոլո-գիական (երկրաբանական) միջավայրի, ինչպես նաև դրանց կեղտո-տումից և սպառումից (հյուծումից) պահպանման սկզբունք:

5. Հանքավայրի ուսումնասիրման համար ժամանակի նյութական միջոցների և աշխատանքի նվազագույն ծախսի սկզբունք:

Նշված սկզբունքների բնութագրերը տրվում է Ն. Ի. Պլոտնիկովի (1985) աշխատությունում:

16.3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶՐԱԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Զրաերկրաբանական շրջանացումը զրաերկրաբանական այս կամ այն հատկանիշներով կամ դրանց համակցությամբ տարրերվող շրջանների (տեղամասերի) առանձնացումն է:

Կախված ուսումնասիրության նպատակից և խնդիրներից՝ այն կատարվում է տարրեր մասշտաբներով, տարրեր աստիճանի մասնակրկիտությամբ՝ հաշվի առնելով շրջանացնան տարրեր գործոններ:

Զրաերկրաբանական շրջանացման հիմնական գործոնների մեջ առանձնացվում են հետևյալները [25].

1) ֆիզիկաաշխարհագրական (ռելիեֆ, կլիմա, հողարուսական ծածկ, բուսաաշխարհագրական պայմաններ, զրագրաֆիական ցանց, գետեր, լճեր, ծովեր),

2) զրաբանական (մակերևութային ջրերի հոսքի ավագաններ),

3) երկրաբանական (շերտագրություն, զրատար և զրամերժ ապարների ծագումը և հասակը, դրանց կազմը, տարրալուծելիությունը, տարածքի երկրաբանական կառուցվածքը, տեկստոնիկան և նեռտեկստոնիկան, սեյսմիկությունը և հրաբխականությունը, զրատար ճեղքերի համակարգերը, այդ թվում և զրատար խզվածքների խոշոր գոնաներ),

4) երկրածնաբանական (ռելիեֆի ձևերը և դրանց երկրաբանական կառուցվածքը, դարավանդներ, արտաքերման կոներ, ռելիեֆի արտահայտված տեկստոնական բարձրացումներ՝ անտիկլինալային ծալքեր և հորսուեր, ռելիեֆում արտահայտված տեկստոնական գոգավորություններ, սինկլինալային ծալքեր և գրաբեններ),

5) զրաերկրաբանական (ապարների զրատարության տիպը, զրատար հորիզոնների հզրությունը, տեղադրման խորությունը և մակերեսը, ստորերկրյա ջրերի հոսքի բնույթը, ստորերկրյա ջրերի սննան, տարածման և բեռնաբափման մարզերը, դրանց ռեժիմը և ռեսուրսները, ստորերկրյա ջրերի ֆիզիկական և քիմիական հատկությունները, ըստ խորության և տարածման ստորերկրյա ջրերի կարծը, հեղուկ և գոլորշածն փուլերի (ֆազաների) տեղաբաշխումը, հիդրոդինամիկական,

ջրաշերմային, ջրաքիմիական գոնալականությունը և գոտիականությունը),

6) Ժողովրդատնտեսական (տարրեր նպատակների գործնական օգտագործման համար պիտանի հիմնական ջրատար հորիզոնների և ճեղքավորվածության գոնաների տեղադրվածությունը, սանհտարա-ջրաերկրաբանական շրջանացումը, ջրերի կենսարանությունը և կենսա-քիմիան, ստորերկրյա ջրերի շրջապատի պաշտպանությունը):

Ներկայում սկզբնավորվել է ջրաերկրաբանական շրջանացման երկու ուղղություն:

Առաջինը նախատեսում է գրունտային և արտեզյան ջրերի իրարից բաժան շրջանացում և կոչվում է *անալիգիկ* (*վերլուծական*), քանի որ այն ուղղեցվում է ջրաերկրաբանական կտրվածքի վերևի մասի (գրունտային ջրեր) և ներքևի մասի (արտեզյան ջրեր) տարանջատման և վերլուծության վրա: Երկրորդը *համադրական* (*սինթետիկ*), որը ջրաերկրա-բանական շրջանացման ժամանակ գրունտային և արտեզյան ջրերը դիտարկում է մեկ ամբողջականություն: Երկու ուղղություններն ել հաջո-դությամբ զարգանում են և բավականին լավ հիմնավորված են:

Ստորերկրյա ջրերի ջրաերկրաբանական շրջանացման առաջին ուղղության կողմնակիցների հիմնական տեսակետները շարադրված և գրաֆիկորեն ձևակերպված են Վ. Ս. Իլինի, Բ. Լ. Լիչկովի, Օ. Կ. Լան-գեի, Ա. Ն. Սեմիխատովի և այլոց աշխատություններում: Այդ հետազո-տողները ենում են գրունտային ջրերի գոնալական տարածման և ար-տեզյան ջրերի երկրատեկտոնական կառուցվածքներին վերագրման դրույթներից:

Ինչպես գրունտային, այնպես և արտեզյան ջրերի իրարից բաժան շրջանացումները կարող են կատարվել ըստ տարրեր ցուցանիշների: Դրա համար էլ գրունտային և արտեզյան ջրերի քարտեզները կարող են իրար չհամընկնել: Գրունտային և արտեզյան ջրերի որոնման, հետա-խուզման և շահագործման պայմանների տարրերությունները խոսում են դրանց իրարից բաժան շրջանացման օգտին: Սակայն, հարկ է նշել նաև, որ գրունտային ջրերի ուսումնասիրման համար, օրինակ, մելիո-րացիայի, ոռոգման նպատակներով հարկավոր է գրաղվել հենց գրուն-տային ջրերով և դրանց նպատակային ջրաերկրաբանական շրջանա-ցումով: Եթե ուսումնասիրման խնդիրների մեջ մտնում են խորքային ջրերը, ապա հարկավոր է կազմել արտեզյան ջրերի շրջանացման քար-

տեղմերը: Կազմելով երկու քարտեզմերը՝ (գրունտային և արտեզյան, այսինքն վերլուծական) անհրաժեշտ է համադրել նյութը, այսինքն՝ կազմել ջրաերկրաբանական շրջանացման համադրական (սինթետիկ) համալիր քարտեզ:

Ստորերկրյա ջրերի մեկ միասնական կառուցվածքա-ջրաերկրաբանական շրջանացման կողմնակիցմերի հիմական տեսակետները շարադրված են Ն. Ֆ. Պոգրեբովի, Ն. Ֆ. Զայցևի, Գ. Ն. Կամենսկու, Ն. Ի. Տոլստիխինի, Ա. Ի. Միլին-Բեկչուրինի և ուրիշների աշխատություններում:

Կառուցվածքա-ջրաերկրաբանական համալիր շրջանացումը կատարվում է՝ հաշվի առնելով շրջանացման բնական-պատճական ամբողջ համալիր գործոնները (ֆիզիկաաշխարհագրական, երկրաբանական, երկրաբանաձևաբանական, ջրաերկրաբանական, ջրաբանական): Այն միավորում է շրջանի բոլոր ջրերը՝ մակերևութային, գրունտային, արտեզյան, ճեղքա-երակային: Դրանում է կայանում կառուցվածքա-ջրաերկրաբանական համալիր շրջանացումը և առավելությունը ստորերկրյա ջրերի բաժան շրջանացման նկատմամբ և դժվարությունն ու բարդությունը:

Ջրաերկրաբանական համալիր շրջանացման սկզբունքները նախ և առաջ որոշվում են գրունտային և արտեզյան ջրերի ձևավորումների օրինաչափություններով և դրանց միջև սերտ կապով: Դրա համար էլ ջրաերկրաբանական շրջանացման հիմնական տարրերը համարվում են երկրաբանակառուցվածքային ստորաբաժանումները, որոնցում ստորերկրյա ջրերն ըստ ձևավորման պայմանների կապված են մեկ միասնական զոնայական համակարգում և տարածված են օրինաչափորեն: Այդ դեպքում ջրաերկրաբանական շրջանը քարտեզի վրա իրենից կմերկայացնի ջրաերկրաբանական կառուցվածքի պրոյեկցիան (առաջաձգությունը) երկրի մակերևույթին:

ԳԼՈՒԽ XVII

**ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՁՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

17.1. ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Զրաերկրաբանական հետազոտությունների՝ մասնավորապես ստորերկրյա ջրերի ուսումնասիրության նպատակով կատարվող ջրաերկրաբանական հետազոտությունների տեսակներն ու կառուցվածքը որոշվում են՝ լուծվող խնդիրների բնույթով, մասշտաբով ու առանձնահատկություններով, ուսումնասիրվող հանքավայրի բնական պայմանների բարդության և ուսումնասիրվածության աստիճանով, նախագծվող հետազոտությունների իրագործման էտապով (ստայիլսով) և տեխնիկատեսական ցուցանիշներով:

Բոլոր պարագաներում ստորերկրյա ջրերի լիարժեք հետազոտությունը գործնականում իրենից բարդ համալիր է ներկայացնում:

Զրաերկրաբանական հետազոտությունների հիմնական տեսակներն են՝ 1) նախկին հետազոտությունների նյութերի հավաքում, ընդհանրացում և վերլուծություն, 2) տեղազննական ջրաերկրաբանական հետազոտություններ, 3) ջրաերկրաբանական հանույթ, քարտեզագրություն, 4) ջրաերկրաբանական հետախուզական աշխատանքներ, 5) դաշտային փորձաֆիլտրացիոն աշխատանքներ, 6) ստորերկրյա ջրերի ֆիլտրացիայի մոդելավորում, 7) նմուշարկում և լարորատոր աշխատանքներ, 8) ստորերկրյա ջրերի ռեժիմային դիտարկումներ:

Ֆունդային և հրատարակված նյութերի հավաքումը, ընդհանրացումը և վերլուծությունը կատարվում է ստորերկրյա ջրերի հետազոտությունների սկզբնական շրջանում: Հիմնական ուշադրությունը դարձվում է շրջանի երկրաբանական և ջրաերկրաբանական պայմանները բնութագրող տեղեկությունների, գործող ջրառների և առանձին շահագործվող հորատանցքերի աշխատանքների ռեժիմի վրա:

Տեղազննական հետազոտությունները կատարվում են նպատակություններով ճշտելու ուսումնասիրվող տեղամասի սահմանները, դրա երկրածնաբանական, երկրաբանական և ջրաերկրաբանական առանձնա-

հատկությունները նախնական ուսումնասիրելու, ինչպես նաև տարբեր տեսակի հետախուզական աշխատանքների կատարման տեխնիկա-տնտեսական պայմանները պարզելու:

Զրաերկրաբանական հանույթը դաշտային համայիր հետազոտություն է, որի նպատակն է տարածքի ջրաերկրաբանական պայմանների ուսումնափումը և քարտեզագրումը՝ պարզելու ջրաերկրաբանական կտրվածքը, ջրատար հաստվածքների և տարբեր տիպի ստորերկրյա ջրերի ու դրանց դրակի տարածման օրինաչափությունները:

Հետախուզական աշխատանքները բաղկացած են հորատանցքերի և փոքր լեռնային փորվածքների՝ շուրֆերի և առուների անցումներով։ Հորատման աշխատանքները համարվում են ջրաերկրաբանական հետազոտությունների հիմնական տեսակը։ Ջրաերկրաբանական հորատանցքերը հնարավորություն են տալիս ուսումնասիրելու երկրաբանա-ջրաերկրաբանական կտրվածքը, մինչև պահանջվող խորություններում որոշելու ջրատար հորիզոնի առաստաղի և հիմքի տեղադրման խորությունները, հզորությունը, ջրատար ապարների կազմը, ստորերկրյա ջրերի հայելու կամ պիեզոնետրիկ մակարդակի տեղադիրքը, ճնշման բարձրությունը, իսկ դրոշակի պայմանների դեպքում հորատանցքերով ջրի ինքնարափման (ինքնաշատրվանման) բարձրությունը։

Փորձաֆիլտրացիոն աշխատանքներն իրականացվում են ջրատար հաստվածքների և աէրացիոն գոնաների ապարների ջրաերկրաբանական պարամետրերի որոշման նպատակով։ Այդ աշխատանքները հանդիսանում են հորատանցքերից, շուրֆերից, ջրհորերից ջրի արտամդումները, հորատանցքերում և շուրֆերում ջրի լցումներն ու ներմղումները [5, 26, 36, 39]։

Արտամդումը հանդիսանում է փորձաֆիլտրացիոն աշխատանքների հիմնական տեսակը։ Դրանք կատարվում են ստորերկրյա ջրերը տարբեր նպատակներով օգտագործման համար ջրաերկրաբանական հետազոտությունների ժամանակ։ Ջրլցումները շուրֆերում և հորատանցքերում շատ հաճախ կատարվում են հողերի ոռոգման և չորացման, ջրանցքների անցման, ջրամբարների կառուցման հետ կապված ջրաերկրաբանական հետազոտությունների ժամանակ։ Հորատանցքերում փորձնական ներմղումները շատ հաճախ կատարվում են ջրատեխնիկական շինարարության տակ ընկած տեղամասերի ջրաերկրաբանական հետազոտությունների ժամանակ։

Սպորերկրյա ջրերի ռեժիմային դիրքարկումներ: Ստորերկրյա ջրերի ռեժիմի ուսումնասիրման հետազոտությունները տարվում են դրանց ձևավորման պայմանների գնահատման նպատակով, ռեժիմների կանխատեսման, այդ ջրերի օգտագործման կամ դրանց դեմ պայքարի, պաշարների գնահատման, աղտոտումից և հյուծումից պաշտպանման միջոցառումների մշակման հարցերի լուծման համար և այլն: Ռեժիմային դիրքարկումները տարվում են հասուկ կանորված ցանցի դիտողական կետերում, որոնցում կարող են ներառվել հորատանցքերը, ջրհորերը, աղբյուրները (քնաղբյուրները), գետերի վրա ջրաչափական կետերը (պոստերը):

Նմուշարկում և լարորակոր աշխատանքներն իրականացվում են՝ նպատակ ունենալով ուսումնասիրելու ապարների ջրաֆիզիկական հատկությունները և ստորերկրյա ջրերի ֆիզիկական հատկությունները, քիմիական և գազային կազմը: Այդ աշխատանքները ներառում են ապարների և ջրի նմուշարկումը տարբեր ձևի անալիզների համար: Նմուշարկումները կատարվում են ջրաերկրաբանական հանույթի, հետախուզական աշխատանքների, փորձաֆիլտրացիոն և ստորերկրյա ջրերի ռեժիմային դիրքարկումներ կատարելու ժամանակ:

Սպորերկրյա ջրերի ֆիլտրացիայի մոդելավորում: Ջրաերկրաբանությունում մոդելավորման տակ հասկացվում է ստորերկրյա ջրերի ֆիլտրացիայի գործնքացմերի և դրանց հետ կապված երևույթների տարբեր մոդելների վրա արհեստական վերաբարդությունը՝ նպատակ ունենալով ապահովելու ջրաերկրաբանական խնդիրների արդյունավետ լուծումները: Ստորերկրյա ջրերի ֆիլտրացիայի մոդելավորումը հանդիսանում է ստորերկրյա ջրերի ուսումնասիրման և շարժման պայմանների քանակական գնահատման առավել հեռանկարային և արդյունավետ մեթոդներից մեկը:

Ջրաերկրաբանական հետազոտությունների նպատակներից և խնդիրներից կախված աշխատանքների հիմնական տեսակները կարող են լրացվել երկրաֆիզիկական, սոսոգրաֆո-գեոդիզիական, ջրաբանական, երկրածնաբանական, օդաֆոտոհանուրային և այլ աշխատանքների կատարումով:

Բոլոր տեսակի աշխատանքների մեթոդիկան առավել մանրամասն դիրքարկում է «Ջրաերկրաբանական հետազոտությունների մեթոդիկա» կուրսում:

17.2. ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն գործող հրահանգների (ինստրուկցիաների) պահանջների՝ ստորերկրյա ջրերի հետազոտական աշխատանքները պետք է կատարվեն հետևյալ փուլերով (ստադիաներով) [18, 5, 33, 11, 25].

1. Զրաերկրաբանական հանույթ 1:200000 մասշտաբի,
2. Ստորերկրյա ջրերի հանքավայրերի որոնումներ,
3. Նախնական հետախուզություն,
4. Մանրակրկիտ հետախուզություն,
5. Շահագործական հետախուզություն (շահագործվող հանքավայրի հետախուզություն):

Աշխատանքի փուլերը, որպես կանոն, պետք է կատարվեն նորմալ հաջորդականությամբ: Առանձին դեպքերում, կախված կոնկրետ պայմաններից, առաջին հերթին ուսումնասիրվածության աստիճանից, զրաերկրաբանական պայմանների բարդությունից և ջրի պահանջարկից, որոշ էտապներ կարող են դուրս մնալ ջրաերկրաբանական հետախուզությունների ընդհանուր սխեմայից կամ միացվեն այլ փուլերի հետ: Զրաերկրաբանական հետախուզությունների յուրաքանչյուր էտապին պետք է համապատասխանի տարբեր տեսակի աշխատանքների արդյունավետ, համալիր կատարման մեթոդիկա: Յուրաքանչյուր նախորդ էտապի աշխատանքների արդյունքները պետք է հիմք հանդիսանան հերթական էտապի աշխատանքների նախագծերի կազմման համար:

1. **Զրաերկրաբանական հանույթ 1:200000 մասշտաբի:** Նշված մասշտաբի զրաերկրաբանական հանույթը կատարվում է տարածքի պլանավորված զրաերկրաբանական ուսումնասիրնան նպատակով: Այդ փուլի աշխատանքների հիմնական նշանակությունը կայանում է տարբեր տիպի ստորերկրյա ջրերի ձևավորման և տարածման հիմնական օրինաչափությունների պարզաբանումը, ուսումնասիրվող տարածքի ջրատարության, գոյուրյան պայմանների և ստորերկրյա ջրերի օգտագործման հնարավորությունների ընդհանուր գնահատումը: Այն տալիս է հնարավորություն իրականացնելու ընդհանուր զրաերկրաբանական շրջանացում՝ անշատելի հեռանկարային մակերեսները և ջրատար հորիզոնները (համալիրները) հետազայում որոնողական և հետա-

խուզական աշխատանքներ կատարելու համար, ինչպես նաև որոշել այդ աշխատանքների կատարման պայմանները:

2.Որոնողական փուլ: Որոնումները կատարվում են հետագա հետախուզական աշխատանքների կատարման համար ջրատար հորիզոնների և տեղամասերի հայտնաբերման և դրանց շահագործական հնարավորությունների մոտավոր գնահատման նպատակով: Որոնողական փուլը բաժանվում է երկու ենթափուլերի՝ ա) ընդհանուր և բ) մասնակիության որոնողական:

ա) Ընդհանուր որոնողական ենթափուլ: Ենթափուլի նպատակային նշանակություններն են այս կամ այն տիպի ստորերկրյա ջրերի խոշոր ջրաերկրաբանական ռեգիոնների հեռանկարային գնահատումը, ջրատար հորիզոնների (համալիրների), ինչպես նաև դրանց տարածման մակերեսների առանձնացումը, որոնք հետագա որոնողական աշխատանքներ տանելու և առանձին ավազանների, ռեգիոնների, ջրատար հորիզոնների և համալիրների կրնկրեա մակերեսների սահմաններում շահագործական պաշարների ռեգիոնալ գնահատումների կատարման համար հեռանկարային են:

Ռեգիոնալ ուսումնամիջությունները հիմնականում կատարվում են նախորդ հանուքային նյութերի, այլ օգտակար հանածոնների որոնումներից և հետախուզություններից, կամ ստորերկրյա ջրերի ռեժիմային դիտարկումներից ստացված տվյալների հավաքման, անվտանգության և գրասենյակային մշակման ճանապարհով: Այդ ենթափուլում նյութերի բավարար առկայության դեպքում կատարվում է ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների ռեգիոնալ գնահատում: Անհրաժեշտության դեպքում այդ ենթափուլում կատարվում է առանձին հորատանցքերի հորատում և նմուշարկում, գործող ջրառների (ջրհանների) վրա փորձային աշխատանքներ և նախկինում հորատված հորատանցքերի ստուգողական հետազոտություններ:

բ) Մանրակրկիդ որոնողական ենթափուլ: Այս ենթափուլի նպատակային նշանակություններն են հեռանկարային մակերեսների սահմաններում ջրատար հորիզոնների և նպաստավոր պայմաններով տեղամասերի պարզաբանումը և հիմնավորումը, դրանցում հետագա հետախուզական աշխատանքների տարման և դրանց շահագործական հնարավորությունների մոտավոր գնահատման համար: Այս ենթափուլի աշխատանքների հիմնական խնդիրն է անհրաժեշտ ելակետային տե-

դեկատվությունների ստացումը, որոնք հնարավորություն կտան հիմնավորելու կոնկրետ մակերեսների սահմաններում ստորերկրյա ջրերի հանքավայրերի առկայությունը (կամ բացակայությունը) և ընտրելու առաջնահերթ հանքավայրերը (տեղամասերը), որոնք հետաքրքրություն են ներկայացնում տնտեսական իրացման համար: Աշխատանքների հիմնական տեսակները հաղիսանում են՝ երկրարանա-ջրաերկրաբանական կամ ջրաերկրաբանական 1:50000 և խոշոր մասշտարի հանույթը՝ կիրառելով երկրաֆիզիկական, ջրաքիմիական դիստանցիոն օդասիթեզերական, հորատման, փորձաֆիլտրացիոն (նմուշարկային արտադրումներ), ինչպես նաև ջրամետրիական, տոպոգեոդեզիական, լաբորատոր աշխատանքների համալիրը և գործող ջրառների տվյալների հավաքումը:

3. Նախնական հետախուզության փուլ: Նախնական հետախուզությունն անհրաժեշտ է հանքավայրի (տեղամասի) երկրաբանա-ջրաերկրաբանական պայմանների հիմնական առանձնահատկությունների ուսումնասիրման և մանրակրկիտ հետախուզության կատարման նպատակահարմարության հիմնավորման համար: Նախնական հետախուզությունը իրականացվում է, եթե ներկայացվում է ջրի պահանջարկի հայտ և եթե հանքավայրը (տեղամասը) իր մասշտարներով, ջրի որակով և աշխարհագրական-տնտեսական դիրքով և տեխնիկա-տնտեսական ցուցանիշներով հետաքրքրություն է ներկայացնում հետագա իրացման համար: Նախնական հետախուզության փուլի աշխատանքների հիմնական խնդիրները հետևյալներն են.

- հետախուզվող տեղամասի սահմաններում առավել հեռանկարային ջրատար համալիրի կամ հորիզոնի (մեկ կամ մի քանի) ընտրությունը,

- ստորերկրյա ջրերի շահագործական պաշարմերի ձևավորման հիմնական աղբյուրների պարզումը և գնահատումը,

- տեղամասի ընտրությունը և դրանում հետագա ջրհանձան (ջրառ) հորատանցքերի տեղաբաշխման սխեմայի հիմնավորումը,

-ստորերկրյա ջրերի որակի որոշումը:

Արդյունաբերական և ջերմային ջրերի հանքավայրերի համար լրացուցիչ որոշվում են հետրյալ խնդիրները.

- ջրից օգտակար կոմպոննենտների կորզման տեխնոլոգիական կամ ջերմության ստացման տեխնոլոգիայի կանոնակարգերի մշակումը,

- հոսքաջրերի քանակի և որակի ու դրանց հեռացման եղանակի որոշումը:

Նախնական հետազոտության փուլում կատարում են հետևյալ աշխատանքներ՝ տեղամասի տեղագննական հետազոտություն, հորատանցումներ, փորձաֆիլտրացիոն աշխատանքներ, մակերեսային խոշորամասշտար երկրաֆիզիկական աշխատանքներ և հորատանքներում երկրաֆիզիկական հետազոտություններ, ջրերի և ապարների նմուշարկումներ, լաբորատոր աշխատանքներ, ստորերկրյա և մակերևութային ջրերի ռեժիմային դիտարկումներ, տոպոգրաֆիական աշխատանքներ, աշխատանքային տեղամասերի սանիտարական հետազոտություններ:

4. *Մանրակրկիդի հեղախուզության փուլ:* Այս փուլում կատարվում է նախնական հետախուզության փուլում ընդգրկված բարենպաստ տեղամասերի մանրամասն հետախուզություն, որի նպատակն է արդյունաբերական կատեգորիաներով հաշվարկել ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները և ստանալ անհրաժեշտ տվյալներ նոր ջրհան կառույցների նախագծման կամ գոյություն ունեցողների ընդլայնման համար:

5. *Շահագործական հեղախուզության փուլ:* Շահագործական հետազոտությունը կատարվում է հաստատված պաշարներով տեղամասներում ջրհան կառույցների կառուցման և շահագործման գործընթացներում, որի նպատակն է պարզել շահագործական ռեժիմի համապատասխանությունը կանխատեսմային հաշվարկների հետ, շահագործման արդյունավետ ռեժիմի և դրա ընթացիկ պլանավորման հիմնավորումները:

17.3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Զրաերկրաբանական հանույթի տակ հասկացվում է դաշտային բնույթի հետազոտությունների համալիր, որի նպատակը ջրաերկրաբանական պայմանների ուսումնասիրությունը, և այդ պայմանները բնութագրող տարրերի (Էլեմենտների) քարտեզագրումն է: Այդպիսի տարրերին են վերաբերում ջրատար և ոչ ջրատար ապարների տարածումը, տեղադրումը և հիմնական պարամետրերը, դրանց լիբոլոգիական կազ-

մը և ջրային հատկությունները, ստորերկրյա ջրերի քիմիական բնութագիրը:

Տարբեր աստիճանի մանրակրկիտությամբ ջրաերկրաբանական հանույթների դեպքում, որը կախված է խնդիրների դրվածքից և հանույթի մասշտաբից, ուսումնասիրում են հետևյալ բնական երևույթները և արիեսատական փորվածքները, որոնք հիմնական (հեռանկարային) նյութերն են ջրաերկրաբանական քարտեզների կազման համար՝ 1) աղբյուրներ և ստորերկրյա ջրերի այլ ելքեր, 2) շախտային հորեր և հորատանցքեր, 3) ստորերկլյա ջրերի գործող և չգործող ջրհանների մասին նյութեր, 4) մակերևութային ջրհոսքեր և ջրավազաններ, 5) ֆիզիկա-երկրաբանական երևույթներ՝ պայմանավորված ստորերկրյա ջրերի գործունեությամբ (կարստ, սողանք, սուֆոզիա, նստեցում, ճահճակալում, հողերի աղակալում և այլն), 6) տեղանքի ուղիելքի երկրաբանածնաբանական տարրեր, 7) բուսաբանաշխարհագրական (գեորուտանիկական) ցուցանիշներ, 8) օդանկարահանութային նյութեր:

Վերը նշված գործուներից յուրաքանչյուրի ուսումնասիրման դաշտային մեթոդները մանրամասն լուսաբանված են ինչպես հատուկ մեթոդական իրահանգներում, այնպես էլ ուսումնական ձեռնարկներում:

Ջրաերկրաբանական հանույթը պետք է զնահատի ստորերկրյա ջրերի սննան և բեռնաբախման առանձնահատկությունները, ստորերկրյա ջրերի ռեսուրսների և կազմի վրա երկրաբանական, երկրածնաբանական, ջրաբանական, երկրաբանասոցաբանական, կիմիայական, կենսաածին, տեխնոլոգիական և այլ գործոնների զանազան ազդեցությունները, ինչպես նաև ստորերկրյա ջրերի դերը երկրաբանական գործընթացներում, ապարների առաջացման և փոփոխման, օգտակար հանածոների կուտակման գործում:

Ջրաերկրաբանական հանույթը կատարվում է պատրաստի երկրաբանական հիմքի վրա կամ երկրաբանական հանույթի հետ (երկրաբան-ջրաերկրաբանական հանույթ, որը պետք է բավարարի երկուսին առաջադրվող պահանջները):

Ջրաերկրաբանական հանույթները, ըստ մասշտաբի, ստորաբաժանվում են՝

- փոքրամասշտաբ (1:1000000-1:500000)
- միջին մասշտաբային (1:200000-1:100000)
- խոշորամասշտաբ (1:50000-1:25000)

-մանրակրկիտ (1:10000 և մեծ) հանույթների:

Ըստ նշանակության (նպատակային առաջադրանքի) առանձնացվում են ընդհանուր պիտական և հարուկ կամ մասնագիրական ջրաերկրաբանական հանույթներ: Առաջինները կատարվում են ընդարձակ տարածքների պլանաչափ համալիր ուսումնասիրության, իսկ երկրորդները՝ կոմплեկտ ժողովրդատնտեսական խնդիրների (ջրանատակարում, ոռոգում, շրացում, ջրատեխնիկական կառույցներ և այլն) ջրաերկրաբանական հիմնավորման համար:

Ընդհանուր պետական հանույթները հիմնականում կատարվում են մասն և միջին մասշտարևներով:

Մանրամասշտար հանույթները կատարվում են խոշոր ռեգիոնների թույլ ուսումնասիրված կամ չուսումնասիրված տարածքների ընդհանուր ջրաերկրաբանական պայմանների լառուսաբանման նպատակով: Հանույթի նյութերը օգտագործվում են տեսական ընդհանրացումների, ռեգիոնալ քարտեզների կազմման, ջրային ռեսուրսների համալիր օգտագործման գլխավոր սխեմաների կազմման համար:

Ներկայում մանրամասշտար ջրաերկրաբանական հանույթներ չեն իրականացվում, 1:500000 մասշտարի քարտեզները կազմվում են ավելի խոշոր մասշտարի հանույթի նյութերի ընդհանրացման միջոցով [11]:

Միջին մասշտարի հանույթները կատարվում են 1:200000 մասշտարի միջազգային ստորաբաժանման պլանշետներով: Միջին մասշտարի հանույթի և քարտեզագրման արդյունքում պետք է գնահատված լինեն տարրեր կարիքների համար ստորերկրյա ջրերի օգտագործման հնարավորությունները հաշվի առնելով ժողովրդական տնտեսության զարգացման ներկա մակարդակը և ապագա 10-15 տարիներում: Բացի այդ՝ պետք է գնահատված լինեն քարտեզագրված տարածքում հետազայտման ջրաերկրաբանական աշխատանքների կատարման նպատակահարմարությունը և բնույթը:

Միջին մասշտարի հանույթի նյութերը օգտագործվում են գլխավոր սխեմաների մշակման, տեխնիկատնտեսական հիմնավորումների (SSՀ), երրեմն՝ տեխնիկական նախագծերի (ջրատնտեսական և այլ ինժեներական կառույցների) հիմնավորման համար:

Խոշորամասշտար հանույթներ: Կատարվում են նախկինում միջին մասշտարի հանույթով ծածկված տարածքում: Այս հանույթները

տարբերվում են երկրաբանական կտրվածքների, ջրաերկրաբանական շերտագրության մանրակրկիտ ստորաբաժանման և ուսումնասիրության աստիճանով: Առավել մեծ ուշադրություն է դարձվում այն ջրաերկրաբանական տարբերին, որոնց իմացությունը հնարավորություն է տալիս զնահատել ջրաերկրաբանական գործընթացների ուղղվածությունը, ինչպես նաև տալ պրակտիկ խնդիրների լուծման համար անհրաժեշտ քանակական բնութագրումներ:

Մանրակրկիտ հանույրներ կամ *մասնագիրացված (խոշորամասշրյաթ)*: Սովորաբար կատարվում են այն տարածքներում, որտեղ նախկինում կատարվել են ավելի մանրամասն մասշտարի հանույրներ՝ օգտակար հանածոների հանքադաշտերում, ջրառ կառույցների տեղամասերում, քաղաքների հատակագծման համար առանձնացված տարածքներում և այլն:

Ջրաերկրաբանական հանույրը ներառում է մինչդաշտային, դաշտային, լարորասոր և գրասենյակային (նյութերի մշակման) աշխատանքների ժամանակահատվածներ:

Ջրաերկրաբանական հանույրի կատարման ժամանակ կիրառում են հետազոտությունների հետևյալ մեթոդները՝ 1) երթուղային հետազոտություններ, 2) քարտեզագրական հորատում և հորատանցքների ջրաերկրաբանական փորձարկում, 3) ոեժիմային դիտարկումներ, 4) երկրաֆիզիկական աշխատանքներ, 5) լարորասոր աշխատանքներ, 6) օդապահապահութային և օդալուսահանութային դիտարկումներ:

Երկրաբանական հանույրային աշխատանքների համալիրում մեծ կիրառում ունեն *օդա- ու դիտարկական հետազոտության մեթոդները*, որոնք կարելի են սոորաբաժանել երկու խմբի՝ *օդա-աշքաչափային դիտարկումներ* և *օդա- և դիտարկական հանույրներ*՝ հիմնավորված տարբեր տեխնիկական միջոցների կիրառման վրա:

Օդա-աշքաչափային դիտարկումները կիրառվում են տեղադիտական հետազոտությունների ժամանակ կամ տարբեր մասշտարների հանույրների դեպքում: Օդա-աշքաչափային դիտարկումները տարկում են հիմնականում ինքնարիոններով, ուղղաթիռներով և արդյունքները արտացոլվում են գծապատկերների կամ քարտեզ-սխեմաների տեսքով: Օդահանույրները կատարվում են 25-50 մ մինչև 15 կմ քարձություններից, որը հնարավորություն է տալիս ստանալու խոշոր և մանրամասշտար (1:5000-ից մինչև 1:50000-1:60000) օդալուսանկարներ:

Տիեզերահանույթները կատարվում են տարբեր բարձրություններից՝ օգտագործելով հետևյալ քոչող սարքավորումները՝ 1) բալիստիկ հրթիռներ (80-160 կմ), 2) կառավարվող տիեզերանավեր և օրբիտալ (ուղեծրային) կայաններ (150-160 կմ), 3) Երկրի արհեստական արբանյակներ (600-1200 կմ), 4) Երկրի երկրաստացիոնար արբանյակներ (36000 կմ), 5) ավտոմատ և կառավարվող միջմոլորակայն կայաններ (60-150 հազ.կմ), 6) լուսային երկրաֆիզիկական դիտարան (աբսերվատորիա) (400 հազ.կմ):

Հստ ինֆորմացիայի արձանագրման և հաղորդման սկզբունքի՝ ինչպես օդային, այնպես էլ տիեզերական մեթոդների շարքում տարբերում են լուսանկարահանող և ոչ լուսանկարահանող համակարգեր: Լուսանկարահանող համակարգերը վերագրում են լուսանկարչական, հեռուստատեսային և սկանային, իսկ ոչ լուսանկարահանողներին՝ գամմա-լուսապատկեր (սպեկտոր), մագնիսական, գրավիտացիոն և այլ ֆիզիկական դաշտեր արձանագրող համակարգերը (Ն. Յոնդար, 1987):

Համապատասխանաբար տարբերում են լուսանկարային, հեռուստատեսային, սկանային, ինֆրակարմիր, ռադիոլոկացիոն (ռադիոտեղորշման), սպեկտրոգրանուլային և բազմազորնալային հանույթներ:

Թվարկած հեռացույց (դիստանցիոն) մեթոդները քույլ են տախի կատարելու ռեգիոնալ ջրաերկրաբանական շրջանացում, պարզել ստորերկրյա ջրերի ձևավորման հիդրոդինամիկական օրինաչափությունները, ուսումնասիրել բեկվածքային խախտումները, ճեղքավորված զոնաները, ապարների լիքոդիքիան, գնահատել ժամանակակից երկրաբանական գործընթացների դրսևորումների և շրջակա միջավայրի աղտոտման երևույթների մասշտաբները: Ռադիոջերմային հանույթի օգնությամբ պարզում են թերմալ աղբյուրների տարածումը և առանձնահատկությունները, ուսումնասիրում են ժամանակակից հրաբխականության գործընթացները և հավերժական սառածության տարածման շրջանների ջերմաստիճանային պայմանները: Բացի այդ՝ տիեզերական լուսահանույթները երկրաբանական միջավայրի տիեզերական մոնիթորինգի ստեղծման միջոցներից է, որը հնարավորություն կընձեռի կատարել կանոնավոր դիտարկումներ, գնահատելու և կանխատեսելու երկրաբանական միջավայրի փոփոխությունները:

17.4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԶՐԱԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զրաերկրաբանական քարտեզ անվանում են զրաերկրաբանական համակարգի սահմաններում զրաերկրաբանական տարրեր տարրերի և գործողների գլուխիկական պատկեռումը պլանի (հատակագծի) վրա: Այն արտացոլում է զրաերկրաբանական ստորաբաժանումներով առանձնացված զրատար հորիզոնների, համալիրների, ջրամերժ հաստվածքների տարրածումը, հերթափոխությունը, տեղադրման պայմաններն ու խորությունը, ինչպես նաև ստորերկրյա ջրերի որակական և քանակական բնութագրումները:

Զրաերկրաբանական քարտեզները կազմում են լաստ զրաերկրաբանական հանույթների արդյունքների, ինչպես նաև ըստ հետախուզական, փորձային աշխատանքների տվյալների և ըստ երկրաֆիզիկական հետազոտություններից, լարորատոր աշխատանքներից, ստորերկրյա ջրերի ռեժիմային դիտարկումներից ստացված տվյալների:

Զրաերկրաբանական քարտեզները բաժանվում են [5,18,33].

1) Ըստ փաստական նյութի հիմնավորվածության աստիճանի՝ *կոնյիցիոն և ոչ կոնյիցիոն* (կոնյիցիոն քարտեզների նորմերն ու պահանջները տրվում են հասողական համակարգում),

2) Ըստ մասշտաբի՝ *ակնարկային* (1:10000000 և փոքր), *մանրամասչփառային* (1:500000-1000000), *միջին մասչփառային* (1:100000-1:200000), *խոշոր մասչփառային* (1:25000-1:50000), *մանրամաս* (1:25000 և մեծ):

Ակնարկային մինչև միջին մասշտաբային քարտեզների վրա արտացոլվում են զրատար հորիզոնները (համալիրները), ստորերկրյա ջրերի որոշ որակական և քանակական ցուցանիշներ: Այս քարտեզները կազմվում են տեսական ընդհանրացումների, զրաերկրաբանական հետազոտությունների հեռանկարային պլանավորման, գիսավոր սխեմաների կազմման և առանձին ռեզլիտների իրացման տեխնիկատնտեսական հիմնավորումների նպատակով:

Խոշոր մասշտաբի զրաերկրաբանական քարտեզների վրա արտացոլվում են վերին հիմնական և դրանից ներքև տեղադրված զրատար հորիզոնները (համալիրները), գրունտային և ճնշումնային ջրերի մակարդակի իզոգծերը, ստորերկրյա ջրերի քանակը և որակը բնութագրող

Տվյալները: Այս տիպի քարտեզներն օգտագործվում են որպես հուսալի հիմք ընթացիկ և հեռանկարային պլանավորման, ջրատնտեսական միջոցառումների մշակման, ինժեներական կառույցների նախագծման, ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների գնահատման, ջրաերկրաբանական շրջանացման և այլ նպատակներով:

Մանրամասն ջրաերկրաբանական քարտեզներ կազմվում են համեմատաբար փոքր տարածքների համար և ունենում են նպատակամղված բովանդակություն: Այդպիսի քարտեզները կոչված են հիմք ծառայելու կրնկրեն նեղ խնդիրների՝ բանվորական նախագծումների համար:

3) Հատ նպատակային նշանակության և բովանդակության՝ *ընդհանուր և հապուլ*: Ընդհանուր քարտեզները կազմվում են ուսումնասիրվող տարածքի ընդհանուր ջրաերկրաբանական պայմանների լրիվ բնութագրման համար: Ընդհանուր քարտեզների վրա արտացոլվում են ջրաերկրաբանական բոլոր հիմնական տարրերը: Հատուկ քարտեզների վրա ցույց են տալիս առանձին տարրեր,

4) Հատ գրաֆիկական (գծագրական) ձևավորման եղանակի՝ *համայնագուած և մասանագուած*: Այս տիպի ջրաերկրաբանական քարտեզների վրա ցույց են տրվում ջրատար հորիզոնները (համալիրները): Դրանց դասավորությունը, հարկայնությունը արտացոլում են «լուսաբափանցման» մերուրով:

Ցանկացած մասշտաբի ջրաերկրաբանական քարտեզները ուղեկցվում են մեկ կամ մի քանի ջրաերկրաբանական կտրվածքներով, ինչպես նաև լրացուցիչ բնութագրերով, արտահայտված պարզաբանական տեսքով և աղյուսակներով:

Ջրաերկրաբանական կտրվածքների վրա արտացոլվում են երկրաբանական կառուցվածքը, ջրատար հորիզոնների (համալիրների) լիբուլգիկական կազմը, ջրամերժ հաստվածքները, ստորերկրյա ջրերի մակարդակների (ճնշումների) տեղադրման խորությունները, ջրերի ծախսը և հանքայնացումն ըստ հորատանցքերի:

Օրինաչափորությունները, որոնք արտացոլվում են քարտեզների վրա և կտրվածքներում, հանգամանալից լուսաբանվում են պարզաբանական գրառումով, որում կոնկրետ նկարագրվում են բոլոր ջրատար հորիզոնները և համալիրները, ապարների կազմը և ջրառասությունը, ստորերկրյա ջրերի տեղադրման խորությունը և ճնշումները, ձևավորման

պայմանները, ուժիմային առանձնահատկությունները, որոշվում են ստորերկրյա ջրերի օգտագործման նպատակահարմարությունը ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղերում կամ տարրեր շինարարությունների դեպքում ստորերկրյա ջրերի դեմ պայքայրի առավել արդյունավետ միջոցառումների մշակումները:

17.5. ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՐԱՑՄԱՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆ ԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐՈՇ ՊԱՀԱՁՆԵՐ

Երկրակեղևում հորատման հաստոցի կամ սարքի օգնությամբ անցած գլանածն լեռնային փորվածքը կոչվում է *հորականցք* և բնութագրվում է տրամագծի և երկարության մեծ հարաբերակցությամբ:

Տրամագիծը տատանվում է 26 մմ-ից մինչև 1000 մմ, հանքահորերի դեպքում՝ 1500 մմ, իսկ խորությունը մի քանի մետրից մինչև 10 կմ և ավելի:

Հորատանցքի սկիզբը մակերևույթի վրա կոչվում է *բերան*, հատակը՝ *հորախորչ*, իսկ կողային մակերևույթը՝ *պարեկի*: Ըստ իրենց նշանակության և նպատակի՝ հորատանցքերը լինում են քարտեզագրական, հեռանկարային, կառուցվածքային, որոնողական, հետախուզական, փորձային, շահագործական, դրենացման, դիտողական, լեռնատեխնիկական (լեռնաանցողական, օդափոխության, պայթեցման և այլն):

Զրատար հորիզոնների և համալիրների ուսումնասիրությունը կատարվում է լեռնային փորվածքների՝ գերազանցապես հորատանցքերի միջոցով: Դրանք հնարավորություն են տալիս պարզել հետախուզվող տերիտորիաների երկրաբանական կառուցվածքը, ապարների լիքոդիֆական կազմը և ջրաերկրաբանական առանձնահատկությունները:

Զրաերկրաբանական հորատումը կատարվում է ստորերկրյա ջրերը հայտնաբերելու, հետազոտելու, շահագործելու և այլ նպատակներով: Այդ հորատմանը որոշակի պահանջներ են ներկայացվում, որի պատճառով հորատանցման եղանակները, հորատանցքի կառուցվածքը (կոնստրուկցիան), դրանում տարվող դիտարկումների մեթոդիկան որոշակիորեն տարրեր է մյուս նշանակության հորատանցքերից: Զրաերկրաբանական նշանակության հորատանցքերի հորատումը հիմնականում իրականացվում է հետևյալ եղանակներով՝ 1) պտտողական (ռոտորային), 2) հարվածանոպանային, 3) կոմքինացված և այլն:

Հորատման եղանակի ընտրությունը կատարվում է՝ ելմելով ապար-ների ֆիզիկամեխանիկական հատկություններից, տարածքի ուսումնա-սիրվածության աստիճանից, հորատանցքի կառուցվածքից, դրա վերջ-նական տրամագծի չափից, ելուկի (կեռնի) ստացման անհրաժեշտուր-յունից և այլն:

Պարողական հորակրում: Պատողական եղանակով հորատման դեպքում ստորաբար կիրառվում է կավային լուծույթ, որը բերում է ջրա-տար ապարների կավափորման, հաճախ փակում է փոքր ջրատար հո-րիզոնները, նվազեցնում է հորատանցքի ջրատվությունը, դժվարացնում է երկրաբանական և ջրաերկրաբանական տվյալների փաստագրումը: Այդ պատճառով պարբերաբար հորատանցք է ներմղվում օդ կամ ջուր, կիրառվում է լուծույթի հակառակ շրջանառություն և այլն: Բոլոր դեպքե-րում հորատանցքից անմիջապես հետո պետք է ուժեղացված պուսա-ցիայով արտադրումներ կատարել հորատանցքի պատերը և հորախոր-շը կավային մասնիկներից և հորատման խարսից մաքրելու համար:

Պտտողական եղանակով հորատման դրական կողմերից անհրա-ժեշտ է նշել հետևյալները՝ հորատման նշանակալի արագությունը և մեծ խորության (մինչև 2000 մ և ավելի) հորատանցքերի հորատման հնա-րավորությունը:

Հարվածառպանային հորակրում: Այս եղանակը կիրառվում է այն շրջաններում, որտեղ երկրաբանա-լիբուգիական և ջրաերկրաբանա-կան պայմանները քոյլ են ուսումնասիրված: Տախս է լավ արդյունք գրունտային և ճնշումային ջրատար հորիզոնների տարածման շրջան-ներում: Այս եղանակով հորատման դեպքում կտրուկ ավելանում է (հա-մեմատած պտտողական հորատման հետ) խողովակասյուների քանա-կը, և զգայի մեծանում է շրջապահ խողովակների տրամագիծը, այդ ե-ղանակը քոյլ է տախս հորատանցքերի հորատումը կատարել մեծ տրա-մագծով (ավելի 500 մմ-ից): Հարվածառպանային եղանակը հաճախ կիրառում են այն շրջաններում, որտեղ բացակայում են մակերևութային ջրադրյուրները:

Կարծիք ապարներում հորատման ժամանակ օգտագործում են սյու-նակային հորատում (ելուկի դուրս բերումով), որը լիարժեքորեն ապահո-վում է հորատվող ապարների կազմի մանրակրկիտ ուսումնասիրումը և դրանցում ջրատար հորիզոնների արձանագրումը: Այս եղանակի հիմ-նական թերությունը կայանում է հորատանցքի տրամագծի փոքրության

մեջ, որը խոչընդոտում է բարձր արտադրողականության պոմպերի կիրառումը՝ արտամղման միջոցով ջրատար հորիզոնների փորձարկման ժամանակ:

Կոմիքնացված (համակցված) հորակում: Տվյալ եղանակը կիրառվում է մոտավորապես նույն բնական պայմանների դեպքում, ինչպիսին է հարվածաճոպանայինը: Հորատանցման ժամկետի կրճատման, նյութերի տևատեսման և ներդրման միջոցների կրճատման նպատակով օգտագործում են հորատման կոմբինացված եղանակը: Էությունը կայանում է գրանում, որ հիմնական ջրատար հորիզոնից կամ համալիրից վերև տեղադրված ապարների հորատանցումը կատարվում է արագացված և տևտեսապես շահավետ պտտողական եղանակով, իսկ բուն ջրատար հորիզոնի՝ հարվածաճոպանային: Հորատանցման այսպիսի եղանակը (կոմբինացված) հնարավորություն է տալիս պահանջվող ճշտությամբ կատարել երկրաբանա-ջրաերկրաբանական փաստագրումը հորատանցման ընթացքում և բարձր ճշտությամբ ջրատար հորիզոնի (հորիզոնների) փորձարկումը:

Ջրաերկրաբանական հորատանցքի կառուցվածքում (կոնստրուկցիայում) կարևորագույն բաղադրիչը հանդիսանում է ֆիլտրը (քամիչը): Ֆիլտրը խողովակներից պատրաստված հատուկ սարք է, որը կոչված է ջրատար հորիզոնի հատվածում հորատանցքի պատերը ամրակապելու (փլուզումից պաշտպանելու) և ստորերկրյա ջրերի ներհոսքը դեպի հորատանցք ապահովելու համար:

Անկախ հորատանցման եղանակից հորատման տվյալները ճշտելու համար, ինչպես նաև կտրվածքի ապարների ֆիզիկական մի շարք հատկանիշների մասին լրացուցիչ տվյալներ ստանալու նպատակով ներկայումս գրեթե բոլոր ջրաերկրաբանական հորատանցքերում կատարվում են երկրաֆիզիկական ուսումնասիրություններ, որոնք հաճախ շատ արդյունավետ են լինում:

Ջրաերկրաբանական հորատանցքի հորատման եղանակները, դրանց կոնստրուկցիաների և կահավորումների պահանջներն ընդունվում են գործող նորմերին համապատասխան:

17.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴԱՇԱՅԻՆ ՓՈՐՁՎՖԻԼՏՐԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստորերկրյա ջրերի հանքավայրերի ուսումնասիրման և բազմազան ջրաերկրաբանական խնդիրների լուծման ժամանակ հետազոտությունների հիմնական տեսակը հանդիսանում է ջրատար հորիզոնների և աէրացիայի գոնայի ապարների ջրաերկրաբանական պարամետրերի որոշումը:

Ապարների ֆիլտրացիոն հատկությունները և ջրառատությունը բնութագրող ջրաերկրաբանական հիմնական պարամետրերն են՝ ֆիլտրացիայի, ջրահաղորդականության, մակարդակահաղորդականության (ոչ ճնշումային շերտերի համար), պիեզոհաղորդականության (ճնշումային շերտերի համար), ջրատվության, առաձգական ջրատվության գործակիցները:

Սովորաբար ստորերկրյա ջրերի հայտնաբերման, դրանց քանակական և որակական հատկությունների ուսումնասիրման, ժողովրդատնտեսական իրացման կամ կարգավորման հետ կապված, հնարավոր չէ կատարել որևէ ինժեներական հաշվարկ և տալ քանակական գնահատական առանց ջրաերկրաբանական պարամետրերի իմացույցան:

Ներկայիս ջրաերկրաբանական հաշվարկային պարամետրերի որոշման համար կիրառվում են տարրեր մեթոդներ, որոնց օգտագործման նպատակահարմարությունը և արդյունավետությունը կախված է հետազոտությունների կատարման փուլից և տեխնիկական պայմաններից, լուծվող խնդիրի բնույթից և յուրահատկությունից, ուսումնասիրվող ջրաերկրաբանական օբյեկտի բնական պայմաններից և այլ գործոններից: Այլպիսի մեթոդների թվին են պատկանում՝ 1) արտանրումներ հորատանցքերից և շուրֆերից, 2) ջրլցումներ և ներմղումներ հորատանցքերում, 3) ջրլցում շուրֆերում, 4) էքսպրես (ճեպընթաց) մեթոդներ: Պարամետրերը կարելի է որոշել նաև լաս ստորերկրյա ջրերի ռեժիմային դիտարկումների տվյալների, լաբորատոր հետազոտությունների, երկրաբաֆիզիկական մեթոդներով և ֆիլտրացիայի մոդելավորմամբ: Թվարկած մեթոդները բնութագրվում են ֆիլտրացիոն հատկությունների որոշման տարրեր աստիճանի հուսալիությամբ և դրանց կատարման յուրահատկությամբ: Առաջին շրջա մեթոդները կարելի է դասել դաշտային

փորձաֆիլտրացիոն խմբին և ջրաերկրաբանական հետազոտությունների պրակտիկայում հանդիսանում են գերակշռողը՝ որպես ջրաերկրաբանական հաշվարկային պարամետրերի որոշման արդյունավետությունը և արժանահավաստությունները ապահովողների:

Արդարությունները համարվում են առավել տարածում ունեցող փորձային աշխատանքների տեսակ, որոնք կիրառվում են տարրեր ջրաերկրաբանական հետազոտությունների ժամանակ, եթե անհրաժեշտ է որոշել ջրաերկրաբանական հիմնական պարամետրերը և ջրատար հորիզոնների այլ տվյալներ:

Հորականցընթերում ջրի փորձնական նիրմանումները կատարվում են բարձր ճնշման տակ ջրատար հորիզոններում և անցուր (չոր) ապարներում: Փորձնական ջրլցումները կատարում են թույլ ջրատար հորիզոններում և չոր ապարներում:

Ծուրֆիրում փորձնական ջրլցումները անհրաժեշտ են աէրացիայի զոնայի ապարների ֆիլտրացիոն հատկությունները ուսումնասիրելու համար:

Պարամետրերի որոշման էքսպրես մեթոդները հիմնված են հորատանցքերում կարճաժամկետ արտանդումների կամ ջրլցումների միջոցով ոչ մեծ ջրաբափանցելիություն ունեցող ապարների ֆիլտրացիոն հատկությունների ուսումնասիրման համար: Ջրաերկրաբանական պարամետրերի ըստ ռեժիմային դիդարկումների պվյալների պարզաբնական որոշումը պահանջում է ռեժիմային ցանցի կետերի (հորատանցքեր, ուղեգծեր) առկայություն և ստորերկրյա ջրերի ռեժիմային դիտարկումների կազմակերպում համապատասխան կազմակերպությունների կողմից:

Ապարների (գլխավորապես կավային և ավագային) ֆիլտրացիոն հատկությունների լարորապոր մեթոդներով որոշումը կիրառվում է հետազոտությունների սկզբնական փուլում դրանց նախնական զանգվածային մոտավոր արժեքների գնահատման համար: Փորձերը կատարվում են հատուկ վերցված ապարների նմուշների վրա տարրեր լարորատոր սարքերի օգնությամբ:

Երկրաֆիզիկական մեթոդները տալիս են տվյալներ, որոնք պիտանի են ապարների ֆիլտրացիոն հատկությունների նախնական մոտավոր գնահատումների և ուսումնասիրվող կտրվածքի ջրաերկրաբանական մասնատման համար: Սկրորեկրյա ջրերի ֆիլտրացիայի մոդելա-

Վորումը հնարավորություն է տալիս համայիր հակադարձ խնդիրների լուծման հիմքի վրա որոշելու և ճշգրտելու ջրաերկրաբանական պարամետրերի թվային արժեքները՝ օգտագործելով ռեժիմային դիտարկումների կամ փորձաֆիլտրացիոն աշխատանքների ընթացքում մակարդակների և ծախսերի փոփոխման դիտարկումների տվյալները: Այն ապահովում է պարամետրերի որոշման բավականին մեծ հավաստիություն և նպատակահարմար է բարդ ջրաերկրաբանական պայմաններում, եթե բացակայում են ապարների ֆիլտրացիոն հատկությունների արժանահավատ որոշման հնարավորությունները այլ մեթոդներով:

Ջրաերկրաբանական պարամետրերի որոշման պահանջվող արժանահավատության ապահովման և ջրաերկրաբանական հետազոտությունների տնտեսական արդյունավետության բարձրացման համար նպատակահարմար է ֆիլտրացիոն հատկությունների որոշման տարրեր մեթոդները գուգակցել՝ (կրմալեկտավորել) հաշվի առնելով ուսումնասիրվող օբյեկտի կոնկրետ ջրաերկրաբանական պայմանները, լուծվող խնդիրների բնույթը և առանձին օգտագործվող մեթոդների տնտեսական արդյունավետությունը և այլ գործոններ:

17.7. ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Ներկա ժամանակներում կապված Երկրի գլոբալ տաքացումների և տարրեր մասշտաբներով հանդես եկող ինտենսիվ տեխնածին (անտրոպոգեն) փոփոխությունների հետ, հասարակության կարևոր խնդիրներից մեկը մնորուակի վրա բնակության միջավայրի վիճակի գնահատումն է և փոփոխության կանխատեսումը: Վերջինիս հետ կապված կազմակորպում են շրջակա բնական միջավայրի պետական մոնիտորինգ, որի անբաժան մասն է կազմում ընդերքի վիճակի մոնիտորինգը:

Ջրաերկրաբանական մոնիտորինգը (տարրեր խնբագրումներով՝ «ստորերկրյա ջրերի մոնիտորինգ» կամ «ստորերկրյա ջրային օբյեկտների մոնիտորինգ») հանդիսանում է ընդերքի վիճակի պետական մոնիտորինգի ենթահամակարգ և միաժամանակ ջրային օբյեկտների պետական մոնիտորինգի ենթահամակարգ (ըստ Ռուսաստանի օրինակի) [4]:

Ներկայումս, եթե ստորերկրյա ջրերի պաշարները ավելի ու ավելի ինտենսիվ են շահագործվում լեռնահանքային շինարարությամբ (հատ-

կապես ջրաշինական), և այլ աշխատանքներով խախտվում է դրանց ռեժիմը, ուստի ստորերկրյա ջրերի յուրաքանչյուր խոշոր հանքավայրի կամ ավազանի համար մոնիթորինգի ստեղծումը դառնում է իրանայական պահանջ:

Ջրաերկրաբանական մոնիթորինգի ընդհանուր ձևակերպմանը համապատասխան այն իրենից ներկայացնում է առաջին հերթին ստորերկրյա ջրերի ռեժիմի կանոնավոր դիլարկումների, հավաքման և դրանց վիճակի մասին տեխնկորյան (ինֆորմացիայի) կուրսական համակարգ, երկրորդ հերթին՝ այդ տեխնկատվորչյան ընդհանուրացման ու վելլուծության և այդ հիմքի վրա բնական և տեխնիկական (անտրոպոգեն) գործուների ազդեցության տակ ստորերկրյա ջրերի վիճակի փոփոխման կանոնադրությունների մշակման համակարգ: Մոնիթորինգի վարման ժամանակ ուսումնաային օրյեկտներ (դիտարկումների կազմակերպման) են հանդիսանում, այսպես կոչված, բնական և բնական-տեխնածին համակարգերը [4]:

Բնական համակարգեր ասելով հասկանում են այնպիսի տարածքներ, որոնց սահմաններում ստորերկրյա ջրերը տեխնիկական ազդեցություններին նշանակալից չեն ենթարկվել (բնական պայմաններ):

Բնական-դեխնածին համակարգեր ասելով հասկանում են այնպիսի տարածքներ (տեղամասեր), որոնց սահմաններում ստորերկրյա ջրերը կրում են մեկ (պարզ համակարգեր) կամ մի քանի տեսակների (բարդ համակարգեր) տեխնիկական (խախտված պայմանների) նշանակալի ազդեցություն:

Կանոնավոր դիտարկումային համակարգն իր մեջ ներառում է ռեժիմային հորատանցքերում և ջրհորերում ստորերկրյա ջրերի մակարդակի, հենակետային աղբյուրների ծախսի, ջրերի շահագործման (վերցվող) ծավալների և տարբեր տեխնիկական միջոցառումների օգնությամբ ստորերկրյա ջրերի պաշարների համալրման մեծությունների, ստորերկրյա ջրերի ֆիզիկական հապեկությունների (ջերմաստիճան, համ, հոտ և այլն), քիմիական կազմի և հանքայնացման փոփոխությունների հսկողություն (ասուլում): Ընդհանուր պահանջներին համապատասխան՝ դիտարկումների հիմնական ծավալը պետք է կողմնորոշված լինի երկրի մակերևույթից առաջին ջրատար հորիզոնի վրա (տեխնիկական ազդեցություններին առավել ենթարկվող, առաջին հերթին աղտոտվող ստորերկրյա ջրերի) և այն ջրատար հորիզոնների վրա, որոնք

օգտագործվում են տնտեսական ջրամատակարարում կազմակերպելու համար: Որոշակի ծավալի դիտարկումներ պետք է ուղղվեն նաև ստորերկրյա ջրերի ռեժիմի ուսումնասիրմանը բնական պայմաններում (քնական համակարգ), դրանց վիճակի հնարավոր փոփոխությունները բնական գործուների ազդեցության տակ գնահատելու համար:

Այսպիսով, պետական ջրաերկրաբանական մոնիթորինգը ժամանակակից պայմաններում ապահովում է ստանալ ստորերկրյա ջրերի մասին փաստացի տեղեկատվության *հիմնական ծավալը*:

Մեթոդական պահանջներին համապատասխան՝ պետական ջրաերկրաբանական մոնիթորինգի (այնպես ինչպես նաև քնական միջավայրի վիճակի մյուս ենթահամակարգերը) իրականացումը կատարվում է երեք մակարդակների վրա՝ *տեղական (լոկալ, տարածքային (ռեզիոնալ) և համապետական:*

Տեղական մակարդակի ջրաերկրաբանական մոնիթորինգը իրականացվում է ընդերքօգտագործման կոնկրետ օբյեկտի (ջրհանումներ, լեռնահանքային ձեռնարկություն, բունավոր թափոնների թաղման տեղամասեր և այլն), ինչպես նաև ընդերքօգտագործման հետ չկապված օբյեկտների վրա, որոնց գործունեությունը կարող է էապես ազդեցություն բռնձել (գլխավորապես աղտոտման ճանապարհով) ստորերկրյա ջրերի վրա (արդյունաբերական ձեռնարկություններ, տղմագոտարաններ և պոչամբարներ, արդյունաբերական և կենցաղային թափոնների կուտակման տեղամասեր և այլն):

Տեղական մոնիթորինգի համակարգում դիտման ցանցի ստեղծումը և դիտարկումների կազմը, բացի ընդհանուր պահանջներից (հսկողություն ստորերկրյա ջրերի մակարդակների, հանքայնացման, քիմիական կազմի և այլն), որոշվում են տեղամասի երկրաբանա-ջրաերկրաբանական պայմաններով և տեխնածին ազդեցության բնույթով (մակերևության և ստորերկրյա ջրերի փոխազդեցություն, յուրահատուկ աղտոտիչ, այդ թվում բունավոր (սոքսիկ) բաղադրիչների առկայություն և այլն):

Ընդհանուր պահանջներին համապատասխան՝ տեղական ցանցի մոնիթորինգի կազմակերպումը և դիտարկումների կատարումը (աշխատանքների ֆինանսավորումը) անմիջականորեն իրականացվում են ընդերքօգտագործողների կամ տնտեսավարող սուբյեկտների կողմից:

Տարածքային մակարդակի ջրաերկրաբանական մոնիթորինգը կատարվում է հանրապետության տարածքային բաժանումների (Հայաստանի դեպքում՝ մարզերի) սահմաններում: Տարածքային մոնիթորինգի հիմնական խնդիրները հանդիսանում են տեղական (օբյեկտային) մոնիթորինգային նյութերի ընդհանրացումը և պետական ցանցի վրա դիտարկումների կազմակերպումը (կատարումը), այդ թվում՝ ստորերկրյա ջրերի բնական ռեժիմով և հաշվեկշռով տեղամասերում: Տարածքային մոնիթորինգի նյութերի ընդհանրացումը կատարվում է ամենամյա տեղեկագրերը (բյուլետենները) կազմելու ժամանակ, որոնք ներկայացվում են հանրապետական մոնիթորինգի կենտրոն:

Հանրապետական ջրաերկրաբանական մոնիթորինգի խնդիրներում ներառվում են տարածքային (ռեգիոնալ) մակարդակի (երկրի մարզային սահմաններում) և ամքող հանրապետության մակարդակի մոնիթորինգային տեղեկատվության հավաքագրումը և կուտակումը, դրանց վերլուծությունը և ամփոփումը, ինչպես նաև հանրապետական նշանակության օբյեկտների (առողջապահության էլեկտրակայաններ, խոշոր արդյունաբերաբանակայան ազլումերացիաներ, ռադիոակտիվ թափոնների վերամշակման և պահեստավորման ձեռնարկություններ և այլն) վրա մոնիթորինգի կազմակերպումը և վարումը:

Ջրաերկրաբանական մոնիթորինգի նյութերի հավաքումը, կուտակումը և համակարգումը (ինչպես նաև բնական վիճակի մոնիթորինգի մյուս ներահամակարգերը) իրականացվում են լույսական ավագության վերաբերյալ և այլ հիմքի վրա տարածական և համակարգված (սիստեմատիկ) համարման հիմքի վրա:

Ջրաերկրաբանական մոնիթորինգի կարևորագույն խնդիրը հանդիսանում է ստորերկրյա ջրոլորտում տեղի ունեցող գործընթացների, դիտարկային տվյալների վերլուծությունն ու ընդհանրացումը և այդ հիմքի վրա տարածական կանխատեսումների և կառավարչական որոշումների մշակումը:

Ներկա ժամանակներում ջրաերկրաբանական տեղեկատվության գիտականորեն ընդհանրացման առավել արդյունավետ մեթոդիկան ստորերկրյա ջրոլորտում տեղի ունեցող գործընթացների կանխատեսման համար տարբեր տիպի և նշանակության հաշվարկային մոդելների հիմնավորումն ու օգտագործումն է:

Երկարաժամկետ համակարգված ռեժիմային դիտարկումների տվյալների (մոնիթորինգի) օգտագործումն ունի սկզբունքային նշանակություն ոչ միայն կարևոր խնդիրների, այլ նաև կիրառական հիմնահարցերն ամբողջությամբ լուծելու համար, որոնք կապված են ստորերկրյա ջրերի կանխատեսումների և կառավարման հետ: Այդ տվյալների (փաստական) գիտական ընդհանրացումներն ունեն նաև բացառապես կարևոր նշանակություն ջրաերկրաբանական գիտության տեսական և ռեգիոնալ ուղղությունների զարգացման համար: Ջրաերկրաբանական մոնիթորինգի տվյալների գիտական ընդհանրացման խնդիրների կատարումը պահանջում է տվյալների ավտոմատիզացված բազաների մուտքի բաց լինելը: Բացի այդ՝ բնական միջավայրի վիճակի պետական մոնիթորինգի շատ հարցերի լուծումը պահանջում է հարակից ենթահամակարգերի տվյալների միաժամանակյա օգտագործումը առաջին հերթին օդերևութաբանական բնութագրերի մոնիթորինգի, մակերևութային ջրային օբյեկտների մոնիթորինգի և այլն:

ԳԼՈՒԽ XVIII

ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԿԱՆԻ ԻՐԱՆԵՐԸ

Սիայն ջրաերկրաբանության բազմաթիվ բաժիններից մեկի՝ «Ընդհանուր ջրաերկրաբանություն» առարկայի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ջրաերկրաբանությունը բարդ համալիր գիտություն է, ընդգրկում է հարցերի լայն շրջանակ և ապահովում է ժողովրդական տնտեսության բազմազան հիմնախնդիրների լուծումը՝ կապված ստորերկրյա ջրերի օգտագործման և դրանց դեմ պայքարի միջոցառումների հետ:

Ջրաերկրաբանությունը, հանդիսանալով երկրաբանական բնագավառի գիտությունների գիտական ուղղություննեից մեկը, կոչված է լուծելու մարդկանց կյանքի, արդյունաբերության և զյուլատնեսության զարգացման անհրաժեշտ պայմանների ապահովման հիմնախնդիրը, այսինքն՝ խնդիրներ, որոնք լուծվում են ջրաերկրաբանական մեթոդներով, ունեն անմիջական առնչություն երկրի (հանրապետության) նյութատեխնիկական բազայի զարգացման հետ:

Ջրաերկրաբանության վիճակը, գիտական հիմնահարցերը և զարգացման ուղղությունները հանգամանորեն լուսաբանվել են անվանի ջրաերկրաբանների (Գ. Ն. Կամննսկի, Վ. Ա. Պրիկլոնսկի, 1957 թ., Օ. Կ. Լանգե, 1962 թ., 1969 թ., Ա. Մ. Օվչիննիկով, 1967 թ. և ուրիշներ) հոդվածներում և ելույթներում: Այդ հարցերը շարունակվում են քննարկվել շատ հետազոտողների կողմից նաև ներկա ժամանակներում (Ի. Վ. Գարմանով, 1965 թ., Վ. Մ. Շետակով, 1969 թ., Ն. Ի. Պլոտնիկով, 1973 թ., Պ. Ֆ. Շվեցով, Ա. Ա. Կոնովյանցև, Վ. ՄՇվեց, 1973 թ. և ուրիշներ):

Էական է նշել, որ ջրաերկրաբանության զարգացման հիմնական հիմնախնդիրների տեսակետից հետազոտողներն արտահայտում են իրարամեթծ կարծիքներ:

Հայտնի է, որ ցանկացած գիտության զարգացման շարժող ուժը և հետագա կատարելագործումը պրակտիկ պահանջներն են և տեսական ֆունդամենտալ հիմնախնդիրների մշակման աստիճանը: Սակայն, ջրաերկրաբանության որոշ բաժինների տեսական հիմքերը մինչև վերջին ժամանակներս էլ մշակված են բույլ, որն ընդունում են համարյա բոլոր հետազոտողները:

Զրաերկրաբանության զարգացման անկողմնակալ նախադրյալների վերլուծությունը՝ որպես զիտուրթյան և այդ զիտուրթյան հետագա զարգացման ուղղությունների քննարկումների արդյունք, շատ հետազոտողների կողմից տալիս են հնարավորություն նշելու որոշ հիմնախնդիրներ, որոնցով սպասվում է, որ կզբաղվի ջրաերկրաբանների կողեկտիվը մոտակա տարիներին:

Գիտության ժամանակակից զարգացման մակարդակով ստորև բերվում են ջրաերկրաբանական գիտավոր հիմնախնդիրները.

1. *Ջրի առաջացումը Երկրի վրա և սրուրեկրյա ջրոլորոշի չևավորումը*: Սա կարևորագույն տեսական հիմնախնդիրներից մեկն է: Ջրի առաջացումը Երկրի վրա սերտորեն կապված է Երկրի առաջացման հետ՝ որպես մոլորակի: Տվյալ հիմնախնդրի լուծումը պահանջում է Երկրաբանների, աստղագետների, ջրաբանների, օվկիանոսագետների, քիմիկոսների, ֆիզիկոսների և այլ մասնագետների համատեղ ջանքեր:

Հիմնական ուշադրությունը պետք է սևեռել Երկիր-ջրոլորտ-մքնոլորտ-կենսոլորտ համակարգի զարգացման պատմության ուսումնախրության վրա՝ Երկրի, մքնոլորտի, ջրոլորտի առաջացումն ու էվոլյուցիան (բնաշրջության), օվկիանոսային ջրերի աղիության ծագման որոշման, Երկրի վրա կյանքի առաջացման, ժամանակակից մքնոլորտի ձևավորման, բնության մեջ ջրի շրջապտույտի առաջացման և ստորերկրյա ջրերի ձևավորման օրինաչափությունները: Հիմնախնդիրների լուծմանը անգնահատելի ծառայություն կարող են ցույց տալ տիեզերքի, Լուսնի և Արեգակնային համակարգի մոլորակների ուսումնասիրությունների արդյունքները:

Աշխատանքները այս հիմնախնդրի վրա պահանջում է ուսումնասիրությունների տարբեր մեթոդներ (Երկրաբանական, Երկրաբիմիական, ջրաքիմիական, միջուկա-ֆիզիկական, իզոտոպային և այլն) և անհմատ է առանց փորձարարական հետազոտություններ կատարելու:

2. *Ջրաերկրաբանական զարգացման պականության և քաղցրահան, հանքային, արդյունարերական, քերմալ ջրերի չևավորման պայմանները*: Սա շատ լուրջ տեսական և գործնական համալիր հիմնախնդիր է:

Ստորերկրյա ջրոլորտը կազմված է ջրաճնշումային համակարգերից, որոնք իրենցից ներկայացնում են ստորերկրյա ջրերի տարբեր կառուցվածքի ավագանների ամբողջություն: Այդ ավագանների ստոր-

Երկրյա ջրերը այս կամ այն աստիճանի հիդրավլիկական կապի մեջ են իրար հետ: Յուրաքանչյուր ջրածնշումային համակարգ բնութագրվում է իրեն հասուլ երկրաբանական և ջրաերկրաբանական զարգացման պատմությամբ, որը և վերջնական արդյունքում որոշում է ժամանակակից երկրաշերմային, հիդրոդինամիկական և ջրաերկրաքիմիական պայմանները:

Ջրաերկրաքիմիական գործընթացները ապար-ջուր-գագ-օրգանական նյութեր-միկրոօրգանիզմներ համակարգում նույնպես պետք է դիտարկել իրենց զարգացման պատմության մեջ:

Ջրածնշումային համակարգում հիդրոդինամիկական խախտումները, պայմանավորված բնական (տեկտոնական շարժումներ, երողիայի բազիսի իջեցում և այլն) կամ արիեատական (ստորերկրյա ջրերի, նավթի, գազի, գազի արտահանում, ջրամբարների կառուցում, ստորերկրյա ջրերի ռեսուրսների համալրում և այլն) պատճառներով, բերում են ստորերկրյա ջրերի վերաբաշխմանը, գոյություն ունեցող ջրաերկրաքիմիական ու այլ հավասարակշռությունների և ֆիզիկաքիմիական գործընթացների ուղղվածության փոփոխությանը:

Ստորերկրյա ջրերից ամենուր վերցվող քանակի անընդհատ աճը բերում է ջրածնշումային համակարգում դրանց բնական ռեժիմի զգալի փոփոխության: Դրանց հետ կապված անհրաժեշտություն է առաջանում ջրածնշումային համակարգերն ուսումնասիրելու համալիր և առավել խորացված:

Ջրածնշումային համակարգերի սահմաններում ստորերկրյա ջրերի հեռանկարային հետազոտությունները պետք է կատարել համալիր ժողովրդական տնտեսության մեջ օգտագործվող բոլոր տիպի ստորերկրյա ջրերի համար: Դրանց ռեսուրսների գնահատումը (շահագործական պաշարների) և օգտագործումը նույնպես պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով հնարավոր ներհոսքերը և ստորերկրյա ջրերի քիմիական կազմի փոփոխությունները:

Այս հիմնախնդիրի լուծման ժամանակ՝ որպես գլխավոր խնդիր, հանդիսանում է ջրածնշումային համակարգերի տիպավորումն ըստ դրանց ջրաերկրաբանական զարգացման, կառուցվածքի և ժամանակակից ջրադինամիկական ու ջրաերկրաքիմիական պայմանների առանձնահատկությունների:

Հեռու ապագայում անհրաժեշտ է ձգտել նախագծելու և ստեղծելու երկրակեղակի ջրածնշումային համակարգերի գործող էլեկտրոնային մակետներ:

3. *Բնակչության, արդյունաբերության, գյուղակիցներության ապահովումը սպորտերկրյա քաղցրահամ ջրով:* Համարվում է զիսավոր հիմնախնդիրներից մեկը համաշխարհային մասշտարով։ ՅՈՒՆԵՍԿՕ-ն այդ հիմնախնդրի կարևորությունը մոլորակի բնակչության կյանքի համար համարում է եթե ոչ առաջինը, ապա երկրորդը՝ սովոր դեմ պայքարից հետո։

Բնակչությանը և ժողովրդական տնտեսությանը ջրով ապահովման հեռանկարները անխօնիորեն կապված են մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման, ինչպես նաև աղահամ և աղյ ջրերի քաղցրացման արդյունավետ մեթոդների մշակման հետ։

Մոտ ժամանակներում այդ հիմնախնդրի հիմնական հարցերից են՝
ա) տարբեր բնական և արհեստական պայմաններում մակերևութային և ստորերկրյա ջրերի փոխազդեցության ուսումնասիրությունը, թ) քաղցրահամ ստորերկրյա ջրերի ռեսուրսների գնահատման մեթոդների զարգացումը և կատարելագործումը, մոլեկուլարման և էլեկտրական հաշվողական մեթոնաների (ԷՀՄ) կիրառման հիմքի վրա, զ) ստորերկրյա քաղցրահամ ջրերի ռեսուրսների համալրման մեթոդների և տեսական հիմունքների մշակումը, դ) ստորերկրյա աղահամ և աղյ ջրերի ռեսուրսների ուսումնասիրումը և գնահատումը, որպես դրանց արհեստական քաղցրացման և համալրման պահուստային պաշարների, ե) ջրատար հորիզոնների և համալիրների շահագործման ընթացքում ստորերկրյա ջրերի ռեժիմի ուսումնասիրումը։

4. *Խոշոր հողակարածքներում շինարարական և մելիորավորի իրացման իմտևներական ապահովման հիմնախնդիրը:* Ունի գործնական մեծ նշանակություն և համալիր հիմնախնդիր է։ Տվյալ հիմնախնդիրը իր բովանդակությամբ ընդգրկում է ժամանակակից շատ խնդիրներ ջրաերկրաբանության բնագավառի կիրառական բաժիններում՝ ջրաերկրաբանական պայմանների կանխատեսումը ջրատեխնիկական շինարարության, հողատարածքների ոռոգման և չորացման ժամանակ, օգտակար հանածոների հանքավայրերի յուրացման ժամանակ, քաղցրացման և արդյունաբերական շինարարության տարածքների մակերեսների վրա և այլ օբյեկտներում։

5. Սպորելրկյա ջրերի դերի ուսումնասիրումը երկրաբանական և հանքային, նավթային ու զազային հանքավայրերի ձևավորման գործընթացներում: Հայտնի է, որ նշված հիմնախնդիրն ունի տեսական և գործնական վիրխարի նշանակություն, սերտորեն կապված է ջրաճնշումային համակարգերի և երկրաբանական զարգացման պատմության հիմնահարցերի համալիր ուսումնասիրման հետ, ինչպես նաև երկրաբանական գիտության այն բաժինների հետ, որոնք ուսումնասիրում են օգտակար հանածոների, նավի և զազի հանքավայրերը: Դրա մշակման համար պահանջվում են ջրաերկրաբանների, երկրաբանների, երկրաքիմիկների, միներոլոգների, քիմիկոսների, ֆիզիկոսների և ուրիշ մասնագետների համատեղ ջանքեր:

Այս հիմնախնդիրի աշխատանքներում առաջնային են երկրաբանական կառուցվածքի համապատասխան երկրաբանական զարգացման պատմության և նստվածքների ապարագոյացման (դիագենեզի) վերականգնումը, ինչպես նաև հնագրաերկրաբանական վերլուծությունը: Խնդիրների ուսումնասիրությունների ժամանակ կարևոր է որոշել ստորերկրյա ջրերի ծագումը, սննման և բեռնաբախման մարզերի դիրքերի հնարավոր փոփոխությունները, ստորերկրյա ջրերի հասակը, ջրատար հորիզոններում և համալիրներում գոյություն ունեցող ջրադինամիկական և ջրաերկրաքիմիական պայմանները, ստորերկրյա ջրերում տարբեր բաղադրիչների (կոմպոնենտների) պարունակությունը: Այլ խոսքով ասած՝ հարկավոր է ըստ ժամանակի որոշել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ապար-ջուր-գազ-օրգանական նյութեր և միկրոօրգանիզմներ համակարգում:

Այս հիմնախնդիրի շուրջ տարվող աշխատանքների հաջողությունը պահանջում է երկրաբանական, երկրաքիմիական և ջրաերկրաբանական հետազոտությունների մեթոդների ողջ զինանոցի կիրառումը և փորձարարական աշխատանքների պարտադիր կատարումը:

6. Սպորելրկյա ջրերի բուժիչ նպաւրակների, միկրոբաղադրիչների կորզման և ջերմացման համար համալիր օգրագործման հիմնախնդիրները: Նշված ստորերկրյա ջրերի տեղադրման, տարածման և ձևավորման պայմանները, հետազոտման մեթոդները, երկրաբանաարդյունաբերական գնահատումը և հանքային, արդյունաբերական և թերմալ ջրերի շահագործումն ունեն շատ լնդիանրություններ, դրա համար էլ նպատակահարմար է դրանց դիտարկել որպես մեկ հիմնախնդիր:

Հեռանկարում տվյալ հիմնախնդրի ուսումնասիրման կարևոր խնդիր է հանդիսանում մեծ խորություններում ստորերկրյա ջրերի հետախուզման, դրանց ռեսուլսների գնահատման և շահագրդման հնարավորությունների հետագա արդյունավետ մեթոդների մշակումը:

Հանքաջրաբուժական նպատակներով հանքային ջրերի օգտագործումը ապագայում կակախ անընդհատ ընդլայնվել և բարձրանալ, ինչպես ավանդական (տրադիցիոն) առողջարանային շրջաններում (Կովկասյան Հանքային Ջրեր, Վրաստանի, Հայաստանի, Աղրբեջանի, Միջին Ասիայի և այլն), այնպես էլ նոր շրջաններում:

Ստորերկրյա ջրերից և աղաջրերից հազվագյուտ և ցրված կոմպոննենտների հնարավոր կորզումը ներգրավում է շատ ու շատ հետազոտողների: Որպես հեղուկ ջրմիական հումք օգտակար կոմպոննենտներ կորզելու համար ստորերկրյա ջրերի նկատմամբ հետաքրքրությունը կակախ բարձրանալ հանքաքարային օգտակար հանծոնների մշակմանն ու օգտագործմանը գուգմբաց: Բացի յոդից և բրոմից, որոնք արդեն կորզվում են ստորերկրյա ջրերից, ներկայումս մշակվում են տեխնոլոգիական սխեմաներ՝ այլ հազվագյուտ տարրերի (բոր, լիթիում, ռուբիում և այլն) ստացման համար:

Զրաերկրաբանական մեթոդների օգնությամբ լուծվում է Երկրի խորը ջերմության օգտագործման խնդիրը՝ Էլեկտրակեներգիայի արտադրման, քաղաքների և բնակավայրերի ջերմաֆիկացման, ջերմոցային տնտեսությունների զարգացման համար:

Անհրաժեշտ է նշել, որ երկրաջերմային օրենքների իմացությունը, բայց գործնական հետաքրքրությունից, ունի նաև գիտական նշանակություն: Այն կարող է Երկրի ընդերքում ընթացող երկրաքիմիական գործընթացները լրացնել այլ կերպ և ճշտել գոյություն ունեցող պատկերացումները ջրաջերմային (հիդրոթերմալ) և մետամորֆային (փոխակերպային) երևույթների վերաբերյալ:

7. Երկրակեղեղի խորը ջրալիքար հորիզոններում արդյունաբերական հոսքաջրերի բաղման և նավթամթերքների ու հեղուկ զագերի սկրորերկրյա պահեստարանների սրբեղծման ջրաերկրաբանական հիմքերի մշակումը: Բնակչության աճի և արդյունաբերական արտադրության մեծացման, ճյուղերի առաջացման, աստոնային էներգետիկայի զարգացման և այլնի հետ մեկտեղ կմեծանա արդյունաբերական հոսքաջրերի ծավալը, որոնց վերացման (լիկվիդացման) ուղիներից մեկը

հանդիսանում է դրանց թաղումը խորը ջրատար հորիզոններում, որոնց ջրերը դեռևս չեն օգտագործվում ժողովրդական տնտեսության մեջ, կամ ել դրանց թաղումը ապարների մեկուսացված շերտերում և խոռոչներում:

Արդյունաբերական թունավոր հոսքաջրերի թաղումը սկզբունքորեն արգելվում է նոյնիսկ շատ մեծ խորություններում տեղադրված ջրատար հորիզոններում: Բացադիկ դեարքում թունավոր հոսքաջրերի թաղումը կարելի է կատարել ջրամերժ ապարներում կառուցված արիեստական խոռոչներում և միայն այն պայմանով, որ դրանք տևական ժամանակ կլիմեն լրիվ մեկուսացված:

Հոսքաջրերի թաղման խնդիրների լուծումը պահանջում է ջրաճնշումային համակարգերի ջրադինամիկական և ջրաերկրաքիմիական պայմանների, ջրատար հորիզոնների և համալիրների ապարների կուտակիչային (կողեւկտորային) հատկությունների, սննան և բեռնաբափման մարզերի տեղադիրքերի, ջրատար հորիզոնների և համալիրների իրար հետ վիճակապակցվածության և այլ հարցերի խիստ ճանրակրկիտ ուսումնասիրություններ:

Այս հիմնախնդրի բովանդակության մեջ մտնում են նաև խնդիրներ, որոնք կապված են նավթամթերքների և հեղուկ գազերի ստորերկրյա պահեստարանների ստեղծման հետ: Ստորերկրյա պահեստարանների ստեղծումը պահանջում է մի շաք գիտական և գործնական խնդիրների լուծում՝ ջրամերժ ապարների հաստվածքի տեղադրման պայմանների որոշումը, որոնք ապահովելու են ածխաջրածնային վառելանյութի անվտանգ պահպանումն առանց կորստի, դրանց ֆիզիկական, քիմիական և մեխանիկական հատկությունների ուսումնասիրությունը,

8. Արդյունահանում գրարրապուծման մերոդով օգրակար հանածոների արդյունահանուման գիտական հիմքի մշակումը: Այս խնդիրը հանդիսանում է օգտակար հանածոների արդյունահանման նոր, ոչ հանքահորային (շախտային) մեթոդների մշակման առավել ընդհանուր հիմնախնդրի մի մասը: Ունի կարևոր գիտական և գործնական նշանակություն:

Այս հիմնախնդրում, ջրաերկրաբանական կարևոր խնդիրներից են օգտակար հանածոների հանքավայրի երկրաբանական և ջրաերկրաբանական մանրազնին ուսումնասիրությունները՝ նպատակ ունենալով որոշելու օգտակար բաղադրիչների ստորերկրյա տարալումնան մեթոդով ստացման հնարավորությունը և հանքավայրի մշակման ջրաերկ-

բաքիմիական և ջրադիմամիկական օպտիմալ պայմանների հիմնավորումը:

9. *Մեղաղական հանքավայրերի որոնման ջրաերկրաքիմիական մեթոդների հեղագա զարգացումը:* Մետաղական հանքավայրերի որոնման ջրաերկրաքիմիական մեթոդները հաջողությամբ մշակվում և ներդրվում են ջրաերկրաբանական և երկրաբանական հետազոտությունների պրակտիկայում: Հեռանկարային ուղղություններ են հանդիսանում քարնված հանքայնացումների որոնումն ըստ ջրաերկրաբանական չափանիշների: Թարնված հանքայնացման որոնումների խնդրի լուծումը պետք է հիմնավորված լինի ստորերկրյա ջրերի կազմի հետազոտությունների, մետաղական հանքավայրերում ջրերի ցրման պահաների ձևավորման բնական գործընթացների մոդելավորման, հիմնական ինդիկատոր-տարրերի միզրացիայի ձևերի ուսումնասիրման, ապարներից մետաղական բաղադրիչների տարրալուծման գործընթացների մոդելավորման, ինչպես նաև բնական ջրերում մետաղական տարրերի իզոսուպային կազմի ուսումնասիրությունների վրա:

10. *Սրորերկրյա ջրերի պահպանումը սպառումից և աղբուրումից:* Հիմնախնդրի արդիականությունը բացառապես մեծ է, քանի որ այն սերտորեն կապված է բնուրյան կամ շրջակա միջավայրի պահպանման միջազգային գլոբալ հիմնախնդիրների հետ:

Քանի որ ստորերկրյա ջրերը սերտորեն շաղկապված են շրջապատող միջավայրի հիմնախնդիրների հետ, դրա պահպանության լուծումը հնարավոր կլինի միայն համալիր մոտեցման դեպքում: Երկիր մոլորակի ջրային պատյանը համարվում է շրջապատող միջավայրի ամենազգայուն տարրը, այդ պատճառով դրա պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներին հսկայական ուշադրություն է դարձվում համաշխարհային մասշտաբով:

Հարկ է մեկ անգամ ևս ընդգծել, որ բնուրյան պահպանման հոգար՝ մասնավորապես ստորերկրյա ջրերի մասով, միայն պետական մարմինների գործ չէ, քանի որ այն մեծ համաժողովրդական խնդիր է, որն անմիջականորեն վերաբերում է նաև մեզանից յուրաքանչյուրին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Алекин О. А.**, Основы гидрохимии, М., Гидрометиздат. 1970, 444 с.
2. **Белоусова А. П., Гавич И. К., Лисенков А. Б., Попов Е. В.**, Экологическая гидрогеология, М., ИКЦ "Академкнига", 2007, 397 с.
3. **Богомолов Г. В.**, Гидрогеология с основами инженерной геологии, М., "Высшая школа", 1975, 319 с.
4. **Всеволожский В. А.**, Основы гидрогеологии, М., МГУ, 2007, 448 с.
5. **Гавич И. К., Лучева А. А.**, Семенова-Ерафеева С.М., Сборник задач по общей гидрогеологии. М., Недра, 1985, 412 с.
6. Геология Армянской ССР, Гидрогеология, т. VIII, Ер., 1974, 392 с.
7. Геология Армянской ССР, Минеральные воды т. IX, Ер., 1969, 523 с.
8. Гидрогеология, Под ред. В. М. Шестакова и М. С. Орлова. М., МГУ, 1984, 317 с.
9. Гидрогеология СССР, т. 1, М., Недра, 1966, 424 с.
10. Гидрохимические показатели состояния окружающей среды, под ред. Т. В. Гусевой. М., Изд. "ФОРУМ", 2007, 192 с.
11. **Гордеев П. В., Шемелина В. А., Шулякова О. К.**, Гидрогеология, М., Высшая школа, 1990, 448 с.
12. **Деригольц В. Ф.**, Воды вселенной, Л., Недра, 1971, 224 с.
13. **Зверев В. П.**, Вода в земле, Введение и учение о подземных водах, М., Научный мир, 2009, 252 с.
14. **Зекцер И.С.**, Подземные воды как компонент окружающей среды, М., Научный мир, 2001, 328 с.
15. **Карцев А. А.**, Гидрогеология нефтяных и газовых месторождений, М., Недра, 1972, 280 с.
16. **Кац Д. М.**, Основы геологии и гидрогеологии, М., Колос, 1981, 360 с.
17. **Кац Д. М., Пашковский И. С.**, Мелиоративная гидрогеология, М., "Агропромиздат", 1988, 256 с.
18. **Климентов П. П., Кононов В. М.**, Методика гидрогеологических исследований. М., Высшая школа, 1978, 440 с.
19. **Климентов П. П., Богданов Г. В.**, Общая гидрогеология, М., Недра, 1977, 357 с.
20. **Лебедев А. В.**, Методы изучения баланса грунтовых вод, М., Недра, 1976, 223 с.
21. **Ломтадзе В. Д.**, Методы лабораторных исследований физико-механических свойств горных пород, Л., Недра, 1972, 312 с.
22. **Лучшева А. А.**, Практическая гидрология, Л., Гидрометиздат, 1976, 440 с.
23. **Львович М. И.**, Мировые водные ресурсы и их будущее. М., "Мысль", 1974, 448 с.
24. Мировой водный баланс и водные ресурсы Земли, Л., 1974, 638с.
25. **Михайлов Л. Е., Гидрогеология.** Л., Гидрометиздат, 1985, 263с.
26. Основы гидрогеологии, Общая гидрогеология, Новосибирск, 1983, 231с.

27. Подземный сток на территории СССР, Под ред. Б. И. Куделина М., МГУ, 1966, 301с.
28. **Резников А. А., Мулиновская Е. Н., Соколов И. Ю.**, Методы анализа природных вод, М., Недра, 1970, 488 с.
29. Рекомендации по определению гидрогеологических параметров грунтов методом откачки воды из скважин, М., “Стройиздат”, 1986, 143 с.
30. **Самарина В. С.**, Гидрохимия, Л., Изд. ЛГУ, 1977, 359 с.
31. **Силин-Бекчурин А. И.**, Динамика подземных вод, М., МГУ, 1965, 380 с.
32. Справочник по гидрометрологическим приборам и установкам (А. Б. Рейфер, М. И. Алексенко, П. Н. Бурцев и др.), Л. Ленинградиздат, 1976, 431с.
33. Справочное руководство гидрогеолога (под ред. В. М. Максимова), т. 1, 2, Л., Недра, 1979, 809 с.
34. Справочник по охране геологической среды (под ред. Г. В. Войткевича), т. 2, г. Ростов на Дону, “Феникс”, 1996, 512 с.
35. Цист де. Р. Гидрогеология с основами гидрологии суши, т. 1, М., “Мир”, 1969, 311с.
36. **Шестаков В. М.**, Прикладная гидрогеология, М., МГУ, 2001, 143 с.
37. **Шестаков В. М., Боздников С. П.**, Гидрогеология. М., ”Академкнига”, 2003, 176 с.
38. **Վ. Ա. Ավետիսյան, Գ. Ե. Գավրյան**, Ստորերկրյա կենսաբեր ջրեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ I	
ԶՐԱԵՐԿՎԱԾՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶՄՐՎԱՅՄԱՆ	
ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԽԵՐԸ	9
ԳԼՈՒԽ II	
ԶՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՐԿՐԻ ՎՐԱ, ԴՐԱ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ	
ԾՐՁԱՊՏՈՒՅՑԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵջ	21
2.1. ԶՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՐԿՐԻ ՎՐԱ ԵՎ ԶՐՈՂՈՐԸԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	21
2.2. ԶՈՒՐԸ ՄԹԽՈԼՈՐՏՈՒՄ: ՄԹԽՈԼՈՐԸԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ.....	26
2.3. ԶՈՒՐԸ ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻՆ ԵՎ ԵՐԿՐԱԿԵՂԵՎՈՒՄ.....	34
2.4. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՀՈՍՔԵՐ.....	37
2.5. ՄՈԼՈՐԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՐԱՔԱՆԱԿԸ ԵՎ ԶՐԻ ԾՐՁԱՊՏՈՒՅՑԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	45
2.6. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԶՐԱՅԻՆ ՀԱԾՎԵՇՈՒ ՄԱՍԻՆ	49
ԳԼՈՒԽ III	
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ԶԵՐՄԱՅԻՆ ՈԵԺԻՄԻ	
ՄԱՍԻՆ: ԵՐԿՐԱԶԵՐՄԱՅԻՆ ԶՈՒՄՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ	53
3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ԶԵՐՄԱՅԻՆ ՈԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ	53
3.2. ԱՊԱՐՆԵՐԻ ԶԵՐՄԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	56
3.3. ԵՐԿՐԱԶԵՐՄԱՅԻՆ ԶՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ.....	60
3.4. ԵՐԿՐԱԶԵՐՄԱՅԻՆ ՍԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՍԱՐ	63
ԳԼՈՒԽ IV	
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԾՎԱՏՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ: ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ	
ԾԱԳՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	65
4.1. ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԱՊԱՏՅԱՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ.....	65
4.1.1.ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԶՐԱՏԱՐ ԵՎ ԶՐԱՄԵՐԺ ԱՊԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ	69
4.2. ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԾԵՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ.....	70
4.3. ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	74
ԳԼՈՒԽ V	
ԱՊԱՐՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԶՐԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	81
5.1. ԱՊԱՐՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	81
5.1.1. ՀԱՏԿԱՉԱՓԱԿԱՆ ԿԱԶՄԸ	81
5.1.2. ԽՏՈՒԹՅՈՒՆ	83
5.1.3.ԾԱԿՈՏԿԵՆՍՈՒԹՅՈՒՆ	85
5.2. ԱՊԱՐՆԵՐԻ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶՐԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	92

5.2.1. ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ	92
5.2.2. ԱՊԱՐՆԵՐԻ ԶՐԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	93
5.3. ԶՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԱՊԱՐՆԵՐՈՒՄ	103
ԳԼՈՒԽ VI	
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ: ԼՈՒԾՎԱԾ ԳԱԶԵՐ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ	111
6.1. ՀԵՂՈՒԿ ԶՐԻ ՄՈԼԵԿՈՒԼԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ	
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	111
6.2. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	115
6.3. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻԾՆԵՐԸ	123
6.3.1. ԻՈՆՆԱ-ԱՊԱՅԻՆ ԿԱԶՄԸ	124
6.3.2. ԶՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻԾՆԵՐԸ	133
6.4. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻԶՈՆԵՐԸ	
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐՈՒՄ	141
6.5. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԳԱԶԱՅԻՆ ԿԱԶՄԸ	145
ԳԼՈՒԽ VII	
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՄՆԱԼԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ,	
ՀԱՍԱԿԱՎՈԳՈՒՄ ԵՎ ԴԱՍՎԱՎՈԳՈՒՄ	150
7.1. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻՉԻ ՏԻՊԵՐԸ	150
7.2. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ	
ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ	152
7.3. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՐԳՈՒՄ	155
7.4. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻՉՆԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԴԱՍՎԱՐԳՈՒՄ	157
ԳԼՈՒԽ VIII	
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ	165
8.1. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ	165
8.2. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԻՐԱՎՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	172
8.3. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ	175
8.3.1. ԶՐԱԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ	175
8.3.2. ԶՐԱԿԵՆՍԱՔԻՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ	184
ԳԼՈՒԽ IX	
ԶՐԻ ԸՆԴԺՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԱՊԱՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	188
9.1 ԱԵՐԱՑԻԱՅԻ ԶՈՆԱՅՈՒՄ ԶՐԻ ԸՆԴԺՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՕՐԵՆԱՋԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	188
9.2. ԶՐԱՀԱԳԵՑՎԱԾ ԶՈՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԾԱՐԺՈՒՄԸ:	
ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ	191
9.2.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ՍԱՍԻՆ	191
9.2.2. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ	194

9.2.3. ՖԻԼՏՐԱՑԻԱՅԻ ԳԾԱՅԻՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԵՐԸ	196
9.3. ԶՐԱԵՐԿԱՐԱԲԱՆԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ	200
9.4. ՖԻԼՏՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԶՐԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ	206
ԳԼՈՒԽ X	
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	212
ԳԼՈՒԽ XI	
ՀՊՂԱՅԻՆ ԶՐԵՐ, ՎԵՐՆԱՁՐԵՐ, ԳՐՈՒՏԱՅՅԻՆ ԶՐԵՐ	222
11.1. ՀՊՂԱՅԻՆ ԶՐԵՐ	222
11.2. ՎԵՐՆԱՁՐԵՐ	224
11.3. ԳՐՈՒՏԱՅՅԻՆ ԶՐԵՐ	227
11.3.1. ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	227
11.3.2. ԳՐՈՒՏԱՅՅԻՆ ԶՐԵՐԻ ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ	231
11.3.3 ՄՆՄԱՆ ԵՎ ԲԵՇՆԱԹԱՓՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	236
11.3.4. ԳՐՈՒՏԱՅՅԻՆ ԶՐԵՐԻ ԿԱՊԸ ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ ՀԵՏ ԶՐԵՐԻ ՀԵՏ ..	244
11.3.5. ԳՐՈՒՏԱՅՅԻՆ ԶՐԵՐԻ ԶՈՆԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	247
11.3.6. ԳՐՈՒՏԱՅՅԻՆ ԶՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՄԵՐՆ ՀԱՏ ՏԵղադրման ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՄՑ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ	252
ԳԼՈՒԽ XII	
ԱՐՏԵԶԱՆ ԶՐԵՐ	266
12.1. ԱՐՏԵԶԱՆ ԶՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ	266
12.1.1. ԱՐՏԵԶԱՆ ԱՎԱԶԱՆՆԵՐ	268
12.1.2. ԱՐՏԵԶԱՆ ԼԱՆՁԵՐ	275
12.1.3. ՄԵՐՋԱՐՏԵԶԱՆ ԱՎԱԶԱՆՆԵՐ	277
12.2. ԱՐՏԵԶԱՆ ԶՐԵՐԻ ԶՈՆԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	278
12.2.1. ԶՐԱԵՐԿԱՐԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ԶՈՆԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	279
12.2.2. ԶՐԱԵՐԿԱՐԱՋԵՐՄԱՅԻՆ ԶՈՆԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	282
12.2.3. ԶՐԱԵՐԿԱՐԱՋԵՐՄԱՅԻՆ ԶՈՆԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	286
12.3. ԱՐՏԵԶԱՆ ԶՐԵՐԻ ՈԵԺԻՄԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	288
12.4. ՊԻԵԶՈՒԶՈՀԻՊՍԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ	290
ԳԼՈՒԽ XIII	
ՃԵՂՔՎՈՐՎԱԾ ԵՎ ԿԱՐՍՏՎՈՐՎԱԾ ԱՊԱՐՆԵՐԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ: ԽՈՐՔԱՅԻՆ ԶՐԵՐ	294
13.1 ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՊԱՐՆԵՐԻ ՃԵՂՔՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ	294
13.2. ՃԵՂՔՎՈՐՎԱԾ ԱՊԱՐՆԵՐԻ ԶՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ	296

13.2.1. ԱՐՏԱԾԻՆ ՃԵՂՔԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԶՈՆԱՅԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ	
ՃԵՂՔԱՅԻՆ ԶՐԵՐ	298
13.2.2. ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԶՈՆԱՅԻ ՃԵՂՔԱԵՐԱԿԱՅԻՆ	
ԶՐԵՐ	302
13.3. ԿԱՐԱՏԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԱՏԱՎՈՐՎԱԾ ԱՊԱՐՆԵՐԻ	
ԶՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	305
13.4. ԽՈՐՔԱՅԻՆ ԶՐԵՐ	312
ԳԼՈՒԽ XIV	
ՀԱՎԵՐԺՎԱԿԱՆ ՍԱՌԱՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ	314
14.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՎԵՐԺՎԱԿԱՆ	
ՍԱՌԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ.....	314
14.2. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ.....	317
14.2.1. ՎԵՐՍԱՌՅՈՒԹՅԱՅԻՆ ԶՐԵՐ	319
14.2.2. ՄԻԶԱՄԱՌՅՈՒԹՅԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՄԱՆՅՈՒԹՅԱՅԻՆ ԶՐԵՐ	323
14.2.3. ԵՆԹԱՄԱՆՅՈՒԹՅԱՅԻՆ ԶՐԵՐ	324
14.2.4. ՄԻԶԱՄԱՆՅԱԿԱՆ ՀԱԼՈՒՅԹՆԵՐԻ ԶՐԵՐ	325
14.3. ՍԱՌՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ	327
ԳԼՈՒԽ XV	
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐ: ԱՊԲՅՈՒՐՆԵՐ	331
15.1. ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՈՒՄԸ	331
15.2. ՀԱՆՔԱՅԻՆ ԲՈՒԺԻՉ ԶՐԵՐ	333
15.3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶՐԵՐ	340
15.4. ԶԵՐՍԱԶՐԵՐ	345
15.5. ԱՊԲՅՈՒՐՆԵՐ	353
15.5.1. ԱՊԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ	
ԴԱՍՎԱՐԳՈՒՄԸ.....	353
15.5.2. ԱՊԲՅՈՒՐՆԵՐԻ ՈԵԺԻՄԸ	359
ԳԼՈՒԽ XVI	
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԿԱՆ ԶՐԱԾՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ:	
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՀԱՆՔՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ	
ԾՐՁԱՆԱՑՈՒՄ ՀԱՎԱՅՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	362
16.1. ԵՐԿՐԱԿԵՐԵՎԻ ԲՆԱԿԱՆ ԶՐԱԾՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ	362
16.2. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՀԱՆՔՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ	
ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....	366
16.3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԾՐՁԱՆԱՑՄԱՆ	
ՍԱՍԻՆ	369
ԳԼՈՒԽ XVII	
ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՆԵՐԻ ԵՎ	
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՅՑՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ	372
17.1. ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ	
ՏԵՍԱԿԱՆԵՐԸ.....	372
17.2. ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ	
ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	375

17.3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ	
ՀԱՍՈՒՅԹԻ ՍԱՍԻՆ	378
17.4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻՆ	
ՍԱՍԻՆ	383
17.5. ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՐԱՏՄԱՆԸ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻՆ	
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐՈՇ ՊԱՀԱՆՁՆԵՐ	385
17.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴԱՇԱՅԻՆ ՓՈՐՁԱՖԻԼՏՐԱՑԻՈՆ	
ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԱՍԻՆ	388
17.7. ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ	390
ԳԼՈՒԽ XVIII	
ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ	
ՀԻՄՆԱՊՆԵՐՆԵՐԸ	395
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	403

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՐԱՆ

ԺՈՐԱ ԱԶՈՅՑԱՆ
ՏԻՐՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒԹ
ԶՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական չեղանակ

Համակարգչային ձևավորում՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորում՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրում՝ Վ. Դերձյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ 25.625:
Տպաքանակը՝ 150 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1